ՓՐՈՖ. ԴՈԿՏ. ԳԷՈՐԳ Տ. ԽՐԼՈՊԵԱՆ

ՅԵՂԱՍՊԱՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Պէյրութ, 2006

Մեկենասութեամբ՝

Միմի եւ Արմէն Յարութիւնեանի

9(47.925)
Խ-90

ՓՐՈՖ. ԴՈԿՏ. ԳԷՈՐԳ Տ. ԽՐԼՈՊԵԱՆ

46174

ՅԵՂԱՍՊԱՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Պէյրութ, 2006

Այն հարգանքը չունենամ բոլոր այն մարդկանց անմահ յիշատակին, որոնք ապրեցին, պրեղծագործեցին, սիրեցին, երազեցին ու վիրաբանեցան մեզ, վեր, հայրենանուէր ու Աստուածահաճոյ գաղափարներով, որպէսզի մեր կեանքը դառնայ աւելի գեղեցիկ, աւելի կատարեալ, աւելի դրախտային եւ աւելի երջանիկ, որպէսզի նրանց լոյսով, ջերմութեամբ ու գործով մենք ապրենք: Չունենամ բոլոր այն մարդկանց անմահ յիշատակին, որոնք իրենց միտքը, հոգին, գործը, վերջինը, արի՞նը է՞ պարգեւները այնպէս խառնեցին հայ հողին, որ անբաժան դառնան հայ հողն ու հայ մարդը, որ յաւերժ խօսի հայ հողը:

Հայոց Յեղասպանութեան արդի ուրացողները չգտնեն լուացնել հայ հողի կանչը ու չեղծացնել այդ կանչը լռելու եւ հասկանալու արդի հայ մարդու կարողականութիւնը: Արդի ցեղասպանագիտութիւնը կը յաղթահարի նաեւ այդ վրանգը:

Գոկտ. Գէորգ Տիգրանի Խրլոպեան

ԱՌԱՋԱԲԱՆ

Հազարաւոր սփիւռքահայ մանուկների նման ես էլ աճեցի թուրքերի կողմից կազմակերպուած Հայոց Ցեղասպանութեան փաստի ճանաչման, իմաստաւորման ու պահանջատիրութեան գիտակցութեան առաջացման, կազմաւորման ու խորացման բովում:

Յիշողութեանս մէջ կուտակւում էին շրջապատի աւագների պատմածները իրենց կորցրած գեղեցիկ պապենական աշխարհի եւ այն վերստին ձեռք բերելու երազանքի մասին, «երկրում» վարած ազատագրական պայքարի մասին եւ բռնագաղթի ճանապարհի մասին: Դեռ ամէն մէկը ողբում էր ու որոնում իր կորցրած հարազատին: Մեծ հօրս՝ Գէորգ Լօշխանեանի մեծ գերդաստանից մնացել էր ինքը՝ Վարդուհի քոյրը եւ եղբօր տղայ Աւետիսը: Մեծ մօրս՝ Եփրոս Թորոսեանի ընտանիքից մնացել էր ինքը, քոյրն ու եղբայրը: Հայրական մեծ հայրս՝ Ճրճի Խրլոպեանը պատմում էր ողջ գերդաստանի նահատակների մասին: Այս փաստերը ծնում էին բազմաթիւ հարցեր, եւ յուզում մանուկիս:

Ցեխից պատրաստուած հայու տնակները, թիթեղակառոյց դրպրոցներն ու եկեղեցիները հակադրուելով հիւրընկալ երկրի հոյակերտ ճարտարապետական կառոյցներին, մանուկներիս առաջնորդում էր բարդ զգացումների ու տրամաբանական դատողութիւնների աշխարհը:

Իւրաքանչիւր Ապրիլի 24-ին կազմակերպուող եկեղեցական պաշտամունքները, հոգեհանգիստները, դասախօսութիւնները աւելի ամրապնդում էին մեր զգացումները եւ հարստացնում մեր ցեղասպանագիտական պաշարը: Հալէպի արհեստաւորական շրջանի խանութները փակւում էին: Ողջ քաղաքի պատերին փակցւում էին. «ԹՈՐՔԵՐԷՆ ՄԻ ԽՕՍԻՐ՝ ՅԻՇԻՐ ՄԷԿ ՈՒ ԿԷՍ ՄԻԼԻՈՆԸ» կարգախօսը:

Դրանք տարածողները բրբերէն էին խօսում, քանի որ հայերէն չգիտէին:

Մեր տան հասցէով ստացուած ցեղասպանութեան նուիրուած ամէն մի յուշագրութիւն վերածնում էր ցաւ, արցունք եւ արդարութեան ու պահանջատիրութեան նկատմամբ հաւատք եւ յոյս:

Պատմական Հայաստանում, Կիլիկիայում, Պոլսում ու Զմիւռնիայում անցեալում ծառայած տասնեակ օտար միսիոնարներ (Վեր. Հ. Ռիկս, Միս Լ. Ֆորմըն, Տիկ. Ի. Մերիլ, Միս Է. Ուէպ, Միս Հ. Նորթըն, Միս Պիլ, Միս Սիլիվըն եւ այլք) այցելում էին մեզ ու տարբեր պատումներով վերագծում թուրքերի կողմից կազմակերպուած Հայոց ցեղասպանութեան էջերը:

1938-1939 թթ. Ալեքսանտրէթի սանճաքում անցկացուած մարդահամարի կեղծումները, Սանճաքի Սուրիայից անջատումն ու Թուրքիային կցումը, թուրքական հաւանական հակահայ հալածանքների ու կոտորածների վախից տասնեակ հազարաւոր հայերի արտագաղթը այդ տարածքից դէպի Սուրիա ու Լիբանան, եւ նոր բնակավայրերում նրանց ծանր փորձառութիւնները էապէս թարմացրին թուրքերի կողմից կազմակերպուած Հայերի ցեղասպանութեան վէրքերը: Դրանք ստացան նաեւ ուժեղ արարական նորովի ըմբռնում եւ իմաստաւորում:

Երկրորդ Աշխարհամարտը պատանիներիս գիտակցութեան մէջ ծնեց մի նոր թնճուկ՝ ի՞նչ դիրք պիտի ընդունի Թուրքիան, ո՞ւմ կողմը նա պիտի անցնի, նա պիտի յարձակի՞ Հայաստանի վրայ: Սարսափում էինք այն գաղափարից որ Թուրքիան յարձակուելով Հայաստանի վրայ, կարող է այնտեղ կրկնել ցեղասպանական արարքներն ու Խորհրդային Հայաստանը կցել Թուրքական Հանրապետութեան: Այս պատճառով էլ Սթալինկրատեան ճակատամարտում Գերմանիայի պարտութիւնը եւ ընդհանրապէս Ս.Ս.Հ.Մ.-ի յաղթանակը մեզ համար խիստ երջանկաբեր ու իմաստալից էր: Դա մեր գիտակցութեան մէջ հաւասար էր Հայաստանը թուրքական ճիրաններից փրկելուն:

Դաշնակիցների յաղթանակն ու նրանց ղեկավարների հանդիպումներն ու բանակցութիւնները նորովի լուսաւորում էին մեր պահանջատիրական երազները: 1945 թ. մեր տուն եկան հօրս մանկութեան ընկեր Այնթապի ինքնապաշտպանութեան կռիւների զինուորական ղեկավար գնդապետ Ատուր Լեւոնեանն ու Հիւսիսային Սուրիայի անգլիական հետախուզութեան ղեկավար գնդապետ Ստերլինկը եւ յայտնեցին որ շուտով իրականանալու է հայերի պահանջատիրութեան մի մասը՝ Պատմական Հայաստանի մի մասը վերադարձուելու է հայերին ու կցուելու Խորհրդային Հայաստանին: Այդ լուրը վերակերտեց մեր մէջ խմորուած հայ-թուրքական յարաբերութիւնների կառոյցը: Բայց այդ էլ մնաց երազ՝ վերստին արիւնոտելով մեր վէրքերը:

Իր դիրքերը ամրապնդելով, Թուրքիան փորձեց հակահայկական մտայնութիւն սերմանել Միջին ու Մերձաւոր Արեւելքում: Նրան յաջողուեց հազարաւոր խուժան դուրս բերել Հալէպի փողոցները: Նրանք բղաւում էին հակահայկական կարգախօսներ՝ սպառնալով հայերի կեցութեան: Սարսափահար էին մեծերը: Սարսափահար էինք նաեւ մենք՝ պատանիներս ու երիտասարդներս: Գրգռւում էին հակաթուրքական մեր տրամադրութիւնները: Մեծ դժուարութեամբ վտանգը յաղթահարուեց: Այն զգալիօրէն նպաստեց այդ շրջանի հայերի Հայաստան ներգաղթելու մտադրութեան:

Մեր սերունդը մնացորդացի առաջին պտուղն էր: Մեր ծնողները, ուսուցիչները, մեզ շրջապատող աւագների զգալի մեծամասնութիւնը աշխատում էին որ մենք հաւատանք հայ ազգի յաւերժութեան, եւ մեր իմացութեամբ, բարձր կազմակերպուածութեամբ, աշխատասիրութեամբ եւ միասնութեամբ հնարաւորին չափ շուտ ծածկենք ցեղասպանութեան կորուստները: Մենք պէտք է լինէինք ցեղասպանութիւն եւ ստորակայութիւն յաղթահարած ազգի հպարտ ժառանգներ: Մենք ստանում էինք այնպիսի դաստիարակութիւն, որ մեզ համար զոհաբերութիւնների ու դժուարութիւնների դիմագրաւումը դարձնում էր բընական ու անխուսափելի:

Ցեղասպանութեան փաստի ու դրա հետեւանքների գիտակցումը սփիւռքահայ նոր սերնդիս անհատականութեան մէջ արմատաւորում էր որպէս հայրենասիրութիւն, ազգային ինքնագիտակցութիւն եւ ապագայ թռիչքների դրդապատճառ: Դրանք սփիւռքահայ նոր սերնդին դրսից չտրուեցին: Դրանք նրա մէջ աճեցին կեանքի պայքարի բովում: Սփիւռքահայը դրանց ելեւէջների մէջ աճեց, կազմակերպուեց, զարգացաւ, կառուցեց ու կարողացաւ երեսուն տարի անց եղբայրական ձեռք մեկնել պատերազմից դուրս եկած Հայաստանի իր եղբայրներին ու քոյրերին:

1946 թ. մեկնեցի Հայաստան իբրեւ ուսանող: Շուրջ տաս տարի սթալինեան մթնոլորտը ցեղասպանութեան հետ աղերս ունեցող բոլոր հարցերը բանտարկեց իմ ներաշխարհում: Նոյնպիսի ճնշման ու այլափոխութեան էին ենթարկուել նաեւ ջարդի օրերին ու նրանից յետոյ Հայաստան ապաստանածները, որոնք ենթարկուել էին սթալինեան հալածանքներին, աքսորին ու կենդանի մնացել:

Անակնկալ էր Հայաստանի Կոմկուսի Առաջին քարտուղար Գրիգոր Յարութիւնեանի այդ մասին արած խիզախ արտայայտութիւնը 1948 թ.՝ Սթալինի արձանի բացման արարողութեանը: 50-ական թթ. ուսանողների կէսերից աստիճանաբար այդ հարցին նուիրուած քննարկումները դարձան գիտական ու հրապարակային: Թուրքերի կողմից իրագործուած Հայերի ցեղասպանութեան մասին պաշտօնական գիտական հրապարակումները սկսեցին 1958 թ.: Ակադեմիկոս Մկրտիչ

Ներսիսեանին ու Դոկտ. Ռուբէն Սահակեանին վիճակուեց դառնալ այդ գործի ռահվիրաները: Դրանց յաջորդեցին Զոն Կիրակոսեանի խիզախ քայլերը: Ցեղասպանագիտութիւնը արագ քայլերով զարգացաւ ու խորացաւ հայրենիքում ու իր յաղթական շեփորը հնչեցրեց Ցեղասպանութեան յիշատակի պաշտօնականացման, Ցեղասպանութեան 50-ամեակի պաշտօնական յիշատակման համար մղուած համաժողովրդական պայքարում եւ Եղեռնի կոթողային յուշարձանի կառուցմամբ: Անկախ տուեալ մտաւորականի մասնագիտական պատրաստութիւնից, նա սկսեց խորանալ թուրքերի կողմից Հայերի Ցեղասպանութեան պատմութեան ուսումնասիրութեան: Այն դարձաւ համընդհանուր գիտական հետաքրքրութեան առարկայ: Սկսեց նաեւ Հայ Ցեղասպանագիտութեան* քաղաքականացման փուլը:

Թուրք կառավարութիւնների կողմից ծրագրուած եւ գործադրուած Հայերի Ցեղասպանութեան իրաւութեան ու ծալքերի մասին իմ եւ իմ սերնդակիցներիս տեղեկութիւններն ու համոզմունքները հիմնուած են ոչ միայն մեր ազգային փորձառութեան տուեալների վրայ: Գիտական աշխարհի մէջ խորանալով ու համաշխարհային գրականութեան ծանօթանալով, մենք համոզուեցինք որ մեր ազգային փորձառութեան տուեալները ճշգրիտ ու հաւաստի են: Իմ թեզը ապացուցելու համար գրի առաջարանում բերեմ երեք օրինակ:

Երիտթուրքական Թուրքիայի ղեկավարներից ու Հայոց Ցեղասպանութեան գաղափարի հիմնական յղացողներից ու գործադրողներից Էնվեր Փաշան, 19 Մայիսի, 1916 թ. յայտարարում է. «Օսմանեան Կայսրութիւնը պէտք է մաքրել հայերից ու լիբանանցիներից: Առաջինը մենք կործանեցինք սրով, իսկ երկրորդին մենք սովամահ պիտի անենք»: Իսկ Առաջին Աշխարհամարտի ընթացքում, Օսմանեան Կայսրութեան դաշնակից Գերմանիայի Թուրքիայի դեսպան Ուլֆ Մեթեռնիխը հաստատում է. «Հայկական Հարցը հայ ցեղի ոչնչացմամբ լուծելու իր ձգտումներում, թուրք կառավարութիւնը հրաժարուեց իր մտադրութիւնից ետ կանգնել ո՛չ մեր ներկայացուցիչների, ո՛չ ամերիկեան դեսպանութեան, ո՛չ Պապի պատուիրակութեան, ո՛չ դաշնակիցների սպառնալիքների եւ ո՛չ էլ աշխարհի կէսը ներկայացնող Արեւմուտքի հասարակական կարծիքի ազդեցութեան տակ»[1]: Չեմ կարող անտեսել թուրք պետութեան մեծագոյն բարեկամ ու պաշտպան, անգլիական դիւանագիտութեան մեծագոյն ներկայացուցիչ Ուինսթընը

* Հեղինակը առաջիններից է, եթէ ոչ առաջինը, որ օգտագործած է «ցեղասպանագիտութիւն» եզրը, 1980-ից սկսեալ:

1. Johannes Lepsius, *Deutchland und Armenien 1914-1918*, Potsdam, Tempelverlag, 1919, s. 280. Վերցուած՝ «Հայոց Ցեղասպանութիւնը Օսմանեան Կայսրութիւնում», կազմողներ՝ Մ. Ներսիսեան, Ռ. Սահակեան, Երեւան, 1991, էջ 506:

Չըրչիլի վկայութիւնը: Նա այն պետական գործիչներից էր, որ կեանք տուեց հիւանդ ու մահացող Թուրքիային, եւ ամէն ինչ արեց, որ ըստեղծուի արդի Թուրքական Հանրապետութիւնը՝ ի վնաս հայերի, յոյների ու արաբների: 1928 թ. նա գրեց. «1915-ին թրքական կառավարութիւնը սկսեց ու անգթօրէն գործադրեց Փոքր Ասիայի հայերի անպատուաբեր ընդհանուր ջարդն ու բռնագաղթը: Երեք կամ չորս հարիւր հազար տղամարդիկ, կանայք եւ երեխաներ փախան ռուսական տարածքները եւ ուրիշներ դէպի Պարսկաստան ու Միջագետք, բայց ցեղի մաքրումը Փոքր Ասիայում այնքան ամբողջական էր, որքան նման մեծ չափանիշի արարքները կարող են լինել: Հիմնաւոր ոչ մի կասկած կայ, որ տուեալ ոճիրը ծրագրուած ու գործադրուած էր քաղաքական պատճառներով»[1]:

Այսպիսով, Սփիւռքի իմ փորձառութեամբ ու պաշարով, եւ որպէս հայ մտքի պատմութեան ուսումնասիրութեան նուիրեալ, ես չէի կարող մասնակից չդառնալ այդ ընդհանուր հոսանքին: Ուսանողների յանախակի հարցադրումներն ինձ ստիպում էին աւելի ու աւելի խորութեամբ զբաղուել ցեղասպանագիտական հարցերով: Երբ ինձ յանձնարարուեց դասաւանդել հայ եւ համաշխարհային մշակոյթի պատմութիւն, ես հարկադրուած էի խորանալ ցեղասպանագիտութեան մէջ՝ վերջին երկու դարերի հայ մշակոյթի պատմութեան ծալքերը առարկայօրէն ու խորութեամբ մեկնաբանել կարողանալու համար: Ժողովուրդների ստեղծագործական կեանքի բովանդակութեան, առանձնայատկութիւնների ու միտումների ելեւէջները հասկանալի են դառնում ոչ միայն խաղաղութեան, բարեկամութեան ու համագործակցութեան, այլ նաեւ պատերազմների, թշնամանքի, հակամշակութային գործօնների լոյսի տակ: Շուտով կազմեցի ցեղասպանագիտութեան իմ դասընթացքը, որն ինձ խիստ օգտակար եղաւ Սփիւռքում դասախօսական աշխատանքի գործուղուելու ժամանակ: Այնտեղ հանդէս եկայ այդ նիւթին նուիրուած ոչ միայն հրապարակային դասախօսութիւններով, այլեւ վարեցի յատուկ դասընթացք: Մասնակցեցի այդ հարցերին նուիրուած ազգային ու միջազգային բնոյթի տարբեր գիտաժողովների: Ցեղասպանագիտական յօդուածներս, 1968 թ. հրապարակուեցին ինչպէս հայրենի, այնպէս էլ սփիւռքահայ մամուլում: Դրանք, 1983 թ. հաղորդուեցին նաեւ Հայաստանի ձայնասփիւռով:

Ես գտնում եմ որ համաշխարհային ցեղասպանագիտութիւնը վաղուց ապացուցել է թուրքերի կողմից գործադրուած Հայերի Ցեղասպանութեան փաստը: Մինչեւ օրս կուտակուած փաստական նիւթն այնքան հարուստ է եւ այնքան բազմազանութեամբ է լուսաւորում երեւոյթը, որ նոր արխիւային փաստերը շատ բան պիտի չկարողանան

1. Churchill, Winston, *The World Crisis: The Aftermath* (London), 1919, p. 405.

աւելացնել: Այդ պատճառով էլ, ես նպատակադրուեցի իմ ուշադրութիւնը սեւեռել նուազ ուսումնասիրուած հարցերի վրայ: Դրանցից էր ցեղասպանութիւն հասկացութեան տարբեր երեսների, առումների վերլուծութիւնը: Գիտական ուսումնասիրութեան կիզակէտ դարձրի ցեղասպանութեան աստուածաբանական, պատմական, իրաւական, քաղաքական, դիւանագիտական, սոցիալ-հոգեբանական եւ գաղափարական առումները: Սոյն աշխատութիւնը ամփոփում է վերջին երեսուն տարիների ընթացքում ցեղասպանագիտութեան այդ հարցերին նուիրուած իմ ուսումնասիրութիւններն ու հրապարակումները:

Ցեղասպանութիւնն իր խորքով բարդ, բազմակողմ եւ բազմերես մի երեւոյթ է: Հնարաւոր չէ այն սպառել իմացութեան լոկ մէկ ճիւղի օգնութեամբ: Այն ունի իր որոշակի աղբիւրագիտական, յուշագրական, պատմական, քաղաքական, իրաւական, դիւանագիտական, ընկերային, մշակութային, հոգեբանական, կրօնական ու աստուածաբանական կտրուածքները, երեսներն ու բացատրութիւնները: Այդ իսկ պատճառով, այդ երեւոյթի ուսումնասիրութեան ընթացքում երբեմն գերագնահատուել է այս կամ այն կողմը: Ցեղասպանութեան բազմակողմանի, համակարգուած մօտեցումը նոր է սկսում կատարել իր հասունացած քայլերը: Սոյն հատորը այդ ուղղութեամբ կատարուող մի քայլ է: Բնականաբար այն վայելում է անդրանիկը լինելու ինչպէս առաւելութիւնները, այնպէս էլ թերութիւնները:

Սոյն հատորի հրատարակութիւնը երազ կը մնար առանց Տէր եւ Տիկ. Արմէն եւ Միմի Յարութիւնեանների հետեւողականութեան ու մեկենասութեան: Նրանք հայրենասէրի պահանջատիրութեամբ ստիպեցին ինձ իմ հիւանդ վիճակում լծուել աշխատանքի ու ի մի բերել իմ հունձքը ու այն պատրաստել հրատարակութեան: Որպէս հայ գրի ու դպրութեան եւ հայ յաղթական պայծառ ապագայի հաւատաւորներ, նրանք հովանաւորել են բազմաթիւ գրքերի հրատարակութիւններ: Սոյն հատորը այդ շարքի մի մասն է կազմում: Իմ խորին շնորհակալութիւն եմ յայտնում նաեւ Դոկտոր Երուանդ Քասունիին՝ իմ սոյն մենագրութեան հրատարակութեան աշխատանքին հետեւողականօրէն հսկողութեան համար:

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Մինչեւ պարտուած Օսմանեան Կայսրութեան հետ 1918 թ. Մուտրոսի Պայմանագրի ստորագրումը, թուրքերի կողմից Հայերի Ցեղասպանութեան հարցերին էջեր էին նուիրում աշխարհի գրեթէ բոլոր թերթերն ու ամսագրերը, բացառութեամբ՝ Գերմանիայի, Օսմանեան Կայսրութեան, Աւստրահունգարիայի եւ Պուլկարիայի: Այդ մասին ծածկագրուած ու գաղտնի տեղեկութիւններ են իրենց կառավարութիւններին հաղորդել աշխարհում գործող գրեթէ բոլոր դեսպանատունները, հիւպատոսարանները եւ գաղտնի գործակալութիւնները: Պատահական չէ որ աշխարհի գրեթէ բոլոր երկրների պետական դիւաններում ու մամուլի էջերում մենք այսօր գտնում ենք հարուստ, հաւաստի ու խիստ արժէքաւոր նիւթեր Հայոց Ցեղասպանութեան տարբեր երեսների մասին: Օսմանեան մայրաքաղաքից ամէն օր նոր գաղտնագրուած հրահանգներ էին ուղարկւում երկրի տարբեր կեդրոններ, եւ այնտեղից ստացւում համապատասխան զեկուցագրեր՝ դրանց իրագործման մասին: Դիւանագէտներն ու պետական գործիչները Հայոց Ցեղասպանութեան հետ աղերս ունեցող նիւթեր էին քննարկում իրենց հանդիպումներում: Դաշնակիցները, տարբեր առիթներով արտասանում էին ոչ միայն ցաւակցական ու կարեկցական խօսքեր, այլ նաեւ ոսկեայ լեռներ էին խոստանում իրենց յաղթանակի եւ իր արդար դատի համար պայքարող ու զոհուող հայերին:

Առաջին Աշխարհամարտից յետոյ խոստումները, որոշ ժամանակ, կրկնուեցին եւ սկսեցին իրաւագիտական, քաղաքական ու դիւանագիտական տեսք ստանալ: Կազմուեցին քննչական մարմին-

ներ, դատական ատեաններ ու զանազան ենթայանձնաժողովներ: Կայացան դատավարութիւններ, տրուեցին մեղադրանքներ եւ ընդունուեցին վճիռներ: 1918 թ. Նոյեմբեր եւ Դեկտեմբեր ամիսներին թուրքական խորհրդարանի նիստերի ընթացքում հայ երեսփոխանները (արաբ, քիւրտ եւ թուրք երեսփոխանների կողքին) համարձակ պահանջատիրական եւ Ցեղասպանութիւնը դատապարտող գաղափարներ արտայայտեցին: Դրանք ունեցան գործնական ու տեսական-գաղափարական հետեւանքներ:

Միջազգային քաղաքական կեանքի ու դիւանագիտութեան արմատական փոփոխման ընթացքին զուգահեռ, արդարութեան յաղթանակի ճանապարհին արձանագրուած վերոյիշեալ բոլոր նուաճումներն 1919 թ. աստիճանաբար սկսեցին չքանալ: Այդ խոստումները այնպէս ջնջուեցին պետական գործիչների ու դիւանագէտների յիշողութիւնից, այնպէս խորը օտարուեցին ու փակուեցին դիւանների անկիւններում, որ նոյնիսկ հասցրին Ցեղասպանութեան ակնյայտ փաստի ժխտման եւ ուրացման: Ազատ եւ անկախ մեծ Հայաստան խոստացող բոլոր տէրութիւնները հայերիս խորհուրդ տուին լեզու գտնել պարտուած Թուրքիայի հետ: Գիտնականները, հայ եւ օտար, ստիպուած եղան կրկին ու կրկին ապացուցել ապացուցուածը: Նրանք նորից սկսեցին ցեղասպանի պատժելիութիւնը հաստատող իրաւական հիմքեր որոնել: Նրանք, այդպիսով, հնարաւորութիւն չունեցան լրջօրէն զբաղուելու Ցեղասպանութեան միւս կարեւոր հարցերով՝ Ցեղասպանութեան իրաւ պատճառների ուսումնասիրութեամբ, նրա պատմական, իրաւական, քաղաքական, դիւանագիտական, մշակութային, ընկերային, հոգեբանական, կրօնական, աստուածաբանական երեսների վերլուծութեամբ: Այդ հընարաւորութեան գիտական հիմքերը, նախադրեալները առկայ էին:

Մինչեւ հայ ցեղասպանագիտութեան արդի մակարդակի հաստատումը, այն ապրեց նախապատրաստական մի շրջան: Մեզ հասած այդ օրերի տարբեր հրապարակումներ առաջ են քաշել ուշագրաւ գիտական վարկածներ ու դրոյթներ, որոնք յետագայում հաստատուեցին լիովին.

1. Օտարազգի դիւանագէտների, կրօնականների ու բժշկական աշխատողների եւ հայերի այդ գրութիւններն արդէն պարզ դարձրին որ թուրք կառավարութեան կողմից գործադրուող հակահայ քաղաքականութեան նպատակը հայ ազգի ոչնչացումն է, Պատմական Հայաստանի հայաթափումը ու թրքացումը, եւ որ այս բոլորը պետականօրէն ծրագրուած է:
2. 1915-1923 թթ. հայերի բնաջնջման ծրագիրը տրամաբանական շարունակութիւնն է 1895-1897 եւ 1908-1909 թուականների հայկական ջարդերի, եւ որ «Միութիւն եւ Առաջադիմութիւն» Երիտթուրքական կազմակերպութիւնը Հայերի Ցեղասպանութիւնը գործադրելու որոշումը ընդունել է 1911 թ. Սալոնիկի գաղտնի ժողովում:
3. 1914 թ. Յուլիսին թուրք իշխանութիւնները Թուրքիայում ապրող հայերի կուսակցական ղեկավարներից պահանջել են որ պատերազմի պարագային նրանք պարտադրեն Ռուսաստանում եւ Թուրքիայի հետ պատերազմի մէջ գտնուող այլ երկրների իրենց հայրենակիցներին աշխատել ի նպաստ Թուրքիայի՝ դառնալով այդ երկրներում գործող թուրքական հինգերորդ շարասիւնը: Հայերը նրանց պատասխանել են որ հայերը հաւատարիմ կը մնան այն երկրի սահմանադրութեան ու դրօշին, որտեղ իրենք ապրում են: Հայերը ընդունելով վտանգը, չդաւաճանեցին դաշնակիցներին: Բայց դաշնակիցները իրենց շահերի համար դաւաճանեցին հայերին:
4. Զինուորական հաւաքագրման ծածկոյթի տակ նախ տարել են հայ երիտասարդներին: Ճանապարհաշինական եւ օժանդակ ջոկատներում աշխատացնելու պատրուակով նրանց առանձնացնել ու զինաթափել են: Ապա նրանց գնդակահարել են ու թաղել իրենց իսկ փորած փոսերում: Այսպիսով խիստ փոքրացրել են հայերի սերնդաբերութիւնն ու պաշտպանողունակութիւնը: Առանձին ծրագրով հաւաքել ու տանջամահ են արել հայազգի ականաւոր կրօնականներին, գրողներին, քաղաքական, կրթական ու մշակութային գործիչներին, գործարարներին: Այդպիսով ջլատել հայ ազգի ղեկավարութիւնը: Մնացածին՝ հիւանդներին, ծերերին, կանանց ու երեխաներին հեշտութեամբ ենթարկել բռնագաղթի ու ջարդի:
5. Ցեղասպանութեան նկարագրական շրջանի հեղինակները նկատել են որ թուրքերի պաշտօնական փաստաթղթերում օգտագործուող «տեղահանութիւն» եզրը նշանակել է զանգուածային կոտորած, ջարդ, այսինքն՝ ցեղասպանութիւն:
6. Նրանց համար պարզ էր արդէն որ «տեղահանութիւնը» «օրինականութեամբ» գործադրելու եւ տեղահանուածներին «հսկելու» եւ «ուղեկցելու» համար թուրք կառավարութիւնը բանտերից ազատել է վտանգաւոր ոճրագործներին եւ նրանցից ստեղծել «Յատուկ կազմակերպութեան» ջոկատներ:
7. 20-րդ դարի առաջին երեսնամեակին արդէն պարզ էր որ Հայոց Ցեղասպանութիւնը կազմակերպող կառավարութիւնը հայերի բռնագաղթի, գոյքերի գրաւման ու հետապնդելու որո-

շումները ընդունելիս կոպտօրէն խախտել է Օսմանեան Սահմանադրութիւնը, միջազգային օրէնքները, երկրի քրէական ու քաղաքացիական օրէնքները եւ որոշումների ընդունման գործընթացային կանոնները: Այսինքն, դեռ այդ օրերին պարզ էր որ կառավարութիւնը իր ողջ կազմով, Օսմանեան իսկ օրէնքներով, յանցագործ է:

8. Ժամանակաշրջանի պետական, քաղաքական, հասարակական գործիչների եւ թուրքերի կողմից Հայոց Ցեղասպանութիւնը ուսումնասիրող գիտնականների մեծամասնութեան համար ապացուցուած էր ոճիրի իրաւութիւնը, դրա պատժելիութեան իրաւական հիմքերը եւ հայոց պահանջատիրութեան արդարացիութիւնը: Ցեղասպանութեան փաստի ընդունման եւ հայերի պահանջատիրութեան բաւարարմանը արգելակում էին մեծ քաղաքականութիւնը, մեծ պետութիւնների այդ օրուայ շահերը[1]:

1. Տես՝ Johannes Lepsius, *Armenia And Europe*, London, Hodder & Staoughton, 1897; Marcel Leart, *La Question Armenienne a la Lumiere des Documents*, Paris, 1913; Emir Emin Arslan, primer embajador de Turquia en la Republica Argentina, "La Nota" de Buenos Aires, Agosto de 1915; Arnold Toynbee, *Armenian Atrocities: The Murder of a Nation*, London, Hodder & Stoughton, 1915; Viscount J. Bryce and Arnold Toynbee, *The Treatment of Armenians in the Ottoman Empire*, 1915-16, London, His Majesty's Stationary Office, 1916; Henry Morgentau, *Ambassador Morgenthau's Story*, New York, Doubleday, 1918; Johannes Lepsius, *Le Rapport Secret de Johannes Lepsius.. Sur les Massacres d'Armenie*, Paris, Payot, 1918; Meclisi Mebusan Zabit Ceridesi (Երեսփոխանական Ժողովի Գործառնութեանց Արձանագրութիւններ 10/1/1918-12/11/1918, հայերէն թարգմանութիւնն ու մեկնաբանութիւնը տես՝ Վահագն Տատրեան, *Հայկական Ցեղասպանութիւնը խորհրդարանային եւ պատմագիտական Քննարկումներով*, Ուրբաթաւուն, Պոյքար, 1995; Johannes Lepsius, *Deutschland und Armenien, 1914-1918*, Sammlung Diplomatischer Aktenstucke, Potsdam. 1919; Leonard Leese, *Armenia and the Allies*, London, British Armenian Committee, 1920; «Նորին Մեծութիւն Փադիշահի 1335 թ. (1919) Մարտի 8-ի Կայսերական Հրամանով Կազմուած Ռազմական Արտակարգ Ատեանի Դատավարութեան Արձանագրութիւնները», թուրքական պաշտօնական «Թաքվիմի Վեքայի» թերթի յաւելուած (արաբատառ բրբերէն) 1919-1920, հայերէն թարգմանութիւնը, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները Ա.Հ. Փափազեանի «Հայերի Ցեղասպանութիւնը» խորագրով, Երեւան, 1988, L. Baronian, Pierre Loti.. *Politicien et les Massacre d'Armenie*, Geneve, 1919; A.A. Rey, *La Question Armenienne Devant l'Europe*, Paris, 1919; K. Tahmizian, *Turcs et Armeniens, Plaidoyer et Requisitoire*, Paris, 1919; A.A. Rey, *L'Armenie et les Armeniens, Conference Internationale Philarmenienne en 1920*, Paris, 1921; Արամ Անտոնեան, *Մեծ Ոճիր, Հայկական Վերջին Կոտորածները եւ Թալէաթ Փաշա*, 1921; H. Temperlay, *A History of the Peace Conference of Paris*, Vol. VI, XXXI, London, Oxford Univ. Press, 1924;

Հայերի համար անընդունելի քաղաքական պայմաններում, երբ մոռացուում եւ ուրացուում էր թուրքերի կողմից գործադրուած Ցեղասպանութիւնը, հնարաւոր չեղաւ օգտագործել վերոյիշեալ եւ այլ նման գրքերում արտայայտուած լուրջ գաղափարներն ու տեսակէտները: Հայերը իրենց փորձառութեան իրաւութիւնը եւ պահանջատիրութեան արդարութիւնը ապացուցելու համար ստիպուած եղան նորանոր աղբիւրներ ու փաստարկներ որոնել: Անցեալ դարի կէսերին ծագեց մի նոր դժուարութիւն, արգելք, որ կապուած էր նոր եզրաբանութեան օգտագործման հետ, «ցեղասպանութիւն» եզրի գիտական շրջանառութեան մէջ մտնելու հետ: Անհրաժեշտ դարձաւ ապացուցել որ հայերի ջարդը, կոտորածը, եղեռնը «ցեղասպանութիւն» է, եւ ոչ սովորական մարդասպանութիւն:

Այսօր այն թեւակոխում է իր զարգացման նոր փուլը, որտեղ հայ ժողովուրդը հանդէս է գալիս աւելի կազմակերպուած ու գիտակից, որտեղ աւելի ուժեղ է հայրենիքի եւ Սփիւռքի համագործակցութիւնը, որտեղ օտար երկրների դիւաններում բացայայտուում են Հայոց Ցեղասպանութեան փաստը հաստատող նորանոր պաշտօնական, հաւաստի վաւերագրեր, որտեղ ազգային հարցերն սկսում են ստանալ պետական ու միջազգային հանգամանք, որտեղ հարցերի հետապնդումն ու հետազօտութիւնը կատարւում է մասնագիտական մակարդակով ու միջազգային չափանիշների համաձայն, որտեղ աշխարհի տէրութիւնները սկսում են ոչ միայն ընդունել Հայոց Ցեղասպանութեան փաստը ու դատապարտել ցեղասպանին, այլեւ երեւոյթին տալ քաղաքական, իրաւագիտական ու դիւանագիտական գնահատական, որտեղ թուրք մտաւորականութիւնը սկսում է պահանջել ակներեւ փաստերի առարկայական վերլուծութիւն, որպէսզի կարողանայ ուղիղ նայել մարդկանց աչքերին: Թուրքերի կողմից գործադրուած Հայերի Ցեղասպանութեան հարցերը այսօր աւելի մեծ խորութեամբ ու շահագրգռուածութեամբ քննարկւում են միջազգային ատեաններում, ազգային խորհրդարաններում, գիտական ժողովներում, հրատարակութիւններում ու մամուլում: Միաժա-

Արամ Թիհրապեան, *Հայ Ժողովրդի Դատաստանին Առջեւ*, Մարսէյլ, տպարան Երէցեան, 1925; Andre Mandelstam, *La Societe des Nation et les Puissance Devant le Probleme Armenien*, Paris, 1926, Edition speciale de la revue general de De Droit International Public, 8; Fridtjof Nansen, *Armenia and the East*, London, George Allen and Unwin, 1928; Մէվլան Զատէ Ռիֆաթ, *Օսմանեան Ցեղափոխութեան Մութ Մալքերը եւ Իթթիհատի Հայաջինջ Ծրագիրները*, 1929; Aram Turabian, *L'Eternelle Victime de la Diplomatie Europeanne*, Paris, 1929; Winston Churchil, *The World Crisis*, London, Thoronton Butler-Worth, 1929; Franz Werfel, *The Forty Days of Musa Dagh*, New York, The Viking Press, 1934.

4674

մանակ, արագ քայլերով իրականանում է հետազոտությունների էլ աւելի գիտականացման ընթացքը, ցեղասպանագիտության ձեւաւորման ընթացքը: Այսօր հասել է պահը, որպէսզի աշխարհը մտածի տեսական հիմնաւորուած հարցադրումներից գործնական քայլերի անցնելու մասին: Այս պայմաններում նորաստեղծ Հայաստանի Հանրապետության պետությունը, կառավարությունը, ժողովուրդը եւ ողջ սփիւռքահայությունը կանգնած են Հայկական Հարցը նորովի ու ստեղծագործօրէն վերանայելու, փաստարկելու, մեկնաբանելու եւ լուծելու հրամայականի առաջ:

Մինչեւ անցեալ դարու քառասունական թուականների կէսերը, Հայոց Ցեղասպանությունը մնում էր իր տեսակի մէջ եզակի մի երեւոյթ: Եւրոպայում ֆաշականների կողմից կազմակերպուած հրեաների ողջակիզումը, գնչուների, լեհերի եւ այլ սլաւների զանգուածային սպանությունը, Սթալինի կողմից իր քաղաքական ու գաղափարական հակառակորդների զանգուածային մաքրագործումը, Գոմբոտիայում Կարմիր Խմերների կազմակերպած զանգուածային մաքրագործումը, Չինաստանում Մշակութային Յեղափոխության ընթացքում քաղաքական հակառակորդների ոչնչացումը, Ափրիկէում Ափրիկեան Հանրապետության Ապարթէիդը, Ուկանտայում Իտի Ամին Տատայի, Հարաւային Սուտանում եւ Եթովպիայում միջցեղային ու միջկրօնական առճակատումների ընթացքում գործադրուած զանգուածային սպանությունները համաշխարհային հանրային կարծիքն ու մեծ տէրությունների ղեկավարներին հարկադրեցին ընդունել, որ գոյություն ունի Օսմանեան Կայսրությամբ սկսած մի այնպիսի անաւոր համաշխարհային երեւոյթ, որ ունակ է ձիւնագնդակի նման մեծանալու, եթէ դրա առաջքն առնելու լուրջ քայլեր չձեռնարկուեն: Այդ անհնարին է առանց Հայերի Ցեղասպանության փաստը ընդունելու եւ ոճրագործին պատժելու:

1944 թ., լեհական ծագումով ամերիկացի գիտնական Ռաֆայէլ Լեմքինը գիտական շրջանառության մէջ մտցրեց Genocide («ցեղասպանություն») եզրը, որ կազմուած է յունարէն genos-ցեղ եւ լատիներէն cide-սպանել բառերից: Որոշ դէպքերում օգտագործուում են judocide եւ armenocide արտայայտությունները: Նոյեմբեր 1945 թ. մինչեւ 1946 թ. Հոկտեմբերը տեղի ունեցաւ Նիւրեմբերկեան դատավարությունը, որ դատապարտեց Երկրորդ Աշխարհամարտի այն ֆաշական ղեկավարներին, որոնք պատասխանատու էին հրեաների, գնչուների եւ սլաւների ցեղասպանության: Դատական ատեանի որոշումներում «Պատերազմի յանցագործ» հասկացության ծաւալում ճշգրտուեցին նաեւ «խաղաղության եւ մարդկության դէմ յանցագործություն» տարբերակումը եւ ակրեսիա ու ցեղասպանութիւն եզրերը: 1948 թ. Միացեալ Ազգերի Կազմակերպության Ընդհանուր Ժողովը ընդունեց «Ցեղասպանության Յանցագործությունը Կանխելու եւ Պատժելու Վերաբերեալ Կոնվենցիան», որ ուժի մէջ մտաւ 1951 թ.: Սոյն որոշման ընդունման ընթացքում որոշակի դեր խաղաց 1949 թ. Մենովայի Կոնվենցիան, որ 1907 թ. Հակի Կոնվենցիայի տրամաբանական շարունակությունն էր: Ցեղասպանության հետ աղերս ունեցող հարցերը ոչ միայն մտան բոլոր մարդասիրական կազմակերպությունների օրակարգի մէջ, այլեւ դարձան մի շարք գիտությունների ուսումնասիրության առարկայ:

Ցեղասպանագիտության զարգացման արդի փուլի կարեւոր առանձնայատկություններից մէկը կարելի է նկատել տարբեր երկրների (Աւստրիայի, Գերմանիայի, Ֆրանսայի, Անգլիայի, ԱՄՆ-ի, Աւստրալիայի, Արժանթինի, ՄԱԿ-ի եւ այլ) դիւանների պահպանուող եւ ցարդ գիտական հասարակության անծանօթ նիւթերի հրատարակությունը: Եթէ անցեալում առանձին օտար ցեղասպանագէտների մենագրությունները եւ առանձին մարդասէր գիտնականների հայանպաստ արտայայտությունները մեծ ներդրում էին նկատւում, այժմ արդէն ի նպաստ Հայերի Ցեղասպանության գիտական հիմնաւորման փաստարկներով եւ թուրքերի ուրացման քննադատությամբ հանդէս է գալիս Ցեղասպանագէտների Միջազգային Կազմակերպությունը, Ամերիկեան Պատմաբանների բազմահազարանոց Ընկերակցությունը: Հայերի ցեղասպանությունը միջազգային գիտության ուսումնասիրության առարկայ դառնալով նուաճեցաւ «մեծ դիւանագիտության», «շահերի դիւանագիտության» ներգործության տեսակարար կշիռը[1]: Թուրք հեղինակներ իրենց յուշագրությունների միջոցով հրապարակեցին ուշագրաւ հաւաստի փաստեր Հայերի Ցեղասպանության տարբեր երեսների մասին: Ոչ թէ առանձին թուրք գիտնականներ, այլ խումբերով թուրք գիտնականներ սկսեցին քննադատել թուրք կառավարության ուրացման քաղաքականության տարբեր երեսները եւ պահանջել արդարամտության ու գիտականության յաղթանակը[2]:

Հայերի Ցեղասպանության 90-ամեակի յիշատակումը՝ հայ պետականության գործօն ղեկավարությամբ, կազմակերպուած ու հայաստանակեդրոն Սփիւռքի նպատակասլաց նուիրումով, համաշխարհային գիտական մտքի հոգատարությամբ եւ միջազգային դիւանագիտության մէջ նկատուող շրջադարձով արձանագրեց դարակերտիչ նուաճումներ: Արդի ցեղասպանագէտների ու հայա-

1. Տես՝ Ցաւելուած թիւ 1, 3, 4, 5 եւ 7:
2. Տես՝ Ցաւելուած թիւ 2 եւ 6:

գէտների սեպուհ խնդիրն է իմաստաւորել ու խորացնել դրանք: Միշտ նկատի ունենալ որ թուրք կառավարութիւնները միշտ կապուած են եղել Հայերի Ցեղասպանութեան հետ, կա՛մ այն մտայղացնալու, ծրագրելու եւ գործադրելու առումով, եւ կամ էլ՝ այն ուրանալու տեսանկիւնից:

Սոյն գրքի նպատակն է՝ ելնելով ցարդ կատարուած ուսումնասիրութիւնների արդիւնքներից, եւ օգտուելով իմացութեան տարբեր ճիւղերին բնորոշ եղանակներից, վերլուծել Օսմանեան պետութեան ծրագրած ու գործադրած Հայերի Ցեղասպանութեան երեսները եւ կատարել որոշ տեսական ընդհանրացումներ:

Կլենտէյլ, 10 Յունիսի, 2005

ԳԼՈՒԽ Ա.

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԴՐԵԱԼՆԵՐԸ

Պատմական ամէն մի երեւոյթ գտնւում է որոշակի պատճառահետեւանքային կապերի կառոյցում: Գիտութեան խնդիրն է բացայայտել եւ ուսումնասիրել այդ կապերը: Այլապէս, երեւոյթը կը մնայ անհասկանալի, պատմագիտութիւնը կը վերածուի անիմաստ եւ անօգտակար զբաղմունքի: Պատճառահետեւանքային կապերի ճանաչումը հնարաւոր է հետեւանքից դէպի պատճառը խորասուզուելով: Այս նշանակում է որ պատճառը հետեւանքին նախորդող դէպքերի կառոյցի մէջ է: Խիստ դժուար է որոշել թէ նախորդող դէպքերից որ մէկն է առաջացած երեւոյթի հիմնական պատճառը: Մեծ սխալներով է մարդ մօտենում ճշմարտութեան: Այդպէս կատարուեց նաեւ Հայերի Ցեղասպանութեան պատճառների բացայայտումը:

1915 թուականից մինչեւ օրս շատ գիտնականներ փորձել են պարզել այդ հարցը: Դեռ շատ անելիք կայ այդ ուղղութեամբ: Կարեւոր է այն, որ արդէն հրաժարուել ենք մակերեսային մօտեցումից եւ երեւոյթը մէկ գործօնով բացատրելու միտումից: Դեռ մէկ քանի տարի առաջ շատեր Ցեղասպանութեան առաջացումը բացատրում էին լոկ կրօնական գործօնով, մոռանալով, որ շատ իսլամներ այն քննադատել են, կամ՝ իսլամ ժողովուրդներ ենթակայ դարձել թուրքի եաթաղանին (արաբներ, ալպանացիներ): Ուրիշներ զուտ դաղափարախօսականն են նկատել բուն պատճառը. փան-թուրանիզմը. փան-թուրքիզմը, փան-իսլամիզմը, նացիոնալիզմը, միլիթարիզմը: Որոշ մարդիկ փորձել են այն վերագրել ճակատագրին, նախախնամութեան կամ հայու «աստուածուրացութեան»: Վերջին քսանհինգ տարիների ուսումնասիրութիւնները աւելի խորը վերլուծելով կուտակուած փաստերը, եւ աւելի գիտականօրէն դրանք մեկնաբանելով, որոշակի փոփոխութիւն մտցրին Ցեղասպանութեան պատճառների լուսաբանման ասպարէզում:

Այսօր հայերն ու նրանց անկեղծ բարեկամները նորից բացում են հայ պատմութեան ամենաարիւնալի եւ ամենաողբերգական էջերը, որտեղ գրուած են թէ ինչո՞ւ եւ ի՞նչպէս հայերս կորցրինք մեր պատմա-

կան հայրենիքի 9/10 մասը, մեր ժողովրդի կէսից աւելին, ու ցրուեցինք աշխարհով մէկ: Կարդում ենք այդ էջերը՝ ոչ միայն չմոռանալու համար մեր անցեալը, ոչ միայն վառ պահելու մեր պահանջատիրական ոգին, ոչ միայն աղօթելու մեր պաշտպանութեան հերոսների համար, ոչ միայն ամրապնդելու ստեղծագործաբար ապրելու եւ յաւերժելու մեր երդումը, ոչ միայն շնորհակալութիւն յայտնելու այն բոլոր ժողովուրդներին, կազմակերպութիւններին եւ անհատներին, որոնք օգնեցին մեզ այդ ծանր ճակատագրական օրերին, այլ ե՛ւ, այդ էջերը բարձրաձայն կարդում ենք ի լուր ամբողջ աշխարհի, որպէսզի այսօրուան Թուրքն ու ազերին ճանաչի իր նախորդների եւ իր կատարած բարբարոսութիւնների մարդակործան խորքն ու դատապարտի ցեղասպանութիւնը, որպէսզի աշխարհի բոլոր ազնիւ մարդիկ համախմբուեն ու միացեալ ուժերով պայքարեն բոլոր ցեղասպանների դէմ, եւ բացառեն ցեղասպանութիւնը ընդհանրապէս[1]:

Ցեղասպանութիւնը հնարաւոր է դառնում, երբ խմբակցական, կառավարական ու ազգային շահերը պաշտպանելու համար ղեկավարները չկարողանան առաջնորդուել ընկերային կեանքին բնորոշ օրէնքներով ու սկզբունքներով, եւ դիմեն ընկերութեան եւ մարդկանց վրայ ներգործելու արտաընկերային եղանակների ու միջոցների: Թուրքերը խափանեցին հայերի եւ միջազգային կազմակերպութիւնների հետ բանակցելու հնարաւորութիւնը: Հրաժարուեցին բարեփոխումների ու փոխադարձ համագործակցութեան եղանակներից: Նրանք որդեգրեցին խտրականութեան, ձուլման եւ ցեղասպանութեան արտաընկերային միջոցները: Ազերիները հայերի սահմանադրական խաղաղ շարժմանը հակադրեցին փոկրոմ, կողոպուտ ու ցեղասպանութիւն:

Ցեղասպանութիւնը հնարաւոր է դառնում, երբ որոշ ազգեր, հաւաքականութիւններ ցանկանում են ուրիշներին զրկել տարրական մարդկային իրաւունքներից (հաւասարութիւնից, ազատութիւնից, սեփական հայրենիքից, սեփական մշակոյթից, իրենց սեփական կեանքը անօրինելու հնարաւորութիւնից): Նրանք թերագնահատում են ուրիշներին, եւ իրենց վերապահում բոլոր բարիքներից օգտուելու իրաւունքը: Թուրքիայում հպատակ ժողովուրդների անդամները երկրորդական քաղաքացիներ էին համարւում: Մինչեւ 19-րդ դարի կէսերը, լաւագոյն եւ եկամտաբեր դիրքերը համարւում էին բանակային ծառայութիւն ու պետական պաշտօնէութիւնը: Նրանք հիմնականում վերապահուած էին Թուրքերին: Նիւթական բարիքների արտադրութիւնը, առեւտուրը թողնուած էր երկրորդական կարգի քաղաքացիներին: Երբ Թուրք լիբերալներ եկան եւ ուզեցին երկիրն արդիականացնել, չկարողացան վերջիններ հետ մրցակցիլ, ու դիմեցին ջարդին: Նրանք գտնում էին որ ոչ-Թուրքերը պէտք է ձուլուեն իրենց պատմական հայրենիքում

1. Տես՝ Յաւելուած թիւ 2, 4, 5, 7 եւ 8:

եւ կորցնեն սեփական ազգային դիմագիծը: Երբ այդ անբնական պահանջը մնաց անիրականանալի, նրանք դիմեցին ցեղասպանութեան: Նոյնն արեցին ազերիները: Նրանք ցանկանում են զրկել Ղարաբաղի հայերին ազգային ինքնորոշման իրաւունքից, հայ լինելու եւ հայ մշակոյթը զարգացնելու իրաւունքից, եւ իր մայր ժողովրդի հետ միանալու իրաւունքից: Անբնական եւ անմարդկային պահանջի գործադրութիւնը ծնեց անմարդկային ու անբնական վարքագիծ՝ ցեղասպանութիւն եւ շրջափակում:

Ցեղասպանութիւնը հնարաւոր է դառնում, երբ պատերազմը համարւում է նպատակին հասնելու միջոց, եւ ազգայնամոլութեամբ ներծծուած միլիթարիզմը հռչակւում է հիմնական գաղափարախօսութիւն: Թուրքիան երազում էր պատերազմի միջոցով վերագրաւել Օսմանեան Կայսրութեան այն տարածքները, որ վերջին 200 տարիների ընթացքում իրենից վերցրել էին Ռուսիան, Անգլիան եւ Ֆրանսան: Նրանք ցանկանում էին վերաստրկացնել ազատութիւն ձեռք բերած ազգերին: Բանակը, այդ առաքելութեան մէջ, դառնալու էր վերափոխիչ հիմնական ոյժը եւ միլիթարիզմը վերականգնելու էր Թուրք ազգի կործանուող հպարտութիւնն ու արժանապատուութիւնը: Ազերիները ճնշելով հանրապետութեան ժողովրդավարական ուժերը, ծնեցին ազգայնամոլ, ռազմամոլ եւ կոյր ֆանաթիկ Ազգային Ճակատը, որ ծայրաստիճան սրեց Անդրկովկասի դրութիւնը: Այն փոկրոմներ կազմակերպեց Վրաստանում, Հայաստանում, Ղարաբաղում եւ Հայաշատ ազրպէյճանական բնակավայրերում: Նրա ջոկատները սկսեցին բնաջնջել ոչ միայն հայերին, այլեւ վրացիներին, հրեաներին եւ ռուսներին: Պատահական չէր որ Թուրքական բռնակալութեան կողմից կազմակերպուած Հայոց Ցեղասպանութիւնը դատապարտելուց հրաժարւում են առաջին հերթին տարբեր երկրների ռազմական մեքենայի մաս կազմող կամ նրան յարող անհատներն ու հաստատութիւնները:

Ցեղասպանութիւնները, զանգուածային կոտորածներն ու ջարդերը յաճախ ուղեկցում են մեծ գաղթերի (զանգուածային տեղաշարժերի), գաղութատիրութեան հաստատման ու ապագաղութացման գործընթացներին[1]:

Թուրանական ցեղերի արշաւանքները նպատակ ունէին ոչ միայն թալանել երկիրը, գերի վերցնել բնակիչներին, զանոնք տարբեր աշխարհներում վաճառելու համար, այլ նաեւ հաստատուել այնտեղ՝ բնիկներին կոտորելով ու բռնի տեղահանելով: Թուրք պատմագիր Փեշեւին օսմանեան իշխանութեան հաստատման օրերի մասին խօսելով գրում է. «Յաղթական բանակի սարսափից քաղաքներն ու գիւղերը,

1. Jean Paul Sarter, *The Memory of an Affinity Between Colonialism and Genocide (on Genocide)*, Ramports, February, 1968, p. 37-41.

տներն ու բնակավայրերը այն աստիճան ամայացել, աւերուել եւ բուերի ու ագռաւների բնակավայր էին դարձել, որ տեսնողին սարսափ էին պատճառում»: Թուրք զինուորները իրենց վրանները լցրել էին հայ պարմանուհիներով ու պարմաններով ու պղծում էին զանոնք[1]: Հայերի ապագաղութացման ընթացքին թուրքերը հակադրեցին 1895-1897, 1908, 1915-1923 թթ. Հայերի ջարդերն ու Ցեղասպանութիւնը: Կովկասեան թաթարների, ազրպէյճանցիների կողմից Ղարաբաղի գաղութացումը սկսեց ու զուգորդուեց Շուշիի, Պաքուի, Գանձակի եւ այլ հայկական բնակավայրերի հազարաւոր հայերի կոտորածներով, ջարդերով ու բռնի տեղահանութիւններով: Ղարաբաղի ժողովրդի ապագաղութացման գործընթացը կասեցնելու համար ազրպէյճանցիք կազմակերպեցին Աղդամի, Սումկայիթի, Կիրովապատի ու Պաքուի հայերի կոտորածներն ու ջարդերը: Մօտ կէս միլիոն հայեր հարկադրուած եղան այլ երկրներում ապաստանուելու:

Ցեղասպանութիւնը հնարաւոր է դառնում, երբ մի փոքրամասնութիւն ցանկանում է յաւերժացնել իր բռնակալական իշխանութիւնը մեծամասնութեան վրայ, քանի որ այդ նպատակն անհնարին է իրականացնել բնական ու մարդկային միջոցներով: Մի փոքր ցեղախումբ 13-րդ դարի վերջում սուլթանական գերդաստանում գերիշխանութեան հասնելով, 16-րդ դարում ստեղծում է Օսմանեան Կայսրութիւնը, որի բնակչութիւնը համարւում էր շուրջ 40 միլիոն, իր ծաղկման շրջանում: Դրա միայն 15%-ը թուրքեր էին: Աստիճանաբար տարբեր իսլամ եւ քրիստոնեայ ժողովուրդներ ձեռք էին բերում անկախութիւն ու դուրս գալիս կայսրութիւնից: Այդ ընթացքը Սուլթանն ու Երիտթուրքերը չկարողացան կանգնեցնել: Զգործեց ձուլողական քաղաքականութիւնը: Դիմեցին ցեղասպանութեան: Նոյնպէս են վարւում ազերիները: Նրանք երկու հայկական տարածք էին զաւթել՝ Նախիջեւանն ու Ղարաբաղը: Երկու հայկական տարածքներում կիրառեցին ձուլման քաղաքականութիւնը: Նախիջեւանում այն յաջողուեց, իսկ Ղարաբաղում՝ ոչ: Ղարաբաղի բնակչութեան 17%-ը կազմող ազերիները ցանկացան եօթանասուն տարիներ անընդհատ իրենց կիրառած հայահալած քաղաքականութիւնն ու անմարդկային կեղեքումը շարունակել այդ մարզում: Բնական ճանապարհով այն անհնար էր: Անցան ցեղասպանութեան ու շրջափակման:

Ցեղասպանութիւնը հնարաւոր է դառնում, երբ աշխարհի բախտը տնօրինող ուժերը կուրացած իրենց եսապաշտական շահերով, փառամոլութեամբ ու աշխարհակալական երազանքներով, անտեսում են իրաւունք եւ բարոյականութիւն, մարդասիրութիւն եւ աստուածավախութիւն: Նրանք չեն բռնում ցեղասպանի արիւնոտ ձեռքը, չեն նկատում ցեղասպանական արարքը անհրաժեշտ պահին: Օսմանեան Կայսրութիւնում հաւատարմագրուած մեծ տէրութիւնների դեսպանները, հիւպատոսները տարիներ շարունակ իրենց պատկան իշխանութիւններին տեղեկացնում էին այդ կայսրութիւնում ծաւալուող կոտորածների մասին: Դրանք լրացնում էին հայկական եւ օտար բարեսիրական կազմակերպութիւնների եւ օտարերկրեայ թղթակիցների ուղարկած սարսափազդու հաղորդագրութիւններով: Իսկ բոլոր մեծ տէրութիւններն անխտիր մտածում էին թէ իրենց տրուած «այդ խաղաթուղթ»ը իրենք ինչպէս կարող են օգտագործել իրենց շահի, ու մրցակցին վնասելու համար: Փրկւում էր օրինազանցը: 19-րդ դարի վերջի եւ 20-րդ դարի սկզբի հայկական ջարդերը չստացան ո՛չ քաղաքական, ո՛չ իրաւական եւ ո՛չ էլ գաղափարական վերլուծութիւն: Նրանք միայն ունեցան ընդհանուր բարոյախօսական գնահատում: Ի տես եւրոպացիների անբարոյականութեան՝ ջարդարարները, մարդասպանները, ցեղասպանները յայտարարեցին որ իրենց ուսուցիչները գտնւում են Եւրոպայում, որ իրենք աւելի ազնիւ են, քան իրենց վարպետ դաստիարակները: Գերմանացիները բոլոր հնարաւորութիւնները տուին որ թուրքերը հաշուեյարդար տեսնեն հայերի, յոյների, արաբների եւ այլ իրաւազրկուած ժողովուրդների հետ: Պատերազմից յետոյ, ցեղասպանին պատժելու փոխարէն մեծ տէրութիւններից իւրաքանչիւրը սիրաշահում է նրան, որպէսզի նա ծառայի իրեն եւ ոչ թէ միւս կողմին: Այս՝ ցեղասպան թուրքին նոր առիթներ տուեց, որ նա նորից անխնայ կոտորի հայերին, յոյներին, արաբներին եւ այլոց: Նոյնը եղաւ ազերիների ցեղասպանական արարքների ժամանակ: Սովետական բանակը սառնասրտութեամբ դիտեց Սումկայիթի ցեղասպանութիւնը եւ միջամտեց, երբ հիմնականը կատարուած էր: Նոյնը նա արեց նաեւ Պաքւում, Շուշիում: Եղան բազմաթիւ դէպքեր, երբ ինքը զինակցեց ցեղասպանին: Սովետական խորհրդարանի բազմաթիւ երեսփոխաններ լրիւ անտարբերութիւն ցուցաբերեցին, եւ շատ դէպքում քուէարկեցին ի շահ ցեղասպանին:

Ցեղասպանութիւնը հնարաւոր է դառնում, երբ որոշ հաւաքականութիւններ կարծում են որ շրջապատում տիրող անարդարութեան, դժբախտութեան, սովի ու կոտորածի պայմաններում իրենք կարող են կերտել իրենց երջանկութիւնը: Դա անհնարին է: Այդպէս մտածեցին որոշ քիւրտեր եւ շատ շուտով կոտորուեցին այն նոյն թուրքերի ձեռքով, որոնք նրանց օգտագործել էին Հայերի Ցեղասպանութեան ժամանակ: Ցեղասպանութիւնը դիւանագիտական սառնասրտութեամբ դիտող Եւրոպան ինքը համտեսեց ցեղասպանութեան արհաւիրքը Երկրորդ Համաշխարհային Պատերազմի ժամանակ:

Ցեղասպանութիւնը անբարոյական արարք է: Այն անմարդկային,

1. Թուրքական Աղբիւրները Հայաստանի Ու Հայերի Եւ Անդրկովկասեան Միւս Ժողովուրդների Մասին, կազմեց Ա. Սաֆրաստեան, հատոր Ա., Երեւան, 1964, էջ 33:

բարբարոսական արարք է մարդու նկատմամբ: Այն ստորացնում է մարդկային ցեղը, մարդկայնականը մարդու մէջ: Այս առումով, այն համամարդկային հարց է, քանի որ վտանգում է ողջ մարդկութեան բնականոն գոյութիւնը:

Կան երեւոյթներ, որոնք հակաբարոյական լինելով հանդերձ, չեն դառնար յանցանք, իրաւախախտում: Ցեղասպանութիւնը ամենամեծ յանցագործութիւնն է: Այն ոճիր է: Այն ուղղուած է մարդկային որոշակի խմբի գոյութեան դէմ եւ անտեսում է քաղաքակիրթ աշարհի բոլոր իրաւական սկզբունքները, նորմերը, կանոնները, սովորոյթները: Այն չէզոքացումն է մարդկային գոյութեան իրաւունքին, որ մարդկային բոլոր իրաւունքների նախապայմանն է:

Այս առումով էլ այդ համամարդկային է: Ցեղասպանութիւնը հակամշակոյթ, հակաքաղաքակրթութիւն է: Այն ոչնչացնում է ոչ միայն արժէքներ ստեղծողին, այլեւ ստեղծուած արժէքները: Հայերի Ցեղասպանութիւնը փորձեց Հայկական Հարցը քաղաքական, դիւանագիտական ճանապարհով լուծելու եղանակը բացառել: Այդ նշանակում էր որ հայերը պէտք չէ հայրենիք ունենան, պէտք չէ ինքնատիպ սեփական լեզու ու մշակոյթ ունենան: Ցեղասպանութեան դէմ պայքարը, պայքար է յանուն մշակութային բազմազանութեան, ամէն մի ժողովուրդի գոյութեան եւ ազատ ինքնորոշման իրաւունքի:

Հայկական Հարցը լուծելու նման անմարդկային եւ ապօրինի եղանակի ահաւորութիւնը միացնում է մարդկանց: Այդ փաստի իմացութիւնը մեծացնում է հայոց բարեկամների բանակը: Այն նաեւ միացնում է հայերին: Այն հայացնում, դէպի արմատներին է կանչում օտարանալ սկսած հայերին: Այն դառնում է ազգապահպանման գործօն: Պայքարը Հայերի Ցեղասպանութեան դէմ գիտակցւում է որպէս պայքար յանուն բարոյականի, օրինականութեան, արդարութեան, մարդկային իրաւունքի, մարդկային բարիկամեցողութեան, խաղաղութեան եւ երջանկութեան:

Հայերի Ցեղասպանութեան փաստը հայկական պահանջատիրութեան արդարացման, հիմնաւորման միջոց է: Հայերը պահանջ ունէին: Այդ պահանջը միջազգային ճանաչում գտաւ: Այդ պահանջը վերացընելու համար պահանջատէրը սպաննուեց: Այսօր յատուկ նշանակութիւն է ստանում պահանջատիրութիւնը:

Արդի պայմաններում մեր առաջ բարձրացած գլխաւոր հարցերն են.

1) Ինքնուրոյն ազգային պետականութեան ամրապնդման, ազգային տնտեսութեան զարգացման եւ Հայաստանի Հանրապետութեան միջազգային հեղինակութեան բարձրացման հիման վրայ խարսխել քաղաքական պահանջատիրութիւնը: Առանց ուժեղ եւ արդիականացուած տնտեսութեան, առանց կայուն եւ զօրաւոր միջազգային դիրքի, պահանջատիրութիւնը կը մնայ լոկ ձայն:
2) Ցեղասպանութեան միջազգային ճանաչման հիման վրայ մշակել ու խորացնել հարցի իրաւա-բարոյական երեսները: Նշենք որ Հայկական Հարցի միւս բաղադրամասերը միջազգային փաստաթուղթերով իրաւականօրէն ճանաչուած են: Այս մէկը՝ ոչ: Այս պարագան սրում է նրա համար մղուող պայքարը:
3) Ազգապահպանման նոր ծրագրի մշակում: Պայքար սպիտակ ջարդի դէմ: Ազգը պահել հողի համար, հողը՝ ազգի համար եւ երկուսը միաձուլել: Առանց հողի ազգ եւ պետականութիւն չկայ, առանց ազգի՝ հողի վրայ ապրելու պատրաստ ազգի՝ հողն անիմաստ է:
4) Ազգային միասնականութեան ամրապնդում, ինչպէս Հայրենիքում եւ Սփիւռքում, այնպէս էլ Սփիւռքի եւ Հայրենիքի միջեւ:

Վերոյիշեալ բաղադրամասերը հանդէս են գալիս իրար հետ ներքնապէս կապուած ամբողջութիւն: Ամէն մէկը ենթարկւում է միւսների պահանջներին, տրամաբանութեան, իր հերթին ազդելով ինչպէս ընդհանուր կառոյցի, այնպէս էլ միւսների վրայ: Կեանքի փորձը ցոյց է տալիս որ պատմական ամէն մի ժամանակահատուած առաջին գծի վրայ է քաշում բաղադրամասերից մէկն ու մէկը: Լինում են դէպքեր, երբ հարցերի նախասիրութիւնն ու կարեւորութիւնը պայմանաւորում է նրանց լուծելու մարդկանց տուեալ հաւաքականութեան կարողութեան եւ հնարաւորութեան սահմանները:

Ցեղասպանութեան երեսները տարբեր կողմերով կապուած են Հայկական Հարցի միւս բաղադրամասերի հետ եւ նպաստում են նրանց գործառնութեան: Ամէն մի կապ ստեղծում է ինքնատիպ ընկերային-քաղաքական կառոյցներ, որոնք պահանջում են մասնաւոր մօտեցում: Այսօր հայ ժողովրդի առաջ ծառացած են խիստ ինքնատիպ ու համադրուած կառոյցներ, խնդիրներ, որոնք պահանջում են նոր, ոչ-աւանդական, հնարամիտ, ստեղծագործ, ճկուն եւ համարձակ լուծումներ, ի մասնաւորի իրաւական, դիւանագիտական ու քաղաքական:

ԳԼՈՒԽ Բ.

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՆԸ

Տէրը սա վեց բանը կ'ատէ.
Եւ անոր հոգիին առջեւ եօթը բան գարշելի է.
Գոռոզ աչքերը,
Ստախօս լեզուն,
Անմեղ արիւն թափող ձեռքեր,
Անօրէն հնարք նիւթող սիրտ,
Չարութեան համար շտապելով վազող ոտքեր,
Սուտեր արտաբերող սուտ վկայ,
Ու եղբայրներու մէջ կռիւներ ծագեցնող մարդ

(Առակաց 6. 16-19):

Ցեղասպանութիւնը չարիք է, չարիքների կծիկ: Այն միացումն է մեծամտութեան, ինքնագերագնահատման, կարծրասրտութեան, ստախօսութեան, արիւն թափելու եւ վնասելու մարմաջի, անօրինութեան, եղբայրադաւանութեան ու խարդաւանքի: Այն վատթարագոյն ընկերային չարիքն է: Երբ բնական չարիքները (երկրաշարժ, ջրհեղեղ, համաճարակ եւ այլն) աղերս ունեն մարդ-բնութիւն առաջացած աններդաշնակութեան, որտեղ որոշիչը բնութեան ընթացքն է, որ յարիր չէ մարդու պահանջներին ու ցանկութիւններին, ընկերային չարիքը հետեւանք է մարդ-Աստուած եւ մարդ-մարդ յարաբերութիւններում մարդու նախաձեռնութեամբ արձանագրուած աններդաշնակութեան, սխալների, շեղումների՝ երբ մարդ չի կատարում Աստուծոյ կամքը, երբ մարդ իր ազատ կամքով չի ենթարկւում մարդու բնականոն զարգացման, մարդու երջանկացման, փոխադարձ սիրոյ եւ խաղաղ գոյակցութեան օրէնքներին ու սկզբունքներին: Ցեղասպանութիւնը իր մէջ ընդգրկելով ֆիզիքական ոչնչացման տարրը, այսինքն՝ մարդկային խմբերի զանգուածային սպանութեան, մօտենում է ֆիզիքական չարիքին, համակարգի ոչնչացման, վերացման:

Ընկերային իրականութեան բնորոշ են որոշ առանձնայատկութիւններ, որոնք նկատելի են նաեւ ցեղասպանական գործընթացներում:

Բնագիտութեան, քիմիագիտութեան, կենսաբանութեան որեւէ օրէնքի կամ սկզբունքի խախտում, կարճ ժամանակահատուածում ա-

ռաջ կը բերի տուեալ մարմնի քայքայում, կործանում կամ այլափոխութիւն: Ընկերային իրականութիւնը համեմատաբար աւելի կայուն է, համեմատաբար նուազ անմիջականութեամբ է քայքայւում, փոխւում կամ այլայլւում, եթէ անտեսուեն ընկերային կեանքի օրէնքները: Այս ակնյայտ է այն փաստում, որ մարդկութեան պատմութեան մէջ տասնամեակներ ու հարիւրամեակներ գոյատեւել են ստրկատիրական, աւատատիրական, գաղութատիրական կարգեր, որտեղ անընդհատ խախտուել ու անտեսուել են ընկերային կեանքի բնականոն ու արդար օրէնքները: Նմանօրինակ երեւոյթ է նաեւ կոմունիզմի յարատեւումը:

Ֆիզիքական, քիմիական, կենսաբանական իրականութեան իրերն ու երեւոյթները գործում են ըստ իրենց ի սկզբանէ ընորոշ կամ ի սկզբանէ տրուած օրէնքների ու կանոնների: Ընկերային իրականութեան մէջ արձանագրուած ամէն մի գործընթաց կապուած լինելով մարդկային գիտակցութեան, ընտրելու իրաւունքի ու ազատ կամքի հետ ձեռք է բերում ենթակայական աշխարհի ընորոշ առանձնայատկութիւններ, շեղումներ եւ երանգաւորումներ: Ընկերային բոլոր երեւոյթները կը-բում են մարդու ստեղծագործական գործունէութեան, նրա ընտրելու իրաւունքի ու ազատ կամքի կնիքը:

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ Է ՄԱՐԴՈՒ ԱՆՁՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ

Արարչութեան ժամանակ Աստուած ստեղծելով տիեզերքը, միաժամանակ նրա ամէն մի բաղադրամասին տուեց իրեն ընորոշ սկզբունքները, կանոններն ու օրէնքները, որոնցով նրանք ղեկավարւում են ու գոյատեւում: Նրանք ենթակայ են լոկ ֆիզիքական օրէնքներին: Բնութիւնը բացառապէս գոյատեւում ու տնօրինւում է այդ օրէնքներով՝ առանց ընտրելու, շեղուելու եւ գիտակցելու իրաւունքի: Կենդանիները գոյատեւում են ըստ իրենց բնազդի, առանց գիտակցելու իրենց գոյութիւնը, գոյութեան նպատակը, ճանաչելու ու պաշտելու իրենց Արարիչին: Նրանք ենթակայ են ոչ միայն ֆիզիքական ու կենսաբանական օրէնքներին, այլ եւ ունեն նախնական հոգեբանական վարքագիծ:

Մարդը տիեզերքում բացառիկ նշանակութիւն ստացաւ: Աստուած մարդուն իր ձեռքով ստեղծեց եւ ոչ թէ հրամայեց ու արարուեց: Միայն նրա մէջ նա փչեց իր հոգին: Միայն նրան իր պատկերով ստեղծեց: Նրան շնորհեց հոգի, բանականութիւն եւ լեզու: Միայն նա է ունակ գիտակցելու իր գոյութիւնն ու դրա նպատակը, ճանաչելու ու պաշտելու իր Արարիչին ու նրա հետ հաղորդակցութեան մէջ մտնելու: Միայն նրան տրուեց բնութիւնը, բուսական ու կենդանական աշխարհը վայելելու եւ տնօրինելու իրաւունքը: Նրան միայն տրուեցին արարող ձեռքեր, երկնաձիգ դիրք ու խօսք: Այդ պատճառով էլ մարդ ոչ միայն յարմարւում է իր բնական ու ընկերային միջավայրին, այլ նաեւ այն փոխում, քանի որ միայն նրան Աստուած տուեց աշխատելու, մշակոյթ ստեղծելու, իրականութիւնը փոխելու եւ քաղաքակրթութիւն կերտելու կարողականութիւն: Այդ բոլորը անձնիշխան կամքի յատկութիւններն են, կամ՝ կազմում են ազատ կամքի հիմքերը:

Այսպիսով, ցեղասպանին շնորհուեց ազատ կամք: Բայց նա այն օգտագործեց չարը ընտրելու համար:

Աստուածաշնչում ընդգծուած է որ հիմնականում մարդածնունդ են, մարդկային ազատ կամքի սխալ օգտագործման արգասիք են ընկերութեան մէջ նկատուող չարիքը, բացասական շեղումները: «Չարերը

պիտի փնտռեն ինձ, բայց չեն գտնելու, քանզի ատեցին իմաստութիւնը եւ Տէրոջ երկիւղը չընտրեցին, չկամեցան անսալ իմ խորհուրդներին, արհամարհեցին իմ յանդիմանութիւնները» (Առակ. 1.28-30): Ցեղասպան թուրքը՝ ֆաշականը, ատեց իմաստութիւնը եւ աստուածային խորհուրդները: Յիսուս արժէքաւորելով երուսաղէմցիների վարքագիծը, ասաց. «Երուսաղէմ, Երուսաղէմ, որ կոտորում էիր մարգարէներին եւ քարկոծում էիր քեզ մօտ ուղարկուածներին. քանի անգամ կամեցայ հաւաքել քո մանուկներին, ինչպէս հաւն է հաւաքում իր ձագերին թեւերի տակ, բայց չկամեցաք» (Մատթ. 23.37): Իսկ Պօղոս սեփական կամքով կատարուած դրական արարքի նշանակութիւնը ընդգծելով գրում է. «Վայ ինձ, եթէ չաւետարանեմ: Եթէ կամովին եմ անում այդ, վարձ կայ ինձ համար, իսկ եթէ ակամայ՝ ծանր բեռ է ինձ յանձնուած» (Ա. Կորնթ. 9.17): Մի այլ առիթով նա ընդգծում է. «Իւրաքանչիւրը թող անի, ինչպէս յօժար է սրտով եւ ոչ հարկադրաբար եւ տրտմութեամբ, որովհետեւ Աստուած սիրում է զուարթառատ տուրքը» (Բ. Կորնթ. 9.7): Ցեղասպան թուրքը յօժարակամ սրտով կոտորեց մարդկանց ու ազգերի:

Որոշ աստուածաբաններ, իմաստասէրներ, հոգեբաններ ու կենսաբաններ գտնում են որ ո՛չ ինքը՝ մարդը, եւ ոչ էլ նրա կամքը չեն կարող ազատ լինել, քանի որ մարդ գործում է ըստ իր մէջ կուտակուած կենսաբանական, ընկերային ու հոգեբանական ինֆորմացիայի (զարգացուածութեան մակարդակի, իր մէջ առկայ հնարաւորութիւնների, իր գիտելիքների, իր ընկերային ու պատմական պայմանների, իր կենսաբանական նախադրեալների): Նրանք ընդգծում են որ մարդ իր միջավայրի, դաստիարակութեան ու ժառանգութեան արդիւնք է:

Անկասկած, նրանց խօսքերում որոշ ճշմարտութիւն կայ: Բայց նրանք անտեսում են այն, որ խօսքը ոչ թէ բացարձակ, այլ յարաբերական ազատութեան մասին է: Մարդու կամքի ազատութիւնը չի ենթադրում որ նրա գոյութիւնն ու զարգացումը հիմքերից ու նախադրեալներից զուրկ են, որ վերջիններս ոչ մի դեր չունեն նրա լինելութեան ու առանձնայատկութիւնների ձեւաւորման գործում, որ մարդը լիովին կտրուած է իր միջավայրից ու անցեալից: Դժուար է տիեզերքում գտնել մի երեւոյթ, համակարգ կամ տարր, որ գոյատեւի յարաբերութիւններից, կապակցութիւններից ու ազդեցութիւններից անկախ ու դուրս: Այդ կապերն ու յարաբերութիւնները ոչ թէ հակադրւում են մարդու ինքուրոյնութեան, այլ զգալիօրէն պայմանաւորում ինքնատիպ համակարգերի գոյութիւնն ու գործընթացը:

Հարցն ունի մի այլ կողմ եւս: Մարդ ոչ միայն պատմութեան ու միջավայրի արդիւնք է, այլ նաեւ պատմութեան ու միջավայրի կերտողը: Մարդը բնական իրականութեան կողքին ստեղծել է նաեւ մշակութային միջավայրը, մարդակերտ միջավայրը, որ խիստ հարուստ է անհատականութիւններ ու մտքի ազատ թռչիքներ արտացոլող առանձնայատկութիւններով:

Հայ վերածնունդի շատ ներկայացուցիչներ տարբերակում են երեք տեսակի ստեղծագործութիւն՝ աստուածային, բնութեան եւ մարդկային[1]: Հարցն այն է, որ նոյն պայմաններում ապրող, նոյն տուեալներն ունեցող, նոյն դաստիարակութիւնը ստացած մարդիկ իրարից զգալիօրէն տարբեր են բազմաթիւ կողմերով: Հարցն այն է, որ մարդ իր կամային հնարաւորութիւնը օգտագործում է իր մէջ գլուխ բարձրացրած այս կամ այն զօրաւոր ձգտումը, ցանկութիւնը, պահանջը կա՛մ բազմատեսակ եղանակներով բաւարարելու կամ զսպելու, սանձելու, եւ կամ էլ բոլորովին այլ ուղղութեամբ առաջնորդելու թելադրանքով: Ցեղասպան թուրքը վճռած էր ցեղասպանութեամբ ու պատերազմով լուծել իր առաջ բարձրացած հարցերը:

Հարցն այն է, որ կեանքը մարդու առաջ բացում է ոչ միայն տարբեր, այլ նաեւ հակադիր հնարաւորութիւններ, որոնցից մարդ ընտրում է մէկին կամ երկուսին: Ինքն է որոշում, թէ դրանցից իւրաքանչիւրի հետ ինչպէս է վերաբերուելու: Մարդ միշտ ընտրութիւն կատարելու հարկադրանքի առաջ է կանգնած: Մարդկային վարքը տարբերւում է ըստ այն բանի, թէ տուեալ կառոյցի մէջ ո՞ր դրդապատճառն է գառնում կեդրոնական, եւ ինչպիսի ծրագրով են վերջինները համադրւում ու ներդաշնակւում: Այդ որոշում է ստեղծագործ անհատը: Ցեղասպան թուրքը ընտրեց այն հնարաւորութիւնը, որ իր եւ իրեն հպատակ ժողովուրդների համար կործանարար էր:

Քրիստոս Յիսուս վերոյիշեալ բոլոր հարցադրումները խորութեամբ մեր առաջ դրել է «Մնասների» եւ «Քանքարների» առակներում: Առաջին դէպքում ազնուականը իր տասը ծառաներին հաւասար քանակութեամբ ոսկի տուեց եւ նրանց տուեց նոյն պատուիրանը. «Շահարկեցէք այս դրամը, մինչեւ վերադարձս»: Բայց նրանցից իւրաքանչիւրը տարբեր ձեւով եւ արդիւնաւէտութեամբ իրականացրեց առաջադրանքը: Ազնուականը նրանց գնահատեց ըստ արժանւոյն: Նրան, որ ստեղծագործական ու համարձակ մօտեցում չէր կարողացել ցուցադրել, ազնուական տէրը պատժեց (Ղուկ. 19.11-27): Իսկ «Քանքարների Առակում» տէրը իր ծառաների կարողութիւնների համաձայն դրամ տուեց՝ պահպանելով առաջադրանքի նոյնութիւնը: Նա իր ծառաներին գնահատեց ըստ մէկ սկզբունքի, կարողացե՞լ են արդեօք նրանք արդիւնաւէտ աշխատանք ծաւալել տրուած միջոցներով: Նա պատժեց նրան, ով իրեն վստահուածը գործադրութեան մէջ չէր դրել (Մատթ. 25.14-30): Ամէն մէկը իր անհատականութեան առանձնայատ-

1. Կ.Ա. Միտումեան, *Յովհ. Սարկաւագի Աշխարհայեացքը*, Երեւան, 1984, էջ 121-122:

կութիւնից ելնելով կատարեց իր ընտրութիւնը եւ գործեց համապատասխանաբար:

Մարդու ընտրելու եւ իր ազատ կամքով գործելու նշանակութիւնը բացայայտ է դառնում, երբ քննում ենք ստեղծագործ անհատի գործունէութիւնը: Նոյն երգահանը, նոյն ձայնանիշերը օգտագործելով, իր նոյն ստեղծագործական ոճով եւ իր նոյն երաժշտական լեզուով ստեղծագործում է տարբեր երաժշտական կտորներ, որոնք ունեն ինչպէս տարբերիչ, այնպէս էլ ընդհանրական գծեր եւ կողմեր: Նա իր նիւթը, իր ունեցած հնարաւորութիւններն ու կարողականութիւնը իւրաքանչիւր դէպքում իւրովի է օգտագործում ու համադրում ըստ իր կամքի, ըստ իր ընտրութեան, ըստ իր նախասիրութեան՝ անկասկած պահպանելով երաժշտութեան պահանջներն ու օրէնքները:

Եթէ մարդ ուզում է ազատուել չարից, նա պէտք է ընտրի բարին ճանաչելու ու բարիի օրէնքները անտեսելու հնարաւորութիւնների միջեւ: Մարդն այնքանով է ազատ չարից, դժբախտութիւնից, կործանումից, հիւանդութիւնից, որքանով իր որոշումը, քայլը, ծրագիրը համընկնում է իրերի առարկայական վիճակներին, առաջադրուած խնդրին ու բարու եւ գեղեցիկի սկզբունքներին, որքանով ինքը քաջատեղեակ է բացասական երեւոյթներ առաջացնող պատճառներին եւ արդիւնաւէտ կերպով գործադրում է իր իմացածը: Այն մարդը, որ հրաժարւում է բարին ճանաչելուց, ճշմարտութիւնը իմանալուց եւ գործադրելուց, նա չար կը դառնայ:

Գոյութիւն ունեցող բոլոր վիճակներից ու ճշմարտութիւններից ամենից բարին, գեղեցիկը, իմաստունը եւ կատարեալը աստուածային կամքն է: Այս պատճառով էլ, որքանով մարդ ձգտում է, որոշում է ճանաչել այդ կամքը, որքանով մարդը վճռած է իր կամքը բխեցնել աստուածայինից, այնքանով այն ազատ է, կատարեալ ու օգտաւէտ: Այս բոլորով հանդերձ, մարդու կամքը չի կարող ունենալ աստուածայինի տարողականութիւնը, սահմանները, ոյժը եւ մանաւանդ ինքնիշխանութիւնը: «Աստուած ամէն ինչ յաջողեցնում է ըստ իր կամքի խորհուրդների» (Եփես. 1.11): «Եւ այս է այն վստահութիւնը, որն ունենք մենք նրա հանդէպ. այն է, որ ինչ էլ խնդրենք ըստ նրա կամքի, նա մեզ կը լսի». եւ քանի որ գիտենք թէ լսում է մեր խնդրանքները, ապա գիտենք, որ կը ստանանք այն խնդրանքները, որ հայցեցինք նրանից (Ա. Յովհ. 5.14–15): Մարդու աստուածատուր կամքի ինչպէս թերագնահատումը, այնպէս էլ գերագնահատումն ու բացարձականացումը յղի են քանդիչ հետեւանքներով:

Մարդու ինքնիշխանութեան հիմքը առկայ է նաեւ Աստուծոյ կամքի մէջ:

ԱՍՏՈՒԾՈՅ ԿԱՄՔԻՆ ԿԱՌՈՅՑԸ

Աստուծոյ կամքը ամենապարփակ է, խիստ ծաւալուն: Այն ընդգրկում է ողջ իրականութիւնը իր նիւթական, հոգեւոր, իմացական եւ ընկերային բաղադրամասերով: Իր ամբողջութեան մէջ պատկերացնելու, նրա ողջ ոյժն ու փառքը ըմբռնելու համար մենք պէտք է Աստուծոյ կամքը որոնենք երկրի ու երկնքի ամէն մի տարրի մէջ: Մենք պէտք է այն դիտենք իր անընդհատ լինելութեան մէջ, եւ նրա ներգործութիւնը տեսնենք տիեզերական իրականութեան բոլոր բաղադրամասերի վրայ: Աստուծոյ կամքը փայլում է հրաշագործ բնութեան բոլոր ծալքերում եւ մարդկային քաղաքակրթութեան վերընթացութեան ու մարդու փրկութեան ծրագրի մէջ: Նրա ամենաամբողջական ու խորը մարմնաւորումը մենք տեսնում ենք մեր Տէր Յիսուս Քրիստոսի կեանքի ու գործունէութեան մէջ: Նա ճանաչացրեց մեզ Աստուծոյ կամքի խորհուրդները եւ այն՝ ինչ նրան հաճելի է, որպէսզի, ժամանակների լրումին, երկնքում եւ երկրի վրայ եղածը բովանդակուի Քրիստոսով (տես՝ Եփես. 1.9–10):

Աստուածաշունչի սերտողութիւնը, եկեղեցիների եւ անհատ հաւատացեալների փորձառութիւնը ցոյց է տալիս, որ թէեւ աստուածային կամքից մարդու կատարած ամէն մի շեղում բացասաբար է անդրադառնում նրա անհատականութեան ու կեանքի վրայ, բայց եւ այնպէս նկատելի է, որ Աստուած մարդու կատարած որոշ շեղումների նկատմամբ «աւելի թոյլատու» է: Կան աստուածային կամքի արտայայտութիւններ, որոնք անպայման կամ անմիջապէս իրագործւում են: Կան մարդկային արարքների այնպիսի շեղումներ, որոնք տեղի չէին ունենայ առանց աստուածային կամքի այն արտայայտութեան, որով նա մարդուն շնորհել է որոշակի անձնիշխանութիւն: Մեղքի մուտքը աշխարհ արդիւնք է Աստուծոյ կողմից հրեշտակներին ու մարդկանց տրուած անձնիշխանութեան սխալ օգտագործման: Աստուած Տէրն է այնպիսի մի աշխարհի, որ նոյնիսկ ըմբոստանում է նրա դէմ: Բայց եւ այնպէս, նրա կամքը գործադրւում է: «Եւ այս աշխարհն է անցնում, եւ ցանկութիւնը: Իսկ ով կատարում է Աստուծոյ կամքը, մնում է յաւիտեան» (Ա. Յովհ. 2.17):

Արարիչն Աստուած երկինքն ու երկիրը ստեղծելուց յետոյ «տեսաւ, որ այն ամէնը, ինչ ստեղծել է, շատ լաւ է» (Ծննդ. 1.31): Որոշ ժամանակ անց, «երբ Տէր Աստուած տեսաւ որ մարդկանց չարագործութիւնները բազմանում են երկրի վրայ, եւ ամէն ոք իր մտքում ամէն օր խնամքով չարագործութիւններ է նիւթում, զղջաց Աստուած, որ մարդ է ստեղծել երկրի վրայ, եւ տրտմեց իր հոգու խորքում» (Ծննդ. 6.5-6): Ամէն ինչ բարի ու լաւ սկսեց աստուածային արարչութեամբ, բայց ընթացքում չեղում արձանագրուեց: Իսկ ինչո՞ւ:

Ադամ եւ Եւա իրենց շնորհուած ազատ ընտրութիւն կատարելու կարողականութիւնը սխալ գործադրեցին ու կատարեցին այն՝ ինչ արգիլուածն էր Տէրունական կամքով: Որպէս արդիւնք, նրանք վտարուեցին Եդեմից: Էապէս փոխուեցին մարդը, մարդկային յարաբերութիւնները եւ նոյնիսկ բնութիւնն ու մարդ-բնութիւն յարաբերութիւնը: Այդ պայմաններում, խորացնելով սխալը, հողագործ Կայէնը սպաննեց իր անասնապահ Աբէլ եղբօրը: Այս արդէն ապացուցում է թէ մարդ իր գոյութեան առաջին հազարամեակում ինչքա՜ն մեծ անկում էր ապրել: Նստակեաց Կայէնը հիմք դրեց բազմամարդ բնակատեղիների հաստատման: Նրա սերունդներից Յոբէլը դարձաւ վրանաբնակ խաշնարածների նախահայրը: Վերջինիս եղբայր Յոբաղը դարձաւ արուեստի, երգի ու երաժշտութեան հայրը, իսկ միւս եղբայրը՝ Թոբէլը, սկզբնաւորեց մետաղագործութեան, պղնձագործութեան դարաշրջանը (տես՝ Ծննդ. 4.16-22): Աստուած Նոյին տապանաշինութիւն (նաւաշինութիւն) սովորացրեց (տես՝ Ծննդ. 6.14-21):

Ջրհեղեղից յետոյ, երբ Նոյի որդիները բազմացան ու աշխարհով մէկ ցրուեցին, մարդը շարունակեց չարանալ: Եկաւ Սոդոմի եւ Գոմորայի դարաշրջանը: Սոդոմն ու Գոմորը կործանուեցին: Այսպիսի ելեւէջներով պատմութիւնը շարունակուեց մինչեւ մեր Տէր Քրիստոս Յիսուսի աշխարհ գալը: Նա եկաւ ու մարդուն փրկեց մեղքից, ազատեց մահից: «Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդուն տուեց, որպէսզի ով նրան հաւատում է չկորչի, այլ ընդունի յաւիտենական կեանքը» (Յովհ. 3.16): Նոյնիսկ այդպիսի հնարաւորութեան պայմաններում, մարդկանց զգալի մասը, ըստ որում բոլոր չարերն ու ցեղասպանները, նախընտրում են չարին ենթարկուել, չարը գործել ու մերժել բարին, աստուածայինը: «Երուսաղէմի Ողբում» Յիսուս շեշտում է որ տուեալ քաղաքը նոյնպէս շեղուեց պատրաստուած նախածրագրից (Մատթ. 23.37-39): Մի այլ դէպքում, մեր Տէրը նշում է որ հակառակ իր առաքելութիւնից բխող տրամաբանութեան, մարդիկ չեն կամենում դէպի իրեն գալ (Յովհ. 5.40): Ինչպէս դժուար չէ նկատել, Աստուածաշունչը արձանագրում է որ մի կողմից մարդ իր աստուածատուր տաղանդներով քաղաքակրթութիւն կերտեց, իսկ միւս կողմից՝ իրեն շնորհուած կամքի ազատութիւնը սխալ օգտագործելով՝

ապրեց բարոյական ու հոգեւոր անկում, որ եւ վտանգեց իր բնականոն գոյութիւնը: Այս երկու միտումներն ու դրանց առճակատումը մինչեւ օրս շարունակւում է: Այդ վիճակից ելքը մարդու վերադարձն է դէպի իր Արարիչը՝ Քրիստոս Յիսուսի միջոցով:

Անկասկած, Աստուած, եթէ կամենայ, կարող է միշտ միջամտել բնութեան, պատմութեան ու մարդկային ընկերութեան ու անձի գոյութեան ընթացքին, եւ այն փոխել: Դրա դասական օրինակներն են Յիսուսի հրաշքները: Այդ ակնյայտ է Պօղոսի դարձի մէջ: Բայց միշտ չէ որ Աստուած ցանկանում է գործադրել իր այդ ոյժը, կարողականութիւնը: Երբ Աստուած մարդուն տուեց ազատ կամք, ընտրելու եւ իր հայեցողութեամբ գործելու իրաւունքը, նա իր բացարձակ ու կատարեալ կարողականութիւնը գործադրելու հաւանականութիւնը յօժարակամ սահմանափակեց: Նա իր կամքի մէջ ներդրեց մարդու աստուածատուր անձնիշխանութիւնը գործադրելու լծակներ: Որոշակի համապատասխանութիւն գոյութիւն ունի աստուածային կամքի եւ մարդու ընտրելու եւ գործելու աստուածատուր իրաւունքի միջեւ, չէ՞ որ Աստուծոյ կամքով է մարդու կամքի ազատութիւնը:

Ա. ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԿԱՄՔԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԵՒ ԻՄԱՑՈՂԱԿԱՆ ԵՐԵՍՆԵՐԸ

Նկատի ունենալով վերոյիշեալ իրողութիւնները, աստուածաբանների մի խումբ առաջ է քաշում աստուածային կամքի վճիռային կամ կանոնադրական (decreetive) եւ իմացողական (perceptive) տեսակների հարցը: Այդ մասնագէտները գտնում են որ իր կանոնադրական կամքով Աստուած հաստատում, տնօրինում ու վճռում է ողջ լինելութեան ընթացքը: Այն միշտ իրագործւում է: Իմացողական կամքով Աստուած իր արարածներին տալիս է նրանց վերաբերող պարտականութիւններն ու յանձնարարութիւնները: Արարածները միշտ չէ որ ճիշդ հասկանում կամ ճիշդ կատարում են Աստուծոյ այդ կամքը: Մի կողմից Աստուած առաքեալներին նախասահմանեց որդեգրութեան՝ Յիսուս Քրիստոսի միջոցով (տես՝ Եփես. 1.5), միւս կողմից, Տէրը նրանց պատգամեց. «Դուք իմ բարեկամներն էք, եթէ անէք այն՝ ինչ ես ձեզ պատուիրում եմ: Այլեւս ես ձեզ ծառաներ չեմ կոչում, որովհետեւ ծառան չի գիտի, թէ Տէրն ի՞նչ է անում. այլ ձեզ բարեկամներ կոչեցի, որովհետեւ այն բոլորը, ինչ իմ Հօրից լսեցի, յայտնեցի ձեզ» (Յովհ. 15.14-15): Այսպիսով, առաքեալները իրենց ազատ կամքով էին կատարում Աստուծոյ պատուիրանները, նրա կամքը: Կարող էին դրանք չկատարել: Բայց դրանց գիտակցուած կատարմամբ է որ նրանք ազատ են լինում ու դառնում Յիսուսի բարեկամ, Աստուծոյ որդեգրեալն ու զաւակը:

Աստուծոյ կամքը միշտ բարի է մարդու համար, եւ երբ մարդ ըն-

կալում ու կատարում է այն, նա դառնում է ազատ, բարի եւ դրսեւորում է իր իսկական էութիւնը: Քրիստոս մեզ պատգամեց. «Եթէ դուք իմ խօսքին հաւատարիմ մնաք, իմ ճշմարիտ աշակերտները կը լինէք: Եւ կը ճանաչէք ճշմարտութիւնը, եւ ճշմարտութիւնը ձեզ կ'ազատի» (Յովհ. 8.32): Իսկ Պօղոս դիտել է տալիս. «Ով Տէրոջմով ծառայ է կանչուած, Տէրոջ ազատն է. նոյնպէս եւ ով ազատ է կանչուած, Քրիստոսի ծառան է» (Ա. Կորնթ. 7.22):

Հարցը ներկայանում է նաեւ այլ կտրուածքով: Մի պահ ընդունենք որ Աստուած իր կամքի իմացողական ուժով ցեղասպանին յայտնեց իր վճռական դժգոհութիւնը եւ քննադատեց նրա վարքը: Այս դեռ չի նշանակում որ ցեղասպանը ունակ կը լինի Աստուծուն լսելու ու իր վարքագիծը փոխելու:

Այդպիսի պարագաները նկատի ունենալով Յիսուս բոլոր տեսակի չարագործներին հարցնում է. «Ինչո՞ւ դուք իմ խօսածը չէք լսում»: Եւ անմիջապէս բացատրում. «Որովհետեւ իմ խօսքը չէք կարող լսել: Դուք հօր կողմից Սատանայից էք, եւ ձեր հօր ցանկութիւններն էք կամենում կատարել, թէեւ նա ի սկզբանէ մարդասպան էր եւ ճշմարտութեան մէջ չմնաց, որովհետեւ նրա մէջ ճշմարտութիւն չկար» (Յովհ. 8.43-44): Սատանային, չարին ստրկացած մարդը ունակ չէ լսելու ու կատարելու Աստուծոյ Խօսքը: Այս պատճառով էլ Գրիգոր Նարեկացին գտնում է որ առանց «մաքրման», առանց մեղքերի թողութեան անհնարին է ստանալ Աստուծոյ լոյսը, լուսաւորուել, դառնալ «լոյսի որդիներ»:

Բ. ԱՍՏՈՒԾՈՅ ԿԱՄՔԻ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԿԱՐԵԿՑՈՂ ՀՐԱՄԱՅՈՂ ԵՐԵՍՆԵՐԸ

Աստուածաբանական մի ուրիշ դպրոց առաջարկում է աստուածային կամքի կառոյցում տարբերակել երեք երեսներ՝ համապարփակ (comprehansive), կարեկցող (compassionate) եւ կարգադրող, հրամայող (commanding): Առաջինն աղերս ունի վերջնական ու վախճանաբանական նպատակների հետ, եւ իրագործւում է: Երկրորդը դարձի եւ ապաշխարութեան ոլորտում է գործում, եւ իրականանում է մարդկային ընտրութեամբ եւ աստուածային օրհնութեամբ ու շնորհով, իսկ երրորդը՝ հրամանը կատարելու ուղղուած հնազանդութիւնն է: Աստուած հրամայում է, եւ մարդ կատարում:

Բայց մեր Տէրը սէր չունի հրամայական աշխատաոճի նկատմամբ: Աստուածահաճոյ գործելակերպի ու աշխատելաոճի մասին խօսելով, Պետրոս յիշեցնում է. «Ուրեմն, աղաչում եմ երէցներին, ես, որպէս երիցակից եւ վկայ Քրիստոսի չարչարանքների եւ որպէս մասնակից գալիք փառքի յայտնութեան. արածեցէք Աստուծոյ այդ հօտը, որ ձեզ է յանձնուած. հսկեցէք ոչ թէ հակառակ ձեր կամքին, այլ՝ կամովին, ըստ Աստուծոյ. ոչ թէ շահախնդրութեամբ, այլ՝ յօժարութեամբ. ոչ թէ տիրելով նրանց, որ վիճակ է ընկած ձեզ, այլ օրինակ լինելով հօտին, որպէսզի, երբ Հովուապետը երեւայ, փառքի անթառամ պսակն ընդունէք» (Ա. Պետր. 5.1-4): Իսկ Փիլիմոնին, Արքպոսին եւ Ապփիրային Պօղոս գրում է. «Բայց առանց քո կամքի ոչինչ չուզեցի անել, որպէսզի քո բարի գործը հարկադրութիւնից չլինի, այլ՝ կամաւոր» (Փիլմ. 14): Ուշագրաւ է այն լրացումը, որ Պօղոս տալիս է «կամովին» հասկացութեան: Կամովին գործել նշանակում է դրդապատճառներում չունենալ շահախնդրութիւն, ուրիշին տիրելու միտում, եւ առաջին հերթին նկատի ունենալ ուրիշին դրական օրինակ ծառայելու, օգտակար լինելու հեռանկարը:

Գ. ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԿԱՄՔԻ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԵՒ ԿՐԱՒՈՐԱԿԱՆ ԵՐԵՍՆԵՐԸ

Աստուածաբանների մի այլ խումբ Աստուծոյ գործօն մասնակցութեամբ իրականացուող բոլոր երեւոյթների եւ նրա թոյլատւութեամբ արձանագրուող դէպքերի նախահիմքում աստուածային կամքի գերիշխանութիւնը տեսնելով, փաստօրէն ճանաչում է Աստուծոյ ներգործական (active) եւ կրաւորական (passive) կամքի տարբերութիւնը: Վերջինս արտայայտութիւնն է նրա ողորմածութեան ու համբերատարութեան: «Ողորմութիւն եւ արդարութիւն է շնորհում Տէրը բոլոր զբրկեալներին: Տէրն իր ուղիները ցոյց տուեց Մովսէսին եւ իր կամքը՝ Իսրայէլի որդիներին: Գթասիրտ եւ ողորմած է Տէրը, համբերատար ու ողորմաշատ: Տէրն խսպառ չի բարկանում եւ յաւիտեան ոխ չի պահում: Մեր մեղքերի համեմատ չվարուեց մեզ հետ, ոչ էլ մեր անօրէնութեան համեմատ հատուցեց մեզ: Այլ որքան բարձր է երկինքը երկրից, այնքան զօրեղ է Տէրոջ ողորմութիւնն իրենից երկիւղ կրողների վրայ: Որքան հեռու է Արեւելքն Արեւմուտքից, այնքան հեռացրեց նա մեր անօրէնութիւնները մեզանից: Ինչպէս մի հայր գթում է իր որդիներին, այնպէս էլ Տէրը պիտի գթայ իրենից երկիւղ կրողներին: Նա գիտէ կազմուածքը մեր, եւ յիշում է որ հող ենք մենք» (Սաղմ. 102.6-14, տես նաեւ՝ Սաղմ. 77.36-39, Եսայի 30.18, Օսէ. 11.8-9):

Դ. ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԿԱՄՔԻ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՒ ԱԶԱՏ ԵՐԵՍՆԵՐԸ

Աստուածաբանների մի այլ խումբ, Աստուծոյ կամքի կառոյցում առանձնացնում է անհրաժեշտ ու ազատ տարրերը: Անհրաժեշտ կամք ասելով հասկանում են այն, որ Աստուած չի կարող ինքն իր էութիւնը ժխտել: Նա անընդհատ պէտք է անհրաժեշտօրէն գործել, ըստ իր բնոյթի թելադրանքի: Աստուծոյ կամքը նոյնական է իր գոյութեան, իմաս-

տութեան, բարութեան եւ բոլոր միւս յատկանիշների հետ: Մարդու սիրտը, միտքը եւ հոգին կարող են հանգիստ զգալ դրա մէջ: Այն ճակատագրի, անհաշուարկելի, մութ ու կոյր ուժերի կամքը չէ, այլ՝ ամենակարող Աստուծոյ: «Եթէ մենք անհաւատարիմ ենք, նա հաւատարիմ է մնում, որովհետեւ ինքն իրեն ուրանալ չի կարող» (Բ. Տիմ. 2.13): «Ահա թէ ինչու Աստուած կամենալով առաւել եւս ցոյց տալ իր նպատակի անփոփոխ լինելը խոստման ժառանգորդներին, միջնորդեց երդումով, որպէսզի, երկու անփոփոխելի բաներով, որոնցում անհնար է, որ Աստուած ստի, մենք հաստատուն մխիթարութիւն ունենանք. մենք, որ ապաստան գտանք՝ կառչելու հանդերձեալ յոյսից, որն իբրեւ հաստատուն եւ անշարժ խարիսխ ունենք մեզ համար. յոյս, որ թափանցում է վարագոյրից այն կողմ, ուր մեր նախակարապետը՝ Յիսուս, մտաւ մեզ համար, եղաւ յաւիտենական քահանայապետ, ըստ Մելքիսեդեկի կարգի» (Եբր. 6.17-20): Աստուածային նպատակը անփոփոխ ու հաստատուն է մանաւանդ Քրիստոս Յիսուսի առաքելութեամբ, այն յոյսով որ նա տուեց իր խաչելութեամբ ու յարութեամբ: (Տես նաեւ՝ Հռոմ. 3.4, Ա. Կորնթ. 1.9, Տիտ. 1.2):

Աստուծոյ կամքը ազատ է արարչութեան յարաբերակցութեան մէջ: Արարչութիւնը, նրա համար, անհրաժեշտութիւն չէր: Արարչութիւնը, գոյապահպանումը եւ փրկութիւնը Աստուծոյ ազատ կամքի արտայայտութիւնն է: «Մեր Սուրբ Տէր Աստուած, արժանի ես ընդունելու փառք եւ պատիւ եւ զօրութիւն, որովհետեւ դու ստեղծեցիր բոլորը, եւ քո կամենալով ստեղծուեցին ու գոյութիւն ունեն» (Յայտն. 4.11): Աստուած մեղքին պէտք է հակազդէր, բայց նա պարտաւոր չէր իր որդուն աշխարհ ուղարկելու, նրան խաչի վրայ մահացնելու, որպէսզի նրա արիւնով մարդիկ փրկուեն: Մեղքին հակազդելը անհրաժեշտութիւն է: Բայց ի՞նչպէս կը հակազդէ, դա արդէն ազատ ընտրութիւն է: Դրանք ազատ ու ձրի շնորհքի վրայ են խարսխուած: «Ապա ուրեմն, ողորմում է՝ ում ուզում է, եւ խստասիրտ է լինում՝ ում դէմ որ ուզում է» (Հռոմ. 9.8):

Ե. ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԿԱՄՔԻ ԳԱՏՂՆԻ ԵՒ ԲԱՑԱՅԱՅՏՈՒԱԾ ԵՐԵՍՆԵՐԸ

Աստուծոյ կամքի կառոյցում տարբերակում են նաեւ գաղտնի (ծածուկ) եւ բացայայտուած *երեսները: Առաջինը այն է, որ միայն Աստուծուն է յայտնի: Դա նրա ծրագիրների ամբողջութիւնն է: Բացայայտուած կամքը Աստուծոյ կամքի այն մասն է, որ մարդուն յայտնում է: Դրանով նա մարդկանց ասում ու թելադրում է, թէ իրենք ինչ պէտք է անեն: Այսպէս, «Գաղտնի բաները մեր Տէր Աստուծուն են, իսկ յայտնիները՝ մեզ ու մեր որդիներին յաւիտեան, որպէսզի կատարենք այս օրէնքների բոլոր խօսքերը» (Բ. Օր. 29.29): Պօղոս՝ Եփեսոսի եղբայրներին փրկութեան աստուածային ծրագիրը բացատրելով, գրեց. «Ճանաչեցրեց մեզ, ինչպէս հաճելի էր իրեն, իր կամքի խորհուրդները. նա դրանք նախապէս սահմանեց նրանով (Քրիստոսով), իրենց լրումին հասցնելով ժամանակները, ամէն ինչ Քրիստոսով բովանդակելու համար, ինչ որ երկնքում է եւ ինչ որ երկրի վրայ. նրանով նաեւ մեզ վիճակուեց, ըստ առաջադրութեան Աստուծոյ,– որ ամէն ինչ յաջողեցնում է ըստ իր կամքի խորհուրդների,– նախասահմանուած լինել ի գովութիւն նրա փառքի, մեզ՝ ի Քրիստոս առաջինը յուսացողներիս: Նրանով եւ դուք, լսելով ճշմարտութեան խօսքը՝ ձեր փրկութեան աւետարանը, եւ հաւատալով նրան, կնքուեցիք խոստացուած Սուրբ Հոգով, որ մեր ժառանգութեան առհաւատչեան է ի նուաճումն փրկութեան ի գովութիւն նրա փառքի» (Եփես. 1.9-14, տես նաեւ՝ Բ. Օր. 30.14, Դան. 4.34, Մատթ. 12.50, Յովհ. 4.34, 7.17, Հռոմ. 10.8-9, 11.33-36):*

Թերթուլիանոսից (շրջ. 160-220 թթ.) սկսած առաջ քաշուեց այն հարցայարոյց տեսակէտը, որ Աստուած փրկչական շնորհք ունի բոլորի համար, որ նա առանձին անհատներին բաժանում է ըստ նրանց ընտրութեամբ կատարած արարքների բնոյթի: Նա փրկում է հաւատացեալին ու դատապարտում՝ անհաւատին: Նա որոշում է նաեւ, թէ՝ ինքը ինչպէս է վարուելու տարբեր վիճակներում: Բայց քանի նա Աստուած է, նա հասնում է իր վերջնական նպատակին: Նրա վերջնական, հիմնական, առաջնային կամքը կը գործադրուի:

Նման հարցադրմամբ հանդէս եկող աստուածաբանները մի կողմից ընդունում են որ չարը հակադրութիւնն է Աստուծոյ կամքի, եւ միւս կողմից՝ գտնում որ Աստուած թոյլ է տալիս որոշ բացասական երեւոյթներ, առանց դրանք ցանկանալու: Նրանց մի մասը ելնում է այն նախադրոյթից որ Աստուած ունի ապագայ, գալիք չարիքի ու բարիքի կանխագիտութիւնը, բայց չի միջնորդում, որպէսզի մարդ գործադրի իրեն տրուած կամքի ազատութիւնը, եւ որպէսզի նա կարողանայ ստանալ իր արարքի արդար հատուցումը, վարձատրութիւնը: Հետեւաբար չարը չի կարելի կապել Աստուծոյ կամքի հետ:

Այստեղից կարող ենք եզրակացնել որ աստուածային կամքն ունի իր տարբեր երանգաւորումները, կողմերն ու երեսները, որոնց մի մասը հնարաւոր է դարձնում մարդու անձնիշխան շեղումները, մարդու ազատ կամքը, իր սեփական հայեցողութեամբ ընտրելն ու գործելը: *Բայց մարդ կատարելով Աստուծոյ կամքը, իր համար անվիճելիօրէն ապահովում է ինչպէս ազատութիւն, այնպէս էլ յաւիտենական երջանիկ կեանք. «Բայց այժմ, ազատուած մեղքից եւ ծառայ դարձած Աստծուն՝ ձեր պտուղն ունէք սրբութեան համար, եւ նրա վախճանը կեանք է յաւիտենական. քանի որ մեղքի վարձը մահն է, իսկ Աստծոյ շնորհը՝ յաւիտենական կեանք՝ Քրիստոս Յիսուսով՝ մեր Տէրոջմով» (Հռոմ. 6.22-23):*

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԱՄՔԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հայ իմաստասիրական ու աստուածաբանական միտքը այս հարցերի վրայ է սեւեռել իր ուշադրութիւնը իր ձեւաւորման առաջին օրից: Հայերը քրիստոնէութիւն ընդունեցին ելնելով նրա մարդասիրական խորքից, այն ակնյայտ իրողութիւնից որ Քրիստոս Յիսուս աշխարհ եկաւ ու խաչ բարձրացաւ մարդուն փրկելու համար, որ նա պայքարեց ու յաղթեց Սատանային, մեղքին ու մահուան, մարդու ազատութեան ու յաւիտենական կեանքի համար: Նրանք նկատեցին որ նախաքրիստոնէական շրջանի աստուածները պահանջում են որ իրենց պաշտողները զոհուեն իրենց համար, երբ Քրիստոս ինքը զոհուեց մարդու փրկութեան ու երջանկութեան համար: Այս հիմքերից ելնելով հայերը չէին կարող հաշտուել այն գաղափարի հետ որ Աստուած իր էութեամբ միտում է բռնանալ մարդուն, նրան պարտադրել իր կամքը՝ հակառակ մարդու ցանկութեան: Այդ պարագային Քրիստոս Յիսուսի առաքելութիւնը աշխարհում կը կորցնէր իր իմաստը: Աստուած կարող էր մարդկանց հարկադրել որ ենթարկուեն, ու մարդուն փրկելու համար անհրաժեշտ չէր լինի իր Որդուն ուղարկել աշխարհ:

Մարդու ազատ կամքի նկատմամբ հայերի հետաքրքրութիւնը պայմանաւորուած է նաեւ հայ ազատագրական պայքարի տրամաբանութեամբ, որտեղ անհրաժեշտ էր որոշել նախայարձակի, զաւթիչի մեղքի ու պատասխանատուութեան բնոյթն ու խորքը եւ ազատամարտիկի գործունէութեան արդարացիութեան հիմքերը: Եթէ զաւթիչը, բռնակալը, նախայարձակը եւ չարն ընդհանրապէս գործում են ըստ նախագծուած աստուածային մի ծրագրի, ապա նրանց դէմ ուղղուած եւ արդարութեան ու ազատութեան, կեանքի բարելաւման համար մղուած պայքարը անիմաստ կը լինէր, քանի որ մարդ չի կարող պայքարել աստուածային պարտադիր կամքի դէմ:

Գրիգոր Լուսաւորիչի (239-325/26) համոզմամբ մարդու հիմնական յատկութիւնը կամքի ազատութիւնն է, անձնիշխանութիւնը: Վերջինս մարդկանց տրուած է, որպէսզի նրանք «կարասցեն խոյս տալ ի չարէն եւ առնել զբարին»[1]: Բարիի հաւանականութեան նախընտրութիւնը կապուած է ոչ միայն պատժից խուսափելու, վարձահատոյց եւ պիտանի լինելու մարդու ձգտման հետ, այլեւ մարդու ինքնարժեւորման, ինքնասիրութեան հետ, քանի որ «որք յարգեն զանձինս իւրեանց ի գործս բարութեան»[2]:

Մերժելով չարի ակունքները աստուածային կամքի մէջ որոնելու գաղափարը եւ բնածին չարի գոյութիւնը, նա չարի ակունքներն ու դրդապատճառները որոնում է մարդու նպատակի ու արժէքային կողմնորոշման մէջ, քանի որ «առանձին բնութեամբ չարն չար ոչ է եւ ոչ բարին բարի, այլ ի միտս ունի բարի եւ չար լինել. զի սիրովն Աստուծոյ սիրել զբարին եւ ատել զչարն՝ բարի հաստատի. եւ ատել զբարին եւ սիրել զչարն չար է. նախանձել ընդ բարիսն եւ լինել բարի՝ բարի է, եւ ընդ չարսն՝ չար է. եւ նախանձն նոյն է: Բարւոյն ցանկալ բարի է, եւ չարին՝ չար. եւ ցանկութիւն նոյն է»[3]: Գրիգոր Լուսաւորիչը միաժամանակ գտնում է որ չարի գոյութիւնը նպաստում է դրական, բարի արժէքների սահմանազատմանն ու իմաստաւորմանը, քանի որ «երեւեսցի լաւն ի վատթարէն եւ անարգն ի պատուականէն: Որպէս ի խաւարի լոյս երեւի եւ ի գաղանաց՝ զոգնն, եւ ի թիւանաւորած՝ անմեղանչականն, եւ յանշահեկանէն՝ շահեկանն»[4]:

Ագաթանգեղոս հեղինակը կամ խմբագիրը իր «Հայոց Պատմութիւն» երկի «Գրիգոր Լուսաւորիչի Վարդապետութիւնը» գլխում առաջ է քաշում այն գաղափարը, թէ՝ մարդուն ըստ Աստուծոյ պատկերի արարելու մասին Աստուածաշնչային ճշմարտութիւնը իր մէջ ընդգրկում է այն միտքը, որ մարդը արարչութեան օրից, Աստուծոյ կամքով, ունեցել է ոչ միայն իմացական, հոգեկան, հոգեւոր յատուկ կարողութիւններ, այլ նաեւ ազատ կամք: Ըստ Աստուծոյ պատկերի լինել, պարտադիր կերպով ենթադրում է ազատ կամքով արարուել:

«Քանզի Տէրը ըստ Աստուծոյ պատկերի ստեղծեց նրան: Մի կողմից՝ յանուն նրա, մարդու, իմաստութեան, բանականութեան, խելամտութեան, կենդանութեան, հոգեւոր շնչի, որն առատօրէն շնորհեց, որպէսզի նա գիտենայ, ճանաչի, տեղեակ լինի եւ իմանայ ամենայն

1. *Սրբոյն Հօրն Մերոյ Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում Ճառք*, Վենետիկ, 1954, էջ 131 եւ Ագաթանգեղոս, *Պատմութիւն Հայոց*, թարգմանութիւն Ա. Տէր Ղեւոնդեանի, Երեւան, 1977, էջ 137:
2. *Ճառք*, էջ 187:
3. *Ճառք*, էջ 56:
4. *Ճառք*, 35, տես նաեւ էջ 38, 74, Ագաթանգեղոս, էջ 285-286:

շնորհների աստուածատուր իմաստութիւնը, բանականութիւնը, աստուածանօթութիւնը, տիրութիւնը, իշխելը ամենայն երկրաբուխ, երկրածին արարածների վրայ, եւ կանխատեսելու գիտութիւնը. եւ նրան դարձրեց ամենայնի տէրը: Միւս կողմից՝ նա ասում է նման նրա անձնիշխան կամքի հզօրութեան համար: Քանզի Աստուծոյ ամենակարողութեան եւ ամենաստեղծ գործունէութեան շնորհիւ երկու պատուական եւ յարգի արարածներ հաստատուեցին Բարերարի կողմից՝ մարդիկ եւ հրեշտակներ: Արդ, մարդուն թողեց իր անձնիշխան կամքին, որպէսզի իր անձնական ազատ կամքով ի վիճակի լինի բարի գործերի փոխարէն արժանանայ Բարերար Տիրոջ եւ Արարչի շնորհին»[1]:

ԿՈՐԻՒՆ *(380–450) աւելացնում է, որ առաքինի արարքն անձին անհրաժեշտ է ոչ միայն ինքն իրեն փրկելու, անմահանալու, մարդկութեան համար բարիքներ ստեղծելու, հայրենիքը պաշտպանելու, այլեւ նոր սերնդին ճիշդ դաստիարակելու համար: Նա գտնում է որ մարդ իր բարի գործունէութեան համար վարձատրուելու է ոչ միայն հանդերձեալ կեանքում, այլ նաեւ այս աշխարհում: Այդ պատճառով էլ մարդ գործում է աստուածային պարգեւների միջոցով, բայց իր ընտրութեամբ ու պատասխանատուութեամբ:*

ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑԻՆ *(380–450) իր «Եղծ Աղանդոց» երկում պայքարում է այն չորս գաղափարաբանութիւնների դէմ, որոնք սպառնում են հայ ժողովրդի գոյատեւմանը: Դրանք են. նիւթապաշտութիւնը, աղանդաւորութիւնը, զրադաշտականութիւնը եւ ճակատագրականութեան՝ մարդու վարքի կանխորոշուածութեան ուսմունքը:*

Եզնիկի համոզմամբ ազատ կամքը, ազատակամութիւնը մարդուն տրուած աստուածային շնորհ է, որպէսզի ընտրութիւն կատարի Աստուծուն եւ Սատանային ծառայելու միջեւ: Մարդ «ստանալով ազատակամութիւնը, որ Աստուծուց իրեն պարգեւուած մեծ շնորհ է, ծառայում է՝ ում ուզում է»[2]: Եթէ մարդ Աստուծուն հարկադրաբար ծառայէր, նա նոյնիսկ լաւի մասին գաղափար ունենալ չէր կարող: Եզնիկ ելնում է այն նախադրոյթից, որ «չկայ որեւէ չար բան, որ իր էութեամբ չար լինի եւ կայ ոչ թէ չար բաների, այլ՝ բարիների Արարիչ»: Չարը օտարամուտ է[3]: Չարը, պնդում է Եզնիկ, գոյակ չէ, այլ պարզապէս բարու բացակայութիւնը: Այն անհարթութիւն է, շեղում է բնականոն ընթացքից: Շեղւում է մարդը կատարելով այն, ինչ արգիլուած է, այն,

1. Ագաթ., էջ 147-155:
2. Եզնիկ Կողբացի, *Եղծ Աղանդոց*, թարգմ. Ա. Առաքելեանի, Երեւան, 1970, էջ 48:
3. Նոյնը, էջ 33, 47-56, 149:

ինչ հակադրւում է բարուն, աստուածային կամքին: Եթէ չարիքը ի սկզբանէ գործող գոյակ լինէր, ապա «օրէնսդիրը օրէնքներ չպիտի սահմանէր, ոչ էլ իշխանը չարագործին պիտի պատժի ենթարկի»[1]: Չարն ու բարին բախտով պայմանաւորողներին քննադատելով Եզնիկը գրում է. «Բախտը անձնաւոր բան չէ, այլ յաջող պատահմունք», մարդկային գործունէութեան արդիւնք: Նա, նաեւ, բացայայտում է ճակատագրականութեան ուսմունքի հակադրութիւնը մարդկային դարաւոր փորձառութեան: Թող մարդիկ, գրում է նա, զօրք չհաւաքեն ու իրար ետեւից գնդեր չկազմեն՝ երկրից աւազակներին, նախայարձակին դուրս քշելու համար, այլ թող պատճառաբանեն, թէ երկրի ճակատագիրն է աւազակից կոտորուել, մենք ինչո՞ւ պիտի դէմ գնանք ճակատագրին: Բայց զօրքեր գումարելով եւ երկրից թշնամուն դուրս վռնտելով, մարդիկ փաստօրէն հաստատում են որ կոտորածները, աւերումները, պատերազմները ճակատագրի ինչ որ սահմանումով չեն տեղի ունենում, կանխորոշուած չեն, այլ չարի, աւազակի, նախայարձակի բռնութեան, գործունէութեան արդիւնք են[2]:

Գործունէութիւնը որոշ իմաստով, գաղափարի նիւթականացման գործընթաց է, որտեղ մարդու գիտակցութեան մէջ առկայ արժէքները փոխանցւում են աշխատանքի արդիւնքին: Բարոյականանում կամ անբարոյականանում է մարդակերտ իրականութիւնը: «Պատրաստողի (մարդու, Գ.Խ.) միտքն է չարիք գործում», ընդգծում է Եզնիկ[3]: Բարին, որ իր էութեամբ ու ծագումով աստուածային է, մարդուն շնորհւում է ըստ նրա գործունէութեան: «Իսկապէս, ի զուր կը լինէր (պարգեւներ, Գ.Խ.) տալ այնպիսիին, ով իրաւունք չէր ունենայ երկու բանի՝ ենթարկուելու նրան, ինչ Աստուած է կամենում, եւ չենթարկուելու այն բանին, որը նա չէր ախորժում»[4]: Իսկ, «ով որ մի բան կամովին չի կատարում, դրա համար պատիժ չպիտի կրի»[5]:

ՓԱՒՍՏՈՍ ԲԻԶԱՆԴ *(Դ–Ե. դար) չորրորդ դարի Հայաստանում ընկերային չարիքի գոյութիւնը կանխորոշուած չի նկատում: Այն առաջին հերթին կապում է երկրում հեթանոսական մնացուկների աշխուժութեամբ, եւ այն վերացնելու համար առաջարկում է վերադարձ կատարել դէպի նախնական քրիստոնէութիւնը եւ մարդուն դիտել իր բոլոր յարաբերութիւնների ու կապերի ամբողջութեան մէջ: Մարդկային անհատականութիւնն ու կամքը սխալ է գնահատւում, ղեկավար-*

1. Նոյնը, էջ 57:
2. Նոյնը, էջ 109:
3. Նոյնը, էջ 47:
4. Նոյնը, էջ 49:
5. Նոյնը, 57, տես նաեւ՝ Գ. Խրլոբեան, *Հայ Սոցիալական Իմաստասիրութեան Պատմութիւն*, Երեւան, 1978, էջ 117-155:

ւում ու գործում, եթէ մենք նրան դիտենք միակողմանի, եթէ մենք հաշուի առնենք միայն նրա այս կամ այն կողմը, այս կամ այն յարաբերութիւնը, այս կամ այն յատկութիւնը ու անտեսենք նրա ամբողջականութիւնը[1]:

ԵՂԻՇԷՆ *(410-475) ընդունում է որ ողջ իրականութիւնը ենթակայ է աստուածային կամքով թելադրուած առաջնային նախախնամութեան, որ, սակայն իւրաքանչիւր մարդուն հասնում է ըստ նրա ազատ կամքով կատարած ընտրութեան ու արարքի բնոյթի, քանի որ մարդ կարող է կամաւոր կերպով կատարել Աստուծոյ կամքը, կարող է նաեւ այն մերժել: Մարդու վարքը, որպէս սկզբունք, նախախնամութեամբ չէ կանխորոշուած: Միաժամանակ, Աստուծոյ կամքով պայմանաւորելով բարու գոյութիւնը, նա գտնում է որ չարիքը արդիւնք է լինում սիրոյ, միասնականութեան, կառուցուածքային ամբողջականութեան, Աստուծոյ ու մարդու, աստուածայինի ու մարդկայինի ներդաշնակութեան բացակայութեան եւ օրէնքի (աստուածային ու երկրային) խախտման, մարդու ներքնաշխարհի եղծմամբ*[2]: *Եղիշէն մասնաւոր ուշադրութիւն է դարձնում այն չարիքների վրայ, որոնք ծագում են Աստուծոյ պատկանածը Աստծուն եւ կայսրին պատկանածը՝ կայսրին չտալու սովորութիւնից, երբ կայսրը կամ մարդը ձգտում է տիրել այն իրականութեան վրայ, որ Աստուծուն է պատկանում, երբ կայսրեր ու մարդիկ պայքարում են ոչ միայն աշխարհիկ, այլ նաեւ հոգեւոր ոլորտներին տիրելու, իրենց ենթարկելու համար*[3]: *Այս տեսակէտը իւրովի մշակում է ՍԵԲԷՈՍ (Է. դար) պատմիչը: Նա գտնում է որ մէկ այլադաւան տիրակալ եւ բազմաթիւ դաւանանք ունեցող երկրում աշխարհիկ տէրը պէտք է ընդունի կրօնական հանդուրժողականութեան սկզբունքը եւ թողնի որ ամէն մէկը ընտրի իր նախընտրած կրօնը եւ պաշտի իր նախընտրած Աստծուն: Հակառակ դէպքում երկիրը կ'ենթարկուի մեծ չարիքների, ու կ'առաջանան կրօնական գունաւորում ունեցող պատերազմներ*[4]: *Դարեր ետք անգամ այս գիտակցութեան չհասաւ ցեղասպան Թուրքը:*

1. Տես՝ Փաւստոս Բիւզանդ, *Պատմութիւն Հայոց*, թարգմ. Ա. Մալխասեանի, Երեւան, 1968, էջ 91, 128-129, 132, 148, 254, 293, տես նաեւ՝ Գ. Խրլոբեան, *Հայ Սոցիալական...*, էջ 156-162:
2. Տես՝ *Սրբոյն Մերոյ Եղիշէի Վարդապետի Մատենագրութիւնք*, Վենետիկ, 1859, էջ 197, 202, 273, 292, 304, 320, 360, 374 եւ Եղիշէ, *Վարդանանց Պատմութիւն*, թարգմ. Ե. Տէր Մինասեանի, Երեւան, 1946, էջ 100, 108, 123, 143, 146, 161, 164, 167, 178, 232, 235:
3. Տես՝ Գ. Խրլոբեան, *Հայ Սոցիալական...*, էջ 163-206:
4. Տես՝ Գ. Խրլոբեան, *Հայ Սոցիալական...*, էջ 216-218:

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ *(410-490) չարի հարցին մօտենում է այլ տեսանկիւնից: Նա ելնում է այն հիմնադրոյթից, որ մարդկային հասարակութիւնը, մի կողմից նման է մարդու մարմնի, որի ամէն մի մասը, բաղադրամասը ունի իրեն բնորոշ դերը, իսկ միւս կողմից՝ այն նման է ներկայացման, որի մէջ ամէն մի դերասան ունի իրեն բնորոշ դերը: Ինչպէս մարմնի ու ներկայացման, այնպէս էլ մարդկային ընկերութեան բնականոն ընթացքը, յաջողութիւնը կապուած է այդ կառոյցների ամբողջականութեան պահպանման, բաղադրամասերի գործունէութեան ներդաշնակութեան եւ դրանց անդամների կողմից իրենց վստահուած դերի ճիշդ ու արդիւնաւէտ կատարմամբ: Ամէն մի մարդու դերը պայմանաւորուած է իր առանձնայատկութիւնների ամբողջութեամբ: Եթէ մարդ չի գործում ըստ իր ընդունակութիւնների ստացած դերակատարման, նա կը դառնայ չարիքի պատճառ: Դերազանցումը չարիք է: Մարդուն բնորոշ ամենաբնական եւ ամենաընդհանուր դերերը են աստուածապաշտութիւնը, բանականութիւնը, կազմակերպուածութիւնը, աշխատասիրութիւնը, ընկերասիրութիւնը: Հետեւաբար, բանականութիւնից, կազմակերպուածութիւնից, ընկերասիրութիւնից, աշխատասիրութիւնից ու աստուածապաշտութիւնից կատարուած ամէն մի շեղում տանում է դէպի չարիք: Անկազմակերպուածութիւնը, անմտութիւնը, ծուլութիւնը, ատելութիւնը չարիք են ծնում: Չարիքի դէմ ու բարու համար չպայքարելը նոյնպէս չարիք է:*

Խորենացու համոզմամբ, ամէն մի երեւոյթ իր մէջ ունի զարգացման երկու միտում՝ դրական ու բացասական: Այդ երկուսի ճշգրտման ընթացքում յոռետեսութեան մէջ ընկնելն էլ չարիք է, քանի որ այն տանում է դէպի քաղաքակրթութեան քայքայում:

Նա գտնում է որ արարչագործութեան օրից Աստուծոյ կողմից բանականութեամբ եւ ազատ կամքով օժտուած Ադամն ու Եւան ճիշդ չեն օգտագործել իրենց աստուածատուր կարողութիւնները, եւ այդ պատճառով էլ չարիք գործել: Այդ չարիքը ոչ թէ բխում է նրանց եւ ընդհանրապէս մարդ արարածի օրինաչափ զարգացման միտումից, այլ՝ դա պատահականութիւն է, շեղում է: Մարդու համար օրինաչափ է բարին, բանական հիմնաւորուածութիւն ունեցող արարքը[1]:

ԴԱՒԻԹ ԱՆՅԱՂԹ *(Ե-Զ. դար) մերժում է չարի գոյացական գոյութիւնը, նիւթի եւ մարմնի գոյացական չար էութիւնը: Նա համոզուած է որ «մարդ ունակութեամբ ունի զբարին ուստի եւ ընդունակ է*

1. Տես՝ *Հայոց Պատմութիւն*, թարգմ. Ս. Մալխասեանի, Երեւան, 1940, էջ 251-252, *Գիրք Պիտոյից, Սրբոյն Հօրն Մերոյ Մովսէսի Խորենացւոյ Մատենագրութիւնք*, Բ. հրատ., Վենետիկ, 1865, էջ 351, 370, 437, 434, 483-486, 556-567, 560, նաեւ տես՝ Գ. Խրլոբեան, *Հայ Սոցիալական...*, էջ 227-275:

չարութեան»: Ողջ իրականութեան մէջ փաստօրէն իշխող գոյացականը բարին է: Երբ մարդ հասկանայ եւ գործադրի այդ բարին, ապա կ՝իրականացուի գերագոյն իմացութիւնը, մարդու մերձեցումը Աստուծուն ու արդարութեան եւ ներդաշնակութեան հաստատումը: Մարդու իմացական կատարելութեան ու հոգու մաքրութեան առումով՝ քննարկելով մարդու փրկութեան հարցերը, Դաւիթ փրկութիւնը կապում է կամքի ազատութեան, չարի եւ բարիի միջեւ տարուող պայքարի ու դրա ելքի հետ: Նա հարցը քննարկում է նաեւ փիլիսոփայութեան միջոցով Աստուծուն մօտենալու, նրանից սովորելու, նրան նմանուելու առումով: Մարդ ձգտում է նմանուել Աստուծոյ բարութեան, իմացութեան եւ ուժին (կարողականութեան): Ձգտելով առաջինին նմանուել, մարդ ոչ միայն բարիանում է, այլեւ նպաստում է որ ուրիշներ եւս ազատուեն չարիքից ու միտեն դէպի կատարելութիւն: Ձգտելով նմանուել աստուածային ուժին, մարդ ձեռք է բերում իր հնարաւորութիւններից վեր գտնուող ցանկութիւններ չունենալու, կամքը ղեկավարելու յատկութիւնը[1]:

Ականաւոր գիտնական, իմաստասէր եւ մանկավարժ ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻՆ (595-685) մասնաւոր ուշադրութիւն է դարձնում չարի բնութեան ու մարդու ազատ կամքի հարցերին, ու դրանք հիմնականում լուսաբանում Լուսաւորիչ-Կորիւն-Եզնիկ-Եղիշէ-Մովսէս աւանդութեան ոգիով: Նա պնդում է որ չարիքը պայմանաւորել կանխորոշուածութեան սկզբունքով, վերջին հաշուով, կը յանգեցնի այն գաղափարին, որ չարիքը գոյակցութիւն է ու բխում է Արարիչից: Այսպիսով, անձնիշխանութեան, մարդու ազատ կամքի սկզբունքը դառնում է Շիրակացու «աստուածարդարացման» (theodicy) հիմքը: Շիրակացին կանխորոշուածութեան ուսմունքը հերքում ու մարդու ազատ կամքը հաստատում է պատասխանատուութեան, արդարութեան, պատժի եւ վարձահատուցման իրողութիւնների իրաւ գոյութեամբ: Նա ցուցաբերում է ընկերաբանական ու բարոյագիտական մօտեցում: Եթէ մարդու գործունէութիւնն ու յարաբերութիւնը պայմանաւորուած լինէին արտամարդկային, արտաընկերային եւ ճակատագրական գործօններով, փաստարկում է Շիրակացին, ապա անիմաստ կը լինէին արդարութիւնը, բարոյական չափանիշները, դատարանն ու ընդհանրապէս իրաւապաշտպան հաստատութիւններն ու Վերջին Դատաստանը: Եթէ մարդու կեանքի ընթացքն ու բովանդակութիւնը, նրա գործունէութիւնը կանխորոշուած լինէին, ապա նա կը կորցնէր իր արարքների համար իրաւական, բարոյական ու կրօնական պատասխանատուութիւնը: Իսկ որտեղ բացակայում է պատասխանատուութիւնն ու գիտակցուած դերակատարումը, այնտեղ չի կարող լինել կարգ ու կանոն, օրէնք ու պատիժ: Կանխորոշուածութեան ուսմունքը փաստօրէն վերացնում է չար եւ բարի գործերի սահմաններն ու տարբերութիւնները: Այսպիսով, ըստ Անանիա Շիրակացու, կամքի ազատութիւնը մարդու բարոյական կեանքի նախադրոյթն է: Եթէ, ըստ Շիրակացու, մարդու վարքը կանխորոշուած բնոյթ ունենար, ապա անիմաստ կը լինէր մարդու ամէն մի գործունէութիւն: Իմաստազուրկ կը լինէր մարդու ուսումնառութիւնը, գիտութեամբ, արուեստով, վաճառականութեամբ, արհեստներով, առեւտրով, հողագործութեամբ ու այլ ստեղծագործ աշխատանքով զբաղուելը: Կը լինէր այնպէս, ինչպէս կանխորոշուած է, ինչո՞ւ սովորել, աշխատել ու պայքարել: Շիրակացին մարդու ազատ կամքը դիտում է, որպէս մարդու ստեղծագործ գործունէութեան ու անհատականութեան կանխադրոյթը: Մեծ գիտնականը նկատել է տալիս որ կանխորոշուածութեան սկզբունքը մարդուն զրկում է նաեւ իր մտքերի տէրը լինելու իրաւունքից: «Տիարք եմք մտաց եւ գործոց մերոց, եւ այսմ ժպրհին լինել խափանիչք, յասելն թէ՝ բարիք եւ չարիք ոչ ի կամաց մարդոյն լինին»: Մեծ գիտնականը համոզուած է որ ինքնիշխանութեան ընդունումը եւ ճակատագրականութեան մերժումը ոչ թէ հակասում է իրաւ աստուածապաշտութեան, այլ բխում է դրանից ու հաստատում Աստուծոյ սէրը, մեծութիւնը»[1]:

Յովհան Մայրագոմեցին (572-650) եւս պնդում է որ մարդ իր գոյացական էութեամբ բարի է: Երբ նա չարիք է գործում, ապա հակադրւում է ինքն իր էութեանը, մարդկային բնական յարաբերութիւններին: Նա օտարանում է: Այսպիսով, ըստ Մայրագոմեցիի, ցեղասպան թուրքը մարդկութիւնից օտարացած է: Մայրագոմեցին գրտնում է, որ եթէ չարիք ես գործել, ապա «անծանօթ ես ի ծանօթից եւ հեռաւոր ի մերձաւորաց, ատելի սիրելեաց եւ թշնամի բարեկամաց, ամայի եւ ամենեւին եւ օտար ես յամենեցունց»[2]: Նա շեշտում է, որ սէրը, որպէս բարոյական սկիզբ, գոյաբանօրէն ժխտում է ամէն մի չարիք ու «ամենայն մախանք ախտից հեռանայ իր սիրոյ պահողին»: Չարիք ծնող մարդու ներքին դրդապատճառների շարքում նա առանձնացնում է Աստուծոյ կամքից շեղումը, ծուլութիւնը, չափի խախտումը, ինքնարդարացման ձգտումը, ընդհանուր եղբայրութեան պատկանելու գիտակցութեան թուլացումը, դերազանցումը: Ինչպէս տեսանք, այս

1. Տես՝ Դաւիթ Անյաղթ, Սահմանք Իմաստութեան, Երեւան, 1960, էջ 6, 40, 50, 86, 88-90, 116-118, 148-152, 154, 156, 158, նաեւ տես՝ Գ. Խրլոպեան, Հայ Սոցիալական..., էջ 292-340:

1. Անանիա Շիրակացի, Տիեզերագիտութիւն Եւ Տոմար, էջ 26, տես՝ նաեւ Գ. Խրլոբեան, Անանիա Շիրակացու Աշխարհայեացքը, Երեւան, 1964, եւ Հայ Սոցիալական..., էջ 340-349):
2. Յովհաննու Մանդակունոյ Հայոց Հայրապետի Ճառք, Վենետիկ, 1860, էջ 16:

յատկութիւնները բնորոշ են ցեղասպան թուրքին: Նա գտնում է որ Աստուած մարդկանց տուել է բնական հաւասարութիւն, որով իրաւունք ունեն բնութեան բարիքներից հաւասար չափով օգտուել, բայց ծուլութիւնը, ուրիշի աշխատանքի նկատմամբ անարդարացի վերաբերմունքը եւ ողորմածութեան պակասը ծնում են անհաւասարութիւն ու չարիք[1]:

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻՆ (951-1003) եղնելով չարիքի մարդածին լինելու նախադրոյթից, իր հիմնական նպատակն է համարում օգնել մարդուն, որ նա ազատուի իր մեղքերից ու անընդհատ կատարելագործուելով աւելի ու աւելի մօտենայ Աստուծուն: Այդ գործընթացը գլխաւորապէս վերաբերում է մարդու ներաշխարհին: Ներհայեցողութեան ճանապարհով մարդ պէտք է ճանաչի ինքն իրեն, իր ներաշխարհի վիճակը, իր դրական ու բացասական կողմերը, իր մեղքերը, իր աստուածատուր շնորհներն ու պարգեւները ու իր կարողականութեան սահմանները: Ինքնաճանաչումը որպէս հիմք ինքնակատարելագործման, ենթադրում է նաեւ ինքնամաքրում՝ Աստուծոյ օգնութեամբ: Նա անվերապահօրէն իր յոյսը կապել է Աստուծոյ մարդասիրութեան, ողորմածութեան ու ներողամտութեան վրայ: Չարից ազատուելու ու մաքրուելու համար նա միշտ հաղորդակցութեան մէջ պէտք է գտնուի Աստուծոյ հետ ու ձգտի նմանուել Յիսուսին: Այս հարցադրումները փաստօրէն բխում են Քրիստոս Յիսուսի գլխաւոր ու ոսկեայ օրէնքներից՝ քրիստոնէական սիրոյ օրէնքից: Նա այդ գործընթացում նկատում է երկու կողմ: Ինքնակատարելագործումն ու աստուածամերձեցումն ունի երկու որոշիչ գործօն՝ աստուածային ողորմածութիւնն ու մարդկային ձգտումն ու գործունէութիւնը: Առաջինը առկայ է մարդու արարչութեան օրից: Այն միշտ դրսեւորուել է Աստուծոյ մարդասիրութեան մէջ, որ իր գագաթնակէտին հասաւ Քրիստոս Յիսուսի գործունէութեամբ, խաչելութեամբ, յարութեամբ: Աստուած մարդուն օժտել է բանականութեամբ, աստուածային շունչով, ստեղծագործելու կարողութեամբ ու դէպի Աստուած բարձրանալու ու նրա հետ Հաղորդութեան Խորհուրդի միջոցով միաձուլուելու հեռանկարով: Դժբախտաբար, մարդ մինչեւ օրս ոչ միշտ կամ ոչ լրիւ է օգտուել դրանցից: Մինչեւ օրս կաղացել է երկրորդ գործօնը՝ մարդու կամեցողութիւնն ու աստուածահաճոյ գործեր կատարելու վճռակամութիւնը: Չարը արդիւնք է այդ աստուածատուր գործօնները սխալ կամ երբեք չօգտագործելու: Այդ գործօնի հետ աղերս ունեցող հարցերի լուսաբանութիւնը Նարեկացին դարձրել է իր թիրախը: Նրա իմաստասիրական ու աստուածաբանական երկերի նպատակն է զօրակոչել ու կազմակերպել

1. Տես՝ Գ. Խրլոբեան, *Հայ Սոցիալական...*, էջ 377-391:

մարդ անհատը, յատկապէս նրա անձնիշխանութիւնը: Այդ գործում նա վճռական դերը վերապահում է դէպի Աստուած մարդու ունեցած հաւատի ամրապնդման, խորացման եւ կամքի ազատութեան ուժականացման վրայ[1]:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԻՄԱՍՏԱՍԷՐ (1045-1129) կամքի ազատութեան էական հարցերում շարունակելով իր նախորդների հարցադրումները, նոր մօտեցումների հնարաւորութիւններ է ստեղծում յատկապէս փորձի, կենսափորձի նշանակութեան, խօսքի ազատութեան դերը ընդգծելով եւ բնութիւնը որպէս իմացութեան աղբիւր ընդունելով: Մերժելով չարի էութենական գոյութիւնը նա գտնում է որ արդի մարդը (Ադամի եւ Եւայի անկումից յետոյ ապրող մարդը) իր մէջ ունի չարն ու բարին կատարելու հնարաւորութիւնը: Այդ երկուսի միջեւ գոյութիւն ունի այդ միտումներից որեւէ մէկը իրականացնելու մրցակցութեան պայքար: Ըստ պայմանների, մարդու անհատականութեան առանձնայատկութեան ու կամքի ազատութեան յաղթում է նրանցից մէկը կամ միւսը[2]:

Հայ իրաւագիտութեան հիմնադիր ՄԽԻԹԱՐ ԳՈՇԸ (1120-1213) իր «Դատաստանագիրք»ի ներածականում աւելի է խորացնում կամքի ազատութեան ու մարդու պատասխանատուութեան իրաւական հիմքերը, պնդելով որ եթէ ժխտուի կամքի ազատութիւնն ու անձնական պատասխանատուութիւնը, անիմաստ ու անհիմն կը դառնան իրաւունքը ու մարդու օրինական պաշտպանութիւնը ընդհանրապէս:

ՎԱՀՐԱՄ ՐԱԲՈՒՆԻՆ (ԺԲ. դար) լինելով Կիլիկեան Հայաստանի խոշոր օրինագէտներից ու իմաստասէրներից մէկը, շարունակում է Մխիթար Գոշի փաստարկումները: Նա հարցին առաւելաբար մօտենում է մարդու փրկութեան առումով եւ պնդում, որ առանց Աստուծոյ օգնութեան մարդ չի կարող փրկուել, բայց, միաժամանակ, աստուածատուր պարգեւը առանց մարդու ազատ կամակցութեան չի կարող գործադրուել: Նա եզնում է Օգոստոս Երանելու այն դրոյթից, որ Աստուած մարդուն ստեղծել է առանց նրան, եւ նրան չի արդարացնի առանց նրա մասնակցութեան: Մարդ չի կարող լոյսի աղբիւր լինել, սա-

1. Տես՝ Գ. Խրլոբեան, *Գրիգոր Նարեկացու Իմաստասիրական Ուսմունքը*, «Հասկ» Հայագիտական, Անթիլիաս, 1997-2001, էջ 135-158, *Գրիգոր Նարեկացու Հումանիզմը*, Պէյրութ, 1983, էջ 8-9, 11-14, 36-46, *Գրիգոր Նարեկացու Իմաստասիրական Դիմագիծը*, «Ջանասէր» թիւ 7-8, էջ 162-167, Պէյրութ, 1999:

2. Կ.Ա. Միրումեան, *Յովհաննէս Սարկաւագի Աշխարհայեացքը*, Երեւան, 1984, էջ 242-261:

կայն ունակ է սենեակը լուսաւորելու՝ պատուհանը բանալով: Շնորհը չի տրւում նրան, ով արժանի չէ: Նա շեշտում է, որ մարդը լինելով անձնիշխան, կարող է հնազանդիլ կամ անհնազանդ գտնուիլ Աստուծոյ կամքին: Նա կարող է նոյնիսկ ըմբոստանալ: Աստուած համապատասխանաբար կը գնահատէ մարդուն: Նա նկատել է տալիս, որ թէեւ մարդու անձնիշխանութիւնը մի կողմից բացայայտում է նրա առաւելութիւնը միւս արարածների նկատմամբ, սակայն, միւս կողմից, մարդու ստեղծման օրից, պատճառ է դառնում նրա պատուիրազանցութեան, մեղսագործութեան ու անկման:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԶՆԿԱՑԻՆ *(ՊԼՈՒԶ) (1230–1293)* ելնում է այն հիմնադրոյթից, որ մարդը ստեղծուելով, իր մէջ կրում է առաջին հինգ օրերում արարուածների, ստորադասների յատկութիւնները եւ միաժամանակ Աստուածային շունչը, Աստուծոյ նման լինելու յատկութիւնը: Այսպիսով, իր կառոյցով մարդ կապում է ողջ իրականութիւնը, այդ թւում նաեւ նիւթական եւ հոգեւոր իրականութիւնները, աստուածայինն ու բնութիւնը: Մարդն ունի համադրական բնոյթ եւ կառոյց, որով նա ընտանի, ծանօթ է դառնում ողջ իրականութեան, որով շաղկապում է նիւթականն ու հոգեւորը, որով մարդ հաստատում է նիւթականն ու հոգեւորը, որով մարդ հաստատում է իր իշխող թագաւորական կարգավիճակը: Մարդու աստուածային յատկութիւններից են նրա բանականութիւնը, ստեղծագործելու կարողութիւնը, ընտրողականութիւնն ու ազատ կամքը:

ՅՈՎՀԱՆ ՈՐՈՏՆԵՑԻՆ *(1315–1386)*, Տաթեւի Համալսարանի հիմնադիր նախագահը, իր «Յովհաննու Որոտնեցւոյ Արարեալ Մեկնութիւն Բանին» ձեռագիր գրութեան մէջ գտնում է որ մարդու վարքը նախախնամութեամբ բացատրել կը նշանակի չարիքի պատասխանատուն Աստուծուն համարել: Այն պարզապէս անհրաժեշտութիւն նկատելը կը տանի այն սխալ եզրակացութեան, որ նոյն պայմաններում մարդը պարտադրաբար նոյն վարքագիծը պէտք է դրսեւորի: Այն ճակատագրով բացատրելը մարդու վարքը կը դնի մարդուց դուրս եղող արտաքին օտար ազդեցութիւնների տակ ու կ'անտեսի մարդու անհատականութիւնը: Մարդու վարքը լոկ բնութեամբ կամ կենսաբանական գործոններով բացատրելը կը տանի դէպի մարդկային գիտակցական գործունէութեան, իմացական ու հոգեւոր կարողականութեան ժխտման կամ անտեսման: Այն ինքնամատոյց համարելով, մենք կը գերագնահատենք մարդու մէջ գործող ներքին էութիւնը, այն մեկուսացնելով մարդու վարքի վրայ ներգործող միւս գործոններից: Փիլոն Ալեքսանդրացու «Ցաղագս Նախախնամութեան» գրքի մեկնաբանութեան մէջ Որոտնեցին գտնում է որ կարելի է տարբերակել նախախնամութեան երկու շերտ՝ տիեզերքի արարչութիւնն ու գոյատեւումը ըստ աստուածային նախախնամութեամբ (առաջնային նախախնամութիւն) եւ մարդկային վարքի նախախնամական կանխորոշում (երկրորդային նախախնամութիւն): Երկրորդայինը նա մերժում է, եւ գտնում է որ առաջնայինի ընդունումը բոլորովին չի հակասում ազատ կամքի գոյութեան փաստին: Մարդու կամքի ազատութիւնը ապացուցելու համար նա բերում է մի շարք փաստարկներ.

Ա. Եթէ մարդու գործը, վարքը պայմանաւորուած է իրենից դուրս գտնուող գործոններով, ապա ինչո՞ւ են ստեղծւում մարդու վարքը կարգաւորող ու կառավարող պարտադիր օրէնքներ ու գործում է արդարադատութեան համակարգը, որ պատժում ու պարսաւանքի է ենթարկում վատերին:

Բ. Եթէ մարդու վարքը կանխորոշուած է, ի՞նչպէս կարելի է բացատրել չար մարդու դաստիարակութիւնն ու փրկութիւնը, եւ նախկինում դրական մարդու վարքի վատթարացումը:

Գ. Նախախնամական կանխորոշուածութեան սկզբունքը կամ պէտք է ընդունի՝ որ մարդիկ իրենց ծնունդով անհաւասար են՝ մէկը ծընուած է հարուստ, միւսը՝ աղքատ, մէկը՝ տէր, միւսը՝ ստրուկ կամ ծառայ, կամ ընդունի կամքի ազատութիւնը: Իրականութեան մէջ մարդիկ հաւասար են ստեղծուել եւ ամէն մէկը իր աշխատութեամբ ու գործով հաստատել է իր ընկերային կարգավիճակը:

Դ. Նախախնամական կանխորոշուածութիւն ընդունողները չեն կարողանում բացատրել թէ ինչու բանականութիւն ունեցող, աստուածային կերպերով ստեղծուած ու Աստուծոյ շունչը կրող մարդը նախախնամւում է, իսկ բոյսերն ու կենդանիները ոչ: Ինչո՞ւ է պէտք մարդուն բանականութիւնը, եթէ այն օգտագործելու իրաւունքից նա զուրկ է: Բանական էակ լինելն ու ազատ կամք ունենալը փոխադարձաբար ենթադրում են իրար[1]:

Իր ուսուցիչին հետեւելով, ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻՆ *(1346–1409)* պընդում է որ բանական լինել նշանակում է ինքնիշխան լինել, կամքի ազատութիւնով օժտուած լինել: Քանի գոյութիւն ունի երեք տեսակի բանական էակ (Աստուած, հրեշտակ եւ մարդ) պէտք է նաեւ լինի կամքի ազատութեան, անձնիշխանութեան երեք տեսակ (աստուածային, հրեշտակային եւ մարդկային): Աստուածային կամքը անփոփոխ է ինչպէս գործողութիւնից առաջ, այնպէս էլ դրանից յետոյ: Աստուծոյ համար կամենալը կարենալ է: Հրեշտակները կարող են ընտրութիւն կա-

1. Տես՝ Գ.Հ. Գրիգորեան, *Յովհան Որոտնեցու Փիլիսոփայական Ուսմունքը*, Երեւան, 1980, էջ 164–187:

տարել մինչեւ գործողութիւնը, բայց դրանից յետոյ անկարող են փոփոխութիւններ ներմուծել: Մարդ իր ընտրութիւնն ու կամքը կարող է սրբագրութեան ու փոփոխութեան ենթարկել ինչպէս գործելուց առաջ, գործելու ընթացքում, այնպէս եւ գործելուց յետոյ: Մարդ կարող է ընտրել ե՛ւ ազատութիւնը, ե՛ւ անազատութիւնը: Այս իմաստով, մարդը բանական էակներից ամենից ազատն է: Աստուած «կաշկանդուած» է իր բացարձակ ազատութեամբ:

Տաթեւացին նկատել է տալիս որ մարդու կամքի ազատութիւնը տեսական ու մեթաֆիզիկական իրականութեան մէջ իրական է ամբողջապէս, բայց կեանքի ամէն մի իրադարձութեան մէջ կամ վիճակում, այն կարող է ապրել մակընթացութիւններ ու տեղատուութիւններ, ու հասնել մինչեւ չգոյացման աստիճանի: Այդ ելեւէջների պատճառների շարքում նա մատնացոյց է անում մարդ-Աստուած յարաբերութեան խորութիւնն ու սերտութիւնը, գործող իրաւական համակարգի կատարելութիւնը, ընկերային կառոյցի կազմաւորուածութեան հիմքերն ու մակարդակը եւ այլ նման գործոններ[1]:

Հայ դասական իմաստասիրութեան եւ աստուածաբանութեան ներկայացուցիչները եւ նրանց հետեւորդները վերլուծելով հայ ժողովրդի պատմութեան մէջ եղած բոլոր չարիքները, բոլոր կոտորածները, տեղահանութիւնները, ղեկավարուել են վերոյիշեալ դրոյթներից: Այս հարցադրումները ընդունուել են Հայ Եկեղեցու կողմից ու պահպանուել որպէս սրբութիւն: Հետեւելով նրանց ու պահպանելով մեր ազգային աւանդութիւնները, մենք այսօր հիմքեր չենք տեսնում այդ հունից շեղուելու: Մեր պարտքն է աւելի խորացնել ու հիմնաւորել մարդկային պատմութեամբ հաստատուած այս ճշմարտութիւնները:

Հայերի Ցեղասպանութիւնը ո՛չ հայերին տրուած աստուածային պատիժ է եւ ոչ էլ նախախնամութիւն: Այն հետեւանք է Թուրք պետութեան կողմից իր առաջ ծառացած հարցերի լուծման համար առկայ հնարաւորութիւններից՝ սխալը, անմարդկայինը ընտրելուն:

1. Տես՝ Գ.Հ. Գրիգորեան, *Յովհան Որոտնեցու Փիլիսոփայական Ուսմունքը*, Երեւան, 1980, էջ 164-187:

ԳԼՈՒԽ Գ.

ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԹԱՂՈՒԱԾ ԵՆ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԾԱԼՔԵՐՈՒՄ

Օսմանեան Թուրքիան երկար պատմութիւն ունի, շուրջ հինգ դար: Այն եղել է նաեւ ամենից մեծ կայսրութիւններից մէկը՝ Հիւսիսային Ափրիկէի գրեթէ ողջ Միջերկրական ափի, Միջին ու Մերձաւոր Արեւելքի, Արաբական Թերակղզու տարածքները, Պալքանների, Արեւելեան Եւրոպայի մի մասը, Սեւ Ծովի հիւսիսային ափից վեր տարածուող ռուսական եւ ուքրանական հողերի որոշ մասը, Փոքր Ասիան (Արեւելեան եւ Արեւմտեան Անատոլիաները) (տես՝ քարտէս թիւ 2): Այն աստիճանաբար փոքրացել է իր ներքին նեխուածութեան, բազմաբնոյթ ներքին հակասութիւնների, անբուժելի հիւանդութիւնների ու արտաքին յարաբերութիւնների խճճուածութեան պատճառով: Կամաց կամաց սմքելով, նա կարողացաւ արիւնահեղութիւնների գնով պահել այսօրուայ տարածքները (տես՝ քարտէս թիւ 3): Իր այս անկումի մէջ նա ոչ միայն վնասեց Թուրք ժողովրդին, այլ բոլոր ազգերին (արաբ, ալպան, քիւրտ, հրեայ, յոյն, ասորի, պուլկար, սլաւ, ռուս, հայ), որոնք ենթարկւում էին իրեն: Տարօրինակն այն է, որ Թուրքական տիրապետութիւնից ազատագրուած շատ պետութիւններ բնական յարաբերութիւնների մէջ չեն արդի Թուրքիայի հետ, երբ Անգլիայի, Ֆրանսայի եւ այլ երկրների նախկին գաղութները լաւ յարաբերութիւնների մէջ են նախկին գաղութարար երկրի հետ:

Թուրքական պետութեան պատմութիւնը, որ նրա աստիճանական փոքրացման ու սմքումի պատմութիւնն է, իր մէջ խտացնում է հպատակ ազգերի տառապանքների, բռնութեան դէմ ու ազատութեան համար նրանց պայքարի պատմութիւնը: Բացառութիւն չի հանդիսանում հայերի պատմութիւնը՝ 15-րդ դարից սկսած: Հայերի Ցեղասպանութեան պատճառների ողջ կծիկը գտնւում է Թուրքական պատմութեան ծալքերում: Նրա զարգացման գրեթէ ամէն մի փուլ մարմնաւորում է Թուրքական բռնութեան, զուլումի, կեղեքման, ջարդերի, բռնագաղթերի եւ Հայերի Ցեղասպանութեան լինելութեան աստիճանները, երեսները: Թուրք պատմութիւնը արիւնի պատմութիւն է, ոչ միայն հայ, այլ

նաեւ տասնեակ ափրիկեան, եւրոպական եւ ասիական ազգերի ու ժողովուրդների, որոնց նա բռնութեամբ հպատակեցրել է իրեն:

Այսպիսով, Թուրքիայի կողմից Հայերի Ցեղասպանութիւնը ունեցել է իր պատմական հոլովոյթը, իր փուլերը: Դրանց ծալքերի վերլուծութիւնը կը բացայայտի նաեւ տուեալ ոճիրի պատմական երեսները, ներքին տրամաբանութիւնը եւ ողջ էութիւնը: Այն կը յստակացնի նաեւ Թուրք պատմութեան եւ Ցեղասպանութեան խորքային կապերը:

Թուրքերի նախահայրերը հիւսիսային մոնկոլական տարածքներից մօտ հինգ հազար տարիներ առաջ քոչեցին Միջին Ասիայի տափաստանները, որտեղից՝ 11-րդ դարում շարժուեցին դէպի հիւսիս արեւմուտք եւ աստիճանաբար գրաւեցին Հայկական Լեռնաշխարհը, Բիւզանդական Կայսրութիւնը եւ այլ շրջակայ եւ հեռու երկրներ: Նրանք քոչուոր, ձիաւոր ցեղեր էին, զուրկ գրից ու գրականութիւնից: Խիստ աղքատ էր նրանց քաղաքակրթութիւնը: Իսկ հարուստ էր այն ժողովուրդների քաղաքակրթութիւնը, որ նրանք զաւթել էին: Այնտեղ էին բարձրացել հարուստ եգիպտական, յունական, հռոմէական, հայկական, ասորական, իսլամական մշակոյթները: Այդ օրուանից սկսեց մշակութային բախումը զաւթիչի ու զաւթուողի միջեւ: Թուրքերը հենց սկզբից ժխտելով հպատակացուած ժողովուրդների ազգային եւ մշակութային ինքնուրոյնութեան իրաւունքը, չցանկացան սովորել նրանցից: Մշակութային առճակատումը, գաղտնի թէ բացայայտ, շարունակուեց Օսմանեան Կայսրութեան գոյութեան ընթացքում: Սուլթանը այն փորձեց լուծել մշակոյթները հալածելու, նրանց առաջընթացը արգելակելու, նրանց բռնի իւրացնելու միջոցով: Այս առճակատումը իրեն դրսեւորեց բոլոր մակարդակներում՝ կենցաղային, մշակութային, տնտեսական, ընկերային եւ հոգեւոր:

Հայերի Ցեղասպանութեան նախապատմութիւնը կարելի է սկսել Օսմանեան իրական համակարգի հաստատումից՝ 15-16 դարերից, երբ հպատակները բաժանուեցին երկու խմբի՝ իրաւահաւասար կամ առաջնակարգ ու երկրորդական կամ խտրականացուած: Առաջին խմբի մէջ էին մտնում մահմետականները, իսկ երկրորդի՝ ոչ-մահմետականները: Առաջինի մէջ նախապատուութիւնը տրւում էր Թուրքերին, որոնց նկատմամբ ստորադաս էին բոլոր միւս մահմետական ազգային հաւաքականութիւնները, որոնք ժամանակի ընթացքում պէտք է թուրքանային: Այսպիսի հարցադրումը աստիճանաբար խորացրեց թուրք-արաբական, թուրք-ալպանական, թուրք-եգիպտական, թուրք-ալժիրական, թուրք-լիպիական յարաբերութիւնները: Յետագայում սրան աւելացաւ նաեւ Միլլէթի օրէնքը, որ կարգաւորում էր երկրորդական կարգի հպատակների իրաւունքներն ու պարտականութիւնները ոչ թէ ազգային, այլ կրօնական սկզբունքի հիման վրայ: Օսմանեան իշխանութիւնները առաջին իսկ օրից չընդունեցին ոչ-թուրք ազգերի գոյութիւնը իրենց պետութեան մէջ: Օսմանեան Կայսրութեան ներքին հակասութիւնների սրման, 17-րդ դարից սկսած նրա աստիճանական փոքրացման եւ ազգային ազատագրական ու բարեկարգչական շարժումների ծաւալման հետեւանքով, աւելի զօրացաւ իրաւազրկման, խտրականութեան, բռնութիւնների քաղաքականութիւնը: Կայսրութիւնից սկսեցին նախ դուրս գալ ծայրամասային տարածքների ժողովուրդները (Պարսկաստան, Միջին Ասիա, Հիւսիսային Ափրիկէ, Արեւելեան Եւրոպա, ուքրանական ու ռուսական տարածքներ եւայլն), որոնց մէջ զգալի թիւ էին կազմում մահմետական կրօն դաւանողները: Ճգնաժամի պատճառների մէջ զինուորական թուլութեան շեշտաւորումը ուժեղացրեց պետական մեքենայի ռազմականացումը: Ճգնաժամից դուրս գալու նպատակով կայսրութեան վարած քաղաքականութեան մէջ աւելի ու աւելի նկատելի դարձան խտրականութիւնը, իրաւազրկումը, ազգերի ու ազգութիւնների բռնի տեղափոխութիւնները, բռնի ձուլման պետական քաղաքականութեան գործադրումը: Այս, մի կողմից հնարաւոր դարձրեց Թուրք բարեկարգչական եւ ազգային ազատագրական շարժումների սահմանափակ համագործակցութիւնը, իսկ միւս կողմից՝ նրանց միջեւ եղած տարբերութիւնների ու հակասութիւնների սրումը: Այս առաջին փուլն էր:

ՏՆՏԵՍԱԿԱՆ-ԸՆԿԵՐԱՅԻՆ ԿԱՌՈՅՑԻ ԳԼԽԻՎԱՅՐՈՒՄ

18-րդ դարի վերջերից, երբ կայսրութիւնը կորցրել էր իր բռնագրաւուած հողերի զգալի մասը, նրա տնտեսապէս առաւել զարգացած տարածքներում (մանաւանդ ծովափնեայ քաղաքներում) սկսեց ներթափանցել արդիւնաբերական յեղափոխութեան ալիքը: Այն արմատապէս, գլխիվայր փոխեց երկրի տնտեսական-ընկերային կառոյցը:

Օսմանեան իրականութեան մէջ պատուի էին պետական պաշտօնէութիւնը եւ զինուորականութիւնը: Նրանք անօրինական եղանակներով իւրացնում էին երկրի եկամուտի մեծ մասը: Արդիւնաբերողները, արհեստաւորները, առեւտրականները, պանքային գործով զբաղուողներն ու մտաւորականութիւնը ընկերային-տնտեսական ստորին խմբի մէջ էին դասւում: Զինուորականութիւնն ու պետական պաշտօնէութիւնը հիմնականում թուրք վերնախաւի ձեռքում էր: Երկրորդ ընկերային-տնտեսական դասը հիմնականում կազմուած էր հայերից, յոյներից, հրեաներից եւ այլ ոչ-թուրք ու ոչ-իսլամ տարրերից: Հայերի տնօրինութեան տակ էր կայսրութեան ներմուծման 60%-ը, արտահանման 40%-ը, 80%-ը ներքին առեւտրի: Հայերը զգալիօրէն տիրակալ էին արհեստներում, արուեստներում, առողջապահական ոլորտում: Բռնագաղթը եւ Հայերի Ցեղասպանութիւնը շատ վայրերում

քայքայել էր օսմանեան ողջ տնտեսութիւնն ու կեանքը[1]: Երբ արդիւնաբերական յեղափոխութիւնը սկսեց իրեն զգալ տալ, Օսմանեան Թուրքիայի վերնախաւը կորցրեց իր մենաշնորհները, կորցրեց իր ընկերային դիրքն ու եկամուտը: Նրա փոխարէն ընկերութեան ու տնտեսութեան մէջ տիրող դիրք սկսեցին ստանալ արդիւնաբերողները, առեւտրականները, պանքային կապիտալի տէրերը, այսինքն՝ ոչ-թուրքերը, ոչ-իսլամները: Այս՝ նախ սրեց մրցակցութիւնը, ազգային լարուածութիւնը: Երբ թուրք վերնախաւը պարտուեց նոր պայմաններով թելադրուած մրցակցութեան մէջ, Սուլթանը դիմեց բռնութեան, իրաւազրկման, ազգային ու կրօնական խտրականութեան քաղաքականութեան զօրացման: Այդ տեղաշարժերը մեծացրին թուրք բարենորոգիչների ոյժը եւ ազգային ազատագրական պայքարի որոշ թեւերի հետ նրանց համագործակցութեան հիմքերը: Այս երկրորդ փուլն ու երեսն էր:

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՌԱԶՄԱԿԱՆԱՑՈՒՄ

Մօտաւորապէս նոյն ժամանակաընթացքում, երբ ուժեղացել էր հակասուլթանական ազատագրական պայքարը, ու հպատակ մի շարք ժողովուրդներ Պալքաններում եւ Հիւսիսային Ափրիկէում անկախութիւն ձեռք բերելով ստեղծել էին իրենց ազատ պետականութիւնը, օսմանեան կառավարութիւնը նորովի սկսեց պայքարել ծաւալուող ազատագրական պայքարի դէմ: Օսմանեան Կայսրութեան ստեղծման օրերին զաւթիչները իրենց անմիջական հսկողութեան տակ չէին վերցրել որոշ անապատային ու լեռնային տարածքներ: Նրանց շնորհել էին միջնադարեան տիպի ինքնավարութիւն եւ բաւարարուել էին լոկ տուրքերի գանձումով եւ հաւատարմութեան երդումով: Բայց հակասուլթանական ազատագրական պայքարի զօրացման զուգահեռ այդ վայրերը դարձան այդ շարժման հաւանական ապաստարանը, բոյնը, ամրոցը: Օսմանեան կառավարութիւնը որոշեց զինուորական գրաւման ենթարկել այդ վայրերը: Նա զինեալ ընդդիմութեան հանդիպեց Լեռնային Լիբանանում եւ Արաբական անապատի զանազան վայրերում: Լեռնային Լիբանանը առաջինը պաշտօնապէս նուաճեց ինքնավարութիւն: Այդ յաղթանակում իրենց դերն ունեցան Ռուսաստանն ու Ֆրանսան: Երբ, աւելի ուշ, Օսմանեան Թուրքիան փորձեց նոյն քաղաքականութիւնը գործադրել Պատմական Հայաստանի կիսանկախ լեռնային շրջաններում, հայերը ցուցաբերեցին զօրաւոր դիմադրութիւն եւ ցանկացան այդ վայրերում կիրառել Լեռնային Լիբանանի փորձը: Հայերը պարտութեան մատնեցին օսմանեան զինուորական ջոկատները: Եւրոպան միջամտեց: Այսպիսով, Օսմանեան Թուրքիան մի կողմից ռազմականացրեց իր հպատակների, ի մասնաւորի հայերի հետ ունեցած յարաբերութիւնները, միւս կողմից այն աւելի կապեց միջազգային դիւանագիտութեան ու քաղաքական ելեւէջների հետ: Այս իրավիճակը աւելի ցայտուն դարձաւ 19-րդ դարի եօթանասունական թուականների ռուս-թուրքական պատերազմին յաջորդող Սան Ստեֆանոյի, Լոնտոնի եւ Պերլինի ժողովներում, որտեղ փաստօրէն դիւանագիտականօրէն ձեւաւորուեց Հայկական Հարցը: Այս երրորդ փուլը կամ երեսն էր:

Շատեր, այդ թւում նաեւ որոշ թուրքեր, գտնում են որ Հայերի Ցեղասպանութեան պատճառը պէտք է որոնել հայ ազատագրական պայքարի մէջ: Նրանք գտնում են որ եթէ հայերն ազատութիւն ու անկախութիւն չպահանջէին, ապա օսմանեան իշխանութիւնը նրանց չէր ջարդի: Այսինքն, եթէ հայերը, արաբները, պուլկարները, յոյները եւ այլ հպատակ ժողովուրդներ համաձայնէին որպէս հաւաքականութիւն ու ազգ վերանալ, ապա այդ ժամանակ նրանց չէին ջարդի: Եթէ այս հարցադրումը պատմական, քաղաքական ու իրաւական որեւէ հիմնաւորում եւ արդարացում ունի, ապա պէտք է ընդունել որ ճիշդ կը լինէր ազատութեան ու անկախութեան համար պայքարած ու այժմ պայքարող բոլոր ժողովուրդների (ամերիկացիների, իտալացիների, սպանացիների, լեհերի, պուլկարների, ռումանացիների, ռուսների, արաբների, քրտերի եւ Ափրիկէի ու Ասիայի ցամաքամասերի տարբեր ժողովուրդների) զանգուածային ոչնչացումն ու ցեղասպանութիւնը գաղութատէրերի կողմից՝ պէտք է նկատել բնական եւ ընդունելի երեւոյթ: Զկայ մի ժողովուրդ, ներառեալ թուրքերի, որն իր պատմութեան այս կամ այն հատուածում պայքարած չլինի իր ազատութեան ու անկախութեան համար: Ազատագրական շարժումն ու պայքարը ոչ թէ հայկական երեւոյթ է, այլ համաշխարհային: Արդի ազգային մեծ ու փոքր, հին ու նոր պետութիւնների մեծամասնութիւնը չէին ստեղծուի առանց ազատագրական պայքարի: Հետեւաբար, եթէ ընդունենք վերոյիշեալ վայ «գիտնականներ»ի տեսակէտը, ցեղասպանութիւնը եւս պէտք է ընդունել որպէս համատարած եւ բնական երեւոյթ, եւ ոչ թէ ընթացքից շեղում, օրինազանցութիւն, յանցանք ու չարիք: Ոչ մի սահմանադրութեամբ, օրէնքով ու նախադէպով ազգային ազատագրական պայքարը ու ազգային ինքնորոշման իրաւունքը չեն դասուել պատժելի արարքների շարքին:

Օսմանցիների կողմից բռնագրաւուած երկրների ժողովուրդների ազգային ազատագրական պայքարը ապրում էր իր յաղթարշաւը: Նախ ազատութիւն նուաճեցին ծայրամասային երկրները (Հիւսիսային Ափրիկէի երկրները, Իրանը, Հունգարիան, Ռումանիան, Միջին Ասիա):

1. J. Lepsius, *Le Rapport Secret de Johannes Lepsius... sur les massacres d'Armenie*, Paris, Payot, 1918, p. 277-280.

1861 թ. Լեռնալիբանանը ստացաւ ինքնավարութիւն: Նման կարգավիճակ նուաճեցին նաեւ անապատի որոշ արաբ ցեղապետեր: Յունաստանն իր անկախութիւնը ձեռք բերեց 1829 թ., Պուլկարիան, Սերպիան, Զեռնոկորիան՝ 1877-1879 թթ., Ալպանիան 1912 թ.: Անկախութեան համար պայքարող երեք ջոկատ էին մնացել՝ հայերը, քրտերը եւ արաբները: Թուրքերին յաջողուեց քիւրտ ցեղապետերի մեծ մասին ներառնել հակահայկական ճակատ: Նրանք քիւրտերին կարողացան խաբել ասելով, որ հայերը իբր ցանկանում են իրենցից խլել իրենց ապրած հողերը, գոյքը ու վտարել իրենց:

Պատմական Հայաստանը նստած էր Օսմանեան Կայսրութեան սրտում: Նրա ազատագրման հարցը Թուրքերը հռչակեցին թապու (գերբնական ուժերի կողմից արգիլուած): Թուրքիան միւսներից կրած պարտութեան վրէժը, գիտակցաբար թէ անգիտակցաբար, լուծեց հայերից: Դրանով նա «հոգու հանգստութիւն» ստացաւ: Նա չթողեց որ վերազարթնի Պատմական Հայաստանը, որ նա համարում էր ստեղծուելիք թուրքական պետութեան գոյացման հիմնական, ու նոյնիսկ միակ արգելքը: Հայերի ջարդերը հնարաւոր դարձրին արդի Թրքական Հանրապետութեան առաջացումը:

Օսմանեան միապետութիւնը հիմնուած էր բռնի ուժի, զինուորականութեան վրայ: Հակառակորդներին կամ ոչնչացնում էին եւ կամ՝ աքսորում: Ազատագրական պայքարի ծաւալման զուգահեռ, բռնութիւնը ոչ միայն ուժեղանում էր, այլեւ կիրառւում բոլոր հպատակների նկատմամբ՝ անկախ նրանց ազգային ու կրօնական պատկանելիութիւնից: Զանգուածային սպանութիւնների էին ենթարկւում պարսիկները, արաբները, ալպանացիները, յոյները, պուլկարները, քիւրտերը, հայերը եւ ուրիշներ: Օսմանեան կառավարութեան անօրինութիւնները կայսրութեան ողջ տարածքով հրահրում էին ապստամբութիւններ: Վերջինս ճնշելու համար՝ իշխանութիւնները ուժեղացնում էին պատժիչ բռնի միջոցները, որ էլ աւելի բորբոքում էր ազատագրական պայքարը: Օսմանեան Կայսրութիւնը մտել էր այս փոթորկային պտոյտի, մահուան շղթայի մէջ եւ չէր կարողանում դուրս գալ: Նա պատերազմն ու ցեղասպանութիւնը ընդունեց որպէս ելք:

Այս վիճակում սկսուեց տարբեր հայկական հայրենասիրական կազմակերպութիւնների միաւորումն ու այդ հիման վրայ ազգային քաղաքական կուսակցութիւնների ստեղծումը 19-րդ դարի 80-90-ական թուականներին: Համանման գործընթաց արձանագրուեց նաեւ օսմանեան հպատակութեան տակ գտնուող գրեթէ բոլոր ազգերի ու ժողովրդների մօտ: Թուրք հակասուլթանական շարժումը նոյնպէս սկսեց ունենալ իր քաղաքական ղեկավարութիւնը եւ կուսակցականանալ: Հպատակ ժողովուրդների ազատագրական շարժումները սկսեցին ղեկավարել ազգային կուսակցութիւնները: Թուրքական հակասուլթանական շարժումները սկսեցին տնօրինել Թուրք ազգային կուսակցութիւնները: Քանի Թուրքիայում տարուող բոլոր տեսակի ազատագրական պայքարները մտել էին միջազգային դիւանագիտութեան ու քաղաքական կեանքի ծիրի մէջ, ապա գործող բոլոր կուսակցութիւնները, Թուրք թէ ոչ-Թուրք, այս կամ այն կերպ կապուեցին այս կամ այն երկրի քաղաքական կազմակերպութեան հետ: Ակամայ այնպէս ստացուեց որ Թուրքիայում ապրող ժողովուրդների ազատութեան նուաճման մէջ արտասահմանին վերապահուեց կարեւոր դեր: Թուրքիա մտաւ տարօրինակ ու բազմատեսակ եւրոպականացման միտում եւ օտարամոլութիւն, որի բացասական կողմերի դէմ պայքարում էին առողջ ազգային ուժերը: Այս չորրորդ փուլը կամ երեսն էր:

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ ՍՈՒԼԹԱՆԻ ԿՈՂՄԻՑ

Այս ընթացքում տեղի ունեցաւ մի շատ հիմնական փոփոխութիւն, որն ամէն կերպ աշխատում էր արգելակել ու բացառել օսմանեան իշխանութիւնը: Նա պնդում էր որ կայսրութիւնում ապրում են մէկ ժողովրդի կամ ազգի ներկայացուցիչներ: Նրանք օսմանեան ազգի ներկայացուցիչներ են, կամ օսման Թուրքեր են եւ կամ օսմանցիներ են: Այս օսմանցիները, պնդում էր Սուլթանը, պատկանում են տարբեր կրօնական միլլէթների: Այսինքն՝ նրանք իրարից տարբերւում են կրօնով:

18-րդ դարից Օսմանեան Կայսրութիւնից սկսեցին անջատուել տարբեր ցեղեր, ժողովուրդներ ու ազգեր, ու կազմեցին տարբեր բնոյթի պետական ու քաղաքական կառոյցներ, որոնք այս կամ այն ձեւով քաջալերուեցին օսմանեան պետութեան կողմից: 19-րդ դարից միջազգային պայմանագրերով ու որոշումներով քննարկուեցին կայսրութեան մէջ գտնուող ժողովուրդների ու ազգերի անկախութեան եւ կարգավիճակի բարելաւման հարցը: Դա առաւել ընդգծուածութեամբ նկատուեց Պեռլինի Վեհաժողովում: Օսմանեան Կայսրութիւնը ստիպուած քննարկեց իր կառոյցում եղած ազգերի, ժողովուրդների հարցը: Տակտիկական նկատառումներով ինքը առաջ քաշեց նոյնիսկ Քրտական Հարցը: Սուլթանը ոչ միայն ընդունեց ազգային տարածքների իրողութիւնը, այլ նաեւ գործադրեց ազգային տարածքների վերաձեւման ծրագիր, ինքնատիպ բռնագաղթ: Սուլթանը հարկադրուեց ազգային կուսակցութիւնների հետ բանակցութիւններ վարել:

Վերոյիշեալ տեղաշարժերի հիման վրայ միջազգային հանրութեան կողմից եւ փաստօրէն (De Facto) եւ իրաւական տեսանկիւնից (De Jure) ընդունուեց որ կայսրութիւնը կազմուած է տարբեր ազգութիւններից ու ժողովուրդներից, որոնք ունեն որոշակի իրաւունքներ, որոնք պաշտպանւում են միջազգային օրէնքներով: Այսպիսով հայը սկսուեց նկատ-

ուել ոչ միայն որպէս կրօնական համայնք, այլ նաեւ ազգային՝ իրեն ընորոշ ազգային իրաւունքներով: Այս կէտը Սուլթանը ոչ մի կերպ ընդունել չէր ցանկանում եւ չէր կարողանում:

Սոյն փոփոխութիւնը կարեւոր տեղաշարժեր առաջացրեց Սուլթանի կիրառած պատժամիջոցի բնոյթի մէջ: Նախկինում պատժամիջոցները առաւելաբար տեղական բնոյթի էին ու կապւում էին անհնազանդութեան, օրինազանցութեան, կրօնական այլադաւանութեան հետ: Առաւելաբար պատժւում էին անհատներ կամ փոքր խմբեր: Ամենից զանգուածայինը բռնահանութիւնն էր, բնակչութեան մի մասի տեղափոխութիւնը մի շրջանից միւսը՝ ազգային խմբաւորումների միջեւ հաւասարակշռութիւն մտցնելու նպատակով: Ազգերի եւ ազգային հարցերի գոյութիւնը Օսմանեան Թուրքիայի եւ ապա Թուրքիայի իշխանութիւններին յուշեցին ազգովին, ազգային հաւաքականութիւններին պատժելու, նրանց միջից ազգային պատկանելութեան գիտակցութիւնը դուրս հանելու գաղափարը: Պատիժները ստացան ազգային, զանգուածային բնոյթ, եւ դարձան աւելի դաժան: Ծնուեց մի ամբողջ ազգ պատժելու միտքը: Տուեալ ազգը տուեալ հողից ընդմիշտ վերացնելու գաղափարը: Այս մտայղացումը գործադրուեց 1895-1897 թուականներին, երբ կոտորուեցին աւելի քան 300,000 հայեր, երբ Սուլթանը փորձեր էր ձեռնարկում հայ կուսակցութիւնների հետ բանակցելու եւ հայ ազատագրական պայքարի ղեկավարները փորձում էին միացեալ մի ճակատ կազմել հակասուլթանական բոլոր ուժերի հետ: Այս արմատական շրջադարձ էր հայ-թուրքական յարաբերութիւնների պատմութեան մէջ: Հայերի նման ջարդ կազմակերպեցին Թուրքերը մօտ տասը տարի անց, երբ Երիտթուրքական խմբաւորումը հպատակ ժողովուրդների ազգային ազատագրական ուժերի հետ համագործակցած «եղբայրութիւն, հաւասարութիւն եւ առաջադիմութիւն» կարգախօսի դրօշով իրականացրեց մի յեղափոխութիւն, որի հետ հպատակ միւս ժողովուրդների կողքին հայերն էլ մեծ յոյսեր էին կապում: Երիտթուրքական այդ խմբակը յեղափոխութիւնը վերածեց հակայեղափոխութեան: Թուրքական յեղափոխութիւնը չծնուած մահացաւ: Կիլիկիայում ջարդուեցին շուրջ հարիւր հազար հայեր: Այդ դուռ բացեց հակասուլթանական պայքարի էլ աւելի ուժեղացման, նոր հպատակ ազգերի ազատագրման ու անկախացման, եւ թուրքական բռնութիւնների ու կեղեքումների ուժեղացման: Այս հինգերորդ երեսը կամ փուլն էր:

ԲԱՐԵՆՈՐՈԳՉԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՆՏԵՍՈՒՄ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ՄԵՐԺՈՒՄ

Այս պայմաններում, կայսրութեան ժողովուրդներն իրենք էլ սկսեցին երկրի քայքայման պատճառների ու դրա առաջքն առնելու մասին իրենց առաջարկները մշակել: Թուրք բարեկարգիչների մի մասը, առաւել ազգայնական թեւը, առաջարկեց վերացնել ազգային բազմազանութիւնը եւ ձեռնարկեց համապատասխան որոշ փոփոխութիւններ: Միւս մասը, աւելի արմատականները, առաջարկեցին մտածել երկրի կառավարման դեմոկրատականացման, ապակեդրոնացման մասին՝ ինչպէս ազգային-կրօնական, այնպէս էլ քաղաքական ու տնտեսական առումով: Ոչ-թուրք բարենորոգիչները (հայերը, յոյները, արաբները, ալպանացիները, հարաւսլաւները, պուլկարները) գտան որ կայսրութեան ընդհանուր դեմոկրատացումը պէտք է այնպէս իրականացնել, որ իրենց էլ (ոչ-թուրքերին) բաժին հասնի, որ մեծանան իրենց ազգային ու կրօնական իրաւունքները:

Կառավարութիւնը անուշադրութեան մատնեց նման հարցադրումները: Իր ազգային քաղաքականութիւնը վերանայելու, սրբագրելու փոխարէն որոշեց ստեղծել արհեստական մի նոր ազգ՝ Օսմանական Ազգը: Մի գիշերուայ ընթացքում չգոյ համարուեցին արաբները, հայերը եւ այլ հպատակուած ժողովուրդներ: Ժողովուրդների իրաւ միասնութիւն եւ միակամութիւն ստեղծելու փոխարէն, թուրքերը փորձեցին արհեստական միատարրութիւն հաստատել: Այն չգործեց, բայց թուրքերին աւելի մօտեցրեց ցեղասպանութեան գաղափարին: Երբ կայսրութիւնը այնքան փոքրացաւ, որ բաղկացաւ «Անատոլիայից» ու Արաբական Աշխարհից, երբ թուրքերը գիտակցեցին որ իրենք այլեւս անկարող պիտի լինեն արաբ ժողովուրդները հպատակ պահել, եւ երբ կանխազգացին որ հայաշատ օսմանական տարածքներում, արմատական քաղաքական ու ընկերային վերանորոգումները, ուշ թէ շուտ, իրականութիւն պիտի դառնան, ապա նրանք որոշեցին հայազուրկ դարձնել Հայկական Լեռնաշխարհն ու բնաջնջել հայ ժողովուրդին: Հակառակ դէպքում, արդի Թուրքիայի տարածքը այսօրուայ մէկ չորրորդից էլ պակաս կը լինէր:

Օսմանեան իշխանութիւնները յամառօրէն չէին ցանկանում քննարկել եւ մանաւանդ ընդունել քաղաքական բարեփոխումների տարբերակներ, հակառակ այն իրողութեան որ այն պահանջում էին թուրք բարենորոգիչների զգալի մասը, հպատակ ժողովուրդների մեծ մասը եւ քաղաքակիրթ աշխարհի գիտնականներն ու քաղաքագէտները: Երբ օսմանեան-թուրքական կառավարութիւնը ստիպուած եղաւ «երեսանց» ընդունել որոշ քաղաքական ու սոցիալական էական բարեփոխութիւնների ծրագիր, նա ճգնաժամային վիճակից դուրս գալուց յետոյ հրաժարուեց դրանից: Դա ի մասնաւորի ընորոշ էր Սուլթան Ապտուլ Համիտ Բ.-ին[1]: 1908 թ. իշխանութիւնը գրաւած «Երիտասարդ

1. Lord Kinross, *The Ottoman Centuries, The Rise and Fall of the Turkish Empire,*

Թուրքեր» կազմակերպութեան «Միութիւն եւ Առաջադիմութիւն» խմբակը հրաժարուեց քաղաքական բարեփոխումների իր նախկին ծրագրից: Պետութեան գրաւումով նա իր առաքելութիւնը սպառուած համարեց: Եթէ Թուրքիայի ղեկավարները ձգտէին գործադրել անցեալի իրենց խոստումների կամ իրենց առաջարկուած քաղաքական բարեփոխումների լոկ մի մասը, ապա, հաւանաբար, նոր Թուրքիան կը սկսէր ընթանալ ժողովրդավարական հունով, չէր դառնար Գերմանիայի դաշնակիցը եւ չէր որդեգրեր զանգուածային բռնագաղթերի ու ջարդերի (ցեղասպանութեան) ծրագիրը:

Այս հարցերը բարձրացրել է Գրիգոր Զօհրապ 1913 թ. Բարիզում հրապարակած իր աշխատասիրութեան ("La Question Armenienne") մէջ՝ Marcel Leart ծածկանունով: Նա գտնում է որ Թուրքերը վախենում են որ բարենորոգումներից հայերն ու եւրոպամէտները աւելի կը շահեն, քան՝ Սուլթանը: Միւս կողմից, մեծ մտածողը գտնում է որ Ֆրանսան, Անգլիան, Գերմանիան իրաւ ցանկանում են բարենորոգումներ Արեւմտահայաստանի մէջ, բայց կարծում են որ այդ կը նպաստի այդ շրջաններում ռուսական ազդեցութեան տարածման ու իւրացման: Զօհրապ շեշտում է որ Թուրքիան պէտք է հասկանայ, որ բարենորոգումները իրեն համար աւելի կենսական են: Այլապէս նա կանգնած է կայսրութիւնը կործանելու վտանգի առաջ[1]:

Այս առթիւ տեղին է յիշել երկար ժամանակ Թուրքիա ճանապարհորդած Հեփուըրթի հետեւեալ արտայայտութիւնը. «Շուտով բացայայտուեց որ այլեւս հնարաւոր չէ ստիպել Թուրքիան, որ ինքն իրեն բարեփոխման ենթարկի, քան համոզել ծուռ կաղնու ճիւղերը, որ ինքն իրեն ուղի: Հարիւրաւոր տարիներով ծուռ աճած ճիւղը ծուռ կը մնայ մինչեւ չկտրատուի ու վառելափայտ չդառնայ: Թուրքիայում բարենորոգումների համար պայմաններ չկան: Մարդկանց մեծամասնութիւնը ոչ միայն բարենորոգումներ չեն ցանկանում, այլ ատում են այն»[2]: Հասկանալի է որ յետամնաց զանգուածն ու կառավարութիւնը ինչպիսի ատելութեամբ պիտի ընդունէին որեւէ բարենորոգման ծրագիր, մանաւանդ՝ հայկականը:

ԺԹ. դարի կէսերից հայ ազատագրական պայքարը շեշտակի վերելք ապրեց: Սուլթանը փորձեց արեան մէջ խեղդել շարժումը: 1895-1896 թթ. ջարդերի նկատմամբ աշխարհի փաստական անտարբերութիւնը խիստ քաջալերեց Սուլթանին ու «ազգային անվտանգութեան»

1977, William Morrow & Co. Inc. N.Y., pp.511-517.

1. Գրիգոր Զօհրապ, Հայկական Պահանջատիրութիւն, Հայկական Հարցը, «Նաւասարդ» ամսագիր, Կլենտէյլ, 2004, ԻԱ. տարի, թիւ 255:

2. Rev. George Hepworth, *Through Armenia on Horseback*, N.Y.., E.P. Dutton & Co., 1898, p. 246.

հարցերում նրա նման մտածողներին: Այդ թուականներին Թուրքերի կողմից կազմակերպուած հայերի ջարդերը տեղի ունեցան այն ժամանակ, երբ եւրոպական երկրները «պահանջում էին, որ հայկական տարածքներում գործադրուեն առաջարկուած բարենորոգումները»: Եւրոպացիների այդ հարցադրումներում օսմանացի ազգայնամոլ եւ կայսերապաշտ ուժերին գրգռում էր երկու հասկացութիւն. «Հայկական տարածք» եւ «բարեփոխումներ»: Նրանք իրենց ուշադրութիւնը կեդրոնացրին այդ երկուսի վերացման վրայ:

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ, ԹԷ ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔ

Թուրքերը, ինչպէս անցեալում, այնպէս էլ ներկայում, չեն ընդունում Հայոց Ցեղասպանութիւնը: Բայց ընդունում են որ իրենք Պատմական Հայաստանի, Կիլիկիայի, Պոլիսի, Զմիւռնիայի, Տրապիզոնի եւ Փոքր Ասիայում գտնուող շատ քաղաքների հայերին բռնի կերպով տեղահան են արել, եւ որ նրանց ճնշող մեծամասնութիւնը այդ տեղահանութեան ընթացքում մահացել են Արաբական Անապատում: Հարիւր հազարաւոր այդպիսի հայեր կորցրել են իրենց տունն ու տեղը, ունեցուածքը, կրթական, կրօնական ու մշակութային հաստատութիւնները, զրկուել են բնականոն մարդկային յարաբերութիւնների հնարաւորութիւնից, բնականոն ընտանիք ունենալու եւ գործ ունենալու հնարաւորութիւնից, կրթութեան ու զարգացման հնարաւորութիւնից: Թուրքերը ընդունելով որ իրենք հեղինակներն են նման արարքների, փաստօրէն հաստատած են լինում որ իրենք կատարել են ցեղասպանական արարքներ: Ցեղասպանութեան Կոնվենցիայում անուղղակի ամրագրուած են հետեւեալ կէտերը.

ա. Ցեղասպանութիւնը ոճիր է միջազգային օրէնքի համաձայն.

բ. Ցեղասպանութիւն է խումբի անդամների սպանութիւնը, խումբի անդամներին լուրջ մարմնական եւ մտային վնաս հասցնելը.

գ. Ցեղասպանութիւն է խմբի համար դիտաւորեալ կերպով կեանքին սպառնացող պայմանների ստեղծումը, նրանց ֆիզիկական ոչնչացման առաջնորդելը.

դ. Ցեղասպանութիւն է խումբի անդամների ծնելիութիւնը խաթարող ձեռնարկումները եւ տուեալ խմբի մանուկներին բռնի կերպով այլ խումբեր տեղափոխելը.

ե. Վերոյիշեալ ցեղասպանական ոճիրները պատժելի են օրէնքով, մանաւանդ երբ գործադրւում են մասամբ կամ ամբողջութեամբ ոչնչացնելու համար որեւէ ցեղային, ազգային, էթնիկական ու կրօնական խումբ:

Թուրք ղեկավարների տարբեր առիթներով արած արտայայտու-

թիւններում նոյնպէս նկատելի են իրենց գործերի համանման բնութագրութիւններ: Ճեմալ Փաշայի հրամանատարութեան տակ Հալէպի շրջանում գործող սպայ Հասան Մարուֆը պատասխանելով շատերի հարցադրումներին, «Ալեմտար» թերթի 6 Ապրիլի, 1919 թուում գրում է որ սխալ է հայերի նկատմամբ գործադրուող արարքները բնութագրել «տեղահանութիւն» կամ «ջարդ եզրեր»ով: Դրանք հայերի բնաջնջման նպատակադրուած արարքներ էին: Երբ թուրք ազգայնամոլ մամուլը սկսեց նրան սպառնալ, նա գրեց. «Այս երկիրը չունի այնքան քաջութիւն, որ դիմագրաւի ճշմարտութիւնը»[1]:

Պեհաէտտին Շաքիրի, ջարդը գործադրող Ցատուկ Կազմակերպութեան ղեկավարի փեսայի՝ Ահմետ Ռեմիզի տանը գտնուած փաստաթղթերի մէջ էին 1915, Փետրուարի 18-ի եւ Մարտի 25-ի նամակների պատճէնները: Դրանք ուղարկուել էին Ճեմալ Փաշային՝ Իթթիհատական Կուսակցութեան ղեկավարութեան կողմից: Այնտեղ կարդում ենք հետեւեալը. «Անցեալի դառնութիւններն ու ստորացումները մոռանալ չկարողանալով եւ լցուած վրիժառութեան ցանկութեամբ, Ճեմիաթը՝ վստահ իր ապագային, ընդունել է մի որոշում, որով Թուրքիայում ապրող հայերը, մինչեւ վերջին մարդը պիտի ոչնչացուեն: Կառավարութեանը տրուած են մեծ իրաւունքներ: Զանգուածային սպանութեան կազմակերպման մասին կառավարութիւնը մանրամասն բացատրութիւններ ու հրահանգներ պիտի տայ կառավարիչներին ու բանակի հրամանատարներին: "Իթթիհատ Վէ Թերաքքի" կուսակցութեան բոլոր պատուիրակները իրենց համապատասխան շրջաններում պիտի յանձնառու լինեն գործին: Ոչ մի հայի պիտի տրուի օգնութիւն կամ պաշտպանութիւն»[2]:

Թալէաթ Փաշան հասկանում էր որ իրագործուող հայերի բռնագաղթը, տեղահանութիւնը, կոտորածը, ջարդը ոճրագործութիւն է՝ արժանի մահապատիժի: Ականաւոր թուրք գրագրուհի Հալիտէ Էտիպն իր «Յուշեր»ի 387-րդ էջում աշխարհին յայտնում է Թալէաթ Փաշայի հետեւեալ խոստովանութիւնը. «Ես համոզուած եմ որ այնքանով, որքանով մի ազգ կատարում է այն՝ ինչ որ լաւագոյնն է իր շահերի համար եւ յաջողւում է, աշխարհը պիտի հիանայ եւ այն բարոյական նկատի: Ես պատրաստ եմ մեռնելու իմ արածի համար, եւ ես գիտեմ որ մի օր դրա համար ես պիտի մեռնեմ»[3]:

Հայերի Ցեղասպանութիւնը ունեցաւ իր ներածական փուլը: Թուրք կառավարութիւնը խիստ զգուշանում էր հայասպանութեան

1. V. Dadrian, *Documentation of the Armenian Genocide in Turkish Sources*, reprinted from "Genocide A Critical Bibliographic Review", Vol. 2, London, Mansell Pub., N.Y., 1991, p.122.
2. *The Memoires of Naim Bey, Turkish Documents Rending to the Deportations and Massacres of Armenians*, compiled by Aram Andonian, London, 1920, p. 64.
3. V. Dadrian, *Documentation of the Armenian Genocide in Turkish Sources*, p.113.

դիմելու իր մտադրութիւնից: Նա վախենում էր որ Արեւմուտքը կարող է խիստ միջնորդել, կամ ներողամիտ կեցուածքի համար մեծ արտօնութիւններ կամ պահանջներ ներկայացնել: 1895-1897 թուականների ջարդերը Սուլթանին համոզեցին որ Արեւմուտքը ակնկալուածի չափ «խիստ» չէ, քանի որ Արեւմտեան երկիրները մրցակցում էին իրար հետ ու չէզոքացնում իրար: 1909 թ. ջարդերը վերջնականապէս հաստատեցին թուրքերի այն ենթադրութիւնը որ Արեւմուտքը ի վիճակի չէ վճռական քայլերի դիմելու նորաստեղծ թրքական վարչակարգի նկատմամբ: Այս իրողութիւնից ոգեւորուած, Իթթիհատականները 1910 թ. սկսեցին մտածել հայերի արմատական ջարդերի մասին: Այդ ծրագրի իրագործման պատեհ առիթը դարձաւ պատերազմը: Նրանք իրենց ծրագրի յաջողութիւնը տեսնում էին գերազանց նախապատրաստութեան, գաղտնապահութեան ու գործողութիւնների արագութեան մէջ: Նրանց ակնկալութիւնները միայն մասամբ իրականացան, քանի որ երկիրը բոլոր ասպարէզներում գտնւում էր կազմակերպուածութեան ցած մակարդակի, եւ քանի որ հակա-իթթիհատականներն ու Թուրքիայում աշխատող օտարերկրացիները շուտով Հայերի Ցեղասպանութեան իրողութիւնը դարձրին միջազգային լուր: Թուրքերը ստիպուած եղան բացատրութիւններ տալ իրենց ոճրագործութեան շարժառիթների ու պատճառների մասին:

Թուրք ջարդարարների ներկայացրած բացատրութիւնների մի մասը վիճակային էր եւ իրենց հայասպանական արարքները փորձում էին բացատրել պատերազմի նախօրէին տեղի ունեցած դէպքերով: Բացատրութիւնների միւս մասը ընդգրկում էր Թուրքիայի բոլոր ժամանակների հակահայ քաղաքականութիւնը, եւ փաստօրէն աղերս ունէր թուրքերի հակահայ քաղաքականութեան ռազմավարութեան բացայայտման հետ: Այդ իսկ պատճառով նրանք արմատապէս հակասում էին իրար:

Վիճակային բացատրութիւնների թւում է այն դրոյթը, որ հայերը Պալքանեան Պատերազմի աւարտին պնդել են բարենորոգումների հարցը, ու Ռուսաստանի ճնշումին տակ այն յաջողացրել: Այս դէպքում նրանց մէջ խօսում էր վրէժի զգացումը: Ցիշենք որ բարենորոգումների հարցը որոշուեց Պերլինի Վեհաժողովում (1878), որի ներկայացուած զեկուցագիրը թելադրուել ու հաստատուել էր անձամբ Սուլթանի կողմից: Սուլթանը գոհ էր որ 16-րդ յօդուածը փոխարինուել էր 61-ով: Այդ օրուանից զանազան առիթներով քննարկւում էր այդ հարցը եւ Թուրքիային յաջողւում էր յետաձգել վերջնական որոշումը: Այդ ընթացքում Թուրքիան հասկացաւ որ բարենորոգումները դուռ են բացում տուեալ ժողովրդի ինքնավարութեան ու անկախութեան: Այդ պատճառով էլ աւելի ու աւելի հակադրուեց այդ գաղափարին, եւ այն համարեց ցեղասպանութեան շարժառիթ: Նրանց գրգռում էր նաեւ այն, որ 1913 թ. բարեկարգումների որոշումը ընդունուեց ռուսական ճնշումին տակ:

Պատերազմի նախօրէին Թուրքական կառավարութիւնը տարբեր

պատուիրակութիւններ ուղարկեց հարեւան երկիրներ, որպէսզի այնտեղի բնակիչներից թրքական գործակալներ հաւաքագրի ու այնտեղ կազմակերպի Դաշնակիցների դէմ ուղղուած շարժումներ: Այդ նոյն նպատակներով թուրքերը դիմեցին Թուրքիայի հայ կազմակերպութիւններին, որպէսզի ամէն ջանք թափեն հայ գաղութներին ներգրաւել հակառուսական, հակաֆրանսական, հակաանգլիական շարժումներում՝ նրանց դարձնելով թրքական հինգերորդ շարասիւնը: Համաձայնութեան դէպքում թուրքերը խոստանում էին ինքնավարութիւն շնորհել հայկական գաւառներին: Իրականում, պիտի վտանգուէր սփիւռքահայ գաղութների գոյութիւնը աշխարհով մէկ: Հայերը պատասխանեցին որ որոշուած է որ ամէն մի հայ հաւատարիմ պիտի մնայ իր հպատակ երկրի կամ ապրած երկրի դրօշին ու սահմանադրութեանը: Թուրքերը այն նկատեցին անհնազանդութիւն եւ դաւաճանական արարք, որ հայասպանութեան շարժառիթ համարուեց:

Թուրքերը հայերին մեղադրում են նաեւ իրենց մօտ եղած զինամբարքը կառավարութեան յանձնելուց հրաժարուելու մէջ՝ երբ վերջինս այն պահանջել է: Նախ նշենք, ինչպէս վկայում են գերմանացի պաշտօնատարները, թուրքերը, ամերիկացիները եւ զուիցերիացիները, հայերի մօտ շատ քիչ են եղել զինուորական գործողութիւնների համար պիտանի զէնքեր: Նրանք զինուած են եղել հրացաններով եւ ինքնաշէն զէնքի տեսակներով: Երկրորդ. հայերը սկզբում յանձնել են իրենց զէնքերը եւ տղամարդիկ անմիջապէս դրականօրէն են արձագանգել զինակոչման կառավարութեան պահանջին: Բայց շուտով տեղեկացել են որ զէնքի տակ գըտնուող բոլոր հայերին գնդակահարել են ու անզէն ժողովրդին քշել բնակավայրերից դէպի անապատները, դէպի մահ: Այդպիսի պայմաններում հայերը դիմել են ինքնապաշտպանութեան: Այսպէս է եղել Մուսա Լեռում, Ուրֆայում, Վանում, Շապին Գարահիսարում եւ այլ վայրերում:

Երբ 1915 թ. Ապրիլի կէսերին ծայր առաւ Վանի ինքնապաշտպանութիւնը, անգլիացիներն ասացին որ Թուրքիան այդ օգտագործելու է հիմնաւորելու համար հայերի նկատմամբ իր վարած հայասպան քաղաքականութիւնը: Վանի դէպքերը թուրքերի կողմից մեկնաբանուեցին մի քանի առումներով: Նախ՝ այդ ընդունուեց որպէս ապացոյց թուրքական այն վարկածի, որ հայերը ունեն մեծ քանակութեամբ կուտակուած ռազմամթերք՝ հակապետական ապստամբութիւն բարձրացընելու նպատակով: Ոչ միայն հայերը, այլ նաեւ օտար հեղինակներ ապացուցեցին որ թուրքերը հրահրեցին Վանի ինքնապաշտպանութիւնը շրջապատի թուրք եւ հայ բնակիչներին գրգռելով ու քաղաքում դէպքեր հրահրելով: Նրանք ապացուցեցին նաեւ, որ հայերը ոչ մտադրութիւն եւ ոչ էլ հնարաւորութիւն են ունեցել ապստամբելու: Դէպքերի ականատես, Երիցական Եկեղեցու առաքելութեան ներկայացուցիչ Մէյրի Շոուֆլերը տեղեկացնում է որ ռուսական նահանջից անմիջապէս ետք, 1914 թ. Նոյեմբերին, շրջակայ գիւղերի իսլամ բնակչութիւնը յարձակուել են Վանի շրջանի հայերի վրայ ու անխնայ թալանել նրանց[1]: Իսկ Դոկտ. Հերբերթ Ատամզ Կիպընը աւելացնում է որ 15 Ապրիլի, 1915 թ., 12,000 զինուոր հաշուող բանակ, հազարաւոր զինեալ թալանիչների ուղեկցութեամբ, յարձակուել են Վանի հայկական թաղամասերի վրայ: 2500 հայ մարտիկներ ինքնաշէն զէնքերով ու թընդանօթներով դիմադրում են: Մի մղոն երկարութեամբ ստորանց փորելով պայթեցնում են թուրքական զինանոցը[2]: Պիթլիսի եւ Վանի ջարդերին ականատես Կրէյս Խափը հաստատում է որ բոլորը գիտէին որ Վանի կառավարիչ Ճէվտէթ Փաշան ծրագրել էր 19 Ապրիլի, 1915 թ. Վանում անցկացնել հայ հպատակների կոտորած: Այդ օրը թուրք զինուորներ ու քրտեր թնդանօթներով յարձակուեցին գաւառի փոքր քաղաքների եւ գիւղերի վրայ, գրեթէ դիմադրութեան չհանդիպելով: Տղամարդիկը բանակում էին ու մնացածները քիչ զէնք ունէին[3]: Պատմաբան Քրիսթոֆըր Ուոքըրը գրում է որ պատերազմի օրերին Օսմանեան Պատերազմի Նախարարութեան պատմական բաժանմունքի ղեկավար Ազիզ Սամիլը, 1935 թ. Թրքական "Karun" լրագրում ստորագրած յօդուածում գրել է, որ դեռ Սարիղամիշի ճակատամարտից առաջ նախապատրաստութիւններ էին կատարւում հակահայկական գործունէութիւն ծաւալելու համար: Արեւելքի հայկական բնակավայրերի վրայ յարձակուելու հրամանները արդէն տրուած են եղել 29 Հոկտեմբերի, 1914 թ. եւ Նոյեմբերի 5-ին[4]: Այսպիսով, անվիճելի է որ Վանի ինքնապաշտպանութիւնը հրահրուած էր թուրքերի կողմից:

Փաստերն հաստատում են որ հայ հաւաքականութիւնը զինուած չի եղել: Լոկ որոշ անհատներ են զէնք ունեցել: Այսպէս. «Սուրիացիներն ու հայերը երբեք անհաւատարիմ չեն եղել Թուրքիային իր նեղ օրերին, ինչպէս թուրքերն ու գերմանացիները հաստատում են: Արաբ եւ հայ զինուորական ծառայութեան կանչուածները պարտաճանաչօրէն պայքարել են մի պատերազմում, որը իրենցը չէր: Նրանց ղեկավարները շատ զգուշաւոր, շրջահայեաց են, ժողովուրդը շատ խաղաղասէր, նրանց վտանգուելիքը շատ մեծ է, նրանց ուժերը շատ տարտղնուած են որպէսզի մի պահ իրենց թոյլ տան ապստամբութեան մասին մտածելու: Բայց նրանց հաւատարիմ ու ազնիւ վարքը նրանց չի պահպանել թրքական իշխողների վայրագութիւնից»[5]:

1. Mary Schauffler, *The War Journal of a Missionary in Persia*, N.Y., 1914, pp. 6-7.
2. Dr. Herbert Adams Gibbons, *Armenia in the World War*, N.Y., 1926, p. 4.
3. Grace Khapp, *The Tragedy of Bitlis*, N.Y., Fleming H. Revel Co., 1918, p. 15.
4. C.J. Walker, *Armenia: The Survival of a Nation*, London, The Garden City Press, 1982, pp. 200-201.
5. Arnold Toynbee, *The Murderous Tyranny of the Turks*, London, Hodder & Stoughton, 1917, New York, pp. 27-28.

Այսպիսի կեղծ փաստարկներով Թուրքերը չկարողացան դիւանագիտական աշխարհը, նոյնիսկ գերմանացիներին համոզել որ իրենց հակահայ քաղաքականութիւնն ու հայասպանութիւնը հիմնաւորուած պատճառներ ունի: Թուրք ղեկավարութիւնը փորձեց դիմել նոր փաստարկների, որոնք, իրենց կարծիքով, աւելի հիմնաւոր էին: Դրանք բըխում էին այն նախադրեալից, որ պատերազմի միջոցով Թուրքերի բըռնագրաւած տարածքները դառնում են առյաւէտ Թրքական, որ այդ տարածքների վրայ դրանց բնիկները այլեւս ապրելու իրաւունք չունեն, որ հայերը շատ առաջադէմ ու աշխատասէր լինելով, Թուրքերից աւելի են հարստանում ու բարգաւաճում:

Պարզ է, որ այդ բացատրութիւնը կարող էր տալ հայասպանութեան գաղափարը յղացող, ծրագիրը կազմող ու գործադրող գլխաւոր պատասխանատու Թալէաթ Փաշան: 1915 թ. Օգոստոսին, Կ. Պոլսում Ամերիկայի դեսպան Հենրի Մորկընթաուի հետ իր ունեցած հարցազրոյցում, Թալէաթ բացայայտելով Թուրքիայի կառավարութեան հակահայ քաղաքականութեան պատճառները, մատնացոյց է անում հետեւեալ երեք գործօնները. «Հայերին ներկայացրած մեր առարկութիւնները մենք խարսխում ենք երեք որոշակի հիմքերի վրայ. Առաջին՝ նրանք հարստացել են ի հաշիւ Թուրքերի: Երկրորդ՝ նրանք վճռած են տիրակալել (գոռոզանալ, domineer) մեր վրայ եւ ստեղծել անկախ պետութիւն: Նրանք Կովկասում օգնել են ռուսներին եւ այնտեղ մեր ունեցած անյաջողութիւնը մեծամասամբ բացատրելի է նրանց գործունէութիւններով: Հետեւաբար, մենք եկել ենք անփոփոխելի այն եզրակացութեան, որ մենք նրանց պիտի անոյժ դարձնենք մինչեւ այս պատերազմի աւարտը»[1]: Դրանից վեց ամիսներ առաջ, 16 Մարտի, 1915-ին, Խարբերդի վալին Գերմանիայի փոխ հիւպատոսին ասել է, որ Թուրքիայի հայերը պէտք է ոչնչացուեն, քանի որ նրանք աճել են հարստութեամբ ու թուով, եւ այդպիսով սպառնալիք են դարձել իշխող Թուրք ազգին: Նա պնդել է, որ հայերի ոչնչացումը միակ բուժումն է[2]:

Ուշագրաւ են Մորկընթաուի դիտարկումները Թալէաթի հարցազրոյցներին:

1. Թալէաթը փաստօրէն ընդունում է որ հայերը աւելի աշխատասէր են, քան ծոյլ ու բթամիտ Թուրքերը:
2. Ջարդերը դարձել են պիղնեան ու մրցակցութիւնը կործանելու միջոց:
3. Հայերը դիմել են եւրոպական պետութիւններին, իրենց՝ Թուրքական կողոպուտից, սպանութիւնից ու անարդարութիւնից պաշտպանելու համար:

1. Henry Morgenthau, *The Tragedy of Armenia*, Beirut, 1965, pp. 337-338.
2. Viscount Bryce, *The Treatment of Armenians in the Ottoman Empire*, 2nd Edition, Beirut, 1972, p. 218

4. Հայկական Հարցը բոլոր այլ ազգային հարցերի նման արդիւնք է դարերի ընթացքում թոյլ տրուած անարդարութեան ու սխալների:
5. Մի լուծում կարելի է առաջարկել՝ ստեղծել օրինապահ պետութիւն[1]:

Լեռնականը գալիս է քաղաք եւ զօրով տեղաւորւում է մէկի տանը: Շուտով նա սկսում է տիրութիւն անել այնտեղ ու տանտիրոջ օգտագործում որպէս ծառայ եւ բռնաբարում նրա կնոջն ու աղջկան: Որոշ ժամանակ անց, նա ոչ միայն որոշում է տանտիրոջ տնից վտարել, այլեւ նրա ընտանիքը ոչնչացնել, պնդելով որ նա շատ է հարստացել իր հաշուին եւ ցանկանում է իր տանը տիրութիւն անել: Նոյն տրամաբանութեամբ ու բարոյականութեամբ են գործում Թուրքերը ողջ քաղաքակիրթ աշխարհի ներկայութեամբ եւ օգնութեամբ:

Թուրքական պաշտօնական տեսակէտը հարուստ է պատմական փաստերի աղաւաղումներով:

1. Թուրք ցեղերը Միջին Ասիայից Հայկական Լեռնաշխարհ եկան 11-րդ դարում որպէս նոր մահմեդականացած քոչուոր ցեղեր: Նրանք զաւթիչներ են եւ ոչ թէ տանուտէր:
2. Բոլոր թուրանական զաւթիչների (սելճուքների, թաթար-մոնկոլների, գարակոյունլուների, ագգոյունլուների, թուրքմէնների, Թուրքերի) դէմ հայերը ազատագրական պայքար մղեցին հենց առաջին օրից, հաստատելով պետութիւն, փոքր ինքնուրոյն իշխանութիւններ ու ինքնավարութիւններ: Մոնկոլները Կիլիկեան Հայաստանի դաշնակիցներն էին: Առաջին օրից հայերը ցոյց տուեցին որ երկրի տէրը իրենք են եւ մինչեւ վերջ պիտի պայքարեն հայ պետականութեան վերականգնման համար: Հետեւաբար, Սուլթանի ու Երիտթուրքերի համար հայ ազատագրական պայքարն ու սեփական պետականութիւն ունենալու հայերի ձգտումը նորութիւն չէր: Այդ ձգտումն ունէին բոլոր հպատակ ազգերը (ալպանացիները, արաբները, հունգարացիները, յոյները, պուլկարները, սլաւոնները, պարսիկները եւ այլ ժողովուրդներ): Այսօր այդ ձգտումն ունեն Թուրքիայում ապրող աւելի քան քսան միլիոն քիւրտերը եւ բազմահազար ասորիները:
3. Թալէաթն ու նրա զինակիցները մոռանում են, որ մի քանի տասնեակ տարի առաջ ռուսները փրկեցին Օսմանեան Կայսրութիւնը Ֆրանսական եւ անգլիական գրաւումից: Այդ ժամանակ ռուսը Թուրքի բարեկամն ու ազատարարն էր: Թուրքական տրամաբանութեամբ Անգլիան ու Ֆրանսան պէտք է կոտորէին ու բռնագաղթի ենթարկէին ռուսներին՝ իրենց հակառակորդին օգնելու համար: Աւելին: Արժանթինի առաջին օսմանեան դեսպան Էմիր Էմին Արսլանը գրում է, որ հայերը Օսմանեան Կայսրութիւնից

1. Henry Morgenthau, *Ambassador...*, pp. 284-285.

փախչում էին հարեւան երկիրները, այդ թւում Ռուսաստան, իրենց կեանքը փրկելու համար: Եթէ թուրքերը հայերի կեանքին չսպառնային, նրանք ամէն ինչ թողած երկրից չէին հեռանայ[1]:

4. Թալէաթը նաեւ քաջ գիտէր որ ռուսները սկզբունքօրէն դէմ էին անկախ Հայաստանի ստեղծման ու հայ ազատագրական պայքարին: Նա նաեւ սովորել էր Պիզմարքից, որ ազատագրական պայքարում Ռուսաստանից օգնութիւն ակնկալող երկիրները պիտի չցանկանային Սուլթանի տիրապետութեան փոխարէն Ցարական տիրապետութիւն ընդունել՝ յաղթանակից յետոյ:

5. Այստեղ աւելի շատ խօսում էր Թալէաթի վիրաւորուած ինքնասիրութիւնը: Նա ոչ մի կերպ չէր կարողանում հաշտուել Կովկասի մէջ իր պարտութեան հետ: Իր քաղաքական, ռազմական եւ կազմակերպչական սխալները խոստովանելու փոխարէն, քաւութեան նոխազ էր որոնում: Հայերը ամենից նպատակայարմար նոխազն էին:

6. Եւ վերջապէս, հայերի հարստութիւնը մի կողմից գալիս էր այն իրողութիւնից, որ նրանք այդ տարածքներում բնակուել են դարերով եւ դարերի ընթացքում հարստութիւն դիզել: Միւս կողմից, հայերը հարստացել էին իրենց աշխատասիրութեամբ, գործարարական շնորհքով, ստեղծագործական մտքով ու դէպի կրթութիւնն ու առաջընթացը ունեցած մեծ հակումով: Հայկական այդ յատկութիւնները իրենց ցոյց են տուել ոչ միայն Արեւելքի երկրներում (Հնդկաստանում, Պարսկաստանում, Իրաքում, Եգիպտոսում, Լիբանանում, Սուրիայում) այլեւ Եւրոպայում, Ամերիկայում, Աւստրալիայում: Թուրք կառավարութիւնները ամէն կերպ խանգարում էին հայերին, բայց, հակառակ այդ արգելքներին, հայերը արագ կերպով զարգանում, բարգաւաճում ու հարստանում էին: Թուրք կառավարութիւնը ամէն կերպ աջակցում էր թուրքերին, բայց նրանք շատ դանդաղ էին առաջդիմում: Թուրքիան հայկական այդ գործօնը ի նպաստ իրեն օգտագործելու փոխարէն, տաղանդաշատ հայ ազգին թշնամացրեց, ճիշդ այնպէս՝ ինչպէս վարուեց յոյների, պուլկարների, ռումինացիների, սլաւոնների, արաբների, հրեաների հետ:

Աւելորդ չենք համարում կրկնելու որ Քրիստոսից երեք հազար տարիներ առաջ իրենց բնօրրանից Միջին Ասիայի տափաստաններ գաղթած թուրանական ցեղերը Ք.Ե. 11-րդ դարում դէպի արեւմուտք շարժուելով գրաւեցին Բիւզանդական Կայսրութեան ենթակայ հողերը,

1. Emir Emin Arslan, primer ambajador de Turquia en la Republica Argentina, la revista La Nota, de Buenos Aires, En Agosto de 1915, Pascual C. Ohanian, *Turkia, Estado Genicida (1915-1923)*, Tomo 1, Documentos Buenos Aires, 1986, p. 261.

Կովկասը, Սեւ Ծովի սլաւոնական հողերը, Պալքանները, Միջին եւ Մերձաւոր Արեւելքի երկիրները, Հիւսիսային Ափրիկէի Միջերկրական ափերը եւ 15-րդ դարում հաստատեցին լայնածաւալ Օսմանեան Կայսրութիւնը: Քաղաքակրթութեան ստորին աստիճանում գտնուող, գիր ու գրականութիւն չունեցող քոչուոր այդ ցեղերը տիրացան մինչեւ այդ համաշխարհային մշակոյթի ջահակիրները հանդիսացող ժողովուրդներին՝ յոյներին, բիւզանդացիներին, արաբներին, եգիպտացիներին, հայերին, ասորիներին եւ այդ տարածքներում հաստատուած բոլոր այն ժողովուրդներին, որոնք եղել են սումերական, հիթիթական եւ հուրրիական քաղաքակրթութեան ժառանգորդները: Ողջ օսմանեան պատմութեան ընթացքում շարունակել են եւ իրեն խիստ զգալ է տուել զաւթիչ թուրքերի եւ բնիկ ժողովուրդների քաղաքակրթութիւնների այդ տարբերութիւնն ու հակադրութիւնը: Թուրքը չի կարողացել ստեղծել իր կողմից բռնագրաւուած այդ աշխարհի քաղաքակրթութեան աստիճանին վայել կամ դրա շարունակութիւնը նկատուելու արժանի քաղաքակրթութիւն: «Արդի Թուրքիան» հիմնադրոյթային գրքի հեղինակ Իլիոտ Գրիննել Միրզը (Eliot Grinnel Mears) թուրքական մշակոյթը բնութագրում է հետեւեալ կերպ.

«Օսմանեան Կայսրութեան կործանման երկրորդ պատճառը եղել է որեւէ զգալի ներդրման բացակայութիւնը նուաճող թուրքերի յետնորդների կողմից, որոնք իշխել են սուրով: Քիչ ուշադրութիւն է դարձուել ճանապարհաշինութեան, դպրոցաշինութեան, գիւղական ու քաղաքային կեանքի զարգացման վրայ: Որտեղ օսմանեան կառավարութիւնը հնարաւորութիւն է ունեցել իր իշխանութիւնը գործադրել, այնտեղ առաջացել է քայքայում, նեխուածութիւն, աւերուածութիւն: Քոչուոր թուրքերի հիմնական նպաստը Արեւմտեան քաղաքակրթութեան եղել է մի կրօն, որ աւելի արաբական է, քան՝ թրքական, եւ օրինակելի զինուորական քաջութիւն:

«Սովորաբար թուրքերը եղել են ընդօրինակողներ: Նրանց լեզուն, գրականութիւնը, արուեստը եւ զգեստաւորումը փոխառնուած է մեծամասամբ Արեւելքից, իսկ այժմ՝ աւելի Արեւմուտքից: Նրանք ձախողուել են համաշխարհային քաղաքակրթութեան արձագանգելու գործում: Հակառակ այն փաստին, որ Կ. Պոլսի կործանումը նկատւում է Միջին Դարերի աւարտը, Միջին Դարերի ոգին մինչեւ օրս մնացել է Թուրքիայում»[1]:

1. Eliot Grinnell Mears, *Modern Turkey*, New York, The Macmillan Company, 1924, pp. 8-9. Դոկտ. Միրզը եղել է Սթանֆըրտ Համալսարանի տնտեսագիտութեան դասախօս, Աթէնքում եւ Կ. Պոլսում ամերիկեան տնտեսական յանձնակատար, Անդրկովկասում եւ Հայաստանում Ամերիկեան Զինուորական Առաքելութեան անդամ՝ տնտեսական հարցերի գծով:

ԳԼՈՒԽ Դ.

ՆԱԽԱԵՂԵՌՆԵԱՆ ՔԱՌՈՐԴ ԴԱՐԸ

Վաղուց ապացուցուած է որ ինչպէս Սուլթանական, այնպէս էլ Իթթիհատական Թուրքիայի գլխաւոր խնդիրը եղել է պահպանել Օսմանեան Կայսրութեան տարածքային ամբողջականութիւնը, տարբեր ձեւերով ճզմել բոլոր տեսակի (տնտեսական, քաղաքական, ընկերային, կրօնական, ազգային) ազատագրական շարժումները եւ հակազդել եւրոպական դիւանագիտական ոտնձգութիւններին՝ նրանց հետ տարբեր ընոյթի խաղերի մէջ մտնելով: Երկուսն էլ հաւասարապէս վախեցել են ինչպէս կայսրութեան տարածքում խմորուող ազգային շարժումներից, այնպէս էլ Թուրք ժողովրդի տարբեր մակարդակի արմատականութիւն ունեցող ընդդիմութիւնից: Նրանք յատկապէս սարսափել են վերջին երկուսի համագործակցութեան ամրապնդումից: Այս պատճառով էլ, նրանք ամէն կերպ ձգտել են վիժեցնել ազգային տարբեր ջոկատների եւ ընդդիմութեան սաղմնաւորուող համագործակցութիւնը եւ լարել յարաբերութիւնները ազգային ջոկատների՝ հայերի, պուլկարների, յոյների, արաբների, քրտերի, ալպաններ, չերքէզների ու Թուրք բարենորոգիչների միջեւ:

Այս պայմաններում տեղի ունեցան ինչպէս Թուրք, այնպէս էլ հայ, յոյն, պուլկար, ալպան, արաբ, Օսմանեան Կայսրութեան այլ ժողովուրդների ու համաօսմանեան (Երիտթուրքական) «հակասուլթանական» կուսակցութիւնների կազմաւորումն ու գործունէութեան ծաւալումը: Նրանք ունէին առարկայական ընդհանուր գծեր՝ իւրաքանչիւրը ազգային խորք ունէր, ձգտում էր բարելաւել կայսրութեան սոցիալ-տնտեսական ու քաղաքական կառոյցը, եւ այդ հիման վրայ կիրառել տարբեր խորութեամբ հակասուլթանական քաղաքականութիւն: Նրանք ունէին նաեւ արմատական տարբերութիւններ, որոնք միշտ առկայ էին ռազմավարական ծրագրերում, եւ մերթ նշւում էին տակտիկական ծրագրերում: Ընդդիմադիր Թուրք կուսակցութիւնները ձգտում էին պահել կայսրութեան տարածքային ամբողջականութիւնը՝ որոշակի բարեփոխումների ճանապարհով: Վերափոխութեան ծրագրե-

բը տարբեր բնոյթի էին՝ սահմանադրական կեդրոնացուած միապետութիւն, սահմանադրական ապակեդրոնացուած միապետութիւն, պուրժուական հանրապետութիւն, դաշնակցային հանրապետութիւն: Միւս ժողովուրդների ազգային կուսակցութիւնները պահանջում էին կայսրութեան ընդհանուր ժողովրդավարական հիմքի վրայ ապահովել արմատական բարեփոխումներ (ազատութիւն, դաշնակցային երկրի կազմում անկախութիւն կամ ինքնավարութիւն, ազգային ճանաչում որոշակի իրաւունքներով եւայլն): Բոլոր ընդդիմադիրները յոյս ունէին իրենց նպատակին հասնել համախմբման ճանապարհով ու եւրոպական պետութիւնների օգնութեամբ: Այսպիսով, կայսրութեան ներսում խմորուող քաղաքական-գաղափարական շարժումները ձեռք էին բերում միջազգային նշանակութիւն:

ԺԹ. դարի կէսերից հայ ժողովրդի ազատագրական պայքարի աստիճանական ուժեղացումը, Սան Ստեֆանոյի եւ Պերլինի Վեհաժողովի որոշումները, կայսրութեան ողջ տարածքում խորացող հակասուլթանական տրամադրութիւնները, եւ այդ բոլորի հիման վրայ ազգային յեղափոխական կուսակցութիւնների ստեղծմամբ՝ հայկական տարերային ինքնապաշտպանողական շարժումների կազմակերպումը Բարձր Դրանը մղում էին հակասական քայլերի: Մի կողմից նա հրապարակում է բարեփոխութիւնների ծրագիր, որ չի գործադրում, միւս կողմից՝ հայոց դէմ ջարդեր է կազմակերպում, եւ յետոյ՝ բանակցութիւնների սեղանին հրաւիրում հայ կուսակցութիւնների ղեկավարներին: Վերջինս մի ծածկոյթ էր Սուլթանի հակահայկական քաղաքականութիւնը ծածկելու, եւրոպացիներին ապակողմնորոշելու, հայ յեղափոխական շարժումը սառեցնելու ու ժամանակ շահելու համար: Հայ կուսակցութիւնները հասկանալով գործի էութիւնը, տարբեր տակտիկական մօտեցումներ էին որդեգրում:

Հնչակեանները հրաժարւում են բանակցել Սուլթանի Լոնտոն գործուղուած ներկայացուցիչ Ահմետ Ճելալետինի հետ:

Դաշնակցութիւնը չհաւատալով հանդերձ Սուլթանի անկեղծութեանը, չի մերժում առաջարկը եւ «Դրօշակ»ի խմբագրութեան միջոցով համաձայնւում է հանդիպել Սուլթանի ներկայացուցչի հետ: Այդ բանակցութիւնները տեւում են, որոշ ընդհատումներով, շուրջ երեք տարի (1886-1889), եւ աւարտւում ապարդիւն: Սուլթանը տարբեր ձեւերով փորձում էր որ հայերը հրաժարուեն բարեփոխումների եւ ինքնավարութեան պահանջներից եւ եւրոպական օգնութիւնից: Փոխարէնը նա տալիս էր վերացական խոստումներ: Զէր գործադրում իր խոստումներից նուազագոյնն անգամ՝ քաղաքական բանտարկեալների ազատումը: Նկատելով որ չի կարողանում խաբել հայերին, Սուլթանը դիմում է հայ ազնուականութեան՝ Յարութիւն Փաշայի, Տրդատ Պէյի, Գէորգ Պիլպիլեանի միջնորդութեան: Այդ էլ անարդիւնք է մնում:

Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութիւնը չի ցանկանում մերժել Սուլթանից եկած առաջարկութիւնը եւ համաձայնւում է Բարիզում վարել բանակցութիւնները: Սուլթանին ներկայացնում էր Բարիզի թուրք դեսպան Միւնիր Պէյը: Բանակցութիւններին մասնակցում էին նաեւ Թախսիմ եւ Էնվեր Պէյերը: Թուրքական կողմը չի համաձայնւում իրագործել տարրական նախապայմանները, որոնք պիտի համոզէին աշխարհին որ Սուլթանը որդեգրել է նոր կեցուածք: Այդ նախապայմաններն էին՝ շնորհել ընդհանուր ներում, ապահովել անարգել վերադարձը երկրից փախած բոլոր վտարանդիներին, նրանց տալ նիւթական հատուցում եւ հրաժարուել հակահայկական քաղաքականութիւն վարելուց: Երկու տարի տեւած այդ բանակցութիւնները մանրամասն լուսաբանուեցին Ֆրանսական «Ռեվիւ Տը Բարի» հանդէսի 1898 թ. Յունիսի 15-ի համարում:

Այդ հարցերում Արմէնական-Ռամկավարական տրամադրութիւնները արտայայտել է Լեւոն Զորմիսեանը իր «Համապատկեր»-ի մէջ: Նա գտնում է որ հայերը հաշուի առնելով միջազգային դրութիւնը, Հայկական Շարժման կարողականութիւնը, հայոց ընդհանուր վիճակը, եւ չհրապուրուելով եւրոպացի հայասէրների խոստումներից, պէտք է խուսափեն վճռական խոստումներից եւ փորձեն բանակցութիւններից կորզել հնարաւորը: Փաստօրէն այդպէս էլ եղաւ: Հայերը թոյլ չտուին որ Սուլթանը չարաշահի հայ յեղափոխական շարժման նուաճած հեղինակութիւնը՝ իր դիրքերը երկրի ներսում ու դրսում ամրապնդելու համար:

Սուլթանը միտում էր հայերին սիրաշահել կամ իր կողմը քաշել, եւ այդ հակադրել ինչպէս ձեւաւորուող թրքական ընդդիմութեան, այնպէս էլ միւս ազգային ազատագրական շարժումներին: Դա նրան չյաջողուեց: Իսկ հայերը բանակցութիւնների միջոցով ցանկանում էին Սուլթանից երաշխիքներ ստանալ, որ իրենց վիճակը չի վատթարանայ: Ակնյայտ է որ բանակցութիւնները անհամեմատ աւելի արդիւնաւէտ կը լինէին, եթէ հայերը բանակցութիւններին ներկայանային միացեալ ճակատով, մի երեւոյթ, որ նկատելի դարձաւ Երիտթուրքերի հետ վարուած բանակցութիւնների որոշ փուլերում:

Եթէ Սուլթանը ձգտում էր կազմակերպուած հայկական սոցիալ-քաղաքական ու գաղափարական կարողականութիւնը օգտագործել իր դիրքերն ամրապնդելու համար, ապա Երիտթուրքերը փորձում էին այն օգտագործել իշխանութիւնը նուաճելու իրենց պայքարում:

Թուրք եւ ոչ-թուրք ընդդիմադիր շարժումների ընդհանրութիւնը առաջին հերթին եւ հիմնականում նրանց հակասուլթանական ուղղուածութեան մէջ էր: Այս պատճառով էլ նրանց միջեւ եղած համագործակցութեան դաշտը բնորոշելու համար անհրաժեշտ է պարզել նրանց իւրաքանչիւրի հակասուլթանիզմի էութիւնն ու Օսմանեան իրաւա-

կարգի փոխարէն նրանց հաստատելիք նորի առանձնայատկութիւնները: Այսինքն, անհրաժեշտ է ճշդրտել իւրաքանչիւր կուսակցութեան նպատակադրած յեղափոխութեան բնոյթը: Երիտթուրքերի ծրագրում այն կապուած էր Օսմանիզմի գաղափարի, 1876 թ. սահմանադրութեան վերականգնման, եւ այդ սահմաններում ու ոգով կայսրութիւնը վերակենդանացնելու նպատակի հետ: Նշենք որ Եւրոպայում, Պալքաններում եւ արաբական երկրներում տարածուած էր այն տեսակէտը որ անհնարին է հիւանդ Թուրքիան բուժել սեփական ուժերով:

Ոչ-թուրք ընդդիմադիր շարժման հակասուլթանիզմը առաջին հերթին աղերս ունէր կայսրութիւնում ապրող բոլոր ազգերի ու ժողովուրդների, ամէն մի քաղաքացու հաւասարութեան ու եղբայրութեան հաստատման հետ, բոլորի ազատութիւնը սահմանադրութեամբ երաշխաւորելու հետ, Սուլթանիզմի տապալման ու դրա հիման վրայ ազգային խտրականութեան, իրաւազրկման, ջարդերի վերացման հետ: Ազգերի ազատ ինքնորոշման եւ ազգային ինքնավարութեան հիման վրայ այդ հակասուլթանիզմը կայսրութեան բոլոր ժողովուրդներին պէտք է խոստանար երջանիկ ու ապահով կեանք:

Ժառանգելով այն հին թեզը, որ կայսրութեան մէջ ապրող բոլոր ժողովուրդները մէկ ազգի զաւակներ են, որոնք ունեն մէկ հայրենիք, Երիտթուրքերը պնդում էին որ համաօսմանեան բարեփոխումներից դուրս գոյութիւն չունեն տեղական ու ազգային խնդիրներ: Նրանց կարծիքով, ամէն մի նման հարցադրում հետապնդում է անջատողական նպատակ, որ ընդունելի չէ: Այդ հարցադրման եւ իրենց նպատակների միջեւ չփման եզրեր գտնելու միտումով, հայերը փորձում էին Երիտթուրքերի դրոյթը մեկնաբանել այնպէս, որ ընդհանուր համաօսմանեան բարեփոխումները ենթադրում են ազգային ու տեղական հարցերի լուծումներ:

Հայ կուսակցութիւնները, տարբեր ձեւերով, պնդում էին որ իրենք չեն ձգտում դուրս գալ կայսրութեան կառոյցից, ընդունում են կեդրոնական իշխանութիւնը, որ իրենք պայքարում են ոչ թէ թուրք ժողովուրդի դէմ, այլ՝ Սուլթանիզմի դէմ, որ ճնշում ու կեղեքում է ինչպէս ոչ-թուրք, այնպէս էլ թուրք ժողովուրդներին եւ որ իրենք պայքարում են այնպիսի ծրագրի իրականացման համար, որ բարիք պիտի բերի կայսրութեան բոլոր ժողովուրդներին: Յեղափոխական ու արմատական բարեփոխութիւնների նման ծրագրից Երիտթուրքերը խիստ վախենում էին, կարծելով որ դրանք աւելի մեծ օգուտ կը բերեն ոչ-թուրքերին, քան՝ Օսմանիզմի պաշտպան թուրքերին:

Միասնութեան հրամայականը հող նախապատրաստեց նաեւ հակասուլթանական ընդդիմադիր կազմակերպութիւնների համագումարների անցկացման համար: Հայերը ներկայացան միացեալ ճակատով, թէեւ այլ ժողովուրդների յեղափոխական կազմակերպութիւնները հրաժարուեցին: Թուրք ընդդիմադիրները այդ հանդիպումներում ձգտում էին թաղել Հայկական Հարցը, իսկ հայերը փորձում էին յեղափոխութեան յաղթանակը սկիզբ դարձնել կայսրութեան սահմաններում ապրող ազգերի բնականոն կեանքի ապահովման համար:

1905-1907 թթ. ռուսական պուրժուա-դեմոկրատական յեղափոխութիւնը մի կողմից նպաստեց հակասուլթանական ընդդիմադիր հոսանքների համախմբման, եւ միւս կողմից՝ նրանց արմատականացման: Հայ կուսակցութիւնները աւելի ծաւալեցին իրենց համագործակցութիւնը հակացարական ուժերի հետ: Աւելի ընդգծուածօրէն թեքուեցին դէպի ընկերվարութիւն եւ ռուսական յեղափոխական շարժումը: Դաշնակցութիւնը որդեգրեց ընկերվարական ծրագիր: Երիտթուրքերը որդեգրեցին որոշ յեղափոխական գծեր: Թուրք եւ ոչ-թուրք աշխատաւորները միացեալ պայքարի դուրս եկան Պիթլիսում, Տիարպեքիրում, Էրզրումում, Վանում, Մուշում եւ այլուր: Որոշ վայրերում հակակառավարական միացեալ յեղափոխական ջոկատներ հրապարակեցին իրենց թերթերը (օրինակ՝ «Սապահ-էլ Խէյր»ը Վանում):

24 Յուլիսի, 1908 թ. Սուլթան Համիտը ստիպուած յայտարարեց 1876 թ. սահմանադրութեան վերահաստատումը: Յաջորդ օրը ընդհանուր ներում շնորհուեց բոլոր յեղափոխական գործիչներին: Յաղթանակեց Երիտթուրքական յեղափոխութիւնը: Նրանց համար դա գործի աւարտն էր, իսկ ոչ-թուրք յեղափոխականների համար՝ սկիզբը: Սկսուեց բարդ, հակասական ու դժուարին պատմական մի փուլ, որն իր տրամաբանական ընթացքով աւարտուեց կայսրութեան փլուզումով:

«Յեղափոխութեան» յաղթանակը փողոցներում առաջացրեց եղբայրութեան հաւաքներ ու անսահման բաւարարուածութիւն: Ժողովուրդը հրճւում էր: Երիտթուրքերը իրենց երախտագիտութիւնն էին յայտնում հայերին՝ իրենց ցուցաբերած անգնահատելի օգնութեան համար: Միաժամանակ նրանք ընդգծում էին որ գոյութիւն չունեն տարբեր ազգերի հարցեր, այլ գոյութիւն ունեն միայն համաօսմանական ազգին ու հայրենիքին յուզող խնդիրներ: Նրանք առաջարկում էին յեղափոխութիւնից յետոյ թուլացնել ազգերի առանձնայատկութիւնները եւ ուժեղացնել նրանց միասնութիւնն ու միաձուլումը: Հայերը ընդգծում էին համատեղ պայքարի նշանակութիւնը, եւ այդ պայքարի արդիւնքից բոլոր ընդդիմադիր ուժերի օգտուելու իրաւունքը: Ուշագրաւ է որ 10 Հոկտեմբերի, 1908 թ. Երկրորդ Ինտերնացիոնալի Պիւրոն որոշում է անկախ Հայաստանին նրա արժանի տեղը վերապահել համաշխարհային այդ կազմակերպութեան մէջ:

Հայ կուսակցութիւններն ու կազմակերպութիւնները ողջունելով սահմանադրութեան (թէեւ կիսատ) հաստատումը, հրաժարուեցին (տակտիկական առումով) անկախ հայկական պետականութիւն ստեղծելու ծրագրից, թէեւ արտայայտուեցին դաշնակցային թուրքական

պետութիւն ստեղծելու մասին: Շարունակեցին դիմել եւրոպական պետութիւններին: Միաժամանակ որոշեցին խորացնել պայքարը յեղափոխականացման, դեմոկրատացման եւ իրաւ հաւասարութիւն հաստատելու համար, ու շարունակել երաշխիքներ պահանջել որ Սուլթանը դադարեցնի իր հայատեաց քաղաքականութիւնը:

Թուրքական միջավայրում աւելի սրուեց կեդրոնականացուած սահմանադրական միապետութեան (Իթթիհատականների) եւ ապակեդրոնականացուած սահմանադրական միապետութեան (Սապահէտտինի, Մասնաւոր Նախաձեռնութեան Լիկայի) միջեւ: Բոլոր տեսակի վերապահումներով հանդերձ, Դաշնակցութիւնը աւելի յարում էր Իթթիհատականներին, իսկ հնչակեանները՝ Իթիլիաֆականներին:

Կայսրութեան ամբողջականութիւնը ընդունելով հանդերձ, Դաշնակցութիւնը գտնում էր որ հայկական վիլայէթները պէտք է ունենան լայն ինքնավարութիւն եւ նրանց սահմանները պէտք է որոշուեն աշխարհագրական-ազգագրական յատկանիշներով: Հնչակեանները ընդգծում էին որ իրենք շարունակելու են պայքարը կայսրութեան ներսում մի ազգի կողմից ուրիշ ազգերի շահագործելու ձգտման դէմ, ազգերի իրաւահաւասարութեան եւ ինքնավարութեան համար: Նորաստեղծ Սահմանադրական Ռամկավարները յայտարարում էին որ իրենց նպատակն է Օսմանեան Սահմանադրութիւնը վերածել դեմոկրատականի, հասնել ապակեդրոնականացման եւ հայերի մշակութային ինքնավարութեան: Նրանք եւս գտնում էին որ պայքարի ձեւերը պէտք է լինեն սահմանադրական ու խիստ կշռադատուած:

27 Մարտի, 1909 թ. Ատանայի ջարդը, որ կազմակերպուած էր Երիտթուրքերի կողմից, աւելի ուժեղացրեց թուրքական ազգամոլութիւնն ու հայերի կասկածամտութիւնը: Այն ցուցիչ էր այն իրողութեան, որ Երիտթուրքերը ոչ միայն ուժեղացել են ու ձգտում են միահեծանութեան, այլեւ պատրաստ են բացայայտօրէն դաւաճանելու իրենց դաշնակիցներին: Այն նաեւ ակնյայտ դարձրեց որ թուրք պուրժուազիան չկարողանալով իր մէջ ձուլել ոչ-թուրքերին, մանաւանդ հայերին, պատրաստ էր բացայայտ ցեղասպանութեան դիմելու:

Ատանայի ջարդերը մի պահ վախեցրեցին հայերին՝ թուլացնելով նրանց վճռականութիւնն ու ինքնավստահութիւնը: Նրանց սկսեց տիրել թուրք ազգայնամոլներին հակահայկական արարքների առիթներ չտալու պաշտպանողական ռազմավարութիւնը: Զգուշութիւնը սրրտում, ինքնապաշտպանութեան պատրաստման համար ժամանակ շահելու մտահոգութեամբ, Դաշնակցութիւնը շարունակեց իր համագործակցութիւնը Իթթիհատականների հետ: Հնչակեանները շարունակեցին իրենց ընդդիմութիւնն ու կապը Իթիլիաֆականների հետ: Սակայն, երբ 1912 թ. Յուլիսի Իթիլիաֆականների պետական յեղաշրջումը յաջողուեց, նրանք փաստօրէն շարունակեցին իրենց նախորդների գիծը:

10 Յունուարի, 1913 թ. վերագրաւելով իշխանութիւնը, Իթթիհատականները հաշուեյարդար տեսան Հնչակեանների հետ: Այդ օրերին կեդրոնական մտահոգութիւն են երկու հարցեր. առիթ չստեղծել թուրքերի ջարդարարութեան ծաւալման համար եւ ընդյատակեայ կազմակերպել ինքնապաշտպանութիւնը:

Ռամկավարները՝ պնդելով որ իրենց շարժումը ո՛չ ապստամբական է եւ ոչ էլ անջատողական, գտնում են որ այն պահանջում է այնպիսի համերաշխութիւն, որից կարող են օգտուել կայսրութեան բոլոր ժողովուրդները: Իրենք պահանջում են ընդհանուր բարեփոխում կայսրութեան բոլոր տարածքում, իսկ Պատմական Հայաստանում՝ մշակութային ինքնավարութիւն եւ տարրական քաղաքացիական իրաւունքների ապահովում: Հայկական Հարցի լուծումը նրանք պայմանաւորում էին երեք գործոններով՝ թուրքական կառավարութեան բարեացակամութեամբ, եւրոպական երկրների օգնութեամբ եւ հայ ժողովրդի ոգու մարտունակութեամբ: Հարց են դնում ազգային միասնութեան ճանապարհով ամրապնդել հայ ոգին:

Վերակազմեալ Հնչակեանների մի խմբաւորում յայտարարեց որ հրաժարւում է զինեալ ապստամբութեան ծրագրից, եւ նուիրւում սահմանադրութեան պաշտպանութեան: Արեւմտեան Հայաստանը նկատելով կայսրութեան անբաժանելի մասը, նրանք յայտարարում են որ կը դիմեն ինքնապաշտպանութեան հայ արժէքների դէմ կազմակերպուած ամէն մի ոտնձգութեան դէմ: Նրանք իրենց յայտարարեցին հայրենիքի առաջընթացի, ազատութեան, ժողովուրդների իրաւահաւասարութեան եւ Պերլինի Վեհաժողովի 61-րդ յօդուածի պաշտպան:

1912-1914 թթ. յատկանշական են մի կողմից հայկական նահանգներում բարեփոխումների գործադրման ուղղութեամբ տարուող աշխատանքների աշխուժութեամբ, հայերի միասնութեան ամրապնդմամբ ու միւս կողմից՝ թուրք ազգայնամոլների սանձարձակութեամբ ու ահաբեկչութեան ծաւալմամբ: Ջարդի հոտ էր գալիս:

Դեռեւս 1909 թ. Հոկտեմբերին, Թուրքիայում գործող հայկական կուսակցութիւնների համերաշխութեան ժողովը որոշեց դադարեցնել փոխադարձ քննադատութիւնն ու վիրաւորանքը: 1910 թ. ճշգրտուեցին միջկուսակցական համերաշխութեան պայմանները: Այդ հանդիպման յատկապէս շեշտուեց ինքնապաշտպանութիւնը, ջարդերի կանխումը եւ միացեալ հաշտարար պայմանների հաստատումը: 1912 թ. ընթացքում տեղի ունեցան կուսակցութիւնների ղեկավարների, հայ երեսփոխանների ու Ազգային Խորհրդի անդամների մի քանի գաղտնի միացեալ նիստեր: Առաջինը արձանագրեց որ ստեղծուած դժուարութիւնները հայերը չեն կարող դիմագրաւել առանց մեծ տէրութիւնների օգնութեան: Երկրորդը նոյն եզրակացութեան յանգեց՝ հայկական տարածքներում տիրող դրութեան մասին զեկուցագիրը քննարկելուց յետոյ:

1912 թ. Դեկտեմբերի 21-ի գաղտնի ժողովը ստեղծեց «Փրկութեան Կոմիտէ», որին լիազօրութիւն տրուեց զբաղուելու արեւմտահայերի քաղաքական հարցերով եւ վեց նահանգների ինքնավարութեան խնդրով: Ինքնավարութիւնը երաշխաւորուելու էր մեծ տէրութիւնների, մանաւանդ Ռուսաստանի կողմից: Այդ գործում ներգրաւուեց Վեհափառ Հայրապետը, որ մեծ տէրութիւնների առաջ որպէս իր ներկայացուցիչ նշանակեց Պօղոս Նուպար Փաշային:

Միացեալ կուսակցական նախաձեռնումներ տեղի ունեցան նաեւ Եգիպտոսում, պալքանեան երկրներում եւ Կիլիկիայի տարբեր քաղաքներում: Ուշագրաւ էր Զմիւռնիայի հայ կուսակցութիւնների համագործակցութիւնը: Տեղական բոլոր հայ կուսակցութիւնները որոշեցին համախմբուել եւ մի բռունցք կազմած պայքարել Հայ Դատի համար: Նրանք որոշեցին միացեալ ուժերով յաղթահարել ու դիմադրաւել ակնկալուող ու խմորուող ահաւոր վտանգը, հրաժարուել մանրմունր վէճերից, ուժերի եւ միջոցների փոշիացումից, եւ իրենց շուրջ համախմբել ժողովրդական լայն զանգուածներին:

1913 թ. Հոկտեմբերին Պոլսում հայ կուսակցութիւնները ստորագրեցին համերաշխութեան դաշինք, որի նպատակն էր՝ համատեղ ուժերով պայքարել Արեւմտահայաստանի բարեփոխումների համար, համերաշխութիւն հաստատել ազգային բոլոր ստորաբաժանումներում, ընդհանուր ճակատով մասնակցել ընտրութիւններին:

Կուսակցութիւններն առանձին առանձին նոյնպէս ձեռնարկեցին որոշ կարեւոր քայլեր: 1912 թ. Սեպտեմբերի ՀՅԴ-ի արտակարգ խորհրդակցութիւնը ստեղծեց ինքնապաշտպանութեան խորհուրդ, եւ իր կազմակերպութիւններին յանձնարարեց շարունակել սահմանադրական պայքարը, հայկական գաւառներում կանխարգելակել օրինազանցութիւնները, սահմանափակել դրանց շրջանակները, անհրաժեշտ դէպքում անցնել հակագրոհի՝ պայքարին տալով համաժողովրդական ու անկուսակցական բնոյթ: Համանման դիրքորոշում որդեգրեցին նաեւ միւս կուսակցութիւնները:

Միայն 1914 թ. աշնանն ու յատկապէս 1915 թ. գարնանը պարզ դարձաւ, որ հայերը ի վիճակի չեն դիմադրաւելու Թուրքական կառավարութեան կազմակերպած բռնագաղթն ու ցեղասպանութիւնը, քանի որ գործի մէջ ընդգրկուած էին բոլոր ուժերը՝ Օսմանեան բանակը, ոստիկանութիւնը, օրինապահ մարմինները, կրօնականները, յատուկ ջոկատները, ժողովուրդը, քիւրտերը, քանի որ գործընթացը գործադրւում էր աննախատեսելի վայրագութեամբ ու անմարդկայնութեամբ: Միւս կողմից, թոյլ էր հայերի ապստամբական ոգին, ծրագիրն ու վճռականութիւնը: Դիմադրութիւնը կրում էր պատահական եւ մեկուսացուած տեղական բնոյթ: Դրսից օգնութիւնը գրեթէ բացառուած էր:

Օսմանեան Կայսրութիւնում այդ օրերուն բնակուող հայերի վիճակը կարելի է պատկերացնել Երիտթուրքերի Պոլսոյ Պատրիարքարան ուղարկած նամակների բովանդակութեամբ: Այնտեղ Պատրիարքն ու բոլոր հայերը անուանւում են կեաւուրներ, որոնց վերջին ժամը հաշուուած է: «Թուրքական եաթաղանը,– գրուած է այնտեղ,– գլխատել է միլիոնաւոր կեաւուրների, կը գլխատի նաեւ ձեզ: Դուք անիծեալ էք եւ անպատուել էք Թուրք ազգին, նրա վարկը գցել աշխարհով մէկ: Դուք դաւաճաններ էք: Սակայն ժամանակները փոխուել են, եւ մենք այսօր չենք շեղուի մեր ընտրած ճանապարհից: Երիտթուրքերս այլեւս մեր երկրում չենք հանդուրժի ձեզ նման մարդկանց, որոնք ձգտում են իրենց կամքը թելադրել մեզ»: Պատրիարքարանը մտածում է երկու յուսահատական հնարաւորութիւնների մասին. կամ արտագաղթել երկրից, եւ կամ՝ խնդրել քրիստոնեայ պետութիւններին պաշտպանել հայերի կեանքը, պատիւն ու ունեցուածքը:

1913 թ. Մարտի 13-ին, Պօղոս Նուպար Փաշան Բարիզում Ռուսաստանի դեսպան Իզոլսկուն տեղեկացնում է որ հայերը ոչ ցանկանում են ինքնավարութիւն եւ ոչ էլ հպատակութեան փոփոխութիւն, այլ պարզապէս ուզում են խոստացուած բարեփոխումների գործադրում: Ապրիլին Պոլսոյ Պատրիարքարանը ներկայացնում է բարեփոխութիւնների ծրագիրը, որի հիման վրայ Ռուսաստանի Պոլսոյ դեսպանը կազմում է պաշտօնական ռուսական տարբերակը, զոր Օսմանեան իշխանութիւններին ներկայացնում է 1913 թ. Յունիսի 6-ին: Այն նախատեսում էր Կարին, Վան, Պիթլիս, Տիգրանակերտ, Խարբերդ եւ Սեբաստիա վիլայէթներից կազմել մի միացեալ շրջան՝ եւրոպացի կառավարիչով, որ նշանակւում էր հինգ տարով, Սուլթանի կողմից՝ մեծ տէրութիւնների համաձայնութեամբ: Տարածքում բնակուող տարբեր ազգի ու կրօնի պատկանող հաւաքականութիւնները ունենալու էին իրենց դպրոցները եւ տեղական մարմիններում ունենալու էին իրենց ներկայացուցիչները: Յուլիսին, երբ նախագիծը քննարկւում էր մեծ տէրութիւնների կողմից, Ռուսաստանը չկարողացաւ իր առաջարկութիւնը անցկացնել: 1914 թ. Յունուարի 26-ին ընդունուած ռուս-թրքական նոր համաձայնութեամբ հայկական հինգ վիլայէթները բաժանւում էին երկու շրջանների, որոնց կառավարիչները նշանակւում էին մեծ տէրութիւնների կողմից՝ Սուլթանի համաձայնութեամբ: Այն չունէր գործադրման ոչ մի երաշխիք: Ամրանը նշանակուեցին կառավարիչները, իսկ աշնանը, կառավարիչները տեղ չհասած, արդէն սկսուեց Առաջին Աշխարհամարտը:

Բարեփոխութիւնների մասին լուրը հայերն ընդունեցին զուսպ եւ տարակուսանքով, թէեւ նրա մէջ տեսնում էին որոշ յոյս: Գործերի յետագայ ընթացքի մէջ էին նրանք որոնում իրենց վերաբերմունքի հիմքերը: 1914 թ. Յուլիսի Էրզրումի ընդհանուր ժողովում (8-րդ), Դաշնակցութիւնը գտնում էր որ թէեւ 1914 թ. Յունուարի 26-ի համա-

ձայնութեամբ ստեղծուած բարեփոխումների ծրագիրը անբաւարար է, սակայն անհրաժեշտ է դրան ցոյց տալ կուսակցական պաշտպանութիւն: Ժողովը որոշում ընդունեց հակադրուել թուրքական իշխանութեան, եթէ այն ձեռնարկի ոտնձգութիւնների: Նման կեցուածքը հայերը հիմնաւորուած էին համարում, քանի որ Իթթիհատական կառավարութիւնը էկլեկտիկ (ոչ սկզբունքային համադրողական) էր, ոչթուրք ժողովուրդների նկատմամբ նրա վերաբերմունքը խոցելի էր եւ որ Իթթիհատականները տապալել էին բարեփոխումների ծրագիրը: Ժողովը գտնում էր որ անհրաժեշտ է ամէն ինչ անել որ Թուրքիան չմտնի պատերազմի մէջ եւ չէզոքութիւն պահպանի: Պատերազմի ժամանակ հայկական շրջաններում տեղական հարցերը լուծելու համար ժողովն ընտրում է համապատասխան մարմին:

Ընդհանուր ժողովի ժամանակ Իթթիհատական մի պատուիրակութիւն է գալիս Էրզրում՝ Դաշնակցական ղեկավարութեան հետ բանակցելու: Այն ձգտում է հայերին համոզել որ իրենք համաձայնուել են վրացիների ու շրջանի իսլամների հետ, որ նրանք ապստամբութիւն կը բարձրացնեն ռուսների դէմ, եթէ հայեր վերցնեն նախաձեռնութիւնը: Դաւադրութեան յաջողութեան դէպքում նրանք վրացիներին խոստացել են Թիֆլիսի եւ Քութայիսիի գաւառները, Պաթումի շրջանի եւ Տրբապիզոնի վիլայէթի մի մասը: Իսլամները ստանալու էին Տաղստանը, Պաքուի գաւառը եւ Գանձակի գաւառի մի մասը: Հայերին բաժին էր հասնելու Կարսի շրջանը, Երեւանի գաւառը, Գանձակի գաւառի մի մասը, Վանի շրջանը, Պիթլիսի եւ Էրզրումի վիլայէթների մի մասը: Նրանք կազմելու էին վրացական, թաթարական եւ հայկական ինքնավար շրջաններ՝ Օսմանեան Կայսրութեան սահմաններում: Երիտթուրքերը Դաշնակցութեան առաջարկում էին կազմել հակառուսական կամաւորական ջոկատներ՝ ռուսական թիկունքում գործելու համար: Աւելին, նրանք առաջարկում էին աշխարհասփիւռ հայերին օգտագործել Օսմանեան Կայսրութեան օգտին քարոզչութիւն ծաւալելու եւ գաղտնի տեղեկութիւններ հաւաքելու: Նրանք ծրագրում էին հայերին դարձնել օսմանեան հինգերորդ շարասիւն աշխարհով մէկ: Դաշնակցութիւնը նախ Իթթիհատականներին առաջարկեց հրաժարուել պատերազմին մասնակցելու գաղափարից: Վերջիններս յայտնեցին որ իրենք մեծ յոյսեր են կապում գալիք պատերազմից՝ ազատուել ռուսական վախից, մէջտեղից հանել Հայկական Հարցը եւ միացնել բոլոր թուրանական հողերը: ՀՅԴ ղեկավարութիւնը Իթթիհատականներին հաղորդեց որ Օսմանեան Կայսրութեան սահմաններում բնակուող հայերը որոշել են հաւատարիմ մնալ օսմանեան դրօշին ու սահմանադրութեան, իսկ Ռուսաստանի ու այլ երկրների հայերը նոյնպէս որոշել են հաւատարիմ մնալ իրենց ապրած երկրների դրօշին ու սահմանադրութեան: Իթթիհատականները նոյն պատասխանը ստացան հայ աշխարհի տարբեր

կեդրոններում: Նրանք յայտարարեցին որ իրենք իրենց ծրագրերը կ'իրականացնեն առանց հայերի օգնութեան, բայց թող հայերը յետագայում չդժգոհեն իրենց ճակատագրից[1]:

1. Տես՝ Մերի Քոչար, *Հայ-Թուրքական Հասարակական-Քաղաքական Յարաբերութիւնները եւ Հայկական Հարցը*, Ե.Պ. Համալսարան, Երեւան, 1988, 308 էջ, խմբագիր Ռ.Ս. Սաֆրաստեան (ռուսերէն):

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԲՈՎՈՒՄ

Դեռեւս 15-րդ դարում, Թուրքերը ստեղծեցին հայ-թուրք յարաբերութիւնները ձեւակերպող ու պաշտօնականացնող հաստատութիւն ու փաստաթուղթ: 1461 թ., սուլթան Մուհամմետ Բ. Ֆաթիհը հաստատեց Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքութիւնը, որի նպատակը պէտք է լինէր հայերին կտրել Էջմիածնի Կաթողիկոսութիւնից եւ նրանց հնազանդ պահել Սուլթանին: Պատրիարքութիւնը տնօրինելու էր համայնքի ոչ միայն կրօնական, այլեւ աշխարհիկ կեանքը՝ կրթութիւնը, մամուլը, արուեստը, մշակութային ու ազգային հաստատութիւնները: Նրա տրուած էին հարկահաւաքման եւ պատժիչ դերեր: Պատրիարքութիւնը դարձաւ հայ ժողովուրդի եւ Սուլթանի հաղորդակցման խողովակը: Ինչքան էլ այն ձգտեց ազգային ազատագրական հարցերում զգուշաւոր դիրք գրաւել ու հայերին փրկել թուրք ծայրայեղականների մոլեռանդութիւնից, այնուամենայնիւ, դարձաւ հայ շահագործուող ու կեղեքուող զանգուածների բողոքի արտայայտիչը: Այն ժողովրդի վիճակի ճշգրիտ պատկերն ու նրա ցանկութիւնները ամենանրբացուած ձեւով ներկայացրեց ինչպէս սուլթաններին, այնպէս էլ եւրոպական երկրներին (Անգլիա, Ֆրանսա, Ռուսաստան եւ այլն): Այս հողի վրայ, ազատագրական պայքարի վերելքի պայմաններում, սուլթանական իշխանութեան վերաբերմունքը դէպի պատրիարքութիւն դարձաւ անբարեացակամ: Հիմքեր կան ենթադրելու որ նա էլ կազմակերպեց Ներսէս Վարժապետեան Պատրիարքի թունաւորումը:

Օսմանեան իշխանութեան հաստատման օրից, սուլթանները, ինչպէս այլ հպատակ ժողովուրդների, այնպէս էլ հայերի համար ստեղծեցին երկրորդական կարգի հպատակի իրաւական վիճակ: Ստորադասութեան եւ ազգային խտրականութեան պայմաններում հայերը պէտք է աշխատէին ու ստեղծագործէին: Դարաւոր հայրենիքի եւ սեփական պետականութեան բացակայութեան պայմաններում իրականացուող

այդ քաղաքականութիւնը հայերին առաջնորդեց դէպի ազատագրական պայքար: Օսմանեան Կայսրութիւնում տիրող անարդարութեան ու բարբարոսական կեղեքման դէմ աւելի ուշ սկսեց բողոքել թուրքը: Երկար ժամանակ հայ ազատագրական պայքարը չունէր հակասուլթանական, քիչ թէ շատ նկատելի հաւանական թուրք դաշնակից: Ազատագրական պայքարի առնչութեամբ հայ-թրքական քաղաքական յարաբերութիւնները հնարաւոր դարձան 19-րդ դարում:

Դեռեւս Գաբրիէլ Պատկանեանը (1802-1889) իր ժամանակին նըշում էր որ աչքի առաջ ունենալով Եւրոպայի ազգերի, եւ մանաւանդ Ռուսաստանի հովանաւորութիւնը, կարելի է յուսալ որ օսմանցիներն ու պարսիկները վերջ տան իրենց հետապնդումներին, եւ այդպիսով հայերը գտնեն իրենց համար ազգային համախմբման մի կեդրոն: Իսկ «Կռունկ» թերթի խմբագիր Մ. Աղաբեկեանը (1880-1908) պաշտպանում էր այն կարծիքը որ Թուրքիայի ներսում ազգային-քաղաքական բարեփոխումները հնարաւոր են միայն թրքահպատակ միւս ազգերի քաղաքական ազատագրման հետ մէկտեղ: Յետագայում այս գաղափարը ժառանգեցին հայ կուսակցութիւնները, որոնք իրենց ծրագրի մէջ նշեցին որ անհրաժեշտ է բոլոր հակասուլթանական ուժերի դաշնակցութիւնը: Նրանք յատկապէս շեշտում էին որ իրենց պայքարը ուղղուած է ոչ թէ թուրք ժողովուրդի, այլ՝ սուլթանիզմի դէմ:

Արմատական մտածող Մատթէոս Մամուրեանը (1830-1901) համոզուած էր որ ապագայ ազատ Հայաստանի եւ Թուրքիայի տնտեսական զարգացմանը սիրով համամասնակից կը դառնան հայերի հետ կողք-կողքի ապրող թուրքերը, քրտերը, ասորիներն ու թաթարները: Համատեղ օգտակար աշխատանքում, նշում էր նա, կը փոխուի նաեւ նրանց փոխյարաբերութիւնը ու կը վերանայ օտարամուտ ազգային թշնամանքը: Գրիգոր Օտեանը (1834-1887), որ մասնակցել է Հայ Ազգային Սահմանադրութեան մշակմանը եւ որ հեղինակել է 1878 թ. Պերլինի Վեհաժողովին ներկայացուելիք պատրիարքական ծրագիրը («Ծրագիր Կազմակերպական Կանոնագրի Օսմանեան Հայաստանի»), պաշտպանում էր այն թեզը, որ անհրաժեշտ է բարեփոխումների ճանապարհով ընթանալ՝ առանց վրդովելու տիրող գաղափարները ու առանց բռնի քայքայման: Որպէս լուսաւորիչ-բարեփոխիչ եւ սահմանադրական շարժման ներկայացուցիչ, նա գործօն մասնակցութիւն է ունեցել թրքական «Նոր Օսմաններ» գաղտնի հակասուլթանական կազմակերպութեան գործունէութեան, համագործակցել է թուրք բարենորոգիչ-սահմանադրական Միտհաթ Փաշայի (1822-1888) հետ: Նրա հետ միասին գրել է առաջին թուրքական սահմանադրութիւնը, որ պահանջում էր սահմանադրական միապետական կարգերի հաստատումը: Երիտթուրքերի հիմնական քաղաքական պահանջն այդ սահմանադրութեան գործադրումն էր:

1895 թ. սկսում է ուշագրաւ մի բեկում հայ-թուրքական քաղաքական յարաբերութիւնների ոլորտում: Ինչպէս Երիտթուրքերը, այնպէս էլ Սուլթանը ցանկանում են երկխօսութեան մէջ մտնել հակասուլթանական ազգային ազատագրական շարժումների ղեկավարութեան, եւ առաջին հերթին՝ հայերի հետ: Առաջինների նպատակն էր այդպիսով սովորել հայ ազատագրական շարժման փորձից, ի շահ իրենց օգտագործել հայ յեղափոխական ոյժը, միացեալ ճակատով հանդէս գալ սուլթանիզմի դէմ, որ ուժեղացրել էր իր հակաբարենորոգչական, հակաընդդիմադրական պայքարը: Միաժամանակ, նրանք կարծում էին որ այդպիսով իրենց հսկողութեան տակ կ՝առնեն ազգային շարժումները: Բանակցելով հակասուլթանական ուժերի հետ, Սուլթանն ուզում էր ջլատել այդ նորակազմ ճակատը, եւրոպական պետութիւնների աչքին փոշի փչել, ժամանակ շահել ու վերացական խոստումներով քնացնել ազգային շարժումները: Երկուսը միասին յոյս ունէին այս միջոցով պահպանել կայսրութեան ամբողջականութիւնը:

Երիտթուրքերի հետ բանակցելով, հայերն ուզում էին հող նախապատրաստել, որպէսզի յեղափոխութեան յաղթանակից յետոյ կարողանան իրաւունք ունենալ արդիւնքից բաժին պահանջելու: Նրանք կարծում էին որ երիտթուրքական Թուրքիան աւելի նպաստաւոր պայմաններ կը ստեղծի ազատագրական պայքարի համար, քան՝ սուլթանականը: Հայերը հաւատում էին այն վարկածին, որ մասնակցելով հակասուլթանական ճակատին, հնարաւոր կը լինի աւելի ուժեղացնել իրենց ժողովրդական հեղինակութիւնն ու մեծացնել իրենց անդամների ու համախոհների թիւը: Հայերն, այդպիսով, հնարաւորութիւն կ՝ունենային կանխելու ծայրայեղականներին՝ իրենց հակահայկական զգացումների տարածման աշխատանքներում: Իսկ Սուլթանի ներկայացուցիչների հետ բանակցելով, հայերն յոյս ունէին մեղմել նրա ատելութիւնը, ժամանակ շահել, մի անգամ եւս փորձել հակառակորդին, եւ այդ բանակցութիւններն օգտագործել հակասուլթանական ճակատում աւելի ազդեցիկ դիրք գրաւելու համար:

Երիտթուրքերը յամառօրէն պահանջում էին որ միայն քննարկուեն համակայսերական բարենորոգումների հարցերը՝ առանց շօշափելու նրանց որոշակի առնչութիւնները ազգային խնդիրներին, հայկական վիլայէթների բարեկարգումներին: Հայերը ցանկանում էին բարեփոխումների հարցերը քննարկել ինչպէս համակայսերական, այնպէս էլ տեղական-ազգային առումով: Սուլթանի պատուիրակները մանրամունր խոստումներով ուզում էին հայերին ապակողմնորոշել: Աւելին. Սուլթանը չէր կատարում իր տուած խոստումները, որոնք հայերը պիտի համարէին բարեկամեցողութեան եւ քաղաքականութեան փոփոխութեան արտայայտութիւն:

Այդպիսի մթնոլորտում անցան 1896-1899 թթ. բանակցութիւնները ու բանակցութեան փորձերը Սուլթանի պատուիրակութիւնների եւ հայ քաղաքական կազմակերպութիւնների միջեւ: 1895-1908 տարիների ընթացքում, յիշեալ պայմաններում անցան նաեւ Երիտթուրքերի բանակցութիւնները տարբեր հայ կազմակերպութիւնների՝ներկայացուցիչների հետ եւ հակասուլթանական ճակատի համաժողովները: 1908 թ. յեղափոխութիւնից յետոյ, շարունակւում է երկխօսութիւնը հայ քաղաքական կուսակցութիւնների եւ իշխանութեան գլուխ կանգնած «Միութիւն եւ Առաջադիմութիւն» խմբակի միջեւ: Նկատի ունենալով 1909 թ. Ատանայի ջարդերը, կայսրութեան ղեկավարների ազգայնամոլական ելոյթները եւ նրանց ծայրայեղական տրամադրութիւնները, հայերն ամէն կերպ աշխատում էին խուսափել անջատողական պիտակաւորումից, հակասահմանադրական գործունէութիւնից: Նրանք ամէն ինչ անում էին, որպէսզի առիթ չտան նոր կառավարութեանը հակահայկական քայլերի դիմելու:

19-րդ դարի վերջում եւ 20-րդ դարի սկզբում հայ-թուրքական յարաբերութիւններում նկատելի էր որոշակի փոփոխութիւն: Կայսրութեան եւրոպական մասի գրեթէ բոլոր քրիստոնեայ ժողովուրդները ստացել էին անկախութիւն կամ ինքնավարութիւն: Որպէս հետեւանք, հայերը փաստօրէն մնացին միակ քրիստոնեայ հպատակները, եւ շատ աւելի հեշտ դարձաւ հայ-թուրք յարաբերութիւնները վերածել քրիստոնեայ-իսլամ յարաբերութեան, առնուազն արտաքնապէս: Որոշ իմաստով հայերը մինակ մնացին թուրք-իսլամական մոլեռանդութեան դէմ: Թուրքերին աւելի հեշտ դարձաւ ամբոխին լարել հայերի դէմ, ու հայերին կոտորել մոլեռանդ խուժանի օժանդակութեամբ:

Նկատենք, որ Սուլթանը եւ Երիտթուրքերը չէին ցանկանում ժողովրդին տեղեկացնել որ հայերը իրականութեան մէջ ոչ ցանկանում էին կործանել Օսմանեան Կայսրութիւնը եւ ոչ էլ ցանկանում էին միանալ Ռուսաստանին: Նրանց նպատակն էր Պատմական Հայաստանի տարածքի վրայ վերականգնել հայկական ազատ պետականութիւնը, որը պիտի միտէր բարեկամական յարաբերութիւններ հաստատել ինչպէս Ռուսաստանի, այնպէս էլ Թուրքիայի հետ: Աւելին: Դա հայերի վերջնական նպատակն էր. անոնք նաեւ համաձայն էին բաւարարուել հայկական գաւառների վերանորոգումով, հայկական ինքնավարութեամբ, Թուրքիայի հետ միասին դաշնակցային պետութեան ստեղծման:

Պատերազմից անմիջապէս յետոյ, թուրքերը ռազմական ատեաններ հաստատեցին, որպէսզի պատժեն հայկական ջարդերը կազմակերպողներին: Ժամանակի թուրք ղեկավարութիւնը ափսոսանք յայտնեց եղածի համար եւ աշխատեց ողջ կատարուածը վերագրել մի քանի մարդու, որոնք աքսորուեցին եւ շուտով ազատուեցին: Թուրքիայում ուժեղացող Քեմալական Շարժումը փաստօրէն դարձաւ հին քաղաքականութեան շարունակումը՝ ծածկուած ու խորամանկ ձեւով: Երբ քա-

զաքակիրթ աշխարհը որոշեց թաղել Մեծ Հայաստանի ծրագիրը եւ կեանք տալ Քեմալական Թուրքիային, հայերին խորհուրդ տուին լեզու գտնել թուրքերի հետ: Իսկ թուրքերը երազում էին մասնակից լինել հայերի ու Հայաստանի ոչնչացման:

Ինչպէս ապացուցում են Ազրպէյճանի այդ ժամանակի ղեկավար Նարիման Նարիմանովի 1921 թ. Փետրուարի 16-ին եւ 21-ին Վ.Ի. Լենինին հասցէագրուած երկու նամակները, Պոլշեւիկեան Ռուսաստանի հակահայկական եւ փրօ-թուրքական քաղաքականութեան մշակման հարցում վճռական դեր խաղացել են պոլշեւիկ ազերիները՝ Սթալինի անմիջական օգնութեամբ: Նրանք սպառնացել են սովամահ անել Հայաստանը, եթէ Միասնիկեանը չհամաձայնի Ղարաբաղն ու Նախիջեւանը յանձնել Պաքուին: Այսօրուան Ղարաբաղեան Շարժման առաջացման գործում վճռական դեր են խաղում անցեալի այդ սխալները: Այդ շարժման դէմ գործադրուող միջոցները շատ են նման անցեալին:

Այսօր, աշխարհի քաղաքական ու դիւանագիտական միտքն ու գործունէութիւնը համարձակօրէն գնում է դէպի բանակցութիւն եւ երկխօսութիւն: Սոյն պատմական փորձից գիտեն որ միջազգային լարուածութեան թուլացումը միշտ էլ կը տանի դէպի արդար երազանքների իրականացում: Այդպէս եղաւ այն ժամանակ, երբ հայերին խոստացան Ուիլսընեան Հայաստան, ամերիկեան մանտադ, երբ Խրիմի եւ Փոցտամի բանակցութիւններում սկսեց դրական լուծում գտնել Հայկական Հարցը: Խաղաղութեան յաղթանակի պայմաններում ճշմարտութիւնն աւելի հեշտութեամբ է իր համար ճանապարհ հարթում եւ քաղաքական ոտնձգութիւններն ու մեծ տէրութիւնների մենատիրական շահերը աւելի նուազ են բախւում իրար: Այս պատճառով էլ հայերս միշտ եղել ենք բանակցութիւնների, երկխօսութեան, բարիդրացիական յարաբերութիւնների կողմնակից: Բայց միայն մեր ցանկութիւնը բաւարար չէ: Ողջ դժբախտութիւնը նրանում է որ թրքական կողմը ոչ միայն արդարացնում է ժողովուրդի ոչնչացման քաղաքականութիւնը, այլեւ ճնշում է բանեցնում որ այլ պետութիւններ պաշտպանեն իրեն:

Ա.Մ. Նահանգները ներողութիւն խնդրեց ճաբոնական ծագում ունեցող իր քաղաքացիներից այն բանի համար, որ ինքը Երկրորդ Աշխարհամարտի տարիներին կարծել է որ նրանց տեղահանութիւնը հրամայական անհրաժեշտութիւն է երկրի ապահովութեան համար: Նա նոյնիսկ նիւթական ու բարոյական հատուցում տուեց իր հացցրած վնասների համար: Բայց նոյն Ա.Մ.Ն.-ը հիմնաւորուած է համարում թրքական այն թեզը, որ իբր ինքը ռազմա-ստրատեգիական առումով հարկադրուած էր իր հայ հպատակներին բռնագաղթի ենթարկել, եւ որ ոչինչ սարսափելի չկայ, եթէ այդ ընթացքում միլիոնաւոր հայեր մահանան՝ կանխամտածուած ձեւով ցեղասպանութեան ենթարկուեն:

Հայերս սկզբունքօրէն պաշտպանում ենք բարիդրացիական յարաբերութեան քաղաքականութիւնն ու բանակցութիւնների ու երկխօսութեան եղանակները: Բայց դրանք քո գերեզմանափորի նկատմամբ կիրառելիս, կ'ուզենաս որոշակի երաշխաւորութիւններ ապահովել:

Աշխարհը չի կարող մոռանալ այն փաստը, որ Թուրքիայում ամերիկեան դեսպան Մորկընթաուին լռեցնելու համար, ժամանակի Թուրք ղեկավարներից մէկը յայտարարել է որ իրենք հայերի հետ վարւում են ճիշդ այնպէս՝ ինչպէս ամերիկացիները վարուել են իրենց երկրի բնիկ հնդիկների հետ:

Աշխարհը չի կարող մոռանալ Երիտթրքական շարժման ղեկավարի այն յայտարարութիւնը, որ իրենք ղեկավարւում են «Թուրքիան միայն Թուրքերին սկզբունքով, եւ որ հիմա նրանք երկիրը մաքրելու են հայերից, եւ ապա՝ եւրոպացիներից»:

Աշխարհը չի կարող մոռանալ թրքական այն թեզը, որ ինքը բարբարոսութիւնը սովորել է Արեւմուտքից, եւ որ Արեւմուտքը հեղինակ է աւելի սարսափելի բարբարոսական արարքների:

Այսօր Թուրքիայի Մարդկային Իրաւանց Ցանձնաժողովի նախագահը մեղադրում է Ա.Մ.Ն.-ին Իրաքում ցեղասպանութիւն գործադրելու համար, եւ այդ քաղաքականութիւնը բնութագրում է որպէս ֆաշական:

Աշխարհն այդ բոլորը մոռանալ չի կարող ո՛չ թէ որովհետեւ յիշաչար է եւ ոչ էլ որովհետեւ հրաժարուել է ներողամտութեան սկզբունքից, այլ որովհետեւ արդի թրքական կառավարութիւնը, թրքական կուսակցութիւնների մեծամասնութիւնը եւ պաշտօնական թրքական պատմագիտութիւնն ու դիւանագիտութիւնը արդարացնում ու պաշտպանում են այդ սկզբունքներն ու դրանցից բխող գործողութիւնները՝ Ցեղասպանութիւնը:

Արդի Թուրքիան արդարացնում է իր հակաքրտական քաղաքականութիւնը: Նա մի պահ անգամ չի մտածում բանակցութիւններ ու երկխօսութիւն սկսել իր քիւրտ հպատակների հետ: Նրանք խտրականութեան եւ ձուլողական խստագոյն քաղաքականութեան պայմաններում հիւծում են ու բողոքում:

Արդարացնելով ու պաշտպանելով բոլոր վերոյիշեալ սկզբունքները եւ արդարացնելով դրանցից բխող հետեւանքները, Թուրքիան արդէն իրեն զրկում է բանակցութիւնների ու երկխօսութեան սեղանի շուրջ նստելու իրաւական ու բարոյական հիմքերից, վստահութիւն նուաճելու հաւանականութիւնից:

Մենք երկարել ենք բանակցութեան եւ երկխօսութեան ձեռքը եւ սպասում ենք որ Թուրքիան կը մաքրի իր արիւնոտ ձեռքն ու յանցաւոր խիղճը, ներողութիւն կը խնդրի, եւ պատրաստակամութիւն կը յայտնի հատուցման, ու կը խոստանայ չկրկնել նոյն քաղաքականութիւնը:

ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԾՐԱԳՐԻ ՅՂԱՑՈՒՄ

Նկատելով որ 19-րդ դարի վերջի եւ 20-րդ դարի սկզբի ջարդերը եւրոպական պետութիւնների կողմից քաղաքական եւ իրաւական գնահատական չստացան ու չդատապարտուեցին, Թուրքիայի նոր իշխանութիւնը՝ Երիտթուրքական շարժման «Միութիւն եւ Առաջադիմութիւն» խմբակը սկսեց մտածել Հայաստանը հայազուրկ դարձնելու, հայերին զանգուածային բնաջնջման ենթարկելու՝ Հայերի Ցեղասպանութեան մասին: Շուտով այն դարձաւ կուսակցական ու պետական քննարկման ու ծրագրման առարկայ: Առաջին Աշխարհամարտից առաջ (1910-1914 թթ.) ցեղասպանութեան որոշումը ընդունուած ու դրա ծրագիրն արդէն մշակուած էր:

Այս գաղափարը յղանալիս, դրա ծրագիրը մշակելիս ու վերջինս գործադրելիս, «Միութիւն եւ Առաջադիմութիւն» խմբակի ղեկավարութիւնը նկատի ունեցաւ մի քանի հանգամանքներ, եւ դիմեց մի քանի կանխորոշիչ քայլերի:

Ա. Այդ օրերին հսկայածաւալ Օսմանեան Կայսրութիւնից մնացել էր շատ փոքր մի մասը՝ շուրջ մէկ եօթներորդը: Այդ պահին կայսրութեան մէջ էին մտնում արաբական տարածքների մի մասը (արդի Իրաքը, Սուրիան, Լիբանանը, Քուէյթը, Արաբական Թերակղզին, Եմէնը եւ շրջակայ կղզիները), Պատմական Հայաստանը: Հպատակուած մնում էին հայերը, արաբները, քրտերը, ասորիները, հրեաները եւ կովկասեան տեղահանուած այլ ժողովուրդներ կամ ցեղեր: Պատմական Հայաստանը գտնուում էր Փոքր Ասիայում (ըստ յոյների) կամ Արեւելեան Անատոլիայում (ըստ Թուրքերի) եւ կազմում էր «բուն երկրի» սիրտը: Այն իր հայ բնակչութեամբ եւ արեւմտեան երկրներով «հովանաւորուող» ուժեղացող ազգային ազատագրական պայքարով, սպառնալիք էր համարւում սմքած Թուրքիայի ապագայի համար: Թուրքիա չէր մնայ, եթէ Հայաստանը անկախանայ: Աւելին: Այդ տարածքի ու նրա բնակիչների հետ կապուած հարցերը շահարկւում էին եւրոպական պետութիւնների կողմից: Դա օգտագործւում էր Թուրքիայի վրայ ճնշում բանեցնելու եւ նրանից պատառներ պոկելու համար: Միաժամանակ Ռուսիան, Թուրքիայի վաղեմի թշնամին, աչք ունէր այդ տարածքների վրայ ու փորձում էր այնտեղ ծաւալուող ազգային ազատագրական պայքարը շահարկել: Այս հիման վրայ Պատմական Հայաստանի հայաթափումը նկատուեց ռազմավարական նշանակութիւն ունեցող առաջնահերթ խնդիր: Թուրքիան, վերջին հաշուով, պատրաստ էր թողնել արաբական տարածքները, բայց ոչ Պատմական Հայաստանը: Այս պատճառով, ողջ պատերազմի ընթացքում, նոյնիսկ այն պահին, երբ գերմանական եւ թուրքական բանակները նահանջում էին Արաբական Աշխարհում, հարաւային ճակատում, եւ խիստ կարիք էր զգացւում օգնութեան, թուրքական կովկասեան բանակը տեղից չշարժուեց: Յետագայում, զինադադարից յետոյ, այդ բանակով Թուրքիան յարձակուեց Հայաստանի վրայ ու տապալեց Հայաստանի անդրանիկ Հանրապետութիւնը 1920 թ., ու շարունակեց հայերի ցեղասպանութիւնը:

Բ. Խալիֆաթը գրաւեց Հայաստանը 7-րդ դարի կէսերին: Կարճ ժամանակ անց նա Միջին Արեւելքից այնտեղ սկսեց տեղափոխել մահմետական ու ոչ մահմետական ցեղախմբեր: 15-րդ դարից սկսած Թուրքերը մօտակայ երկրներից Հայաստան բերեցին նորանոր օտար ցեղեր, մանաւանդ քրտեր: Քրտական բնակչութիւնը խիստ աճեց հայ հողում: Եկուոր ցեղերը բարեկամական յարաբերութիւններ էին հաստատում հայերի հետ: Նրանք, 9-րդ դարում օգնեցին Բագրատունիներին, որ տապալեն խալիֆաթական լուծը ու վերականգնեն տապալուած հայկական պետականութիւնը: Շատ քրտական ցեղեր ու բնակավայրեր միացան հայերին իրենց ինքնապաշտպանողական ու ազատագրական պայքարում: Մեծ քանակութեամբ քրտեր ծառայում էին հայերի ձեռքի տակ: Շատ հայ քաղաքական ու հասարակական գործիչներ, ընդ որում Բաֆֆին ու Խրիմեան Հայրիկը, կոչ էին անում կերտել ամուր հայ-քրտական դաշինք, որից Թուրքերը սարսափում էին: Հայերին ոչնչացնելու իրենց ծրագրում Թուրքերը նախատեսում էին օգտագործել ստեղծուած յատուկ ջոկատները եւ քրտերին: Առաջին ոյժը անմիջապէս գտնւում էր «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան, կառավարական օլիկարխայի եւ բանակի հրամանատարութեան հսկողութեան տակ: Երկրորդը՝ քրտերը, անմիջապէս ենթակայ էին իրենց ցեղապետներին ու նրանց ներկայացուցիչներին, որոնք իրենց հրամանները ստանում էին նախորդ երեքից: Քրտերի օգտագործումը նպատակայարմար նկատուեց ելնելով հետեւեալ հիմքերից.

ա. Պատմական Հայաստանի տարածքում մեծ էր քրտական բնակչութեան թիւը եւ հայերին բռնագաղթի ու ջարդի ենթարկելու հա-

մար լրացուցիչ ուժերի կարիք չէր զգացուելու:

բ. Քիւրտերի զգալի մասը հայերի մօտ էին աշխատում ու վայելում նրանց վստահութիւնը:

գ. Երկրով մէկ տարածուած ու յայտնի էին քրտական «օրէնքից դուրս գտնուող» մարդկանց խմբերը (out-law, չէթէ), որոնք զինուած էին ու կողոպտում ու սպաննում էին խաղաղ բնակչութեան: Այդ քրտերը պատրաստի սեւ ոյժ էին:

դ. Քրտերը կուրօրէն ենթարկւում էին իրենց ցեղապետին եւ բաւարար էր ստանալ վերջինիս համագործակցելու համաձայնութիւնը, եւ ամբողջ ցեղը նուաճուած կարելի էր նկատել: Իսլամացած քրտերը խիստ մոլի էին:

ե. Այդպիսով հնարաւոր կը լինէր ոճրագործութիւնը ներկայացնել ոչ թէ որպէս թրքական գործ, այլ քրտական, ու ոչ միայն արդարանալ, այլ՝ քրտերին պատժել մարդկութեան դէմ իրենց կատարած ոճիրի համար: Մի քարով թուրքերը նպատակ ունէին երկու թռչուն խփել՝ ազատուել հայերից եւ պատժի ենթակայ դարձնել քրտերին: Մնում էր լուծել ամենից դժուար հարցը: Ի՞նչպէս հայերի հետ լաւ կամ բնական յարաբերութիւնների մէջ գտնուող քրտերին հայատեաց դարձնել:

Թուրք կառավարութիւնը գտաւ նաեւ այդ բարդ հարցի լուծումը հայ ազատագրական պայքարը ծուռ հայելու մէջ ներկայացնելով: Թուրքական իշխանութիւնները զանազան միջոցներով եւ եղանակներով (պաշտօնականը չբացառելով) քիւրտ ցեղապետներին համոզեցին որ հայերը ձգտում են տիրել հայկական հողերին, որոնց վրայ քրտերը հաստատուած են: Ապա՝ ասացին քրտերին՝ հայերը ծրագրում են քրտերին այդ հողերից հեռացնել ու նրանց ձեռքից խլել նրանց ունեցուածքը կամ սպաննել նրանց: Եթէ, թելադրեցին թուրքերը, քրտերը այսօր տեղահան չանեն կամ չսպաննեն հայերին, ապա վաղը ուշ կը լինի: Իսկ թրքական կառավարութիւնը մինչեւ օրս նպաստել է որ քրտերը պահեն իրենց հողերը ու խաղաղ ապրեն դրանց վրայ: Թուրքերը խոստացան էլ աւելի բարելաւել քրտերի վիճակը ու հայերից վերցուած հարստութեան մի մասը նրանց տալ: Թուրքերը կարողացան այդպիսով իրենց զինակից դարձնել քրտերի զգալի մասը: Հայերին ջարդելուց յետոյ, նրանք ջարդեցին քրտերին: Այդ գործընթացը շարունակւում է մինչեւ օրս:

Գ. Առաջին Աշխարհամարտի նախօրէին հայերի նկատմամբ սկսեցին որդեգրել եռակի վերաբերմունք: Մի կողմից նրանք այնքան խրատացրին իրենց կեցուածքը, որ հայերը նկատեցին որ իրենց վրայ սեւ ամպեր են կուտակւում: Որպէս արձագանգ, հայերը գաղտնի կերպով սկսեցին պատրաստուել սպասուող փոթորիկը դիմագրաւելու, միւս կողմից՝ առերես սկսեցին աւելի սիրալիր ու բարեկամական լինել: Հայերի այն հարցումներին, թէ՝ ինչո՞ւ իրենց նկատմամբ վատթարացել է կեցուածքը, թուրքերը պնդեցին որ հայերը սխալ են, քանի որ իրենք հայերին համարում են ամենից օրինապահ ու հաւատարիմ քաղաքացիները: Միաժամանակ հայերի առաջ դրուեց հրէշաւոր առաջադրանք: Կայսրութեան մէջ ապրող հայերին առաջարկեցին արտերկրի բոլոր օճախներում, եւ մանաւանդ դաշնակիցների ու նրանց ենթակայ երկրներում ապրող հայերին պարտադրել օսմանական լրտեսներ ու գործակալներ դառնալ: Հայերին յուշեցին որ այդ պարագային իրենք զերծ կը լինեն բոլոր տեսակի հետապնդումներից ու հալածանքներից, եւ կը նկատուեն հաւասարազօր քաղաքացիներ: Ընդունել առաջարկութիւնը կը նշանակէր աշխարհով մէկ վտանգել ողջ հայութեան գոյութիւնը, մանաւանդ բացառուած չէր այն հաւանականութիւնը, որ թուրքերը «հայ գործակալների» ցուցակները չեն յանձնի համապատասխան երկրների: Մերժել առաջադրանքը, կը նշանակէր վտանգել Օսմանեան Կայսրութեան սահմաններում ապրող հայութիւնը: Օսմանեան Կայսրութեան սահմաններում ապրող հայութեան ղեկավարութիւնը պատասխանեց որ իրենք չեն կարող պատասխանատուութիւն վերցնել ամբողջ հայութեան անունից: Իրենք հաւատարիմ կը մնան օսմանեան դրօշին եւ իրենց ըստանձնած քաղաքացիական պարտականութիւններին: Միւս երկրի հայերը, պնդեցին նրանք, մեծ հաւանականութեամբ, կը վարուեն նոյն ձեւով: Ինչպէս պնդում է Զըրչիլ, հայերը պահեցին իրենց խոստումը: Հայերի այսպիսի ազնիւ կեցուածքը դաշնակիցներին փրկեց շատ փորձանքներից ու մեծապէս նպաստեց նրանց յաղթանակին: Բայց հայերի ասպետութիւնը ըստ արժանւոյն չգնահատուեց դաշնակիցների կողմից:

Դ. Երիտթուրքերի «Միութիւն եւ Առաջադիմութիւն» խմբակի համար պատերազմը նկատւում էր մի միջոց իր բոլոր հիմնական հարցերը (ըստ որում ազգային ազատագրական պայքարը խեղդելու, հայկական տարածքները հայաթափելու, կայսրութեան փառքը վերականգնելու, ռուսական վտանգից եւ անգլիական ճնշումից ազատուելու) լուծելու համար: Այս պատճառով էլ նա նախընտրեց դաշնակցիլ ոչ թէ անգլիական-ֆրանսական-ռուսական, այլ՝ գերմանական-աւստրիա-հունգարական ճակատի հետ: Այս շրջադարձը շատեր անակնկալ նկատեցին: Ուրիշներ գտան որ դա նպաստեց Օսմանեան Կայսրութեան անկման: Բոլոր դէպքերում, անվիճելի է որ թուրքերը պատերազմի ժամանակ կարողացան հայաթափել հայկական տարածքները եւ մնալ անպատիժ: Վերջինս նրանք համարում են Առաջին Աշխարհամարտից իրենց ձեռք բերած խիստ սուղ հիմնական ու միակ օգուտը: Դժուար է նրանց հրաժարուել դրանից:

ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾԱԴՐՈՒՄԸ

Ուշագրաւ է այն փաստը, որ գերմանացիներն ու Թուրքերը իրենց «նորարական» ու «դաժան» զէնքերը, պատերազմական ծրագրերը գործի դրեցին մօտաւորապէս նոյն ժամանակաշրջանում՝ 1915 Թ. սկիզբներից: Օդից Թեթեւ հսկայ օդանաւերը՝ ցեպլինները, երեւացին Անգլիայի օդում՝ սարսափ պատճառելով կղզու բնակչութեան: Ապա՝ Գերմանիան յայտարարեց որ ռազմական գօտի է ստեղծում Անգլիայի շուրջ՝ իրեն իրաւունք վերապահելով կործանել հակառակորդի առեւտրական նաւերը: «Լուսիտանիա» նաւը խորտակուեց: Պատմութեան մէջ առաջին անգամ լինելով պելճիական ճակատում գերմանացիները օգտագործեցին թունաւոր կազը որպէս զէնք: Նոյն ժամանակահատուածում Երիտթուրքերը գործի դրեցին Հայերի Ցեղասպանութեան ծրագիրը, որի մշակումը սկսուել էր 1910 թուականից: Այն ծրագրուած էր անցկացնել երեք աստիճաններով: Նախ բանակ կանչուեցին զէնք կրելու ունակ բոլոր տղամարդիկ: Հայերը հիմնականում պահեցին օսմանեան դրօշին հաւատարիմ մնալու իրենց խոստումը: Բայց դա միայն արտաքնապէս զօրահաւաք էր: Դրա նպատակը հայ բնակչութիւնը իր պաշտպանողական ու մարտունակ ուժից զրկել էր: Դրա համար էլ հայ բանակայիններին առանձնացրին զինջոկատներում, եւ պարտադրեցին փորել իրենց գերեզմանները: Այդպիսով, ջարդուեց հայ երիտասարդութիւնը: Հասկանալի է որ թրքական նման վարքագիծը հայ բանակայինների մօտ պիտի առաջացնէր փախչելու ուժեղ միտումներ: Հայ երիտասարդները հարկադրուած ապաստանեցան լեռները, միացան դաշնակիցների բանակին կամ դիմեցին զէնքի: Թուրքերը, անամօթաբար, փորձում են դա ներկայացնել որպէս դասալքում, դաւաճանութիւն:

Տարբեր պատրուակների տակ ոստիկանական կեդրոններ հաւաքեցին հայ ղեկավարութիւնը՝ եկեղեցականներին, մտաւորականներին, քաղաքական, մշակութային, կրթական ու առողջապահական գործիչներին, առեւտրականներին, արդիւնաբերողներին, եւ այնտեղից նրանց քշեցին անապատները՝ դաժանօրէն սպաննելու: Շատ քչերը կարողացան ազատուիլ: Այսպիսով, հայութիւնը զրկուեց իր ղեկավարութիւնից[1]:

Մնացին մանուկները, կանայք, ծերերը ու հիւանդներ: Այդ անպաշտպանների բռնագաղթն ու ջարդը համեմատաբար հեշտ էր, բայց խիստ բարբարոսական:

Հայերի բռնագաղթն ու ջարդը նախատեսուած էր աւարտել հնարաւորին չափ շուտ՝ աշխարհը փաստի առաջ դնելու, Ցեղասպանութեան մասին տեղեկութիւնները հսկողութեան տակ պահել կարողանալու եւ ուշադրութիւնը բուն պատերազմի հարցերի վրայ կեդրոնացնելու համար: Բայց այդ մտադրութիւնը հնարաւոր չեղաւ իրականացնել եւ Հայերի Ցեղասպանութեան ընթացքը տեւեց մինչեւ պատերազմի վերջը ու չստացաւ ամբողջական բնոյթ: Թուրքերն իրենց ծրագիրը չկարողացան լրիւ գործադրել: Դրա պատճառների մէջ կարելի է առանձնացնել.

ա. Որոշ նահանգապետերի, քաղաքապետերի, գիւղապետերի, զինուորական ղեկավարների ու բնակիչների ընդվզումը, նման անմարդկային հրաման գործադրելու անհամաձայնութիւնը: Կառավարութիւնը ստիպուած եղաւ բազմիցս յիշեցնելու նրանց որ հրամանները պէտք է գործադրուեն անտեսելով խիղճը եւ մարդկայնութեան սկզբունքները: Մարդկային վարք ցուցաբերողներին կամ պաշտօնից հեռացրին եւ կամ էլ սպաննեցին: Այս նոյնը արեցին հիթլէրականները 1941-1946 թթ.:

բ. Օսմանեան Կայսրութեան ու նրա ենթակառոյցների, ըստ որի բանակի ու ոստիկանութեան անկազմակերպուածութիւնը, հաղորդակցման միջոցների վատ աշխատանքը:

գ. Որոշ տեղերում նկատուեց որ հայերի զանգուածային բռնագաղթը եւ զանգուածային ջարդը խիստ բացասաբար է անդրադառնում արտադրութեան ու բանակի մատակարարման վրայ: Ստիպուած եղան որոշ վայրերում կանգնեցնել կամ յետաձգել հայերի տեղահանութիւնն ու կոտորածը:

դ. Մարդկային ուժի պակասը: Շատ պաշտօնեաներ չէին ցանկանում կամ կարողանում աշխատել այն վայրերում, որտեղից տարուում էին հայերը:

ե. Շատ թուրքեր եւ քրտեր փախցնում էին հայ մանուկներին՝ որդեգրելու նպատակով, հայ կանանց ու աղջիկներին՝ իրենց հարեմի կամ կնութեան համար: Նրանք խիստ կարիք ունէին բանուորական ուժի, եւ հայերին փախցնում էին ձրի աշխատացնելու համար: Պատերազմից յետոյ դրանց զգալի մասը միացան մնացորդացին:

զ. Զգալի նշանակութիւն ունեցաւ հայերի ինքնապաշտպանական պայքարը այնտեղ, որտեղ այն հնարաւոր դարձաւ (Վան, Մուսա

1. Henry Morgenthau, *The Murder of a Nation*, published by A.G.B.U., 1974.

Լեռ, նշելու համար խոշորագոյնները): Բայց դժբախտաբար հայերը չունէին անհրաժեշտ քանակութեան զինամթերք ու պահեստի սննդամթերք, որ կարողանային լայնածաւալ պայքար մղել:

Օսմանեան իշխանութիւնները ամէն կերպ աշխատեցին իրենց ոճիրը գաղտնի պահել: Մասնաւորապէս նրանք չէին ցանկանում որ լուրը Եւրոպա հասնի: Այդ նոյնպէս նրանց չյաջողուեց: Դեսպանատների, հիւպատոսարանների, գաղտնի սպասարկութիւնների եւ գերմանացի ու զուիցերիացի միսիոնարների եւ բժշկական աշխատողների միջոցով Հայերի Ցեղասպանութեան փոթը տարածուեց աշխարհով մէկ: Ողջ աշխարհի մամուլը՝ ինչպէս Եւրոպայում ու Ասիայում, այնպէս էլ հեռաւոր Ամերիկայում, Աւստրալիայում ու Ափրիկէում, օրը օրին տեղեկութիւններ էր հրապարակում՝ դատապարտելով Թուրքերին: 1915 թ. Մայիսին դաշնակիցները պաշտօնական վերջնագիր ներկայացրին թուրքական կառավարութեան, որտեղ Հայերի Ցեղասպանութեան պատասխանատուն համարում էին օսմանեան իշխանութիւնները, խիստ կերպով դատապարտում էին Հայերի Ցեղասպանութիւնը, պահանջում էին այն անմիջապէս դադարեցնել: Ընդգծուում էր որ պատերազմից յետոյ պատասխանատուները խստօրէն պիտի պատժուեն: Օսմանեան Կայսրութեան Արժանթինի մէջ առաջին դեսպանը՝ Երիտթուրքական շարժման հիմնադիրներից Էմիր Էմին Արսլանը, Պուէնոս Այրէսում հրապարակուող "La Nota" հանդէսի Օգոստոսի համարում տպագրեց խիստ ուշագրաւ մի յօդուած, որտեղ իր կառավարութիւնը մեղադրում էր Հայերի Ցեղասպանութեան մէջ, մարդկութեան նկատմամբ բարբարոսական ոճիրի մէջ, ընդգծում էր «Միութիւն եւ Առաջադիմութիւն» խմբակի եւ Սուլթան Համիտի գաղափարախօսութեան ու քաղաքականութեան ընդհանրութիւնը, դատապարտում գերմանացիների հաշտարարական անտարբերութիւնը: Նա այդ օրերի թուրքական իշխանութիւնը համարում էր չարիք բոլորի համար: Հռոմի Պապ Պենեդիկտէ ԺԵ., 10 Սեպտեմբերի, 1915 թ., Սուլթան Մուհամետ Ե.-ին հասցէագրած նամակում ընդգծելով հայ ժողովրդի բոլոր խաւերի նկատմամբ գործադրուած տառապալից ձեռնարկումները առաջարկում է երկրի ներսում հաստատել խաղաղութիւն ու համերաշխութիւն: Շուտով, 1917 թ., Մեքքէի շերիֆ Էմիր Հիւսէյն Պըն Ալին հրապարակեց իր բանադրագիրը, որտեղ Հայերի Ցեղասպանութիւնը համարում էր իսլամի ուսմունքին անյարիր:

Լոզանի դաշնագիրը (1923 թ.) վնասազերծեց Հայերի Ցեղասպանութեան մեղադրանքին ինքնատիպ ներման վահանով[1]:

1. Telford Taylor, *The Anatomy of the Nuremberg Trials, A Personal Memoire*, Alfred A. Knopt, N.Y. 1992, p. 18.

ԳԼՈՒԽ Ե.

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱՂԲԻՒՐՆԵՐԸ ԸՆԴԴԷՄ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՈՒՐԱՅՄԱՆ

Թուրք պատմագրութիւնը եւ պետութիւնը ամէն կերպ աշխատում են հերքել Հայոց Ցեղասպանութեան փաստը: Նրանք միայն ընդունում են հայերի «բռնագաղթը», «տեղահանութիւնը»: Ներկայացուած հաւաստի փաստերը նրանք մերժում են տարբեր պատճառաբանութիւններով: Հայկական աղբիւրները համարում են հնարովի, հայերի ազատագրական պայքարի գաղափարախօսների ու ղեկավարների կողմից շրջանառութեան մէջ դրուած եւ հակաօսմանեան տրամադրութիւններ հրահրող փաստաթղթեր: Ռուսականը հաւաստի չեն համարում, քանի որ թուրքերը կարծում են որ այն ստեղծուել է ռուս-հայկական դաշինքը ուժեղացնելու եւ Օսմանեան Կայսրութեան դէմ ուղղելու նպատակով: Անգլիացիները եւ ֆրանսացիները, պնդում են թուրքերը, Օսմանեան Կայսրութեան ազգային փոքրամասնութիւնները հրահրել են, որպէսզի նրանց բողոքները պատրուակ օգտագործելով կարողանան միջամտել երկրի ներքին գործերին: Պատերազմի ժամանակ անգլիացիները եւ ֆրանսացիները, պնդում են նրանք, յօրինել են Հայերի Ցեղասպանութեան «առասպելը», որպէս հակաթուրքական քարոզչութեան միջոց, միջազգային հանրային կարծիքը Օսմանեան Կայսրութեան դէմ ուղղելու համար: Թուրքերի կարծիքով, անգլիացիների ազդեցութեան տակ են ընկել ամերիկացիները, թէեւ ակնյայտ փաստ է որ Ա.Մ. Նահանգները պատերազմ յայտարարեց միայն Գերմանիայի ու Աւստրո-Հունգարիայի դէմ: Թուրքիան, որ վերջիններին դաշնակից էր, Ա.Մ. Նահանգների կողմից թշնամի պետութիւն չհռչակուեց: Եւ վերջապէս, թուրքերը փորձում են նաեւ թերագնահատել 1918-1921 թուականների ընթացքում Թրքական երեսփոխանական ժողովի նիստերում երեսփոխանների արած քննադատական արտայայտութիւնները եւ այդ տարիների Թրքական ռազմական ատեանի քննութեան արդիւնքները: Այդ ընթացքում Օսմանեան Կայսրութեան եւ Իթթիհատական վերնախաւի բազմաթիւ ներկայացուցիչներ խոստովանել էին գործադրուած սարսափելի ոճիրը՝ Հա-

յասպանութիւնը: Թուրքերը այդ բոլորը ուզում են ներկայացնել որպէս պարտութիւնից յետոյ Թուրքիայում տիրող ստորաքարշական ու յուսահատուածութեան հոգեբանութեան արդիւնք: Այդպիսով, փաստօրէն, նրանք տալիս են Թուրք կառավարութեան ղեկավարների եւ Իթթիհատական կուսակցութեան անդամների բարոյական բնութագիրը:

Այս բոլորը նկատի ունենալով, աշխատենք Թուրքիայի կառավարութիւնների գործադրած հայասպան քաղաքականութիւնը բնութագրել ըստ Թուրքիայի դաշնակից Գերմանիայի դիւանագէտների, զինուորական գործիչների, պատմաբանների ու գրողների տուեալների, եւ ըստ Օսմանեան Կայսրութեան դաշնակից գերմանացիների եւ Աւստրո-Հունգարիայի դեսպանների ու հիւպատոսների պաշտօնական տեղեկագրերի, որոնք այսօր պահւում են Դաշնակցային Գերմանիայի արխիւներում: Մենք աշխատում ենք առաւելաբար յենուել այն փաստաթղթերի վրայ, որոնք ստեղծուել են պատերազմի ընթացքում եւ ազատ են մնացել Թուրքերի ու նրանց բարեկամների զեղծումներից:

Գերմանիան եւ Օսմանեան Կայսրութիւնը դաշնակիցներ էին Ա. Համաշխարհային Պատերազմի ընթացքում: Բայց, ինչպէս յաճախ պատահում է, այդպիսի դաշնակցութեան ժամանակ, կողմերը ոչ միայն իրար չեն վստահել, այլեւ աշխատել են իրար վրայ թղթածրարներ ստեղծել: Գերմանական կառավարութիւնը ցանկացել է իմանալ իրողութիւնը՝ Թուրքիայում տեղի ունեցող իրադարձութիւնների ճշգրիտ պատկերը: Դա իրեն անհրաժեշտ էր ե՛ւ ռազմական, ե՛ւ քաղաքական, ե՛ւ բարոյա-իրաւական եւ քարոզչական առումներով: Հայերի տեղահանութիւնն ու ջարդը, ոչ միայն բանակը զրկում էր հարիւր հազարաւոր մարտունակ զինուորներից, ոչ միայն երկրի գիւղատնտեսութիւնն ու արդիւնաբերութիւնը զրկում էր իր հմուտ եւ բանիմաց աշխատող ձեռքերից, ոչ միայն վատացնում էր բանակի մարտունակութիւնը եւ լրացուցիչ դժուարութիւններ ստեղծում բանակի ազատ տեղաշարժերը ապահովելու գործում, այլեւ սրում էր կայսրութեան մէջ ապրող ժողովուրդների յարաբերութիւնները, բացասաբար էր անդրադառնում զինուորի բարոյա-կամային մակարդակի վրայ, խլում էր ահագին միջոցներ եւ նպաստում կողոպուտի, թալանի ու դասալքութեան արմատաւորման: Գերմանիան միաժամանակ գիտէր որ Իթթիհատական կառավարութեան ամենազգայուն եւ ամենաթոյլ կողմը՝ տարբեր հպատակ ժողովուրդների հետ ունեցած իր յարաբերութիւնն էր, Թուրքիայի հակահայ, հակայոյն, հակապուլկար, հակաարաբ, հակաքիւրտ քաղաքականութիւնն էր: Դրանից միշտ օգտուել էր Եւրոպան: Դաշնակից Գերմանիան մտադիր չէր հրաժարուելու այդ ստուգուած օգուտի աղբիւրից: Նրանք մտադիր էին իրենց յաղթութեան պարագային այդ փաստերը օգտագործել աւարը բաժնելու ժամանակ: Վերոյիշեալ պատճառներից ելնելով, կայսրութեան տարածքում գերմանացի դեսպանները հրահանգուած էին Պերլին տեղեկացնել Հայերի Ցեղասպանութեան առարկայական պատկերը: «Երբ ես կազմում էի սոյն տեղեկագիրը (որ հասցէագրուած էր Պոլսի գերմանական դեսպանութեան – Գ.Խ.) Հալէպի Գերմանիայի հիւպատոսը ներկայացրեց Ալեքսանտրէթի իր գործակցին՝ հիւպատոս Հոֆմանին: Հիւպատոս Հոֆմանը ինձ տեղեկացրեց որ [Պոլսի] գերմանական դեսպանութիւնը Ալեքսանտրէթի, Հալէպի եւ Մուսուլի հիւպատոսարանների կողմից մանրամասնօրէն իրազեկ է պահուել երկրի ներքին գաւառներում տեղի ունեցածի մասին: Նա ինձ ասաց որ անձամբ իմ տեսածի մասին տեղեկատուութիւնը պիտի ողջունուի որպէս լրացուցիչ եւ մանրամասնութիւններով տրուած նկարագրութիւն: Հիւպատոս Հոֆմանը խնդրեց որ ես դրան կցեմ խանում (այն քերւան-սարայը որտեղ զետեղուած էր գերմանական տեխնիկական ուսումնարանը – Գ.Խ.) իր նկարած պատկերները, որոնք պատկերում էին դիակների կոյտեր, որոնց մէջ երեւում էին սողացող երեխաներ»[1]:

Շատ գերմանացիների խղճի վրայ նստած էր նաեւ մի չատ ծանր բեռ: Նրանք, այս կամ այն ձեւով, իրենց համարում էին ուղղակի կամ անուղղակի մեղսակից հայերի նկատմամբ կիրառուած Ցեղասպանութեան համար: Այդ միտքը պարզ արտայայտում է ականաւոր թրքագէտ-պատմաբան եւ թղթակից Հերպերտ Կիպընգը: Նա գտնում է որ քանի Գերմանիան հրաժարուեց ջարդերի ընթացքում հանդէս գալ որպէս հայերի պաշտպան, նա դառնում է գործի մասնակից: Նա բերում է դէպքեր, երբ գերմանացի սպաները հրամայել են գնդակոծել հայերին: Մի այլ դէպքում նա գրում է. «Հայրենասէր գերմանացի մի կին 14 Յունիսի, 1915 թ. Մարաշից գրում է "Sonnenaufgang" թերթին (Deutscher Hilsbund Christliches Lieberswerk im Orient) կազմակերպութեան պաշտօնաթերթին). Եթէ կարողանայինք գրել այն բոլորը, որ մենք տեսնում ենք: Փոքր Ասիայի գերմանացի միսիոնարները այնքան են սարսափահար, այնքան են զայրացած ու համակրալից են, ինչքան այլ ազգերի միսիոնարները: Ես կասկած չունեմ որ այսօր կան միլիոնաւոր գերմանացիներ, որոնք եթէ հնարաւորութիւնը ունենային ճշմարտութեան հասու լինելու, պիտի դառնօրէն բողոքէին իրենց կառավարութեան հայ ազգի ոչնչացման դէմ, նրանք պիտի խնդրագիր ներկայացնէին իրենց կառավարութեան, որպէսզի Աստուծոյ անունից մի բան անեն, որպէսզի կանխեն Գերմանիայի խարանումը պատմութեան մէջ որպէս մասնակից այն սարսափելի ոճրագործութիւնների, որոնք գործադրուում են Օսմանեան Կայսրութեան մէջ»[2]:

1. Dr. Martin Niepage, *The Horrors of Aleppo*, London, R. Fisher Urwin Ltd., 1918, p. 9.
2. Dr. Herbert Adams Gibons, *The Blackest Page of Modern History*, N.Y., G.P. Putnam's Sons, 1916, Tankian Publishing Corp., 1975, p. 36-37}.

Խիստ տպաւորիչ է Հալէպի գերմանական տեխնիկական ուսումնական հաստատութեան դասախօս Դոկտ. Նիեպագ Մարտինի դիմումը իր կառավարութեան: Նա շեշտում է որ ինքը այն գրում է իր խղճի պարտադրութեամբ, եւ ընդգծում որ իրենց հաստատութեան շրջապատում տեղի ունեցող ոճիրների ու անմարդկային արարքների, հայերի ոչնչացման պայմաններում, իրենց դաստիարակչական գործունէութիւնը հակադրւում է իրաւ բարոյականութեան եւ վերածւում է մարդկային կարեկցանքի ծաղրանքի[1]: Իսկ Հալէպի երկարամեայ հիւպատոս Դոկտ. Վալտէր Ռոսլերը բազմիցս միջնորդել է վերադասի ու Պերլինի առաջ, որ գերմանացի զինուորականութիւնը հեռու մնայ այն Հայասպանութիւնից, Ցեղասպանութիւնից, որ Թուրքիան գործադրում է իր հպատակ հայերի նկատմամբ: Նա բողոքել է նաեւ այն հրամանատարների դէմ, որոնք գործակցում էին Թուրք ջարդարարների հետ: Նա հրաժարուել է ենթարկուել նրանց կարգադրութիւններին[2]: Գերմանական եւ այլ աղբիւրներից հայերի մասին հաւաստի տեղեկութիւններ հաւաքող Ճ. Քելիհերը անում է հետեւեալ դիտարկումը. «Հայաստանում (նկատի ունի Պատմական Հայաստանը. այդ բառի օգտագործումը արգիլուած էր Օսմանեան Կայսրութիւնում – Գ.Խ.) գտնուող գերմանացիները այնքան լցուած են ցասումով եւ այնքան անձկանօք են, ինչքան այս երկրի Հայ Դատի ամենից եռանդուն բարեկամները, որ տեսնեն Թուրքական կառավարութեան կողմից կիրառուած հայերի ոչնչացման մեթոդների կասեցումը[3]: Գերմանիայի անտարբերութիւնը ջարդերի նկատմամբ ամօթաբեր սեւ բիծ են համարում նաեւ Գոնիայում աշխատող գերմանացիները: 1915 թ. Օգոստոսի 16-ին, իրենց դեսպանին գրած նամակում նրանք շեշտում են. «Բոլոր ձեռնարկումները, ըստ երեւոյթին, տանում են հայերի ոչնչացմանը: Այս անմարդկային վերաբերմունքը անջնջելի սեւ բիծ է համաշխարհային պատմութեան մէջ ոչ միայն Թուրքերի, այլեւ մեզ՝ գերմանացիներիս համար, եթէ մենք այն դիտենք ձեռներս ծալած՝ թոյլ տանք այդ ժողովուրդի բնաջնջումը»[4]: Եւ իսկապէս, նրանք հանգիստ նայեցին ձեռքերը ծալած: Այդ խիստ վրդովեցրեց նաեւ Գերմանիայի բանուորներին, գերմանացի յեղափոխականներին: 1916 թ. Յուլիսին Գարլ Լիբկնեխտը յայտարարեց. «Գերմանիան, Թուրքիայի դաշնակիցը, իր ձեռքերը արիւնոտել է հայերի արիւնով եւ այս պատերազմի ընթացքում անչափ մեծացրել իր մեղքերը՝ դաժանագոյն կոտորածի ենթարկելով դժբախտ հայ ժողովուրդը»[1]: Այսպիսով, ձգտելով իրենց սահմանազատել ցեղասպան Թուրքի հայասպանական գործունէութիւնից, տարբեր ասպարէզի գերմանացիներ հաստատում են նաեւ Թուրքիայի ցեղասպանական քաղաքականութեան իրողութիւնը:

Ինչպէս յայտնի է, Մուսուլը, եւ յատկապէս Հալէպը այն քաղաքներն էին, որտեղից կազմակերպւում էին Փոքր Ասիայի հայաբնակ վայրերից բռնագաղթուած հայերի զանգուածային ուղեւորութիւնը դէպի անապատ, դէպի Տէր Զօր, դէպի մահ: Այդ շրջանում գործող գերմանացի դեսպանները ականատես էին բռնագաղթի ու ջարդի դաժան իրողութեան: Այդ քաղաքի գերմանացի հիւպատոսներն ու աշխատողները տեսնում էին, թէ՝ ինչպէս հարիւր հազարաւոր տեղահանուած հայեր ամենաթշուառ ու կիսամեռ վիճակում կեդրոնացւում էին այդ քաղաքներում, եւ ապա ուղարկւում անապատներն ու չոլերը: Ընբանց ունեցած ու հաղորդած տեղեկութիւնների խորքային իմաստը շատ մեծ էր կատարուածի էութիւնը հասկանալու համար: Ինչպէս տեղեկացնում է ականաւոր գիտնական ու մարդասէր Ֆրիտիոֆ Նանսէնը, Սվազից եւ Խարբերդից բռնագաղթուած 18,000 հայերից միայն 350 հասել են Հալէպ, իսկ Էրզրումից բռնագաղթուած 19,000-ից միայն 11-ն հասել այդ քաղաքը[2]: Իսկ ֆրանսացի գիտնական Ժաք Տը Մորկանը տեղեկացնում է որ Բարձր Հայքից դուրս բերուած երկու հազար հայերից միայն վեցն է հասել Հալէպ: Այն տուեալները անվիճելիօրէն ապացուցում են որ տեղահանութիւնը փաստօրէն հայ ազգի բնաջնջում է:

Թուրքերի դաշնակից Գերմանիայի Հալէպի հիւպատոս Վալտեր Ռոզլերը կարդալով հայերի ջարդերի իրողութիւնը ժխտող թրքական պաշտօնական փաստաթղթերը, 27 Յուլիսի, 1915 թ., իր կառավարութեան յղած տեղեկագրում գրում է. «Իսկապէս ես չհաւատացի իմ աչքերին, երբ կարդացի ուրացման յայտարարութիւնը: Ես արտայայտութիւններ չեմ գտնում բնութագրելու համար դժոխային ստախօսութիւնը»[3]: Ամիս ու կէս յետոյ, 3 Սեպտեմբերի, 1915 թ., Աւստրիայի դեսպանը նոյն հարցի կապակցութեամբ իր կառավարութեան իր կարծիքը տեղեկացնելով, շեշտում է որ Թալէաթն ու ընկերները «թոզ են փչում մեր աչքերին»: Հինգ օր անց, իր հաղորդագրութեան մէջ նա Թալէա-

1. Dr. Martin Niepage, *The Horrors of Aleppo*, p. 7.
2. Dr. Vahakn N. Dadrian, *German Responsibility in the Armenian Genocide, A Review of the Historical Evidence of German Complicity*, Watertown, Mass, Blue Crane Books, 1996, pp. 16, 58, 73, 119, 156, 209.
3. J.J. Keliher, *Germany, Turkey and Armenia*, London, J.J. Keliher & Co. Ltd., 1917, p. 2.
4. Johannes Lepsius, *Deutschland und Armenien*, 134-135. Վերցուած՝ «Հայերի Ցեղասպանութիւնը Օսմանեան Կայսրութիւնում», 1991, էջ 360-361:

1. Գարլ Լիբնեխտ, *Ճառերի, Նամակների եւ Ցօդուածների Ժողովածու*, Մոսկուա, 1961, էջ 334 (ռուսերէն):
2. F. Nansen, *Armenia and the East*, London, George Allen & Unwin Ltd. 1928, p. 305.
3. A B. Turkei 183/39, A23991, July 27, 1915, V.A. Dadrian, *German Responsibility in the Armenian Genocide*, "A Review of the Historical Evidence of German Complicity", Blue Crane Books, Watertown, Ma, 1996, p. 73, 104.

թին ու ընկերներին բնութագրում է որպէս երկդիմի, երկու լարի վրայ խաղացող մարդիկ: «Նրա մի դէմքին ջարդարարութիւնն է, իսկ միւսին՝ եղբայրութեան ու հաւասարութեան քարոզը: Մէկ երեսով թուրքերը ջարդում են հարիւր հազարաւոր հայեր, իսկ միւսով՝ ուրանում այն»: 10 Սեպտեմբերի, 1915 թ., Մուսուլի գերման հիւպատոս Հոլշտէյնը՝ Իթթիհատական կառավարութեան ուրացումը անուանում է «աղաղակող սուտեր»: Նոյն օրը Ատանայի գերման հիւպատոսը՝ Բիւզը, այդ մասին իր կառավարութեանն է յայտնում որ ջարդերի գոյութեան հերքումը Իթթիհատականների կողմից անամօթ խաբէութիւն է: Իր մահից մի շաբաթ առաջ, 15 Հոկտեմբերի, 1915 թ., Գերմանիայի դեսպանը՝ Պարոն Հանս Վոն Վանգենհէյմը խորհուրդ էր տալիս Իթթիհատականների կողմից ջարդերի ուրացումը համարել դրանց իրողութիւնը հաստատող մի լրացուցիչ փաստ, իսկ հերքումը՝ պարզապէս դիմակ: Իսկ Մեթերնիխը, Գերմանիայի նոր դեսպանը, 7 Դեկտեմբերի, 1915-ին, Պերլին տեղեկագրել է որ հայերի ջարդերի վերաբերեալ օսմանեան կառավարութեանն ուղղուած բողոքագրերը անօգուտ են, իսկ թրքական ուրացումները՝ անարժէք[1]:

Իր հերթին, գերմանական կառավարութիւնը 4 Յուլիսի, 1915 թ. եւ 9 Օգոստոսին, թուրքական կառավարութեան յղած բողոքագրերում նրբօրէն կշտամբում էր նրան՝ հայերի բռնագաղթերի ընթացքում նրանց նկատմամբ իր գործ դրած ջարդերի, բռնաբարութիւնների, առեւանգումների եւ աւերածութիւնների համար: Բողոքագրերում Թուրքիան նախազգուշացւում էր այդ արարքների յետագայ խիստ բացասական ազդեցութիւնների նկատմամբ, ինչպէս տնտեսական ու քաղաքական ասպարէզում, նոյնպէս միջազգային յարաբերութիւններում: Յետագայում գերմանացի տարբեր դեսպաններ ու հիւպատոսներ նոյն ոգով զգուշացրել են բարձրաստիճան թուրք պաշտօնատարների: Այդ գրութիւններում գերմանացի դիւանագէտները մտահոգութիւն են յայտնել որ թուրքերի նման արարքների պայմաններում հանրային կարծիքը անհիմն կերպով Գերմանիային մեղսակից է համարում: 22 Դեկտեմբերի, 1915 թ. պատասխանում, թուրքական կառավարութիւնը պնդում է որ հակահայկական միջոցառումները թելադրուած են զինուորական թելադրանքներով եւ պաշտպանական օրինաւոր միջոցներ են: Միաժամանակ այդ միջոցառումները թուրքական կառավարութիւնը նկատում է ներքին վարչական բնոյթի: Այդ նկատի ունենալով, Հալէպի հիւպատոս Ռոսլերը գտնում է որ գերմանացի զինուորականութիւնը պէտք չէ այդ գործի մէջ ընդգրկուի: Այս եզրակացութեան է

1. V. Dadrian, *The Naim-Andonian Documents on the WWI Destruction of Ottoman Armenians: The Anatomy of a Genocide*, "International Journal of Middle East Studies", Cambridge University Press, Vol. 18, No. 3, August 1986, p. 327, 349.

գալիս Դոկտ. Վահագն Տատրեանը գերմանական դիւանների թղթածրարները ուսումնասիրելուց յետոյ[1]:

Ռիխթըր Շէօպները, Էրզրումի փոխ հիւպատոսը, իր վերադասին հաղորդում է որ ինքը անձամբ այցելել է բռնագաղթուածների հաւաքատեղին, որտեղ հաւաքուածները բացառապէս եղել են խղճալի վիճակում գտնուող կանայք ու երեխաներ, որոնք իրենց նետել են իր ձիու առաջ՝ օգնութիւն աղերսելով: Նա շեշտել է այն միտքը, որ բռնագաղթուածների մէջ չեն եղել տղամարդիկ, քանի որ նրանք նախօրօք զինակոչուել են եւ գնդակահարուել ճանապարհաշինարարական աշխատանքներ կատարելիս: Հետեւաբար, հակադրուելով թուրքական բացատրութիւններին ու դրանց հաւատացող գերմանացի իր վերադասին, փոխ հիւպատոսը եզրակացնում է որ անհիմն է կարծել, որ այդպիսի մարդիկ կարող են ըմբոստանալ կառավարութեան դէմ: Գեներալ Ֆրից Բրոնսարդը դեսպան Վանկենհայմին կարգադրում է որ հիւպատոսները այլեւս նման բովանդակութեամբ տեղեկագրեր չներկայացնեն: Իսկ երբ Շէօպները հանդիպում է օսմանեան Երրորդ Բանակի գլխաւոր հրամանատար գեներալ Մահմուտ Քամիլին, վերջինս փոխ հիւպատոսին յայտնում է որ իրենք չեն կարող երաշխաւորել նրա կեանքի ապահովութիւնը չրջանում[2]:

Որոշ գերմանացի պաշտօնատարներ անհիմն են համարում նաեւ Իթթիհատական ղեկավարութեան այն տեսակէտը, որ իբր Վանի ապստամբութիւնը ստիպեց թուրքական իշխանութիւններին ձեռնարկել հայերի բռնագաղթն ու ոչնչացումը: Գերմանացի դիւաններից Ճ.Ճ. Քեհլերի հաւաքած փաստաթղթերից մէկում կարդում ենք. «1914 թ. Նոյեմբերից մենք արդէն գիտէինք որ ջարդ տեղի պիտի ունենայ: Մուշի Մութասարիֆը, որ Էնվեր Փաշայի մտերիմներից էր, բացայայտ յայտարարել էր որ իրենք պիտի կոտորեն հայերին առաջին իսկ հնարաւորութեան դէպքում: Նրանք մտադրած էին ռուսների գալուց առաջ նախ մորթել հայերին, եւ ապա՝ կռուել ռուսների դէմ[3]: Իսկ Մէյրի Շոֆըրը աւելացնում է. «Մի անգամից հենց որ ռուսները գնացին (Նոյեմբեր 1914-ին) չարամիտ մահմետականները ողջ դաշտով մէկ սկսեցին աւերել քրիստոնեաների գիւղերը»[4]: Պիթլիսի եւ Վանի կոտորածների ականատես Կրէյս Խապը «Պիթլիսի Ողբերգութիւնը» հատորում գրում է. «Վանի ընդհանուր կառավարիչ Ճեվտէթ Պէյը՝ Էնվեր Փաշայի քենեկալը, 19 Ապրիլի, 1915 թ. համար ծրագրել էր իր հայ հպատակնե-

1. V.A. Dadrian, *German Responsibility...*, pp. 81-88.
2. Christoph Dinkel, *German Officers and the Armenian Genocide*, Armenian Review, Spring 1991. V. Dadrian, *German Responsibility in the Armenian Genocide*, pp. 23-25.
3. J.J. Kehler, *Germany, Turkey and Armenia*, p. 28.
4. M. Schoufer, *The War Journal of a Missionary in Persia*, N.Y., 1914, p. 6.

րի ընդհանուր ջարդը: Այդ օրը Թուրք զինուորներն ու քրտերը, որոշ դէպքերում հրանօթներով յարձակուեցին գաւառի փոքր քաղաքների ու գիւղերի վրայ, եւ հանդիպեցին փոքր կամ ոչ մի դիմադրութեան, քանի որ զէնք կրելու ունակ բոլոր մարդիկ զինակոչուել էին Օսմանեան բանակ, իսկ մնացեալը քիչ զինամթերք ունէին»[1]: Այսպիսով, ըստ ականատեսներին, դեռ Վանի ինքնապաշտպանութիւնից շատ առաջ Թուրքական իշխանութիւնը ծրագրել էր վանեցիների կոտորածն ու նրանց զէմ նախապատրաստել սադրանքներ: Նկատենք որ Վանի ինքնապաշտպանութիւնը սկսեց Ապրիլի 20-էն ետք: Պատահական չէ որ աւստրիացի Մարաջախտ Պոմինքուսքին Վանի ինքնապաշտպանութիւնը բնութագրում է որպէս «յուսահատ արարք»: Վանի բնակիչները, գրում է նա, նկատելով որ համընդհանուր ջարդերն սկսել են, հայերը անցան իրենց կեանքի պաշտպանութեան: Տեղին է նշել որ Թուրքական սադրանքներից առաջ հայերը համաձայնել էին չորս հազար լրացուցիչ երիտասարդ տրամադրել նրանց: Բայց նկատելով այդ բոլոր սադրանքները, հրաժարուել են, մի բան, որ անընդհատ յիշեցնում էր Թալէաթը՝ հարցերը շուռ տալով: Ռաֆայէլ տը Նոգալզը, Թուրքական բանակում վարձու սպան, որ ականատես էր դէպքերին, հիացել էր հայերի հերոսութեամբ, բայց ափսոսում էր, որ նրանք լոկ մղել են ինքնապաշտպանական կռիւներ[2]:

Գերմանիայի Պոլսոյ դեսպան Մեթերնիխը, հակադրուելով Գերմանիայի պետական քարտուղարի տեղակալ Արթիւր Ցիմբրմանին, պնդում է որ Թուրքիայում գոյութիւն չի ունեցել կազմակերպուած ըմբոստական շարժում, եւ Էրզրումի ու Վանի շրջանում Թրքական սադրանքները սկսել են Սարիղամիշի զինուորական գործողութիւններից եւ Վանի ինքնապաշտպանութիւնից առաջ: Իսկ տեղական բնոյթի հայկական փոքր ընդվզումները պարզապէս ինքնապաշտպանական բնոյթի են եղել[3]: Այսպիսով, պարզ է դառնում թէ ինչու Էրզրումի նահանգապետ Հասան Թաքսիմը ներքին գործոց նախարար Թալէաթին գրում է որ Էրզրումում հայկական ըմբոստութիւն չառաջացնելու համար պէտք չէ կրկնել Վանում գործադրուած սխալը, այսինքն՝ հանդիստ թողնել էրզրումցիներին եւ չհարկադրել, որ նրանք ըմբոստանան (ինքնապաշտպանութեան դիմեն)[4]:

Երբ 1917-ի Փետրուարին Գերմանիան որոշել էր շքանշաններով պատուել հայասպանութեան երկու մեծ կազմակերպիչներին՝ Դոկտ.

1. Grace Khapp, *The Tragedy of Bitlis*, N.Y., Fleming, H., Revel Co., 1918, p. 15.
2. Rafael de Nogales, *Four Years Beneath the Crescent*, Trans. Muna Lee, N.Y., 1926, p. 60.
3. A.A. Turkei 183/4o, A25749. Doc. No. 567, Sept. 18, 1916, p. 42. Dr. V. Dadrian, *German Responsibility in the Armenian Genocide*, p. 85-87.
4. V. Dadrian, *German Responsibility...*, pp. 84-85.

Պահէտտին Շեքիրին ու Թալէաթ Փաշային, գնդապետ Շտանկը բողոքարկել է՝ նրանց մասին ունեցած իր բացասական տեղեկութիւնների հիման վրայ: Շտանկը, որ որոշ ժամանակ կապուած է եղել «յատուկ ծառայութեան ջոկատների» հետ, 23 Օգոստոսի, 1915 թ., իր ներկայացրած 22 էջանոց «գաղտնի» զեկուցագրում, իր վերադասին տեղեկացնում էր որ պատերազմական անհրաժեշտութեան Թուրքական փաստարկը երկրորդական կարեւորութիւն ունի: Թուրքերի հիմնական նպատակն է օգտուելով պատերազմական դրութիւնից բռնագաղթի ենթարկել հայերին: Նա ընդգծում է որ հայերի բռնագաղթն ու կործանումը ծրագրուած է եղել երկար ժամանակ առաջ՝ Իթթիհատական ղեկավարութեան կողմից, եւ դրա գործադրման ընթացքին անմիջապէս հետեւել են Հիլմին, Շեքիրը, Էրզրումի երեսփոխան Սէյֆուլլան եւ 3-րդ բանակի հրամանատար Քամիլը: Գործողութիւնները իրագործուել են բանակի եւ չեթէների կողմից[1]:

Թուրքական հակահայկական քաղաքականութեան նկատմամբ որդեգրած իրենց դիրքի առումով, գերմանացիների մէջ կարելի է տարբերակել մի քանի խումբ: Մի խումբը գաղափարական ընդհանրութիւն ունէր Իթթիհատական ղեկավարութեան հետ: Ինչպէս գիտենք, գերմանական ռազմական վարդապետութեան մէջ շեշտուած էր՝ «Գերմանիայի տարածքային անբաւարարութեան, սահմանափակուածութեան» ու «աշխարհի բաժանումից իրենց գաղութներ հասած չլինելու» գրոյթները: Այդ հարցը գերմանացիները տրամադիր էին լուծել պատերազմի միջոցով: Նման ռազմական վարդապետութիւն ունէին նաեւ Թուրքերը: Նրանք գտնում էին որ Փոքր Ասիայում չեն կարող միասին ապրել հայերն ու Թուրքերը: Անհրաժեշտ է զանազան եղանակներով հայերին այնտեղից հեռացնել: Միաժամանակ՝ հայերը, եւ մանաւանդ ռուսները խանգարում էին դէպի արեւելք, դէպի «Թուրանական հողերը» կայսրութեան տարածումը: Նրանք գտնում էին որ այդ հարցերը եւս անհրաժեշտ է պատերազմի ճանապարհով լուծել: Ինչպէս գերմանացի ռազմամոլները, այնպէս էլ նրանց Թուրք համախոհները համոզուած էին որ ոյժն է իշխանութեան իրաւական հիմքը: Քանի իշխանութիւնն ու ոյժը իրենց ձեռքում է, իրենք իրաւունք ունեն կատարելու այն՝ ինչ ցանկանում են: Այս պատճառով շատ մարդասէր գերմանացիներ, որոնք դէմ են Թուրքական ռազմական վարդապետութեան, պնդում էին որ Օսմանեան Կայսրութեան մէջ Թուրքերը ոչ քանակական եւ ոչ էլ որակական ոյժ են: Դոկտ. Մարտին Նիեպակը գրում է. «Թուրքերը՝ Թուրքիայում ապրող բոլոր ցեղերից (ազգերից) ամենից քիչ օժտուածները, իրենք լոկ բնակչութեան փոքրամասնութիւն են, քաղաքակրթութեամբ շատ աւելի յետամնաց են, քան՝ արաբները»[2]: Գերմա-

1. V. Dadrian, *German Responsibility...*, p. 60, 64.
2. Dr. Martin Niepage, *The Horrors of Aleppo*, p. 20.

նացիների եւ Իթթիհատականների վարդապետական նման ընդհանրութիւնը միացնում էր նրանց: Սոյն խմբի պատկանող գերմանացիների մի մասը յետագայում միացան ֆաշականութեան ու ծառայեցին Հիթլէրին:

Մի այլ խումբ գերմանացիներ, Իթթիհատականների հետ չունենալով հանդերձ գաղափարական ընդհանրութիւն, յարաբերական չէզոքութիւն էին ցուցաբերում նրանց Հայասպանութեան նկատմամբ՝ ելնելով իրենց հականգլիական, հակաֆրանսական եւ հակառուսական կողմնորոշումից, Առանցքի դաշինքը չթուլացնելու մտահոգութիւնից եւ Թուրքերի հակահայկական քաղաքականութիւնը երկրի ներքին գործ նկատելու կեցուածքից: Նրանցից շատերը յաճախ հանդէս էին գալիս մարդասիրական հակաիթթիհատական առաջարկութիւններով: Նրանց մօտ յաճախ գերիշխել է պատերազմի ժամանակուայ դաշինքը՝ մարդասիրական զգացումների եւ Հայասպանութեան դէմ իրենց մէջ խմորուող դիմադրութեան վրայ[1]: Մի երրորդ խումբ ելնելով մարդասիրական եւ քրիստոնէական համոզումներից, ոչ միայն հակադրւում էին Իթթիհատական հայասպանական քաղաքականութեան, այլեւ զանազան միջոցներով փորձում էին այն կասեցնել: Այդպիսիները շատ դէպքերում վտանգում էին իրենց պաշտօնը, դիրքը եւ կեանքը: Անկասկած, կային նաեւ այնպիսիք, որոնք տատանւում էին այս ուղղութիւնների միջեւ:

Այս կապակցութեամբ ուշագրաւ է երեք գերմանացիների՝ Պարոն Հանս Վոն Վանկենհայմի, Կոմս Փոլ Վոն Ուոլֆ Մեթերնիխի եւ Արմին Թէոֆիլ Վակների կենսագրութիւնը:

Հանս Վանկենհայմը (1859-1915), Գերմանիոյ դեսպանը Պոլսում (1912-1915) գործօն մասնակցութիւն ունեցաւ Թուրքիայի հայկական տարածքներում բարենորոգումների ծրագրի եւ այն գործադրող եւրոպական յանձնաժողովի ու տեսուչների հարցի քննարկման ու այդ կապակցութեամբ ընդունուած որոշումներում: Նա պնդել է նոյնիսկ, որ «Գերմանիան համաձայն կը լինի Բարենորոգումների համաձայնութեան միայն այն չափով, որչափով Թուրքիան կամովին կը համաձայնի»: Այն ժամանակ, երբ Իթթիհատական ղեկավարութիւնը սկսեց դաշնակիցներ որոնել Օսմանեան Կայսրութիւնը կործանումից փրկելու եւ երկրում բարենորոգումներ անցկացնելու համար, Իթթիհատական ղեկավարութեան անգլիամէտ անդամը՝ Ճաւիտը, այդ խնդրանքով դիմեց Անգլիոյ, եւ ստացաւ բացասական պատասխան: Նոյն արդիւնքը գրանցուեց, երբ Ֆրանսամէտ Ճեմալը դիմեց իր բարեկամներին: Էնվերը՝ գերմանամէտ ղեկավարը, նոյնպիսի պատասխան ստացաւ Վանկենհայմից՝ Պոլսոյ Գերմանիայի դեսպանից: Սակայն 24 Յուլիսի, 1914 թ., Կայսր Վիլհելմ Բ. չեղեալ յայտարարեց իր դեսպանի բացասական որոշումը: Կարծիք է եղել, որ Թալէաթն ու Էնվերը գտնուել են Վանկենհայմի ազդեցութեան տակ: «Նա միակ մարդն էր, եւ նրա կառավարութիւնը միակ կառավարութիւնն էր, որ կը կարողանար կանգնեցնել այդ ոճիրները՝ մի ազգի կոտորածը», գրել է Մորկընթաուը[1]:

Երբ հանդիպումներից մէկի ժամանակ Ամերիկայի դեսպան Մորկընթաուը վկայակոչում էր գերմանացի դիւանագէտների միջոցով Թուրքերի կողմից կազմակերպուած հայերի բռնագաղթի ու կոտորածների դէմ ներկայացուած բողոքագրերը, Վանկենհայմի վերաբերմունքում զգացւում էր այն միտքը, որ իրենք անկարող են արդիւնաւոր քայլեր առնել այդ երեւոյթները կասեցնելու համար: Նա բացականչել է. «Ես կ'օգնեմ սիոնիստներին, բայց ոչ հայերին»[2]:

Երբեմն դեսպանը հիւպատոսներից ստացած զեկուցագրերը Պերլին ուղարկելիս դրանց կցել է ուշագրաւ դիտողութիւններ: Այսպէս. իր զեկուցագրերում երբեմն Թուրքերի Հայասպանութիւնը բնութագրելու համար Վանկենհայմը օգտագործել է «սպանդ», «կործանում» արտայայտութիւնները: «Ցստակօրէն բռնագաղթերը չեն բնորոշւում լոկ ռազմական նկատառումներով»: Տիարպեքիրից դէպի Մուսուլ բռնագաղթման ենթակայ հայերը ճանապարհին սպաննուել են: «Թալէաթը ընդունել է նա, շահագործում է պատերազմը երկիրը ներքին թշնամիներից, քրիստոնեաներից ամբողջութեամբ մաքրելու համար, որպէսզի կանխի եւրոպական պետութիւնների կողմից Թուրքիայի ներքին գործերին միջամտելու բոլոր ապագայ հնարաւորութիւնները»[3]: Նշելուց յետոյ որ բռնագաղթերը կատարւում են ռազմական գօտուց շատ հեռու վայրերում, դեսպանը աւելացնում է. «Այս պարագան եւ այլ եղանակներ, որով տեղահանութիւնները կատարւում են, ցոյց են տալիս որ կառավարութիւնը իրօք հետապնդում է հայ ազգը Թուրքիայում արմատախիլ անելու նպատակով»[4]: «Փաստերը եւ դաշնակիցների դիտարկումները, որոնք մեզ հաղորդուել են Լեփսիուսի կողմից, հաստատւում են հիւպատոսական զեկուցագրերի միջոցով: Բռնագաղթի ու տեղահանութիւնների իր քաղաքականութեամբ Թուրքական կառավարութիւնը հայերին ենթարկում է կործանման»[5]: «Բռնագաղթեալները

1. Ultrich Trumpener, *Germany and the Ottoman Empire 1914-1918*, Princeton, N.J., 1968, pp. 200-270; Frank Weber, *Eagles on the Crescent: Austria and the Diplomacy of the Turkish Alliance*, Ithaca, Cornell Univ. Press, 1970, pp. 144-159.

1. Henry Morgenthau, *Ambassador...*, 319.
2. Henry Morgenthau, ibid, p. 308, 310.
3. Turkei 183/27, A 19744, 17 June, 1915, V. Dadrian, *Documentation... German Sources*, p. 99.
4. Turkei 183/37, A 21257, 7 July, 1915, ibid.
5. Turkei 183/37, A 22210, 16 July, 1916, V. Dadrian, ibid.

յանկարծակի յարձակման են ենթարկուում, մորթուում են նոյնիսկ իրենց ուղեկցողների կողմից»[1]: «Ջարդերը գործադրուում են բանտերից արձակուած ոճրագործների կողմից»[2]: «Այս անյաջող ուրացումը տանում է այն եզրակացութեան որ ջարդերը իրօք տեղի են ունեցել եւ որ Թուրքական կառավարութիւնը ապաստանում է ուրացման միջոցով»[3]: 1915 Թ. Ապրիլին, Վանկենհայմը հաղորդել է Պերլին, որ հայերի վիճակը անյոյս է, բայց Գերմանիայի գերագոյն շահերը պահանջում են որ մենք չմիջամտենք, այլապէս կը վտանգենք աւելի կարեւոր բաներ»: Նա Թուրքիայում աւստրիական ներկայացուցիչ Փամիանքոսքուն 1913 Թ. ասել է, որ հայերի փրկութիւնը իսլամութիւն ընդունելու մէջ է: Կայ այն վարկածը, որ նա որպէս հնազանդ դիւանագէտ, պաշտօնապէս չի ընդդիմացել իր կառավարութեան դիրքորոշմանը, բայց չի արտայայտել իր համոզմունքը: Միաժամանակ նա Պերլին համապատասխան գերատեսչութիւններին է ուղարկել բոլոր հիւպատոսարաններից ստացուած այն տեղեկագիրները, որոնք մանրամասն նկարագրել են Թուրքիայի հայաջինջ քաղաքականութեան բոլոր երեսները: Ենթադրուում է որ նա յոյս է ունեցել այդպիսով ներգործել գերմանական կառավարութեան վրայ, որ զգաստացնի Թուրքական իշխանութեան: Մի օր, 1915 Թ. Հոկտեմբերի 22-ին կամ 23-ին, նա այցի էր գնացել Ամերիկայի դեսպան Մորկընթաուին: Սկսում են քննարկել նաեւ հայերին օգնելու, հայերի ջարդը դադարեցնելու հարցը: Ամերիկայի դեսպանը պնդել է որ հարցը վերաբերում է անօգնական կանանց, երեխաներին ու ծերունիներին: Ինչո՞ւ հարցրել է նա, չի կարելի մարդկայնօրէն մտածել որ նրանք էլ իրաւունք ունեն ապրելու: Գերմանիայի դեսպանը անհաշտ կրկնել է. «Պիտի չմիջամտեմ: Մեր միակ նպատակը յաղթելն է պատերազմում»: Մորկընթաուը գտնում է որ Վանկենհայմի ներաշխարհում տիրող լարուածութիւնը պատճառ է դարձել որ նա կաթուածահար լինի, ու մի քանի օր անց (25 Հոկտեմբերի, 1915 Թ.) կնքի իր մահկանացուն[4]:

Կոմս Փոլ Վոն Մեթերնիխը՝ Վանկենհայմին յաջորդած Գերմանիայի դեսպանն էր Պոլսում: Նա այն պաշտօնատարներից է, որոնք յաճախ վտանգել են իրենց պաշտօնն ու կեանքը՝ հայերի ջարդը կանխելու կամ կասեցնելու համար: Պատահական չէ որ նա մկրտուել է որպէս «հայերի դեսպան»: Մեթերնիխը նշանակուեց դեսպան, քանի որ Վանկենհայմին փոխարինող Էռնեսդ Լանկենպըրկ Հոհընլոհը չողջունուեց Իթթիհատական ղեկավարների կողմից, որովհետեւ նա բացայայտօրէն

1. K 169, No. (3876), 25 June, 1915, V. Dadrian, ibid, p. 100.
2. Turkei 183/37, A 21483, 9 July, 1915, V. Dadrian, ibid.
3. Turkei 183/39, A 30634, 15 October, 1915. V. Dadrian, ibid.
4. Morgenthau, *Ambassador...*, *pp*. 317-19.

չէր համաձայնուում նրանց հայաջինջ քաղաքականութեանը[1]: Նա պաշտօնի կոչուեց այն ժամանակ, երբ հայկական բնակավայրերի մեծամասնութիւնը հայաթափ էին եղել ու հայերի զգալի մասը սպաննուել էին Թուրքերի կողմից: Դա այն շրջանն էր, երբ սկսել էր Հայասպանութեան՝ Հայերի Ցեղասպանութեան երկրորդ ալիքը: Այս պատճառով էլ հասկանալի էր թէ ինչու Մեթերնիխը 30 Յունիսի, 1916 Թ. զեկուցագրում, Քանցլեր Պետման Հոլվեկին տեղեկացնում է Իթթիհատական ղեկավարութեան հետեւեալ շրջաբերականը, հասցէագրուած տեղական իշխանութիւններին. «Կոմիտէն առաջարկում է ոչնչացումը հայերի վերջին մնացորդացին եւ կառավարութիւնը պէտք է կատարի այդ պատուէրը: Կոմիտէն պարզապէս պետական մարմին չէ: Ամէն մի պաշտօնատարի, վալիից մինչեւ գայմագամ, կցուած է կոմիտէի մի անդամ՝ նրան հսկելու եւ պաշտպանելու համար: Ամէնուրեք սկսուել են հայերի բռնագաղթը: Թրքացում նշանակում է որսալ, սպաննել ու արմատախիլ անել բոլոր այն, ինչ թրքական չէ եւ բռնագրաւել ուրիշների (ոչ Թուրքերի) սեփականութիւնը: Վերջինիս եւ Ֆրանսական յեղափոխութեան կարգախօսների կանչերի մէջ է Թուրքիայի յայտնի վերածնունդը»[2]:

Առաջին իսկ պատեհութեան, երբ 1915 Թ. Դեկտեմբերին Մեթերնիխին հնարաւորութիւն տրուեց հանդիպելու Մեծ Վեզիրի՝ Սաիտ Հալիմի հետ, նա նոյնպէս բարձրացրեց հայերի նկատմամբ Թուրքերի վարած քաղաքականութեան հարցը: Նա պնդեց որ հայերի դէմ գործադրուող միջոցները երբեք չեն կարող արդարացուել որպէս օրինաւոր պետական պաշտպանութիւն: Նա գտնում էր որ հարիւր հազարաւոր կանանց, մանուկների եւ ծերերի նկատմամբ գործադրուածը (սպանդը) մնալու է որպէս Երիտթուրքերի պատմութեան ամենից մութ էջերը[3]: Դեսպանի նման դիրքորոշման հետեւանքով առաջացած լարուածութիւնը ցանկալի չէր Թուրքերին: Էնվերի եւ Թալէաթի Օգոստոս 1916 Թ. վերջնագրի հիման վրայ Մեթերնիխը պաշտօնից ետ կանչուեց: Ինչպէս վկայում է Տրամպենրը. այդ առթիւ Թալէաթ ասել է որ հայերի բնաջնջումը պէտք է պատերազմի օրերին կատարուի: Դրանից յետոյ խիստ ուշ կը լինի:

Մեթերնիխը դէմ էր Թուրքական մտածողութեան ենթարկուելու եւ Թուրք դաշնակցին սիրաշահելու համար զոհաբերութիւններ կատարելու մտայնութեան: Քանցլեր Պեթման Հոլվեկին հասցէագրած զեկուցագրում նա գրում է. «Մենք պէտք է դադարեցնենք Թուրքերին հա-

1. Ulrich Trumpener, *Germany and the Ottoman Empire 1914-1918*, Princeton, 1968, p. 125.
2. Aram P. Aivazian, *Armenia Userped by Genocide and Treachery*, Montreal, 1992, p. 246.
3. Turkei 183/40, A 36483, 9 December, 1915, V. Dadrian, *German Responsibility...*, p. 88.

ճոյանալուց: Նրանց բոլոր ձեռքբերումները մեր աշխատանքի արդիւնք են՝ մեր փողի, մեր սպաների եւ մեր հրանօթների գործն են: Առանց մեր օգնութեան "փքուած գորտը" ենթակայ է կործանման: Մենք կարիք չունենք թուրքերից վախենալու, որ կարող են շրջուել միւս կողմը եւ խաղաղութեան դաշինք կնքել»[1]: Նշենք որ իրօք 1916-1917 թթ., թուրքերը ցանկացան անջատ բանակցութիւններ վարել անգլիացիների ու ֆրանսացիների հետ, ու մերժուեցին:

Մեթերնիխը նկատում եւ այդ մասին Պերլին տեղեկացնում է որ թուրքերը շտապում են, որպէսզի աւարտեն գործը հայերի հետ, նախքան խաղաղութեան հաստատումը[2]: «Հայկական հարցը հայ ազգը ոչնչացնելու միջոցով լուծելու իր ծրագիրը գործադրելիս, թուրքական կառավարութիւնը թոյլ չտուեց որ իրեն չեղեն»[3]: Մեթերնիխ հասկացաւ որ Թալէաթը հայերի հալածանքների հոգին է[4]:

Արմին Թէոֆիլ Վակները ծնուել է 16 Հոկտեմբերի, 1896 թ., Գերմանիայի Ելպերֆելտ/Ռայնլենտ բրուսական ազնուականի ընտանիքում: Մասնագիտութեամբ իրաւաբան է, բայց առաւելաբար յայտնի է իր գեղարուեստական փնտռուած ստեղծագործութիւններով եւ մարդասիրական գործունէութեամբ:

Իբրեւ գերմանական բժշկական ծառայութեան անդամ, երիտասարդ Արմինը Ա. Աշխարհամարտի օրերին աշխատել է Պաղտատի երկաթգծի երկարութեամբ՝ Պոլսից մինչեւ Պաղտատ: Այդ ուղեւորութիւնների ընթացքում նա ականատես է եղել գրեթէ բոլոր ջարդավայրերում՝ բանագաղթի ճանապարհներին, լեռներում, դաշտերում, անապատներում ու տարբեր բնակավայրում թուրքերի գործադրած ոճիրներին: Նա եղել է նաեւ տեղահանուածների վրաններում: Նա երդուել է յարմար առիթով մարդկութեան պատմել իրագործուող ցեղասպանութեան մասին: Այն նպատակով գաղտագողի նկարել է այդ ահաւոր տեսարանները: Այդ նկարները ցուցադրուել են տարբեր թանգարաններում, ցուցասրահներում ու տպագրուել ողջ աշխարհի բազմաթիւ ու բազմալեզու մամուլում: Այդ նկարների բնօրինակները պահւում են Շթուտկարտի թանգարանում (Stutgart Schiller - National Museum Deutsches Literarturarchiv): 1919 թ. Յունուարին, Բարիզի Խաղաղութեան Ժողովի օրերին Արմին Վակները գրեց իր հռչակաւոր նամակը Ա.Մ. Նահանգների նախագահ Վուտրօ Ուիլսընին՝ իր ողջ խորութեամբ վերլուծելով թուրքերի Հայասպանութիւնը ու խնդրելով նրանից փրկել Եւրոպայի պատիւը եւ դրական լուծում տալ Հայկական

1. A.A. Turkei 183/40, A 36184. Registry No. 711, p. 3 of the report - 128, V. Dadrian, *Documentation of the Armenian Genocide*..., p. 101.
2. Turkei 183/41, A 8373, 27 March, 1916, V. Dadrian, ibid.
3. 183/43, A 17310 or A 18548, 10 July, 1916, V. Dadrian, ibid.
4. Turkei 183/40, A 36134, 12 July, 1915, V. Dadrian, ibid.

Հարցին: Նա պնդեց որ այդ նամակը խտացնում է այն հարիւր հազարաւոր հայերի խնդրանքը, որոնք սպաննուեցին թուրքերի կողմից, եւ ամբողջ հայ մնացորդացի՝ որ տառապում է ամէնուրեք: Նա ընդգծում է. հայերը «ապրեցին աշխարհի բոլոր մահերը եւ բոլոր դարերի մահերը»:

Իր նամակում Դոկտ. Վակները նշում է ոչ միայն հայերի ներդրումը մարդկային քաղաքակրթութեան, հայերի նկատմամբ Եւրոպայի թոյլ տուած անարդարութիւնը, հայ ժողովրդի տառապանքները թուրքական լծի տակ: Նա ի մասնաւորի շեշտում է որ գոյութիւն է ունեցել հայերին բնաջնջելու թրքական ծրագիր, եւ որ հայերի հասցէին ներկայացուած բոլոր մեղադրանքները անհիմն ու սուտ մեղադրանքներ են: Նա գրում է. «Հայ ժողովուրդը զոհերն են այս պատերազմին, երբ թուրք կառավարութիւնը, 1915 թ. գարնանը, սկսեց գործադրել հայ ժողովրդին արմատախիլ անելու հրէշային իր ծրագիրը, եւ երբ Եւրոպայի ազգերը իրենց փոխադարձ անհասկացողութիւնից արիւնլուայ ուժասպառ էին եւ չկար մէկը խոչընդոտելու չարագուշակ Թուրքիայի բռնակալներին՝ իրագործելու բողոքածին գազանութիւնները, որոնց միայն կարելի է նմանացնել ոճրագործ խելագարի արարքներին»: Եւ մեծ մարդասէրը աւելացնում է. «Իւրաքանչիւր անհատ, որ գիտի Անատոլիայում տարուած այս պատերազմի երեւոյթները եւ բաց աչքերով հետեւած է այս ազգի բախտին, գիտի որ բոլոր այն մեղադրանքները, որոնք մեծ ճարտարութեամբ եւ ջանասիրութեամբ արուեցին այս ազգի դէմ, ոչինչ են, եթէ ոչ բռնակալների կողմից հնարուած նողկալի զրպարտութիւններ, որպէսզի պաշտպանեն իրենք իրենց, իրենց իսկ կատարած բարբարոսական արարքների հետեւանքներից, որպէսզի սքօղեն իրենց սեփական անկարողութիւնը հաշտուելու անկեղծութեան ու մարդասիրութեան ոգու հետ»[1]:

Դոկտ. Վակները այն հազուագիւտ գերմանացի մտաւորականներից էր, որ քաջութիւնն ունեցաւ իր բողոքի ձայնը բարձրացնելու Հիթլէրի դէմ: Իր վեց էջանոց նամակում նա բողոքում էր նրա ծաւալած հակահրէական քաղաքականութեան դէմ: Նա ձերբակալուեց, տանջուեց գերմանական բանտերում՝ մինչեւ կարողացաւ փախչել Իտալիա, որտեղ մահացաւ 17 Մայիսի, 1978-ին: Թուրքերի Հայասպանութեան դէմ պայքարից նա անցաւ հրէական Հոլոգոստի դէմ պայքարին, իր մէջ միացնելով այդ երկու պայքարները յանուն մարդասիրութեան ու մարդու իրաւունքների:

Այսպիսով, գերմանական աղբիւրները հիմնովին հերքում են Թուրքիայի ու նրա բարեկամների ուրացումները, եւ անվիճելիօրէն ապացուցում իրողութիւնը՝ թուրքերի հայաջինջ ծրագրի գոյութիւնը եւ հայաջինջ քաղաքականութեան գործադրումը:

1. Armin T. Wegener, *An Open Letter to President Woodrow Wilson*, Berlin, January 1919; V. Dadrian, *German Responsibility*..., pp. 263-271.

ԳԼՈՒԽ Զ.

ՀԱՅԵՐԻ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԵՐԵՍՆԵՐԸ

Ցեղասպանությունը ծրագրում ու գործադրում է պետության կամ էլ զգալի ուժի ու միջոցների տիրապետող հաւաքականության կողմից: Նրանք իրենց նպատակներն ու գործունէութիւնները հիմնաւորելու, արդարացնելու, ուրիշներին համոզելու ու զանգուածներին իրենց ետեւից տանել կարողանալու համար ոչ միայն դիմում են նիւթական, կազմակերպչական, վարչական եւ ուժական լծակների, այլ նաեւ՝ գաղափարական ներգործութեան միջոցների: Այդպիսով ցեղասպանը մշակում է իր ցեղասպանական գաղափարախօսութիւնը: Թուրքական իշխանութիւնները իրենց տիրապետութեան ընթացքում նախ մշակեցին իրաւազրկման, խտրականութեան, բռնութեան ու ճնշման զանազան ձեւերի գաղափարախօսութիւնը, որ ժամանակի ընթացքում վերաճեց ցեղասպանութեան գաղափարախօսութեան:

Գաղափարախօսութիւնը կարող է լինել իրաւ եւ կեղծ: Օրինակ, բոլոր ազգերից վեր, բացառիկ, գերազգ լինելու գաղափարը կեղծ է՝ անկախ թէ այն որ ազգին է վերագրւում: Այն ֆաշականութեան, խտրականութեան, իրաւազրկման հիմք կարող է դառնալ: Առկայ հարցերը ոչ թէ ընկերային, քաղաքական, տնտեսական օրէնքներով ու եղանակներով, այլ բռնութեամբ, իրաւազրկմամբ ու խտրականութեամբ լուծել միտող բոլոր գաղափարական ձեռնարկումները չեն կարող իրաւ լինել, դրանք կեղծ են: Ցեղասպանութեան առաջնորդող կամ նպաստող որեւէ գաղափարախօսութիւն, հասկանալի պատճառներով, կեղծ է:

Մենք քաջ հասկանում ենք որ օսմանեան իշխանութիւնը միայն հայերին չէ որ կոտորել է: Այդ ընկերութեան մէջ դա եղել է սովորական երեւոյթ: Ականաւոր կրօնական գործիչ ու գիտնական Վեր. Դոկտ. Ճէյմս Ուիլսըն Փիրսը գրել է. «Այն օրերից, երբ թուրանական ձիաւորները առաջին անգամ լինելով ասիացիներին սովորեցրին թէ ինչքան ահաւոր է իրենց ցասումը, Օսմանի պետութեան համար բնորոշ է եղել ահաբեկչութիւնը: Ահաբեկչութեամբ Սուլթանը բարձրացաւ գերագոյն

իշխանութեան, ահաբեկչութեամբ է որ իրենք իրենց պահել են կայսերական գահին, եւ պարզ դրա համար որ նրանք այլեւս չեն կարողանում ներշնչել բաւարար ահաբեկչութիւն՝ Օսմանեան Կայսրութիւնը կործանւում է: Ապտուլ Համիտը, անկասկած, ջարդերի դիմեց այնպէս, ինչպէս բրիտանական վարչապետը կը փորձի իր իշխանութիւնը նորոգել խորհրդարանը ցրելով: Դաժանութիւնները այնքան բնական են Թուրքերին, ինչպէս ընդհանուր ընտրութիւնները խորհրդարանական կարգերին: Դրանք աւանդական օսմանական եղանակներն են իշխողի իրաւասութիւնը վերանորոգելու համար»[1]: Կարծես Փիրսի դրոյթը իւրովի հաստատելու համար Ճորճ Հորթընը, որ երեսուն տարի ապրել ու աշխատել է Թուրքիայում իբրեւ հիւպատոս եւ ականատես է եղել 1909-1923 տարիների Թուրքերի ծաւալած ցեղասպանական գործողութիւններին, պատրաստել է մի ցուցակ, որտեղ պատկերում է Թրքական համատարած ջարդարարական գործողութիւնները: «Հետեւեալը մասնակի ցուցակն է 1882-1904 տարիներին Թուրքերի գործադրած ջարդերի. 1882 Թ.՝ Զիոսում, 50,000 յոյների. 1823 Թ.՝ Միսոլոնգիյում, 8750 յոյների. 1826 Թ.՝ Պոլսում, 25,000 յոյների. 1850 Թ.՝ Մուսուլում, 10,000 ասորիների. 1864 Թ.՝ Լիբանանում, 12,000 մարոնիների, 1876 Թ.՝ Պուլկարիայում, 14,700 պուլկարների. 1877-ին՝ Բայազէտում, 1400 հայերի. 1879 Թ.՝ Ալաշկերտում, 1250, 1881 Թ.՝ Ալեքսանտրիայում, 2,000 քրիստոնեաների. 1892 Թ.՝ Մուսուլում, 3,500 եզիտիների. 1894 Թ.՝ Սասունում, 12,000 հայերի. 1895-1896 ԹԹ.՝ Հայաստանում, 150,000 հայերի. 1896 Թ.՝ Պոլսում, 9,570 հայերի. 1896 Թ.՝ Վանում, 8,000 հայերի. 1903-1904 ԹԹ.՝ Մակեդոնիայում, 14,667 մակեդոնացիների. 1904 Թ.՝ Սասունում, 5640 հայերի: Սրան պէտք է աւելացնել նաեւ 1909 Թ. Ատանա նահանգում ջարդուած 30,000 հայերին»[2]: Դրանց, անվերապահօրէն կարելի է աւելացնել անապատներ աքսորուած ու կախաղան բարձրացուած հարիւր հազարաւոր արաբների ու ալպանացիների:

Բնական է որ մենք այս բոլոր ջարդերի ու կոտորածների գաղափարական ակունքներն ու երեսները չենք քննարկելու, թէեւ ակնյայտ է որ բոլորի մէջ առկայ են ընդհանրութիւններ ու նմանութիւններ: Մենք փորձելու են բացայայտել լոկ Թուրքերի կողմից իրականացուած հայերի ցեղասպանութեան գաղափարական երեսները:

Ցեղասպանութեան գաղափարական հիմքերը որոշակիօրէն տարբերւում են ցեղասպանութեան պատճառներից, թէեւ երկուսն էլ նոյն գործունէութեան մղիչ ուժերն են. քաղաքական, տնտեսական, իրաւական, մշակութային, ռազմական եւայլն: Դրանք կարող են հանդէս գալ ինչպէս տարերային, այնպէս էլ տարբեր մակարդակի գիտակցուածութեան մակարդակով: Ինչպէս տեսանք, դրանք կարող են լինել ռազմավարական խորքով, երկար ժամանակ գործող ու մեծ ընդգրկումով (տարածքային անբաւարարութիւն, մշակութային անհամատեղելիութիւն, իրաւազրկում ու խտրականութիւն, կրօնական հալածանք): Կարող են լինել նաեւ վիճակային (պատերազմական դրութիւն, զանազան կարգադրութեան մերժում, տակտիկական կապեր): Դրանք լինելով իրականութեան անբաժանելի տարրերը, իւրովի ներգործում են մարդու անհատական ու խմբային վարքի վրայ:

Ցեղասպանութեան գաղափարական երեսները՝ ոճիրը գործող հաւաքականութեան պատմութեան ու կեանքի ընդհանրացումն է, նրա արժէքային կողմնորոշումը, նրա ապագայի ծրագիրը, նրա ազգային գիտակցութեան էութիւնը, նրա ազգային փիլիսոփայութիւնը: Այդ գաղափարախօսութիւնը մի անգամից հանդէս չի գալիս, այլ մշակւում է տուեալ ազգի պատմութեան բովում: Գաղափարախօսութիւնը բարձրանալով կեանքի հիմքի վրայ, ղեկավարում է այն, ճիշդ այնպէս՝ ինչպէս տեսական մտածողութիւնը բարձրանում է մարդու գործունէութեան վրայ, ու ղեկավարում այն:

1. J.W. Pierce, *Story of Turkey and Armenia*, Baltimore, R.H. Woodward Co., 1876, p. 38.
2. George Horton, *The Blight of Asia*, Indianapolis, The Bobbs-Merril Co., 1926, p. 19.

ԱՆՑԵԱԼԻ «ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԻ ՈՒ ԹԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ» ՍԽԱԼ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՍՐԲԱԳՐՈՒՄ

Շատ վաղուց մոնկոլական տափաստաններից Միջին Ասիա գաղթած ցեղերը 11-րդ դարից շարժուեցին հիւսիս-արեւմուտք եւ աստիճանաբար գրաւելով Միջին եւ Մերձաւոր Արեւելքի, Կովկասի, Փոքր Ասիայի, Արեւելեան Եւրոպայի, Սեւ Ծովի եւ Միջերկրական Ծովի հիւսիսային ափերի ու Հայկական Լեռնաշխարհի տարածքները, եւ իրենց հպատակեցնելով այնտեղի ժողովուրդներին՝ հիմնեցին Օսմանեան Կայսրութիւնը: Այդ տարածքների ժողովուրդների զգալի մասը (յոյներ, պուլկարներ, հունգարացիներ, հայեր, պարսիկներ, վրացիներ եւ այլք) արդէն հասել էին ազգային կազմակերպուածութեան մակարդակը եւ ունէին կամ ունեցել էին իրենց պետականութիւնը: Միջին եւ Մերձաւոր Արեւելքի եւ Հիւսիսային Ափրիկէի ժողովուրդները գտնուում էին իսլամական խալիֆաթական կազմակերպուածութեան մակարդակին ու որպէս ազգ չէին կազմակերպուել: Եկուոր մոնկոլ-սելճուք-թուրք քոչուոր ցեղերը գտնուում էին քաղաքակրթութեան ցած մակարդակում, չունէին գիր ու գրականութիւն, եւ չէին հասել ընկերային-քաղաքական ազգային կազմակերպուածութեան մակարդակին: Նրանք դեռ նոր էին ընդունել իսլամական կրօնը: Այս հիման վրայ նրանք նախընտրեցին կազմակերպուածութեան խալիֆաթական ձեւը, որտեղ կազմակերպուածութեան հիմքն ու բնոյթը կրօնն էր: Այդ տարածքների նոր տիրակալները՝ օսմանացիները, հիմնեցին ասորական-բաբելական-խալիֆաթական-բիւզանդական տիպի մի պետութիւն, որ ազգային բնոյթ չունէր, այլ տարբեր ազգերի հաւաքածոյ էր: Կայսրութեան միասնութիւնը խորհրդանշւում էր Սուլթանով ու պահւում էր ուժով:

Կայսրութեան բնակչութիւնը, իրաւական ու կազմակերպչական առումով, բաժանուած էր հաւատացեալների (մահմետականների), որոնք նկատւում էին առաջին կարգի ու լիիրաւ հպատակներ, եւ անհաւատների (ոչ-մահմետականների)՝ երկրորդական կարգի ու ոչ-լիիրաւ հպատակների: Հաւատացեալների կորիզը նկատւում էին թուրքերը՝

իշխող տարրը, ցեղը: Անհաւատները պէտք է մահմետականային եւ ոչ-թուրքերը՝ թրքանային: Ոչ-մահմետական հպատակները շատ դէպքերում որոշակիօրէն իրաւազրկուած էին կամ խտրականութեան ենթակայ էին դատական, աշխատանքային, ունեցուածքային, զգեստաւորման, թաղման հարցերում: Այս հիման վրայ, ինչպէս գրում է Փիրսը, մահմետականները «կարծում են, որ իրենք իրաւունք ունեն քրիստոնեաներին, այդ թւում հայերին, կողոպտելու»[1]: Տիրող կրօնական համայնքի կեցուածքը բնական վրդովմունք ու բողոք էր առաջացնում իրաւազրկուածների միջավայրում:

Բնական է որ նման պայմաններում թուրքերի մօտ պիտի խմորուէին ծայրայեղ հակահայկական տրամադրութիւններ: Վեր. Ճորճ Հըբուորթը, «Նիւ Եորք Հերըլտ»ի աշխատակիցը, որ Սուլթան Համիտի անմիջական թոյլատուութեամբ երեք սպաների ուղեկցութեամբ շրջագայեց Պատմական Հայաստանով մէկ, իր ժամանակին գրեց. «Իր սրտի խորքում թուրքը ատում է հային: Շատ են դրա պատճառները: Թուրքը խորապէս նախանձում է հայուն. նախանձում է նրա իմացական առաւելութեան համար, նրա տնտեսավարութեան եւ նախաձեռնութեան համար: Թուրքը պատրաստ է անելու իր կարելին՝ հայերին երկրից դուրս քշելու համար, թէեւ այժմ տիրում է ժամանակաւոր դադար: Ոչ մի կերպ փոթորիկը չի վերջացել»[2]: Փոթորիկի ժայթքելուց եւ հայերի ջարդերից յետոյ արձանագրուեց աւելի սարսափելին: Թալէաթը Ա.Մ. Նահանգների դեսպանին խոստովանում է. «Նրանց նկատմամբ մեր կատարածից յետոյ ոչ մի հայ կարող է մեր բարեկամը լինել»[3]: Նա աւելացնում է՝ «Հայերի եւ թուրքերի միջեւ ատելութիւնն այժմ այնքան սրուած է, որ պէտք է նրանց վերջը բերենք: Եթէ այդպէս չանենք, նրանք պիտի ծրագրեն իրենց վրէժը»: Այսպիսով, տուեալ ազգային-կրօնական քաղաքականութիւնը չնպաստեց պետութեան ամրապնդմանը, երկրի միասնականութեանն, այլ ընդհակառակը սրեց ազգամիջեան ու միջկրօնական յարաբերութիւնները եւ նպաստեց կայսրութեան փոքրացման: Այս հիման վրայ Երիտթուրքերը «ազգային փոքրամասնութիւններն» ու ոչ-մահմետականները նկատեցին արգելակ թուրքական քաղաքակրթութեան զարգացման ու ենթակայ վերացման, ոչնչացման[4]:

---

1. J.W. Pierce, *Story of Turkey and Armenia*, p. 276.
2. G.H. Hepworth, *Through Armenia on Horseback*, p. 339.
3. H. Morgenthau, *Ambassador Morgenthau's Story*, p. 339.
4. Տես՝ Թալէաթի 18 Փետր.ի, 1915 եւ 25 Մարտի, 1915 թ. գաղտնի հեռագրերը ուղղուած Ճեմալ Պէյին. Արամ Անտոնեան, *Մեծ Ոճիրը*, Տպարան Պահակ, Պոսթըն, 1921, էջ 134-135 եւ Vahakn Dadrian, The Naim-Andonian Documents on the World War I, *Destruction of Ottoman Armenians: The Anatomy of a Genocide*, International Journal of Middle East Studies, 18, 1986, pp. 319-320, 344-345.

Իրաւազրկուածներին, երկրորդական կարգի հպատակներին սուլթանական իշխանութիւնը տուել էր ինքնատիպ ներքին իշխանութիւն, որ յայտնի է Միլլէթ անունով: Ամէն մի ոչ-մահմետական կրօնական համայնք Սուլթանի կողմից վաւերացուած կրօնական իր ղեկավարի միջոցով ունէր իր ներհամայնքային կրթական, կրօնական, իրաւական, քաղաքական, ընկերային հարցերը տնօրինելու լիազօրութիւնը՝ ըստ հաստատուած ազգային սահմանադրութեան: Հայերը բաժանուած էին երեք Միլլէթների. Էրմենի Միլլէթի, Կաթողիկէ եւ Աւետարանական: Առաջինը ընդգրկում էր Հայ Առաքելական Համայնքը՝ Պատրիարք Հօր գլխաւորութեամբ: Երկրորդը մաս էր կազմում բոլոր ազգերի Կաթողիկէ Համայնքի: Երրորդը նոյնպէս դիտւում էր բոլոր միւս Աւետարանականների հետ անբաժան: Այսպիսով, Միլլէթները փոքրիկ կրօնապետութիւններ էին մեծ պետական կառոյցի մէջ: Թուրքերը «Միլլէթ» հաստատութիւնը յաճախ ներկայացնում էին որպէս մեծ դրական երեւոյթ, որպէս ժողովրդապետական նախաձեռնութիւն, որպէս «փոքրամասնութիւններին» տրուած ինքնավարութիւն՝ մոռանալով, որ այն իրաւազուրկների ու երկրորդ կարգի հպատակների կազմակերպութիւն է, որի նպատակն է Սուլթանին հնարաւորութիւն տալ որպէսզի կրօնապետների միջոցով կատարել տայ իր կամքը: Թուրքիայում եւրոպականացման միտումների ուժեղացմանը զուգահեռ այն սկսուեց դիտուել որպէս բացասական երեւոյթ՝ պետական շինարարութեան առումով:

Հալէպի գերմանական արհեստագիտական ուսումնարանի դասախօս Դոկտ. Մարտին Նիեպակը նկատում է, որ Երիտթուրքերը հասկանալով Միլլէթի հաստատութեան ժամանակավրէպ բնոյթը, գտնում են որ այն չի համապատասխանում պետական շինարարութեան արդի պահանջներին: Այս ճիշդ դիտարկումից նրանք անում են խիստ սխալ եզրակացութիւն՝ դիմել թրքացման, մահմետականացման ու բնաջնջման քաղաքականութեան: «Երիտասարդ Թուրքն իր աչքի առաջ ունի եւրոպական միացեալ պետութեան գաղափարը: Նա յոյս ունի թուրք դաստիարակութեան միջոցով ու վարչական եղանակով թրքացնել ոչ-թուրք մահմետական ազգերին՝ քրտերին, պարսիկներին, արաբներին, եւայլն՝ կոչելով նրանց ընդհանուր մահմետական շահագրգռուածութեան: Քրիստոնեայ ազգերը՝ հայերը, ասորիները, յոյները, Երիտթուրքերին անհանգստացնում են իրենց մշակութային ու տնտեսական առաւելութեամբ: Նրանց կրօնի մէջ նրանք տեսնում են խաղաղ ճանապարհով նրանց թուրքացնելու արգելքը: Հետեւաբար, նրանց պէտք է կամ բռնութեամբ մահմետականացնել, եւ կամ էլ՝ բնաջնջել»[1]: Այդ խոստովանում են Երիտթուրք ղեկավարները: «Օգոստոս 1910 թ. Սալոնիկի գաղտնի ժողովում Թալէաթը յայտարարել է. "Մենք ցանկացանք դաւանափոխ անել կեաւուր օսմանցիներին, բայց չկարողացանք: Այժմ մնում է մի ելք՝ ճզմել նրանց զէնքով"»[1]: Այս պատճառով էլ Երիտթուրքերը մի կողմից հիանում էին 15-16 դարերի մահմետական զաւթիչներով, բայց միւս կողմից՝ քննադատում նրանց թոյլ տուած ճակատագրական սխալի համար: Նրանք պէտք է ոչ միայն գրաւէին տարածքները եւ հպատակեցնէին բնակչութեանը, այլ նաեւ պարտաւոր էին կամ մահմետականացնել կամ ոչնչացնել այնտեղի ոչ-մահմետական բնակչութիւնը: Եթէ նրանք այդպէս վարուած լինէին, Օսմանեան Կայսրութիւնը զերծ կը մնար շատ աղէտներից: Չէր լինի Պուլկարական, Սերպական, Յունական, Արաբական, Քրտական, Ալպանական, Հայկական Հարց: Երիտթուրքերը որոշեցին սրբագրել այդ սխալը պետականօրէն կազմակերպուած ջարդերով ու բռնագաղթերով[2]: Նրանք դժգոհ էին իրենց նախորդներից նաեւ այն բանի համար, որ տարուելով կրօնական մոլեռանդութեամբ չեն մտահոգուել թուրքական ազգ, ազգային ինքնութիւն, ազգային պատկանելիութիւն, երկրում ապագային միասնականութիւն կերտելու հարցերով:

Այսպիսով, Երիտթուրքերը պետական շինարարութեան ասպարէզում իրենց նախորդների թոյլ տուած սխալները որոշում են սրբագրել աւելի սխալ, աւելի անմարդկային ու դաժան եղանակով՝ ցեղասպանութեամբ ու բռնի կրօնափոխութեամբ: Այս էլ դառնում է նրանց իրագործած Ցեղասպանութեան գաղափարական հիմքը:

Եթէ 16-19-րդ դարի թուրքերի սխալ քաղաքականութիւնը պատճառ դարձաւ կայսրութեան անընդհատ փոքրացման ու թուլացման, ապա 19-րդ դարի վերջի եւ 20-րդ դարի սկզբի նրանց քաղաքականութիւնը առաջնորդեց կայսրութեան քայքայման, կայսրութեան փլուզման:

1. Dr. Martin Niepage, *The Terrors of Aleppo*, p. 20.

1. G.P. Gooch & H. Temperley, Ed., *British Documents on the Origins of the War, 1898-1914*, London, 1938, Vol. 3, Pt. One, pp. 207-208. Տես՝ Zaven Messerlian, *The Premeditated Nature of the Genocide Perpetrated on the Armenians*, Antelias, Lebanon, 2001, p. 17.
2. Henry Morgenthau, *Ambassador Morgenthau's Story*, pp. 290-291.

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԳՈՅՈՒԹԵԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԻՄՔՆ Է

Թուրքերի նպատակն էր բնաջնջել հայերին, որպէսզի առյաւէտ տիրանան Հայկական Լեռնաշխարհին ու հայերի ունեցուածքին: Ինչպէս իրենք են ասում՝ «Արեւելեան Անատոլիան» ոչ միայն հարուստ հողատարածք է, այլ նաեւ «Թուրքիայի սիրտը», նրա գոյութեան երաշխիքը: Թուրքիան վստահ չէր որ Առաջին Աշխարհամարտում արձանագրած իր յաղթանակով ընդմիշտ կը վերանայ Հայկական Հարցը: Նա գտնում էր որ քանի շարունակւում է հայ ազգային ազատագրական շարժումը, եւ քանի Եւրոպան միշտ լծակներ է որոնում իր վրայ ազդելու համար, ուշ թէ շուտ Հայկական Հարցը նորից կը վերադառնայ բանակցութիւնների սեղան: Հայկական Հարցի մշտատեւութեան գրաւականն է նաեւ Սփիւռքի գոյութիւնը, որի վրայ Թուրքիան իշխանութիւն չունի[1]: Իր յաղթանակի դէպքում էլ Հայկական Հարցը ընդմիշտ վերացնելու համար նա անհրաժեշտ գտաւ «Թուրքական կենսական հողերից» ընդմիշտ վերացնել հայերին: Բայց չէր բացառւում, որ գերմանական, աւստրիական եւ թուրքական դաշինքը պարտուի: Թուրքիան այդ զգալով, 1916 թ. միջոցներ էր որոնում դաշնակիցների հետ անջատ հաշտութեան պայմանագիր կնքելու համար:

Առանցքի Ուժերի պարտութեան դէպքում Անգլիան, Ֆրանսան եւ Ռուսաստանը որոշել էին անդամահատել Թուրքիան: Հետեւաբար, եզրակացրին Երիտթուրքերը, այնպէս պէտք է անել, որ պատերազմի ընթացքում, Թուրքիայի անդամահատումից առաջ, Հայկական Լեռնաշխարհում հայեր չմնային, որպէսզի հնարաւոր չլինի այն Թուրքիայից «խլել» եւ այնտեղ հայկական պետականութիւն հաստատել: Այսպիսով, Երիտթուրքերը դրին կամ-կամ հարցադրումը: Կամ հայերը պէտք է մնան իրենց հողերում ու թուրքերը կորսուեն, կամ՝ Թուրքիան պիտի գոյատեւի հայերի ոչնչացման հաշուին:

1. Այդ գաղափարը պաշտպանում է Պաղտատի կառավարիչը, տես՝ *Diaries Of Ambassador Morgenthau*, August 19, 1915, p. 308.

Թուրք ռազմագէտները, աշխարհաքաղաքագէտները հաշտուել էին Օսմանեան Կայսրութեան «արուարձանների» (Արեւելեան Եւրոպայի, արաբական տարածքների) բայց ոչ երբեք հայկական տարածքների կորուստով: Անուանի թուրք լրագրող Դոկտ. Ահմէտ Էմին Եալմանը (1888-1972 թթ.) գրում է. «Ապացուցուել է որ (Թուրքիայի) արեւելեան շրջաններում խիտ հայկական բնակչութեան առկայութիւնը վտանգ է սպառնում Թուրքիայի գոյութեանը: Մենք որպէս գործիք գործելով վերացնում ենք այդ վտանգը»[1]:

Ալպանացիները, սլաւոնները, պուլկարները, յոյները, ռումանացիները, հունգարացիները իրենց հայրենի տարածքների վրայ հաստատել էին ազգային պետականութիւն: Շուտով նոյն հնարաւորութիւնը տրուելու էր նաեւ արաբական ժողովուրդներին: Հայկական տարածքների վրայ Եւրոպան բարենորոգումներ էր անցկացնելու: Այդ առաջնորդելու էր հայկական տարածքների վրայ ազգային ինքնավարութեան կամ պետութեան հաստատման[2]: Թուրքիային մնալու էր մի ափ հող, որի մի մասին ձգտում էին տիրել յոյները, իտալացիները եւ քրդերը: Թուրքիային մնալու էր Սեւ Ծովի հարաւային ափի մի մասը: Դա էին խոստացել Թուրքիային տալ Դաշնակիցները պատերազմից յետոյ, Թուրքիայի պարտութիւնից յետոյ: Վերջինիս բացառման հիմքը հայկական պետականութեան բացառումն էր, հայկական տարածքների հայաթափումը՝ հայերի բնաջնջման ճանապարհով: Դրա իրականացումը Երիտթուրքերի ղեկավարութիւնը համարում էր իր հիմնական հայրենասիրական առաքելութիւնը: Հետեւաբար, պնդում է Թալէաթ՝ «Մենք հայերին Անատոլիայում ոչ մի տեղ պահել չենք կարող: Նրանք կարող են ապրել անապատում եւ ոչ այլուր»[3]: Իսկ Berliner Tageblatt*-ի տուած ասուլիսում, նա աւելացնում է. «Մեր արարքները թելադրուած են ազգային եւ պատմական անհրաժեշտութեամբ: Թուրքիայի գոյութիւնը ապահովելու գաղափարը գերակշիռ է բոլոր այլ նկատառումներից»[3]: Օսմանեան Արդարադատութեան Նախարարութեան բարձրաստիճան մի պաշտօնատար հայերի հետ զրուցելիս, նոյն հարցին մի այլ տեսանկիւնից մօտենալով, ասում է. «Այս կայսրութեան մէջ բաւարար տեղ չկայ մեզ եւ ձեզ համար: Աններելի թեթեւամտութիւն կը լինէր, եթէ առիթից օգտուելով մենք ձեզանից չազատուէինք»[4]: Թուրքե-*

1. Dr. Ahmed Emin Yalman, *Turkey and the World War*, New Haven, 1930, p. 220.
2. Դեռ 1911 թ. Սալոնիկի գաղտնի ժողովում Իթթիհատականները պնդում էին որ անհրաժեշտ է թոյլ չտալ որ Թուրքիայի տարածքի վրայ այլ ազգեր կազմակերպուեն, քանի որ ապակեդրոնացումն ու ինքնավարութիւնը դաւաճանութիւն է Թուրքական Կայսրութեան նկատմամբ, Lepsius, Johannes, *Deutschland und Armenien*, p. 220.
3. H. Morgenthau, *Ambassador Morgenthau's Story*, p. 338.
4. Johannes Lepsius, *La Rapport Secret*, 9. 250.

րի համոզմամբ Հայաստանում հայերի համար տեղ չկայ: Պատմական Հայաստանը հայկական չէ, չի եղել, ու պէտք չէ լինի: Հայ հողը Թուրքերին է: Հայաստանը Թուրքիա է: Նոյնն է ասում նաեւ Ազրպէյճանի նախագահ Ալիեւը: Նա պնդում է որ Հայաստանը ազրպէյճանական տարածքի վրայ ստեղծուած կեղծ պետութիւն է:

Պարզւում է, որ սոյն կեցուածքը միայն Երիտթուրքական չէ: Ճեմալ Պայարը, Միութիւն եւ Առաջադիմութիւն կազմակերպութեան ականաւոր ղեկավարներից մէկն էր: Օսմանեան պետութեան պարտութիւնից յետոյ, նա դարձաւ Աթաթուրքական ազգայնական շարժումին ղեկավար եւ անձամբ Աթաթուրքի սերտ բարեկամը: Նա Լոզանի Թուրքական պատուիրակութեան անդամ էր, ու դարձաւ Թուրքական Հանրապետութեան երրորդ նախագահը: «Թերճուման» թերթում տպագրուած Ահմետ Քապաքլրին տուած հարցազրոյցում, նա պնդում է. «Երբ մենք կեանքի ու մահուան պայքար էինք մղում Անատոլիայում, կամ նրանք՝ հայերը, եւ կամ մենք պէտք է ապրէինք: Հարց ենք տալիս ձեզ, մեզ կարող էի՞ք ասել որ դուք մահացէք եւ թող հայերը ապրեն: Եթէ Հայկական Հարցը յաջողուէր, մենք չէինք կարող համախմբուել Անդարայում: Մենք պիտի չկարողանայինք շարունակել մեր ազգային պայքարը»[1]: Կարճ ասաց, առանց հայերի ջարդի իրականացման, չէր լինի Քեմալական Շարժում, Թուրքական Հանրապետութիւն: Դրա փոխարէն կը լինէր Մեծ Հայաստանի Հանրապետութիւն: Այս գիտակցելով Էնվէր Փաշան Պոլսում՝ Պապի պատուիրակ Մոնսենիոր Տոլչիին յայտնել է որ ինքն իրեն հանգիստ չի զգայ այնքան ժամանակ, ինչքան վերջին հայը կենդանի կը մնայ[2]:

Հայերի, արաբների, պալքանեան ժողովուրդների նկատմամբ Օսմանեան եւ Հանրապետական Թուրքիայի վարած քաղաքականութեան սխալը եղնում էր նաեւ այն համոզմունքից, որ այդ ժողովուրդների ու ազգերի պապենական հողերի բռնի գրաւումը իրենց իրաւունք է տալիս դրանք իրենց սեփականութիւնը նկատել: Որեւէ բռնազաւթում, դեռ հռոմէական օրէնսդրութեան դարաշրջանից, չի համարուել իրաւական հիմք բռնագրաւուածի սեփականացման համար: Այս ճշմարտութիւնը իրենց ազատագրական պայքարով ու յաղթանակով հաստատել էին անցեալում Թուրքերի կողմից հպատակեցուած ու ապա իրենց ազգային պետութիւնները հաստատած բազմաթիւ ազգեր: Այդ ապացուցել էր Եւրոպայում ազգային պետութիւնների հաստատման գործընթացը: Այդ իրողութեան ապացոյցն է գաղութատիրական պետութիւնների փլուզումը եւ գաղութացուած երկրների պայքարի յաղթանակը: Այս անվիճելիօրէն հաստատեց Ա.Մ. Նահանգների առաջացումն ու յաղթարշաւը: Բայց Թուրքերը պատմութիւնից չուզեցին սովորել եւ շարունակեցին պնդել՝ քանի իրենք բռնի ուժով գրաւել են Պատմական Հայաստանը եւ հպատակեցրել այնտեղի բնիկ ժողովուրդին, ապա այդ տարածքները դադարում են հայկական լինելուց ու դառնում են Թուրքական հող: Այդ բնիկ ժողովուրդը դադարում է հայ լինելուց ու վերածւում է օսմանացի կամ օսմանացի Թուրքի: Այս սխալ ու հակապատմական մտածելակերպից է բխում նաեւ Հայերի Ցեղասպանութեան Թուրքական գաղափարախօսութիւնը:

Օսմանցի Թուրքերի գիտակցութեան մէջ նստած էր այն գաղափարը որ իրենք Ասիայից գաղթելով դէպի արեւմուտք, պարտաւորութիւն ունեն միանալու Ասիայում մնացած իրենց ցեղակիցների հետ ու կազմելու մի մեծ, ամբողջական պետութիւն: Այդ երազի իրագործման ճանապարհին նրանք նկատում էին երկու արգելք: Նախ՝ Պատմական Հայաստանը իր համախմբուած հայութեամբ, եւ ապա՝ Ռուսաստանը, որի տիրոյթի տակ էին գտնւում իր ցեղակիցների մեծամասնութիւնը (Ազրպէյճան, Կովկաս, Միջին Ասիա, Խրիմ, Վոլգայի եւ Դնեպրի ափերի տարածքները): Պատմական Հայաստանի հայաթափումով Թուրքերը անմիջապէս սահմանակից էին դառնալու իրենց ցեղակիցներին ու նրանց համագործակցութեամբ կը ստիպէին Ռուսաստանին զիջել իրենց պատկանող հողերը: Երիտթուրքերը ընդգրկուեցին պատերազմի մէջ, թէեւ դրան բոլորովին պատրաստ չէին, ու դաշնակցեցին Գերմանիայի հետ՝ հիմնականում ելնելով իրենց հակառուսական նկրտումներից՝ ցարիզմը տապալելով Ռուսաստանի իրենց ցեղակիցներին միանալու ծրագրով: Այդ կապակցութեամբ Ճեմալ Փաշան իր յուշերում գրում է. «Մենք ցանկանում էինք վերացնել ռուսական ճնշման տակ մեր ընդունած հայկական բարենորոգումների վերաբերեալ համաձայնագիրը: Ինչ վերաբերում է բարենորոգումներին, մենք ղեկավարուեցինք այն տեսակէտով որ ցարիզմը պէտք է ոչնչացուի, եւ մենք դրան պիտի հասնենք պատերազմին մասնակցելով»[1]: Դեռ պատերազմը չսկսած, Թուրքերը պատուիրակութիւններ ուղարկեցին հարեւան երկրների թրքախօս եւ իսլամ ժողովուրդներին, խնդրելով նրանց ապստամբել Ռուսաստանի դէմ ու դիմաւորել յաղթանակած օսմանեան բանակին[2]: Երկու ակնկալութիւններն էլ չիրականացան. ոչ Թրքական բանակը յաղթեց եւ ոչ էլ Ռուսաստանի մահմետականները ենթարկուեցին Օսմանեան Կայսրութեան թելադրանքին:

Վերոյիշեալ դրդապատճառներից ելնելով, Թուրքերի խնդրանքով, 2 Օգոստոսի, 1914 թ. Թուրք-գերմանական պայմանագրի 5-րդ կէտում

1. Ahmed Kabakle, Tarçuman, *Interview With Çelal Bayar*, «Ազդակ», Պէյրութ, 6 Մարտի, 1981, էջ 4, տես՝ Messerlian, Zaven, *The Premeditated Nature of the Genocide*, p. 88.
2. Dr. Martin Niepage, *The Horrors of Aleppo*, p. 15.

1. Djemal Pasha, *Memories of a Turkish Statesman 1913-1919*, London, 1922, p. 49.
2. Dr. H.A. Gibbons, *Armenia in the World War*, N.Y., 1926, p. 3-4.

արձանագրուեց. «Գերմանիան այնպիսի պարտաւորութիւն պիտի ստանձնի, որ Օսմանեան Կայսրութեան արեւելեան սահմանները այնպէս սրբագրի, որ յարմար լինի Ռուսաստանի մահմետական (թուրքական) ժողովուրդների հետ կապ հաստատելու համար»[1]: Այսպիսով, Թուրքիան իր արեւելեան քաղաքականութեան գործադրման մէջ ընդգրկեց նաեւ Գերմանիան՝ նրան վերապահելով կայսրութեան արեւելեան սահմանները ըստ թրքական ծրագրի սրբագրելու առաքելութիւնը:

Սոյն իրողութիւնը քաջ հասկանում էր թուրքական դիւանագիտութեան գիտակ ու բարեկամ Ուինսթըն Չըրչիլը. «1915 թ. թուրքական կառավարութիւնը սկսեց եւ անդուխթօրէն իրագործեց Փոքր Ասիայի հայութեան անարգ ջարդն ու բռնագաղթը, մի ազգի մաքրագործումը Փոքր Ասիայից այնքան ամբողջական, որքան այդ նման մեծ չափի արարքը հնարաւոր է կատարել: Տրամաբանական ոչ մի կասկած կայ որ ոճիրը ծրագրուած եւ գործադրուած էր քաղաքական շարժառիթներով: Առիթը ներկայացել էր թուրքական հողը մաքրել մի քրիստոնեայ ազգից, որ ընդդիմանում էր թուրքական բոլոր ձգտումներին, որն ունէր իր սեփական այնպիսի ցանկութիւնները, որոնք կարող էին բաւարարուել միայն Թուրքիայի հաշուին եւ որոնք աշխարհագրականապէս կանգնած էին Թուրքիայի ու կովկասեան մահմետականների միջեւ»[2]:

Մոնկոլական ու Միջին Ասիական տափաստաններից արշաւելով սելճուք-թուրքական քոչուորները կամրջեցին Արեւմտեան Ասիան ու Արեւելեան Եւրոպան մի ասիական կայսրութեան մէջ, որտեղ իրար հակադրւում էին երկու քաղաքակրթութիւնները՝ եւրոպականն ու ասիականը: Թուրքերը ցած մշակոյթի տէր լինելով, չկարողացան արեւելեան հարուստ մշակութային ժառանգութիւնը (չինականը, հնդկականը, արաբականը, պարսկականը) իւրացնել ու տարածել կայսրութեան եւրոպական մասում: Ոչ էլ կարողացան նպաստել եւրոպական մշակոյթի տարածմանը՝ կայսրութեան ասիական ժողովուրդների շրջանակներում, թէեւ 19-րդ դարից միայն Թուրքիան նշեց եւրոպականացման որոշակի քաղաքականութիւն որդեգրելու մտադրութեան մասին: Նա զգալի ջանք չթափեց նաեւ իրեն հպատակեցուած ժողովուրդների մշակոյթը (յունական, հայկական, ասորական, հունգարական, պուլկարական, ռումանական, արաբական) իւրացնելով արագօրէն կերտել իր սեփականը, ինչպէս ժամանակին արեցին 7-րդ դարի արաբները: Վերջիններս երկու դար անց կերտեցին արաբական վերածնդեան մի այնպիսի մշակոյթ, որ ազդեց եւրոպական քաղաքակրթութեան հոլովոյթի

1. A.J. Toynbee, *Turkey, A Past and a Future*, London, 1917, p. 28-29.
2. W. Churchil, *The World Crisis: The Aftermath*, p. 405.

վրայ: Ընդհակառակը, թուրքերը տարբեր եղանակներով փորձեցին կասեցնել հպատակեցրած ազգերի մշակութային վերելքը: Ուշագրաւ է պատմաբան Թոյնպիի այն դիտողութիւնը որ թուրքերը երբեք հաստատուած պէտք չէ լինէին Եւրոպայում: Թուրքական Կայսրութիւնը վերջին երեք դարերում միայն քանդել ու կործանել է[1]:

Այնքանով, որքանով եւրոպականացումը զանգուածների գիտակցութեան մէջ արմատաւորում էր ժողովրդապետական ու հակաբռնատիրական սկզբունքներ, լուսաւորչական ու ազատամտական գաղափարներ, հաւասարութեան ու ազատութեան ձգտումներ, սահմանադրական կարգերի առաւելութեան մասին տեղեկութիւններ, այնքանով Սուլթանը այն ընդունում էր թշնամաբար: Այդ գաղափարները առաւել պատրաստակամութեամբ ընդունող անհատները, հաւաքականութիւնները, ժողովուրդներն ու ազգերը նկատւում էին Սուլթանիզմի թշնամիներ ու դաւաճաններ: Դրանց ջահակիրներից էին հայերը: Սուլթանը զգուշանում էր լուսաւորական, ազատամտական շարժումներից, կրթութեան տարածումից: Իսկ հակառակը, հայերը դէպի կրթութիւն, դէպի լուսաւոր, առաջաւոր գաղափարներ էին ձգտում: Դիպուկ է քառասուն տարի Թուրքիայում ծառայած Դոկտ. Փիրսի հետեւեալ դիտողութիւնը: Նշելով թուրքերի Հայասպանութեան պատճառները, նա գրում է. «Երրորդ. նրանց (հայերի) իմացական գերազանցութիւնը, որ հետեւանք էր նրանց ուսումնատենչութեան, որ նրանց մէջ ներարկել էր նուազ հանդուրժող լինել թալանի, բռնութեան եւ իրենց կանանց ու աղջիկների առեւանգման: Այլ բառերով, կրթութիւնը նրանց (հայերին, Գ.Խ.) անել էր ազատ լինել»[2]:

Պատահական չէ որ եւրոպական պուրժուական յեղափոխութիւնների կարգախօսի (ազատութիւն, հաւասարութիւն, արդարութիւն, եղբայրութիւն) դրօշի տակ երկրի առաջադիմական ուժերը հաւաքագրելով՝ հակասուլթանական յաղթական յեղափոխութիւն կազմակերպելուց անմիջապէս ետք, Երիտասարդ Թուրքերը դաւաճանեցին իրենց իսկ հռչակած յեղափոխական գաղափարախօսութեան, ու գործադրեցին Համիտեան բռնատիրական եւ ցեղասպանական քաղաքականութիւն: Իրենց յաղթանակի զոհասեղանին նրանք ջարդեցին յեղափոխութեան հաւատացող ու նուիրեալ տասնեակ հազարաւոր հայերի: Հասկանալի է նաեւ այն՝ թէ ինչու որոշ հեղինակներ թուրքերի ցեղասպանական քաղաքականութեան հիմքում տեսնում են նաեւ այդ երկու քաղաքակրթութիւնների՝ հայկականի եւ թուրքականի պայքարը այն-

1. A.J. Toynbee, *The Murderous Tyranny of the Turks*,, London, Hodder & Stoughton 1917, Tankian Publishing Corp., 1975, p. 26.
2. Sir Edwin Pierce, *Turkey and its People*, London, Methuen & Co., 1912, N.Y., p. 276.

պէս՝ ինչպէս թուրք ժողովուրդի առաջադէմ տարրի դէմ Սուլթանի տարած դաժան քաղաքականութեան մէջ նկատում էին այդ երկու կողմերի, միտումների բախումը: Մշակութային գերազանցութեան դէմ կանգնած էր բռնի ոյժը: Դիպուկ է ասել մեծ մարդասէր Նանսէնը. «Ճնշուածները շատ գերազանց էին տիրող ցեղին իմացականութեամբ, կարողականութեամբ, գիտութեամբ, բացառութեամբ՝ զինուորներով»[1]:

Բախուեցին երկու ազգայնական միտումներ: Հայերի ազգայնականութիւնը խարսխուած էր հարուստ մշակութային աւանդութիւնների վրայ, հազարամեակների ազգային քաղաքակրթութեան հենքի վրայ: Թուրքական ազգայնականութիւնը բարձրանում էր կենցաղային մշակոյթի ու աղքատ քոչուորական բանասիրութեան վրայ: Նրա հիմնական հենքը բռնակալական իշխանութիւնն էր, տիրակալական դիրքն էր, պետական ոյժն էր: Նրա ազգայնականութեան ոգու մէջ մեծ էր ներմուծուածը, քանի որ իրաւ թուրքական մշակոյթը նոր էր կերտուում: Թուրքական ազգայնականութիւնը սկսեց տիրակալ Օսմանիզմի ու համամահմետականութեան փլատակների վրայ: Պատահական չէ որ թուրք մշակութաբանութեան հիմնադիրներից Զիյա Կոք Ալփը պնդում էր որ քաղաքակրթութիւնը պատահական է ազգին: Ազգը կարող է այն իւրացնել, փոխել կամ դէն շպրտել:

Ցանկանում եմ այս գլուխն աւարտել Օսմանեան Թուրքիայի վերջին տասնամեակների կեանքին ու պատմութեան քաջատեղեակ Դոկտ. Ճորճ Հեպուըրթի հետեւեալ խօսքերով. «Թուրքը միշտ կամ կը ջղայնանայ կամ էլ լուակեաց կը դառնայ, ինչպէս ես արդէն նշել եմ, երբ մէկը քննարկել սկսի ջարդերի նիւթը, ան անմիջապէս կը փորձի խօսակցութիւնը փոխել: Նա իմանում է, որ դրանք նշանակում են ազգային անպատուութիւն, որ քաղաքակիրթ աշխարհը նրան նայում է արհամարհանքով, որ ինք մեղաւոր է այնպիսի արարքների, որոնք հաւասարապէս անպատիւ են ու ստոր, եւ այն դիրքը՝ որ նա յաւակնում է ստանձնել դրանց նկատմամբ, խիստ անպաշտպանելի է»[2]: Սոյն հաստատումները չեն կորցրել իրենց արդիական հնչեղութիւնը:

1. F. Nansen, *Armenia and the Near East*, p. 268.
2. George, H. Hepworth, *Through Armenia on Horseback*, N.Y., E.P. Dutton & Co., 1898, p. 128.

ԹՈՒՐՔ ԱԶԳԻ ԵՒ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԿՈՒՆՔԸ

Արդի թուրք ընկերաբան ու պատմաբան Նիազի Պերքեսը Երիտթուրքերի իշխանութեան օրերին տիրող քաղաքական-գաղափարական մթնոլորտը բնորոշում է հետեւեալ կերպ. «1908-ի սահմանադրական յեղափոխութիւնից յետոյ, Կոքալփը (Երիտթուրքերի եւ Մուսթաֆա Քեմալի գաղափարական կեցուածքի վրայ էական ազդեցութիւն ունեցող թուրք ընկերաբան, Գ.Խ.) Սալոնիկում է, կապուած Միութիւն եւ Առաջադիմութիւն Կուսակցութեան հետ: Այդ կուսակցութեան շուրջ հաւաքուել էին մի խումբ երիտասարդ մտաւորականներ, որոնք ձգտում էին նոր մի կեանքի՝ առանց իմանալու թէ ինչ են ցանկանում եւ թէ ցանկալին ինչպէս պէտք է իրականացուի: Դա մի ժամանակաշրջան էր, երբ Թուրքիան մեծ ջանք պիտի գործադրէր ոչ միայն փտախտից, բռնատիրութիւնից եւ տնտեսական սնանկութիւնից, այլ նաեւ բարոյական եւ իմացական խճճուածութիւնից, շփոթից ազատուելու համար: Մտաւորականների մեծամասնութեան կողմից Թուրքիայի ամբողջական վերակառուցումը նկատւում էր խիստ հրատապ: Կործանուող կայսրութեան մէջ ապրող ոչ-մահմետական եւ ոչ-թուրք ժողովուրդների ազգայնական շարժումների հակազդեցութիւնից բխած զօրաւոր թուրքական հայրենասիրութիւնը ստեղծում էր (վերակառուցման կամ վերակառուցող մտաւորականութեան գաղափարախօսութեան) զգացմունքային ենթահողը»[1]: Այսպիսի ապակողմնորոշող, լուսազուրկ, անկումային ու մահուան գաղափարական մթնոլորտում մշակուեց ու գործադրուեց Հայերի Ցեղասպանութեան ծրագիր:

Տուեալ վիճակի բաղադրամասերը կարելի է համարել Օսմանեան Կայսրութեան քայքայումը, թուրք վերնախաւի ռազմամոլութիւնը, թուրքիզմի եւ թուրքական ազգայնականութեան ձեւաւորումը, մըր-

1. Nyazi Berkes, Translator's Introduction, *Turkish Nationalism And Western Civilization of Ziya Gokalp*, Columbia University Press, N.Y., 1959, pp. 21-22, "Middle East Journal", V.VIII, No. 4, Autumn, 1954.

ցակցութիւնն ու պայքարը ձեւաւորուող թուրքական ազգայնականութեան եւ Սուլթանի դէմ ազգային ազատագրական պայքար մղող ժողովուրդների միջեւ, մահմետականութեան, արեւմտացման (արդիականացման) եւ թուրքիզմի ճիշդ յարաբերակցականութեան որոնումը, համամահմետականութիւնից համաթուրքականութիւն (թուրանականութիւն) անցումը, օսմանականութիւնից դէպի թուրքականութիւն անցումը: Թուրքական ազգայնականութիւնը կարողացաւ այնքանով դրական ու առաջադիմական լինել, ինչքանով վերջին հանգամանքները թոյլ էին տալիս:

Ազգայնականութիւնը անհատական ու ընկերային կեանքը կերտող հիմնական զգացումներից մէկն է, արդի պատմութեան ընթացքը կանխորոշող գործոններից մէկը: Թուրքական ազգայնականութիւնը մասնակցեց ինչպէս Հայերի Ցեղասպանութեան ծրագրաւորմանն ու գործադրմանը, այնպէս էլ Թուրքիայի Հանրապետութեան ստեղծմանը: Այն բազմաբնոյթ ու բազմակողմ էր:

Քառասային անցման ու վերակառուցման այդ շրջանում անհրաժեշտ դարձաւ որ անցեալի աւանդութիւնները, անցեալում թոյլ տրրուած սխալները վերանայուեն ու սրբագրուեն ըստ գաղափարական որոշ չափանիշների:

Կայսրութիւնը փլուզումից փրկելու, ուժեղացնելու եւ վերակառուցելու համար Սուլթանը նախ դիմեց երկու միջոցների՝ բանակի վերակառուցման եւ համաիսլամական վարդապետութեան ու գաղափարախօսութեան որդեգրման: Առաջինը արդիւնաւոր նկատուեց, քանի որ կայսրութիւնը խարսխուած էր ուժի՝ բանակի վրայ: Երկրորդով Սուլթանը ցանկացաւ շահարկել Խալիֆների «հզօր» իշխանութեան անցեալ յուշերը, իսլամական աշխարհի միլիոնաւոր մոլեռանդ մահմետականների կրօնամոլութիւնն ու հակաքրիստոնէական զգացումները: Այն ցանկալի արդիւնքը չտուեց, քանի որ առաջինը կայսրութիւնից բաժանուեցին Իրանը, Հիւսիսային Ափրիկէի իսլամները: Հակասուլթանական շարժման մէջ գործօն դեր ունեցան արաբները, ալպանացիները եւ այլ իսլամ ցեղեր: Հակառակ դրան, Անգլիան, Գերմանիան ու Ռուսաստանը իրենց արեւելեան քաղաքականութեան մէջ հաշուի նըստեցին համաիսլամական գործօնի հետ: Համաիսլամական քաղաքականութիւնը աւելի վնասեց կայսրութեան, քանի որ աւելի սրեց նրա մէջ ապրող տարբեր կրօններ դաւանող համայնքների, Միլլէթների յարաբերութիւնները եւ լրացուցիչ բարդութիւններ առաջացրեց քրիստոնեայ երկրների հետ ունեցած դիւանագիտական գործարքներում:

Երկրում ազատական եւ աշխարհիկ մտայնութեան տարածման, ազգային գիտակցութեան տարրերի ուժեղացման եւ թուրքական-թուրանական աշխարհում նկատուող աշխուժացման հողի վրայ թուլացաւ կայսրութիւնը կրօնական հողի վրայ միացնելու ու զօրացնելու գաղափարը եւ դուռ բացեց համաթուրքականութեան, համաթուրանականութեան քաղաքականութեան ու գաղափարախօսութեան առաջացման: Սուլթանն ու նոր գաղափարաբանութեան կողմնակիցները ցանկալի արդիւնքի չկարողացան հասնել, որովհետեւ կա՛մ անտեսւում էր թուրքական եւ թուրանական համայնքների ազգային-մշակութային առանձնայատկութիւնները, կայսրութիւնը ստեղծած ու կառավարող թուրքի պատմութիւնը, նրա դարաւոր աւանդոյթները, նրա հոգեւոր կառոյցի առանձնայատկութիւնները, կամ էլ նոյնացւում էին զարգացման տարբեր մակարդակներում գտնուող ու քաղաքական միտումներ ունեցող ցեղերը, եւ կամ էլ անտեսւում էր կայսրութեան ազգային-ցեղային բազմաբնոյթ կառոյցը:

Օսմանեան Կայսրութեան մէջ քաղաքական բարենորոգումների ձեւաւորման մէջ որոշակի դեր խաղաց օսմանեան ազգ ստեղծելու ծրագիրը, որի սկզբնաւորումը կարելի է սկսել Մահմուտ Բ.ի (1784-1839 թթ.) ժամանակներից: Այդ գաղափարի ջերմ պաշտպաններն էին Ֆուատ Փաշան (1815-1869 թթ.), Ալի Փաշան (1741-1822 թթ.) եւ Միթհաթ Փաշան (1822-1883 թթ.): Նրանք հաւատում էին որ իրենց օրերին դեռ հնարաւոր է բազմազգ եւ բազմակրօն Օսմանեան Կայսրութեան հիման վրայ ստեղծել «ազգային միասնութիւն», արհեստական մի ազգ: Իրականում նրանք չէին պատկերացնում հարցի բարդութիւնն ու դժուարութիւնները: Այդպէս էլ այն մնաց ցանկատեսութիւն:

Հակասուլթանական պայքարի ծաւալման, հպատակեցուած ժողովուրդների ազգային ազատագրական պայքարի ուժեղացման պայմաններում նրանք յայտարարում էին որ այլեւս գոյութիւն չունեն հայեր, արաբներ, ալպաններ, պուլկարներ, յոյներ, սլաւոններ, ռումինացիներ. ժողովուրդներ, որոնք դարերով ապրել են իրենց հայրենիքում եւ կերտել իրենց հարուստ ազգային քաղաքակրթութիւնը: Այդ թուրք բարենորոգիչները ձգտում էին այդ ժողովուրդների ազգային ազատագրական պայքարին հակադրել Օսմանեան Կայսրութեան մէջ համընդհանուր ազգի, համընդհանուր հայրենիքի գաղափարը: Նրանք «համաօսմանեան հայրենասիրութիւնը» միտում էին հակադրել օսմանեան լուծի դէմ ուղղուած ազատագրական գաղափարախօսութեան:

1880 թ. Օգոստոսին, կառավարական հրամանով արգիլուեց օգտագործել Հայաստան, Էրմենիստան, Արմենիա տեղանունները: 1886 թ. Օսմանեան Կայսրութեան տարածքում գտնուող Հայաստանը (Արեւմտեան Հայաստանը) օսմանեան կառավարութիւնը վարչական վերաբաժանումի ենթարկեց ու կազմեց հետեւեալ վիլայէթները՝ Էրզրում, Կարին, Խարբերդ, Տիգրանակերտ, Տերսիմ, Պիթլիս, Վան, Սեբաստիա, Հէյքարի: Դա արուեց պատմութիւնը նենգափոխելու եւ վերացնելու հայերի համախմբուածութիւնը իրենց պատմական հայրենիքում: 1888 թ. կախակայուեցին հայկական թերթերը: Շատ գաւառներում արգիլ-

ուեց հայոց լեզուի օգտագործումն ու դասաւանդումը: 1893 թ. նոյն բախտին արժանացաւ նաեւ Ազգային Սահմանադրութիւնը: Այս բոլորը խթանեցին 1895 թ. Սասունի, Տրապիզոնի, Բաբերդի, Դերջանի, Բաղէշի եւ այլ հայկական բնակավայրերի ահաւոր ջարդերը:

Երիտասարդ Օսմաններ գաղտնի կազմակերպութիւնը հիմնադրուեց Պոլսում 1865 թ., եւ որդեգրեց օսմանական ազգի գաղափարախօսութիւնը եւ այդ ոգով կազմեց երկրի անդրանիկ սահմանադրութիւնը, որին, Միթհաթ Փաշայի հետ, 1876 թ. իր մասնակցութիւնը բերեց նաեւ Գրիգոր Օտեանը (1834-1887 թթ.): Երիտթուրքերը վերականգնեցին Սուլթան Ապտիւլ Համիտի կողմից արգիլուած այդ սահմանադրութիւնը, երբ 1908 թ. գրաւեցին իշխանութիւնը: Այդ յեղափոխութիւնը, որ բարձրացաւ ազատութիւն, հաւասարութիւն, եղբայրութիւն եւ ապահովութիւն կարգախօսների դրօշներով, իր գաղափարախօսութեամբ թաղուեց Ատանայում եւ այլ վայրերում հայոց զէմ կազմակերպուած զանգուածային կոտորածների ու ջարդերի արհաւիրքում, ցեղասպանութեան ոճիրներում:

19-րդ դարի սկզբում թուրքերի դժգոհութեան, անբաւարարուածութեան զգացումը, վերակառուցման անհրաժեշտութեան գիտակցութեան խորացումը հրամայական դարձրեց Օսմանեան Կայսրութեան եւրոպականացումը, արեւմտականացումը: Առաջացաւ այն տեսակէտը որ Օսմանեան Կայսրութեան իտէալականացուած կրօնական, բարոյական եւ իրաւական հաստատութիւնների, կայսրութեան իտէալականացուած քաղաքական աւանդութիւնների եւ Եւրոպայի առաջընթացին սատարող քաղաքակրթութեան միջեւ չկայ հակասութիւն: Տարածուեց այն վարկածը, որ մահմետական կրօնը պիտի տայ նոր ընկերութեան բարոյական-իրաւական հիմքերը, օսմանեան աւանդոյթները պիտի ստեղծեն նրա քաղաքական կառոյցը, իսկ արեւմտեան քաղաքակրթութիւնը պիտի վերակառուցի նրա գործնական, նիւթական ու գիտական բաղադրամասերը.

ա) Համամահմետական (Pan-Islamist), որ գլխաւորում էր Սուլթանը.

բ) Աշխարհիկ մտաւորականների հոսանքը, որտեղ եւրոպականը առաւելաբար արտաքին էր, կապկում (imitaion).

գ) Թուրքականութեան (Turkist) հոսանքը (թուրքական ազգայնական), որ սկզբում թոյլ էր ու փոքր:

Օսմանեան Կայսրութեան կործանումից յետոյ, Քեմալական Շարժման զուգահեռ, սոյն հոսանքը երկրի մահմետական ու օսմանական եւ իսլամական անցեալը շեշտելու փոխարէն կարեւորեց թուրքերի ցեղային, ազգային անցեալը, թուրքական լեզուն, թուրքական ազգային աւանդոյթները, բանահիւսութիւնը, ժողովրդականը:

Վերջին հոսանքի որպէս հիմք ծառայեցին ռուսական տարածքներում գտնուող թուրքերի ազգային զարթօնքը, «Դէպի Ժողովուրդը Վերադարձ» եւ Օսմանեան Կայսրութիւնում ոչ-իսլամ եւ ոչ-թուրք ազգութիւնների ազգային ազատագրական, համագերմանական եւ համասլաւոնական (սլաւոֆիլական) շարժումները: Բոլոր դէպքերում երեք հոսանքներն էլ իրենց գործադրութեան ընթացքում չկարողացան ազատուել օսմանականութեան քաղաքական ուղղուածութիւնից՝ առաջին երկուսը մշտատեւ ու ամբողջութեամբ, իսկ երրորդը կարեւոր մի շարք ասպարէզներում, մասնաւորապէս ազգային, կրօնական եւ անցեալի գիտական գնահատման հարցերում: Նկատելի է որ թուրքական ազգայնականութիւնը հիմնականում խարսխուած է օտար ազդեցութիւնների վրայ: Նոր շրջանի ականաւոր գաղափարախօս Զիա Կոքալփը գրում է. «Օսմանեան Կայսրութեան մէջ ազգայնականութեան գաղափարը երեւաց նախ ոչ-իսլամների շրջանում, ապա՝ ալպանացիների եւ արաբների, ու վերջապէս թուրքերի»[1]: Սոյն պարագան կանխորոշում է նաեւ թուրքական ազգայնականութեան խորքն ու թերութիւնները:

19-րդ դարում Ռուսաստանը աւելի խորացրեց Միջին Ասիան եւ Կովկասը զաւթելու եւ Ռուսական Կայսրութեան կցելու քաղաքականութիւնը: Միջին Ասիայում դրա դէմ բարձրացաւ տեղի բնակչութեան, մանաւանդ թուրքալեզու ու թուրքական-թուրանական ծագում ունեցող ցեղերի ընդդիմութիւնը, ազատագրական շարժումը, որ նաեւ ծնեց համաթուրանական ու համաթուրքական միտումները: Հունգարացի արեւելագէտ Արմինիուս Վամպերին (1832-1913 թթ.) «Կեդրոնական Ասիայի Ուրուագիծ» գրքում առաջ քաշեց այն գաղափարը որ քանի Միջին Ասիայի բնակչութեան մեծամասնութիւնը խօսում է թուրքերէն, Թուրքիայի հետ կիսում է ընդհանուր պատմական փորձառութիւն եւ ծագում, ապա նրանք միանալով կարող են կազմել մի հրսկայածաւալ քաղաքական ամբողջութիւն, որ տարածուելու է Ալթայի երկրամասից մինչեւ Պոլիս: Այսպիսով ծնուեց նաեւ թուրքիզմի, թուրքականութեան գաղափարը, որ իր հերթին ճանապարհ բացեց թուրքական ազգայնականութեան գիտակցութեան: Եւրոպան հունգարացու ծրագիրը մկրտեց որպէս ճենկիզխանական արշաւանքի վերականգնման փորձ: Միջին ասիական ժողովուրդի զարթօնքի ճառագայթում նկատուեց նաեւ Լէոն Գահունիի (1841-1900 թթ.) թուրքերի եւ մոնկոլների պատմութեան նուիրուած գրքում (1894 թ.): Այդ կանչը իւրովի հնչեց նաեւ Ճեմալ Ատ Տին Ալ Աֆղանիի (1839-1897 թթ.) վարդապետութիւնում:

Օսմանեան Կայսրութիւնը իր նեխումի շրջանը ապրել է 1683-1827, իր անկումը՝ 1828-1908 եւ լուծարումը՝ 1908-1922 թուականնե-

1. Gokalp, Ziya, *Turkish Nationalism And Western Civilization*, N.Y., Columbia Univ. Press, pp. 71-72.

ին: Այդ երեքում էլ իրենց զգալ են տուել տարբեր հպատակ ժողովուրդների ազատագրական ու ինքնապաշտպանողական պատերազմները: Ալպանացիները, լիբանանցիները, հայերը, հունգարացիները, յոյները, սերբերը եւ այլ ժողովուրդներ շարունակելով իրենց ազգային աւանդոյթները՝ մշակեցին մի այնպիսի ազգային գիտակցութիւն, ազգային պատկանելիութեան զգացում, որ նրանց բարձրացրեց կազմակերպող հայրենասիրութեան մակարդակին: Հարաւային սլաւները գտնուում էին Աւստրիայի ու Օսմանեան կայսրութիւնների իշխանութեան տակ, որոնց դէմ նրանք պայքարում էին յանուն ազատութեան: Այդ պայքարում նրանք մշակեցին համասլաւոնական գաղափարախօսութիւնը, որ նրանց ազատագրական պայքարի ուսմունքի բաղադրիչ մասը դարձաւ: Հայ իրականութեան մէջ, դեռ 18-րդ դարի 70-ական թուականներից, Մատրասի խմբակի ղեկավարները (Մովսէս Բաղրամեան, Շահամիր Շահամիրեան, Յակոբ Շահամիրեան եւ այլք) շարադրել են ապագայ Հայաստանի հանրապետութեան սահմանադրութեան նախագիծը ու հայ ազգայնականութեան հիմնական սկզբունքները:

Բոլոր նշուած ժողովուրդներն ու ազգերը ոչ միայն ունէին իրենց երկարամեայ ազգային ազատագրական պայքարի փորձը, այլ նաեւ սնուել էին եւրոպական ազգայնականութեան սկզբունքներից, որոնց դեռ չէին հասել թուրքերը: Ուշագրաւ է այն փաստը, որ Օսմանեան Կայսրութեան մէջ ըստ էութեան իրենց մշակոյթով, հոգեբանութեամբ, պատմական անցեալով ու քաղաքական պատկերացումներով եւրոպական քաղաքակրթութեան ու մշակոյթին աւելի մօտ էին հայերն ու յոյները: Բայց կայսրութեան ղեկավարութիւնը նրանց այդ հանգամանքը ոչ միայն չօգտագործեց իր արդիականացման ու եւրոպականացման ջանքերում, այլ այդ երկու ազգերին էլ կոտորեց ու հալածեց: Բայց, թուրք հակասուլթանականները (Թանզիմաթականները, Երիտասարդ Օսմանցիները, Երիտասարդ Թուրքերի զանազան խմբաւորումներ) տարբեր ժամանակներում օգտագործել են նրանց փորձը Սուլթանի դէմ մղած իրենց պայքարում: Թուրք վերնախաւն ու զանգուածը նկատել էր ազգայնականութեան կազմակերպիչ դերը ընկերային կեանքում: Սակայն այդ չի նշանակում որ այդ կուսակցութիւններն ու հոսանքները բարձրացրել էին ազգայնականութեան դրօշը, կամ մշակել էին այդ գաղափարախօսութիւնը: Նոյնիսկ Միութիւն եւ Առաջադիմութիւն խմբակը իր կազմաւորման սկզբնաւորման շրջանում ազգայնական չէր իր բուն իմաստով, քանի որ նրա նպատակն էր ողջ օսմանեան ազգին բերել ֆրանսական յեղափոխութեան երազը (ազատութիւն, հաւասարութիւն, եղբայրութիւն ու արդարութիւն): Հաւանական է նաեւ այն վարկածը, որ այդպիսով Իթթիհատականները ձգտեցին այդ ճանապարհով նպաստել օսման ազգի կերտմանը, ինչպէս ֆրանսացիները այդպիսով նպաստեցին ֆրանսական ազգայնականութեան կերտման: Մի մեծ տարբերութիւն կար սակայն: Ֆրանսական յեղափոխութեամբ ֆրանսացին կերտեց քաղաքացիական հասարակութիւն, որ դարձաւ ազգայնականութեան հիմքը: Իսկ նշուած կարգախօսը չկարողացաւ Օսմանեան Կայսրութիւնում ստեղծել այդպիսի հասարակութիւն:

Օսմանցին հասկացաւ որ ինքը ազգ դառնալու համար պէտք է լինի թուրք: Պատերազմի շեմին օսմանցի վերնախաւի մի մտաւորականն իրեն հարց տուեց. «Ո՞վ է Օսմանը, որի անունով մենք կոչւում ենք: Նա մի ալթայցի թուրք է, որ այս հողերը գրաւեց թուրքական բանակով: Հետեւաբար, աւելի պատուաբեր է կրել մեր ծագման անունը, քան նրա անունը: Մինչեւ այժմ մենք խաբուել ենք մեր նախորդների տգիտութեամբ: Նրանք մեզ մոռանալ տուին մեր իսկական ազգութիւնը: Վստահ ենք, որ մեզ համար աւելի լաւ է թրքութիւնը, թրքական ազգութիւնը, քան իսլամը: Ազգային հպարտութիւնը մեծագոյն ընկերային առաքինութիւններից մէկն է»[1]:

Գերմանախօս եւ գերմանական ծագում ունեցող փոքր անջատ քաղաքական իշխանութիւնների միաւորմամբ Կեդրոնական Եւրոպայում ամբողջական Գերմանիա ստեղծելու գաղափարը առաջացաւ հականափոլիոնական ազատագրական պայքարի տարիներին (1813–1815): Այն իր փաստացի իրականացումը ստացաւ 1871 թ., երբ Պիզմարքի ջանքերի շնորհիւ Վիլհելմ Ա.-ի գահակալութեամբ ստեղծուեց գերմանական միապետութիւնը: 1893 թ. «Գերմանական Լիկա»յի հաստատմամբ համագերմանականութեան գաղափարը ստացաւ ազգայնամոլական ու տարածապաշտական գունաւորում եւ քննարկման առարկայ դարձաւ բոլոր գերմանախօսների (աւստրիացիների, չեխերի, լեհերի, զուիցերիացիների, Վոլկայի, Պալթիկ եւ Տրանսիլվանիայի գերմանացիների տարածքների) միաւորման հարցը, որ ժամանակաւորապէս ու մասամբ իրականացուեց Ֆաշական Գերմանիայի կողմից: Համագերմանական միացման սոյն գաղափարը որոշակիօրէն ազդեց թուրք ազգ, համաթուրքական պետութիւն, թուրք ազգայնականութիւն ստեղծելու ծրագրի ձեւաւորման ընթացքի վրայ:

19-րդ դարի 80-ական թուականներին Ալեքսէյ Խանիկովը առաջ քաշեց սլաւոնֆիլական ուսմունքը, որ մի կողմից պնդում էր որ ռուսական կեանքն ունի իր զարգացման ինքնուրոյն եւ ինքնատիպ ուղին, բոլորովին տարբեր եւրոպականից: Սա դրա հակաեւրոպական երեսն էր, եւ խօսում էր այն թուրքերին, որոնց հարազատ էր հակաեւրոպական միտումը: Միւս կողմից, այդ ուսմունքը առաջադրում էր բոլոր սլաւոնական ժողովուրդների միացման անհրաժեշտութիւնը՝ ցարի գլխաւորութեամբ: Այն Պալքաններում նպաստեց ռուսական ծաւալա-

1. Arnold Toynbee, *Turkey: A Past and a Future*, Hedder & Slougton, 1917, p. 6.

պաշտական քաղաքականութեան: Մի շարք թուրք մտածողներ՝ ցեղակիցների ու ազգակիցների միացման կարեւորութեան սլաւոֆիլական թեզը համահնչիւն գտան թուրքերի պահանջների հետ:

Այս մթնոլորտում աւելի ու աւելի մեծացաւ քննադատական կեցուածքը անդրանիկ թրքական բարենորոգչական շարժման՝ Թանզիմաթի նկատմամբ: Տարածուեց այն կարծիքը, որ Թանզիմաթի ներկայացուցիչները անտեղի այնպիսի տնտեսական ու քաղաքական պարտաւորութիւններ են ստանձնել որ թուլացրել են Օսմանեան Կայսրութեան անկախութիւնը, գերիշխանութիւնը, ամբողջականութիւնն ու ինքնուրոյնութիւնը:

Թուրքականի, բուն ազգայնական հարցերի վրայ ուշադրութիւն սեւեռեցին, դէպի ժողովրդականը դառնալու կոչ արեցին նաեւ Եւրոպայում կրթութիւն ստացած 19-րդ դարի որոշ օսմանցի հեղինակներ: Նրանց շարքում նախակարապետի պատիւը կարելի է շնորհել արդի օսմանական գրականութեան հիմնադիր Իպրահիմ Սինասի Էֆենտիին (1826-1871 թթ.): Նա կայսրութեան առաջին գրողներից էր որ Եւրոպայի լուսաւորիչներին հետեւելով գիտակցեց գրականութիւնը կապելու ժողովրդի հետ: Իր երկերում նա ձգտեց թուրք գրականութիւնը մաքրել արաբերէն ու պարսկերէն բառերից (որ, ըստ մասնագէտների, կազմել է շուրջ 90%) ու օգտագործել լոկ թրքական ծագում ունեցող բառապաշար, եւ այդպիսով նպաստել ձեւաւորուող թուրքական ազգայնականութեան, ազգային գիտակցութեան: Նշենք, որ օսմաներէն լեզուն, որն օգտագործում էր վերնախաւը, փաստօրէն արդիւնաւէտ հաղորդակցման միջոց չէր վերնախաւի ու թուրք գիւղացիութեան միջեւ: Սինասին փորձեց նաեւ թուրքերէն տաղաչափութիւնը վերափոխել ըստ ֆրանսական նմանակի:

Սինասիի հետքերով գնալով, Երիտասարդ Օսման Շարժման ներկայացուցիչ Նամիք Քեմալը (1840-1888 թթ.) մեծապէս ազդեց թուրք ազգայնական գաղափարաբանութեան ձեւաւորման ու թուրք գրականութեան «արեւմտացման» վրայ: Նա թուրքերէնի թարգմանեց այնպիսի ֆրանսացի հեղինակների գործեր, ինչպիսիք են՝ Վիկտոր Հիւկոն, Ժան Ժաք Ռուսսոն, Զարլզ Լուիզ Մոնթեսքիոն եւ այլք: Քեմալ՝ ժամանակի քաղաքական մտածողութեան մէջ արմատաւորեց «հայրենիք» (vatan) եւ «ազատութիւն» (hurriet) գաղափարները, որոնք արդիլուած էին սուլթանական գրաքննութեան կողմից, քանի որ լայնօրէն կիրառւում էին հակասուլթանական ազգային ազատագրական պայքար մղող հպատակ ժողովուրդների կողմից: Վերջիններս «այդ» արտայայտութեան տակ հասկանում էին իրենց ժողովուրդներին, որոնք ձեւաւորուել էին կայսրութեան ստեղծումից առաջ, եւ որոնք արդէն մշակած ունէին իրենց ազգային գիտակցութիւնն ու ինքնութիւնը: Պաշտօնական գաղափարախօսութիւնը այդ եզրով նկատի ունէր օսմանական

չինծու ազգը, որը խոտոր էր կայսրութեան բնակչութեան մեծամասնութեան գիտակցութեան: Արդարացի է անգլիացի ականաւոր պատմաբան Առնոլտ Թոյնպին, որ 1917-ին հեղինակած «Թուրքիա. Մի Անցեալ եւ Մի Ապագայ» գրքում գրում է. «Թուրքիան, Օսմանական Պետութիւնը, մի միասնութիւն չէ՝ ոչ կլիմայական, ոչ աշխարհագրական, ոչ ցեղային եւ ոչ էլ տնտեսական առումով: Նա մի չինծու բան է պարտադրուած բռնութեամբ եւ արիւնահեղութեամբ այնտեղ եւ այն ժամանակ, երբ օսմանեան կառավարութիւնը իշխանութիւն է ունեցել»[1]:

Ազատագրութեան համար պայքարողների հայրենիքը այն պատմական հողերն էին (Յունաստանը, Պուլկարիան, Հայաստանը, Ալպանիան, Ռումանիան եւայլն) որտեղ իրենք դարեր շարունակ ապրել են ու կերտել իրենց մշակոյթն ու պետականութիւնը մինչեւ օսմանական գրաւումը: Պաշտօնական գաղափարախօսութեան համար հայրենիքը Սուլթանով միաւորուած ու բռնութեամբ պահպանուող տարածքներն էին: Թուրք ազգայնականութեան գիտակցութեան զարգացումը գնալով «մօտենում» էր ազատութեան համար պայքարող ժողովուրդների պատկերացումներին, եւ այն հիմնական սկսեց համալրուել «թուրքիզմով» ու կայսրութեան տապալումով: Այդ անցումը թուրքերը կատարեցին մեծագոյն երկունքով ու մարդկային զոհերով:

Զարգանալու, արդիականանալու համար, որ 19-րդ դարում միաձուլուած էր նաեւ ազգային գիտակցութիւն, ազգային պատկանելիութիւն, ազգայնականութիւն մշակելու հետ, բարենորոգիչները կանխատեսեցին երեք ճանապարհ. երկրի կառոյցի ներքին վերափոխութիւն, Օսմանեան Կայսրութեան միասնութեան ամրապնդում եւ եւրոպականացում/արեւմտականացում:

Ներքին ընկերային, քաղաքական, տնտեսական եւ վարչական կեանքում թուրք բարենորոգչութիւնը փոփոխութիւններ ներմուծեց բանակում, բնակչութեան տեղաբաշխման ու երկրի վարչական բաժանման մէջ, ֆինանսներում եւ նման ասպարէզներում: Սոցիալ-քաղաքական կեանքում ամենազգալի տեղաշարժը գրանցուեց միապետական կարգը ժամանակաւոր սահմանադրական միապետութեան փոխելու մէջ: Այս միջոցառումները հեռու էին հիւանդ Թուրքիան բուժելու ու նրան առաջադիմութեան գծի վրայ տեղափոխելու համար:

Կայսրութեան միասնութիւնը ամրապնդելու ու այդպիսով նրան կործանումից փրկելու համար գործադրուեց կրօնական գործօնը՝ երկրի համախմբամացումը: Իսլամացումը թուրք ընկերութիւնը աւելի կապեց միջնադարեան յետամնացութեան հետ, արգելակեց գիտական ու ընկերային առաջընթացը, սրեց կրօնական լարուածութիւնը երկրում եւ խեղդեց նորածին ազգայնականութեան շունչը: Այդ բարդ խնդիրը

1. Arnold Toynbee, *Turkey: A Past and a Future*, p. 4.

լուծելու համար կա՛մ իսլամին վերագրեցին դրական արդիական գծեր, կամ փորձեցին մշակել ազգային իսլամիզմի տարբերակներ, եւ կամ էլ՝ հրաժարուեցին կրօնամոլութիւնից: Միասնութեան ստեղծման համար գործադրուեց նաեւ համաթուրքիզմն ու համաթուրանականութիւնը, որ անպտուղ մնաց: Վերջապէս առաջարկուեց արհեստական նոր ազգի՝ Օսմանական Ազգի ստեղծումը: Շուտով այն մերժուեց կեանքի ու մասնագէտների կողմից:

Ժամանակի հրամայականն էր Սուլթանի կամ սուլթանական իշխանութեան (որն իր մէջ պարտադիր կերպով ընդգրկում էր իսլամականութիւնն ու օսմանականութիւնը) նկատմամբ հաւատարմութեան ու նուիրումի գաղափարախօսութիւնը փոխարինել դէպի ազգ-պետութեան նկատմամբ եղած պատկանելիութիւնով, «մաքուր թուրքականութիւնից», «նախաիսլամական ու նախաօսմանեան թուրքականութիւնից յառնող ու վերակենդանացող» ազգայնական նուիրումով ու հաւատարմութեամբ: Խիստ ուշագրաւ է թուրք տեսաբանի հետեւեալ գաղափարների փունջը. «Այսօր ինչպէս Արեւմուտքը, այնպէս էլ Արեւելքը անվարան ցոյց են տալիս որ մեր դարը ազգերի դար է: Մարդու մտքին ու հոգուն տիրող ամենից հզօր ոյժը ազգայնականութեան իտէան է: Այն պետութիւնները, որոնք կառավարելու են ըստ ազգային գիտակցութեան, դատապարտուած են ձախողութեան, եթէ անտեսեն գոյութիւնը տուեալ կարեւոր ընկերային գործօնի: Եթէ մեր պետական այրերն ու կուսակցական ղեկավարները չկառչեն այս իտէային, նրանք չեն կարող օսմանեան պետութիւնը կազմող համայնքների ու ժողովուրդների վրայ հաստատել հոգեւոր ղեկավարութիւն: Վերջին չորս տարիների (1909–1913 թթ., Գ.Խ.) փորձառութիւնը ցոյց է տալիս, որ այն թուրքերը, որոնք օսմանեան իշխանութեան տակ եղող ազգութիւնների միջեւ փոխըմբռնում պիտի հաստատէին, մերժեցին թուրքիզմը եւ օսմանականութիւն հռչակեցին՝ վերջապէս պատկերացրին, թէ ինչպիսի հաշտութիւն ազգութիւնները կարող են ընդունել: Ազգայնական զգացումով շարժուող ժողովուրդները կարող են ղեկավարուել այնպիսի մարդկանց կողմից, որոնք իրենց մէջ ունեն ազգայնականութեան գաղափարը: Թուրքերի կողմից ազգայնականութեան գաղափարից խուսափելը ոչ միայն վնասակար էր պետութեան եւ գրգռիչ տարբեր ազգութիւնների համար, այլեւ այն աղիտալի էր իրենց՝ թուրքերի համար: Երբ թուրքերը ինքնորոշուեցին որպէս ազգ ու պետութիւն ըստ գոյութիւն ունեցող ազգի ու պետութեան (օսմանեան, Գ.Խ.), նրանք չկարողացան նկատել, որ իրենց ընկերային եւ տնտեսական գոյութիւնը վտանգուում է: Երբ տնտեսական ու ընկերային իշխանութիւնը անցաւ ոչ-իսլամ համայնքներին, թուրքերը չպատկերացրին որ

1. Gokalp, *Turkish Nationalism*..., p. 72.

նրանք կորցնում են ամէն ինչ: Նրանք կարծում էին որ իրենք օսմանեան ազգը կազմող դասակարգն են եւ ուշադրութիւն չէին դարձնում այն փաստին, որ իրենք դուրս են մղուում որոշակի դասակարգերից՝ մանաւանդ այն դասակարգերից, որոնք դարու ամենակարեւոր շերտն են կազմում: Նրանք մտահոգուած չէին տեսնելով որ իրենք դրանցից դուրս են թողնուած: Որպէս հետեւանք, նրանք դադարեցին նոյնիսկ Անատոլիայի զանգուածային մասը լինելուց»[1]:

Քանի անհնար էր կարճ ժամանակաշրջանում թուրք զանգուածի գիտակցութեան մէջ առողջ ազգայնականութիւն արմատաւորել, իշխող թուրք վերնախաւը փոխարէնը յաջողացրեց նրա գիտակցութեան մէջ սերմանել ազգային ատելութիւն եւ դա գործածել որպէս ցեղասպանութեան եւ բռնագաղթի միջոց:

Կեանքի թելադրանքը ընթանում էր ոչ թէ Օսմանեան Կայսրութեան բազմազանութեան վերացման, արհեստական միացման, միաձուլման, այլ թուրք ազգայնականութեան առաջացման, եւրոպականացման ուղղութեամբ: Դարի սկզբում Եւրոպայում ձեւաւորուող ազգայնականութիւնը դարի վերջերին հասել էր արեւելք: Սկսել էր արեւելեան ազգայնականութեան, ըստ որում թուրք ազգայնականութեան գործընթացը: Ասիական երկիրներ հասնելով՝ ազգայնականութիւնը սկսել էր սպառել իր առաջադիմական գծերի զգալի մասը ու ձեռք բերել ազգայնամոլական, ռազմատենչ ու զաւթողական միտումներ: Այդ ակնյայտ էր ինչպէս Գերմանիայում եւ Ռուսաստանում, այնպէս էլ Թուրքիայում (Օսմանեան Կայսրութիւնում)»[1]:

Թուրքական ազգայնականութեան հաստատման նպաստեց նաեւ կայսրութեան տարբեր հպատակ ժողովուրդների տարանջատումը ու նրանց անկախ պետականութեան հաստատումը, կայսրութեան կործանումը: Այդ փուլում իրագործուեց Հայերի Ցեղասպանութիւնն ու բռնագաղթը՝ ապագայ ազգայնական թուրք պետականութեան տարածքներ ապահովելու մտահոգութեամբ: Պատմական Հայաստանը ցանկացան դարձնել թուրքիզմի, թուրք ազգայնականութեան տիրոյթ:

Թուրք ազգայնականութեան գաղափարախօսութիւնը չունի ազգային ծագում: Այն ծնունդը չէ թուրքական մտքի սեփական զարգացման: Այն ընդօրինակուած է, որդեգրուած է գերմանական, ֆրանսական եւ օսմանեան լծի դէմ պայքարող ժողովուրդների ազգային ազատագրական պայքարի փորձից: Պատահական չէ որ այն երկար ժամանակ նկատուել է օտար թրքական ոգու համար, ուղղափառ իսլամութեան համար: Թուրք վերնախաւը վերցնելով եւրոպական կեանքի արտայայտութիւն հանդիսացող ազգայնականութիւնը, երկար ժամանակ չկարողացաւ այն համալրել ժողովրդականով, ժողովրդական մշակոյ-

1. Gokalp, *Turkish Nationalism*..., p. 72.

թով, ժողովրդական ազգայնականութեամբ, քանի որ ցածր էր ժողովրդի զարգացման մակարդակը եւ թոյլ էր հաղորդակցութիւնը երկու այդ խաւերի միջեւ Օսմանեան Կայսրութիւնում: Նկատի ունենանք նաեւ այն իրողութիւնը, որ բուն թուրքական մշակոյթը սկսեց ձեւաւորուել 18-րդ դարի երկրորդ կէսերից: Աւելին: Թուրքիայում շատ ուշ սկսեց ձեւաւորուել քաղաքացիական հասարակութիւնը (civil society), օրէնքի իշխանութեան հասարակութիւնը, եւ երկար տեւեց դրա հաստատման գործընթացը: Դեռ այսօր այն չի աւարտուել եւ Եւրոպական Միութիւնը արդի Թուրքիայից պահանջում է կերտել լիիրաւ քաղաքացիական հասարակութիւն, այդ միութեան անդամակցել կարողանալու համար: Թուրքական ազգայնականութիւնը մնաց ցեղայնականութեան մակարդակին (ethnic nationalism), առանց իր մէջ ունենալու ժողովրդականութեան որոշիչ տարրը[1]:

Վերոյիշեալ որոնումները, յայտնագործութիւններն ու անցումները մենք խտացուած ձեւով նկատում ենք թուրք ընկերաբան, տիարպեքիրցի, իթթիհատական, Մուսթաֆա Քեմալի (Աթաթուրք) մտերիմ բարեկամ եւ խորհրդատու Զիա Կոքալփի (1876-1924 թթ.) երկերում: Նա փորձեց մշակել թուրքական ազգայնականութեան տեսութիւնը:

Ազգը պատմական երեւոյթ է: Կոքալփ գտնում է որ մարդկային պատմութեան հոլովոյթը ընթանում է նախնական համայնքից դէպի եւրոպական ազգի կազմաւորումը: Նա գտնում է որ ազգը, ըստ որում թուրք ազգը, չի կարող սահմանափակուել ցեղ հասկացութեամբ, որ առաւելաբար կենսաբանական հասկացութիւն է: Այն աւելին է, քան՝ արիւնակցական ընդհանրութիւնը: Ազգ կազմաւորման մէջ նա բացառում է ցեղային եւ արիւնակցական մաքրութեան կարեւորութիւնը: Աշխարհագրական գործօնի գերապատուութեան տեսութիւնն էլ նա անհամոզիչ է գտնում: Նա անընդունելի է համարում օսմանական տեսութեան այն թեզը, որ Օսմանեան Կայսրութեան բոլոր բնակիչները կազմում են մի ազգ: Կոքալփը մերժում է նաեւ համաիսլամականութեան այն պնդումը որ բոլոր իսլամները մի ազգ են կազմում: Անհատապաշտական ու մերժելի է համարում նաեւ այն տեսակէտը, որ ոեւէ անհատի ազգութիւնը որոշւում է ըստ այն բանի, թէ ինքը իրեն որ ազգութեան պատկանող է ընդունում: Այսինքն, նա մերժում է այն տեսակէտը որ ազգութեան հիմքը ազգային պատկանելիութեան գիտակցութիւնն է:

Ուրեմն, ո՞րն է այն գործօնը, ոյժը, որ գերադաս է ցեղայինից, արիւնակցականից, աշխարհագրականից, քաղաքականից ու կամքից եւ

1. Սոյն հարցերն իրենց ուշագրաւ քննարկումն են ստացել Ayse Kadioglu-ի "The Paradox of Turkish Nationalism and the Official Identity" ուսումնասիրութեան մէջ: Տես՝ Middle Eastern Studies, Vol, 32, No. 2 April, 1996.

իշխում է այդ բոլորի վրայ: Մարդկանց համախմբող, միացնող ոյժը դաստիարակութիւնն է, մշակոյթը, պատկերացումների ամբողջութիւնը՝ պնդում է թուրք ընկերաբանը: Մարդ խորապէս կը կապուի այն ընկերութեան հետ, որից ինքը կը ստանայ այդ փորձառութիւնը, այդ պատկերացումները: Նա կարող է դրանցով ղեկավարուել նոյնիսկ այն պարագայում, երբ ինքը ապրի այլ ընկերութիւնում, մշակութային միջավայրում[1]:

Կոքալփ թանզիմաթեան բանապաշտութիւնից (rationalism), որ դալիս էր եւրոպական լուսաւորիչներից, անցում կատարեց դէպի 19-րդ դարի ռոմանթիկ մտածողութիւնը: Նա գտնում էր որ իսլամականներն ու արեւմտականները ազգի ձեւաւորման իրենց գաղափարները հիմնում են անհատական բանականութեան վրայ, եւ որ անհատն ու նրա բանականութիւնը չեն կարող չափանիշ լինել ընկերային վերակառուցման համար, քանի որ դրանք առաջնորդում են կամ դէպի պահպանողականութիւն կամ դէպի ութոպիա, ութոպիական մտածողութիւն: Դրանք կոյր են իրականութեան նկատմամբ: Նոր վերակառուցումը, նրա կարծիքով, պէտք է առաջանայ ոչ թէ անհատական, այլ՝ հաւաքական ընկերային բանականութիւնից: Նա հետեւելով գերմանացի ռոմանթիկներին, ռուսական սլաւոնաֆիլներին եւ փոփուլիստներին, ընդունում է ընկերութեան, ազգի վերազանցական (տրանսցենտենթալ) իրողութիւնը: Ժողովուրդը, ազգն է վերջնական ու անսխալական չափանիշը ցանկալի կամ անցանկալի, ընդունելի կամ մերժուելի: Բնական է այն, ինչ ժողովրդի հաւաքական գիտակցութիւնը ընդունում է: Քանի արդի ընկերութեան վերջնական նպատակը պետութեան հաստատումն է, եւ քանի ազգային իտէալները անհատների վարքը տնօրինող ուժերն են, ապա ազգի հրատապ խնդիրը ազգային զարթօնքն է, որով մարդիկ պիտի յարմարուեն արդի քաղաքակրթութեան պայմաններին: Այսպիսով, նա թուրքականութիւնը համաթուրքիզմի քաղաքական դաշտից տեղափոխեց մշակութային ասպարէզ:

Ազգը, Զիա Կոքալփի պատկերացումով, այն անկախ միաւորն է, որն ընկած է արդի եւրոպական (արեւմտեան) քաղաքակրթութեան հիմքում: Արդի արեւմտեան քաղաքակրթութիւնը մի քանի ժողովուրդների ստեղծածն է, ժողովուրդներ, որոնք բնաշրջման հետեւանքով հասել էին ազգութեան աստիճանին: Թուրքիան, այդ ժամանակաշրջանում, դեռ տուայտանքի մէջ էր, քանի որ գտնւում էր կրօնապետական քաղաքակրթութիւնից դէպի արդի ազգայնականութեան վրայ հիմնուած քաղաքակրթութեան անցման փուլում, որի ընոյթը դեռ պատմութեան համար պարզ չէր:

Ակնյայտ է որ Կոքալփ անտեսում է մարդու գործօն, ստեղծագործ,

1. Նոյնը:

կերտիչ, վերափոխիչ կարողականութիւնը: Մարդ ոչ միայն յարմարւում է միջավայրին ու սնւում է միջավայրից, այլ նաեւ կերտում ու վերափոխում է այն: Մարդը ոչ միայն պատմութեան ծնունդն է, այլ նաեւ պատմութեան կերտիչը: Մենք այսօր ապրում ենք մարդակերտ միջավայրում, որ անուանում ենք մշակոյթ: Ըստ Կոքալէի, ստացւում է որ միջավայրը գոյութիւն ունի առանց իր կերտողի, եւ յարմարուող էակը լոկ սնւում է դրանով: Անտեսւում է այն իրողութիւնը որ մարդկային պատմութիւնը իր գոյութեան ողջ ընթացքում հանդէս է գալիս նաեւ որպէս կերտողի եւ կերտուածի որոշակի միասնութիւն:

Թուրքերի բուն պատմութեան եւ նրա մշակոյթի հոլովոյթի ընթացքը հնարաւոր է դարձնում նման տեսակէտների յօրինման:

Նախնադարեան դարաշրջանում, Ք.Ա. երրորդ հազարամեակում, Ալթայում ապրող ցեղերը շարժուեցին դէպի Կեդրոնական Ասիա: Մօտաւորապէս այնտեղ չորս հազարամեակ բնակուելուց յետոյ այդ քոչուորների յետնորդները գաղթեցին Սեւ Ծովի, Կասպից Ծովի եւ Միջերկրական Ծովի միջեւ ընկած տարածքները ու այնտեղ բնակեցուող ժողովուրդներին հպատակեցնելով 15-րդ դարում ստեղծեցին Օսմանեան Կայսրութիւնը: Նրանք իրենց հետ տարան այն մշակոյթը, ինչ ունէին, այսինքն՝ քոչուորական մշակոյթը: Տարան անմշակ, նախնադարեան, քոչուոր կեանքի պահանջները բաւարարող լեզուն: Կայսրութեան դառնալու ճանապարհին նրանք իսլամական կրօնի միջոցով որդեգրեցին արաբական այբուբենը: Պատահական չէ որ շուտով Օսմանեան Կայսրութեան թուրքերէնը, կայսրութեան պետական ու ժողովրդական լեզուն դարձաւ պարսկերէնի ու արաբերէնի մի խառնուրդ, որտեղ բուն թրքերէնը հազիւ կազմում էր լեզուական հարստութեան մէկ չորրորդը: Հանրապետական Թուրքիան հարկադրուած եղաւ լուրջ զբաղուել լեզուական բարեփոխումներով: Գրեթէ բոլոր պարսկերէն ու արաբերէն բառերն ու արմատները լեզուից դուրս հանեցին ու դրանք ալթայեան ծագում ունեցողներով փոխարինեցին: Ազգ դառնալով, թուրքերը մշակեցին իրենց լատինատառ այբուբենը: Արաբատառը փոխարինուեց լատինատառով:

Թուրքական խոհանոցից ու քոչուորական աշխատողին անհրաժեշտ գործիքներից բացի, թուրք գաղթականը նոր միջավայր բերեց նաեւ իր բանահիւսութիւնը, «Տէտէ Կորքութը», որ չկարողացաւ հանդիսանալ նոր մշակոյթի, կայսերական մշակոյթի հիմքը: Թուրք գաղթականը իր հետ բերեց քոչուորական այրուձին, որ սարսափեցնում ու թալանում էր: Շուտով թուրք բանակը այլափոխուեց ու եւրոպական զգեստ հագաւ, պահպանելով սակայն իր բնածին աւարարական յատկութիւնը: Գաղթական թուրքը որդեգրեց իսլամական կրօնը ու երկար տարիներ դարձաւ այդ կրօնի պաշտպանը, մշակողն ու տարածողը: Այն արմատապէս փոխեց ալթայցի թուրքի պատկերացումները իրաւունքի,

բարոյականութեան, ընկերային կառոյցների ու մարդկային յարաբերութիւնների մասին: Դրա միջոցով փոխուեցին նաեւ նրա պատկերացումները միջազգային ու ներազգային յարաբերութիւնների մասին: Միաժամանակ նոր, ներմուծուած կրօնը հեռացրեց թուրքը իր անցեալից եւ դժուարացրեց Թուրքիայի առաջընթացը: Ըստ իսլամական կրօնի, ըստ խալիֆաթի աւանդութեան, որոշուեց նաեւ երկրի քաղաքական կառոյցը՝ սուլթանական միապետութիւնը:

Նոր տարածքները գաղթելուց եւ այնտեղ Օսմանեան Կայսրութիւնը ստեղծելուց յետոյ թուրքերը չկարողացան, ու նոյնիսկ չմտածեցին շարունակել ու զարգացնել անցեալի քոչուորական ժառանգութիւնը: Նրանք նոյնիսկ չկարողացան ստեղծել նոր թրքական մշակոյթ: Մենք թուրք քաղաքակրթութեան պատմութեան մէջ նկատում ենք մշակութային աւանդութիւնների ընդհատում 13-18 դարերի ընթացքում: Այն աւելի իսլամական էր, քան՝ թրքական: Բուն թրքական մշակոյթի կերտման հարցը օրակարգի վրայ դրուեց 18-րդ դարի վերջերից: Երբ 19-րդ դարի կէսերին թուրք բարենորոգիչները հասկացան որ երկրի փրկութիւնը թրքական ազգ ստեղծելու մէջ է, եւ որ նախորդ փորձերը սխալ էին, այն ժամանակ տեսան որ օսմանեան իրականութեան մէջ հիմքեր չկան թուրք ազգ ստեղծելու համար: Զկար այն մշակութային խարիսխը՝ որ միացնում է երկրի բնակչութիւնը մի ամբողջութեան մէջ: Նրանք, այդ ժամանակ, որոշեցին գնալ դէպի անցեալը, դէպի արմատները ու այնտեղից գծել երկրի ու ժողովրդի զարգացման նոր ուղին: Անցեալի այդ մշակոյթը նրանց համար օտար էր, քանի որ չէին մասնակցել նրա լինելութեանը ու մեծ տարածութիւն էր ընկել երկուսի միջեւ: Այն հարազատ էր որպէս սկզբնաւորման սաղմ:

Թուրք ազգն ու ազգայնականութիւնը ձեւաւորուեցին այդ երկուսի զարգացման համար անբարենպաստ պայմաններում: Կայսրութեան տէրն ու ղեկավար ոյժը հանդիսացող հաւաքականութիւնը չէր նուաճել ազգութեան մակարդակը, չէր մշակել իր ազգային ինքնութիւնը, ազգային գիտակցութիւնը, եւ որոնում էր իր ազգի ու ազգային ինքնութեան հիմքերը: Իսկ ռազմական ուժով ու պետական հարկադրանքով հպատակեցուած «համայնքները», «հաւաքականութիւնները», «միլլէթները» (յոյներ, հայեր, պուլկարներ եւ այլք) արդէն ձեւաւորուած էին իբրեւ ազգ, ունէին ազգային ինքնութեան ու պատկանելութեան գիտակցութիւն: Նրանք նոյնիսկ պայքարում էին ազգային ինքնորոշման իրաւունքի համար: Որպէս այդպիսիք դրանք կապուած էին իրենց պատմական հողերի հետ ու պահանջում էին այնտեղ հաստատել իրենց ազգային պետականութիւնը կամ ազգային ինքնավարութիւնը կամ ազգային տեղական իրաւունքները: Կազմակերպուածութեան մակարդակի այդ տարբերութիւնը իրեն զգալ էր տալիս կեանքի գրեթէ բոլոր ասպարէզներում:

Իբրեւ ազգ ձեւաւորուելու, ազգային ինքնութիւն ու գիտակցութիւն մշակելու համար մեծամասնութիւն կազմող ու պետական մեքենային տիրած ոյժը՝ թուրք համայնքը, անհրաժեշտ նկատեց իրենից աւելի բարձր կազմակերպուածութեան մակարդակի վրայ գտնուող համայնքներին հետապնդումների, տեղահանութիւնների, բռնի ձուլման եւ ցեղասպանութեան միջոցներով զրկել իրենց նուաճած առաւելութիւններից եւ իրաւունքներից: Օսմանեան ընկերութեան արդիականացումն ու եւրոպականացումը, պնդեց թուրք վերնախաւը, հնարաւոր չի լինի առանց բռնի միջոցների գործադրութեան, քանի որ երկրի կեանքի եւրոպականացումից նրանք (հայերը, յոյները, հրեաները, պուլկարները) աւելի շատ ու շուտ կ՚օգտուեն, քան՝ «թուրքերը»: Թուրք վերնախաւը համոզուած էր որ իրենք այլ ճանապարհով չեն կարող որպէս ազգ ձեւաւորուել ու ազգութիւն դառնալ: Նրանց պատկերացմամբ այլընտրանքը համազօր էր ինքնաոչնչացման:

Թրքական կեանքի տարօրինակ կառուցուածքի եւ դրա զարգացման առանձնայատկութիւնները Զիա Կոքալփին յուշեցին մշակոյթի ու քաղաքակրթութեան մի նոր ինքնատիպ ըմբռնում ու սահմանում:

Մշակոյթն ու քաղաքակրթութիւնը, ըստ թուրք ընկերաբանի, ընդհանուր կողմեր ունեն, քանի որ երկուսն էլ ընդգրկում են կեանքի կրօնական, բարոյական, իրաւական, իմացական, գեղարուեստական, տնտեսական, լեզուական եւ տեխնիկական ասպարէզները: Տարբերութիւնն այն է, որ մշակոյթը ազգային է, իսկ քաղաքակրթութիւնը՝ միջազգային: Քաղաքակրթութիւնը ստեղծուում է մարդու գիտակցուած արարքներով եւ բանական արտադրանք է, մինչդեռ մշակոյթի տարրերը գիտակցուած անհատական գործունէութեան արդիւնք չեն: Այնպէս՝ ինչպէս բոյսերն ու կենդանիները բնականօրէն մեծանում են, այնպէս էլ մշակոյթի տարրերը զարգանում են տարերայնօրէն: Մի հաւաքականութիւն տարերայնօրէն մեծանալով ու զարգանալով ստեղծում էր իր ինքնաբուխ ազգային մշակոյթը: Հարեւանների հետ շփուելով եւ պետութեան մակարդակի հասնելով, նրանք իրարից փոխառնելով առաջացնում են շրջանային ու միջազգային քաղաքակրթութիւն, որն իր հերթին արտաքին է նրանցից ամէն մէկի համար: Իւրաքանչիւրը կարող է մերժել կամ ընդունել այդ քաղաքակրթութիւնը, բայց ո՛չ մշակոյթը: Ազգն ունի իր սեփական մշակոյթը, բայց ոչ քաղաքակրթութիւնը:

«Մինչեւ 15 տարի առաջ,– գրում է Կոքալփ (իմա՝ գրութեան հեղինակման թուականից՝ 1923 թ. հանած 15=1908 թ., Գ.Խ.) ու այս երկրում գործում էին երկու թուրքերէն լեզուներ: Մէկը պաշտօնական էր, եւ օգտագործուում էր լոկ գրելու համար: Այն կոչուում էր օսմաներէն: Միւսը՝ հասարակ ժողովուրդի լեզուն էր: Այն արհամարհուած կերպով կոչուում էր թուրքերէն: Այն ազգի իրաւ ու բնական լեզուն էր: Օսմաներէնը ոչինչ էր, եթէ ոչ թուրքերէն, արաբերէն, պարսկերէն բառակազմի, ձեւաբանութեան եւ քերականութեան արհեստական մի խառնուրդ: Թուրքերէնը զարգացել է բնականօրէն: Այն մեր սեփական մշակոյթի լեզուն էր: Օսմաներէնը մի լեզու էր, որ գիտակցաբար ու բանականութեամբ կերտուած էր որոշ անհատների կողմից: Այն օսմանեան քաղաքակրթութեան լեզուն էր»[1]:

«Քաղաքակրթութիւնը որոշակի մեթոդներով մշակուած եւ ազգից ազգ փոխանցուած տեխնիկայի ու հասկացութիւնների հանրագումարն է: Մշակոյթը, միւս կողմից, կազմուած է զգացմունքային դրսեւորումներից, որոնք երբեք չեն կարող արհեստական լինել եւ փոխանցելի՝ մի ազգից միւսը»: «Մենք նկատում ենք որ մշակոյթը հիմնականում կազմուած է զգացմունքային տարրերից, երբ քաղաքակրթութիւնը բաղկացած է գաղափարներից: Զգացումները մարդու գիտակցական ու բանական գործունէութեան արդիւնք չեն: Մի ազգ չի կարող ընդօրինակել մի այլ ազգի կրօնական, բարոյական կամ գեղագիտական զգացումները»[2]: Հետեւաբար, երբ Կոքալփ խօսում է թուրք ազգի եւրոպականացման մասին, նա նկատի ունի ոչ թէ թուրքերի մշակութային փոփոխութիւնը, թուրքական մշակոյթը եւրոպականով հարստացնելու միտումը, այլ՝ Եւրոպայի արտաքինը վերցնելը, Եւրոպայի նիւթական ու գիտական ձեւը վերցնելը, միշտ պահելով թրքական խորքը, թրքական մշակոյթը, թուրքական հոգեւոր ու կենսական արժէքները: Մշակութայինի թուլացումը անվերապահօրէն տանում է դէպի նահանջ ու թուլացում, պարտութիւն:

Կոքալփ գտնում է որ որոշակի համերաշխ ազգակցութիւն, ներքին միասնութիւն գոյութիւն ունի մշակոյթի տարբեր երեսների միջեւ: Սխալ է կարծել որ նոյն ներդաշնակութիւնը առկայ է քաղաքակրթութեան բաղադրամասերի միջեւ: Այսպէս օրինակ. «Օսմանների քաղաքակրթութիւնը խառնուրդն էր թրքական, պարսկական, արաբական մշակոյթներից, իսլամական կրօնից, արեւելեան եւ վերջերս էլ արեւմտեան քաղաքակրթութիւններից փոխ առնուած հաստատութիւնների: Այդ հաստատութիւնները երբեք չեն համադրուել, ամբողջութիւն չեն կազմել: Քաղաքակրթութիւնը ներդաշնակ մի ամբողջութիւն է դառնում, երբ այն համալուծուում է ազգային մշակոյթի մէջ: Քաղաքակրթութիւնը Անգլիայում զօդուած է անգլիական մշակոյթի հետ, ուստի գոյութիւն ունի որոշակի համակազմութիւն բրիտանական քաղաքակրթութեան ու մշակոյթի միջեւ»[3]:

«Երբ,– պնդում է Կոքալփ,– հակասութիւն է առաջանում մշա-

1. Gokalp, Ziya, *Turkish Nationalism And Western Civilization*, p. 195.
2. Նոյնը, էջ 106:
3. Նոյնը, էջ 108:

կութապէս ուժեղ բայց թոյլ քաղաքակրթութիւն ունեցող եւ մշակութապէս քայքայուած իսկ գերադաս քաղաքակրթութեամբ ազգի միջեւ, առաջինը միշտ յաղթում է: Երբ հին եգիպտացիները զարգացրին իրենց քաղաքակրթութիւնը, նրա մշակոյթը անկում ապրեց: Բարձրացող պարսկական պետութիւնը, թէեւ յետամնաց քաղաքակրթութեամբ, մշակութապէս ուժեղ էր եւ պարտութեան մատնեց Եգիպտոսը: Մի քանի դար անց Իրանում քաղաքակրթութիւնը զարգացաւ, հետեւաբար նրա մշակոյթը անկում ապրեց: Իրանցիները պարտուեցին յոյներից, որոնց մշակոյթը դեռ անվնաս էր: Երբ յունական մշակոյթը անկում ապրեց, ե՛ւ յոյները, ե՛ւ իրանացիները պարտուեցին մշակութապէս ուժեղ, բայց անքաղաքակիրթ մակեդոնացիների կողմից: Նոյն պատճառով էլ մակեդոնացիները: Երբ նրանք կորցրին իրենց մշակոյթը, Արեւելքում տապալուեցին Պարթեւ եւ Սասանեան գերդաստաններից, իսկ Արեւմուտքում՝ Հռոմի կողմից: Վերջապէս, արաբները, որոնք անտեղեակ էին քաղաքակրթութիւնից, բայց ունէին ուժեղ մշակութային հիմք, պարտութեան մատնեցին սասանեաններին եւ հռոմէացիներին: Իրենց հերթին արաբներն էլ իրենց քաղաքակրթութեան զարգացումով կորցրին իրենց մշակոյթը: Նրանք իրենց քաղաքական գերակայութիւնը զիջեցին սելճուք թուրքերին, որոնք իրենց աւանդական սովորութիւններով նոր էին եկել Թուրքիստանից: Թուրքական ազգային մշակոյթը միակ ոյժն էր որ հնարաւոր դարձրեց թուրքերին մնալ անկախ մինչեւ այն ժամանակ, որ նրանք Անգլիան ու Ֆրանսան դուրս մղեցին Տարտանէլներից, եւ զինադադարից յետոյ պարտութեան մատնել յոյներին ու հայերին, եւ անուղղակիօրէն, անգլիացիներին, որոնք զինել ու ֆինանսաւորել էին նրանց»[1]:

Կոքալփի տեսութեան համաձայն, հակասուլթանական պայքարում յաղթանակած եւ իրենց անկախ պետականութիւնը հաստատած բոլոր ազգերն ունեցել են զօրաւոր ազգային մշակոյթ եւ կուլ չեն գնացել քաղաքակրթութեան սահմանափակումներին ու կաշկանդումներին: Օսմանեան Կայսրութիւնը նրանց հետ համեմատած, ունեցել է պարտուողին ընորոշ թոյլ ազգային մշակոյթ: Ինքն իրեն հակասելով թուրք ընկերաբանը պնդում է հակառակը:

Ատլանտեան Ովկիանոսից մինչեւ Սեւ Ծով, Կասպից Ծով, Պարսկական Ծոց եւ Սուէզի Ջրանցքը երկարող, Պալքաններին ու Արեւելեան Եւրոպային, Միջին Արեւելքին ու ռուսական տափաստանների զգալի մասին տիրող Օսմանեան Կայսրութիւնը պարտուելով ու սմքելով, մի կերպ կարողացաւ պահպանել նախկին տարածքների շատ փոքրիկ մասը՝ Փոքր Ասիան ու Հայկական Լեռնաշխարհի մի մասը: Եւ Կոքալփ այն ցանկանում է ներկայացնել որպէս յաղթանակ, որպէս թուր-

1. Նոյնը, էջ 109:

քիզմի յաղթանակ: Դա պարտութիւնն էր օսմանականութեան, իսկ յաղթանակը՝ թուրքականութեան: Թուրքիան չկործանուեց թուրքականութեան, թուրքական ոգու շնորհիւ: Թուրքականութիւնը, որ մաքրուած է եւրոպական քաղաքականութեան ախտից, թուրք մշակոյթը, որ հսկում է որդեգրուած արեւմտեան քաղաքակրթութեան ու զբաղում, այն անպարտելի է եւ աւելի ուժեղ է քան եւրոպականը: Այս դիրքերից ու այս ոգով է արդի ազգայնական Թուրքիան նայում ու արժէքաւորում է իր անցեալի պատմութիւնը: Այն իրեն թոյլ չի տայ լինել առարկայական եւ ընդունել իր անցեալի ահաւոր ոճիրները, այդ թւում նաեւ Հայերի Ցեղասպանութիւնը:

ԳԼՈՒԽ Է.

ՀԱՅԵՐԻ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԵՍՆԵՐԸ

Ցեղասպանությունը քաղաքական տեսանկյունից իմաստաւորելու համար, առաջին հերթին անհրաժեշտ է բացայայտել պետութեան հետ նրա ունեցած առնչությունների համակարգը: Երբ թափանցում ենք Ցեղասպանության էութեան մէջ, նկատում ենք որ այն կապուած է ինչպէս թուրքական, եւրոպական եւ ասիական երկրների, այնպէս էլ հայկական պետականութեան հետ:

Եթէ Թուրքիան, հետեւելով աշխարհի քաղաքակիրթ ժողովուրդների օրինակին, ճիշդ կերպով լուծած լինէր իր պետական ճգնաժամը եւ հաստատէր ժողովրդավարական վարչակարգ, ապա բացառուած կը լինէր իր առաջ ծառացած բարդ հարցերը բռնութեամբ ու ծայրայեղ միջոցներով լուծելու իր ընտրանքը: Եթէ Թուրքիան ընդունէր որ հպատակ ժողովուրդներն էլ իրաւունք ունեն ընտրելու իրենց նախընտրած քաղաքական վարչակարգն ու պետությունը կամ ինքնավարությունը, ապա նա ցեղասպանության չէր դիմի Հայկական Հանրապետության առաջացումը բացառելու համար: Ցեղասպանությունը, մի կողմից, արգասիքն էր պետական հարցերը բանականօրէն լուծելու թուրքական պետության անկարողության, եւ միւս կողմից՝ թուրքական պետությունը կենդանի պահելու եւ հայկական պետականության ծնունդը վիժեցնելու միջոց:

Անգլիան ու Ֆրանսան էլ հզօր կայսրություններ էին, գաղութատէր պետություններ: Նրանք էլ ապրեցին ծանր ճգնաժամեր: Նրանց հպատակ ժողովուրդներն էլ պայքարեցին իրենց սեփական ազգային պետությունները ստեղծելու համար: Գաղութատէրերը փորձեցին ճնշել նրանց այդ պայքարը: Շատ օտար ուժեր ձգտեցին չահարկել այդ հակամարտությունները: Այդ հզօր կայսրությունները քայքայուեցին ու հպատակ ժողովուրդները ստեղծեցին իրենց պետականությունը: Բայց, ոչ Անգլիան եւ ոչ էլ Ֆրանսան դիմեց ցեղասպանության կամ ցեղասպանությունը դարձրեց քաղաքական հարցերը լուծելու միջոց, քանի որ նրանց խորթ չէր ժողովրդավարությունը, ազգային ինքնորոշման իրաւունքն ու հարցերի քաղաքական լուծումը, քանի որ այդ երկրների մէջ

խիստ գործօն էին դեմոկրատական ժողովրդական ուժեր՝ ունակ ազդելու պետական մեքենայի վրայ:

Ցեղասպանութիւնը Թուրքերի համար խորհրդանշում է նրանց անկարողութիւնը, նրանց բռնատիրական վարքը, նրանց պարտութիւնը, հարցերը բանականօրէն լուծելու նրանց կարողականութեան անզօրութիւնը: Հայերին համար՝ այն խորհրդանշում է ազատութեան ու ազգային պետականութեան, քաղաքակիրթ աշխարհում իր սեփական տեղն ու դիրքը ունենալու եւ սեփական ինքնատիպութիւնը հաստատելու համար մղուող պայքարը, այդ ընթացքում՝ մարտիրոսացած հերոսները եւ հայերի յաղթանակը, որ մարմնաւորուած է Հայաստանի եւ Արցախի հանրապետութիւնների, ազգու եւ կենսունակ Սփիւռքի եւ Ցեղասպանութիւնից յետոյ կենդանի մնացած ութ միլիոն հայութեան մէջ:

Հայերի Ցեղասպանութեան յիշատակումը աշխարհին մի կոչ է, որ պահանջում է բոլոր վիճելի հարցերը լուծել քաղաքական բանակցութիւնների միջոցով, ամրապնդել ժողովրդավարութիւնը, ունենալ պետութեան հակամարդկային ու հակադեմոկրատական արարքները արգելակելու ունակ ժողովրդական կազմակերպութիւններ եւ պաշտպանել ազգերի ինքնորոշման եւ ընդհանրապէս մարդկային իրաւունքները:

Ցեղասպանութիւնը հայերին համար քաղաքական խորք ունի, քանի որ այն ունակ է մագնիսի պէս իր դաշտում հաւաքելու հայ կեանքի կարեւորագոյն հարցերը: Այն հայ ժողովրդի տարբեր խաւերն ու հոսանքները համախմբում է որոշակի ուղղութեամբ գործելու համար: Այն յաճախ դառնում է այն չափանիշը, որով հայ ժողովուրդը որոշում է իր տուեալ յարաբերութեան բնոյթը դէպի այլ ժողովուրդները, պետութիւնները, կուսակցութիւններն ու կազմակերպութիւնները: Այն, որպէս արդար լուծում պահանջող մի երեւոյթ, մի բանակում է հաւաքագրում ինչպէս իրենց արմատները մոռացած հայերին, այնպէս էլ օտարազգի մարդասէրներին:

Ցեղասպանութիւնը որոշիչ գործօն է դարձել ժողովրդական շարժումների կառոյցում: Այն տասնամեակներ շարունակ կարեւոր դեր խաղաց Խորհրդային պայմաններում ազգայնական ոգին սնելու գործում, Սփիւռքի հայապահպանութեան ջանքերում: Նա անփոխարինելի ծառայութիւն մատուցեց ինչպէս Ղարաբաղեան Շարժման ծաւալման, այնպէս էլ անկախ ու ազատ Հայաստանի գաղափարի մարմնաւորման եւ իրականացման գործում: Իր այս եւ նման այլ յատկութիւնների համար Ցեղասպանութեան Հարցը, իր այլազան մեկնաբանութիւններով, բարձրացւում է գրեթէ բոլոր հայ կազմակերպութիւնների ծրագրերում եւ այլ փաստաթղթերում:

Թուրքերը բռնագաղթի ենթարկելով հայերին, զանգուածօրէն նրանց ջարդելով, իրարից բաժանեց հայ մարդը եւ հայ հողը, եւ աշխատեց բացառել հայ հողի վրայ հայ պետականութեան հաստատման հնարաւորութիւնները:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՐՑԸ ԵՒ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

«Արեւելեան Հարց» արտայայտութիւնը առաջին անգամ օգտագործուել է Վերոնայի Վեհաժողովի (1822 թ.) փաստաթուղթում՝ Յունական Ազատագրական Շարժման մասին խօսելիս: Այդ դիւանագիտական կամ պատմագիտական եզրի միջոցով արտայայտուել է հակասութիւնների այն կծիկը, որի բաղադրամասերը կարելի է համարել հետեւեալները.

1. Հակասութիւնները անընդհատ փոքրացող ու թուլացող Օսմանեան Կայսրութեան եւ նրա կողմից նուաճուած բազմաթիւ ժողովուրդների ազգային կազմակերպութիւնների միջեւ (ալպանական, արաբական, ասորական, յունական, սլաւոնական, պուլկարական, հայկական, հրէական, քրտական եւ այլ):
2. Հակասութիւնները Օսմանեան Կայսրութեան եւ մեծ պետութիւնների միջեւ (ինչպէս Անգլիա, Աւստրիա, Գերմանիա, Ռուսաստան, Ֆրանսա), որոնք ձգտում էին մեծացնել իրենց տարածքային, քաղաքական եւ տնտեսական ազդեցութեան շրջանակները ի վնաս Օսմանեան Կայսրութեան:
3. Հակասութիւնները մեծ տէրութիւնների միջեւ, որոնք առաջանում էին աշխարհը վերաբաժանելու նրանց պայքարում:
4. Հակասութիւնները մեծ տէրութիւնների եւ հակասուլթանական ճակատում վճռական դեր խաղացող ազգային ազատագրական շարժումների միջեւ, որոնք օգտագործւում էին Օսմանեան Կայսրութեան ներքին գործերին միջամտելու եւ Սուլթանի վրայ ազդելու համար:
5. Հակասութիւնները մեծ տէրութիւնների եւ հակասուլթանական ճակատի բաղադրամաս հանդիսացող թուրքական բարեկարգչական շարժումների միջեւ, որոնք մի կողմից ձգտում էին եւրոպականացնել երկիրը, եւ միւս կողմից ուզում էին մշակել ինքնատիպ տեսակի թրքական արեւելակեդրոնական (oriento-centered) վարդապետութիւն:

6. Հակասութիւնները Սուլթանիզմի եւ հակասուլթանիզմի միջեւ: Հակասուլթանիզմը յաճախ հանդէս էր գալիս տրոհուած վիճակում, որտեղ թուրք բարենորոգիչները յաճախ պաշտպանում էին կայսրութեան շահերը եւ ստեղծում լրացուցիչ լարուածութիւն ազգային ազատագրական շարժումների եւ թուրք բարենորոգիչների միջեւ:

Այս հակասութիւնների մթնոլորտը մեծապէս նպաստեց թուրքական կառավարութեան հակահայ քաղաքականութեան ու Հայերի Ցեղասպանութեան գաղափարի յղացմանն ու գործադրութեանը:

Այսպիսով, դժուար չէ եզրակացնել որ Հայկական Հարցն ու Հայերի Ցեղասպանութիւնը հեշտութեամբ կարելի է վերլուծել եւ քաղաքական, տնտեսական եւ տարածքային առումով բացատրել «Արեւելեան Հարց»ի հակասութիւնների կծիկով:

Պէտք է նաեւ նկատի ունենալ որ Օսմանեան Կայսրութեան ծաղկումը տեղի էր ունեցել 16-րդ դարի երկրորդ կիսից մինչեւ 17-րդ դարի կէսը: Դրանից յետոյ սկսել էր նրա անկման շրջանը, որ տեւել էր մինչեւ կայսրութեան քայքայումը 1918 թ.: «Արեւելեան Հարց»ի առաջացման ժամանակ Օսմանեան Կայսրութեան քայքայումը խիստ արագացել ու խորացել էր:

«Արեւելեան Հարց»ի անբաժան մասն էին կազմում Յունական Հարցը, Ալպանական Հարցը, Արաբական Հարցը, Պաղեստինեան Հարցը, Քրտական Հարցը, Սլավոնական Հարցը եւ Հայկական Հարցը: Նրանից իւրաքանչիւրը լուծուեց իւրովի:

Հայկական Հարցը ունէր լուծման բազմաթիւ քաղաքակիրթ տարբերակներ՝ բարեփոխումներ հայկական գաւառներում, ինքնավարութիւն հայկական գաւառներին, ֆեդերացիա Թուրքիայի հետ, հայկական հողերի անցում Ռուսաստանին, անկախ Հայաստան՝ Արեւմտեան Հայաստանում, անկախ Հայաստան՝ Արեւմտահայաստանի եւ Արեւելահայաստանի միացմամբ եւ այլն: Թուրքերն առաջարկում էին.

1) Օսմանեան ազգի ստեղծմամբ ձուլել հայերին:
2) Հայկական Հարցը լուծել համակայսերական բարեփոխման ծրագրի մէջ (փոփոխութիւններ ողջ կայսրութեան տարածքով մէկ, առանց խօսելու հայկական վիլայէթների մասին):
3) Պատմական Հայաստանը դարձնել հայազուրկ՝ բռնագաղթի եւ ցեղասպանութեան ճանապարհով:
4) Թուրքական ընդդիմադրութեան համեմատաբար դեմոկրատական թեւը առաջարկում էր այն լուծել կայսրութեան կառավարման ապակեդրոնացման ծրագրի ոգով:

«Արեւելեան Հարց»ը կարելի է բաժանել չորս դարաշրջանների: Առաջին շրջանը ընդգրկում էր 18-րդ դարի առաջին կէսից մինչեւ

Ղրիմի պատերազմը: Երկրորդ շրջանը կարելի է համարել Ղրիմի պատերազմից մինչեւ Պերլինի Վեհաժողովը ընկած ժամանակաշրջանը: Երրորդ շրջանը տարածւում է Պերլինի Վեհաժողովից մինչեւ Լոզանի դաշնագիրը: Չորրորդ շրջանը բնութագրւում է Լոզանի դաշնագրից մինչեւ օրս տեղի ունեցող դէպքերով, երբ Օսմանեան Կայսրութեան փոխարէն պատմական թատերաբեմ է գալիս Թուրքական Հանրապետութիւնը, երբ Արաբական Աշխարհն ու Պալքանեան ժողովուրդները ազատագրւում են եւ գործում է Հայաստանի Հանրապետութիւնը, երբ առաջացել է Ռուսաստանի Դաշնակցային Հանրապետութիւնը, երբ արեւելեան ժողովուրդները մղում են հակագաղութատիրական պայքար, եւ տիրակալ են Հիւսիս Ատլանտեան Կազմակերպութիւնն ու Եւրոպական Միութիւնը: Արեւելեան Հարցը մնում է չլուծուած: Փոխւում են լոկ այն բնորոշող հակասութիւնները: Իրականանում է Հայերի Ցեղասպանութեան ու գաղթի նոր ալիքը:

Արեւելեան Հարցի առաջին շրջանում Ռուսաստանը իրեն կցեց հարաւային Ուքրաինան, Ղրիմը, Պեսարապիան ու Կովկասը: Նա թուրքական բանակներին քշեց այն տարածքներից, որոնք նրա տիրապետութեան տակ էին դարեր շարունակ: Մեծ տէրութիւնների Պալքանեան եւ Միջին Արեւելեան քաղաքականութիւններն արտայայտում էին խիստ ճակատում՝ ինչպէս իրար, այնպէս էլ իրենց եւ Օսմանեան Կայսրութեան միջեւ: Այդ ստեղծում էր քաղաքական տատանումների մեծ ալիքներ: Օսմանեան Կայսրութեան (Թուրքերի) հակառուսական զգացումները խիստ ուժեղացան, իսկ ազգային ազատագրական պայքար մղող ժողովուրդների շրջանում զօրացաւ ռուսական կողմնորոշման միտումները: Քաղաքական ուղղուածութեան նման միտումների բեւեռեցման պայմաններում էլ աւելի սրուեցին յարաբերութիւնները Թուրքերի եւ ազգային ուժերի միջեւ: Այդ շրջանում, մի կողմից նկատելի է Թուրքական բարենորոգչական խմբակների ու Թանզիմաթական շարժումների ձեւաւորումը, եւ միւս կողմից՝ խտրականութեան եւ բռնագաղթերի ծաւալումը: Օսմանիզմի գաղափարը քննարկման առարկայ սկսեց դառնալ: Օսմանիզմը այն ուսմունքն էր, որով Օսմանեան Կայսրութեան բոլոր ժողովուրդները համարւում էին մի ազգ՝ օսմանական ազգ: Տասնեակ ժողովուրդներ իրենց պապենական հողի վրայ, իրենց պատմական հայրենիքում համարւում էին մեռած: Ճնշուած ազգերը ուժեղացնում են իրենց հակասուլթանական պայքարը եւ սկսում են փնտռել նոր դաշնակիցներ:

Արեւելեան Հարցի երկրորդ շրջանում մեծ տէրութիւնները խախտում են Օսմանեան Կայսրութեան վիճակը անձեռնմխելի պահելու իրենց խոստումը: Անգլիան վերցնում է Կիպրոսն ու Եգիպտոսը: Աւստրիան իրեն է կցում Պոսնիան եւ Հերցեկովինան: Ֆրանսան գաղութացնում է Թունուզը: Ռուսաստանը վերցնում է Կարսը, Ախալքալակն

ու Ախալցխան: Պուլկարները, չերնորգորցիները, ռումանացիները եւ սերպերը ձեռք են բերում ինքնուրոյնութիւն: Թուրքերը, մի կողմից ուժեղացրին իրենց եւրոպականացման քաղաքականութիւնը, եւ միւս կողմից մշակեցին զօրաւոր ատելութիւն դէպի եւրոպական տէրութիւնները, որոնք չարաշահում էին Օսմանեան Կայսրութեան թուլութիւնը: Միաժամանակ Եւրոպայում ծնունդ առին հակասուլթանական թրքական քաղաքական միաւորումներ, որոնք յետագայում դարձան Երիտթուրքեր: Վերջիններս, թէեւ յենւում էին եւրոպական նոր քաղաքական մտածողութեան վրայ, բայց հայ-եւրոպական բարեկամութիւնը համարում էին դաւաճանութիւն: Նրանք ծրագրում էին եւրոպական ուժերը օգտագործել իշխանութիւնը գրաւելու, բայց ոչ թէ կայսրութիւնը վերացնելու, ժողովրդավարական դարձնելու համար:

Ռուսաստանում յեղափոխական շարժման ծաւալումը փոփոխութիւններ է մտցնում հայերի՝ ռուսական կողմնորոշման մէջ: Առաջանում է երկու ռուսական կողմնորոշման տարբերակ: Առաջինը գտնում էր որ հայ ազատագրական շարժումը պէտք է դաշնակցի ռուսական պետականութեան հետ: Երկրորդը գտնում էր որ հայ ազատագրական շարժումը պէտք է դաշնակցի ռուսական յեղափոխական շարժման հետ: Շուտով մշակւում է այն գաղափարը որ հայերը անկախ հայրենիք կարող են ունենալ միայն Ցարիզմի եւ Սուլթանիզմի տապալմամբ: Հետեւաբար, այդ ծրագիրն իրականացնելու համար հայերը պէտք է ազատագրէին ինչպէս Արեւմտահայաստանը, այնպէս էլ Արեւելահայաստանը: Այդ իսկ պատճառով ե՛ւ ցարական Ռուսաստանը, ե՛ւ սուլթանական Թուրքիան դէմ էին հայ ազատագրական շարժման: Բայց եւ այնպէս Թուրքիան փորձում էր օգտուել հայերի հակառուսական տրամադրութիւնից, իսկ Ռուսաստանը՝ հակաթուրքականից: Այս խիստ բարդացնում էր հայոց վիճակը: Բայց նկատի ունենալով որ Արեւմտահայաստանը կազմում է Պատմական Հայաստանի մեծագոյն մասը, որ Արեւմտահայաստանի Հարցը արդէն դարձել է միջազգային քաղաքականութեան քննարկման առարկայ, որ թուրքերը գործադրում են ծայրայեղ հակահայ քաղաքականութիւն (խտրականութիւն, տեղահանութիւն, ձուլում, ջարդ) հայերը օրակարգի գլխաւոր հարց դարձրին Արեւմտահայաստանի ազատագրման հարցը, լրիւ չանտեսելով հակացարական պայքարը: Այս տեղի էր ունենում այն ժամանակ, երբ թուրքերը երազում էին վերազաւթել իրենց կորցրած հողերը:

19-րդ դարի երկրորդ կէսին Օսմանեան Կայսրութիւնը սկսեց գործադրել կիսանկախ շրջանները, քաղաքները զրկել իրենց այդ վիճակից, եւ լրիւ հպատակեցնել իրեն: Այս հողի վրայ առաջացան ինքնապաշտպանական շարժումներ Պատմական Հայաստանում, Լիբանանում, Պալքաններում եւ Արաբական Աշխարհում: Այս շարժումները, նաեւ հայ իրականութեան մէջ օրակարգային դարձրին քաղաքական

կուսակցութիւնների ձեւաւորումը: Նրանք մեծապէս նպաստեցին թուրքական բարեկարգչական հոսանքների ձեւաւորմանն ու զարգացմանը:

Չկարողանալով մարդկային միջոցներով, ընկերաբանական, դիւանագիտական, քաղաքական եղանակներով յաղթահարել իր առաջ կանգնած բարդ վիճակը, թուրքերը սկսեցին գործադրել ծրագրուած ջարդը, որպէս հարցերի լուծման իրենց համար ընդունելի միակ մեթոտ:

Երրորդ շրջանը կարելի է բաժանել չորս ենթափուլերի, Պերլինի Վեհաժողովից մինչեւ 1895 թ. ջարդերը. վերջինից մինչեւ 1908 թ. յեղափոխութեան յաղթանակը եւ Ատանայի ջարդերը. յեղափոխութեան յաղթանակից մինչեւ կայսրութեան փլուզումը՝ Թուրքիայի պարտութեամբ 1918. 1918 թ. մինչեւ Լոզանի խաղաղութեան պայմանագիրը՝ Թուրքիայի վերակենդանացումը:

Այս շրջանում Թուրքիան փաստօրէն կործանւում էր: Նա չէր կարողանում կարգաւորել իր յարաբերութիւնները եւրոպական երկրների հետ, չէր կարողանում գլուխ հանել հակասուլթանական, բարենորոգչական եւ ազգային ազատագրական շարժումներից, չէր կարողանում յաղթահարել իր տնտեսական սնանկութիւնը, երկրի քաղաքական եւ ընկերային քաոսը: Թուրքիան որոնում էր մի նոր ոյժ, մի նոր ռազմավարութիւն, մի նոր գաղափարախօսութիւն, մի նոր եւրոպական դաշնակից: Նոր ոյժը դարձան Երիտթուրքերը, նոր ռազմավարութիւնը՝ պատերազմը, նոր դաշնակիցը՝ Գերմանիան, նոր գաղափարախօսութիւնը՝ ռազմամոլութիւնը, փանիսլամիզմի, փանթուրքիզմի եւ փանթուրանիզմի խառնուրդը: Երիտթուրքերը պէտք է վերականգնէին 1876 թ. սահմանադրութիւնը, գործադրէին որոշ բարեփոխումներ, թուլացնէին ազգային ազատագրական շարժումները: Պատերազմը օգնելու էր Թուրքիային՝ վերագրաւելու իր կորցրած տարածքները եւ վերահաստատելու նախկին մեծ կայսրութիւնը: Ռազմամոլական գաղափարախօսութիւնը բարձրացնելու էր թրքական ոգին, բանակի եւ բնակչութեան բարոյականութիւնը, եւ կարգ ու կանոն էր հաստատելու երկրում: Փանթուրանիզմը, փանթուրքիզմը եւ փանիսլամիզմը կայսրութեան տալու էր նորանոր դաշնակիցներ Իսլամական Աշխարհում: Գերմանիան իրականացնելու էր Թուրքիայի արդիականացումը: Այդ բոլորը միասին իրագործելու էին ազգային մի մեծ երազանք, մի լաւատեսական տեսական: Վերջինների մէջ թուրքերը բացառում էին նոր ազգային պետութիւնների ստեղծման հաւանականութիւնը, ժողովուրդների ազատագրումը: Այդ մեծ ծրագրի մաս էր կազմում նաեւ ֆիզիքական ոչնչացումը բոլոր ոչ-իսլամ (ոչ-թուրք) ազգութիւնների: Այսպիսով, խտրականութեան քաղաքականութիւնից նրանք անցան ձուլման, եւ վերջինից էլ՝ ցեղասպանութեան:

1908 թ. յեղափոխութիւնից յետոյ Թուրքիայում ուժեղանում է մի նոր թուրքական ընդդիմադիր շարժում: Գերմանական արեւելումի փոխարէն այն առաջադրում է անգլո-ֆրանսիականը: Համակեդրոնացման քաղաքականութեան փոխարէն այն պահանջում է իրականացնել ապակեդրոնացում՝ ինչպէս վարչա-տարածքային, այնպէս էլ ազգային առումներով: Պատերազմական քաղաքականութեան այն հակադրում էր տնտեսական համագործակցութիւն եւ տնտեսական լայն ներդրում, օտար եւ ազգային, Թուրքիայի տարածքով մէկ: Հայերը գերադասում էին ընդդիմադրութեան կեցուածքը:

Այս պայմաններում, թուրքական մոլեռանդութիւնը ու կոյր ազգայնամոլութիւնը ցեղասպանութիւնը համարեցին միակ հնարաւոր արդիւնաւէտ ազգային քաղաքականութիւնը, Հայկական Հարցի լուծումը:

«Արեւելեան Հարց»ի հոլովոյթը մինչեւ 1918 թ. փաստօրէն գնաց Օսմանեան Կայսրութեան փոքրացման ու թուլացման հունով, եւրոպական մեծ տէրութիւնները տարածքային, տնտեսական եւ քաղաքական ազդեցութեան գօտիների մեծացման հունով, Պալքաններում եւ Միջերկրական Ծովի ափերին ինքնուրոյն պետութիւնների հաստատման հունով, Արաբական Աշխարհում բռնատիրութեան, խտրականութեան եւ ջարդերի ուժեղացման հունով եւ Պատմական Հայաստանում ցեղասպանութեան իրագործման հանգրուանով:

Պուլկարական Հարցը լուծուեց պուլկարական ինքնուրոյն պետականութեան հաստատմամբ: Պուլկարիան պայքարում էր միայն Թուրքիայի դէմ եւ նրան օգնում էին ինչպէս Ռուսաստանը, այնպէս էլ Անգլիան, Ֆրանսան ու Գերմանիան: Նոյնն էր վիճակը Պալքանեան եւ Միջերկրական Ծովի բոլոր միւս այն ժողովուրդների համար, որոնք սահմանակից չէին Ռուսաստանին կամ տարածքներ չունէին Ռուսական Կայսրութեան սահմաններում:

Գերմանա-թուրքական դաշնակցութեան պարտութիւնը Թուրքիային կանգնացրեց մասնահատման հնարաւորութեան առաջ: Օսմանեան Կայսրութեան փլատակներից առաջանալու էին անկախ Մեծ Յունաստանը, Մեծ Հայաստանը, կիսանկախ արաբական պետութիւնները եւ Պալքանեան հանրապետութիւնները: Հարաւ-արեւմտեան Թուրքիան խոստացուել էր յոյներին, Պատմական Հայաստանն ու Կիլիկիան՝ հայերին: Ռուսաստանում պոլշեւիկեան յեղափոխութեան յաղթանակը փոխեց ուժերի յարաբերութիւնն ու շրջանի քաղաքական պատկերը: Արեւմուտքը ձգտում էր Կովկասում մի պատուար ստեղծել, որպէսզի պոլշեւիզմը չներթափանցի Միջին ու Մերձաւոր Արեւելք: Սկզբում կարծում էին որ այդ պատուարը լինելու է Մեծ Հայաստանը: Դրանում համոզուած էին ե՛ւ Արեւմուտքը ե՛ւ հայերը: Բայց շուտով Մուսթաֆա Քեմալը կարողացաւ Արեւմուտքին համոզել որ ինքը աւելի լաւ կարող է այդ դերը կատարել, քանի որ ունի մարզուած բանակ, կազմակերպուած պետականութիւն, հմուտ դիւանագիտական անձնակազմ եւ վերջապէս, քանի որ Թուրքերը իրենց ողջ էութեամբ հակառուս են: Պոլշեւիկներին Քեմալը ապացուցեց որ ինքը յեղափոխական է եւ ազատագրական պայքար է մղում կայսերապաշտների դէմ: Պոլշեւիկ իսլամները Լենինին համոզեցին որ փրոքեմալական դիրքորոշումը փրոսովետական տրամադրութիւն կը ստեղծի ողջ Իսլամական Աշխարհում: Պոլշեւիկները վախենում էին որ Թուրքիայի միջոցով Արեւմուտքը կը ստեղծի մի նոր հակասովետական ճակատ: Նրանք ուզում էին ունենալ քիչ թէ շատ բարիկամեցող հարեւան: Այսպիսով նրանք էլ պաշտպանեցին Քեմալական Թուրքիան: Օգը ցնդեց Մեծ Հայաստանը:

Քեմալականները, առիթից օգտուելով կազմակերպեցին նոր ջարդեր, ուզեցին աւարտին հասցնել Հայերի Ցեղասպանութիւնը: Նրանք օգնեցին որ Ցեղասպանութեան կազմակերպիչները փախցնեն աքսորավայրից: Յետագայում Թուրքական Հանրապետութիւնը նրանց հռչակեց ազգային հերոսներ: Այս քաղաքականութիւնը իր իրաւական արտայայտութիւնը գտաւ Լոզանի խաղաղութեան պայմանագրում:

Շատեր կարծում էին որ Օսմանեան եւ Ցարական կայսրութիւնների տապալմամբ եւ նրանց տարածքներում նոր կարգերի հաստատմամբ վերանում է նաեւ Արեւելեան Հարցը: Բայց վերջին եօթանասուն տարիների կեանքը հերքում է այդ վարկածը:

Արեւելեան Հարցը մնում է իր բարդագոյն ձեւով: Մնում են նաեւ բաղադրամաս կազմող Հայկական Հարցը, Քրտական Հարցը, Պաղեստինեան Հարցը եւ նոյնիսկ Արաբական Հարցը:

Հայկական Հարցը դրսեւորւում է որպէս պահանջատիրութիւն, Ցեղասպանութեան ճանաչման համար պայքար, որպէս սփիւռքահայութեան հայապահութիւն, որպէս արտաշխարհ եւ հայրենի փոխադարձ համագործակցութիւն, որպէս Հայաստանի վերակերտում: Պահանջատիրութեան ասպարէզում յատուկ քննարկման առարկայ է դառնում Արցախի եւ Նախիջեւանի հարցը: Այդ տարածքները սթալինեան հայատեաց քաղաքականութեան պատճառով անջատուել էր մայր հողից ու կցուել Ազրպէյճանի:

Եօթանասուն տարիների ընթացքում Նախիջեւանը դառնում է հայազուրկ, իսկ արցախահայութիւնը ենթարկւում է ամենածայրայեղ գաղութացման քաղաքականութեան: Ամէն անգամ որ արցախահայութիւնը բարձրացնում էր իր իրաւունքների պաշտպանութեան հարցը, նա պատժւում էր Պաքուի եւ Մոսկուայի կողմից: Վերջին անգամ արցախահայութիւնը իր սահմանադրական իրաւունքի համար պայքար է սկսում 1988 թ. : Նրան համերաշխութիւն է յայտնում ողջ հայութիւնը: Արդար պահանջին այլ կերպ դիմագրաւել չկարողանալով, ազրպէյճանցիք Սումկայիթում, Պաքւում, Կիրովապատում, Շուշիում եւ բազ-

մաթիւ այլ հայաշատ վայրերում դիմում են ցեղասպանութեան: Նրանք շրջափակման են ենթարկում Հայաստանն ու Արցախը, որպէսզի սովամահ անեն հայութիւնը: Թունաւորում են բազմաթիւ հայ երեխաներ եւ կանայք: Մնում են անպատիժ: Հայաստանը եւ Արցախը ենթարկւում են կրկնակի ռազմական գրաւման: Այնտեղ յայտարարւում է արտակարգ դրութիւն: Հայերին սեւացնում են բոլոր տեսակի անպատշաճ ածականներով: Ղարաբաղի համար պայքարը վերածւում է համաժողովրդական դեմոկրատական ղարաբաղեան շարժման, որ պայքարում է յանուն մարդու իրաւունքի, յանուն ժողովրդական իշխանութեան, յանուն երկրի այլասերուած վերնախաւի շնորհազրկման ու երկրի կեանքի մաքրման: Այն համախոհներ ու բարեկամներ է ձեռք բերում ողջ Սովետական Միութեան եւ աշխարհի մէջ, ու դառնում է դէպի Պերլինի Պատի քանդումը առաջնորդող հոսանքներից մէկը:

Ցեղասպանութիւնը, որպէս բարդ հարցերի լուծման եղանակ կը շարունակուի այնքան ժամանակ, երբ ողջ մարդկութիւնը միացեալ ուժերով չի բռնի ցեղասպանի արիւնոտ ձեռքը ու նրան չի պատժի ըստ արժանւոյն, երբ տարբեր ժողովուրդներ ու պետութիւններ իրենց իրաւունք կը պահեն յաւերժացնելու այլ ազգերին բռնանալու, նրանց անընդհատ շահագործելու, նրանց հողին տիրապետելու մենաշնորհը, երբ ուրիշներին ազատութեան, հաւասարութեան, արդարութեան, եղբայրութեան եւ ազգային զարգացման բնական իրաւունքից կը փորձեն զրկել տարբեր դիմակի տակ հանդէս եկող վարդապետութիւններն ու իրաւակարգերը, երբ շրջակայ ազգերը անտարբեր կը մնան դէպի այլ ազգերի ցաւը, տառապանքը կամ դրանցից կ՝աշխատեն իրենց համար շահեր, արտօնութիւններ ձեռք բերել, երբ կը շարունակի տիրապետել ուժի քաղաքականութիւնը եւ հարցերի լուծման այլ հնարաւորութիւնները կը վերածուեն քաղաքական դիմակի ու շաղակրատանքի, եւ չի լուծուի «Արեւելեան Հարց»ը:

Ինչպէս պատմութիւնը ցոյց է տալիս, Արեւելեան Հարցը լուծւում է աստիճանաբար, փուլ առ փուլ: Նոյն տրամաբանութեան ենթարկւում է հայոց պահանջատիրութեան կէտերի բաւարարումը եւ Հայոց Ցեղասպանութեան ճանաչումն ու դրա պատճառած վէրքերի բուժումը:

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԿԱՌՈՅՑՈՒՄ

Անիի, Հայ-Վրացական Հայկական միացեալ իշխանութեան եւ Կիլիկիոյ Թագաւորութեան անկումից յետոյ, հայերի առաջ ծառացաւ հարցերի մի կոյտ: Այն որոշակիութիւն ստացաւ, երբ Կոստանդնուպոլսում սկսեց գահակալել օսմանցի Սուլթանը, երբ Օսմանեան Կայսրութիւնը հաստատեց իր ամբողջականութիւնը: Դա 15-րդ դարի կէսերին էր: Շուտով իրենց ցաւերի ու դրանց վերացման հրամայականի մասին հայերը տեղեկացրին աշխարհին: Այդ մասին իմացան ինչպէս կրօնապետներ, այնպէս էլ գահակալներ, ինչպէս քրիստոնեաներ, այնպէս էլ իսլամներ, ինչպէս Օսմանեան Կայսրութեան բարեկամները, այնպէս էլ թշնամիները: Այն, հայու ցաւը, աւելի խօսուն դարձաւ Պալքանեան ազատագրական պայքարի ծաւալմամբ, Արեւելեան Հարցի ծնունդով: Ռուս-Թրքական պատերազմներից յետոյ (բացառեալ 1856 թ. Ղրիմի պատերազմը) հայերի մօտ ուժեղանում էր իրենց ցաւերի լուծման հնարաւորութեան նկատմամբ հաւատը: Թուրքերի գիտակցութեան մէջ ամրապնդւում էր Օսմանեան Կայսրութեան տարածքների փոքրացման անխուսափելիութիւնը: 1878 թ. Սան Ստեֆանոյի դաշնագրով հայոց ցաւը դարձաւ Հայկական Հարց:

Հայկական Հարցի ծագումը՝ հայկական ցաւի եւ այն բուժելու անհրաժեշտութեան ճանաչումն էր միջազգային դիւանագիտութեան, միջազգային քաղաքականութեան կողմից: Ճիշդ է, Պերլինի Վեհաժողովում հայերի սպասումների զգալի մասը մնաց երազների աշխարհում: Բայց մի բան անվիճելի էր: Հայկական Հարցը հիմնովին մտաւ քաղաքական կեանք, միջազգային յարաբերութիւնների ոլորտը, պատմագիտութեան էջ եւ դիւանագիտական աշխարհ:

Հայկական Հարցի վերոյիշեալ ընդունումը նշանակում էր, որ՝

ա) Միջազգային դիւանագիտական ու քաղաքական իրաւական աշխարհը ընդունում է օսմանեան իշխանութիւնների կողմից հայերի նկատմամբ կիրառուող ազգային խտրականութեան, իրաւա-

զրկման, բռնի կրոնափոխման, անհիմն բանտարկութիւնների ու տեղահանութիւնների փաստը,

բ) Միջազգային դիւանագիտութիւնն ու քաղաքական-իրաւական միտքը ընդունում է հայերի ազատագրական պայքարի իրաւացիութիւնը,

գ) Միջազգային դիւանագիտութիւնն ու քաղաքական-իրաւական միտքը ընդունում է սեփական պետականութիւն ստեղծելու հայերի իրաւունքը, հայկական սեփական օճախ ունենալու հայու իրաւունքը:

Հայկական Հարցը լուծելու իրենց ծրագրերն էին ներկայացնում Ռուսաստանը, Եւրոպան, հայերը, հակասուլթանական Թուրքիան եւ կայսերապաշտական Թուրքիան:

Ռուսաստանը ցանկանում էր Պատմական Հայաստանի տարածքների վրայ հայկական բարեփոխումներ, ինքնավարութիւն հաստատելու ճանապարհով թուլացնել Օսմանեան Կայսրութիւնը, ուժեղացնել ռուսական ազդեցութիւնը հակասուլթանական աշխարհում (Պալքաններ, արաբական երկիրներ, Կովկաս, Թուրք բարեփոխիչներ): Միաժամանակ նա դէմ էր Հայաստանի լրիւ ազատագրմանը, հայ յեղափոխական շարժումներին:

Եւրոպական երկիրները ձգտում էին նախաձեռնութիւնը վերցնել իրենց ձեռքը եւ ներկայանալ բոլոր հակասուլթանական ուժերի (պալքանեան, արաբական, կովկասեան, հայկական, քրտական) իսկական բարեկամը եւ հովանաւորողը: Միաժամանակ նրանք աշխատում էին «հակասուլթանական խաղաթուղթը» օգտագործել հիւանդ Օսմանեան Կայսրութիւնից «պարգեւներ», «զիջումներ» ձեռք բերելու: Եւրոպան ձգտում էր Թուրքիան կենդանի պահել Ռուսաստանի դէմ: Համաձայն չէր որ Թուրքիան թուլանայ ի նպաստ Ռուսաստանի: Միաժամանակ, նա չէր ուզում տեսնել ուժեղ մի Թուրքական Կայսրութիւն, այնքան ուժեղ, որ իրեն չենթարկուի: Պատմական Հայաստանի տարածքի վրայ բարեփոխումներ, ազգային-մշակութային կամ վարչական ինքնավարութիւն հաստատելու եւրոպական ծրագրերը ենթարկւում էին սոյն ռազմավարութեան պահանջներին:

Հայերը Հայկական Հարցի լուծումը տեսնում էին հայկական ինքնուրոյն պետականութեան վերահաստատման մէջ, ճիշդ այնպէս, ինչպէս ռուսները իրենց հարցի լուծումը տեսնում էին ռուսական տարածքներում պետականութեան հաստատման մէջ, իտալացիները՝ իտալական պետութեան ստեղծման մէջ, յոյները՝ յունականի, պուլկարները՝ պուլկարականի, հնդիկները՝ հնդկականի: Այդ նպատակը կարելի էր իրականացնել ինչպէս հակասուլթանական, հակակայսերապաշտական պայքարի յաղթական աւարտով, այնպէս էլ կայսրութեան մէջ բարենորոգումների եւ ինքնավարութեան հաստատման ճանապարհով: Երկու դէպքում էլ քաղաքական պայքարը անհրաժեշտութիւն էր. մի դէպքում ընդյատակեայ, միւս դէպքում՝ օրինական, բացայայտ: Պատմութիւնը սորվեցնում է որ Հայկական Հարցի լուծումը հնարաւոր չէ մի անգամից: Այն աստիճանական գործընթաց է: Այսօր օրակարգի վրայ է Ցեղասպանութեան ճանաչումը համաշխարհային չափանիշով, Արցախի պետութեան անկախութեան եւ ապահովութեան երաշխաւորումը եւ Հայաստանի Հանրապետութեան տնտեսական ու քաղաքական հզօրացումը:

Պաշտօնական Թուրքիան առաջադրեց Հայկական Հարցի լուծման իր եղանակը: Դիւանագիտական-քաղաքական ձեւով այն Պատմական Հայաստանի տարածքի բարեփոխումները կապեց համաթուրքական միջոցառումների, բարեփոխութիւնների հետ, ու այդպիսով թաղեց: Գործնականօրէն, այն ուժեղացրեց ձուլողական քաղաքականութիւնը, հալածանքը, բռնագաղթը: Վարչական եւ տարածքային փոփոխութիւններով փորձեց վերացնել կամ խիստ թուլացնել հայ բնակչութեան ներգործման ոյժը հայկական գաւառներում: Նկատելով որ այդ բոլորը ցանկալի արդիւնքը չեն տալիս, ձեռնարկեցին ցեղասպանութեան՝ երկրի ռազմականացման պայմաններում: Ցեղասպանութիւնը Հայկական Հարցը լուծելու պետական Թուրքական ծրագիրն է: Այն ըստ էութեան կապուած չէ Հայկական Հարցի հետ եւ ոչ մի կապ (ծագումնաբանական կապ) ունի հայերի այս կամ այն սխալի հետ: Ոչ Եւրոպան, ոչ Ռուսաստանը եւ ոչ էլ հայերը Ցեղասպանութիւնը կապեցին Հայկական Հարցի հետ: Դա իրենց՝ Թուրքերի գործն է: Նրանց հնարածն է: Միայն Թուրքերը կապեցին այն Հայկական Հարցի հետ:

Հայկական Հարցը լուծել ցեղասպանութեան միջոցով, նշանակում է բաժանել հայ ժողովուրդը Պատմական Հայաստանի հողերից ու հայազուրկ դարձնել Պատմական Հայաստանը: Այդպիսով կը վերանայ բարենորոգումների, ինքնավարութեան եւ պետականութեան վերականգնման հարցը, հայերի ազատութեան, ազատ ինքնորոշման հարցը: Այստեղից էլ հնարաւոր է որոշել, թէ ինչ տեսակարար կշիռ կարող է ունենալ ցեղասպանութիւնը Հայկական Հարցի կառոյցի մէջ:

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԵՒ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Ազատագրական պայքարն ու Յեղասպանութիւնը իրար հետ կապուած են մի քանի առումներով: Շատեր կարծում են որ եթէ հայերը ազատագրական պայքար չմղէին, ապա Թուրքերը հայերին չէին ջարդի ու կոտորի: Ուրիշներ գտնում են որ ազատագրական գաղափարախօսութիւնը ներմուծուած է օտար աղբիւրներից՝ եւրոպական աղբիւրներից, եւ չունի ազգային հող: Օտարները այն հայերին ներարկելով՝ վատթարացրել են նրանց վիճակը Օսմանեան Կայսրութիւնում, Թուրքերի հետ առհասարակ: Անտեսւում է այն իրողութիւնը, որ ամէն մի իրաւազրկում, բռնութիւն, ոչ միայն ծնում է ցաւ, դժբախտութիւն, այլեւ բունցք ու հալածանքի ենթարկուող հաւաքականութեան միասնութիւն, համախմբում: Եւ վերջապէս, ազատագրական պայքարը մասնաւոր երեւոյթ չէ: Այն պատմական զարգացման օրինաչափութիւն է, որին դիմել են մեր մոլորակի բոլոր ժողովուրդները, ըստ որում եւ ֆրանսացիները, գերմանացիները, իտալացիները, աւստրիացիները, հունգարացիները, ռուսները, Թուրքերը, Ա.Մ. Նահանգների եւ Հարաւային Ամերիկայի, Ափրիկէի, Ասիայի ժողովուրդներն ու հայերը:

Պատմահայր Մովսէս Խորենացին պատահական չէ որ հայ ազգի նահապետ Հայկի կերպարում շեշտել է հակաբռնակալական եւ ազատատենչութեան յատկանիշները: Նա չի ցանկացել ենթարկուել բռնակալ Բէլին ու դառնալ նրա հպատակը: Ազատ ապրելու նրա վճռականութիւնը պատճառ է դարձել հայ ազգի գոյացութեան, Հայաստան Աշխարհի առաջացման: Այս հայկեան յատկանիշը գործել է ողջ հայ պատմութեան ընթացքում: Վերջին հինգ հազար տարիների ընթացքում, երբ հայ ցեղերը, ցեղախմբերն ու ազգը ընդհանրապէս կորցրել է իր ազատութիւնն ու անկախութիւնը, նա անմիջապէս դիմել է ազատագրական պայքարի տարբեր ձեւերի: Քանի հայ հողը գրաւել ու հայ ազգին ասպատակել են մեծ երկրներ, նա հարկադրուած պայքարել է նրանց դէմ՝ մինչեւ իր ազատութեան ու անկախութեան նուաճումը: Նա ազատագրական պայքար է մղել ասորական, բաբելոնեան, հռոմէական, պարսկական, բիւզանդական, խալիֆաթական, օսմանեան կայսրութիւնների դէմ ու վերականգնել իր պետականութիւնը: Ամէն մի ասպատակութեան յաջորդել է յաղթական ազատագրական պայքարը: Այսպէս են ծնուել Հայկի տոհմի, Արամանիի, Արարատեան, Երուանդեանների, Արտաշէսեան, Արշակունեաց, Բագրատունեաց, Կիլիկեան Թագաւորութիւններն ու հայկական հանրապետութիւնները: Դարաւոր այս գործընթացում մշակուեց հայ ազատագրական պայքարի գաղափարախօսութիւնը, որն իր կնիքը դրեց ինչպէս հայ բանաւոր, այնպէս էլ գրաւոր մշակոյթի վրայ, ինչպէս հայ հեթանոսական, այնպէս էլ քրիստոնէական քաղաքակրթութեան վրայ, ինչպէս հայ պատմագրութեան, գրականութեան, իմաստասիրութեան, գեղագիտական մտածողութեան, ազգային կառոյցների, այնպէս էլ հայ աստուածաբանական մտքի ու հայ ազգային հոգեբանութեան վրայ: Այդ միտումը կենսունակ է նաեւ այսօր: Դժուար է ուսումնասիրել ու հասկնալ հայ իրականութեան որեւէ ասպարէզ առանց նկատի առնելու հայ ազատագրական պայքարի գործօնը: Բացառութիւն չի կազմում Հայերի Յեղասպանութիւնը:

Ազգային ազատագրական պայքարը խիստ բարդ կառոյց է եւ խիստ վտանգաւոր է գերագնահատել կամ թերագնահատել նրա բաղադրամասերից որեւէ մէկը: Այն ենթադրում է ինչպէս ուժային (զինուած ինքնապաշտպանութիւն, զինուած ապստամբութիւն), այնպէս էլ քաղաքական, դիւանագիտական, կազմակերպչական ու գաղափարական գործունէութիւն: Այս տարրերի որոշ մասը նկատում ենք ցեղային միութիւնների (Հայասա, Նայիրի, Արմէն Շուպրիա) կազմաւորման ու Ասորեստանի հետ հայերի վարած քաղաքականութեան մէջ: Երուանդեանների ու մանաւանդ Արտաշէսեանների շրջանում գլխաւոր գործօն է դառնում հայախօս ցեղերի միութեան, աշխարհական կարգերի հաստատման ու մեծ քաղաքականութեան հարցերը: Տիգրան Բ. նպատակադրուեց ոչ միայն Հայաստանի անկախութեան ապահովութիւնն ամրապնդել ու իր տիրապետութիւնը մեծացնել, այլեւ յունական մշակոյթը պաշտպանել ու շրջանի փոքր իշխանութիւնները միացնելով դրանք համախմբել հակահռոմէական ու հակապարսկական պայքարում: Արշակունիները ազատագրական պայքարում զինեալ պայքարի կողքին որպէս գաղափարական գործօն ընդունեցին քրիստոնէութիւնը, հաստատեցին Հայ Եկեղեցին, եւ ստեղծեցին ու խորքով ազգայնացրին հայ գրաւոր մշակոյթը: Բագրատունիները իրենց թագաւորութիւնը հաստատելիս վարպետօրէն օգտագործեցին խալիֆայութեան ու տարբեր արաբ ցեղերի հակադրութիւնը: Կիլիկեան թագաւորութիւնը յենուելով մի կողմից Խաչակիրներին, ու միւս կողմից՝ մոնկոլական խաներին, մեծացրեց իր հզօրութիւնն ու միջազգային կապերը՝ խթանելով հայ վերածննդեան հարուստ մշակոյթի բարգաւաճումը:

Հայկական հողի օտար տիրապետությունը իր ամենից երկար տեւողությունը ունեցաւ վերջին դարերի ընթացքում: Հայ ազատագրական պայքարը անմիջապէս յաջորդեց Հայաստանի բիւզանդական եւ ապա պարսկական, թուրքական ու ռուսական տիրապետութեան: Հայերը գործի դրին ազատագրական պայքարի բոլոր ձեւերը (զինուած պաշտպանութիւն, գաղափարական պայքար, դիւանագիտական զանազան գործունէութիւններ, ժամանակաւոր ու երկարատեւ դաշինքներ):

19-րդ դարի վերջերից ազատագրական պայքարի հասկացողութեան, դրա հիմնաւորման տրամաբանութեան մէջ մտնում է «Ազգերի անկախ ինքնորոշման իրաւունքը», ըստ որի ամէն մի ազգ իրաւունք ունի իր ազատ պետականութիւնը ունենալու եւ ինքը որոշելու թէ ինչպիսի իրաւակարգում նախընտրում է ապրել: Թուրքիան իրաւունք չունի պարտադրելու իր պայմանները ոչ մի հաւաքականութեան նկատմամբ: Այս նոր սկզբունքը Թուրքիան մերժեց: Այդ սկզբունքը գործադրել փորձողներին նա կոտորեց ու բռնագաղթի ենթարկեց: Շուտով ազգերի ազատ ինքնորոշման իրաւունքին հակադրուեց «տարածքային ամբողջականութեան» գաղափարը, ու այն չընդունողները մկրտուեցին որպէս «անջատողականներ», սահմանադրութիւնը խախտողներ, օրինազանցներ: Թուրքիան ողջունեց այն: Իսկ Քեմալ Աթաթուրքը Թուրքական Հանրապետութիւնը ստեղծեց ազգերի ազատ կողմնորոշման իրաւունքի օգտագործմամբ:

ԺԵ. դարից Հայաստանի օտար տիրապետությունն ու հայ ազգային ազատագրական պայքարը երկար տեւեց նախ այն պատճառով, որ հնարաւոր չէր մի անգամից առճակատել երեք (ռուսական, պարսկական, թուրքական) կայսրութիւնների դէմ, քանի որ նրանցից իւրաքանչիւրը փորձում էր հայերին օգտագործել միւսի դէմ իր տարած պայքարում: Երեքն էլ շահագրգռուած չէին Հայաստանի անկախ պետականութեան ստեղծմամբ: Մեծ տէրութիւնները նպաստում էին կամ հետաքրքրուած էին Օսմանեան Կայսրութեան արուարձանային գօտիներում գտնուող ազգային հաւաքականութիւնների (յոյներ, պուլկարներ, հունգարներ, ռումիններ, ալպաններ, եգիպտացիներ, լիպիացիներ) անկախացումով, բայց ոչ Պատմական Հայաստանի: Վերջինս գտնւում էր կայսրութեան սրտում եւ դրա վերադարձը իր պատմական տէրերին նշանակում էր Թուրքիայի կործանում, կործանում այն ուժին, որ Արեւմուտքը օգտագործում էր Ռուսաստանի դէմ: Սակայն, Արեւմուտքը շահարկում էր հպատակ ժողովուրդների նկատմամբ Թուրքիայի վարած բռնակալական քաղաքականութիւնը՝ նրանից արտօնութիւններ, մենաշնորհներ ու հողամասեր կորզելու համար: Այդ յարաբերութիւններում նա խօսում էր Հայերի Ցեղասպանութեան մասին՝ մեծամասամբ բարոյական կտրուածքով: Պատմական Հայաստանի տարածքի վրայ ընկած հայ պետականութեան ստեղծումը ենթադրում էր որ Ռուսաստանը հրաժարուի իր տարածքի մաս կազմող հայկական հողերից ու հրաժարուի Արեւելեան «Անատոլիան» գրաւելով Միջերկրական Ծովին մօտենալու ծրագրից: Բայց նա ամէն կերպ շահարկում էր հայերի, յոյների, պուլկարների, սլաւների դէմ Թուրքիայի գործադրած իրաւազրկումները, հալածանքները, կոտորածներն ու անարդարութիւնները:

Թուրքական լծից ազատագրուելու համար մղուող պայքարի արդիւնքը դանդաղում էր, քանի որ մերժւում էր նուաճուած հայ ժողովուրդի ազգային ինքնուրոյնութիւնը: Չէր ընդունւում հայ ազգի գոյութիւնը, որպէսզի ճանաչուեն նաեւ նրա իրաւունքները: Իր պատմական հայ հողի վրայ հայը հայ չէր նկատւում: Այսպիսով, փաստօրէն չէր ընդունւում նաեւ իրաւազրկումը հայի, կոտորածը հայի: Չկայ եւ չի կարող լինել Հայու Ցեղասպանութիւն: «Պատժւում են անօրէնները, օրինազանցները, անհնազանդները, ապերախտները»:

Յոյները, հունգարացիները, ռումանացիները, ալպանները, լիպիացիները, եգիպտացիները պայքարեցին Օսմանեան Կայսրութեան դէմ, ձեռք բերին անկախ պետականութիւն եւ նրանց հետ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատեցին ինչպէս Թուրքիան, այնպէս էլ Ռուսաստանն ու Արեւմուտքը: Այսինքն՝ արդարացուեց ու ճիշդ նկատուեց նրանց պայքարը: Բայց հայոց ազատագրական պայքարը որոշ խմբերի կողմից որակւում է սխալ, անարդարացի, վտանգաւոր արկածախնդրութիւն: Այն այնպիսի մեծ սխալ է համարւում, որի նկատմամբ ցեղասպանական արարքը արդարացւում է: Ակնյայտ է նման մօտեցման հակագիտական, անարդարացի ու դիտաւորեալ բնոյթը:

Այսպիսով, անհիմն է նաեւ այն տեսակէտը որ հայ-թուրքական յարաբերութիւնները վատթարացել են, երբ հայերը ազդուելով արեւմտեան ազատամտական ու յեղափոխական գաղափարներից, սկսել են ապստամբել կամ պայքար մղել Օսմանեան Կայսրութեան դէմ: Այս մօտեցման կը հանդիպենք ինչպէս թուրքական, այնպէս էլ հայկական միջավայրում: Թուրքերը նոյնիսկ կարծում են որ հայկական շրջանակներում յեղափոխական գաղափարներ են տարածել նոյնիսկ Բողոքական միսիոնարները, հոգեւոր քարոզիչները: Այստեղից կատարւում է այն եզրակացութիւնը որ հայ ազատագրական գաղափարախօսութիւնը օտարամուտ է, անհարազատ է հայերին, եւ դրա համար էլ վնասակար, Ցեղասպանութեան պատճառ:

Մինչեւ 17-րդ դարը հայերը հիմնականում ոգեշնչուել ու առաջնորդուել են հայ պատմութեան բովում մշակուած սեփական ազատագրական գաղափարախօսութեամբ, որն իր բարձրագոյն աստիճանին հասաւ հայ վերածննդի դարաշրջանում, 10-14-րդ դարերում: Քաղաքական մտածողութեան մէջ հայ մտաւորականներ նոյնիսկ մշակեցին սահմանադրական միապետութեան, ընկերութեան ու պետութեան օրկանական կառուցուածքի, բնական օրէնքի, ազատութեան անհրաժեշ-

տութեան եւ բռնութեան կործանարար դերի մասին ուշագրաւ գաղափարներ: 18-րդ դարից հայ առաջադիմական գործիչներն ու տեսաբանները ազգայինին աւելացրին եւրոպական լուսաւորիչների ու յեղափոխականների գաղափարները ու մշակեցին ինքնատիպ նոր ազգային ազատագրական մտածողութիւն: Օսմանեան ու պարսկական տիրապետութեան դէմ ազատագրական պայքար մղելիս նրանք դիմեցին անգլիական, ռուսական ու վրացական պալատին, բայց տունը մշակեցին ապագայ Հայաստանի Հանրապետութեան սահմանադրութիւնը, որտեղ ակնյայտ էր հակամիապետական միտումը: Արեւմտեան ազդեցութեան նկատմամբ եղաւ երկակի մօտեցում: Յակոբ Պարոնեանի նման մտածողներ առաջարկում էին ընտրողական մօտեցում՝ վերցնել զուտ դրականը, առաջաւորը եւ մերժել բացասականը եւ այն՝ ինչ յարիր չէ ազգային աւանդութիւններին:

Սելճուք-Թուրք քոչուոր ու անգրագէտ ցեղերը ներխուժեցին Կովկաս, Փոքր Ասիա, Միջին Արեւելք, Պալքաններ ու ասպատակելով այդ տարածքների ժողովուրդներին ու բռնագրաւելով նրանց հողերը, այնտեղ հաստատեցին իրենց պետութիւնը, որ միապետական էր, բռնատիրական, զինուորական: Այդ ցեղերը չունէին ազատագրական պայքարի գաղափարախօսութիւն: Նրանց խորթ էր ազատութիւն եւ հաւասարութիւն հասկացութիւնները: Այս պատճառով էլ Եւրոպայից՝ նուաճուած յոյն, հայ, արաբ, պարսիկ, պուլկար ժողովուրդներին եկած ազատամտական, յեղափոխական գաղափարները խորթ ու անընդունելի էին Թուրքերի համար: Անմիջապէս հակադրութիւն նկատուեց Թրքական եւ ոչ-Թրքական աւանդութիւնների միջեւ: Հակառակ Սուլթանի ու Թրքական վերնախաւի կամքի ու ցանկութեան, ու հակառակ նրանց գործադրած բոլոր սաստիչ միջոցառումներին, կայսրութեան մէջ աստիճանաբար արմատաւորուեց բարենորոգչական շարժումը: Սուլթանը կամաց-կամաց աւելի հաշտուողական կեցուածք որդեգրեց չափաւոր Թուրք բարենորոգիչների նկատմամբ՝ նկատելով որ նրանք միտում են ոչ Թէ տապալել կարգերը, այլ կայսրութիւնը դուրս բերել ճգնաժամից: Նա պահեց իր անհաշտուողական դիրքը արմատական Թուրք բարենորոգիչների նկատմամբ: Այսպիսով ստեղծուեց Թուրքական ազատամտական գաղափարախօսութիւնը, որ մինչեւ օրս մնում է խանձարուրի մէջ: Իսկ ոչ-Թուրք բարենորոգիչների նկատմամբ Սուլթանը անփոփոխ պահեց իր Թշնամական կեցուածքը, որ հասաւ մինչեւ ցեղասպանութեան աստիճանի:

Ինչպէս բոլոր բռնապետական իշխանութիւնները, նոյնպէս Թուրք կառավարութիւնները անտեսում են այն ակնյայտ իրողութիւնը, որ հպատակ ժողովուրդների ու ազգերի գիտակցութեան մէջ ծագում ու աստիճանաբար զօրանում է ազգային ազատագրական գիտակցութիւնը՝ պարզապէս այդ իշխանութիւնների յարատեւ ճնշումների, իրաւազրկումների, անիրաւութիւնների, հալածանքների եւ բռնութիւնների որպէս հակազդեցութիւն: Գրեթէ բոլոր գաղութացուած ու ճնշուող ազգերի գիտակցութեան մէջ մշակւում է «Ազատութիւն կամ Մահ» կարգախօսը, որովհետեւ բռնատիրական կապանքների մէջ ապրուած կեանքը, բարոյական, իմացական, քաղաքական, ազգային մահը աւելի վատ է, քան՝ ֆիզիքական մահը: Այսպիսով, բռնակալներն ու գաղութարարները իրենք են ծնում իրենց դէմ ուղղուած պայքարի ոգին եւ անիմաստ է այն որոնել այլուր: Եթէ մի մեղաւոր կայ, դա էլ իրենք են: Եթէ պատիժ արժանի ոեւէ ենթակայ կայ, դա էլ իրենք են եւ ոչ Թէ հպատակ ժողովուրդները: Եթէ ժամանակին ու խելացիօրէն վերացուեն անարդարութիւնները, իրաւազրկումները, հալածանքներն ու բռնութիւնները, բնականաբար կը վերանան նաեւ ազատագրական շարժումները: Դրանց անհրաժեշտութիւնը այլեւս չի զգացուի: Բայց դժբախտաբար այդ բնոյթի բոլոր պետութիւնները, ըստ որում եւ Թրքականը, ապստամբութիւն ու ազատագրական պայքար ծնող գործօնները վերացնելու փոխարէն, ուժեղացնում են դրանք՝ հասցնելով ցեղասպանութեան: Որպէս հետեւանք տուժում են երկու կողմերն էլ:

Դեռ ազգ չդարձած, կովկասեան Թաթարները, որպէս քոչուոր ցեղեր, իրենց տեղաշարժերի ու տեղանքում հաստատուելու ընթացքում կոտորել են բնիկներին, այդ Թւում նաեւ հայերին: Այդ ժամանակից իրենք մշակել են այն կեղծ տեսութիւնը, որ իբր իրենց են պատկանում հարեւան գրեթէ բոլոր հողերը: Երբ որպէս ազգ սկսեցին ձեւաւորուել ու իրենց կոչել ազերիներ կամ ազրպէյճանցիներ, նրանք պնդեցին որ ողջ Ղարաբաղը իրենց է պատկանում: Թուրքերի եւ անգլիացիների օգնութեամբ նրանք ներխուժեցին ու գրաւեցին Ղարաբաղը՝ հակառակ հայերի քաղաքական եւ ռազմական ընդդիմութեան: Յետագայում, Ղարաբաղը ազրպէյճանակացնելու առաքելութիւնը 1921-1923 Թուականների ընթացքում աւարտեց Խորհրդային Ռուսաստանը: Այդ օրուանից ազրպէյճանցիք դիմեցին ցեղասպանութեան բոլոր ձեւերին (ֆիզիքական, մշակութային, լեզուական, կրօնական եւայլն) որպէսզի հայաթափ անեն Ղարաբաղը: Ազատագրական պայքարի մեծ փորձ ունեցող ղարաբաղցին չհանդուրժեց ազերիական բռնութեան ու դիմեց ազատագրական պայքարի բոլոր ձեւերին (բանաւոր ու գրաւոր բողոք, Սփիւռքի ներգրաւում, իմացական ու կազմակերպչական զարգացում, եւայլն): Դրանց յաջորդեցին սահմանադրական պայքարի ձեւերը: Ազրպէյճանցիք այդ ոլորտներում պարտուելով, առաջադրեցին ռազմական պայքարի եղանակը, որ զուգորդեցին ահաւոր կոտորածների հետ: Նրանք չարաչար պարտուեցին ռազմի դաշտում: Ղարաբաղի վրայ սկսեց ծածանուել ազգային դրօշը: Մի անգամ եւս ապացուցուեց որ պատերազմն ու ցեղասպանութիւնը հարցերի լուծման հաւաստի ու մարդկային եղանակ չեն:

Մարդու եւ ազգերի ազատութիւնը, հաւասարութիւնը եւ իր կեանքը արդարօրէն վայելելու իրաւունքը բնական է, աստուածային է: Մարդուն ու ազգին դրանից զրկելը, այն էլ բռնի եղանակներով, չարիք է, Աստուծոյ կամքին խոտոր: Չարիքի դէմ մարդու ու ազգերի պայքարը, բնական է ու անհրաժեշտ: Դա բարիքի ու արդարութեան հաստատման միջոցներից մէկն է: Այն նպաստել է մարդկային քաղաքակրթութեան զարգացման, ու այդ պատճառով էլ ոսկի էջեր լցրել ամէն մի ազգի ու անհատի պատմութեան հոլովոյթում:

***

Ազգային ազատագրական պայքարի գլխաւոր նպատակը քաղաքական է, այսինքն՝ տուեալ ազգի պետականութեան հաստատումը, թէեւ այն ունի նաեւ այլ կարեւոր երեսներ՝ մշակութային, ընկերային, տնտեսական, եկեղեցական-կրօնական, լեզուական եւայլն: Բայց մի ժողովուրդ կամ ազգ ազատ ու անկախ լինել չի կարող եթէ չունենայ իր սեփական պետականութիւնը, որի միջոցով ինքը տնօրինելու է իր ողջ կենսագործունէութիւնը ըստ իր նախընտրութեան:

Դեռ հինգերորդ դարում հայ ազատագրական պայքարի գաղափարախօսութեան ռահվիրաներից Եղիշէն գտնում էր որ երկրի վիճակի արմատական վատթարացման հիմնական պատճառները պէտք է որոնել նախարարական բարձի խախտման եւ ազգային բանակի բացակայութեան մէջ, այսինքն՝ պետական մեքենայի խաթարման մէջ: Նրա կարծիքով, հայոց պայքարի հիմնական սլաքը պէտք է ուղղուած լինի դրանց վերահաստատմանը: Մովսէս Խորենացին՝ հայ ազատագրական պայքարի գաղափարախօսութեան միւս տեսաբանը, գտնում է որ պետականութեան եւ թագաւորութեան հաստատումը, հասարակական ներդաշնակութիւնը, միասնականութիւնը եւ համընդհանուր երջանկութիւնը ապահովող գործոններն են: Փաւստոս Բիւզանդը շեշտում է որ այդ բոլորը կարող է կատարել սեփական գահակալը, սեփական պետութիւնը եւ ոչ թէ օտարը:

Օսմանեան Կայսրութեան պայմաններում ազգային ազատագրական պայքարը խիստ բարդանում էր, քանի որ այդ իշխանութիւնը գտնում էր որ երկրում գոյութիւն ունի մէկ ազգային հաւաքականութիւն՝ թուրքերը կամ օսմանցիները: Հպատակուած ժողովուրդները պէտք է հրաժարուեն իրենց ազգային յատկանիշներից ու լեզուից: Թոյլատրելի էր միայն մէկ ինքնատիպութիւն՝ դաւանանքային: Հայը կարող էր պատկանել կամ Առաքելական Համայնքին, կամ Կաթողիկէ Համայնքին, կամ Աւետարանական Համայնքին, կամ էլ կարող էր ընդունել Իսլամութիւնը: Կառավարութիւնը ձգտում էր որ բոլորը իսլամանան ու վերջինիս ճանապարհով թրքանան (կամ թրքանան եւ այդ ճանապարհով իսլամանան): Այս պատճառով էլ հպատակ ժողովուրդները նախ պէտք է պայքարէին որպէս ազգային հաւաքականութիւն ճանաչուելու համար: Երկար տարիներ այդ հնարաւոր եղաւ տանել կրօնական խողովակով: Որքան կայսրութիւնը փոքրացաւ եւ հպատակ ժողովուրդները անկախութիւն ձեռք բերին, Սուլթանն ու թուրք պետութիւնը այնքան դժուարացրին ազգային ազատագրական պայքարը: Հայերը, ըստ պայմանների, ստիպուած եղան պայքարել մերթ «հայկական գաւառների» բնակչութեան տնտեսական պայմանների բարելաւման համար, մերթ հայերի հաւասար իրաւունքների համար, մերթ նրանց տեղական ինքնավարութեան համար, մերթ թուրքական դաշնակցային պետութիւն հաստատելու համար, մերթ էլ հայկական պետականութիւն ստեղծելու համար: Բոլոր դէպքերում էլ Թուրքիան բացասական կեցուածք էր որդեգրում՝ բացայայտ թէ սքօղուած: Ցաճախ եղան պահեր, որ հայերը պայքարեցին իրենց գոյութիւնը պահելու համար: Թուրքիան այդ հնարաւորութիւնը բացառեց ցեղասպանութեամբ:

Ռուսական Կայսրութիւնում մի քիչ այլ էր դրութիւնը: Ռուսական իշխանութիւնը թէեւ ընդունում էր հայերի ազգային գոյութիւնը, բայց վարում էր ռուսականացման քաղաքականութիւն: Նա դէմ էր ինքնուրոյն հայ պետութիւն ստեղծելու գաղափարին: 1828-ին ռուս-պարսկական պատերազմից յետոյ, ցարական կառավարութիւնը համաձայնուեց Արեւելեան Հայաստանի իրենց ենթակայութեան տակ եղած մասում հաստատել ազգային հայկական մարզ: Այն տեւեց լոկ տասը տարի:

1988 թ. Ղարաբաղեան Շարժումը հրապարակ իջաւ նախ Ղարաբաղը Ազրպէյճանի ենթակայութիւնից դուրս բերելու եւ այն Ռուսաստանի կամ Հայաստանի տնօրինութեան տակ դնելու պահանջով: Ազրպէյճանի իշխանութիւնը այդ ձգտումը դիմաւորեց սուիններով ու «բոկրոմներով», կոտորածներով: Մոսկուան նախ փորձեց սահմանադրական պահանջներով հրապարակ իջած հայերին «հանգստացնել» զինուորական ուժով: Բռնութիւնը աւելի խորացրեց ու արմատականացրեց ազատագրական պայքարը: Ապա նա ձգտեց հարցը լուծել տնտեսական եւ ընկերային-մշակութային բարեկարգումներով՝ Պաքուն մեղադրելով հակահայ քաղաքականութեան մէջ: Արդէն ուշ էր: Մոսկուան ու Պաքուն ցանկացան ռազմական գործունէութիւնների ծաւալումով «լուծել» հարցը: Հայերը հասկացան որ զէնքով անհրաժեշտ է ազատագրել Ղարաբաղը ու սեփական պետութեամբ լուծել իրենց տան բոլոր հարցերը:

Քաղաքական ուժի, իշխանութեան նուաճման համար մղուող պայքարը կարող է ստանալ ապստամբութեան եւ ինքնապաշտպանութեան բնոյթ: Վարդանանցը ինքնապաշտպանութիւն էր, որովհետեւ Շահն Շահը ցանկանում էր ուժեղացնել իր տնտեսական կեղեքումը, ընկերային ճնշումը եւ ձուլողական քաղաքականութիւնը, որպէսզի

ամբողջութեամբ պարսկացնի Հայաստանը: Հայերն էլ ասում էին որ իրենք համաձայն են պարսկական տիրապետութեան՝ հայկական աշխարհի ներքին ինքնուրոյնութիւնը պահպանելու պայմանով: Բագրատունեաց ազատագրական պայքարը ազատագրական էր, քանի որ միտում էր փոխել իշխանութիւնը եւ հաստատել հայկական պետականութիւն:

Նոր ժամանակներում, երբ Թուրքիան ձգտում էր կայսրութեան կիսանկախ շրջաններն ու քաղաքները զրկել իրենց յարաբերական ինքնավարութիւնից ու նրանց լրիւ հպատակացնել, այդ ժամանակ լեռնային լիբանանցիները, անապատի արաբները եւ հայ լեռնականները կազմակերպեցին իրենց բնակավայրերի ինքնապաշտպանութիւնը (1808, 1810, 1818, 1829, 1841, 1860, 1862, 1877-78, 1895 թթ. Զէյթունի ինքնապաշտպանութիւն, որ աստիճանաբար սկսաւ ստանալ ապստամբութեան բնոյթ): Նոյնպիսի բնոյթի էին 1864, 1894, 1904 թթ. Սասունի, 19-րդ դարի Ղարաբաղի, Սիւնիքի, Գանձակի, Երեւանի, 19-րդ դարի Վանի, Սարդարապատի հզօր ժողովրդական շարժումները: Ապստամբութիւն էր Վանի 1915 թ. հակաթուրքական պայքարը, քանի որ միտում էր հաստատել նոր պետականութիւն:

1913 թ., երբ պատերազմի ու ջարդի հոտ էր գալիս, Թուրքիոյ մէջ գործող հայ կուսակցութիւնները որոշեցին անցնել պայքարի սահմանադրական եղանակներին ու պատրաստուել սպասուող փոթորիկի դիմագրաւման:

Ղարաբաղեան շարժումը սկսուեց որպէս խաղաղ սահմանադրական պայքար՝ ընդդէմ Ազրպէյճանի իշխանութիւնների, որոնք չարաշահել էին հայերի համբերութիւնը ու դաժանօրէն կեղեքել նրանց: Մոսկուայի ու Պաքուի սկզբունքային սխալ դիրքորոշման պատճառով սահմանադրական վէճը վերածուեց զինուած ապստամբութեան, պատերազմի: Ազերիները պարտուելով զինադադար կնքեցին Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչների հետ:

ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հայերի հետ միաժամանակ ազատագրական պայքար էին մղում նաեւ ալպանացիք, արաբները, պուլկարները, յոյները, սլաւոնները, քրտերը եւ այլ ժողովուրդներ: Բայց նրանց եւ հայոց մղած պայքարի հիմնական առանձնայատկութիւններից մէկն էլ այն էր, որ նրանք պայքարում էին միայն Օսմանեան Կայսրութեան դէմ, իսկ հայերը նաեւ այլ կայսրութիւնների դէմ (սկզբում՝ Պարսկաստանի, իսկ յետոյ՝ Ռուսաստանի): Հայաստանն իրար միջեւ բաժանել էին նուաճագոյնը երկու կայսրութիւն: Ողջ Պատմական Հայաստանի տարածքի վրայ հայկական պետականութիւն հաստատելու համար հայերը պէտք է ազատագրէին ինչպէս Արեւմտահայաստանը, այնպէս էլ Արեւելահայաստանը: Նրանք ազատագրական պայքար պէտք է մղէին ե՛ւ Ռուսաստանի ե՛ւ Թուրքիայի դէմ:

Արեւելահայաստանում ազատագրական պայքարը ենթարկւում էր Ռուսական Կայսրութիւնում տիրող տրամադրութեան: Հայերի ազատագրական շարժումներն այնտեղ գնացել են այն հունով, ինչ ճանապարհով ընթացել են ռուսական յեղափոխական շարժումները: Վերջիններս չէին ծրագրում ստեղծել ազգային անկախ հանրապետութիւններ: Այս պատճառով էլ, հայերը միշտ չէ որ կարողանում էին դնել այդ հարցերը: Ինչպէս տեսանք, Թուրքիայում աւելի շատ հայերը քննարկում էին անմիջական նպատակի հետ աղերս ունեցող հարցերը: Պարզ է որ նման իրավիճակը դժուարացնում էր ամբողջական Հայաստանի ազատագրման հարցերը:

Ռուսաստանը լիովին օժանդակում էր Պալքանեան ժողովուրդների ազատագրական պայքարին, քանի որ այն միայն օգուտ էր բերում իրեն (Օսմանեան Կայսրութիւնը փոքրանում, թուլանում էր եւ մեծանում էր Միջերկրական Ծովի աւազանում իր ռազմաքաղաքական եւ մշակութա-կրօնական ազդեցութեան ուժեղացման հաւանականութիւնը): Ռուսաստանը չէր կարող լիովին օժանդակել անկախ հայկական

պետականութեան ստեղծմանը, քանի որ այդ դէպքում ինքը՝ Ռուսաստանը, Արեւելահայաստանը պէտք է վերադարձնէր հայերին: Պատահական չէ որ հայ ազատագրական պայքարի ծաւալման տարիներին Ռուսաստանը հայկական ջոկատների մեծ մասը Կովկասից տեղափոխեց Լեհաստան՝ վախնալով որ նրանք կը միանան Պատմական Հայաստանում գործող ազատագրական ուժերին եւ կը փորձեն ստեղծել միացեալ ու անկախ Հայաստան: Յիշենք որ 1915-1918 թթ. ռուսական բանակում կային 200,000 հայ զինուորներ:

Եւրոպան ձգտում էր օգնել Պալքաններին, որպէսզի կանխարգելակի այնտեղ ռուսական ազդեցութեան ներթափանցումը: Այդպիսով, նա ուժեղացնում էր իր հսկողութիւնը Միջին եւ Մերձաւոր Արեւելքի վրայ: Եթէ նա հայերին Կովկասում օգնէր, ապա նա պէտք է մտնէր իրար հետ թշնամաբար տրամադրուած երկու երկրների՝ Թուրքիայի եւ Ռուսաստանի միջեւ, եւ ապա՝ կամայ թէ ակամայ մասնակիցը դառնար նրանց վէճերի:

Օսմանեան կառավարութիւնն իր հերթին ամէն ջանք թափում էր, որպէսզի ի նպաստ իրեն օգտագործի հայերի հակացարական տրամադրութիւնները: Պատահական չէ Առաջին Աշխարհամարտի նախօրէին օսմանցիները հայերին ոսկեայ լեռներ խոստացան, եթէ վերջիններս համաձայնուեն իրենց գաղութների միջոցով ողջ աշխարհով մէկ Թուրքիայի ի նպաստ քարոզչութիւն ծաւալել, եւ եթէ ստեղծեն ռուսական թիկունքում գործող ջոկատներ: Պարզ է, որ ռուսներն էլ աշխատում էին հայերի եւ այլ ժողովուրդների հակասուլթանական ձգտումները ծառայեցնել իրենց:

Այս վիճակից դուրս գալու համար հայերը գործադրեցին երկու տարբեր ծրագրեր, մէկը՝ Առաջին Աշխարհամարտից առաջ, իսկ միւսը՝ դրա ընթացքում:

Ելնելով այն փաստից որ Արեւմտահայաստանի հայութեան նոյն իսկ ֆիզիքական գոյութիւնը վտանգուած է, որ Արեւմտահայաստանի Հարցն արդէն դարձել է միջազգային դիւանագիտութեան քննարկման առարկայ, եւ այն, որ Արեւմտահայաստանը կազմում է Պատմական Հայաստանի մեծ մասը, հայութիւնը պատերազմից առաջ որոշեց իր ուշադրութիւնը կեդրոնացնել Արեւմտահայաստանի ազատագրման վրայ: Որոշ մարդիկ այստեղ եզրակացրին որ գոյութիւն չունի Արեւմտահայաստանի ազատագրման հարց, կամ՝ դրանից հայերը հրաժարուել են: Այդ սխալ եզրակացութիւնը համապատասխանել է եւ հիմա էլ համահնչիւն է թուրքական փրոփականտային:

Իսկ պատերազմի նախօրէին, հայերը որոշեցին այլ մօտեցում որդեգրել: Նրանք յայտարարեցին որ արեւելահայերը հաւատարիմ կը մնան ռուսական դրօշին, իսկ արեւմտահայերը՝ թրքական: Ինչպէս ընդգծում է Թուրքիայի բարեկամ Ուինսթըն Չրչիլը, հայերը հարազատ

են մնացել իրենց խոստմանն ու այն լրիւ իրագործել:

Գերմանա-Թուրքական ճակատի պարտութիւնից յետոյ, ըստ Դաշնակիցների խոստումների, պէտք է իրականանար Մեծ Հայաստանի, կամ ինչպէս յետոյ էին ասում, Ուիլսընեան Հայաստանի ծրագիրը: Այն կործանուեց Պոլշեւիկեան Ռուսաստանի եւ Միջին ու Մերձաւոր Արեւելքի միջեւ պատուար-պետութիւն ստեղծելու ռազմավարութեան առաջացրած քաղաքական ալիքների տակ: Թուրքիան ստանձնեց հարաւը պոլշեւիկեան ազդեցութիւնից պաշտպանելու առաքելութիւնը: Արեւմուտքը յարութիւն տուեց մեռնող Թուրքիային: Ռուսաստանը աշխատեց նրան սիրաշահել ու յանուն իսլամական աշխարհում պոլշեւիզմի հեղինակութեան բարձրացման՝ Թուրքիային արեց նուիրատուութիւններ՝ ի վնաս հայոց: Մեծ Հայաստանից մնաց փոքրիկ Սովետական Հայաստանը՝ հազար ու մի կարկտաններով ու վէրքերով: Այդ հիմք հանդիսացաւ ազգային վերելքի ու պահանջատիրութեան վերականգնման, դրա փոխարէն զոհեր տանելով սթալինեան ու պոլշեւիկեան զոհասեղանին:

ԳԼՈՒԽ Ը.

ԵՒՐՈՊԱՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԳԼՈՒԽ Ը.

ԵՒՐՈՊԱՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Օսմանեան Կայսրութիւնը գոյակցում էր Անգլիական, Ֆրանսական, Գերմանական, Աւստրահունգարական եւ Ռուսական կայսրութիւնների հետ: Որպէս մրցակից գաղութատէր երկիրներ, նրանք շահագրգռուած էին միւսի թուլացմամբ ու փոքրացմամբ: Մեծ տէրութիւնները, միաժամանակ, իրար հետ մրցում էին «հիւանդ» Օսմանեան Կայսրութիւնից նորանոր տարածքներ ու զիջումներ ձեռք բերելու հարցում: Այդ քաղաքականութիւնն իրականացնելու ընթացքում մեծ տէրութիւնները փորձում էին հնարաւորին չափ շահարկել հակասուլթանական տարբեր ջոկատները: Նրանք հակասուլթանական պայքարը այնպէս միջազգայնացրին, որ կարողանան դրանից հնարաւորին չափ շատ «օգուտներ» քաղել: Նրանք յաճախ մոռանում էին ազատագրական պայքարը ու լոկ զբաղւում Թուրքիայից իրենց պոկածները օրինականացնելով ու պահելով: Նրանք այդ հարցերը այնպէս մտցրին միջազգային պայմանագրերի մէջ, որ իրենք կարողանան միջամտել կայսրութեան «մարդկային իրաւունքները ոտնահարող ներքին գործերին»: Նրանց նման կեցուածքը՝ ազատագրական պայքարի որոշ գաղափարախօսների մէջ հակասուլթանիզմի կողքին արմատաւորեց նաեւ ընդգծուած հակաարեւմտեան տրամադրութիւններ: Այդպիսիներից էին Միքայէլ Նալպանտեանը, Յակոբ Պարոնեանը, Յարութիւն Սվաճեանը, Բաֆֆին եւ շատ ուրիշներ: Իրենց նպատակին հասնելու հեռանկարով եւ ոչ թէ արդարութեան համար պայքարողներին օգնելու մտադրութեամբ, մրցակից պետութիւնները ձգտում էին գործարար կապեր հաստատել նաեւ հակասուլթանական ուժերի հետ, որոնք հիմնականում հանդէս էին գալիս որպէս «արեւմտամէտներ», «եւրոպամէտներ», «արդիականներ»: Այդ պայքարը ներկայացւում էր նաեւ որպէս Արեւելքի եւ Արեւմուտքի, աւանդապահների եւ նորարարների մրցակցութիւն: Նրանք պայքարում էին սուլթանական միապետութեան դէմ, եւ ցանկանում էին «դեմոկրատացնել» ու արդիականացնել կայսրութիւնը: Անցնելով արտասահման, նրանք հիմնում էին հակա-

սուլթանական ուղղուածութիւն ունեցող թերթեր՝ Օսմանեան Կայսրութեան մէջ ապրող գրեթէ բոլոր ժողովուրդների լեզուներով: Աշխարհով մէկ ցրուած ու տարբեր ազգային կնիք ունեցող (ալպանացի, արաբ, թուրք, խրուատ, յոյն, հայ, չէրքէզ, սերպ, քուրտ եւ այլ) այդ խումբերը անցեալ դարու երկրորդ կէսին սկսեցին հանդէս գալ մի ընդհանուր անուան տակ՝ Երիտասարդ Թուրքեր: Այն կազմակերպչական առումով խիստ թոյլ էր, գաղափարական տեսակէտից անմիաբան, ու քաղաքական ծրագրերի կտրուածքով՝ բազմաշերտ ու բազմատարր: Թուրք մասնակիցների մի մասը այն ցանկացաւ օգտագործել իր ազգայնամոլական ծրագրերը իրականացնելու, շարժումը դեմոկրատական հունից շեղելու եւ ազգային հարցերը «ընդհանրական» եւ «համաօսմանեան» ծածկոյթի տակ թաղելու համար: Այդպիսիների շրջանում աչքի էր ընկնում «Միութիւն եւ Առաջադիմութիւն» խմբակը:

Հակասուլթանականների առաջաւոր թեւը «Արեւմուտք», «Եւրոպա» բառերի տակ պատկերացնում էր հոլանտացի, անգլիացի, ամերիկացի, ֆրանսացի, իտալացի, գերմանացի մեծ մարդասէրներին, լուսաւորիչներին, յեղափոխականներին եւ նորարարներին: Նրանց անդամները իրենց համարում էին Արեւմուտքի այդ մեծ գործիչների ու մտածողների հետեւորդները: Նրանք, սակայն, զարմանում ու ջղայնանում էին, երբ նրանց նմանների փոխարէն իրենց հետ գործ էին ունենում Արեւմուտքի զանազան գաղութարար ուժերի նուիրեալներ կամ իրենց պետութեան նեղ շահերով սահմանափակուող գործիչներ:

Արեւմուտքին հաճելի էր, երբ այդ ընդհանուր պիտակի մէջ տարբերակւում էին անգլիամէտներ, ֆրանսամէտներ, գերմանամէտներ, ռուսամէտներ եւ ամերիկամէտներ, որոնք զանազան կապեր էին հաստատում եւրոպական երկրներում գործող տարբեր օտար քաղաքական կազմակերպութիւնների հետ:

Սուլթանի վերաբերմունքը ոչ-թուրք դեմոկրատների նկատմամբ հիմնովին տարբերւում էր թուրք «արեւմտասէրների» հանդէպ ցուցաբերուածից: Առաջիններին նա համարում էր դաւաճան, Թուրքիայի դժբախտութիւնների պատճառ: Առաջին Աշխարհամարտի տարիներին, երբ Թուրքիան պատերազմի մէջ էր Ռուսաստանի, Անգլիայի ու Ֆրանսայի դէմ, հայերի «դաւաճանութեան» մասին այդ արհեստական վարկածն աւելի համոզեցուցիչ ու տպաւորիչ համարուեց, մանաւանդ Կովկասեան ճակատում Թուրքիայի խայտառակ ու ահաւոր պարտութիւնից յետոյ: Այդ վարկածն օգտագործուեց Թուրքիայի պարտութիւնը բացատրելու համար: Այդ ծածկոյթով Թուրք ղեկավարութիւնը փորձեց արդարացնել նաեւ հայերի բնաջնջման թուրքական ծրագիրը: Թուրքերը աշխարհին փորձեցին համոզել որ այն՝ ինչ նախորդում է տուեալ երեւոյթին, դառնում է նրա առաջացման պատճառը:

Պատերազմն սկսելուց մի քանի շաբաթ առաջ օսմանեան իշխանութիւնը դիմում է ապակողմնորոշող խորամանկ մի քայլի: Տարբեր ազգութեան իթթիհատականների նա գործուղում է դաշնակից տարածքներում բնակուող նրանց ազգակիցների մօտ՝ նրանց առաջարկելով Դաշնակիցների թիկունքում կազմակերպել ի նպաստ Առանցքի գործող խմբեր, հինգերորդ շարասիւն: Ականաւոր Իթթիհատականներ Պեհաէտտին Շաքիրից, Նաճի Պէյից եւ Հիլմի Պէյից կազմուած մի պատուիրակութիւն նոյնպիսի առաջարկով ներկայանում է Էրզրումում տեղի ունեցող ՀՅԴ-ի համագումարին: Նրանք ձգտելով ստեղծել այն տպաւորութիւնը, որ իրենք հրաժարուել են հակահայկական իրենց քաղաքականութիւնից եւ ընդառաջում են հայերի պահանջներին, խոստանում են պատերազմի յաջող աւարտից յետոյ Գերմանիայի երաշխաւորութեամբ ստեղծել ինքնավար հայկական մի իշխանութիւն կազմուած Ռուսահայաստանից եւ Էրզրում, Վան, Պիթլիս նահանգներից: Հայերը նկատեցին տուեալ խայծի վտանգաւոր, անգործնական ու չհիմնաւորուած խորքը: Այս արմատապէս հակասում էր Իթթիհատականների հակահայ ծայրայեղ քաղաքականութեան հիմքերին: Թուրքերը մերժում էին հայկական տարածքների ու հայ ազգի գոյութիւնը, պայքարում էին որ բացառէին հայ ազգային պետականութիւն ստեղծելու ամէն մի հայկական երազ ու փորձ, եւ գտնում էին որ անհնարին է նոյն տարածքների վրայ հայերի ու թուրքերի համատեղ գոյութիւնը: Թուրքերն իրենց սոյն հիմնադրոյթներից չէին հրաժարւում: Համաձայնել թուրքական առաջարկին, նշանակում էր վտանգել ողջ հայութեան գոյութիւնը աշխարհով մէկ: Հայերը անվստահելի տարր էին նկատուելու ինչպէս Թուրքիայում, այնպէս էլ նրա սահմաններից դուրս: Եւ վերջապէս, Թուրքիայում ապրող հայերը լիազօրուած չէին երաշխաւորելու տարբեր երկրներում ապրող հայերի վարքը, քաղաքական կողմնորոշումը: Այս պատճառով հայերը պատասխանեցին որ իրենք հաւատարիմ կը մնան օսմանեան դրօշին ու սահմանադրութեան այնպէս, ինչպէս արտերկրի հայերը հաւատարիմ կը մնան իրենց ապրած երկրների դրօշին ու սահմանադրութեան: Հայերի նման կողմնորոշումը Դաշնակիցներին փրկեց լուրջ գլխացաւանքից եւ հնարաւոր դարձրեց հայերի գործօն մասնակցութիւնը ի նպաստ նրանց յաղթանակի: Հայերը չդաւաճանեցին ոչ Թուրքիային եւ ոչ էլ Դաշնակիցներին: Դժբախտաբար վերջինները դաւաճանեցին հայերին ու չկատարեցին իրենց խոստումները: Անհրաժեշտ է շեշտել որ Կովկասի, Ռուսաստանի, Միջին ու Մերձաւոր Արեւելքի իսլամ ժողովուրդների ճնշող մեծամասնութիւնը նոյնպէս դրական չարձագանգեց Թուրքերի կոչին: Այս պարագային օսմանցիների կողմից շահարկուող համաիսլամական, համաթուրքական եւ համաթուրանական կոչերը ցանկալի արդիւնքը չտուին: Օսմանցիները հաւատ չներշնչեցին[1]:

1. Տես՝ Եղիշէ Գեղամեան, *Հայերի Ազատագրական Շարժումները 19-րդ Դա-*

Մեծ տէրութիւնների համար Օսմանեան բռնութիւնների ենթակայ ժողովուրդների ազգային ազատագրական պայքարն ու տառապանքները (նոյնիսկ ցեղասպանութիւնը) իմաստաւորուում էր նրանց քաղաքական շահերի տեսանկիւնից դիտուած: Բացառութիւն են կազմում իրաւ մարդասէրները, որոնք սակայն հիմնականում ունեն բարոյական ոյժ եւ հասարակական կարծիքի վրայ ազդելու հնարաւորութիւն: Քաղաքական եւ իրաւական ոյժը պետական գործիչներին յատուկ է:

Երբ իրենց շահը պահանջել է, մեծ տէրութիւնները օգնել ու խրախուսել են ազատագրական շարժումները: Երբ այն չի նպաստել նրանց քաղաքական ծրագրերի իրականացմանը, նրանք պայքարել են ազատագրական պայքարի դէմ, ազատամարտիկներին ներկայացրել են որպէս ահաբեկիչներ եւ անօրէններ: Երբ Հայերի Ցեղասպանութիւնը նպաստել է նրանց քաղաքական փրոփականտային կամ նպատակներին, այն ընդունել են ու ցեղասպանին ենթարկել քաղաքական ու իրաւական պատասխանատուութեան: Երբ իրենց այն նպաստող գործօն չի եղել, ապա կամ ուրացել են այն եւ կամ էլ զուտ բարոյական գնահատական են տուել այդ գործողութիւններին՝ ցեղասպանին հեռացնելով իրաւական ու քաղաքական պատասխանատուութիւնից:

Մարդասիրական ազատագրական, փրկարար ու պատմակերտիչ պայքարը խճճուելով աշխարհը վերաբաժանելու համար գաղութատէր պետութիւնների վարած եսակեդրոն ու շահամոլական քաղաքականութեան ալիքների մէջ, ոչ միայն չկարողացաւ իր շինիչ նպատակն իրագործել, այլեւ շահարկուելով օգտագործուեց դժբախտութեան ու զանգուածային մարդասպանութեան որպէս շարժառիթ:

բում, Պաֆու, 1917, էջ 584-585: H.A. Gibbons, *Armenia in the World War*, N.Y., 1926, p. 3-4. Լէօ, *Թուրքահայ Ցեղափոխութեան Գաղափարաբանութիւնը*, Հ. 2, Բարիզ, 1935, էջ 76-79: Ս. Վրացեան, *Հայաստանի Հանրապետութիւնը*, Պէյրութ, 1958, էջ 9: A. Nassibian, *Britain and the Armenian Question (1915-1923)*, St. Martin's Press, N.Y., 1984, p. 107. Գ. Գալոյեան, *Հայաստանը Մեծ Տէրութիւնների Աշխարհակալական Առճակատումներում (ԺԶ. Դարից 1917 թ.)*, ՀՀԳԱԱ «Գիտութիւն» հրատարակչութիւն, Երեւան, 2004, էջ 638-641, 648-649):

ԱՆԳԼԻԱՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹԻՒՆԸ

Անգլիան, 19-րդ դարի 30-ական թուականներից դարձել էր տընտեսապէս եւ քաղաքականապէս հզօրագոյն մի կայսրութիւն: Ցրանսան յաղթահարում էր Նափոլէոնեան շրջանի արհաւիրքները ու վրճռականօրէն ներս էր մտնում հզօր ուժերի շարքերը: Գերմանիան՝ նոր դարձած միասնական ու ամբողջական ոյժ, հաւասար դիրքեր եւ իրաւունքներ էր որոնում: Աւստրիահունգարական Կայսրութիւնը մի կողմից ձգտում էր զսպել իր սահմաններում ուժեղացող ազգային ազատագրական շարժումները եւ միւս կողմից ամէն կերպ պահել իր միջազգային ոյժը: Ռուսաստանը իր դիրքերը, մեծ դժուարութեամբ, ամրապնդելով Սեւ Ծովի ափերում, Կովկասում, Կեդրոնական Ասիայում եւ որոշ չափով էլ Պալքաններում, ձգտում էր դէպի Միջերկրական Ծով ու հաւասար իրաւունքների՝ եւրոպական հարցերում: Օսմանեան Կայսրութիւնը, որ շարունակում էր ապրել 17-րդ դարից սկսած փոքրացման ու թուլացման իր վայրէջքի ընթացքը, էլ աւելի էր խճճւում ներքին եւ արտաքին բարդ խնդիրների լուծման դժուարութիւնների առաջ, ու աւելի եւ աւելի «հիւանդանալով», մերթ ենթարկւում էր այս, եւ մէկ էլ միւս հզօր պետութեան ազդեցութեան: Այստեղ առաւել ցայտուն էր Անգլիայի, Ռուսաստանի եւ Գերմանիայի միջեւ տարուող բացայայտ ու թաքուն մրցակցութիւնը: Միաժամանակ, արեւմտեան յեղափոխական գաղափարները, արդիւնաբերական յեղափոխութեան ալիքները տարածւում էին դէպի Արեւելք: Արեւելեան Եւրոպան դառնում էր ազգային ազատագրական պայքարի օճախ՝ ի լրացում ասիական յեղափոխութեան: Այս պայմաններում, Օսմանեան Կայսրութեան տարածքում տեղի ունեցող շարժումները (Թուրք բարենորոգիչների, հպատակ ազգերի ազգայնական-ազատագրական, հակայեղափոխական, անգլիամէտ, գերմանամէտ ու ռուսամէտ) առիթ էին տալիս եւրոպացիներին Թուրքիոյ ներքին գործերին խառնուելու եւ այնտեղ իրենց դիրքերը ամրապնդելու: Պատմական Հայաստանում արձանագրւում էին տեղական ապստամբութիւններ: Ծնունդ էին առնում հակասուլ-

թանական ազատագրական պայքարը կազմակերպել միտող հայ կուսակցութիւններ: Միասնական հակասուլթանական ճակատի գաղափարը մնում էր իմացութեան ասպարէզում լոկ: Այս բարդ իրավիճակում, Անգլիան միշտ ձգտեց որդեգրել մի այնպիսի քաղաքականութիւն, որով ինքը կարողանայ իրեն վերապահել տարածքաշրջանի բոլոր ուժերը հաւասարակշռելու (վիճակը ի նպաստ իրեն պահելու) հնարաւորութիւնը, այսինքն՝ իր շահերին ենթարկելու այնտեղ արձանագրուող բոլոր փոփոխութիւններն ու տեղաշարժերը: Այդ տեսակէտից՝ հարցերին նայելով, Անգլիան ամէն մի մասնակցի մէջ տեսնում էր անհաւասարակշռող մի միտում, որն իր բարձրագոյն կէտին էր հասնում հակասութիւններով, անկայունութիւններով ու քայքայումներով հարուստ Օսմանեան Կայսրութիւնում: Այս աշխարհաքաղաքականութեամբ է բնորոշւում բրիտանական դիւանագիտութեան դիրքորոշումը արեւմտահայութեան խնդրի նկատմամբ:

Անգլիոյ՝ հաւասարակշռութեան պահպանման սկզբունքի մէջ էր մտնում գոյավիճակի պահպանման հրամայականը. Օսմանեան Կայսրութեան տարածքային ամբողջականութեան պահպանումը կամ նրա որոշ մասերի այնպիսի անջատումը, որ չնպաստի Ռուսաստանի, Գերմանիայի ու Ֆրանսայի ուժեղացմանը կամ մեծացմանը: Այն իր մէջ ընդգրկում էր Ռուսաստանի ազդեցութեան գօտիների ու նրա դէպի նեղուցները, Միջերկրական Ծով ու Միջին Արեւելք ծաւալման արգելակումը, Գերմանիայի ախորժակի զսպումը, Աւստրահունգարիայի ուժի սահմանափակումը: Հաւասարակշռութեան պահպանման այդ ծրագրի մէջ էր մտնում նաեւ որեւէ եւրոպական դաշնակցութեան մէջ Անգլիայի ազդեցութեան մեծացման ապահովումը: Այս իրադրութեան մէջ բրիտանական դիւանագիտութիւնը չէր կարող այդ ժամանակաշրջանում պաշտպանել Պատմական Հայաստանի ազատագրման՝ այդ տարածքում հայկական ազգային պետութեան հաստատման գաղափարը:

Խիստ ուշագրաւ է Ա. Նասիպեանի ընթերցողի ուշադրութեան յանձնած կէտը: Երբ 1913 թ. տապալուեց Իթիլաֆականների իշխանութիւնը եւ այն անցաւ «Միութիւն եւ Առաջադիմութիւն» խմբակի ձեռքը, Պոլսի Ռոպերթ Գոլէճի տնօրէն Դոկտ. Կէյթսը իր կառավարութեան յայտնեց որ շատ հաւանական է համատարած կոտորածների սանձազերծումը: Անգլիական Ֆորէյն Օֆիսի պատասխանատուներից մէկը գրեց որ Կէյթսը արդարացի է, բայց գրեթէ անհնարին է Հայաստանում կոտորածների կանխարգելակումը առանց ռուսական զօրքերի կողմից այդ գաւառների գրաւման, որ անցանկալի է այլ նկատառումներով[1]:

Բրիտանական քաղաքական միտքը պաշտպանում էր այն տեսակէտը որ Օսմանեան Կայսրութեան յետագայ քայքայումը կանխելու, այդ երկրի ներսում ազգային-ազատագրական պայքարը չէզոքացնելու ու մարելու, հակասուլթանական պայքարը ռուսամէտութեան հետ չշաղկապելու համար անհրաժեշտ է իրագործել բարեփոխումների ծաւալուն մի այնպիսի ծրագիր, որ ընդգրկէր կայսրութեան բոլոր ոլորտները՝ տնտեսական, քաղաքական, իրաւական, ընկերային, կրօնական, վարչական, զինուորական եւ ազգային: Անգլիան այդպիսի ծրագրեր էր մշակում ու ներկայացնում Սուլթանին: Նա գտնում էր որ միայն այդ ճանապարհով կարելի է վերջ տալ «անջատողական» եւ ազգային միտումներին: Անգլիան նոյնիսկ իր հաւանութիւնը տուաւ երկրի բնակիչներին օսմանացնելով՝ բոլորին մէկ օսմանեան ազգի մէջ ձուլելու քաղաքականութեան: Այս հիմքերից ելնելով, բրիտանական իշխանութիւնները թիկունք էին կանգնում թուրք բարենորոգիչներին, հայերի եւ այլ հպատակ ազգերի բարենորոգչական պահանջներին, բայց ոչ արմատական ազգային ազատագրական պայքարներին[1]:

Բրիտանական դիւանագիտութիւնը երկար ժամանակ հաւատարիմ մնաց իր մշակած աշխարհաքաղաքականութեան, որ սակայն, չտուեց սպասուած խորքային հետեւանքները: Ան արձանագրեց զգալի շեղումներ, որպէս հետեւանք միւս եւրոպական երկրների քաղաքականութեան յաջողութիւնների, օսմանեան իրականութեան ներքին տատանումների, հայ ազատագրական պայքարի ու ազգի կազմակերպուածութեան մակարդակների փոփոխութեան, Անգլիայի առաջ ծառացած նոր հարցերի տրամաբանութեան եւ անգլիական կառավարութիւնների բնական փոփոխութիւնների: Սուէզի ջրանցքի ծրագրաւորման, կառուցման ու շահագործման ընթացքում, Պերլինի Վեհաժողովի ժամանակաշրջանում, Ղրիմի եւ Պալքանեան պատերազմի տարիներին Օսմանեան Կայսրութեան տարածքային ամբողջականութեան եւ այդ երկրում ապրող ժողովուրդների հարցերին վերաբերեալ Անգլիայի կեցուածքը ապրեց որոշակի տեղաւորութիւններ: Անգլիական դիւանագիտութիւնը ցանկացած ներգործութիւնը չունեցաւ նաեւ այն պատճառով, որ թէեւ ակնկալւում էր որ Առաջին Աշխարհամարտին Թուրքիան պատերազմ կը մտնի որպէս Անգլիայի դաշնակից, բայց այն նախընտրեց հակառակ կողմնորոշումը: Բայց, հակառակ դրան, Անգլիան, պատերազմից յետոյ, ամենից շատ նպաստեց թուրք նոր Հանրապետութեան առաջացման եւ ուժեղացման, միաժամանակ տարածքային մեծ պատառներ ձեռք բերելով Միջին ու Մերձաւոր Արեւելքում: Վերջապէս, անգլիական դիւանագիտութիւնը չկարողացաւ կասեցնել Օսմանեան Կայսրութեան թուլացման, փոքրացման եւ ապա կործանման

1. Akaby Nassibian, *Britain and the Armenian Question*, Craow Helus, London, St. Martin's Press, N.Y.,1984, p. 15.

1. Dr. Arman J. Kirakossian, *British Diplomacy and the Armenian Question, From the 1830s to 1914*, Gomitas Institution Books, Princeton, 2003, p. 293-330.

ընթացքը: Այն չկարողացաւ նաեւ չեզոքացնել սուլթանական իշխանութեան դէմ ուղղուած ազգային ազատագրական պայքարի բոլոր ջոկատները: Նրան յաջողուեց կա՛մ սահմանափակել նրա շրջանակները (Պալքաններում), կամ այն դանդաղեցնել ու թողնել սաղմնային վիճակում (Արաբական Աշխարհում ու քրտական միջավայրում) եւ կամ էլ այն թողնել պատահականութեան քմահաճոյքին (Հայկական): Անգլիային հիմնականում յաջողուեց որ Օսմանեան Կայսրութեան տապալումն ու հակասուլթանական ազատագրական պայքարի արձանագրած յաջողութիւնները չնպաստեն Ռուսաստանի ազդեցութեան գօտիների մեծացմանն ու դէպի հարաւ նրա ներթափանցման ծրագրերի իրագործման:

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԵՒ ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Ռուսական Կայսրութեան վերաբերմունքը դէպի հայ ազատագրական շարժումը երկդիմի էր: Նա այն պաշտպանում էր այնքանով՝ որքանով ուղղուած էր Թուրքիայի դէմ, այնքանով՝ որքանով հայերը իրենց գրաւեալ հողերն էին ուզում Թուրքիայից: Նա երազում էր տարբեր ձեւերով դրանք կցել Ռուսաստանին: Բայց, ըստ էութեան, նա դէմ էր հայ ազատագրական շարժման, քանի որ նրա ծրագրում շեշտուած էր ազատ, անկախ ու միացեալ Հայաստան ստեղծելու գաղափարը: Այդ նպատակն իրականացնելու համար հայերը պէտք է ազատագրէին նաեւ Ռուսաստանի կողմից գրաւուած տարածքները: Այդ պատճառով էլ հայ կուսակցութիւնները դաշնակցում էին հակացարական շարժումներին, ներառեալ պոլշեւիկեանին: Հասկանալով հանդերձ Ռուսաստանի երկդիմութիւնը, հայերը նրան գերադասում էին Թուրքիային, քանի որ այն իրենց պաշտպանում էր թուրքական ծայրայեղական ջարդարարական արարքներից եւ կեանքի ու ապրելու աւելի նպաստաւոր պայմաններ ստեղծում Ռուսաստանում ապաստանած հայերի համար: Տեղին է այստեղ յիշել Պիզմարքի հետեւեալ արտայայտութիւնը.

«Բոլոր այս [պալքանեան] ազգերը Թուրքիայի դէմ մղած իրենց ազատագրական պայքարում ուրախութեամբ ընդունել են ռուսական օժանդակութիւն, բայց ազատագրուելով միտում չեն ունեցել թուրքական Սուլթանը փոխարինելու ռուսական Ցարով»[1]:

Հայ ազատագրական պայքարի նկատմամբ Ռուսաստանի նման դիրքորոշումը իր բացասական անդրադարձն ունեցաւ նաեւ հայ-ռուսական ռազմական համագործակցութեան վրայ:

Առաջին Աշխարհամարտի սկզբին շուրջ երկու հարիւր հազար հայեր գրանցուեցին ռուսական բանակում: Այդ նաեւ հետեւանք էր հայերի ռուսական կողմնորոշման ու ռուսական բանակին զինուորա-

1. Lord Kinross, *The Ottoman Centuries, The Rise and Fall of the Turkish Empire*, William Morrow & Co. Inc., N.Y. 1977, p. 527.

գրուելով՝ Հայաստանի ազատագրութեան ու անկախ Հայաստանի ստեղծման նպաստելու մտադրութեան: Միաժամանակ, ռուսական խնամակալութեան տակ ստեղծուեցին հայկական ինքնուրոյն կամաւորական միաւորումներ՝ հայ հրամանատարների գլխաւորութեամբ: Նրանք զգալի գործ կատարեցին Կովկասեան ճակատում Օսմանեան Կայսրութեան դէմ մղուած պատերազմում ու Պատմական Հայաստանի տարածքները ազատագրելու գործում: Վանի ազատագրական պայքարը միտեց դէպի ինքնուրոյն հայ պետական կառոյց ստեղծելու:

Ռուսաստանի նպատակն էր լոկ շահագործել հայերի հակաթուրքական տրամադրութիւնները եւ սկզբունքօրէն դէմ էր անկախ հայկական պետականութիւն ստեղծելու հայկական ծրագրին: Այս հիման վրայ ռուսական հրամանատարութիւնը ռուսական բանակի 200,000 հայ զինուորներին հեռու պահեց Կովկասեան ճակատի մարտերից: Շատ շուտով նա հայ կամաւորական զինուորական միաւորումները զրկեց ինքնուրոյնութիւնից: Եւ վերջապէս, նա հրամայեց ռուսական բանակին նահանջել Վանից, որտեղ հայ ժողովուրդը ողջունում էր հայ-ռուս զինուորական համագործակցութեան պտուղները եւ դրա մէջ տեսնում էր երազանքների առհաւատչեան: Ռուսական նման ռազմավարութիւնը ոչ միայն բացասաբար անդրադարձաւ հայ-ռուս բարեկամութեան, հայ-ռուս համագործակցութեան, հայերի լաւատեսական միտումների ու հայ ազատագրական շարժման ընթացքի վրայ, այլեւ պատճառ դարձաւ տասնեակ հազարաւոր հայերի բռնագաղթի ու ջարդի: Այն մեծապէս խրախուսեց հայերի ոչնչացումը ծրագրած ու գործադրող Իթթիհատականներին[1]:

Հայ-ռուսական յարաբերութիւնների նման երկդիմութեան պայմաններում անչափ կայուն ու արդիւնաւէտ կը լինէր հայ-Արեւմուտք դաշինքը, եթէ Արեւմուտքը չմոռանար իր նուիրուած դաշնակցին ու պահպանէր նրան տուած իր խոստումները: Այսօր Արեւմուտքը իր սխալը սրբագրելու լրիւ հնարաւորութիւնն ունի:

1. Ե.Ղ. Սարգսեան, *Հայերի Մասնակցութիւնը Պատերազմին եւ Կամաւորական Շարժումը*, Հայ ժողովրդի Պատմութիւն, Զ. հտ., Երեւան, 1981, էջ 546-553: Akaby Nassibian, *Britain and the Armenian Question*, p. 107-109. *Վան-Վասպուրականի Հերոսամարտը* (Հ. Փափազեան, Ռ. Յովնանեան, Լ. Միրիջանեան, Հ. Զամչեան, Մ. Ջրբաշեան, Պ. Սարոյեան), Երեւան, Հայաստան հրատարակչութիւն, 1990, էջ 253: Գ. Գալոյեան, *Հայաստանը Մեծ Տէրութիւնների Աշխարհակալական Առճակատումներում*, էջ 653, 657-668:

ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՒ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Սոյն հարցն առաւել գիտական ու ճիշդ վերլուծելու համար անհրաժեշտ է որոշակի շրջանների բաժանել ռուսական պատմութիւնը:

15-րդ դարից մինչեւ 19-րդ դարի վերջին քառորդը Ռուսիան հանդէս է եկել որպէս ընդգծուած հակաթուրանական, հակաթուրքական ոյժ: Այդ ընթացքում նա մոնկոլական, թաթարական, թրքական իշխանութիւններին դուրս է քշել այն հողերից, որոնք այսօր կազմում են նախկին ԽՍՀՄ-ի հարաւային, կովկասեան եւ արեւելեան տարածքների մեծ մասը: Այս շրջանի առաջին իսկ փուլում, Իվանների գահակալութեան օրերին, սկսում է զգալի դառնալ հայ ժողովուրդի ռուսական արեւելումը: Այն ուժեղանում է Մեծն Պետրոսի օրօք եւ Ռուսաստանի արեւելեան ծաւալապաշտական քաղաքականութեան իրականացման տարիներին: 19-րդ դարի վերջերից, երբ եւրոպական պետութիւնները վճռականօրէն կասեցնում են Ռուսիայի ծաւալումը դէպի արեւելք, Ռուսաստանը ձգտում է Արեւելքի երկրներ ներթափանցել բարեկամութեան դրօշով ու մշակում է ինքնատիպ արեւելասիրութիւն, իսլամասիրութիւն:

Մինչեւ 1828 թ., հայերի համար Ռուսաստանը եղել է արտաքին ոյժ: Նա իր տիրապետութեան տակ չի ունեցել գրաւուած հայկական տարածքներ, կամ մեծ հայկական տարածքներ: Այդ շրջանում են մշակուել հայերի ռուսական արեւելման հիմնական սկզբունքները: Դրանք հիմնականում բխում էին այն ենթադրութիւնից, որ Ռուսաստանը գաղութային ձուլողական քաղաքականութիւն չի վարի հպատակուած Հայաստանում: Այդ յոյսը սնուեց այն փաստից, որ 1828 թ. Ռուսաստանը ստեղծեց Հայկական Մարզը, որ վերացուեց տասներկու տարի յետոյ: Դրան յաջորդող շրջանում ցարական քաղաքականութիւնից հիասթափուեց Խաչատուր Աբովեանը՝ ռուսական արեւելման գլխաւոր ջատագովը, այդ տարիներին: Ռուսաստանը սկսուեց համարուել սովորական գաղութային եւ կայսերապաշտ մի պետութիւն, որ ծնեց հակա-

ցարական շարժումը:

Մինչեւ 19-րդ դարի սկիզբները, Ռուսաստանում գործում էր մի վճռական ոյժ՝ ցարականութիւնը: Դարի սկզբներից զգալի դարձաւ ռուսական հակացարական յեղափոխական ոյժը, որ գնալով զօրացաւ: Եթէ մինչեւ այդ ժամանակաշրջանը ռուսական արեւելումը ուղղուած էր միայն դէպի ցարական պետական ու ռազմական ոյժը, ապա դարու կէսից առաջացաւ նաեւ ռուսական արեւելման երկրորդ տարբերակը՝ կողմնորոշումը դէպի ռուսական յեղափոխական ուժերը, որոնց հետ, իրենց ժամանակին, սկսեցին գործակցել հայ քաղաքական կուսակցութիւնները:

Ցարական կառավարութիւնը բացայայտ բացասական դիրքորոշում որդեգրեց դէպի հայկական ազատագրական շարժումները, որոնք հակացարիզմի բնական դաշնակիցներն էին: Միաժամանակ, նա յայտարարեց որ պատրաստ է օգնելու Թրքական լծի տակ հեծող հայ գիւղացուն, որից սպասւում էր մտածել իր կաշին փրկելու եւ ոչ թէ իր երկիրն ու հողը ազատագրելու մասին:

Պոլշեւիկները, իրենց կուսակցութեան ստեղծումից յետոյ, ռուսական արեւելում ասելով հասկանում էին ոչ թէ ցարական, այլ՝ զուտ պոլշեւիկեան կողմնորոշումը: 1917 թ. ռուսական պոլշեւիկեան պետական յեղաշրջումից յետոյ ռուսական արեւելում հասկացութեան բովանդակութիւնն ամբողջութեամբ ծածկուեց դէպի Սովետական Միութիւնը որդեգրուած դրական կեցուածքով: Դրական կեցուածքը դէպի Քերենսքին եւ այլ ընկերվարական ուժերը ռուսական կողմնորոշում չէին համարւում: Սովետական քարոզչութեան համար անհրաժեշտ էր Սովետական Ռուսաստանի նկատմամբ կապուածութեան եւ պատկանելիութեան զգացումը ուժեղացնելու համար, ուռճացնել հայերի ռուսական արեւելման հարցերը ու այն ներկայացնել զուտ քարոզչական կտրուածքով՝ առանց անհրաժեշտ խորութեան ու գիտականութեան:

Հայերի ռուսական արեւելումը, պարզ է, յենուել է.—

1. Ռուսական այն պետական ու ռազմական ուժի վրայ, որ ունեցել է հակաթուրանական ուղղուածութիւն:
2. Ռուսական յեղափոխական այն շարժման վրայ, որ ազատութիւն էր բերելու ինչպէս ռուսին, այնպէս էլ ուքրանացուն, վրացուն, հայուն եւ այլ ժողովուրդներին:
3. Այն համոզման վրայ, որ ցարական Ռուսաստանի տիրապետութեան տակ գտնուող քրիստոնեայ եւ իսլամ բազմաթիւ ժողովուրդներ աւելի քաղաքակիրթ պայմաններում են ապրում, քան Թուրքիայի կողմից հպատակեցուած ժողովուրդները: Նկատելի էր որ Ռուսաստանում էլ ուժեղանում էր հակակառավարական ընդդիմութիւնը:
4. Ռուսաստանում գոյութիւն ունեցող աւելի նպաստաւոր պայմանների պատճառը համարւում էր այդ երկրի պետութեան եւ ժողովրդի քրիստոնէական ընոյթը: Այս պատճառով էլ, նախընտրում էին ապրել քրիստոնեայ պետութեան լծի տակ:
5. Այն համոզման վրայ որ Ռուսաստանը սահմանակից է եւ աւելի արագ ու անմիջականօրէն կարող է օգնել հայերին, քան մեծ հեռաւորութեան վրայ գտնուող Արեւմտեան պետութիւնները:

Այսպիսով, հայերը գտնում էին որ իրենց եւ ռուսական շահերի միջեւ բնական որոշակի ընդհանրութիւններ կան՝ ինչպէս հակասուլթանական պայքարի, այնպէս էլ աւելի նպաստաւոր կենսապայմաններ ստեղծելու առումով: Ցարական Ռուսաստանը նման գիտակցուած ընդհանրութիւններ չէր նկատում: Իսկ յեղափոխական Ռուսաստանը այդ ընդհանրութիւնն օգտագործեց ազգային յեղափոխական կարողականութիւնը ի նպաստ իրեն ծառայեցնելու համար՝ առանց ազգային ուժերին խոստանալու ազատ պետական իշխանութիւն:

***

Մինչեւ 17-րդ դարի վերջերը, հայերը դաշնակիցներ էին որոնում հիմնականում Գերմանիայում, Ֆրանսայում, Անգլիայում, Աւստրիայում, Լեհաստանում, Հռոմում: 18-րդ դարի առաջին տարիներից, ընորհիւ Իսրայէլ Օրու ջանքերի, հայերն աւելի ու աւելի ուշադրութիւն են դարձնում Ռուսաստանի հետ դաշնակցելու հնարաւորութիւնների վրայ: Ռուսական արեւելեան քաղաքականութեան մէջ պալքանեան, կովկասեան եւ նոյնիսկ արաբական երկրների ժողովուրդները տեսնում էին իրենց ազատութեան յոյսը: Ռուսաստանը ամենաուժեղ հակասուլթանական ոյժն էր այդ ժամանակ: Անգլիան, Ֆրանսան եւ այլ եւրոպական պետութիւններ իրենց կայսրութիւն էին ստեղծել հեռաւոր երկրներում: Ռուսաստանը ծրագրում էր ծաւալուել ձիւնագնդակի նման՝ ի հաշիւ իր անմիջական հարեւանների: Երբ այդ ծաւալապաշտական քաղաքականութիւնը սպառնաց Միջերկրական Ծովի աւազանում Միջին եւ Մերձաւոր Արեւելքի ու Հնդկաստանի մէջ եւրոպական երկրների ունեցած շահերին, եւրոպական պետութիւնները կանգնեցրին ռուսական առաջխաղացումը: Այս փաստից որոշ հայեր եզրակացրին որ Արեւմուտքը Թուրքիայի պաշտպանն է, իսկ Ռուսաստանը՝ հետեւողականօրէն հակաթուրք է: Մոռացուեց այն հանգամանքը, որ ինչպէս Արեւմուտքը, այնպէս էլ Ռուսաստանը պաշտպանում էր պալքանեան ժողովուրդների հակաթուրք պայքարը: Մեծ տէրութիւնների պալքանեան եւ կովկասեան քաղաքականութեան միջեւ լուրջ տարբերութիւններ կային:

Հայերի ռուսական արեւելումը թուլացաւ, երբ ռուսական կառավարութիւնը յայտարարեց որ ինքը պատրաստ է օգնելու հայ տառապ-

եալներին, սակայն դէմ է հայ ազատագրական պայքարին, երբ նա Կովկասում հրահրեց հայ-թաթարական ճակատումներ, երբ Առաջին Աշխարհամարտի սկզբին հայկական ջոկատների մեծ մասը Կովկասից տեղափոխեց Լեհաստան, երբ ռուսական բանակը անհասկանալիօրէն նահանջեց Վանի գործողութիւնից յետոյ՝ Թրքական սուլթանի դատին թողնելով ինքնապաշտպանական կռիւներում յաղթանակած հայերին, երբ Սովետական Ռուսաստանը օգնեց Մուսթաֆա Քեմալին, երբ նա ազերիներին յանձնեց Ղարաբաղն ու Նախիջեւանը, երբ Սթալինը հազարաւոր հայեր սպաննեց ու աքսորեց, երբ Երկրորդ Աշխարհամարտից յետոյ սովետական կառավարութիւնը, առանց հայերի կարծիքը հարցնելու, յայտարարեց որ ԽՍՀՄ-ը եւ նրա անդամները հողային պահանջներ չունեն Թուրքիայից, երբ Ղարաբաղեան Շարժման ժամանակ Քրեմլինը բացայայտօրէն որդեգրեց փրոազերական դիրքորոշում, եւ անտարբեր սառնասրտութեամբ դիտեց Սումգայիթի, Կիրովապատի, Շուշիի, Պաքուի եւ այլ վայրերում կազմակերպուած հայերի ջարդերը, Հայաստանի եւ Արցախի շրջափակումը, երբ ԽՍՀՄ-ը Հայերի Ցեղասպանութիւնը դատապարտող պաշտօնական որոշում չընդունեց:

Ռուսական արեւելումը ուժեղացաւ, երբ 1828 թ. յետոյ, Արեւելեան Հայաստանը իրեն կցելուց յետոյ, ստեղծեց Հայկական Մարզը, երբ 1828-ից սկսեց ապաստան տալ հայ գաղթականներին, երբ թելադրեց Սան Սթեֆանոյի դաշնագիրը, երբ 19-րդ դարի վերջում նպաստեց Հայկական Հարցի բարձրացմանը, երբ 1913 թ. նախաձեռնեց հայկական գաւառներում բարենորոգումներ անցկացնելու որոշման նախագիծը, երբ 1915 թ. Մայիսի 24-ին, Ֆրանսայի եւ Անգլիայի հետ միասին, դատապարտեց ծաւալուող Հայերի Ցեղասպանութիւնը, երբ Սովետական Ռուսաստանը նպաստեց Պատմական Հայաստանի մի փոքր բեկորի փրկութեանն ու Սովետական Հայաստանի մշակութային զարգացմանն ու նրա տնտեսութեան վերականգնմանը, երբ Երկրորդ Աշխարհամարտից Սովետական Միութիւնը դուրս եկաւ յաղթական, երբ դրա ընթացքում սկսեց բարձրացնել Հայկական Հարցը, երբ 1960-ական թուականներից հնարաւորութիւններ տուեց Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնների ծաւալմանը:

Հայերի Արեւմտեան արեւելումը ուժեղացաւ, երբ Ռուսաստանի հետ միասին Անգլիան, Ֆրանսան եւ Իտալիան յետոյ նաեւ Ամերիկան, հակաթրքական ռազմաքաղաքական ճակատ կազմեցին (1914-1918), երբ նրանք հայերին խոստացան անկախ Հայաստան ու Կիլիկիա, երբ Երկրորդ Աշխարհամարտից յետոյ, մի փոքր պահ, պաշտպանեցին հայկական պահանջատիրութիւնը, երբ Ռուսաստանի հետ միասին պաշտպանեցին վերեւում նշուած հայօգուտ մի քանի նախագծերը (Պերլինի Վեհաժողովից մինչեւ 1915 թ.), երբ նրանք հեղինակեցին Սեւրի դաշնագիրը, երբ Եւրոպայի Խորհրդարանը դատապարտեց Թուրքիայի կազմակերպած Հայերի Ցեղասպանութիւնը, երբ նոյն մարմինը պաշտպանեց ղարաբաղեան ժողովրդական դեմոկրատական ազատագրական շարժումը:

Հայերի Արեւմտեան արեւելումը թուլացաւ, երբ Սան Սթեֆանոյի դաշնագիրը վերածուեց Պերլինեան Վեհաժողովի դաշնագրի, երբ Ազգերի Լիկան մերժեց այդ կազմակերպութեան անդամակցելու Հայաստանի Հանրապետութեան դիմումը, երբ Արեւմուտքը չպաշտպանեց Ուիլսընեան Հայաստանի եւ Հայաստանը ԱՄՆ-ի մատաղ դարձնելու ծրագրերը, երբ նա վերակենդանացրեց Թուրքական ազգայնամոլութիւնը՝ որպէս հակասովետական ոյժ, երբ նա նախապատրաստեց եւ ստորագրեց Լոզանի հաշտութեան պայմանագիրը, երբ Երկրորդ Աշխարհամարտից մի քանի տարի յետոյ, օրակարգից հանեց Հայկական Հարցը, երբ ԱՄՆ-ի Քոնկրէսը մի քանի անգամ մերժեց Հայերի Ցեղասպանութեան վերաբերող մի քանի բանաձեւ:

Եւ այսպէս, հայկական ազատագրական պայքարն ունի բարդ, ուժական եւ զգայուն կառոյց: Այն հանդէս է գալիս որպէս տնտեսական, ընկերային, քաղաքական, մշակութային, դիւանագիտական, եկեղեցական եւ հոգեւոր բաղադրամասերի մի ամբողջութիւն՝ հաւաքուած քաղաքական մի առանցքի շուրջ: Այն մի կողմից բարձրացել է հայ մշակոյթի վրայ եւ միւս կողմից՝ որպէս մշտատեւ ուղեկից եւ շարժիչ ոյժ, այն նպաստել է կորցրածի ձեռք բերմանը, նոր նուաճումների արձանագրմանն ու մարդկային քաղաքակրթութեան արդիական միտումների ժառանգորդմանը: Այն առանցքն է կազմել հայ ազգային գիտակցութեան տարբեր մակարդակների ձեւաւորմանն ու նրանց զարգացմանը: Իր ծագման առաջին օրից իսկ, նա կանգնել է ինքնապաշտպանութեան եւ ապստամբութեան միջեւ ընտրութիւն կատարելու հրամայականի առաջ, եւ ելնելով հայ կեանքի առանձնայատկութիւններից, նախընտրել ինքնապաշտպանական եղանակը: Միաժամանակ, հակառակ իր կամքի, հայ ազատագրական պայքարը մտել է միջազգային յարաբերութիւնների բարդ ոլորտը, եւ այդ իսկ պատճառով, իր ազատ կեանքը տնօրինելու իրաւունքը հայը միշտ չէ որ կարողացել է իրականացնել իր հերոսութեամբ, աշխատասիրութեամբ, ստեղծագործական ոգով, ռազմական ու դիւանագիտական տաղանդով եւ մշակութային ուժով: Բոլոր դէպքերում, նրա պայքարին նպաստել են իր հայրենասիրութիւնը, լաւատեսութիւնը, ստեղծագործաբար ապրելու վճռականութիւնը, նոր բարեկամներ նուաճելու շնորհքը, համաշխարհայինի հետ համաչափ քայլելու միտումը եւ այդ բոլորն իր մէջ ներառնող հայ մշակոյթը: Հայ ազատագրական պայքարում կանխորոշիչ դեր են խաղացել հայ-յունական, հայ-պարսկական, հայ-արաբական, հայ-թուրքական, հայ-ռուսական, հայ-պալքանեան, հայ-արեւմտաեւրոպական եւ հայ-ամերիկեան յարաբերութիւնները:

ԳԼՈՒԽ Թ.

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿԵՑՈՒԱԾՔԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ

1961 թ. Փետրուարի վերջերին բախտ վիճակուեց իբրեւ զբօսաշրջիկ այցելել Պէյրութում բնակուող իմ հարազատներին՝ տասնհինգ տարիների բաժանումից յետոյ: Հայկազեան Գոլէճի տնօրինութեան հրաւէրով կարդացի դասախօսութիւնների մի շարք՝ նուիրուած հայ մշակոյթի պատմութեան: Այդ ընթացքում ես ծանօթացայ Եղեռնի 50-ամեակը բացառիկ կազմակերպուածութեամբ ու քաղաքական ուղղուածութեամբ նշելու ծրագրերին: Մտահոգուած էին հայրենի ժողովուրդի իրաւ հնարաւորութիւններով, այն հարցով թէ հայրենի ժողովուրդը ինչքանով կը կարողանայ բացայայտել իր հայրենասիրական ու պահանջատիրական զգացումները, եւ ինչպիսի ձեւեր կարող են նրա արտայայտութիւններն ստանալ:

ՀԱՅՐԵՆԻ ՄՏԱՒՈՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՄՏՔԻ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Պարզուեց որ Հայրենի ժողովուրդը սուտ քուն է մտել: Օր ըստ օրէ ուժեղանում էր Հայրենասիրական շարժումը, որի մղիչ ուժի կազմում առանձնանում էր Հայ բանուորն ու մտաւորականը՝ յատկապէս ուսուցիչներն ու դասախօսները, եւ նրանց ազդեցութեան տակ գտնուող աշակերտութիւնն ու ուսանողութիւնը:

Հայրենի մտաւորականութիւնը, նոր յեղափոխական գաղափարախօսութեան մշակման ու ժողովրդական գիտակցութեան ամրապնդման առումով, կարելի է բաժանել մի քանի խմբերի.

1. Բացայայտ նորարարներ ու յեղափոխականներ: *Նրանք ներգործում են ուժեղ կերպով, սակայն փոքր միջավայրում ու կարճ ժամանակ: Նրանք շուտով մեկուսացւում կամ չէզոքացւում են խորհրդային քաղաքական ոստիկանութեան կողմից:*
2. Կոմունիստականն ու հակակոմունիստականը իրար ինֆնատիպօրէն զօդողներ: *Այս խմբին պատկանողները կոմունիստական վարդապետութեան ու նրա գաղափարախօսների երկերի մէջ գտնում էին այնպիսի մտքեր, որոնք մարդկանց, յատկապէս երիտասարդներին առաջնորդում էին դէպի գիտական կասկածը, դէպի ինքնուրոյն մտածողութիւնը, դէպի պաշտօնական տեսակէտի բացասումն ու ժխտումը:*
3. Կոմունիստականն ու հակակոմունիստականը երկդիմօրէն իրենց մէջ պահողներն ու արտայայտողները: *Այսպիսի մարդիկ պաշտօնական վայրերում ու բազմանդամ խմբերում պաշտպանում են պաշտօնական հարցադրումն ու տեսակէտը, իսկ նեղ միջավայրում եւ անհատական զրոյցներում արտայայտում են այլ, նոյնիսկ տրամագծօրէն հակառակ գաղափարներ: Նրանց մեծամասնութիւնը առաջին դէպքում կրկնում են պաշտօնականը, իսկ երկրորդ դէպքում՝ հիմնաւորում իրենց դրոյթները:*
4. Նուիրեալներ, որոնք, սակայն, ունեն ինֆնատիպ տրամաբանական մտածողութիւն: *Այս խմբին պատկանող մտաւորականները հիմնականում պաշտպանում են սովետական տեսակէտը, սակայն միշտ ունենում են տարբեր բնոյթի ու խորութեան քննադատական դիտողութիւններ, քանի որ ձգտում են մէն մի դրոյթ հիմնաւորել տրամաբանական փաստարկներով: Նրանք միտում ունեն ստեղծել տրամաբանական կառոյցներ:*
5. Տոկմատիկներ կամ պաշտօնական հարցադրումներն ու լուծումները անվերապահ կերպով պաշտպանողներ եւ ընդունողներ: *Նրանք յատկապէս տիրապետող ոյժ դարձան 1930-ական թուականների կէսերից, մաքրագործման սթալինեան քաղաքականութիւնը կիրառելուց յետոյ, երբ Սթալին գործադրեց բանուորագիւղացիական մտաւորականութիւն ստեղծելու իր ծրագիրը: Արտաքնապէս այս խմբին յարել են այն հայ մտաւորականները, որոնք խորհրդային կարգերը պաշտպանում էին, քանի որ Հայաստանի համար այլ ելք չէին տեսնում: Թուրանական եւ հակահայկական քաղաքականութիւն գործադրող պետութիւններով շրջապատուած Հայաստանը միայն կարող է, կարծում էին նրանք, գոյատեւել հիւսիսային դրացիի հետ համերաշխ ապրելով: Արտաքնապէս այս խմբին էին յարում նաեւ նրանք, որոնք չէին ցանկանում հիւսիսի դրացին նեղացնել, քանի որ նա կարելի էր դարձրել Պատմական Հայաստանի մի փոքր տարածքի վրայ պահել հայ պետականութեան շուքը: Վերջին երկու ենթախմբերը իրենց ողջ մտածելակերպով եւ գործունէութեան ուղղուածութեամբ պատկանում էին երրորդ եւ չորրորդ խմբերին:*

Կարող ենք ասել որ տրամաբանական, մարդասիրական եւ ազգասիրական միտում ունեցող ամէն մի մտաւորական իր համոզումների խորութեամբ եւ ուժեղութեամբ մասնակցել է նոր, ոչ-համայնավարական կամ նոր յեղափոխական գաղափարների սաղմնաւորմանն ու զարգացմանը: Այս պատճառով էլ խորհրդային կարգերի պահակները վախենում էին ամէն մի տրամաբանող ուժեղ բանաստեղծից (Պարոյր Սեւակ, Յովհաննէս Շիրազ), ամէն մի ուժեղ մարդասէր նկարչից (Մինաս Աւետիսեան), մաթեմատիկոսից (Ա. Շահինեան), ֆիզիկոսից (Զոպանեան), կենսաբանից (Լէոն Օրբելի, Թախթաջեան, Տէր Պետրոսեան), պատմաբանից (Ա. Յովհաննէսեան, Բ. Ուլուբաբեան) եւայլն:

Երբ Սթալինի մահից յետոյ աստիճանաբար թուլացան «ճզմող լծակները» եւ հայ մտաւորականութիւնը սկսեց համեմատաբար աւելի ազատ մտածել ու գործել, առաջին խմբի մտաւորականները վերածուե-

ցին այլախոհների, էմիկրանտական խմբերի եւ 1988 թ. յետոյ, նոր ռամկավարական սկզբունքների կրողների: Երկրորդ եւ երրորդ խմբի պատկանողները մի կողմ նետեցին իրենց «կեղծ» երկդիմութիւնը եւ հիմնականում միացան առաջիններին: Չորրորդ խումբը երկփեղուեց: Մի մասը քննադատական դիրք ընդունեց «փողոցի հոգեբանութեան» կամ «ամբոխավարութեան» կամ «միտինկային զօրավարութեան» նկատմամբ, եւ վերապահ դիրք որդեգրեց դէպի նոր յեղափոխական ոյժը: Միւս մասը տրամաբանական գտաւ ժողովրդական վարդապետութիւնը եւ միացաւ նոր ռամկավարութեան: Տոկմատիկները բաժան բաժան եղան: Մի մասը աշխատում էր ամէն կերպ փրկել խորհրդային կառոյցը: Մի ուրիշը միջին դիծ էր որոնում: Երրորդը՝ կեղծ դեմոկրատ էր ձեւանում: Մի մասն էլ դարձաւ պրովոկատոր, գործակալ հին ու մեռնող ուժերի:

Այսօր մենք պէտք է արժանին մատուցենք այն հայ մտաւորականներին, ի մասնաւորի ուսուցիչներին ու դասախօսներին, որոնք մեծ համբերատարութեամբ, զոհաբերութեամբ եւ նուիրումով նախապատրաստեցին այն սերունդին, որն այսօր մարտիկն ու հրամանատարն է յեղափոխական նոր Հայաստանի, Հայաստանի Երրորդ Հանրապետութեան:

Այդ պատմական ճանապարհի կարեւորագոյն հանգրուաններից է Եղեռնի 50-ամեակի նախապատրաստութեան եւ անցկացման շրջանը, երբ հայրենասիրական շնչով ու յեղափոխական ժողովրդական ոգով միասնականութեան վճռական քայլեր արուեցին: Հայ ժողովուրդն սկսեց արձանագրել միասնականութեան յաղթանակը: Այդ խիստ մտահոգեց Քրեմլինի եւ Պաքուի ղեկավարներին: Մինչեւ այսօր ազերի ազգայնամոլ գաղափարախօսները համարում են որ այդ օրուանից պէտք է սկսել արդի հայ քաղաքական զարթօնքի պատմութիւնը: Պաքուից Մոսկուա հոսեցին հակահայ ամբաստանագրերի գետեր: Նրանց ձայնակցում էին առանձին հայ թափթփուկներ: Մտահոգուած Քրեմլինը ձեռնարկում էր տարբեր ընոյթի միջոցառումներ, եւ ստիպում Հայաստանի Կոմկուսին, որպէսզի վճռական քայլերի միջոցով վերջ դնի հայրենասիրական շարժումներին:

ՔԱՒՈՒԹԵԱՆ ՆՈԽԱՁԸ

Մի օր շտապ ինձ կանչեցին Հայաստանի Կուսկենտկոմ: Կենտկոմի մեծ դահլիճում հաւաքել էին հարիւրաւոր մտաւորականներ: Խօսեց այդ ժամանակաշրջանի Կեդրոնական Կոմիտէի երկրորդ քարտուղարը: Նա նկարագրեց Հայաստանում բարձրացող հայրենասիրական շարժման ալիքը, Եղեռնի 50-ամեակի յիշատակման ուղղութեամբ տարուող աշխատանքները եւ ընդգծեց որ դրանք խոտոր են կոմունիստական վարդապետութեան, խորհրդային իրաւակարգին, ազգերի սոցիալիստական համակեցութեան սկզբունքներին եւ ԽՍՀՄի գործադրած խաղաղութեան ծրագրին: Վերջում՝ շեշտեց որ նման շարժումները կարող են միայն վնաս բերել հայ ժողովրդին: Այդ շարժման խմորման, առաջացման ու տարածման պատճառների մէջ նա առանձնացրեց 1946-ից հայրենադարձած շուրջ 200,000 հայերի «բացասական» գաղափարական-քաղաքական ազդեցութիւնը Հայաստանի բնակչութեան վրայ:

Հայաստանի կուսակցական ղեկավարութիւնը իր գործը դիւրացնելու եւ իր «վատ աշխատանքը» արդարացնելու համար յաճախ վկայակոչում էր Հայաստանում հարիւր հազարաւոր «կապիտալիստական մտածելակերպի ազդեցութեան տակ գտնուող» քաղաքացիների (հայրենադարձների) առկայութիւնը: Գաղտնի գործակալութիւնները բերում էին այդ հաստատող տուեալներ: Պաքուն եւ Քրեմլինը այդ օգտագործում էին Հայաստանում «ազգայնամոլական հակախորհրդային խմորումները» ճնշելու համար: Անհասկանալի պատճառներով Հայաստանի ղեկավարութիւնը հրահանգում էր պատմաբաններին ու դեմոգրաֆներին, որպէսզի արհեստականօրէն փոքրացնեն հայրենիք ներգաղթած հայերի եւ արտաշխարհի հայութեան թիւը: Վրացիներն ու ազերիները հակառակ դիրքորոշումն էին որդեգրել: Վրացիները սփիւռք չունենալով հանդերձ, խօսում էին մէկ միլիոն արտաշխարհի վրացական համայնքի մասին: Ազերիները իրենց միացնում են հիւսիսային Իրանի եօթ միլիոնանոց բնակչութիւնն ու Թուրքական Հանրապետութիւնում բնակուող մի շարք ցեղերի ու ազգութիւնների:

Այդ օր Կեդրոնական Կոմիտէ հրաւիրուած մտաւորականներին բաժանեցին խմբերի եւ ուղարկեցին Հայաստանի բոլոր շրջաններն ու

բնակավայրերը: Նրանց խնդիրն էր համոզել ժողովուրդին, որպէսզի հրաժարուին Եղեռնի 50-ամեակը համաժողովրդական ոգով եւ քաղաքական խորքով նշելու գաղափարից. թելադրել հայ ժողովրդին եւ կանգնել բոլոր տեսակի հայրենասիրական գործերից ու գաղափարներից: Ժողովրդին նրանք պէտք է համոզէին որ նման հայրենասիրական գործունէութիւնը միայն վնաս կարող է բերել:

«Պատմական» այդ ժողովին հրաւիրուած մի քանի «հայրենադարձ» մտաւորականներ ներկայացան այդ գործի կազմակերպիչներին եւ յայտնեցին, որ իրենք խիստ վիրաւորուած են կատարուած յայտարարութիւններից, որ իբր է հակադրում հայ ազգի երկու հատուածներին եւ Հայաստանի բնակչութեան տարբեր խմբերին: Նրանք նշեցին որ այդպիսի հարցադրումը միայն կարող է վնասել հայ ժողովուրդին, ու օգնել նրա թշնամիներին: Առանձնապէս շեշտուեց այն միտքը, որ Եղեռնի 50-ամեակի դէմ ծաւալած պայքարը սկզբից դատապարտուած է անյաջողութեան: Աւելի ճիշդ կը լինէր, եթէ Հայաստանի ղեկավարութիւնը ինքը գլխաւորէր շարժումը եւ այն փրկէր տարերայնութեան վտանգից: Ուշացումով այս արուեց, որոշ զոհեր տալուց յետոյ:

ՔՐԵՄԼԻՆԵԱՆ ՀԱՒԱՏԱՔՆՆԻՉՆԵՐԸ

Շարժման վերելքի փուլում, երբ ճնշման եղանակներն ու «գաղափարական ներգործման միջոցները» անարդիւնք մնացին, Քրեմլինը Հայաստան ուղարկեց կուսակցական, պետական գործիչներից եւ գիտնականներից կազմուած յանձնախումբեր: Նրանց խնդիրն էր հանդիպել հանրապետութեան մտաւորականութեան, աշակերտութեան, բանուորների եւ կուսակցական-պետական ղեկավար աշխատողների հետ՝ երեք հիմնական հարց պարզելու համար.

1. Անդրանիկ Օզանեանի հեղինակութեան եւ ժողովրդականութեան բարձրացման պատճառները:
2. Պարզել Եղեռնի 50-ամեակը քաղաքական ուղղուածութեամբ ու համաժողովրդական տարողութեամբ նշելու շարժառիթները, այդ շարժման ու հայ պահանջատիրութեան կապը եւ այդ երկուսի (Եղեռնի յիշատակման ու պահանջատիրութեան) հնարաւոր հակախորհրդային միտումները:
3. Պարզել Հայաստանում ուժեղացող «հակաթուրքական» տրամադրութիւնների խորքը, պատճառները եւ միտումները:

«Կեդրոն»ից ժամանած սոյն յանձնախմբերը մեծ յոյսեր էին կապում փիլիսոփայութիւն, քաղաքատնտեսութիւն, կուսակցութեան պատմութիւն դասաւանդող մասնագէտների հետ: Կարծում էին որ նրանք յանուն հացի կը դաւաճանեն իրենց ազգային շահերին ու կը պաշտպանեն Քրեմլին-Պաքու գիծը: Բայց եղաւ անսպասելին: Հայ «մարքսիստ մտաւորականութիւնը» դրսեւորեց իր ազնիւ հայրենասիրական ոգին, իր յեղափոխական ոգին: Անկասկած, գտնուեցին թուլամորթներ, պաշտօնամոլներ ու շահամոլներ: Սակայն, տիրապետեց հայ աւանդական հայրենասիրական ոգին: Տեսնում էինք թէ ինչպէս «տոկմադիկ», «սթալինական» ու «ծախուած» կարծուած հայ փրոֆեսորները «հաւատաքննիչների» սենեակները մտնում էին հաստատոր գրքե-

բով բեռնաւորուած: Նրանք իրենց հետ տանում էին Հայ Դատի, հայ պահանջատիրութեան հիմնաւորուածութիւնը, Անդրանիկ Օզանեանի գործի արդարութիւնը եւ հայ ազգային ազատագրական պայքարի ճշդութիւնը ապացուցող գրքեր, որոնք գրուած էին ռուսների, ուքրանացիների, վրացիների, թուրքերի, արաբների, պուլկարների, յոյների, ֆրանսացիների, գերմանացիների, անգլիացիների եւ այլ ազգերի գիտնականների կողմից: Գիտական փաստարկների ճնշման տակ զինաթափ եղած «հաւատաքննիչները» ստիպուած դիմում էին սպառնալիքների:

Ամէն մէկը հիանում էր իր գործակիցով, որ ներկայանում էր մի նոր ու անյայտ երեսով, աւելի պայծառ դէմքով: Իւրաքանչիւրը կարծում էր որ միայն ինքը ծանօթ է այդ «արգելուած գրականութեան», ու զարմանում էր թէ իր ընկերը ինչպէս եւ որտեղից է դրանք ձեռք բերել: «Հաւատաքննիչների» հետ հայ փրոֆեսուրայի ունեցած ճակատումից ժողովրդին հասած փշրանքներն անգամ բաւական էին նրան, յատկապէս ուսանողութեան, նոր յեղափոխական ոգով դաստիարակելու համար: Ցիշում եմ հանգուցեալ Անդրանիկ Ծառուկեանի խօսքերը այն մասին, որ հայաստանցուն կարելի է շատ բան ծախել, որովհետեւ դրանց պակասն ունի, իսկ նրան անհնարին է հայրենասիրութիւն վաճառել կամ սովորեցնել: Նա դրանով հարուստ է, շատ հարուստ:

«Հաւատաքննիչները» Հայաստան եկան իբրեւ հայագիտութեան անտեղեակ մարդիկ, ու մեկնեցին հայագիտական լուրջ մի դասընթացք աւարտած: Նրանք զարմացան հայ նոր «մարքսիստներ»ի կեցուածքով:

ԶՕՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՕԶԱՆԵԱՆ ԱԶԱՏԱՏԵՆՉ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՀԵՐՈՍ ԵՒ ՈՉ ՁԱՐԴԱՐԱՐ

«Հաւատաքննիչները» կանչեցին նաեւ ինձ: Նրանք արդէն ծանօթ էին իմ կենսագրութեանը: Ես նրանց մասնաւորապէս հետաքրքրում էի նաեւ այն պատճառով որ համալսարանում «հայրենադարձ» փրոֆեսորների թիւը մեծ չէր, իսկ իմ ասպարէզում՝ ես միակն էի:

Աշխատեմ վերարտադրել իմ հետ ծաւալուած զրոյցի էական գծերը, փորձելով հարազատ մնալ նրա ոգուն, բովանդակութեան ու ներքին տրամաբանութեանը:

Հարց– Ինչպէս էք դուք արդարացնում հազարաւոր թուրք եւ ազերի անմեղ մարդկանց սպանուած մի զինուորականի հերոսացումը, նրան ժողովրդական հերոս անուանելու պահանջը: Չէ՞ք կարծում որ դա կը վատթարացնի հայերի յարաբերութիւնը իր դրացիների հետ:

Պատասխան– *Նախ նշեմ, որ Անդրանիկ Օզանեանի զօրավարական ուսադիրներ են տուել ռուսները: Երկրորդ. նրան ազգային հերոս է անուանել 1918–1919 թուականներին Պոլշեւիկեան Ռուսաստանի Կովկասի Արտակարգ Լիազօրը, Պաքուի Կոմունայի նախագահը՝ Վ.Ի. Լենինի հետ կապի մէջ մտնելուց յետոյ: Երրորդ. Զօրավար Օզանեանը ոչ միայն հայոց, այլեւ Պուլկար ժողովուրդի ազգային հերոսն է: Չորրորդ. մի մոռացէք, որ թուրք ժողովուրդի որոշ ներկայացուցիչներ երգեր են հեղինակել, որտեղ նրանք գովում են նրա քաջութիւնն ու ազնուութիւնը: Նոյնը կատարել են նաեւ շատ քիւրտ ժողովրդական աշուղներ: Հինգերորդ. վերջերս Խորհրդային Միութեան բոլոր քաղաքներում մեծ աղմուկով ցուցադրեցին ծովակալ Նախիմովին նուիրուած մի խորհրդային շարժանկար: Այնտեղ հռչակաւոր ռուս ծովակալին հարցնում են. ի՞նչ էք դուք ցանկանում: Նա պատասխանում է. «Սպաննել թուրքին, սպաննել թուրքին եւ սպաննել թուրքին»: Խնդրում եմ ինձ ասէք, թէ ինչո՞ւ եւ ի՞նչպէս ռուսները պահանջում են որ բոլոր խորհրդային քաղաքացիները, աւելի քան 150 ազգերի ներկայացուցիչներ նրան ընդունեն իբրեւ ազգային հերոսի: Նշենք նաեւ, որ Խորհրդային Միութիւնում գործում է Նախիմովի անուան միջնակարգ ռազմածովային փակ ուսումնարան, եւ 1944 թ. ԽՍՀՄի Գերագոյն Խորհուրդը սահմանել է Նախիմովի անուան առաջին եւ երկրորդ կարգի շքանշաններ ու մետալ, որոնք զարդարում են հարիւր հազարաւոր խորհրդային զինուորականների կուրծքերը: Վեցերորդ. երբ Իվան Գ., Իվան Դ. եւ Պետրոս Մեծն ու նրանց յաջորդները պայքարում էին թաթարների, թուրքերի եւ ընդհանրապէս թուրանական ցեղերի դէմ, ռուսները ոչ միայն ընդունում, այլեւ խրախուսում էին հայերի հակաթուրքական միտումները: Հայերը մեծապէս նպաստել են ռուսներին իրենց այդ պայքարում:*

Վերջում ցանկանում եմ մի հարց տալ: Խնդրում եմ ինձ ասէք, թէ Խորհրդային Միութեան ժողովրդական հերոս Զապաեւը ի՞նչքան ռուս, ուքրանացի, թաթար, կոզակ եւ այլ ազգի զաւակներ է սպաննել: Կարծում եմ այդ թիւը անցնում է միլիոնը:

Հաւատաքննիչ– Զապաեւը սպաննել է դասակարգային թշնամուն, խորհրդային կարգերի թշնամիներին, Լենինի հակառակորդներին, անարխիստներին:

Հարցապնդուող– *Իսկ դուք ուսումնասիրել ու պարզե՞լ էք, թէ Անդրանիկը ինչո՞ւ է սպաննել թուրքերին եւ ազերիներին:*

Հաւատաքննիչները մի պահ իրենց կորցնում են: Պատասխան չկայ:

Հարցապնդուող– *Ձեր գիտելիքները, ինչպէս երեւում է, առաւելաբար հիմնուած են հակահայ աղբիւրների ու ամբաստանագրերի վրայ: Ասեմ որ Զօրավար Անդրանիկ Օզանեանը ոչ մէկին չի սպաննել իր ազգային պատկանելութեան համար: Հազարաւոր փաստեր կան, որոնք ապացուցում են որ հայազգի հերոսը խնամել ու օգնել է թուրք*

եւ ազերի կանանց, երեխաների ու ծերերի: Նա պայքարել է այն մարդկանց դէմ, որոնք ջարդել են մարդկանց, քանի որ նրանք ազերի, թուրք կամ իսլամ չեն, այն մարդկանց, որոնք Կովկասը ցանկացել են անջատել Ռուսաստանից ու մտցնել թուրանական կայսրութեան մէջ: Աւելորդ չեմ նկատում նշել, որ քիւրտ ժողովուրդը տասը երգ է ստեղծել Անդրանիկին գովերգող ու փառաբանող: Նրանք այդ երգերը մինչեւ օրս երգում են ամէն տեղ:

Հաւատաքննիչ– Դուք հարցերին մօտենում էք հայու եւ ոչ ազրպէյճանցու դիրքերից:

Հարցապնդուող– *Դուք ուսումնասիրէք փաստերը եւ ունեցէք ձեր անկողմնակալ կարծիքը՝ առանց կրկնելու թուրքերի եւ ազերիների տեսակէտը: Աւելացնեմ, որ Անդրանիկը ակտիւ կերպով մասնակցել է ռուսական հովանաւորութեան տակ իրականացած Պուլկար-Թուրք պատերազմին, որի առաջադիմական մեծ դերի ու պատմական նշանակութեան մասին այսօր հատորներ են գրում ռուս եւ պուլկար պատմաբանները:*

ՀԱՅ ԴԱՏԸ ՔՐԵՄԼԻՆԻ ԱՉՔԵՐՈՎ

Ցանձնախումբի անդամները անցան իրենց հետաքրքրող յաջորդ հարցին:

Հարց– Ի՞նչ էք կարծում, այսօր Հայաստանում ծաւալուող հակաթուրք ալիքը չի՞ վնասի արդեօք հայերին: Այդ շարժման վերջնական նպատակը, ձեր կարծիքով, Թուրքիայից հողեր պահանջե՞լն է: Չէ՞ք կարծում որ այդպիսի պահանջքը կարող է առաջնորդել դէպի համաշխարհային պատերազմ:

Պատասխան– *Հայկական Հարցը միջազգային դիւանագիտութեան խնդիր դարձնողներից մէկը Ռուսաստանն էր: Ռուսական կառավարութիւնը գտնում էր որ այժմ Թուրքական Հանրապետութեան սահմաններում գտնուող վեց վիլայէթները հայկական են, եւ անհրաժեշտ է այնտեղ անցկացնել հայերի ինքնավարութիւնը ապահովող բարեկարգումներ: 24 Մայիսի, 1915 թ. Ռուսական Կառավարութեան առաջարկով, դաշնակիցները (Ռուսաստան, Անգլիա, Ֆրանսա) հրապարակեցին մի յայտարարութիւն, որով դատապարտում էին թուրքերի նախաձեռնած Հայերի բռնագաղթն ու Ցեղասպանութիւնը, եւ այն բնութագրում որպէս ողջ մարդկային քաղաքակրթութեան դէմ ուղղուած բարբարոսութիւն: 1917 թ. Դեկտեմբերին, Լենինը ստորագրեց պոլշեւիկեան Ռուսաստանի կառավարական որոշումը «Թուրքահայաստանի Մասին»: Այնտեղ նոր Ռուսաստանը ընդունում է հայերի իրաւունքը տիրանալու հայկական այն տարածքներին, որտեղից հայերը բռնագաղթուել էին թուրքերի կողմից: Երկրորդ Աշխարհամարտից յետոյ Խորհրդային ղեկավարութիւնը դաշնակիցների վեհաժողովի քննարկմանը ներկայացրեց հայկական հողերի հարցը: Ողջ աշխարհը համոզուած էր որ այս անգամ Հայկական Հարցը պէտք է լուծուի ի նպաստ հայերի: 1945-1946 թուականներին խորհրդային կեդրոնական մամուլը տպագրեց յօդուածներ, որտեղ զարգացնում էր այն տեսակէտը, որ Արեւմտահայաստանը, որն այժմ գրաւուած է թուրքերի կողմից, պատկանում է արեւմտահայերին, եւ քանի որ արտաշխարհի արեւմտահայերը զանգուածօրէն վերադառնում են Հայաստան, ապա այդ հողերը՝ Արեւմտահայաստանը, պէտք է միացուեն Խորհրդային Հայաստանին:*

Հաւատաքննիչ– Ժամանակները փոխուել են: Այժմ սառը պատերազմի ժամանակաշրջանն է: Այսօր Թուրքիան, Ատլանտեան Ուխտի անդամ է: Նրանից հող պահանջել, կը նշանակի հակադրուիլ Ատլանտեան Ուխտի կորիզին՝ ԱՄՆ-ին, Անգլիային, Գերմանիային ու Ֆրանսային:

Հարցապնդուող– *Այդ դէպքում հաստատէք, որ Հայ Դատն ու պահանջատիրութիւնը արդարացի են ու հիմնաւոր, սակայն անհրաժեշտ է սպասել աւելի նպաստաւոր պայմանների, որպէսզի դրանք ստանան իրենց դրական լուծումը: Թոյլ տուէք Հայաստանի ղեկավարութեանը, որպէսզի այդ ոգով էլ գլխաւորի Եղեռնի տարելիցները յիշատակելու գործը:*

Հաւատաքննիչ– Դուք հարցերին նայում էք զուտ հայկական տեսանկիւնից, եւ հաշուի չէք առնում ողջ Խորհրդային Միութեան շահերը: Դա վնասակար ազգային էկոիզմ է:

Հարցապնդուող– *Ես ուրախ եմ արձանագրելու, որ դուք գտնում էք, որ պատմութեան ընթացքում յաճախ «հայկական էկոիզմը» համընկել է Ռուսական Կայսրութեան, Լենինի եւ Սթալինի Խորհրդային Միութեան, եւ նրանց եւրոպական ու ամերիկեան դաշնակիցների շահերին: Դրանով իսկ ապացուցում է որ հայերի դիրքորոշումը նեղ ազգային էկոիզմ չէ, այլ համամարդկային արդարութեան հետ աղերս ունեցող մօտեցում:*

Ցանկանում եմ յիշեցնել մի քանի պատմական դէպքեր:

1. *Երկար ժամանակ Խորհրդային Միութիւնը յայտարարում էր որ Լեհաստանի Հանրապետութեան մասը Ուքրանական հող է, եւ ինքը ցանկանում է նրան կցումը ԽՍՀՄ-ին: Դա արւում էր մի այնպիսի ժամանակ, երբ Եւրոպայի վրայ պատերազմի վտանգը կախուած էր դեմոկլեան սրի նման: Մոլեգնում էր ֆաշիզմը: Յիշենք, որ Երկրորդ Աշխարհամարտը սկսեց, երբ ֆաշական Գերմանիան յարձակուեց Լեհաստանի վրայ:*

2. Խորհրդային Միությունը յաճախ կրկնել է որ ինքը վիրաւորանքով է յիշում այն օրերը, երբ Ռուսաստանը պարտուեց Ռուս-Ճաբոնական պատերազմում, եւ Ճաբոնիան իրեն կցեց Սախալինը: Սախալինի վերամիաւորումը Ռուսաստանին՝ Խորհրդային Կառավարությունը համարեց արժանապատուության վերականգնման ու երջանկության օր:

Ինչո՞ւ նոյն տրամաբանությամբ չի կարելի գնահատել բռնագրաւուած հայկական տարածքների վերադարձը:

ՔՐԵՄԼԻՆԸ ՄՏԱՀՈԳՈՒԱԾ ՀԱՅԵՐԻ ԹՐՔԱՄԷՏՈՒՄԻՑ

Անցան տարիներ: Այդ ընթացքում խորհրդային իշխանությունը «չէզոքացրեց» Հայաստանում ստեղծուած գաղտնի կազմակերպությունների հիմնական մասը, Երեւանում կանգնեց Եղեռնի յուշարձանը, Եղեռնի մասին գրուեցին պատմագիտական ու իրաւագիտական հատորներ, արտաշխարհում հայ գաղտնի կազմակերպություններ ծաւալեցին իրենց գործունէությունը: Վերջիններս զուտ հայկական չէին: Նրանք իրենց շարքերում ընդգրկում էին քիւրտեր, յոյներ, արաբներ, պուլկարներ, կիպրացիներ եւ այլ հակաթուրք տրամադրություն ունեցող ժողովուրդների ներկայացուցիչներ: Խորհրդային Միության հաճելի էր նրանց հակագաղութատիրական դիրքորոշումը: Թուրքիան ստեղծեց Հայկական Հարցով զբաղուող մասնագիտական խմբեր: Նրանք ամէն ինչ արեցին որպէսզի չէզոքացնեն հայերի բարոյաքաղաքական, գաղափարական, իրաւական ու «ահաբեկչական» այն գործունէությունը, որի նպատակն էր վերականգնել Հայ Դատի իրաւական դրությունը եւ հիմնաւորել հայոց պահանջատիրությունը: Իր նպատակին հասնելու համար Թուրքիան Հայաստանի սահմանների մօտ կանգնեցրեց հեռուստասփռման աշտարակ: Թուրքական հեռուստատեսիլը փորձեց մշակել մի այնպիսի ծրագիր, որ հրապուրի սահմանամերձ հանրապետությունների, յատկապէս Հայաստանի բնակչության: Նա յաճախակի սփռեց միջազգային ֆութպոլի խաղեր, մի բան, որից զուրկ էին ԽՍՀՄ-ի բնակիչները՝ հակառակ իրենց ունեցած մեծ սիրոյ: Հեռատեսիլի ծրագրում զգալի տեղ տրուեց ամերիկեան ֆիլմերին, որոնք ԽՍՀՄ-ում մեծ պահանջարկ էին վայելում: Այդ ծրագրում Հայաստանի բնակիչը կարող էր տեսնել Պատմական Հայաստանի բնությունն ու յուշարձանները: Թուրքական հեռուստատեսիլը աւելի արագ ու լայն էր մեկնաբանում միջազգային կեանքը: Այսպիսով, Հայաստանի բնակչության 75-80% դարձաւ թուրքական հեռուստատեսիլի մշտական դիտող: Այս երեւոյթի դէմ, բնականաբար, պայքար ծաւալեց հայ հայրենասիրական դիրքորոշում ընդունած բնակչությունը:

Մի առաւօտ, ինձ շտապ կանչեցին կուսակցական շրջկոմ: Այնտեղ ինձ էր սպասում մոսկովեան մի լուրջ յանձնաժողով: Կարճ ծանօթացումից յետոյ, պարզուեց որ այդ յանձնախումբը Երեւան է ժամանել պարզելու դէպի Թրքական հեռուստատեսիլը հայերի ցուցաբերած հետաքրքրության աճի պատճառները: Իմանալով նրանց առաքելության մասին, ես անմիջապէս հարցրի.

Հարց– Սրանից շուրջ մէկ տասնեակ տարի առաջ Հայաստան էր ժամանել մոսկովեան մի պատուիրակություն, որի նպատակն էր պարզել հայերի հակաթուրք միտումների ուժեղացման պատճառները: Այսօր դուք եկել էք պարզելու, թէ հայերի փրոթուրք միտումները ինչով կարող են սպառնալ ԽՍՀՄ-ի հարաւային սահմանների ապահովությանը: Դուք ձեզ հարց տուի՞ք, թէ ինչու տեղի ունեցաւ սոյն տեղաշարժը, ո՞րն է այս հարցում կեդրոնական իշխանության մեղքը:

Ոչ մէկ պատասխան:

Ես շարունակեցի: Ինչո՞ւ ձեզ մտահոգեց հայերի հակաթուրք կեցուածքը սրանից մօտ տասը տարի առաջ: Ի՞նչն է ձեզ մտահոգում այժմ, երբ հայերի մօտ դուք նկատում էք այդ կեցուածքի թուլացում: Ի՞նչ էք դուք հայերից պահանջում. ուզում էք որ նրանք հակաթո՞ւրք մնան, թէ՝ դառնան փրոթուրք: Յանձնաժողովի անդամներն ինձ հասկացրին, որ հարց տուողները իրենք են եւ ոչ թէ ես: Այդ ժամանակ ես շարունակեցի:

Վերջերս ես մասնակցեցի մոսկովեան մի խորհրդակցության: Զեկուցեց մի զօրավար: Նա այն կարծիքը յայտնեց որ Խորհրդային Միության հարաւային սահմանների վրայ ամենէն ապահով վայրը Հայաստանն է: Իր թեզը ապացուցելու համար նա մի քանի անգամ կրկնեց. «Հայերը ռուսասէր են եւ թուրքերը միշտ ջարդել են հայերին: Թուրքը ձգտում է հային ոչնչացնել: Վերջիններս իրենց փրկության միակ յոյսը տեսնում են Ռուսաստանի մէջ՝ անկախ նրա քաղաքական կառոյցից»: Եթէ այս զօրավարը ճիշդ է, ապա դուք պէտք չէ վախենաք դէպի Թրքերը հայերի ունեցած բացասական կեցուածքից:

Մի այլ խորհրդակցության ժամանակ, խորհրդային մի դիւանագէտ զարգացրեց այն միտքը, թէ՝ հայերի պահանջատիրությունը եւ Խորհրդային-Թրքական արդի սահմանները վերանայելու նրանց միտումները ոչ միայն կարող են վատթարացնել ԽՍՀՄ-ի յարաբերությունները իր դրացի Թուրքիայի հետ, այլեւ Ատլանտեան Ուխտի երկրների հետ: Այդ միայն կարող է նպաստել պատերազմի հրահրիչներին եւ ոչ թէ խաղաղության պաշտպանության դիրքերում կանգնած ուժերին: Եթէ, եզրակացրի ես, ճիշդ է տուեալ դիւանագէտը, ապա դուք պէտք չէ մտահոգուէք, երբ հայերի շրջանում սկսում են ուժեղանալ փրոթուրքական միտումները:

Սոյն բանավէճը ամփոփելով մոսկովեան պատուիրակության ղեկավարն ասեց, որ իր կարծիքով հայերը պէտք է այնքան հակաթուրք

լինեն, որպէսզի նպաստեն երկրի հարաւային սահմանների ապահովութեանը: Նրանք այնքան փրոթուրք պէտք է լինեն, որպէսզի չվտանգեն ԽՍՀՄ-Թուրքիա եւ Վարշաւեան Ուխտ-Ատլանտեան Ուխտ բնականոն յարաբերութիւնները: Այս հողի վրայ հայերին թոյլատրելի էր գրել հայկական ջարդերի, Արեւմտահայաստանի եւ թուրքերի հակահայ քաղաքականութեան մասին: Նրանք այդ հարցերը պէտք է շօշափէին արդի քաղաքական յարաբերութիւններից դուրս:

Պատուիրակութեան անդամներից մէկը գտաւ որ կարելի է շօշափել նաեւ արդի քաղաքական հարցեր եւ հայերի հակաթուրքական տրամադրութիւնը շեղել դէպի հակաամերիկեանի: Նա բերեց հետեւեալ փաստարկները.

1. *ԱՄՆ-ի կառավարութիւնն էր, որ 1945-1946 թուականներին չթողեց, որ հայկական հողերը վերադարձուեն:*
2. *Այսօր ԱՄՆ-ը Թուրքիայի Հանրապետութեան տնտեսական, քաղաքական եւ ռազմական հիմնական յենարանն է:*
3. *Թուրքիայի տարածքի վրայ տեղակայուած ամերիկեան հրթիռների մեծ մասը ուղղուած են Հայաստանի վրայ:*
4. *Թուրքիայի սահմաններում գտնուող հայկական հողերը Հայաստանին միացնելու համար անհրաժեշտ է այդ տարածքներից հեռացնել ամերիկեան կայաններն ու հրթիռները:*

Այսպիսով պահանջւում էր հայոց պահանջատիրութիւնը վերածել հակաամերիկեան քաղաքական արեւելումի:

Մեր զրոյցին ներկայ էր Երեւանի Միասնիկեանի կուսակցական շրջկոմի քարտուղար Սլավիկ Սաֆարեանը:

ԳԼՈՒԽ Ժ.

ՍՈՒՄԿԱՅԻԹԵԱՆ ԿՈՏՈՐԱԾԸ

Սումկայիթը նոր արդիւնաբերական մի քաղաք էր Պաքուից մի տասնեակ մղոն հեռու: Այն երկրի քիմիական արդիւնաբերութեան մեծագոյն կեդրոններից մէկն էր, եւ ունէր բազմազգ բնակչութիւն, որի առողջական վիճակը մխիթարական չէր: Հայերը փոքրաթիւ, սակայն ազդու գաղութ էին կազմել: Ազրպէյճանի ազգայնամոլ ղեկավարութիւնը նպատակայարմար գտաւ այնտեղ վախեցնել հայերին, որոնք ցանկանում էին սահմանադրական եղանակով լուծել Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի հարցը:

Լեռնային Ղարաբաղի պատկանելիութեան շուրջ արդի վէճերն սկսում են, երբ կովկասեան թաթարների տարածքը սկսում է անուանուել Ազրպէյճան, այնտեղի բնակչութիւնը ազրպէյճանցի, երբ արհեստականօրէն ստեղծուեցին Ազրպէյճան երկիրն ու ազրպէյճանցի ժողովուրդը, որ մինչեւ այդ գոյութիւն չունէին: Այն սկսուեց այն ժամանակ, երբ տապալուեցին Ռուսական եւ Օսմանեան կայսրութիւնները եւ Արեւմուտքը սկսեց մշակել իր կովկասեան նոր քաղաքականութիւնը, եւ սկսուեց ծնունդ առնել Աթաթուրքի Թուրքիան: Այդ շրջադարձային ու անորոշութիւններով լեցուն ժամանակահատուածում ընդունուած որոշումների մեծամասնութիւնը, թէեւ ապագայում բացայայտեցին իրենց սխալ ու նոյնիսկ կործանարար խորքը, բայց պատմական իներցիայով այսօր էլ շարունակւում են գոյատեւել ու գործել: Այդպիսիներից է Լեռնային Ղարաբաղի Հարցի անարդարացի լուծումը 1920-1923 թթ., եւ այդ սխալի գոյատեւումը մինչեւ 1991 թ.: Սխալ լուծումն ու պարտադրուած լուծման գոյատեւումը առաջացրեց երկարատեւ (1920-1991 թթ.) պայթունակ վիճակ Հայաստանում ու Ազրպէյճանում: Դրա վերջին փուլի առաջին ալիքները դրսեւորուեցին Սումկայիթում, սումկայիթեան կոտորածներում (28-29 Փետրուարի, 1988 թ.): Այդ իր դերն ունեցաւ նաեւ մահամերձ Խորհրդային Միութեան կործանման գործում:

28-29 Փետրուարի, 1988 թ. Սումկայիթի քարբարոսութիւնները

ազրպէյճանցիների հակազդեցութիւնն էր 20 Փետրուարի, 1988 թ. Լեռնային Ղարաբաղի մարզային իշխանութիւնների այն որոշումին, որմով ԼՂ-ի պետական ու կուսակցական մարմինները խնդրում էին Խորհրդային Միութեան ու Ազրպէյճանական Հանրապետութեան իշխանութիւններից մարզը դուրս բերել ԱՀ կազմից ու այն միացնել Հայաստանի Հանրապետութեան: Այս առթիւ աշխարհի ողջ հայերը, ըստ որում ԼՂԻՄ-ի, Հայաստանի ու ողջ աշխարհատարած Սփիւռքի հայութիւնը ու նրանց միլիոնաւոր բարեկամները տարբեր ձեւերով իրենց համերաշխութիւնն էին յայտնել: Այս պատճառով, անհնարին է հարցի խորքը հասկանալ առանց Ղարաբաղի համար տարուող ազատագրական պայքարի համառօտակի վերլուծութեան: Փաստօրէն իրաւական ու պետական հարցերը ազրպէյճանցիք ոչ միայն տեղափոխեցին փողոց, այլ նաեւ դրանց լուծումը յանձնեցին օրինազանցների, մարդասպանների, փողոցային խուլիկանների եւ ֆաշացած խուժանին: Նրանք ցանկացան օրէնքը փոխարինել բռնի ուժով: Նրանք փորձեցին կրկնել իրենց հոգեւոր հայրերի՝ Երիտթուրքերի ծրագիրն ու գործելակերպը, հարցերը լուծել տուեալ ազգը ոչնչացնելու եւ նրան բռնութեան ենթարկելու միջոցով: Գործելակերպի խորքը նոյնն էր: Երկու դէպքում էլ համընկնում է ցեղասպանութեան իրաւական այն բնութագրման, որ ընդունուած է բոլոր միջազգային իրաւական մարմինների կողմից: Սումկայիթում մարդկանց տները թալանուում եւ հրկիզուում էին, որովհետեւ նրանց տէրերը հայեր էին: Մարդիկ հալածուում, ծեծի ենթարկուում, տանջամահ արուում, բռնաբարուում, սպաննուում ու հրկիզուում էին, քանի որ հայեր էին: Տասնեակ ազերիներ հայ կանանց կրծքերը կտրում ու նրանց ստիպում մերկ պարել, քանի որ նրանք հայեր էին: Նոյնը կատարուում էր մանուկներին, քանի որ նրանք հայեր էին: Ականաւոր հոգեբուժներ Ալան Շտէյնպերկի, Լին Ֆէրպանքի, Ռոպերթ Փինուսի, Արմէն Կէօնճեանի, Լուիզ Նաճարեանի եւ Աւլին Թաշճեանի ուսումնասիրութիւնները անվիճելիօրէն ապացուցում են որ Սումկայիթի ցեղասպանութիւնից մազապուրծ ազատուածների յետ-թրոմաթիկ վիճակը, դրա բացասական ներգործութիւնը, դրա տեւողութիւնը եւ անհատականութեան վրայ դրա ունեցած բացասական ազդեցութիւնը նուազ չէ, երբեմն էլ աւելի է, քան՝ սարսափելի երկրաշարժի դաժան փորձառութիւնը ապրած մարդկանց հոգեկան վիճակից[1]:

Սումկայիթեան ողբերգութեան ծալքերը հասկանալու համար նախ անհրաժեշտ է պարզել թէ ինչու եւ ինչպէս Լեռնային Ղարաբաղը

1. Տես՝ Armen K. Goenjian, Alan M. Steinberg, Louis Najarian, Lynn A. Fairbanks, Madeline Tashjian, Robert S. Pynos, *Prospective Study of Post-traumatic Stress, Anxiety and Depressive Reactions After Earthquake and Political Violence*, American Journal of Psychiatry 157:911-895, June 2000.

առեւանգուեց:

Ռուսաստանում 1917 թ. ընկերվարական յեղափոխութեան ամրապնդումից յետոյ հիմնովին փոխուեց Ռուսաստանի եւ Արեւմուտքի քաղաքականութիւնը Կովկասում: Առաջին Աշխարհամարտի նախօրէին եւ սկզբնական շրջանում Դաշնակիցները մտադրել էին յաղթանակից յետոյ պարտուած Օսմանեան Կայսրութիւնը անդամահատել ու դրա փոխարէն թողնել մի փոքր Թրքական պետութիւն Սեւ Ծովի հարաւային ափին: Օսմանեան Կայսրութեան մաս կազմող արաբական երկիրները պիտի դրուէին Անգլիայի ու Ֆրանսայի տրամադրութեան տակ: Յոյներն ու իտալացիները ստանալու էին որոշ տարածքներ: Կայսրութեան արեւելեան շրջանները բաժին էր ընկնելու Ռուսաստանին ու հայերին: Կիլիկիան դառնալու էր հայկական՝ ֆրանսական տնօրինութեան տակ: Ռուսական ընկերվարական յեղափոխութիւնից յետոյ, ինչպէս Արեւմուտքը, այնպէս էլ նոր Ռուսաստանը, որոշեցին սիրաշահել Աթաթիւրքի Թուրքիան: Կարմիր Ռուսաստանը ծրագրում էր «Յեղափոխական Թուրքիան» դարձնել արեւելեան երկրներում, մանաւանդ Միջին ու Մերձաւոր Արեւելքի իսլամական աշխարհում հակագաղութատիրական ու ընկերվարական շարժում ծաւալելու յեռարան: Արեւմուտքը ծրագրում էր նոր Թուրքիան դարձնել «ռազմավարական զինակից», նրան վերածելով պատուար պոլշեւիզմի տարածման դէմ: Իւրաքանչիւր կողմ ձգտում էր Թուրքիային իրեն «կապել» ու չթողնել որ այն մերձենայ միւս կողմի հետ: Այդ մրցակցութիւնում շահեց Թուրքիան, որ վերջնականապէս որոշեց դառնալ Արեւմուտքի զինեալ պահակը Խորհրդային սահմանների գօտում: Այս իրադրութեան մէջ Արեւմուտքը համաձայնուեց որ նոր Ռուսաստանը տիրանայ Ազրպէյճանին (որին ձգտում էր տիրանալ Անգլիան), իսկ Թուրքիան՝ Պատմական Հայաստանին: Արեւմուտքը կատարեց նաեւ պարտուած Թուրքիայի մի այլ պահանջ՝ Ազրպէյճանին «նուիրաբերել» հայկական Ղարաբաղն ու Նախիջեւանը: Զանգեզուրն էլ նոյն բախտի կ'արժանանար, եթէ չլինէր Նժդեհի ազատագրական պայքարը: Սոյն գործարքները իրականացնելու ընթացքում ոտնահարուեցին պայմանագրերը ու սրբացուած սկզբունքներն ու քաղաքական նորմերը՝ տեղ տալով անարդարութեան, օրինազանցութեան, բռնութիւնների ու ցեղասպանութեան: Միայն այսպիսի մօտեցումով հնարաւոր էր հասկանալ դարաբաղեան վէրքը, որ ամօթանք է, մի քաղցկեղ է մարդկային քաղաքակրթութեան վրայ:

Այդ տեղաշարժերի ընթացքում աստիճանաբար զօրացաւ մրցակցութիւնը «արդարութեան քաղաքականութեան» եւ «ուժի քաղաքականութեան» միջեւ: Առաջինը ելնում էր այն նախադրեալից որ աշխարհի աշխարհագրութեան, ժողովուրդների տարածքների ճշգրտման հարցերում յաճախ վճռական դեր են խաղացել բռնութիւնը, քաղաքա-

կան ու տնտեսական ճնշումը, գաղութատիրությունը եւ անտեսուել են տուեալ ժողովուրդների ազգային արդարացի պահանջները: Տուեալ դրոյթի կողմնակիցները հիմնականում դառնում են ազգերի ազատ կողմնորոշման իրաւունքի պաշտպան, այդ սկզբունքով աշխարհի քարտէսը շտկելու կողմնակից: Նրանք գտնում էին որ այդ մօտեցման գործադրման ճանապարհով հնարաւոր է ստեղծել արդար ու երկարատեւ խաղաղութիւն: Երկրորդ քաղաքականութեան կողմնակիցները գտնում են որ անհնարին է ուղղել թոյլ տրուած բոլոր տարածքային սխալ լուծումները: Անհրաժեշտ է իրապաշտ լինել եւ առաւելաբար ղեկավարուել «եղած վիճակը պահպանելու» սկզբունքով, որ յենւում էր «տարածքային ամբողջականութիւնը պահպանելու» իրաւական դրոյթի վրայ: Հնարաւորին չափ անտեսւում էր այն՝ թէ ինչպէս, ինչպիսի անօրինութիւններով է ստեղծուել այդ «տարածքային ամբողջութիւնը»: Վերջին ութսուն տարում, դժբախտաբար, աստիճանաբար աւելի պաշտօնական տիրապետող սկզբունք դարձաւ երկրորդ մօտեցումը:

Վերոյիշեալ տեղաշարժերը եւ ոչ թէ ճշմարտութեան ու արդարութեան հաստատման անհրաժեշտութեան գիտակցութիւնը վճռական դեր են խաղացել Լեռնային Ղարաբաղի Հարցի լուծման հարցում:

1917 թ. Ռուսական Փետրուարեան Յեղափոխութիւնը Ղարաբաղում ընդունուեց մեծ խանդավառութեամբ: Երկրամասը Օսմանեան Թուրքիայի զաւթողական քաղաքականութիւնից, տեղական անիշխանական տարրերից ու ընդհանրապէս քաոսից փրկելու համար տեղի բնակչութիւնը 16 Դեկտեմբերի, 1917 թ., Շուշիում կազմեց հայերից եւ թաթարներից բաղկացած խառը բիւրո, որ նշանակեց իր գործադիր մարմինը, որի պարտականութեան մէջ մտնում էր Ղարաբաղի եւ Զանգեզուրի կառավարումը: Հայերն ու թաթարները ապրում էին յարաբերաբար խաղաղ ու համերաշխ: Տարածքի հայաբնակ վայրերում կառավարում էին հայերը, իսկ իսլամականում՝ թաթարները:

Դեռ պարսկական արշաւանքներից, որին յաջորդեցին խալիֆաթականը, թրքականը (բոլորն էլ իսլամներ էին), զաւթիչները աստիճանաբար հաստատւում էին դաշտավայրերում՝ ընիկ հայերին մղելով դէպի երկրի լեռնային մասերը: Այդպէս եղաւ նաեւ Ղարաբաղում: Այս հիման վրայ Ղարաբաղի դաշտային բնակչութեան մեծամասնութիւնը դարձան թաթարները, թուրքերը (իսլամները), իսկ լեռնայինը՝ հայերը: Դեմոկրաֆական (էթնիկական-ազգային) առումով, Ղարաբաղը բաժանուեց երկուսի՝ դաշտայինի եւ լեռնայինի:

Երբ 1918 թ. Մայիսին լուծարուեց Անդրկովկասեան ՍԷՅՄ-ը եւ ստեղծուեցին ազգային հանրապետութիւններ, թուրքերը ներխուժեցին Կովկաս: Նրանց հրահրումով ազգամիջեան յարաբերութիւնները Ղարաբաղում սկսեցին սրուել: Նուրի Փաշան սկսեց Գանձակում (դաշտային Ղարաբաղում) թուրք-թաթարական իսլամական բանակի կազմաւորումը:

Լեռնային Ղարաբաղի ղեկավարութիւնը չկամենալով ենթարկուել Գանձակի մուսաւաթական իշխանութիւններին, որոշեց կազմել իր անկախ տեղական իշխանութիւնը, որ նորից միացեալ էր: Սկզբում այն ըստացաւ Կոմիսարների Խորհուրդի վիճակ, իսկ մի ամիս անց այն փոխարինուեց Ազատ Ղարաբաղի Ժողովրդական Կառավարութեամբ (22 Յուլիսի, 1918 թ.), որի վարած արտաքին ու ներքին ինքնուրոյն քաղաքականութիւնը օրինականացուած ու վաւերագրուած է Ղարաբաղի ժողովրդական ներկայացուցիչների ինը համագումարների հռչակագիրներում, յայտարարութիւններում ու որոշումներում: Անդրանիկ համագումարի անդրանիկ նիստում Լեռնային Ղարաբաղի հայերի լիազօրուած ներկայացուցիչների օրինաւոր Ազգային Ժողովը իրեն յայտարարեց որպէս Արարատեան Հանրապետութեան՝ Հայաստանի Հանրապետութեան անբաժանելի մասը: Այսպիսով, Լեռնային Ղարաբաղը մաս չէր կազմում Ազրպէյճանական Դեմոկրատական Հանրապետութեան, երբ վերջինս Գանձակում կազմաւորուեց 1918 թ. Մայիսին: Փաստօրէն, Ղարաբաղի Ազգային Ժողովը, որպէս ինքնուրոյն քաղաքական, տնտեսական ու ինքնապաշտպանական միաւոր, ստեղծուեց Ազրպէյճանական Դեմոկրատական Հանրապետութեան հետ զուգահեռ: Լեռնային Ղարաբաղը չի մտնում նաեւ ազրպէյճանական նոր՝ 1991 թ. ստեղծուած հանրապետութեան մէջ, քանի որ վերջինս ոչ թէ շարունակութիւնն է կամ ժառանգորդն է Խորհրդային Ազրպէյճանի, այլ վերականգնումը 1918 թ. հանրապետութեան՝ ինչպէս իրենք պաշտօնապէս յայտարարեցին:

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԹԱԹԱՐՆԵՐԸ ԴԱՌՆՈՒՄ ԵՆ ԱԶՐՊԷՅՃԱՆՅԻ

ԱԴՀ-ն փաստօրէն առաջին թրքական պետական կառոյցն էր որ ստեղծուել էր Թուրքիայի կողմից Թուրքիայի սահմաններից դուրս՝ այլ ժողովրդի տարածքներ ներխուժելով եւ տեղական բնակչութիւնը ոչնչացնելով: Հիմքեր կան եզրակացնելու որ եթէ չլինէր թրքական բանակի ներխուժումը կովկասեան թաթարներով բնակեցուած տարածքները, չէր ստեղծուի ԱԴՀ-ը: Թուրքիայի պարտութիւնից յետոյ Ազրպէյճան ու Ղարաբաղ մտաւ անգլիական բանակը, որ նոյնպէս նպաստեց մեծ Ազրպէյճանի ստեղծմանը:

Անգլիան թաթարաբնակ այդ տարածքները դիտում էր որպէս Միջին ու Մերձաւոր Արեւելքին ու Միջին Ասիայի վրայ իշխելու ռազմավարական յենարան: Թուրքերը այդ դիտում էին որպէս որոշակի կամուրջ՝ իրենց թուրանական երազների իրականացման ուղղութեամբ: Պոլշեւիկների համար այն շուտով դարձաւ իսլամական աշխարհում «Յեղափոխական Թուրքիայի» առաքելութեան իրականացման յենա-

բան: Իսկ կովկասեան թաթարներով բնակեցուած տարածքին «Ազրպէյճան» անուանումը տրուեց Պարսկաստանի «Ատրպատական» «Ազրպէյճան» տարածքի հետեւութեամբ՝ այդ հողերը իրենց կցելու ախորժակով: Այդ օրուանից կովկասեան թաթարները սկսեցին կոչուել ազրպէյճանցիներ:

1925 թ. Պաքուի համալսարանում դասախօսելիս, ազերի ուսանողները ակադեմիկոս Վ.Վ. Պարթոլտին տուին հետեւեալ հետաքրքրաշարժ հարցը. «Ազրպէյճան անուան տակ գոյութիւն ունի պարսկական Ատրպէյճանը (Ատրպատականը) Թաւրիզ կեդրոնով: Այս տեսանկիւնից դիտած, արդեօք մենք իրաւունք ունե՞նք այս երկիրը անուանել Ազրպէյճան: Կարող է աւելի նպատակայարմար է այն անուանել Շիրվան»: Ակադեմիկոսը ազերի երիտասարդներին տուած պատասխանում ասաց. «Շիրվան անունը երբեք չի օգտագործուել արդի Ազրպէյճանի Հանրապետութեան տարածքը պարփակելու առումով: Շիրվանը ընդգրկում է աւելի փոքր տարածք, որի կեդրոնն է Շեմախա քաղաքը: Գյանգա (Գանձակ) եւ նման քաղաքներ երբեք մաս չեն կազմել Շիրվանին: Արրան (Առան, Արան) անունը ամենից համապատասխան եզրն է նշանակելու համար բոլոր շրջանները, որոնք միաւորուած են Ազրպէյճանի Հանրապետութեան մէջ: Ազրպէյճան անունը ընտրուած է, որովհետեւ նախատեսուել է որ պարսկական Ատրպէյճանն ու այս երկիրը պիտի միացուեն մի պետութեան մէջ, քանի որ նրանց բնակչութեան կերտուածքը գրեթէ նոյնն է»[1]: Ակադեմիկոսը փաստօրէն առաջարկում է Ազրպէյճանի Հանրապետութիւնը կոչել Ղարաբաղի տարածքների (գաւառների) անունով (Մեծարանք, Ուտիք: Որոշ հեղինակներ նոյնացնում են Աղուանաց Աշխարհի հետ): Այսպիսով, պետութիւն ձեւաւորուող կովկասեան թաթարները հենց սկզբից մի անգամից ձգտում էին տիրանալ ինչպէս պարսկական, այնպէս էլ հայկական տարածքներին: Պատահական չէ որ Ազգերի Լիկան Ազրպէյճանական Դեմոկրատական Հանրապետութեան անդամութեան դիմումը մերժելիս, շեշտում է նաեւ այն հանգամանքը որ նորաստեղծ եւ աշխարհի ոչ մի պետութեան կողմից ճանաչուած այդ երկիրը զաւթողական ու բռնատիրական քաղաքականութիւն է վարում իր հարեւանների նկատմամբ: Տեղին է յիշել 1991-1993 թթ. Ազրպէյճանի նախագահ Ապուլֆազ Էլչիպէյի 30-31 Յունուարի, 1998 թ. Ազրպէյճանի Ժողովրդական Ճակատ Կուսակցութեան 5-րդ համագումարում արտասանած ճառի բովանդակութիւնը, որտեղ ան ընդգրկում է որ Հիւսիսային Ազրպէյճանում եւ որոշ այլ ազերիական տարածքներում, 1918-1921 թթ. Ազրպէյճանի Դեմոկրատական Հանրապետութեան ստեղծումով եւ 1991 թ. նրա վերա-

1. Վ.Վ. Պարթոլտ, *Երկերի ժողովածու*, հատոր Բ., մաս 1, Մոսկուա, 1963, էջ 703 (ռուսերէն):

կանգնումով չի աւարտւում ազրպէյճանական ժողովրդի ազատագրական պայքարը: Ազրպէյճանի պատմութեան նոր փուլը պիտի աւարտուի միացեալ ազրպէյճանական պետութեան հաստատմամբ: Հայտար Ալիեւը առաջադրում է որդեգրել Սեւ Ծովից մինչեւ Կասպից Ծով տարածուող Մեծ Ազրպէյճան ստեղծելու գաղափարը: Այնտեղ միացուելու են Հիւսիսային եւ Հարաւային (իրանական) Ազրպէյճանները[1]: Ուշագրաւ է որ այդ տեսակէտը արտայայտուած է «Ազրպէյճանի Նախագահի Դեկրետը Հայերի կողմից Ազրպէյճանցիների Ցեղասպանութեան Մասին» խորագրով յօդուածում:

Խիստ անհրաժեշտ է նկատի ունենալ որ կովկասեան թաթարների միջավայրում վերոյիշեալ գաղափարները խմորուում էին դեռ 19-րդ դարի վերջերից, երբ Մ.Ա. Ռասուլզադէն եւ Միրզա Պալա Մամեդզատէն առաջ էին քաշում «Կովկասեան Ընդհանուր Տան» գաղափարը, որը վերաբերում էր թուրանական ցեղերի «ազատագրական պայքարին»: Սելիմ Բեհպուտ Պէյը, որ «Կովկասեան Կոմիտէ»ի անդամն էր, գաղտնի կապեր է հաստատում Պաքուի եւ Ղարաբաղի թաթար ազգայնական կազմակերպութիւնների հետ, նրանց գաղափարները այդ վայրերում արմատաւորելու նպատակով, այն օրերին, երբ թաթար կամաւորներ փախչում էին դէպի Օսմանեան Թուրքիա: Թուրք մարշալ Ֆուատ Փաշան, 1915 թ. հիմնում է մի կազմակերպութիւն, որի նպատակն էր աշխարհին ծանօթացնել կովկասեան ժողովուրդների, հիմնականում թուրքական-թուրանական ցեղերի «ազատագրական պայքարի խնդիրներին»: Այն իրողութիւնը, որ այդ կազմակերպութիւնը գլխաւորում էր թուրք մի փաշա, վկայում էր Թուրքիայի համար դրա ունեցած կարեւորութիւնը: Պատահական չէ որ «Կովկասեան Կոմիտէ»ի նախագահութեան անդամներից մէկը, 1915 թ. Դեկտեմբերին պաշտօնական առաքելութեամբ գործուղուեց Պերլին ու Վիեննա, այնտեղի կառավարութիւններին ծանօթացնելու համար «ազատ Կովկաս» ստեղծելու իրենց ծրագրերին: Կովկասի ինտեկրացման թաթարա-թուրքական գաղափարը արտացոլւում էր նաեւ մուսաւաթական կուսակցութեան ծրագրում: 1927 թ., Լեհաստանում ստեղծւում է Կովկասեան Ինքնուրոյնութեան Կոմիտէ, որին ազերիների կողմից մասնակցեցին Մ.Ա. Ռասուլզատէն, Մ.Ե. Մեհտիեւը եւ Վրաստանի կողմից՝ Ա. Ասանանին, Ս. Մդիվանին: Հայեր չկային: 1934 թ. ստեղծուեց Կովկասեան Կոնֆեդերացիայի Պակը, որ իր հայ մասնակիցը ունեցաւ 1940-ին, երբ պարզ դարձաւ դրա նկատմամբ Ֆաշական Գերմանիայի դրական կեցուածքը:

Երբ նախ Ղարաբաղը եւ ապա Արեւելեան Հայաստանը ներգրաւուեցին Ռուսական Կայսրութեան մէջ, ռուսները երկրի վարչական բա-

1. Տես՝ *Պաքինսքի Ռապոչի*, 26 Մարտի, 1988:

ժանումը սովորականի նման չկատարեցին ըստ ազգային-էթնիկ հիմքերի: Այդ պատճառով էլ, Ռուսաստանի վարչական քարտէսում կովկասեան թաթարների բնակեցրած տարածքը մտաւ Ելիզավետպոլի եւ Պաքուի գուբերնիայի մէջ: Նրա մէջ էր ընդգրկուած նաեւ պատմական Արցախն ու Ուտիքը (որոնք որոշ ձեւումներով ստացել էին Լեռնային Ղարաբաղ անունը, որի բնակչութեան 90%-ը հայեր էին): Երբ Անդրկովկասեան ՍԷՖՄ-ը լուծուեց եւ Գանձակում Մուսաւաթականները յայտարարեցին իրենց հանրապետութիւնը, նրանք պնդեցին որ թաթարական տարածքների հետ միասին ողջ Լեռնային Ղարաբաղն էլ պէտք է ներգրաւուի իրենց նորաթուխ հանրապետութեան մէջ: Նրանց այդ պնդումը զինուորական ուժով պաշտպանում էր Օսմանական Թուրքիան: Այսինքն՝ գործադրւում էր Կովկասեան Կոմիտէի նախատեսած ծրագիրը: Տեղին է յիշել այդ օրերին Թուրքիայի արեւմտեան ճակատի հրամանատար Քարապէքիրի արած արտայայտութիւնները, որ մենք գտնում ենք նրա «Մեր Անկախութեան Պատերազմը» գրքի երկրորդ հատորի 608, 631, 722 էջերում. «Զինուորները վճռական են Ղարաբաղի հայութեանը վերջ տալու: Ժողովուրդն ու զինուորներն այստեղ անհամբեր սպասում են օսմանեան բանակի կողմից սահմանն անցնելուն՝ այդ նպատակը կարճագոյն ժամանակահատուածում իրագործելու համար», «Բոլոր թուրանական ցեղերի նպատակն է միանալ թուրքական սահմաններին: Պատմութիւնն այսօր մեզ ընձեռում է վերջին հնարաւորութիւնը: Որպէսզի իսլամական աշխարհը չտրոհուի, անհրաժեշտ է հակաղարաբաղեան արշաւանքը չթուլացնել: Այն պէտք է հետապնդել աւելի խստութեամբ ու ահաբեկչական միջոցներով», «Հայաստանը յաւերժապէս ջնջել»: Իսկ Հալիլ Փաշան իր «Զվերջացող Պայքարը» գրքի 241-րդ էջում գրում է. «Ես փորձեցի հայ ազգը ոչնչացնել մինչեւ վերջին անհատը»:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՕՐԻՆԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՅՔԱՐԸ

Յաջորդ տարուան Փետրուարի 21-ին, Ղարաբաղի Ազգային Խորհուրդը ստացաւ Պաքուում հաստատուած անգլիական բանակի հրամանատարութիւնից մի հեռագիր, որով հրամայւում էր անմիջապէս ենթարկուել Ազրպէյճանի իշխանութիւններին ու մտնել Ազրպէյճանի կազմի մէջ: Ախ մերժեց այդ վերջնագիրը: Մի ամիս անց անգլիացի Գեներալ Շատելվորտը եկաւ անձամբ Ախ-ի հետ բանակցութիւններ վարելու: Նա յայտարարեց. «Որեւէ անզսպուածութիւն (ծայրայեղութիւն) Ազրպէյճանի նկատմամբ, նկատուելու է որպէս հակա-անգլիական քայլ: Մենք բաւարար ոյժ ունենք, որ ձեզ պարտադրենք մեզ ենթարկուել»[1]: Յետագայում

1. FO 371/4955, *Caucasian Documents and Maps*, 1802-1946, edited by Anita L.P.

սոյն փաստը ազրպէյճանցիները փորձեցին օգտագործել Ազգերի Լիկայում իրենց տեսակէտը պաշտպանելու համար: Ղարաբաղի Ախ-ի հինգերորդ նիստը մերժեց տուեալ վերջնագիրը: Անգլիական ճնշման տակ Ղարաբաղի Ախ-ի եօթներորդ նիստը հարկադրուած եղաւ Ազրպէյճանի հետ կնքել ժամանակաւոր համաձայնագիր: Վերջինիս համաձայն Լեռնային Ղարաբաղը ժամանակաւորապէս պիտի նկատուի որպէս Ազրպէյճանի մէջ գոյութիւն ունեցող ինքուրոյն քաղաքական միաւոր՝ մինչեւ Խաղաղութեան Համագումարը վերջնականապէս կը լուծի դրա կարգավիճակի հարցը: Մինչեւ այդ՝ Լեռնային Ղարաբաղը պահելու էր իր քաղաքական ինքնուրոյն գոյավիճակը: Սոյն պայմանագիրը դարձաւ այն հիմքերից մէկը, որով Ազգերի Լիկան Ղարաբաղի հարցը մտցրեց Բարիզի Խաղաղութեան Համագումարի օրակարգում[1]:

1920 թ. սկիզբներին Ազրպէյճանը մեծ զինուորական ուժեր կեդրոնացրեց Լեռնային Ղարաբաղի սահմանի վրայ: Փետրուարի 19-ին Ազրպէյճանի ներկայացուցիչը վերջնագիր ներկայացրեց Ախ-ին՝ պահանջելով անմիջապէս ներգրաւուել Ազրպէյճանի Դեմոկրատական Հանրապետութեան կազմի մէջ: 28 Փետրուար-4 Մարտի, 1920 թ. ընթացքում, Ախ քննարկեց սոյն վերջնագիրը ու վճռականապէս այն մերժեց: Դրանից յետոյ ազրպէյճանական բանակը սկսեց լայն չափի ռազմական գործողութիւններ Ղարաբաղի դէմ: Ախ-ն իր իններորդ նիստում, 23 Ապրիլի, 1920 թ., չեղեալ յայտարարեց 26 Օգոստոսի, 1919 թ. պայմանագիրը, քանի որ Ազրպէյճանը խախտել էր պայմանագրի տառը ու ոգին եւ կազմակերպուած զաւթողական պատերազմ ծաւալել խաղաղ բնակչութեան նկատմամբ ու կոտորել մարդկանց այն պարզ պատճառով, որ նրանք հայ են ու ցանկանում են ապրել ըստ ազգային ազատ ինքնորոշման իրաւունքի շնորհած պայմաններով: Ախ-ն նորից յայտարարեց երկրամասը որպէս Հայաստանի Հարապետութեան անբաժանելի մասը:

Սոյն յայտարարութիւնից մի շաբաթ անց, 28 Ապրիլի, 1920 թ., Ազրպէյճանում հաստատուեց խորհրդային իշխանութիւն: Կարմիր Բանակը եւ տարբեր անկանոն զինուած խումբեր արշաւեցին Ազրպէյճան ու այն գրաւեցին: Այդ ժամանակ Ախ-ի նախագահը հեռագիր ուղարկեց Խորհրդային Ռուսաստանի հետ բանակցող Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութեան նախագահին՝ խնդրելով որ Ախ-ի իններորդ նիստի որոշումը պաշտօնապէս տեղեկացուի Խորհրդային Կառավարութեան: Այսպիսով, Ազրպէյճանական Խորհրդային Հանրապետութեան հռչակման ժամանակ Լեռնային Ղարաբաղը նրա բաղկացուցիչ մասը չէր կազմում:

Burdett, Archives Editions, pp. 715-719.

1. League of Nations, Journal # 17 of the First Assembly, Geneva 1920, p. 139.

Ժամանակաշրջանում պոլշեւիկեան մտածողութիւնը արտայայտում է 10 Յուլիսի, 1920 թ. Ռուսական Կոմունիստական (Պոլշեւիկների) Կուսակցութեան Կեդրոնական Կոմիտէին հասցէագրուած նամակը, որի տակ ստորագրել էին Ազրպէյճանի Յեղկոմի նախագահ Նարիմանովը, Յեղկոմի անդամներ Ա. Միկոյեանը, Նենիշվիլին, Ռուսական Կոմկուսի Կովկասեան Բիւրոյի անդամ Մոիվանին եւ 11-րդ Կարմիր Բանակի Յեղափոխական Ռազմական Խորհրդի անդամներ Վեստնիքը, Լեւանտովսկին եւ Միխայլովը: Նրանք նպատակայարմար էին գտնում ազգային Ազրպէյճանական Հանրապետութիւն ստեղծելու փոխարէն կեանքի կոչել վերազգային մի կեդրոն, մի միաւոր, մի պետական կառոյց, որ աղբիւր էր հանդիսանալու Արեւելքում դասակարգային յեղափոխութեան համար: Սոյն գրութիւնը ոչ միայն արտացոլում է այդ օրերին պոլշեւիկների կովկասեան ու միջին արեւելեան քաղաքականութեան էութիւնը, այլ նաեւ ցոյց է տալիս Ազրպէյճանը միջազգային յեղափոխութեան կեդրոն դարձնելու քօղի տակ մեծ Ազրպէյճան ստեղծելու մտադրութեան խորքը: Բայց սոյն մօտեցումը ժամանակավրէպ դուրս եկաւ: Յիշենք որ արտասահման փախած կովկասեան պետական գործիչները, տարբեր դիրքերից ելնելով, պահանջում էին ստեղծել «ընդհանուր կովկասեան տուն»՝ թուրքական կամ ազերիական գլխաւորութեամբ:

10 Օգոստոսի, 1920 թ. Հայաստանի Հանրապետութեան եւ Խորհրդային Կառավարութեան միջեւ կնքուած պայմանագրի երրորդ յօդուածի համաձայն վիճարկուող տարածքներում, ներառեալ Լեռնային Ղարաբաղի տարածքը, Կարմիր Բանակի մուտքը չէր կանխորոշում Ազրպէյճանի ու Հայաստանի հանրապետութիւնների իրաւունքը այդ տարածքների նկատմամբ: Փաստօրէն Խորհրդային Ռուսաստանի կառավարութիւնը ընդունեց եւ հաստատեց Ազգերի Լիկայի այն որոշումը, որով մերժւում էր Լիկայի անդամ դառնալու Ազրպէյճանական Դեմոկրատական Հանրապետութեան պահանջը եւ ժխտում Լեռնային Ղարաբաղի եւ Նախիջեւանի նկատմամբ նրա ներկայացրած անօրինական պահանջը՝ տարածքների պատկանելիութիւնը համարելով վիճարկելի: Կարմիր Բանակի Ղարաբաղ մուտքի օրերին ՌԽՖՍՀ արտաքին գործոց նախարար Գ. Չիչերինը գտնում էր որ Հայկական Ղարաբաղ եւ Զանգեզուր մարզերը «ոչ մի դէպքում պէտք է միացնել Ազրպէյճանին: Նրանք պէտք է զբաղեցնեն ռուսական զօրամասերը, այլ ոչ թէ ազրպէյճանական: Նրանցում պէտք է ստեղծել ռուսական օկուպացիոն իշխանութիւններ, այլ ոչ թէ ազրպէյճանական»[1]: Այս մօտեցումը հասկանալի էր, քանի որ Հայաստանը այդ օրերին անկախ էր եւ խորհրդային իշխանութիւնները ծրագրում էին Հայաստանը խորհրդայնացնելու մասին: Բայց այդպիսի մօտեցումը թէեւ մերժեց Ազրպէյճանի պահանջը այդ տարածքներին տիրանալու վերաբերեալ, բայց սողանցք թողեց յետագայ սխալների ու թիւրիմացութիւնների համար:

1. Տես՝ Խորհրդային Միութեան Կոմկուսի Կենտկոմի կից Մարքսիզմ-Լենինիզմի Կեդրոնական Կուսակցական Դիւան, ֆոնտ 64, օպ 2, գործ 5, թերթ 18:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱԶՄՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՆԴՐԱՆԻԿ ՈՐՈՇՈՒՄ

29 Նոյեմբերի, 1920 թ., Հայաստանը յայտարարուեց Խորհրդային Հանրապետութիւն: Այդ սոցիալ-քաղաքական յեղափոխութիւնը իրականացաւ պետութեան փոխանցման եւ ոչ թէ տապալման միջոցով: Այդ ժամանակ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը յայտարարեց որ ինքը Հայաստանի անբաժանելի մասն է եւ մերժում է Ազրպէյճանի իրեն բռնի կերպով կցելու բոլոր ոտնձգութիւնները: Ազգերի ինքնորոշման իրաւունքով Լեռնային Ղարաբաղը Հայաստանի անբաժանելի եղած ժամանակ ողջ Հայաստանը դարձաւ Խորհրդային: Ուշագրաւ է այն փաստը որ տուեալ վիճակը այդ օրերին քաջ հասկանում ու ընդունում էին ինչպէս Խորհրդային Ռուսաստանի, այնպէս էլ Խորհրդային Ազրպէյճանի կառավարութիւններն ու Պոլշեւիկեան Կուսակցութիւնը: Պաքուի Քաղաքային Խորհրդի 30 Նոյեմբերի, 1920 թ. նիստի ընթացքում Խորհրդային Ազրպէյճանի ղեկավար Նարիման Նարիմանովը պաշտօնապէս յայտարարեց որ Նախիջեւանը, Զանգեզուրը ու Ղարաբաղը անբաժան մասն են կազմում Հայաստանի Խորհրդային Հանրապետութեան: Նոյն օրը այդ հաստատեցին Ազրպէյճանի Յեղկոմի նախագահ Ն. Նարիմանովն ու Ազրպէյճանի արտաքին գործերի ժողկոմ Մ. Հուսէյնովը՝ Երեւանի կառավարութեան ղեկավարին ուղարկուած պաշտօնական հեռագրով: Ուշագրաւ է այն փաստը, որ արտգործնախարար Հուսէյնովը պնդում էր՝ Ազրպէյճանի որոշումը շտապ հաղորդել եղբայրական հայ ժողովրդին:

Այդ «պատմական» ու «յեղափոխական» լուրը Ազրպէյճանի Պոլշեւիկեան Կուսակցութեան պաշտօնաթերթ Պաքուի «Կոմունիստ»ի 2 Դեկտեմբերի, 1920 թ. համարում տպագրուեց որպէս կուսակցական ու կառավարական պաշտօնական որոշում: Այդ նոյն օրը այդ մասին Պաքուից զեկուցագիր ուղարկուեց Վ.Ի. Լենինին: Դեկտեմբերի 4-ին Պոլշեւիկեան Համառուսաստանեան Կուսակցութեան պաշտօնաթերթում՝ «Փրաւտա»ում տպագրուեց Ազգութիւնների Գործերի Կոմիսար Ժ. Սթալինի յօդուածը, որտեղ նա ուրախութեամբ յայտնում է որ գրչի մէկ հարուածով դրականօրէն լուծուեց հայ-ազրպէյճանական եւ հայ-իսլամական ամենաբարդ վէճը, քանի որ եղբայրական ներդաշնակ յարաբերութիւններ են հաստատուել Հայաստանի, Ազրպէյճանի ու Թուրքիայի պրոլետարիատի միջեւ: Նա անտեսում էր այն իրողութիւնը

որ շուրջ մի տարի առաջ, տարածքի հայ եւ թաթար (իսլամ) եւ հայ բնակչութիւնը առանց պոլշեւիկների խաղերի ու միջամտութեան ու Արեւմուտքի եւ Թուրքերի սադրիչ քայլերի, միացեալ եղբայրական ուժերով հաստատել էին միացեալ տարածքային իշխանութիւն, տեղական կառավարութիւն, որ նախանձելի արդիւնաւէտութեամբ ու արդարութեամբ ղեկավարում էր հայ եւ թաթար բնակչութիւնը: Իսկ ականաւոր պոլշեւիկ խորհրդային պետական գործիչ, կեդրոնական խորհրդային իշխանութեան լիազօր ներկայացուցիչ Սերկէյ Օրջոնիկիձէն Ղարաբաղը, Նախիջեւանն ու Զանգեզուրը իր իսկական տիրոջ՝ հայ ժողովրդին ու Հայաստանին տալը համարում էր պատմութեան մէջ նախատիպը չունեցող մարդասիրական, եղբայրական քայլ, կանխորոշող մի արարք: Տուեալ արարքի կարեւորութիւնը նաեւ այն էր, որ այն հիմնուած էր ոչ միայն կուսակցական, այլ նաեւ Ազրպէյճանի օրինական կառավարութեան որոշման վրայ: Այդ ժամանակ Ազրպէյճանի Խորհրդային իշխանութիւնը իրաւական առումով ինքնուրոյն էր, քանի որ իր իշխանութիւնը դեռ չէր յանձնած Ռուսաստանին ու դեռ չկար Խորհրդային Միութեան կեդրոնական իշխանութիւնը: Այս բոլորը այդ արարքին տալիս էր իրաւական մեծ ոյժ:

ԱԶԳԵՐԻ ԼԻԿԱՆ ԵՒ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑԸ

Ազգերի Լիկայի խորհուրդը իր 18 Դեկտեմբերի, 1920 թ. նիստի որոշումով հաստատեց Լեռնային Ղարաբաղի միացումը Հայաստանին: Ազգերի Լիկայի գործադիր քարտուղարութիւնը անդամ պետութիւններին, Սովետական Ռուսաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատին հասցէագրուած յուշագրում եւ 1920-1921 թթ. տարեկան հաշուետուութեան մէջ ճանաչում էր Լեռնային Ղարաբաղի միացումը Հայաստանին: Այս փաստօրէն միջազգային ճանաչումն է այն իրողութեան, որ Լեռնային Ղարաբաղը Հայաստանի անբաժանելի մասն է: Նշենք որ կարճ ժամանակամիջոցում Ազգերի Լիկան երկրորդ անդամ լինելով անդրադառնում է Լեռնային Ղարաբաղի հարցին: Առաջինում ան մերժել էր Ազրպէյճանի դիմումը Ազգերի Լիկայի անդամ դառնալու համար երկու հիմքերից ելնելով.

Ա. Ազրպէյճանը զաւթողական քաղաքականութիւն է վարում շրջապատի ժողովրդների նկատմամբ եւ կոտորում նրանց:

Բ. Ազրպէյճանը Ազգերի Լիկայի անդամ ոչ մի պետութեան կողմից չի ճանաչուել:

Միաժամանակ Լիկան գտաւ որ Լեռնային Ղարաբաղը վիճելի տարածք է եւ Ազրպէյճանը իրաւունք չունի այն գրաւելու, զաւթելու:

Որոշ աղբիւրագէտներ գտնում են որ 30 Նոյեմբերի, 1920 թ., Պաքուի Քաղաքային Խորհրդի նիստի ընթացքում Խորհրդային Ազրպէյճանի պոլշեւիկ ղեկավար Նարիման Նարիմանովի ելոյթի եւ մամուլում տպագրուած հաղորդութեան միջեւ եղել են որոշ տարբերութիւններ: Հիմնական բնագրում, իբր ասուել է որ Զանգեզուրն ու Նախիջեւանը կազմում են Խորհրդային Հայաստանի անբաժանելի մասը, իսկ Լեռնային Ղարաբաղի գիւղացիութեան իրենք իրաւունք են վերապահում օգտուել ազգերի ազատ ինքնորոշման իրաւունքից: Այսինքն, այդ պաշտօնական յայտարարութեամբ իբր Լեռնային Ղարաբաղը Հայաստանի մասը չի համարուել: Այդպիսի մօտեցումը անտեսում էր Լեռնային Ղարաբաղի ժողովրդի կողմից ընտրուած իշխանութեան որոշումը, որով Լեռնային Ղարաբաղի բնակչութիւնը ելնելով ազգերի ազատ ինքնորոշման իրաւունքից, իրեն յայտարարում էր Հայաստանի Հանրապետութեան անբաժանելի մասը: Նկատի ունենալով այս իրաւական նրբութիւնները, Ազրպէյճանի որոշումը վերանայուեց ու սրբագրուեց մամուլում տպագրուած յայտարարութիւնում: Բոլոր դէպքերում, այս պարագան էլ արտացոլում է այդ օրերին պոլշեւիկների շրջանակում եղած տարակարծութիւններն ու հակասութիւնները: Այսօր էլ գտնւում են ազերի գործիչներ, որոնք փորձում են կեղծել համանման հայանպաստ փաստաթղթերը կամ ուրանալ դրանց գոյութիւնը:

Սոյն անորոշութիւնը, հակասութիւնը, տեսակէտների բախումն ու լարուածութիւնը գնալով ոչ թէ նուազեց, այլ խմորուելով մեծացաւ, խորացաւ ու հասցրեց ճգնաժամային բարդութիւնների: Այդ ընթացքին նպաստեցին նաեւ յետագայում ընդունուած որոշումների խորքային իրաւական սխալներն ու թերութիւնները:

ՌՈՒՍ-ԹՐՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

16 Մարտի, 1921 թ. Մոսկուայում կնքուած ռուս-թրքական համաձայնութեան 3-րդ կէտով Նախիջեւանը դառնում էր ինքնավար տարածք՝ Ազրպէյճանական Սոցիալիստական Հանրապետութեան ենթակայութեան տակ: Ըստ որում, Ազրպէյճանը իրաւունք չունէր այդ տարածքը երրորդ մի կողմի (նկատի են ունեցել Հայաստանը) յանձնելու: Այս որոշումը ընդունուել է Թուրքիայի պահանջով, որպէսզի թուրանական ու իսլամական ժողովուրդները լինեն սահմանակից: Այստեղ Արցախի հարցը չի քննարկուել: Այդ բանակցութիւններին հրաւիրուած Սովետական Հայաստանի պատուիրակութեան լիազօրութիւնները Թուրքիայի կողմից չընդունուեցին, քանի որ այդ օրերին Հայաստանում իշխանութիւնը իր ձեռքը վերցրած Փրկութեան Կոմիտէն բանակցող կողմերին պաշտօնապէս յայտնել էր որ Սովետական Հայաստանի պատուիրակութիւնը չի կարող Հայաստանը ներկայացնել: Այս որոշումով կոպիտ կերպով խախտուել է միջազգային օրէնքը՝ երկու պետութիւններ մի երրորդ անկախ պետութիւնից վերցնում են մի մեծ

տարածք ու այն տալիս մի չորրորդ պետութեան, առանց տուժող երկրի (Հայաստանի) համաձայնութեան կամ բանակցութեան մասնակցութեան: Այդ պայմանագիրը նուազ անօրինական կը լինէր, եթէ կնքուէր 22 Փետրուարի, 1922 թ. յետոյ: Այդ թուականին Մոսկուայում կայացած խորհրդակցութիւնում Խորհրդային հանրապետութիւնները պաշտօնապէս Խորհրդային Ռուսաստանին զիջեցին կամ յանձնեցին իրենց միջազգային ու ազգամիջեան յարաբերութիւնների տնօրինութիւնը: Դա Ճենովայի կոնֆերանսի նախօրէին էր: 1921 թ. Մայիսին, 11-րդ բանակը վերակազմաւորուել էր կովկասեան յատուկ միաւորման, որի մէջ էին ընդգրկուել Ազրպէյճանի, Հայաստանի ու Վրաստանի ազգային բոլոր զօրամասերը: Հայաստանն արդէն չունէր իր սեփական բանակը: Սովետական պատմաբանները գտնում են որ Մոսկուայի այդ բանակցութիւններով Ալեքպոլի դաշնագիրը կորցրեց իր ոյժը:

Ռուս-Թրքական բանակցութիւնների որոշումները նոյնպէս աւելի օրինական կը լինէին, եթէ դրանք տեղի ունենային 3 Ապրիլի, 1921 թ. յետոյ, Փրկութեան Կոմիտէի պարտութիւնից յետոյ, քանի որ նրան օրինապէս կը մասնակցէր Սովետական Հայաստանի պատուիրակութիւնը: 16 Յուլիսի, 1921 թ. իրենց զէնքերը ցած դրին նաեւ Սպարապետ Նժդեհի հրամանատարութեամբ գործող եւ Զանգեզուրի ազատագրութեան համար պայքարող Լեռնահայաստանի հերոս զինուորները: Այդ պայքարի շնորհիւ Զանգեզուրը մնում է հայկական ու Հայաստանի կազմում: Նժդեհը Պարսկաստան անցաւ, երբ լսեց Ա. Միասնիկեանի հաւաստիացումը, որ Զանգեզուրը երբեք չի տրուելու կովկասեան թաթարներին:

Խիստ ուշագրաւ է այն դէպքը, որ կատարուեց Մոսկուայում տրուեալ բանակցութիւնից անմիջապէս առաջ:

Մոսկուայում սկսուելիք բանակցութիւններին մասնակցելու համար 18 Յունուարի, 1921 թ., այնտեղ մեկնեց Սովետական Հայաստանի պատուիրակութիւնը Ալ. Բեկզադեանի գլխաւորութեամբ: Մինչեւ բանակցութիւնները սկսելը, վերջինս Զիլերինին ու Կարախանին ծանօթացնում է այն փաստաթղթերին, որոնք հայ պատուիրակութիւնը ներկայացնելու է կոնֆերանսին: Հասկանալով որ Սովետական Հայաստանի պատուիրակութեան դիրքորոշումը եւ նրա ներկայացնելիք փաստաթղթերը խառնելու են Սովետական Ռուսաստանի ծրագրերը, վերջինս կոնֆերանսը յայտարարեց ռուս-Թրքական: Այդպիսով հայ բանագնացները մնացին «պատերի տակ», չմասնակցեցին անոր աշխատանքներին: Իսկ հայազգի պոլշեւիկ Կարախանը կոնֆերանսի բացման նախօրէին խաբէութեամբ Բեկզադեանից վերցնում է փաստաթղթերը ու դրանք վերադարձնում պայմանագրի ստորագրումից քանհինգ օր անց[1]:

1. Տես՝ Կ.Խ. Սարդարեան, *Հայաստանի Վերջին Բաժանումը*, «Հայք», թիւ 6, 18 Մարտի, 1990, նոյնի *Պատմութիւն եւ Իրականութիւն*, Երեւան, 1991, էջ 87-88:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱԶՄՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՐՈՐԴ ՈՐՈՇՈՒՄ

Անհնարին է անտեսել «Ազգութիւնների Գործերի Կոմիսարիատի» պաշտօնաթերթի, «Ժիզն Նացիոնալստէյ» (Ազգութիւնների Կեանքը), 4 Մարտի, 1921 թ. համարում տպագրուած Ս. Կաչկովի յօդուածը: Այնտեղ պարզ կերպով բացայայտուած են պոլշեւիկեան «հայանպաստ քաղաքականութեան» էութիւնը եւ վերոյիշեալ բանակցութիւնից ակնկալուելիք արդիւնքները: «Հայաստանին ոչինչ չի մնում անել, քան հաշտուել ստեղծուած դրութեան հետ եւ յանուն համաշխարհային յեղափոխութեան շահերի զոհաբերել թէ իր նախկին տարածքները եւ թէ այնտեղ մնացած իր ժողովրդին»:

Հայ Յեղկոմի եւ 11-րդ Կարմիր Բանակի պատուիրակներ Ա. Կարինեանի ու Մելնիքովի Լեռնահայաստանի ու Նժդեհի գործունէութեան մասին զեկուցումները լսելով, 1921 թ. Մայիսին, Կովկասեան Բիւրոն որոշում է «Զանգեզուրը մաքրել հակայեղափոխականներից»: Այդ որոշումին 5-րդ կէտով յանձնարարուեց Հայաստանի կառավարութեան հռչակագիր հրապարակել Լեռնային Ղարաբաղը Հայաստանին միացնելու մասին: Կարմիր Բանակը Նժդեհի դէմ վճռական պայքարի անցաւ 18 Յունիսի, 1921 թ.: Հայաստանի կառավարութիւնը որոշեց իր պաշտօնաթերթ «Խորհրդային Հայաստան»ի 19 Յունիսի, 1921 թ. համարում տպագրել Ալ. Միասնիկեանի ստորագրած որոշումը, որով Լեռնային Ղարաբաղը համարւում էր Սովետական Հայաստանի անբաժանելի մասը: Այս քայլին դիմեց բիւրոն՝ Նժդեհի դէմ նախաձեռնուելիք ռազմական գործունէութիւնների ժամանակ անակնկալներից խուսափելու մտադրութեամբ: Հետաքրքրական է որ նոյնպիսի գրութիւն տպագրում է Ազրպէյճանի պոլշեւիկների պաշտօնաթերթ «Պաքինսքի Բասոչի»ն, 22 Յունիսի, 1921 թ.: Որոշ պոլշեւիկ ղեկավարներ առարկեցին Յեղկոմ՝ Միասնիկեանի որոշման դէմ, երբ նկատեցին որ հայերի կողմից այն ընդունւում է լրջօրէն: Նշենք, որ Միասնիկեանը Լեռնային Ղարաբաղը Հայաստանի անբաժանելի մաս դարձնելու գործում ամենից հետեւողականն ու սկզբունքային հայ պետական ու կուսակցական գործիչն էր: Նա հակադրուեց Սթալինին, եւ յայտարարեց որ հայ ազգը երբեք պիտի չհամաձայնուի Ղարաբաղը Ազրպէյճանին կցելու նրա քմահաճութեան հետ: Այդ էր պատճառներից մէկը որ 22 Մարտի, 1925 թ. նրա դէմ կազմակերպուեց օդանաւային «արկածը»: Երեսունական թուականներին Ղարաբաղի եւ Հայաստանի տնտեսական կապը ամրապնդելու մեղադրանքով սպաննուեց նաեւ հայ միւս ազգային մեծ գործիչը՝ Ադասի Խանճեանը:

Երբ պոլշեւիկները 1921 թ. Յունիսին քննարկում էին Ղարաբաղի, Զանգեզուրի ու Նախիջեւանի ճակատագրի հարցը եւ հայերը պայքա-

ում էին այդ տարածքները Հայաստանի կազմում պահելու համար, Բարիզում Անդրկովկասից փախած նախկին բուրժուական կառավարությունների ղեկավարները ընդհանուր կովկասեան տուն ստեղծելու հարցերի շուրջ կոնֆերանս էին կազմակերպել: Այդ կոնֆերանսին, հասկանալի պատճառներով, չէին մասնակցում հայերը: Իսկ 1921 թ. Փետրուար-Մարտ ամիսներին Անգլիայի, Ֆրանսայի, Իտալիայի, Ճապոնի, Գերմանիայի, Յունաստանի ու Քեմալական Թուրքիայի մասնակցութեամբ Լոնտոնում անցկացուող կոնֆերանսում Անգլիայի վարչապետ Լոյտ Ճորճը առաջարկում էր Թուրքիային՝ իր հովանաւորութեան տակ վերցնել Անդրկովկասը: Այդ հանգամանքներն էլ ներգործած կը լինեն պոլշեւիկեան յեղյեղուկ տակտիկայի վրայ:

Այս պայմաններում Ռուսական Կոմունիստական (Պոլշեւիկեան) Կուսակցութեան Կովկասեան Բիւրոն, Նարիման Նարիմանովի մասնակցութեամբ, անհրաժեշտ գտաւ իր 3 Յունիսի, 1921 թ. նիստում նորից անդրադառնալ Ղարաբաղի հարցին, ու միաձայն որոշեց որ Հայաստանի կառավարութեան յայտարարութեան մէջ պէտք է շեշտել որ Լեռնային Ղարաբաղը Հայաստանի անբաժանելի մասն է: Յունիսի 12-ին Հայաստանի Սոցիալիստական Հանրապետութեան ժողովրդական կոմիսարների խորհուրդի կառավարական յայտարարութեան մէջ նշւում էր որ Լեռնային Ղարաբաղը Հայաստանի անբաժան մասն է: Այդ յայտարարութիւնը հիմնուած էր Ազրպէյճանի Յեղկոմի եւ Հայաստանի ու Ազրպէյճանի կառավարութիւնների կողմից ստորագրուած պայմանագրի վրայ: Այդ բոլորը հիմք ընդունելով 4 Յուլիսի, 1921 թ. Կովկասեան Բիւրոն որոշում ընդունեց այդ հարցի վերաբերեալ: Այնտեղ հաստատւում էր որ Լեռնային Ղարաբաղը Հայաստանի անբաժանելի մասն է: Տուեալ որոշումը ընդունուեց բաց քուէարկութեամբ, միաձայնութեամբ եւ առանց որեւէ սկզբունք եւ օրէնք խախտելու: Այս նշանակում է որ ոչ մի իրաւական հիմք չկար այն փոխելու կամ բեկանելու: Բայց պոլշեւիկ ղեկավարութեան միջավայրում նկատելի շփոթը, լենինեան տեսական սկզբունքների եւ գործնական քաղաքականութեան միջեւ գոյութիւն ունեցող հակասութիւնը, պատմական իրականութեան ու պոլշեւիկեան քաղաքական ծրագրերի անհամապատասխանութիւնը, պոլշեւիկեան խոստմնադրժութիւնն ու «թուրքական յեղափոխական կարելիութիւնների» նկատմամբ ղեկավար պոլշեւիկների կոյր հաւատը թոյլ չտուին որ վերոյիշեալ պետական-կուսակցական որոշումը ապրի ու գործադրուի:

ԲՌՆԱԿԱԼԱԿԱՆ ԿԱՄԱՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ

Ժոզէֆ Սթալինը այդ օրերին գտնուում էր Հիւսիսային Կովկասում,

սիւնի իսլամ Կապարտիններով եւ Պալքարներով բնակեցուած Նալչիկ քաղաքում, եւ աշխատում էր այդ երկու ժողովուրդների «համագործակցութեամբ» մի վարչական միաւոր կազմելու ուղղութեամբ: Իր համար խիստ անցանկալի այդ լուրը (ԼՂ Հայաստանի կազմի անբաժանելի մասը համարելու որոշումը) ստանալով, նա անմիջապէս եկաւ Թիֆլիս եւ 5 Յուլիսի, 1921 թ. հրաւիրեց պոլշեւիկեան կուսակցութեան Կովկասեան Բիւրոյի նիստ: Առանց հարցը քննարկելու, առանց բացատրելու թէ ինչ հիմքերի վրայ Լեռնային Ղարաբաղի նախորդ օրուան օրինական որոշումը բեկանւում է, եւ առանց քուէարկութեան, Բիւրոյին պարտադրեց մի նոր որոշում ընդունել: Վերջին որոշումով Լեռնային Ղարաբաղը դառնում էր Սովետական Ազրպէյճանի կազմում գտնուող մի շրջան, որին տրւում էր «ինքնավարութեան լայն իրաւունքներ»: Սթալինը իր ձեռքով վերացրեց Հայաստանի, Թուրքիայի եւ Ազրպէյճանի «եղբայրական» յարաբերութիւնները, որի մասին նա խօսում էր նախորդ տարուայ Դեկտեմբերին, երբ Ղարաբաղը, Նախիջեւանը եւ Զանգեզուրը յայտարարուեց Հայաստանի անբաժանելի մասը: Վերացաւ պոլշեւիկների իրագործած «պատմական մեծ արարքը», որի մասին հպարտութեամբ խօսում էր Ս. Օրջոնիկիձէն մի քանի ամիս առաջ: Ս. Օրջոնիկիձէն ու Ալ. Միասնիկեան եւ ուրիշներ ապարդիւն բողոքեցին:

Առաջին հարցը, որ բարձրանում է, դա կուսակցական մի մարմնի կողմից միջ-պետական, միջազգային ու տարածքային հարցերի շուրջ որոշումներ կայացնելու օրինականութիւնն է: Միջազգային օրէնքը գտնում է որ այդպիսի որոշումներ կարող են ընդունել տուեալ երկրների օրինական պետական մարմինները կամ նրանց կողմից լիազօրուած մարմինները: Այսպիսով, այդպիսի որոշումը ամբողջութեամբ հակասում է միջազգային իրաւունքի սկզբունքներին ու նորմերին: Իսկ եթէ մի պահ ընդունենք որ տուեալ արտակարգ ու անսովոր վիճակում կուսակցական մարմինները կարող են միջ-պետական ու տարածքային հարցեր լուծել, ապա այդ դէպքում, 4 Յուլիսի, 1921 թ. որոշումը աւելի օրինական է, քանի որ այնտեղ հարցը ստացել է համընդհանուր քննարկում եւ որոշումը ընդունուել է բաց քուէարկութեամբ՝ առանց որեւէ իրաւախախտումների:

Աւելին, Սթալինի կեցուածքը հակասում էր Պոլշեւիկեան Կուսակցութեան հիմնադիր ու ղեկավար Լենինի սկզբունքներին: Սթալինեան միջամտութիւնից երկու օր անց, 7 Յուլիսի, 1921 թ., երբ կուսակցութեան Քաղբիւրոյի նիստում քննարկուեցին Լեռնային Ղարաբաղի նման հարցեր, Լենինը մի անգամ եւս շեշտեց որ անհրաժեշտ է նման դէպքերում հիմք ընդունել էթնիկական գործօնը՝ ազգերի ինքնորոշման իրաւունքը: Վախենալով որ լենինեան հարցադրումը կարող է փոխել Կովկասի պոլշեւիկների դիրքը Լեռնային Ղարաբաղի հարցում, Սթալինը յաջորդ օրն իսկ, Յուլիսի 8-ին, հեռագրում է Օրջոնիկիձէին, որ

«վիճելի հարցերը լուծել ի նպաստ Ազրպէյճանին ու Թուրքիային»: Ճիշդ չէր լինի այստեղից եզրակացնել որ սոյն հարցում Լենինի եւ Սթալինի միջեւ տարակարծութիւն կար, կամ Սթալինը գործում էր Լենինի առաջադրանքների հակառակ:

Լենինի համար ազգերի ազատ կողմնորոշման իրաւունքը գաղութատիրութեան դէմ պոլշեւիկների մղած պայքարի քաղաքական-գաղափարական արտայայտութիւններից ու հիմքերից մէկն էր: Դրանով պոլշեւիկները գաղութացուած ժողովուրդներին յայտնում էին որ իրենք իրաւունք ունեն գաղութատէր պետութիւնից բաժանուել ու հիմնել իրենց ազատ ու անկախ ազգային պետութիւնը: Ազգերի ազատ ինքնորոշման իրաւունքի ջերմ պաշտպան էր նաեւ Ա.Մ. Նահանգներու հայասէր նախագահ Ուուտրօ Ուիլսընը: Նա այդ իրաւունքը ցանկանում էր դարձնել նաեւ Ազգերի Լիկայի ղեկավար սկզբունքներից մէկը: Լենին համոզուած էր որ գաղութատէրերը իրենց շահերից ելնելով չեն կարող հետեւողականօրէն պաշտպանել ու գործադրել ազգերի ազատ ինքնորոշման իրաւունքը, քանի որ այդ երեւոյթին նրանք զինակցում էին իրենց համար անցանկալի անջատողականութեան, ու դրան հակադրում իրենց համար շատ սիրելի «տարածքային ամբողջականութեան» դրոյթները: Նրանք ամէն կերպ ձգտում էին առաւելութիւն տալ վերջինիս: Ղարաբաղի հարցում որոշիչ դեր խաղաց պոլշեւիկների լենինեան գործնապաշտութիւնը (pragmatism), որ տրամագծօրէն խոտոր էր լենինեան գաղափարաբանութեան:

Գաղութային երկրների մեծամասնութիւնը իսլամական էին, որոնց պոլշեւիկները դիտում էին իրար հետ սերտօրէն կապուած: Այսպիսով, ազգերի ազատ կողմնորոշման իրաւունքը առաւելաբար, ըստ պոլշեւիկների, պէտք է ծառայէր գաղութացած իսլամ ժողովրդներին: Այս դէպքում, Ղարաբաղի պարագայում, այն չէր ծառայում ոչ թուրքերին եւ ոչ էլ ազրպէյճանցիներին, որոնց պոլշեւիկները կարեւոր տեղ էին յատկացնում հակագաղութատիրական պայքարում: Ազգերի ազատ ինքնորոշման լենինեան իրաւունքը այս դէպքում լենինականների կողմից նկատուեց անգործադրելի ու սխալ: Այստեղ իրեն զգալ տուեց մի ուրիշ գործօն եւս:

Ռուսաստանը միշտ էլ ձգտել է տիրանալ Թուրքիայի արեւելեան նահանգներին՝ «Արեւմտեան Հայաստանին»: Ա. Աշխարհամարտի սկիզբներին, իմանալով որ Անգլիան եւ Ֆրանսան իրար միջեւ բաժանել են Օսմանեան Կայսրութեան տարածքները ու կազմել Միջին եւ Մերձաւոր Արեւելքի նոր քարտէսը, ռուսերը բողոքեցին: Նրանց խոստացուեց այդ հողերը: Պոլշեւիկեան յեղափոխութիւնից, Հարաւային Կովկասից ռուսների քաշուելուց, ՍԷՅՄ-ի ցրումից ետք, անգլիացիները իրենց աչքը դրին կովկասեան թաթարների տարածքների վրայ՝ Պաքու կեդրոնով: Գերմանացիները դէպի Վրաստան ձգտեցին: Ա. Աշխարհամարտի աւարտից յետոյ Արեւմուտքը աւելի մտահոգուեց Պոլշեւիկեան Աշխարհի եւ Միջին ու Մերձաւոր Արեւելքի, Միջերկրական Ծովի ու Իսլամական Աշխարհի միջեւ մի պատուար կառուցելու հարցով, քան՝ Թուրքիան անդամահատելու: Արեւմուտքը գտաւ որ այդ պատուարը Հայաստանը լինել չի կարող: Որոշեցին այդ պատուարը դարձնել Աթաթուրքի Թուրքիան: Անհրաժեշտ դարձաւ փոքր Թուրքիայի փոխարէն մեծը ստեղծել: Այդպիսով որոշուեց վերանայել Օսմանեան Թուրքիայի արեւելեան տարածքների անդամահատման ու թաթարական հողերի ապագայի հարցը: Այս հիման վրայ պոլշեւիկեան Ռուսաստանին առաջարկուեց հրաժարուել հայկական հողերից ու դրա փոխարէն ստանալ թաթարական հողերը, Պաքուի քարիւղը, Վրաստանը եւ անդամահատուած, փոքրացուած Արեւելահայաստանը: Հայկական հողերը, Յունաստանին ու Իտալիային խոստացուած հողերը տրուելու էին Աթաթուրքին, որպէսզի ան ստեղծէ մեծ նոր Թուրքիան: Իսկ պոլշեւիկները որոշեցին իսլամական աշխարհին սիրաշահելու եւ իրենց հաւանական դաշնակից դարձնելու համար օժանդակել «Աթաթուրքի հակագաղութատիրական ազատագրական պայքարին» եւ Կովկասի թաթարների «դեմոկրատացման» ու «յեղափոխականացման»: Լենինն ու ԸՍթալինը վերոյիշեալ հիմքերից եւ ոչ թէ ազգերի ազատ կողմնորոշման իրաւունքից ելնելով կերտեցին պոլշեւիկեան կովկասեան իրենց նոր քաղաքականութիւնը: Իսկ հայերը հաւատացած էին որ պոլշեւիկները իրենց հարցերը պիտի լուծեն ըստ ազգերի ազատ կողմնորոշման իրաւունքի: Սթալինը գծագրեց պատմականօրէն աննախադէպ մեծ Վրաստանի քարտէսը, եւ այն իրականացրեց: Պատահական չէ որ այդ արհեստական կառոյցի մէջ մտցուած ազգային միաւորները այսօր պայքարում են իրենց անկախութեան համար: Իսկ թաթարական տարածքները պոլշեւիկները նախ դարձրին «իսլամական հանրապետութիւն», եւ ապա՝ «ազգային հանրապետութիւն»:

ԱՊՕՐԻՆԻ ՈՐՈՇՄԱՆ ԱՐԴԱՐԱՑՄԱՆ ՓՈՐՁԵՐ

Ի՞նչպէս հիմնաւորուեց կամ արդարացուեց Լեռնային Ղարաբաղի յանձնումը «Ազրպէյճանին»: Պատմութեան ընթացքում «Ազրպէյճան» ու «ազրպէյճանցի» չի եղել, որ այդ տարածքը նրա կազմում լինի: «Ազրպէյճանական Դեմոկրատական Հանրապետութեան» առաջացման պահին այդ տարածքը վերջինիս կազմում չի եղել: Տարածքի սովետականացման պահին այն նոյնպէս դրա կազմում չի եղել: Լեռնային Ղարաբաղի բնակչութեան 90%-ից աւելին եւ Ղարաբաղի օրինական ներկայացուցչական մարմինները ցանկացել են լինել ոչ թէ «Ազրպէյճան»ի, այլ Հայաստանի կազմում, այն կազմում իրենք երկար դարեր եղել են: Ազգերի Լիկան «Ազրպէյճան»ին չի ընդունել որպէս

անդամ, քանի որ դա փաստացի անկախ պետութիւն չէ: Նա մերժել է Լեռնային Ղարաբաղը իր՝ Ազրպէյճանի, բաղկացուցիչ մաս համարելու խնդրանքը: Պոլշեւիկները բազմիցս հաստատել եւ ընդունել են որ ոչ միայն Զանգեզուրն ու Նախիջեւանը, այլ նաեւ Ղարաբաղը Հայաստանի անբաժանելի մասն են: Այս բոլորից ետք, ի՞նչպէս պոլշեւիկները արդարացրին իրենց ապօրինի որոշումը:

Լեռնային Ղարաբաղը տրուեց Պաքուին, որպէսզի,

1. Խաղաղութիւն հաստատուի հայերի ու մահմետականների միջեւ:

Նախ այստեղ առկայ է անթոյլատրելի մի մեծ տրամաբանական սխալ: Դատողութեան հաւասարազօր ենթականերից մէկը բաժանւում է ըստ ազգային յատկանիշի, իսկ միւսը՝ ըստ կրօնականի: Այս թոյլատրելի է, միայն եթէ ընդունենք որ տուեալ տարածքում բնակւում է միայն մէկ ձեւաւորուած ազգութիւն, իսկ թաթարները լոկ կրօնական (իսլամական) համայնք են: Եւ իրօք, սկզբնական շրջանում պոլշեւիկները թաթարական տարածքներում հաստատուած իշխանութիւնը դիտում էին որպէս «գերազգային» կամ «ապազգային»: Միայն 20-ական թուականների վերջերից ու 30-ական թուականների սկիզբներից այն սկսեցին դիտել որպէս ազգային տարածք: Այս մեզ յուշում է այն միտքը, որ առաջինը յղացել են «իսլամական հանրապետութեան» գաղափարը: Այդ հանրապետութեան նրանք նուիրել են ազգային կազմաւորուած միաւորը՝ Լեռնային Ղարաբաղը: Երկրորդ. այդ արտայայտութիւնը սխալ է այն իմաստով որ Ղարաբաղը երբեք չի եղել վիճելի հարց իսլամական աշխարհի ու հայերի միջեւ: Այն վիճելի է եղել անգլիացիների եւ հայերի միջեւ, ռուսների եւ հայերի միջեւ, թուրքերի եւ հայերի միջեւ եւ թաթարների ու հայերի միջեւ: Դա եղել է ազգային քաղաքական ու տարածքային վէճի ու ոչ թէ կրօնական կեցուածքի հարց: Անաստուած պոլշեւիկները տարածքային-քաղաքական հարցը դարձնելով կրօնական (իսլամական), նպատակ ունէին դրանով սիրաշահիլ Իսլամական Աշխարհը: Երրորդ. այդ հարցադրումը խիստ սխալ ու վտանգաւոր է, քանի որ միտում էր բարդացնել ու վատթարացնել հայերի յարաբերութիւնները Ռուսաստանում եւ Միջին ու Մերձաւոր Արեւելքում ապրող իսլամների հետ, որոնք սիրայօժար, սրտաբաց ընդունում էին Ցեղասպանութիւնից փրկուած հազարաւոր հայորդիներին: Եւ վերջապէս, սոյն հարցադրումը թաթարական տարածքներում, մանաւանդ Լեռնային Ղարաբաղում բնակուող հայերին ընդունում է որպէս թաթարական տարածքային մի ազդեցիկ միաւոր, որ նաեւ վիճելի հարցի իրաւական համամասնակից է: Նման հարցադրումով պոլշեւիկները բացայայտում են իրենց ապօրինութիւնը, քանի որ հակամարտութեան կողմերից մէկին բանակցային գործընթացի մասնակից

չեն դարձրել որպէս իրաւական դէմք:

2. Բնականոն ու արդիւնաւոր տնտեսական կապեր հաստատուեն Դաշտային Ղարաբաղի ու Լեռնային Ղարաբաղի միջեւ:

Նախ նշենք որ պատմութեան ընթացքում Դաշտային Հայաստանը, ընդ որում եւ Ղարաբաղը, զաւթած օտարները նախընտրելով հաստատուել դաշտային հատուածում, պատճառ դարձան նոյն ազգային տարածքի մշակութային, կրօնական երկատման: Հայերին ու այդ տարածքում ապրող այլ ցեղերին ու ժողովրդներին իրար դէմ լարելու գործում շահագրգռուած երկու հատուածների բնակիչներին թշնամացրին: Դրանց մէջ զգալի դեր խաղացին թուրքերը եւ թաթարները: Սոյն որոշումից դեռ մի քանի ամիս առաջ ողջ տարածքով մէկ նրանք հայերի կոտորածներ էին կազմակերպել ու հրկիզել էին հայկական գիւղերը: Ցանկարծ թաթարներին վստահում են երկու հատուածների յարաբերութիւնների բարելաւումն ու բարեկամութիւնը: Նման որոշումը Լեռնային Ղարաբաղի բնակչութեան վիճակը պաշտօնական խողովակներով վատթարացնելու ակնյայտ լիազօրութիւն էր՝ տրուած թաթարներին:

Երկրորդ. Քննարկւում է Դաշտային ու Լեռնային Ղարաբաղի վերաբերող հարց՝ առանց նրանց մասնակցութեան, ու նրանց վերաբերեալ որոշում ընդունւում՝ առանց նրանց համաձայնութեան: Պոլշեւիկեան Բիւրոյի եւ ոչ մի անդամ լիազօրուած էր այդ կողմերին ներկայացնելու:

Երրորդ. Այստեղից այն տպաւորութիւնն է ստեղծւում, որ կարծես Դաշտային Ղարաբաղը «թաթարական տարածքի» կամ «Ազրպէյճան»ի մաս չի կազմում եւ ինքը առանձին կողմ է, կամ՝ իրաւական դէմք: Այս նորամուծութիւնը իրաւական յարաբերութիւններում նոր վիճակ է ստեղծում:

Չորրորդ. Սթալինի կողմից տրուած մեկնաբանութեան մէջ օգտագործւում է նաեւ մի նոր եզր, «Հայկական Ղարաբաղ»՝ Լեռնային Ղարաբաղի որպէս հոմանիշ: Այդ եզրը կարիք է զգում իրաւաբանական լուրջ վերլուծութեան ու մեկնութեան, այլապէս իրաւական շփոթ կարող է առաջացնել: Այդպէս էլ եղաւ:

3. Աւելի բնականոն ու արդիւնաւոր դառնան Լեռնային Ղարաբաղի ու «Ազրպէյճան»ի տնտեսական կապերը:

Այս՝ փաստարկներից ամենից տարօրինակն է եւ ամբողջութեամբ հակասում է Լենինի քարոզած ազգային քաղաքականութեան տառին ու ոգուն: Այդ ժամանակ Լեռնային Ղարաբաղը մի կողմից սահմանակից էր Հայաստանին, եւ միւս կողմից՝ «Ազրպէյճան»ին: Ազգային, մշակութային, լեզուական, կրօնական ու պատմական պատկանելիու-

թեան գործողներով Լեռնային Ղարաբաղը գրեթէ նոյնական էր Հայաստանի Հանրապետութեան հետ: Նոյն գործողներով Լեռնային Ղարաբաղի բնակչութիւնը արմատապէս տարբերւում էր թաթարներից: Բնականաբար ճիշդ կը լինէր, եթէ այն գտնուէր վերջինիս կազմում, եթէ պոլշեւիկները հարցին մօտենային հայ ազգի յետագայ զարգացման, բարգաւաճման ու հայրենահաւաքման առումով: Բայց դա չէր հետաքրքրում նրանց: Կարծես նրանք պատմութեան ընթացքին ու տրամաբանութեան հակադրուելով ճանապարհ էին հարթում Լեռնային Ղարաբաղի «ազրպէյճականացման» համար: Այդպէս էլ, ինչպէս ստորեւ կը տեսնենք, Մոսկուայի օրհնութեամբ «ազերիները» գործեցին յետագայ տարիների ընթացքում: Մոսկուան թշնամաբար ընդունեց միութենական, կովկասեան եւ հայաստանեան չափանիշներով ռազմական, տնտեսական, մշակութային ու քաղաքական նշանակութիւն ունեցող Աղասի Խանճեանի ծրագիրը, որով առաջարկւում էր Հայաստանի ներսի տարածքով անցկացնել երկաթգիծ, որ հասնելու էր նաեւ Լեռնային Ղարաբաղի մօտակայքը:

Լեռնային Ղարաբաղի ինքնուրոյնութիւնն ու ինքնավարութիւնը ապահովելու վերաբերեալ պատրանք ստեղծելու համար Սթալին իր պարտադրած որոշումին մէջ աւելացրել էր. «Լայն չափերի ինքնավարութիւն շնորհել Լեռնային Ղարաբաղին»: Այս պահանջը երբեք չգործադրուեց: Չգործադրուեց նաեւ մարզի վարչական կեդրոնը Շուշին պահպանելու որոշումը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԸ ԱԶՐՊԷՅՃԱՆԻ ԿԱԶՄՈՒՄ

Պաքուի ղեկավարութիւնը դժգոհ էր վերոյիշեալ որոշումից: Նրանք ցանկանում էին որ որոշման միջից հանուէր ինքնավարութիւն հաստատելու պարտաւորուածութիւնը, որ այս կամ այն ձեւով պահում էր Լեռնային Ղարաբաղի ազգային պատկանելիութեան խորքը: Այդ բովանդակութեամբ, Ազրպէյճանի Կոմկուսի (պոլշեւիկների) Կենտկոմը 26 Սեպտեմբերի, 1921 թ. խնդրագիր ուղարկեց Կովկասեան Բիւրոյին, որ չբաւարարեց պահանջը: Փոխարէնը տեղի ունեցաւ մի այլ նշանակալից դէպք: 25 Դեկտեմբերի, 1921 թ. Խորհրդային Ռուսաստանի Արտգործ Ժողկոմատի 1920-1921 թթ. մասին զեկուցագրում՝ ներկայացուած Սովետների 11-րդ համագումարին, յայտնւում էր որ գալիք Յուլիսին Լեռնային Ղարաբաղի վերաբերեալ մի այնպիսի պայմանագիր պիտի ստորագրուի Ազրպէյճանի հետ, որ աղերս ունի Հայաստանին: Եւ իսկապէս, 7 Յունիսի, 1923 թ. որոշում ընդունուեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ ստեղծելու մասին: Մարզը ստեղծուեց Լեռնային Ղարաբաղը Ազրպէյճանի կազմում հաստատելու մասին որոշում ընդունելուց երկու տարի անց: Ինչո՞ւ այդքան ձգձգում, երբ

Պաքուն երկրամասը ազրպէյճականացնելու աշխատանքները որոշումից անմիջապէս ետք սկսել էր:

Մենք հակուած ենք ենթադրելու որ Պաքուի իշխանութիւնները ծրագրում են Լեռնային Ղարաբաղի կցումը Ազրպէյճանին գործադրել այնպիսի մեծ փոփոխութիւններով, որոնք պէտք ունեն ոչ միայն երկարատեւ ժամանակի, այլ նաեւ նոր փոփոխութիւնների ու պայմանների: Մեծ հաւանականութեամբ դրանք կապուած պէտք է լինէին Սեւրի դաշնագրի, Աթաթուրքի կառավարութեան ճակատագրի ու սպասուող Անդրկովկասեան երեք հանրապետութիւնների դաշնութեան ստեղծումին հետ: Եթէ Սեւրի դաշնագիրը, որ պաշտօնապէս ճանաչում էր Հայաստանի Հանրապետութիւնը, որոշակի սահմաններում մնար անփոփոխ, ապա հայկական տարածքների հետ սովետական վերաձեւումները կարող էին անիմաստ դառնալ: Միւս կողմից, եթէ Աթաթուրքի Թուրքիայի ձեւաւորումը ուշանար կամ անհնար դառնար, շատ սովետական ծրագրեր օդում կը մնային: Գործերի ընթացքը նպաստաւոր հունով ծաւալուեց: 1921 թ. Յունուարին Պոլիսի պատուիրակութիւնը հրաժարուեց Անկորայից վերադառնալ՝ մինչեւ Դաշնակիցները չխոստացան վերանայել Սեւրի դաշնագիրը: Յունուարի 30-ին Աթաթուրքը յայտարարեց որ Թուրքիայի միակ օրինական իշխանութիւնը Անկորայի խորհրդարանն ու կառավարութիւնն է: Փետրուարի 17-ին մասնակցելով Լոնտոնի ժողովին, Աթաթուրքի Թուրքիան փաստօրէն ստացաւ դիւանագիտական ու իրաւական ճանաչում: Մարտին ան պայմանագիր կնքեց Իտալիայի, Ֆրանսայի ու Սովետական Ռուսաստանի հետ: 23 Ապրիլի, 1922 թ. Անկորան արդէն պատրաստակամութիւն է յայտնում մասնակցելու հաշտութեան (խաղաղութեան) նոր պայմանագրի շուրջ մտքերի փոխանակման: Այդ առաջնորդեց Լոզանի դաշնագրի կնքումին: Յոյների դէմ իրենց ծաւալած պայքարը ի նպաստ իրենց լուծելով եւ Ազգային Ուխտով որոշուած տարածքները իրենց հսկողութեան տակ առնելով, քեմալականները 29 Հոկտեմբերի, 1923 թ. յայտարարում են Թուրքական Հանրապետութեան ծնունդը: Այս գործընթացը թեւ ու թիկունք եղաւ որպէսզի Պաքուն կարողանայ գործադրել Լեռնային Ղարաբաղի ու Հայաստանի նկատմամբ իր ունեցած նկրտումները:

Մօտաւորապէս այն օրերին, երբ տաք վէճեր էին գնում Լեռնային Ղարաբաղի հարցի շուրջ, Լենին արտայայտեց այն տեսակէտը որ Կովկասի սովետական հանրապետութիւնների սերտ դաշինքը կը ստեղծի ազգային խաղաղութեան մի այնպիսի օրինակ, որ չէր տեսնուած պուրժուական տիրապետութեան օրերին: Այդ հիման վրայ ան առաջ քաշեց Անդրկովկասեան հանրապետութիւնների միացման գաղափարը[1]: Նախ

1. Լենին, Երկեր, Հ. 32, էջ 402:

միաւորեցին Անդրկովկասեան երկաթուղիները: Ապա անցան արտաքին առեւտուրի միաւորմանը: 13 Հոկտեմբերի, 1921 թ. Անդրկովկասի Հանրապետութիւնների միացեալ պատգամաւորութիւնը Կարսում Թուրքիայի հետ կնքեց բարեկամութեան պայմանագիր, որի սեղանին զոհաբերուեցին հայկական տարածքներն ու իրաւունքները: 2 Նոյեմբերի, 1921 թ. Կովկասեան Բիւրոն որոշում ընդունեց Անդրկովկասի Սովետական Հանրապետութիւնների Ֆեդերացիայի ստեղծման մասին: 1922 թ. Փետրուարին, Կովկասեան Բիւրոն փոխարինուեց Ռուսաստանի Կոմունիստական (Պոլշեւիկեան) Անդրկովկասի Կոմիտէով՝ երեք Հանրապետութիւնների կոմունիստական կուսակցութիւնների գաղափարական-քաղաքական ղեկավար մարմինով: 12 Մարտի, 1922 թ. Անդրկովկասեան Հանրապետութիւնների Սովետները (պետական մարմիններ) իրենց լիազօրութիւնները յանձնեցին Անդրկովկասի Սովետական Սոցիալիստական Հանրապետութիւնների Ֆեդերատիվ Միութեան, որի իրաւասութեան տակ մտան ռազմական, ֆինանսական, արտաքին ու ներքին գործերը, հաղորդակցութեան ճանապարհները, կապը եւ տնտեսական քաղաքականութեան ղեկավարումը: 10-12 Դեկտեմբերի, 1922 թ., Անդրֆեդերացիան իր անունը վերափոխեց եւ դարձաւ Անդրկովկասեան Սովետական Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետութիւն: Այս ֆեդերացիան փաստօրէն դարձաւ առանձին պետութիւն եւ որպէս այդպիսին մտաւ ՍՍՀՄ-ի կազմի մէջ: Ուշագրաւ է այն, որ ֆեդերացիայի հասցէին արուած ամէն մի քննադատութիւն ու դիտողութիւն դիտւում էր որպէս ազգայնամոլութեան արտայայտութիւն: Այսպիսի քաղաքական-գաղափարական մթնոլորտում որոշ միջազգայնամէտ (ինտերնացիոնալիստ) պոլշեւիկներ՝ սթալինականների գլխաւորութեամբ, գտան որ անդրկովկասեան տուեալ կառոյցում չկան հայկական տարածքներ եւ օրինական, ճիշդ ու միջազգայնական է Լեռնային Ղարաբաղի ու Զանգեզուրի սահմանները վերաձեւել ու կտրատել՝ դրա բոլոր ընդդիմադիրներին պատժելով որպէս ազգայնամոլ թշնամիների:

Պաքուն Լեռնային Ղարաբաղի առաջադրուած մարզը ստեղծեց ոչ թէ Հայաստանից իրենց կցուած Լեռնային Ղարաբաղի ողջ տարածքի վրայ, այլ միայն դրա մի մասի վրայ՝ միւս մասը կցելով «Ազրպէյճանին»: Այս ոչ բռնագրաւում եւ ոչ էլ կուսակցական-պետական որոշումի խախտում, օրինազանցութիւն ու ազգայնամոլութիւն նկատուեց: Դա օրինական նկատուեց ու անհրաժեշտ՝ ազգերի բարեկամութեան ու համագործակցութեան ամրապնդումին համար:

Լեռնային Ղարաբաղի նոր բռնատէրը նախ Լաչինի շրջանը իր 122 բնակավայրերով ու 1,835 քառակուսի քիլոմեթր տարածութեամբ պատմականօրէն հայկական հողերը անջատեց իր մայր «մարզից»՝ Լեռնային Ղարաբաղից: Դրանով նա իրականացրեց իր խիստ նեղ ազգային շահերի համար նպաստաւոր հարցեր: Վերլուծենք սոյն քայլի խորքը:

Ա. Լեռնային Ղարաբաղը եւ մայր Հայաստանը իրարից կտրեց, իրարից բաժանեց, իրարից հեռացրեց աշխարհագրական, տնտեսական ու վարչական առումներով: Լաչինի շրջանը դարձաւ արհեստական մի պատուար, բաժանող գոտի (buffer) Հայաստանի ու «Ազրպէյճան»ի միջեւ: Պատահական չէ որ Ղարաբաղի ազատագրական պայքարում ազատագրական բանակը այդ նրբանցքը (corridoor) նկատեց որպէս կեանքի, արեան հաղորդակցութեան երակ Հայաստանի ու Ղարաբաղի միջեւ:

Բ. Պաքուն այդ տարածքը վերամկրտեց որպէս «Կարմիր Քիւրտիստան», հիմք ընդունելով 19-րդ դարի վերջերին ու 20-րդ դարի սկիզբներին Թուրքիայից այնտեղ փախած քիւրտերին: «Միջազգայնական Հանրապետութեան» կազմում Սովետական Քիւրտիստանը պիտի դառնար քրտական ազատագրական-յեղափոխական շարժման կեդրոնը: Իրականում սակայն Պաքուն Ազրպէյճանում բնակուող կէս միլիոն քրտերին կամ ստիպեց հեռանալ եւ կամ էլ պարտադրեց գրանցուել որպէս ազերի: Թէեւ «Կարմիր Քիւրտիստան»ը գոյատեւեց 1923-1929-ի ընթացքում, բայց Լաչինի շրջանը, մինչեւ նրա ազատագրումը, նկատուեց Ազրպէյճանի անբաժանելի մասը կամ պարզապէս Ազրպէյճան:

Գ. Պաքուն նպատակ ունէր այդ հայկական տարածքները քրտերին յանձնելով վերակենդանացնել այն ատելութիւնը որ Օսմանեան Կայսրութիւնը սերմանել էր հայ եւ քիւրտ ժողովուրդների միջեւ: Սակայն Պաքուն անտեսեց այն իրողութիւնը որ քրտերը խորապէս գիտակցել էին օսմանական խաղի իրենց պատճառած վնասներին եւ այլեւս չէին ցանկանում ընկնել նոյն ծուղակի մէջ: Այդ նկատելի դարձաւ ինչպէս Սարդարապատում, այնպէս էլ Ղարաբաղի ազատագրական պայքարում:

Կիւլիստանի շրջանը Լեռնային Ղարաբաղից անջատելով ու այն միացնելով Ազրպէյճանին, Պաքուն ստեղծեց Շահումեանի շրջանը: Կիւլիստանը, ինչպէս յայտնի է, եղել է ներքին Խաչենի իշխանութեան ճիւղաւորումներից մէկի՝ Մելիք Բեգլարեանների տոհմիկ բնակավայրը, որ 17-րդ դարում ընդգրկել է Ալհարակ (Գոյ Կէօլ) լճի ափերից մինչեւ Թարթար գետի ափերը ընկած տարածքը: 30 Ապրիլի, 1991 թ. Կորպաչովի թելադրանքով գեներալ Սավոնովն ու ազերի օսմանականները այնտեղ ձեռնարկեցին «Կոլցո-Օղակ» ռազմական գործունէութիւնը եւ շրջանը հայաթափ արեցին:

Գետաշէն եւ Մարտունաշէն մեծ հայկական գիւղերը միացուեցին Ազրպէյճանի Խանլար (Նարիմանով) շրջանին: Նոյնիսկ չխնայուեց հի-

նաւուրց հայկական Դաղիվանքը, որ եղել է Արցախի Խաչէն գաւառի կրօնական ու մշակութային կեդրոններից մէկը: Այն յայտնի է հայ վերածնունդը արտացոլող իր ճարտարապետական յուշարձանախմբով: Այն վկան է նաեւ վաղ շրջանում, Ա. դարում, Հայաստանում քրիստոնէութեան տարածման: Պաքուն գտաւ որ նա՝ իր այդպիսի հարուստ ազգային աւանդութիւններով ու դիմագծով, Լեռնային Ղարաբաղի մարզում կը վնասէր ժողովուրդների բարեկամութեան, եղբայրութեան ու սոցիալիզմին: Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաք Շուշիին բախտ վիճակուեց զրկուել իր դիրքից ու դառնալ ազերիների բնակավայր: 1920 թ. թուրք Խալիլ եւ Նուրի փաշաների ու մուսաւաթական Խոսրով Բէկ Սուլթանովի հրամանատարութեան տակ գործող զինուորական միաւորների կողմից Շուշին ենթարկուել էր բարբարոսական յարձակման ու ջարդերի: Հրդեհուել էին շուրջ եօթ հազար հայկական բնակարաններ, գրեթէ ողջ հայկական թաղամասը, եւ ջարդի ենթարկուել շուրջ 35,000 հայեր: 1921-1923 թուականներին վիճակը արմատապէս բարելաւելու փոխարէն Պաքուն այն աւելի է վատթարացնում: Ամէն ինչ արւում է, որ այն, յանուն ազգերի բարեկամութեան ամրապնդման օտարանայ հայութիւնից: Նորակազմ Լեռնային Մարզի մայրաքաղաք յայտարարուեց այդ օրերին աննշան Խանքանտի գիւղը, որ յետագայում վերանուանուեց Ստեփանակերտ: Ազրպէյճանին կցուեցին նաեւ Զանգեզուրին պատկանող 29 բնակավայրեր: Կարելի է ցուցակը շարունակել: Բայց այսքանն էլ բաւարար է ցոյց տալու համար թէ ինչպիսի շարժառիթներով, նպատակներով ու միտումներով էր Պաքուն «ստեղծում» անդամահատուած Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը:

Պաքուի ու նրա բարեկամների «հոգատարութեան» շնորհիւ, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Սովետական Միութեան ամենից անուշադրութեան մատնուած ու ամենադանդաղ զարգացող մասը էր: Այս անվիճելիօրէն ապացուցեց Սովետական Միութեան կուսակցական եւ պետական ղեկավարութիւնը իր 3 Մարտի, 1988 թ. որոշումին մէջ, որն առաջարկեց մեծ ներդրումներ՝ արմատական վերափոխումների համար: Մ. Կորպաչովը իր «Յուշեր»ում կրկնում է այն միտքը, որ եթէ Ազրպէյճանի ղեկավարութիւնը ԼՂԻՄ-ում սխալ ազգային քաղաքականութիւն չվարէր ու լրջօրէն զբաղուէր մարզի տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացման հարցերով ԼՂ-ի հարցը այդքան չէր սրուի ու բարդանայ[1]: Բայց նա մոռանում է որ եթէ 20-ական թուականներին Մոսկուան անտեղի զիջումներ չանէր ազգայնամոլ Պաքուին յանուն «միջազգային յեղափոխութեան», Ղարաբաղեան Հարց չէր առաջանայ երբեք. եթէ Մոսկուան ազրպէյճանական ազգայնամոլներին չպաշտպանէր 80-ական թուականներին, ազրպէյ-

1. Mikhail Gorbachev, *Memoires*, N.Y., London, 1996, pp. 333-340.

ճանցիները չէին չփանայ: Երբ իր սնած ազրպէյճանական ազգայնամոլութիւնը վերածուեց հակառուսական շարժման ու սկսեց Ազրպէյճանում կոտորել ռուսներին, միայն այդ ժամանակ ռուսները հասկացան իրենց սխալը ու սկսեցին օգնել հայերին: Աւելի ճիշդ, պատժել ազրպէյճանական ազգայնամոլութիւնը:

Մարզում անհամեմատ քիչ արդիւնաբերական կառոյցներ էին ստեղծուել, գիւղատնտեսութիւնը գրեթէ չի արդիականացուել, ճանապարհաշինութիւնը, կապը անմխիթար վիճակումն էր: Մարզում տարւում էր ազրպէյճականացման քաղաքականութիւն: Հայկական դպրոցներում նուազել էին հայագիտական առարկաների ուսուցումը, մարզի միակ բարձրագոյն ուսումնական հաստատութիւնում՝ մանկավարժական ինստիտուտում, իշխում էր ազրպէյճաներէնը: Հայաստանի անուանի գիտնականներին ու գրողներին արգիլուած էր այցելել մարզի կրթական ու գիտական հաստատութիւններն ու այնտեղ ելոյթներ ունենալ: Հայերի դէմ հալածանքը, տարբեր պատրուակների տակ, սովորական էր դարձել: Անխնայ քանդւում էին հայկական պատմական յուշարձանները: Փաստօրէն արգիլուած էր հայ եկեղեցիների գործունէութիւնը մարզում, երբ մէճիտները (մզկիթները) ազատ գործում էին: Հայ բնակչութեան, մանաւանդ երիտասարդութեան արտագաղթը անընդհատ մեծանում էր: Վերջին յիսուն տարում հայ բնակչութեան թիւը նուազել էր մէկ երրորդով: Մարզը հրապուրիչ չէր նոյնիսկ ազգայնական ազերիների համար: Երիտասարդ ղարաբաղցիք հաստատուելով Հայաստանում եւ Ռուսաստանի քաղաքներում դառնում էին միջազգային համբաւի արժանացած մարաջախտներ, գեներալներ, ատմիրալներ, դիւանագէտներ ու տարբեր ասպարէզների առաջատար գիտնականներ: Նրանք իբրեւ համայնք կազմաւորուելով ողջ Սովետական Միութեան տարածքով՝ ծաւալում էին Լեռնային Ղարաբաղի ազատագրական պայքարը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ Է

Այդ պայքարին մասնակցում էին Հայաստանի կուսակցական ու պետական գործիչներ: Հայաստանի գրեթէ բոլոր կուսակցական առաջնորդները Մոսկուա դիմել են Ղարաբաղի անմխիթար վիճակը բարելաւելու խնդրանքով (Ա. Միասնիկեան, Ա. Խանճեան, Գ. Յարութիւնեան, Ե. Քոչինեան, Յ. Զարուբեան, Կ. Դեմիրճեան, եւ ուրիշներ): Հայ եկեղեցին իրեն բնորոշ ինքնատիպ եղանակներով պայքարում ու աղօթում էր Ղարաբաղի ու ղարաբաղցու համար: Այդ պայքարում համախոհ էին բոլոր հայ ազգային կուսակցութիւններն ու համահայկական կազմակերպութիւնները: Ղարաբաղեան Հարցի լուծման համար գործօն

պայքար էր մղում Հայաստանի ինչպէս մտաւորականութիւնը, այնպէս էլ բանուորութիւնն ու գիւղացիութիւնը: Սովետական սփիւռքի հայութիւնը, ականաւոր ղարաբաղցիների ղեկավարութեամբ, Ղարաբաղեան Հարցի ռահվիրաներ էին: Սփիւռքը ոչ միայն մամուլով, այլ նաեւ Սովետական Միութեան արտասահմանի դիւանագէտների հետ իրենց հանդիպումներում անընդհատ շօշափում էին Ղարաբաղի ազատագրման հարցը: Այս հարցով նրանք դիմեցին նաեւ Ն. Խրուշչեւին, երբ նրա հետ Երեւանում հանդիպեցին Հայաստանի խորհրդայնացման 40-ամեակի տօնակատարութիւնների օրերին: Իսկ ղարաբաղցիք հաւաքական դիմումներով անընդհատ իրենց ցաւը յիշեցնում էին Մոսկուային: Մի օր էլ նրանց ասացին, որ հարցը գերագոյն կուսակցական ու պետական մարմիններում պաշտօնապէս քննարկելու համար անհրաժեշտ է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի կուսակցական ու սովետական մարմինների որոշում խնդրանքը, քաջ գիտնալով որ անհնարին է դա ձեռք բերել: Բայց ղարաբաղցիք այդ որոշումը կարողացան ընդունել 20 Փետրուարի, 1988 թ.: Այդ օրն էլ Հայաստանում ու Ղարաբաղում սկսեցին համաժողովրդական ցոյցերն ու հաւաքները: Այդպիսով պայքարը մտաւ իր պաշտօնական փուլը, որին յաջորդեցին ռազմականը, պետականը (Լեռնային Ղարաբաղի պետութեան ստեղծումն ու պահպանումը) եւ դիւանագիտականը (զինադադարի հաստատում ու բանակցութիւններ միջազգային մակարդակով ու միջազգային կազմակերպութիւններում):

ԱՆԱՐԴԱՐ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ԱԶԵՐԻՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս որ Սումկայիթում արձանագրուած Հայերի Ցեղասպանութեան պատճառները առաւելաբար կապուած են ազրպէյճանցիների գիտակցութեան մէջ տասնամեակների ընթացքում շարունակ կուտակուած ինքնատիպ արժէքային կողմնորոշման, ինքնարժեւորման, գերակայութեան զգացումի ելեւէջների հետ: Արեւմուտքի, Ռուսաստանի ու Թուրքիայի կեցուածքը Ազրպէյճանի, Ղարաբաղի ու Հայաստանի նկատմամբ ազերիների գիտակցութեան մէջ ամրապնդում են անպատժելիութեան գաղափարը, արդարութեան խորքային բացակայութեան համոզմունքը եւ իրենց բացառիկութեան բարդոյթը:

Կովկասեան թաթարները 20-րդ դարի սկիզբներին գրաւոր մշակոյթ չունեցող ցեղեր էին: Նրանք չունէին իրենց գիտական, կրթական ու մշակութային հաստատութիւնները: Նրանք հիմնականում գիւղաբնակ էին ու զբաղւում անասնապահութեամբ եւ մի քիչ էլ հողագործութեամբ: Պաքուն, որ այդ տարածքում գոյութիւն ունեցող գլխաւոր

քաղաքն էր, բնակեցուած էր հիմնականում ոչ-թաթարներով՝ ռուսներով, հայերով, հրեաներով, յոյներով, գերմանացիներով: Հարուստ աւատատէր թաթարների նոր սերունդը դառնում էր քաղաքային բնակիչ: Տարածքը յայտնի էր Պաքուի քարիւղով, որ հիմնականում պատկանում ու մշակւում էր ոչ-թաթարներով՝ ամերիկացիներով, անգլիացիներով, ռուսներով, հայերով, հրեաներով: Թաթարները նոր էին ընդգրկւում արդիւնաբերութեան ոլորտը՝ հիմնականում որպէս սեւագործ բանուորներ: Համայնքում հեղինակութիւն էին համարւում մուլաները, շէյխերը, աւատատէրերն ու ցեղապետները: Քաղաքական պատկանելիութեան ծագումն ու գիտակցութիւնը թաթարական երկրամասում սկսեց խմորուել 19-րդ դարի վերջերից, երբ ռուսական սոցիալական գաղափարները հասան թաթարաբնակ այլազան ազգերի, հիմնականում՝ ոչ թաթարների գիտակցութեան: Թաթարները յաճախ կազմակերպեցին սոցիալիստական շարժումը ֆիզիքապէս ոչնչացնելու փորձեր (1905-1907, 1918, 1920-1922, 1991 թթ.) եւ ազգային կոտորածներ (Շուշիում, Գանձակում, Հայաստանում, Նախիջեւանում, Զանգեզուրում): Ազգային քաղաքական գիտակցութիւնը կեանք արաւ Երիտթուրքական տիպարով կերտուած Մուսաւաթական Կուսակցութեամբ (1911-1912 թթ.): Թաթարները, ցեղային առումով, իրենց կցորդ էին համարում Հիւսիսային Պարսկաստանի Ատրպատականի շրջանի բնակիչներին, Թուրքերին, Միջին Ասիայի որոշ ցեղերին: Մարդկային յարաբերութիւններում դեռ նկատելի էր մոնկոլ-թաթարական աւանդոյթները: Երբ այդպիսի զանգուածին համարեցին որպէս «արեւելքի յեղափոխական շարժման կեդրոն», երբ նրան ներկայացրին «դեմոկրատական իսլամիզմի» պատուար, երբ իր իսկ կողմից ջարդուած, անիրաւուած ազգերին դրին նրանց տնօրինութեան տակ, յանուն միջազգայնական մեծ նպատակների, դեմոկրատիայի ու ազգերի բարեկամութեան: Երբ յանուն այդ բոլորի զոհաբերուեցին օրէնքը, արդարութիւնը, այլ ժողովուրդների իրաւունքները, կնքուած միջազգային պայմանագիրներն ու խոստումները, այդ ժամանակ եւ դրանց հետեւանքով ազերիները ատելութեամբ լեցուեցին իրենց հայ եւ այլ հարեւանների նկատմամբ, դարձան սանձարձակ, լկտիացան, իրենց իրաւունք տուին օրինազանց ու ցեղասպան դառնալու եւ Սեւ Ծովից մինչեւ Կասպից Ծովը, ողջ Պարսկական Ատրպատականն ու կովկասեան թաթարների տարածքները իրենցը հռչակելու: Այսպիսի գիտակցութիւնից ելնելով, 1991 թ. Հայտար Ալիեւը՝ Սովետական Պետական Անվտանգութեան Կոմիտէի գեներալը, Խորհրդային Միութեան Պոլիտբիւրոյի անդամը եւ արդի Ազրպէյճանական Հանրապետութեան նախագահը, իր հրապարակած «Օրէնքում» (Դեկրետում) գրում է. «Հայաստանը կեղծ երկիր է՝ ստեղծուած ազրպէյճանական հողի վրայ»:

Այսպիսի կեցուածքը մի կողմից արդիւնք էր կովկասեան թաթար-

ների եւ ազրպէյճանցիների դիմագրաւած հարցերին տրուած սխալ լուծումների, եւ միւս կողմից՝ պատճառ ազրպէյճանական ծայրայեղ ազգայնամոլութեան ու նրանց գործադրած ջարդարարական ու ցեղասպանական քաղաքականութեան:

ԳԼՈՒԽ ԺԱ.

ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԻՐԱՒԱԳԻՏԱԿԱՆ ԻՄԱՍՏԱՒՈՐՈՒՄԸ

Ցեղասպանության նկատմամբ իրաւագիտական մօտեցում մշակելու համար անհրաժեշտ եղաւ յաղթահարել որոշակի դժուարութիւններ:

Երկար ժամանակ ազդու էր ժողովրդական այն տեսակէտը որ կարեւորն ու վճռականը Հայերի Ցեղասպանութեան նկատմամբ նպաստաւոր հասարակական կարծիք ու միջազգային կեցուածք մշակելն է: Կարծում էինք որ եթէ պետութիւնները, կազմակերպութիւններն ու մարդիկ համոզուեն որ հայերի նկատմամբ Թուրքերը իսկապէս գործադրել են բնաջնջման ծրագիր, ապա դրանից մեքենայաբար կը բխի այդ ոճիրի ու ոճրագործի պատժելիութիւնը: Ցարզուեց որ յանցագործութեան փաստից մինչեւ իրաւագիտական իմաստաւորում, եւ այնտեղից էլ դէպի դատական վճիռ, եւ այս վերջինից էլ դէպի գործադրութիւն՝ ճանապարհին ընկած են խոչընդոտներ: Նախ անհրաժեշտ է յանցագործութեան փաստը կապել որոշակի գործող իրաւական օրէնքի, սկզբունքի, կանոնի ու նախադէպի հետ, ու դրանց միջոցով մեկնաբանել, ապա՝ դատարանով այն ապացուցել, հաստատել ու արտայայտել դատական վճռի ձեւով: Իսկ եթէ յանցագործութիւնը, այս կամ այն կերպ, առնչւում է միջազգային յարաբերութիւնների ու շահերի հետ, ու նաեւ մտնում է Միջազգային Օրէնքի իրաւասութեան մէջ, ապա առաջանում է մեծ տէրութիւնների քաղաքական ու տնտեսական շահերով թելադրուած «ուժի դիւանագիտութեան» յարուցած պատուարների յաղթահարման անհրաժեշտութիւնը:

Թուրքերի կողմից հայերի նկատմամբ գործադրուած Ցեղասպանութեան իրաւական մեկնաբանութիւն տալիս, պարզ դարձաւ որ այն, իր տարբեր կողմերով, մտնում է ինչպէս քաղաքացիական ու քրէական, այնպէս էլ միջազգային օրէնքի իրաւասութեան մէջ, թէեւ այսօր այն լուծելի է վերջինի գործադրութեամբ:

Այն ենթակայ է Քաղաքացիական Իրաւունքի սեփականատիրական եւ պարտաւորական իրաւունքի բաժինների մեկնաբանման, քանի

որ բռնագաղթով եւ զանգուածային ջարդերով թրքական կառավարութիւնը խախտել է դէպի իր քաղաքացիները ստանձնած պարտաւորութիւններն ու գոյքային յարաբերութիւնների մասին երկրում գործող օրէնքները: Քաղաքացու խախտուած պաշտպանութիւնը պէտք է վերականգնուի դատարանի իրաւարարութեամբ:

Թանզիմաթի (1839-1876)՝ Օսմանեան Կայսրութեան վերակառուցման հենց սկզբից, սուլթաններ Մահմուտ Բ. եւ Ապտիւլ Մեճիտ Ա.-ի օրով ընդունուեցին բարեկարգչական օրէնքներ: 3 Նոյեմբերի, 1839 թ., Կ. Պոլսի սուլթանական պալատի Կիւլհանէ կոչուող այգում հրապարակուեց կայսերական հրովարտակը՝ «Հաթթը Շերիֆ»ը (Սբբազան Գիր), որ յետագայում, ընդհանուր անունով, կոչուեց Թանզիմաթ: Այնտեղ կարդում ենք. «Եւ իրօք, մարդու համար առաւել թանկ բանը նրա կեանքի, պատուի եւ ունեցուածքի ապահովումն է: Մինչեւ անգամ այն անձը, որ իր բնածին խառնուածքով հակուած լինելով բռնութեան, վնաս է հասցնում պետութեան եւ երկրին, ամէն կերպ ձգտելու է ապահովել իր կեանքն ու պատիւը: Եթէ չլինի ունեցուածքի ապահովութիւն եւ մարդու անձը շարունակ գտնուի վտանգի առաջ, ապա ոչ ոք չի կարեկցի ոչ պետութեանը եւ ոչ էլ իր ազգին, եւ ձգտում էլ չունենայ պայքարելու հասարակութեան ընդհանուր բարօրութեան համար: Ընդհակառակը, եթէ ունեցուածքի ապահովութիւն լինի, ապա կասած չկայ որ բոլորն էլ իրենց աշխատանքային առաջադիմութեամբ կ'օժանդակեն պետութեան եւ երկրի բարեկեցութեանը»[1]: Ճիշդ է, Թանզիմաթի սկզբունքներն ու օրէնքները վերացան Սուլթան Ապտիւլ Համիտի կողմից, բայց դրանք ձեւականօրէն «գործում» էին 1908 թ. յեղափոխութիւնից յետոյ՝ Երիտթուրքերի տիրապետութեան օրերին: Վերջիններս խախտեցին սահմանադրական այդ սկզբունքը:

Քրէական իրաւունքով, ինչպէս յայտնի է, սահմանւում են ողջ հասարակութեան համար վտանգ ներկայացնող արարքները՝ յանցագործութիւնները, դրանց պատիժներն ու վերջինների նշանակման պայմանները: Օսմանեան Կառավարութիւնը, որպէս բռնագաղթի ու ջարդի պատասխանատու, պատժելի է ըստ օսմանական քրէական օրէնքում «յանցագործութիւն» եւ «պատիժ» հասկացութիւններին տրուած սահմանման եւ անձի կեանքի, նրա առողջութեան, ազատութեան ու արժանապատուութեան նկատմամբ գործադրուած վտանգաւոր արարքների ու պաշտօնէական իրաւունքի: Պատահական չէ, որ 1919-1921 թուականների Պոլսի Զինուորական Ատեանը հայերի զանգուածային բռնագաղթի ու ջարդի համար պատասխանատու Թուրք պաշտօնատարներին դատեց հիմնուելով «Կայսերական Օսմանական Քրէական Օրէնսգիրք»ի վրայ: Թուրքերը յոյս ունէին այդ դատավարութիւնը օգտագործել ոչ թէ չարիքի դէմ պայքարելու, այլ՝ խաղաղութեան վեհաժողովում դաշնակիցներից իրենց ի նպաստ խաղաղութեան պայմանագիր ձեռք բերելու համար:

Թուրքիան այնքան երկար, այնքան խորը կերպով, այնպիսի դաժան ձեւով ու այնքան շատ հաւաքականութիւնների, ժողովուրդների ու ազգերի նկատմամբ խախտեց քաղաքացիական ու Քրէական Իրաւունքի պահանջները, որ իր վտանգաւոր արարքները սկսեցին սպառնալ մարդկութեան: Թուրքիայի իրաւախախտումներն ստացան միջազգային նշանակութիւն: Այն, 19-րդ դարի երկրորդ կէսից, սկսեց իր արտացոլումը գտնել միջազգային իրաւական, դիւանագիտական ու քաղաքական փաստաթղթերում, որտեղ Թուրք կառավարութիւնից պահանջուեց բարենորոգումներ անցկացնել երկրում, եւ դառնալ ժամանակակից իրաւական պետութիւն: Թուրքիան միջազգային համայնքին խոստացաւ գործադրել բարենորոգումներ ու պաշտպանել օրէնքը: Որպէսզի իր խոստումը չկատարի, նա դիմեց բազմաթիւ վտանգաւոր քայլերի, այդ թւում նաեւ Հայերի Ցեղասպանութեան: Այսօր էլ նա շարունակում է մնալ մարդու իրաւունքները մշտապէս խախտող պետութիւն:

Ցանկանում ենք յիշեցնել, որ հանրային միջպետական յարաբերութիւնները կարգաւորող իրաւական սկզբունքների ու նորմերի (այսինքն՝ Միջազգային Իրաւունքի) համակարգի մէջ են մտնում նաեւ միջազգային չափանիշով ճանաչուած տեղային ու մասնաւոր օրէնքները, նորմերը (այդ թւում նաեւ սովորութենական օրէնքները), որոնք գործում են պետութիւնների սահմանափակ շրջանակի յարաբերութիւններում:

Այսպիսով, անվիճելի է որ Հայերի Ցեղասպանութիւնը նաեւ Միջազգային Իրաւունքի հարց է, եւ անհիմն են բոլոր այն պնդումները որ իբր իր հպատակների նկատմամբ թրքական կառավարութեան գործադրած յանցագործ արարքները բացառապէս Թուրքիայի ներքին գործն է:

Սխալ կը լինի ենթարկուել Հայերի Ցեղասպանութիւնը ուրացողների եւ նրա կազմակերպիչների պատժելիութիւնը մերժողների տրամաբանութեան, եւ Հայերի Ցեղասպանութեան իրաւական մեկնաբանութիւնն ու իմաստաւորումը կապել լոկ Նիւրենպերկեան դատավարութեան, եւ դրանից յետոյ ընդունուած համապատասխան որոշումների հետ: Թուրքերն ու նրանց համախոհները առաջ են քաշում այն վարկածը, որ 1945 թ. յետոյ ընդունուած վերոյիշեալ փաստաթղթերը կիրառելի չեն 1923 թ. առաջ կատարուած ոճիրների ու յանցագործութիւնների նկատմամբ, քանի որ իրաւական փաստաթղթերն ու օրէնքները չունեն յետադարձ ոյժ: Այս վարկածը հիմնաւորուած չէ, քանի որ

1. Աւետիս Փափազեան, *Թուրքական Վաւերագրական Նիւթեր Օսմանեան Կայսրութեան Ոչ-Մահմետական Ժողովուրդների Մասին (1839-1915)*, Երեւան, 2002, էջ 23:

այն անտեսում է մինչեւ Առաջին Աշխարհամարտը ու դրա ընթացքում ստեղծուած բազմաթիւ իրաւական փաստաթղթեր ու տեղի ունեցած կարեւոր իրողութիւններ:

ՕՍՄԱՆԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԶԱՆՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊԱՏԺԵԼԻՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՆԻՐԵՄՊԵՐԿԵԱՆ ԻՐԱՒԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ցեղասպանութեան վերաբերեալ օրէնքի բացակայութեան պայմաններում, համապատասխան կոնվենցիայի ընդունումից առաջ, տարբեր պետութիւններ ու կազմակերպութիւններ՝ ի նպաստ սարսափելի հալածանքների ու կոտորածների ենթարկուածներին, մարդասիրական միջամտութեան իրաւունք էին ձեռք բերում ըստ Ազգերի Իրաւունքի: Ցաշական պատերազմի յանցագործների Նիւրենպերկեան դատավարութեան ընթացքում ատեանը բազմիցս վկայակոչել է նման դէպքեր[1]: 1827 թ. Անգլիան, Ֆրանսան ու Ռուսաստանը, յունական-թրքական պատերազմի ընթացքում միջամտեցին որ վերջ տրուեն դաժանութիւններին: 1840 թ. Ա.Մ. Նահանգների նախագահը միջամտեց որ Թուրքիան վերջ տայ Դամասկոսում եւ Ռոտոսում ծաւալուող հակահրէական հալածանքներին: 1861 թ. Ֆրանսան միջամտեց որ Թուրքիան կանգնեցնի վայրագութիւնները Լիբանանում: Նոյն հիմքից ելնելով մի շարք պետութիւններ բողոքեցին Ռուսաստանի հակահրէական հալածանքների դէմ: Եւրոպական շատ երկիրներ նախազգուշացրին օսմանեան իշխանութիւններին կայսրութիւնում ծաւալուող հակաքրիստոնէական եւ ի մասնաւորի հակահայկական քաղաքականութեան առիթով: Խաղաղութեան Կոնֆերանսը նախապատրաստող յանձնաժողովի 15 անդամները 29 Մարտի, 1919 թ. զեկուցագրում հաստատեցին որ պատերազմի օրէնքների ու սովորութիւնների, մարդկայնութեան օրէնքների եւ Ազգերի Օրէնքի դէմ մեղանչողները ենթակայ են քրէական հետապնդման:

Ի՞նչ է Ազգերի Օրէնքը:

Մենք այն անուանում ենք ազգերի անհրաժեշտ օրէնք, քանի որ այն բնութեան օրէնքի կիրառումն է ազգերի նկատմամբ: Ազգերը պարտաւոր են այն պահել: Նրանք չեն կարող այն փոխել կամ էլ իրենց ազատել դրանից: Այնպիսին է մարդու բնութիւնը, որ ինքն ինքնաբաւ լինել չի կարող: Նա միշտ կարիքն ունի ուրիշին: Մարդը կարող է բնականօրէն գոյատեւել որոշակի համակեցութեան սկզբունքներով եւ փոխադարձաբար իրար օգնելով, եւ ոչ թէ իրար վնասելով: Ազգերի Օրէնքի գլխաւոր սկզբունքները կարելի է համարել.

1. Ամէն մի ազգ պարտաւոր է իր կարողութեան չափով նպաստել

1. *Law Reports Of Trials Of War Criminals*, 1948, Vol. VI, pp. 46-47.

ուրիշ ազգի երջանկութեանն ու առաջընթացին:

2. Ամէն մի ազգի անկախութիւնն ու ազատութիւնը պէտք է ապահովուի ու յարգուի. ոչ մի ազգ իրաւունք ունի ստիպելու մի այլ ազգի ապրելու ու գործելու իր կամքին հակառակ: Բռնութեան գործադրութիւնը բացառուած է:
3. Գոյութիւն ունեն ներքին ու արտաքին պարտաւորութիւններ: Դրանք ներքին են այնքանով, որքանով խիղճն է կողմնորոշում եւ բխում են մեր պարտականութիւնների կանոններից: Արտաքիններըը այլոց յարաբերութեան մէջ ստեղծուած իրաւունքներն են: Իրաւունքը կատարեալ է, երբ առաջնորդում է դէպի համապատասխան պարտաւորութեան գործադրումը: Անկատարները այն չեն կարող իրականացնել:
4. Բոլոր ազգերը հաւասար են: Մարդիկ իրենց բնոյթով բնականօրէն հաւասար են: Այս հիման վրայ կարելի է եզրակացնել որ այն՝ ինչ օրինական է ու ճիշդ մի ազգի համար, ճիշդ ու օրինական է միւսի համար: Իւրաքանչիւր ազգ ազատ է գործելու իր հայեցողութեամբ, եթէ այդ չի սահմանափակում կամ վնասում ուրիշի ազատութեան ու գոյութեան իրաւունքը:

Այս օրէնքի հիման վրայ Դաշնակիցները կարող էին պատասխանատուութեան կանչել ցեղասպան Թուրքին ու համապատասխանաբար նրան պատժել, եթէ նրանք այդ մտադրութիւնը ունենային:

Ազգերի Օրէնքի սկզբունքներից ելնելով Դաշնակիցները պատերազմի ընթացքում, 24 Մայիսի, 1915 թ. պաշտօնական գրութեամբ օսմանեան կառավարութիւնը ամբաստանեցին հայերի դէմ զանգուածային ջարդեր գործադրելու մէջ: Աւելին. նրանք շեշտեցին որ այդ արարքները պատժելի են մարդկայնութեան օրէնքով եւ որ պատերազմից յետոյ օսմանեան կառավարութեան անդամները եւ ջարդին բոլոր մասնակիցները անձնապէս պատասխանատու պիտի նկատուեն այդ արարքների համար: Իրաւագիտական սոյն մօտեցումը մոռացուեց Դաշնակիցների կողմից պատերազմից յետոյ, որովհետեւ վերացաւ մեղաւորին պատժելու ցանկութիւնը[1]:

Թուրքիայի կողմից կազմակերպուած հայերի զանգուածային բռնագաղթն ու ջարդը դատապարտելի ու պատժելի է նաեւ 1907 թ. Հագի Զորրորդ Կոնվենցիայի որոշումներով, որով կողմերից պահանջւում է բնակիչների ու պատերազմողների պաշտպանութիւնը եւ հսկողութիւնը կատարուի ըստ ազգերի օրէնքի սկզբունքների, որոնք բխեցւում են քաղաքակիրթ մարդկութեան հաստատած ու գործադրած օրէնքներից, մարդկայնութեան օրէնքներից եւ մարդկային հասարակաց խղճի

1. Richard Hovannisian, *Armenia On The Road To Independence*, Burkly, Univ. of California Press, 1967, pp. 51-52.

թելադրանքից: Կոնվենցիան թոյլատրում էր յենուիլ «մարդկայնութեան օրէնքի» ու խղճի վրայ, երբ բացակայում են յստակ ու չափօրինակ կանոններ, օրէնքներ ու սկզբունքներ:

Պատերազմի հենց սկզբին Թուրքերը խախտեցին մի շարք պայմանագրեր՝ դրանք միակողմանիօրէն չեղեալ յայտարարելով: Դա միջազգային իրաւունքի կոպիտ խախտում էր: Օսմանեան իշխանութեան սանձարձակութիւնները, օրինազանցութիւնները կանխարգելակող ու սահմանափակող եւ Թուրքիան դէպի ժողովրդավարական բարեփոխումներ առաջնորդող մի շարք պատմական դաշնագրեր չեղեալ յայտարարուեցին: 16 Դեկտեմբերի, 1914 թ., սուլթանական հրովարտակով չեղեալ յայտարարուեց 8 Փետրուարի, 1914 թ. այն համաձայնագիրը, որով նախագծւում էին հայկական տարածքներում գործադրուելիք բարենորոգումների ծրագիրը՝ երկու եւրոպացի վերահսկիչների հսկողութեամբ: Հայերի սոցիալ-քաղաքական ու տնտեսական ապահովութիւնը միանգամից գնաց դէպի 1883 թ. ծանր վիճակը: 15 Սեպտեմբերի, 1916 թ., օսմանեան արտաքին գործերի նախարար Հալիլը տեղեկացրեց որ կառավարութիւնը որոշել է չեղեալ յայտարարել 1856 թ. Բարիզի Հաշտութեան Պայմանագիրը, կնքուած 30 Մարտի, 1856 թ., Ղրիմի պատերազմից յետոյ, Ռուսաստանի եւ Ֆրանսայի, Անգլիայի, Սարտինիայի եւ Թուրքիայի միջեւ: Մեծացաւ Արեւմուտքի ազդեցութիւնը, Ռուսաստանը զիջումներ կատարեց, Տանուպը դարձաւ բաց՝ միջազգային առեւտուրի համար, Սեւ Ծովը յայտարարուեց չէզոք, արգիլուեցին զինուորական ամրութիւնների կառուցումը եւ զէնքի առկայութիւնը նրա ափերում: Մերժուեց 1871 թ. Լոնտոնի Յայտարարութիւնը, Ֆրանս-բրուսական պատերազմից յետոյ տեղի ունեցաւ որոշակի մերձեցում Թուրքիայի եւ Ռուսաստանի միջեւ: Վերանայուեցին 1856 թ. Բարիզի Կոնֆերանսի դրոյթները՝ ի նպաստ Ռուսաստանի եւ 1878 թ. Պերլինի Համաժողովի որոշումները կնքուած ռուս-թրքական պատերազմից յետոյ, ուր Թուրքերը պարտուեցին: Սերպիան, Ռումանիան եւ Մոնթէնեկրոն դարձան անկախ: Պուլկարիան դարձաւ ինքնավար՝ Օսմանեան Կայսրութեան մէջ: Աւստրիա-Հունգարիան պիտի բաժանէր հսկողութիւնը Պոսնիայի, Հերցեկովինայի եւ Նոզիտար սանճագի վրայ: Ռուսաստանը ստացաւ Պաթումը, Կարսը, Արտահանը եւ Պեսարաբիան: Հայկական Հարցը ստացաւ միջազգային ճանաչում եւ հայկական նահանգների բարեկարգումների հարցը դարձաւ օրակարգային: Այդ բոլոր միջազգային պայմանագրերը, ըստ Հալիլի, թուլացրել են Թուրքիան ու սահմանափակել նրա ինքնուրոյնութիւնը:

26 Մայիսի, 1915 թ., հայերի տեղահանութիւնն ու ջարդը սկսելուց շուրջ կէս տարի անց եւ դաշնակիցների յուշագրերից երկու օր յետոյ, Ներքին Գործերի Նախարարութիւնը Մեծ Վեզիրից խնդրեց որ կառավարութիւնը ընդունի բռնագաղթը պաշտօնապէս օրինականացնող յատուկ

մի օրէնք: Օրէնքը ստորագրուեց Մեծ Վեզիրի կողմից Մայիսի 29-ին, հաստատուեց կառավարութեան կողմից Մայիսի 30-ին, իսկ մամուլն այդ արտակարգ որոշման գործադրութեան մէջ լինելու մասին գրեց Մայիսի 27-ին: Օսմանեան Սահմանադրութեան պահանջների խախտումը չսահմանափակուեց սրանով: «Տեղահանութեան Ժամանակաւոր Օրէնքը», ի խախտումն Սահմանադրութեան 36-րդ յօդուածի, Խորհրդարան չմտաւ ոչ քննարկման եւ ոչ էլ օրինականացման համար: Այս հիման վրայ, յետ պատերազմեան Օսմանեան Խորհրդարանը իր 17 Նոյեմբերի, 1918 թ. նախտում այն յայտարարեց հակասահմանադրական, անօրինական:

Անօրինականութիւններ թոյլ տրուեցին նաեւ «Բռնագրաւման ու Սեփականազրկման Ժամանակաւոր Օրէնքը» ընդունելու ժամանակ: Բռնագաղթի ու ջարդի ենթարկուած հայորդիների ունեցուածքի կողոպուտի, վաճառքի եւ իւրացումի սկզբից ութ ամիս անց, 10 Յունիսի, 1915 թ., հրապարակուեց «Տեղահանուածների Գոյքի Գրանցման ու Պահպանման Մասին Հրահանգը»: Դրանից երեք ամիս անց, 26 Սեպտեմբերի, 1915 թ., մտածեցին օրէնք հաստատելու մասին: Այս մէկը քննարկուեց Խորհրդարանում, որտեղ «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կազմակերպութեան հիմնադիրներից Ահմետ Ռիզան, որ դարձել էր այլախոհ ի տես կառավարութեան սխալների, բացայայտեց նրա հակասահմանադրական, հակաօրինական ու անմարդկային ընոյթը: Նա գտաւ որ խախտւում է Սահմանադրութեան 16-րդ յօդուածը, քանի որ հարցը քննարկման է մտցւում Խորհրդարանի նիստից երկու օր առաջ միայն: Վկայակոչելով 53-րդ յօդուածը, նա պահանջեց այն հանգամանօրէն քննարկել Խորհրդարանում եւ գործադրել պատերազմից յետոյ միայն: Հիմնուելով 21-րդ յօդուածի վրայ, Ահմետ Ռիզան գտաւ որ անհիմն է տեղահանութեան ենթարկուած հայերի ունեցուածքը որակել «լքեալ գոյք», քանի որ նրանց տէրերը կամովին չեն թողել ու հրաժարուել իրենց սեփականութիւնից: Նա բազմիցս ընդգծում էր որ հայերի նկատմամբ կատարուածը «դէմ է արդարութեան ու օրէնքի»:

Հայերի նկատմամբ գործադրուած ոճրագործութիւնը իրաւականօրէն պատժելու համար հիմք կարող է ծառայել նաեւ այն փաստը, որ հայերի զանգուածային ջարդի ու կողոպուտի ծրագիրն իրականացնող «Թեշկիլէթ Խուսիսիէ» կազմակերպութիւնը զուրկ է օրինական հիմքից: Թուրքիայի ժամանակի Մեծ Վեզիրն ու արդարադատութեան նախարարը հաստատել են որ բանտերից արձակուած ոճրագործներից կազմուած այդ միաւորումները չեն ստեղծուել կառավարական դահլիճի որոշմամբ: Դրանք ստեղծուել են առանձին ղեկավարների նախաձեռնութեամբ եւ նրանց ողջ գործունէութիւնը հակասահմանադրական ու հակաօրինական է[1]:

1. Vahakn Dadrian, *The Documentation of the World War I Armenian Massacres in*

Նախնական Խաղաղութեան Կոնֆերանսը Բարիզում, 1919 թ. Յունուարին, ստեղծեց «Պատասխանատուութիւնների եւ Վաւերացումների Յանձնաժողով»ը իր մի քանի ենթակառոյցներով: Այն, հիմնուելով Հագի Կոնվենցիայի վրայ, հաստատեց որ Օսմանեան Թուրքիան պատերազմի ընթացքում գործադրել է բարբարոսական եւ անօրինական միջոցներ ու թոյլ է տուել պատերազմի օրէնքին ու սովորութեան հակասող արարքներ, եւ որ՝ Թուրքիան խախտել է մարդկայնութեան սկզբունքներն ու մարդկային իրաւունքը:

5 Մարտի, 1919 թ., «Պատասխանատուութիւնների եւ Վաւերացումների Յանձնաժողով»ի Առաջին Ենթայանձնաժողովը, որ ծանօթ է նաեւ «Տաննեւհինգի Յանձնախումբ» անունով, քաղաքացի բնակչութեան դէմ գործադրուած ոճիրների շարքում տարբերակեց հետեւեալները. սիստեմատիկ ահաբեկչութիւն, սպանութիւններ ու ջարդեր, կանանց անպատուութիւն, մասնաւոր սեփականութեան բռնագրաւում, կողոպուտ, կրթական, բարեսիրական կազմակերպութիւնների պատկանող ու հասարակաց ունեցուածքի բռնագրաւում, հասարակաց ու մասնաւոր ունեցուածքի ինքնակամ ոչնչացում, բռնագաղթ ու բռնի աշխատանք, քաղաքացիների մահապատիժ պատերազմական յանցագործութեան կեղծ մեղադրանքով եւ օրինախախտումներ քաղաքացիների ու զինուորականութեան նկատմամբ: Այս բոլոր կէտերով Թուրքերին կարելի էր դատապարտել ու պատժել, եթէ օրինապահութեան ցանկութիւն լինէր:

29 Մարտի, 1919 թ. իր եզրափակիչ ամփոփագրում Ենթայանձնաժողովը ընդգծեց որ ակներեւ է որ Թուրքիան խախտել է մարդկայնութեան օրէնքները բարբարոսական եւ անօրինական եղանակներով: Նրանք օրինազանց են ու ենթակայ պատժի: Սոյն գաղափարն իր անդրադարձը ունեցաւ Սեւրի Դաշնագրի 226-րդ յօդուածում, որով դաշնակիցներն իրաւունք են ստանում պատժելու յանցագործներին, իսկ Թուրքիան պարտաւորւում է նրանց յանձնել բոլոր նրանք, որոնք մեղադրւում են պատերազմի ու մարդկայնութեան օրէնքները խախտելու մէջ:

Դաշնակիցները, մանաւանդ Անգլիան, փորձում էր ստեղծել այն տպաւորութիւնը, որ ինքը յանձնառու է օրինազանց Թուրքերին արդարութեան ենթարկելու իր ստանձնած առաքելութեան, բայց 1 Նոյեմբերի, 1918 թ. գիշերը, եօթ Երիտթուրք ղեկավարների փախուստը բանտից, իբր, նրա հաշիւներն զգալիօրէն խախտեց: 3 Ապրիլի, 1919 թ., Գերագոյն Յանձնակատարի Տեղակալ Վեպը Բարիզի Խաղաղութեան Ժողովին ուղարկում է հետեւեալ հեռագիրը. «Պատժել բոլոր նրանց, որոնք կարելի է դասել հայերի նկատմամբ գործադրուած վայրագութիւնների մեղսակից, կը նշանակէր բազմաթիւ Թուրքերի մահապատժի ենթարկել: Հետեւաբար, ես առաջարկում եմ որ պատիժն ստանայ ինչպէս համաթուրքական բնոյթ՝ անդամահատելով Թուրքական Կայսրութիւնը, այնպէս էլ անհատական՝ դատելով իմ ձեռքում եղած ցուցակի մարդկանց, որոնց ճակատագիրը օրինակ կը հանդիսանայ միւսներին»: Անդամահատուեցին միայն Օսմանեան լծի տակ հիւծող արաբ ժողովրդների հողերը, որոնք մտան Անգլիայի ու Ֆրանսայի գաղութային կառոյցի մէջ: Հայկական հողերը մնացին Թուրքերի տիրապետութեան տակ, քանի որ մեծերը չցանկացան Հայաստանի խնամակալութիւնը ստանձնել: Իսկ պատերազմական ոճրագործների հարցը Անգլիան ու դաշնակիցները, աւելի ուշ, առաջարկեցին քննարկել Խաղաղութեան Դաշնագրի մշակման ընթացքում: Յետաձգեցին, որ թաղեն: Այս իմաստով ուշագրաւ է Անգլիական Գերագոյն Յանձնակատարութեան քաղաքական եւ իրաւական հարցերի պատասխանատու Լամպի 1920 թ. գարնան գրած հետեւեալ խօսքերը. «Եթէ դաշնակիցների շրջանում չլինի համագործակցելու անկեղծ ցանկութիւն եւ միակամութիւն, դատավարութիւնները պիտի անյաջողութեան մատնուեն»: Նա գտնում էր որ Դաշնակիցները սխալուել են մեղաւորներին պատժելու խոստում տալով:

Անկասկած, Դաշնակիցները որոշ դժուարութիւնների առաջ էին կանգնած հաւաստի փաստեր գտնելու, համապատասխան օրէնքներ առանձնացնելու, արդարադատութեան ընթացքը քաղաքական ազդեցութիւններից զերծ պահելու հարցերում: Բայց, ցանկութեան դէպքում, հնարաւոր էր եղած օրէնքների, սկզբունքների ու փաստերի հիման վրայ պատասխանատուութեան կանչել մեղաւորներին, ինչպէս այն արեցին Թուրքերը՝ Դաշնակիցներից հաշտութեան նպաստաւոր պայմաններ որսալու եւ աշխարհի հանրային կարծիքը խաբելու համար: Նրանք հաստատեցին յանցագործների մեղսակցութիւնը, կայացրին վճիռ, բայց այն գրեթէ չգործադրեցին:

Տիվանիէի արաբ երեսփոխան Ֆուատը, 28 Հոկտեմբերի, 1918 թ. պատրաստեց մի զեկուցագիր, որ Երեսփոխանական Ժողովին ներկայացրեց Նոյեմբերի 2-ին, ու գրանցուեց երկու օր անց: Նա պատերազմի ընթացքում գործած երկու դահլիճների անդամներին ներկայացրեց տասը մեղադրանք.— պատերազմի անտեղի մասնակցութիւն, նախայարձակութիւն, ռազմական ու զինուորական արուեստի անգիտակցութիւն, քաղաքական իշխանութեան չահագործում, տնտեսական ոճիր, Օսմանական Սահմանադրութեան ոգուն ու տառին հակադրուող եւ երկիրը դժբախտացնող ժամանակաւոր օրէնքների կիրառում, մարդ-

---

the Proceedings of the Turkish Military Tribunal, International Journal of Middle East Studies, 23, (1991), pp. 549-576. Vahakn Dadrian, *Genocide as a Problem of National and International Law*, Yale Journal of International Law, Vol. 14, No. 2, 1989, pp. 260-277.

կանց կեանքը, պատիւն ու սեփականութիւնը չեթէներուն վստահելով երկրում խառնակութիւն ստեղծելու ու աղէտալի ոճիրներու մասնակից դառնալու պատասխանատուութիւն, հարստանալու համար կողոպուտ եւ այլն: Սոյն մեղադրանքները ստուգելու համար, ըստ Սահմանադրութեան 31-րդ յօդուածի, ստեղծուեց յանձնաժողով (Հինգերորդ): Այն, իր գործունէութեան միամսեայ ժամանակաշրջանում ունեցաւ տասնչորս նիստեր, հարցաքննեց տասնչորս նախարարների, բացայայտեց Յատուկ Կազմաւորումների գործունէութիւնը եւ Տեղահանման Ժամանակաւոր Օրէնքի գործադրութեան հետեւանքով կատարուած ոճրագործութիւնները, ձեռք բերեց Ցեղասպանութիւնը հաստատող խիստ գաղտնի կարեւոր փաստաթղթեր:

Վարչամեքենայի Հետաքննութեան Յանձնաժողովը հետազօտեց պետական պաշտօնեաների զանցանքներն ու օրինախախտումները: Նա տարբեր կեդրոններում, մանաւանդ ջարդի կայաններում, յայտնաբերեց կարեւոր գաղտնագրուած հեռագրային հրամաններ, Յատուկ Կազմաւորումներին մերկացնող նոր տուեալներ եւ նախադատաքննական վկայութիւններ ու փաստեր: Պատրաստեց 130 կասկածելիներից իւրաքանչիւրի մասին մի ստուարածաւալ թղթապանակ: Կից նամակում Յանձնախումբը ընդգծեց, որ հաւաքուած մեղադրական փաստերը բաւարար են քրէական գործ յարուցելու համար[1]:

21 Դեկտեմբերի, 1918 թ. գործը անցաւ Ռազմական Ատեանի տնօրինութեան: Այն, ղեկավարուելով լոկ Օսմանեան Քրէական Օրէնսգիրքի 45, 170, 55 յօդուածներով եւ իր ուշադրութիւնը սեւեռելով «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կազմակերպութեան վրայ, հաստատեց հետեւեալ մեղադրանքները. Թուրքիայի աննպաստ ներգրաւումը պատերազմի մէջ, ղեկավարների ձգտումը իրենց գաղտնի ու ազգամնաս նպատակներն իրականացնելու, օրինական իշխանութեան կործանում, ինքնահարստացման մարմաջ, հայերի ջարդերի կազմակերպում եւ երկրի բնականոն կեանքի քայքայում եւ այլն: Անուանապէս նշուեց Էնվերի, Ճեմալի, Թալէաթի, Նազիմի, Շեքիրի, Պոլսի կառավարիչի եւ կուսակցութեան պատասխանատու քարտուղարների դերը: Դատարանը իր վճռում ընդգծեց որ նախարարները մեղաւոր են ինչպէս Թուրքիայի մուտքը պատերազմի մէջ իրականացնելու, այնպէս էլ՝ հայերի զանգուածային բռնագաղթն ու ջարդը կազմակերպելու մէջ: Թալէաթը, Էնվերը, Ճեմալը եւ Նազիմը մահուան դատապարտուեցին բացակայութեան: Դահլիճի նախարարները ստացան 15 տարուայ բանտարկութիւն՝ տաժանակիր աշխատանքային գաղութում: Շրջանային դատավարութիւններ եղան նաեւ Եոզկաթում, Տրապիզոնում, Խարբերդում եւ այլուր[1]:

Ցաջորդող քաղաքական կեանքի ալիքները եկան ու սրբեցին օրէնքի ուժով գրուած բոլոր փաստաթղթերն ու վճիռները: Գործը հասաւ այնտեղ, որ ոճրագործները հռչակուեցին ազգային հերոսներ ու նրանց աճիւնները տեղափոխուեցին ազգային դամբարաններ:

Այսպիսով, աւելի ճիշդ կը լինի ասել, թէ՝ այդ տարիներին ոչ թէ չկային Հայոց Ցեղասպանութիւնը իրաւական տեսանկիւնից իմաստաւորելու եւ ցեղասպանին պատժելու համար բաւարար օրէնքներ, այլ բացակայում էր արդարութիւնը բացայայտելու եւ մեղաւորին պատժելու կամքն ու ցանկութիւնը: Այսօր էլ հնարաւոր է անցեալի իրաւական բոլոր փաստաթղթերի հիման վրայ կայացնել համապատասխան վճիռ: Բոլոր դէպքերում, անցեալի իրաւական գործունէութիւնը անհետք չի մնայ՝ եթէ մենք այսօր հետեւողականօրէն հետապնդենք այն արդարութիւնը, որի համար, տարբեր նպատակներից ելնելով պայքարեցին շատերը, այդ թւում նաեւ թուրքերը:

1. Վահագն Տատրեան, Հայկական Ցեղասպանութիւնը Խորհրդարանային եւ Պատմագիտական Քննարկումներով, «Պայքար», 1995, էջ 7-88:

1. Հայերի Ցեղասպանութիւնը, ըստ Երիտթուրքերի Դատավարութեան Փաստաթղթերին, առաջաբանը, թարգմանութիւնը եւ ծանօթագրութիւնը Ա.Հ. Փափազեանի, Հ.Գ.Ա. հրատարակչութիւն, Երեւան, 1988, էջ 110-128, 132-135, 156-161, 180:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԻՐԱՒԱԿԱՆ ԻՄԱՍՏԱՒՈՐՄԱՆ ԵՒ ՑԵՂԱՍՊԱՆԻ ՊԱՏԺԵԼԻՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԱՅՍՕՐ

Խիստ ուշագրաւ է այն դէպքը, որ տեղի ունեցաւ, երբ, Նիւրեմպերկեան դատարանում, 6 Հոկտեմբերի, 1945 թ. մարդկութեան դէմ ոճիր հասկացութիւնը բնորոշւում էր որպէս սպանութիւն, բնաջնջում, բռնագաղթ, ստրկացում եւ քաղաքացիական բնակչութեան նկատմամբ թոյլ տրուած այլ անմարդկային արարքներ: Գերմանացի պատերազմական յանցագործների դատապաշտպանները առարկեցին, պնդելով որ «Խարտիան» նոր օրէնք է ստեղծում, որ չի կարելի գործադրել անցեալում (1945 թ. առաջ) կատարուած դէպքերի նկատմամբ: Ատեանը նրանց պատասխանեց ասելով. «Խարտիան յաղթանակած ազգերի կողմից իշխանութեան կամայական գործադրութիւն չէ: Ատեանի կարծիքով այն (Խարտիան) արտայայտութիւնն է արարչութեան ժամանակից գործող միջազգային օրէնքների»: Ցեղասպանութիւն հասկացութիւնը գիտական շրջանառութեան մէջ ներմուծող եւ ցեղասպանագիտութեան հիմքերը ամրապնդող Ռաֆաէլ Լամքինը գրում է. «Ցեղասպանութիւնը բաղադրեալ ոճիր է եւ բաղկացած է այնպիսի արարքներից, որոնք իրենք պատժելի են գոյութիւն ունեցող օրէնսդրութիւնների մեծամասնութեան միջոցով»: Ցիշենք որ Խաղաղութեան եւ Իրաւունքի Ցանձնախումբը ՄԱԿ-ի Ցեղասպանութեան Կոնվենցիան բնութագրել է որպէս «ներքին օրէնքներ, որոնք արդէն բոլոր երկրներում յայտնի են որպէս սովորական ոճիրների օրէնքներ»: Նկատի պէտք է առնել նաեւ այն, որ 1951 թ. «Ցեղասպանութեան Կոնվենցիա»յի հիմքում ընկած սկզբունքներն այնպիսի աքսիոմաներ են, որոնք պարտաւորեցնում են քաղաքակիրթ ազգերին՝ անկախ իրենց կողմից պաշտօնապէս ընդունուած կամ վաւերացուած լինելու հանգամանքից: Միաժամանակ, անհրաժեշտ է հաշուի առնել ցեղասպանութեան իրաւական անժամկէտանցելիութեան փաստը: 26 Նոյեմբերի, 1968 թ., ՄԱԿ-ի Ընդհանուր Ժողովը որոշում ընդունեց Մարդկութեան Դէմ Գործադրուած Ոճիրի եւ Պատերազմի Ոճիրի Նկատմամբ Օրինագրային Սահմանափակումների Անկիրառելիութեան Կոնվենցիան: Ցանցագործների արտայանձնումը թողնուեց պետութիւնների հայեցողութեան, սակայն պարզորոշ դարձրուեց, որ Կոնվենցիան պէտք է արտայայտուի ազգային օրէնսդրութեան մէջ:

Ցեղասպանութեան իրաւագիտական իմաստաւորման ասպարէզում ուշագրաւ նորութիւն են ներմուծել կիսապաշտօնական միջազգային կազմակերպութիւնները: ՄԱԿ-ի 38-րդ նստաշրջանի «Փոքրամասնութիւնների Պաշտպանութեան եւ Նրանց Նկատմամբ Խտրականութեան Կանխման» ենթայանձնաժողովի զեկուցագրում (1985 թ. Օգոստոս) հաստատւում է Հայերի Ցեղասպանութեան փաստը, ընդգծւում է նրա ուսումնասիրութեան գործնական ու տեսական կարեւորութիւնը եւ նշում որ նրա ուսումնասիրութիւնն ունի ամբողջացման կարիք: «Ժողովուրդների Մշտական Ատեանի Վճիռը» (16 Ապրիլի, 1984 թ.) ելնում է ցեղասպանութեան անժամկէտանցելիութեան փաստից, ցեղասպանութեան ՄԱԿ-ի պաշտօնական սահմանումից, եւ ընդգծում է որ թուրքերը մեղաւոր են եւ ենթակայ համապատասխան պատժի ու փոխհատուցման: Աշխարհի բոլոր կազմակերպութիւնները, ընդգծում է վճիռը, իրաւունք ունեն արդի Թուրքիայից պահանջելու նշուած պայմանների գործադրումը: Եւրոպական Խորհրդարանը, իր համապատասխան որոշման մէջ (18 Յունիսի, 1987 թ.), հիմնաւորուած է համարում որ Օսմանական Կայսրութեան կողմից գործադրուած բռնագաղթն ու ջարդը իսկական ցեղասպանութիւն է, բայց ընդգծում է, որ չի կարելի արդի թուրքական կառավարութիւնը դրա համար պատասխանատու նկատել: Բայց եւ այնպէս, նշում է որ Ցեղասպանութեան փաստի ուրացումով Թուրքիան շարունակում է հայ ժողովրդին զրկել իր պատմութիւնից, որ այդ ուրացման ոգին իր դերն է խաղում Յունաստանի հետ նրա յարաբերութիւնների լարուածութեան պահպանման, Թուրքիայի կողմից Կիպրոսի անօրէն գրաւման եւ քիւրտ ժողովրդի իրաւունքների ոտնահարման մէջ: Եւրոպական Խորհրդարանը հաւատացած է, որ Հայերի Ցեղասպանութեան ընդունումով Թուրքիան կատարած կը լինի բարոյական մեծ քայլ ու նպաստած կը լինի իր ներքին ու արտաքին բարդ յարաբերութիւնների լուծմանը: Այն գաղափարն է արտայայտւում, որ, վերջին հաշուով, անհնարին է Թուրքիայում իսկական ժողովրդավարական ընկերութիւն կառուցել առանց Ցեղասպանութեան ուրացումն ուրանալու: Եւրոպական Խորհրդարանի որոշման մէջ առաջ է քաշւում այն գաղափարը որ ցեղասպանութեան իրաւաբանական իմաստաւորումը կարող է նպաստել շատ հարցերի լուսաբանման, որոշ հարցերի լուծման, սակայն այն հիմնականում պէտք է ծառայի հայ-թուրք երկխօսութեան ու բանակցութեան սկզբնաւորման:

ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ցեղասպանութեան իրաւագիտական իմաստաւորումը, բնականաբար տանում է հայկական պահանջատիրութեան իրաւական հիմքերի ամրապնդման: Այս կապակցութեամբ մատնանշւում է հին Հռոմում գործող "possessio longi temporis" *օրէնքը, որն այսօր մեզ ներկայանում է նոր վերտառութեամբ. «Գերիշխանութեան Մշտական եւ Խաղաղ Տարածման» սկզբունք, որով վերջերս լուծուել են Արեւելեան Գրինլանդիայի, Լաս Պալմասի, Մինքուիրի, Էկրեհոսի եւ այլ տարածքային վիճելի հարցեր: Այդ սկզբունքը հաստատում է տարածքի նախատիրական հետեւեալ պայմանները*[1]*.*

ա. Տարածքի տիրութիւնը գաղտնի պէտք չէ լինի.

բ. Տարածքի տրամադրումը կամ ստացումը պարտադրուած պէտք չէ լինի: Այն տիրոջից բռնի ուժով վերցուած պէտք չէ լինի.

գ. Տարածքի վրայ իշխանութեան հաստատումը ոչ միայն խաղաղ, այլ նաեւ երկարատեւ պէտք է լինի:

Այս օրէնքի լոյսի տակ հասկանալի է դառնում թուրքերի ու նրանց բարեկամների այն պնդումը, որ հայերը եկուորներ են, իսկ թուրքերը՝ բնիկներ, որ Տիգրան Բ.-էն յետոյ հայերը անկախ պետականութիւն չեն ունեցել, որ թուրքերը Փոքր Ասիան չեն գրաւել հայերից:

Ըստ գործող օրէնքների, բռնագրաւումը չի կարող համարուել տարածքի վրայ իշխանութիւն հաստատելու հիմք: Ինչպէս յայտնի է, հայերը կամաւոր կերպով թուրքերին չեն յանձնել իրենց պապենական հողերն ու ունեցուածքը: Հայերն աւելի երկար են տիրել Հայկական Լեռնաշխարհի տարածքներին, քան՝ թուրքերն ու թաթարները: Աւելին. իրաւական յարաբերութիւններում գործում է նաեւ այն սկզբունքը, ըստ որի, ոչ մի իրաւունք չի կարելի բխեցնել սխալ կամ չար արարքից, կամ արդարութիւն հայցողը պէտք է մաքուր ձեռքերով ներ-

1. Shavarsh Toriguian, *The Armenian Question and International Law*, University of La Vern, 1988, p. 41.

կայանայ: Այսպիսով, բռնագաղթն ու ջարդը չեն կարող իրաւական հիմք հանդիսանալ հայկական հարստութիւններին տիրանալու համար: Անհիմն է նաեւ թուրքերի այն պնդումը որ ազգերի ազատ ինքնորոշման իրաւունքն այսօր չի կարելի կիրառել հայերի նկատմամբ, քանի որ նրանք այդ հողերի վրայ չեն ապրում այլեւս: Այդ սկզբունքը գրտնում է որ ինքը կիրառելի չէ այն ժողովուրդների նկատմամբ, որոնք բռնագաղթի են ենթարկուել:

Խիստ ակնյայտ է որ թուրքական տուեալ փաստաթղթի ընդունման պարագային հրեաներ իրաւունք չպէտք է ունենային 1948 թ. ստեղծել Իսրայէլի Հանրապետութիւնը: Քրիստոսից առաջ 7-րդ դարում Նաբուգոտնոսոր կայսրը հրեաների շուրջ ութսուն տոկոսը գերավարել էր Ասորեստան: Մի քանի տասնամեակ անց, երբ հրեաներին առաջարկուեց տուն վերադառնալ, այդ առիթից շատ քիչերը օգտուեցին: Քրիստոսից յետոյ Ա. դարու կէսերին եւ Բ. դարի սկիզբներին հակահռոմէական պայքարում երկրում մնացած հրեաների զգալի մասը կամ զոհուեցին եւ կամ էլ հեռացան երկրից: Հրէական հողում խիստ նօսրացաւ հրէական տարրը: Միջնադարում, Օսմանեան Կայսրութեան սկզբում, որոշ հրեաներ Սպանիայից տեղափոխուեցին Թուրքիա, բայց դրանից ետքը հաստատուեցին Պաղեստինում: Քրիստոսից յետոյ Դ. դարից՝ չհրատարակուեցին եբրայերէնով գրուած գրքեր: Հրէական գաղութներում աւագ սերունդը խօսում էր բարբառով: Բ. Աշխարհամարտի ընթացքում եւ դրանից առաջ Դաշնակիցները, հակառակ արաբ ժողովրդի կամքին, նպաստեցին որ ֆաշական ուժերի կողմից հալածուող հրեաները հաստատուեն Պաղեստինում: Յետագայում այնտեղ գաղթեցին այլ երկրների հրեաները: Այս հողի վրայ 1948-ին ստեղծուեց ու զարգացաւ Իսրայէլի Հանրապետութիւնը:

Պէտք է նկատի ունենալ որ թուրքական իշխանութիւնները ստորագրել են այնպիսի միջազգային փաստաթղթեր, որոնք ուղղակի կամ անուղղակի հաստատում են տեղահանուած հայերի իրաւունքը՝ վերատիրանալու իրենց ունեցուածքին, դրամին եւ վերադառնալու իրենց տները: Այսպէս՝ Պաթումի Պայմանագիր (յօդուած 10), Սեւրի Դաշնագիր (յօդուած 144), Ալեքսանդրապոլի Դաշնագիր (յօդուած 12), Կարսի Պայմանագիր (յօդուած 13), Ցրանգօ-թուրքական Համաձայնագիր եւ քեմալականների Էրզրումի Համաժողովի Յայտարարութեան 5-րդ կէտը: Բերենք մի քանի օրինակներ.

2. "Inhabitants and communities within the territory one Contracting Party, owning or having the right to use over property found within the territory of the other Contracting Party, can use, exploit, rent or sell in person or through agents. No one shall be deprived of property except for public interest and on the basis of compensation".

3. "The Turkish Government recognizes the injustice of the law of 1915 relating to Abondoned Properties, and the supplementary provisions thereof, and declares them to be null and void, in the past as in the future. The Turkish Government solemnly undertakes to facilitate to the greatest possible extent the return to their homes and re-establishment in their business of the Turkish subjects of non-Turkish race who have been forcibly driven from their homes by fear of massacre or any other form of pressure since January 1, 1914".

Նշենք, որ Սեւրի դաշնագիրը մինչեւ օրս պաշտօնապէս չի հերքուել, մերժուել, փոփոխուել, եւ ոչ էլ գործադրուել է:

4. Այդ երեք պայմանագրերում Թուրքիան ընդունում է հայերի շարժուն եւ անշարժ ունեցուածքի ու ազատ գործառնութեան իրաւունքը թուրքական տարածքներում:

5. Էրզրումի Յայտարարութիւնը (Թուրքիայի Ազգային Բակը) մշակուեց Էրզրումի եւ Սվազի ժողովներում եւ վերջնականապէս ընդունուեց 1920 թ., դեռեւս Պոլսում գտնուող թուրքական Երեսփոխանների ժողովում: Դրա հիմնական խնդիրն է ապացուցել որ ազգերի ազատ ինքնորոշման իրաւունքի հիման վրայ Թուրքիան կարող է շրջանցել Թուրքիան անդամահատող Դաշնակիցների որոշումը, եւ միացնելով Պատմական Հայաստանը, եւ Յունաստանին, Իտալիային ու Պուլկարիային խոստացուած տարածքներից ստեղծել Թուրքիայի Հանրապետութիւնը, Աթաթուրքի Հանրապետութիւնը:

Հայերին, Աթաթուրքը, պատմական իրենց հողերին տիրանալու ձգտման համար անուանում էր զաւթիչներ, գաղութարարներ, գաղութարարների դաշնակիցներ, իսկ այդ հողերը դարերով զաւթած ու հայերին իրաւազրկած թուրքերին ներկայացնում էր որպէս ազատարարներ, հակագաղութարարական պայքարի նուիրեալներ: Եւ Դաշնակիցները, որոնք խոստացել էին նպաստել Հայաստանի Հանրապետութեան ստեղծման, կամ լռում էին, կամ՝ հայերին խորհուրդ տալիս լեզու գտնել թուրքերի հետ: Ուշագրաւ է երկու կարեւոր հանգամանք: Յայտարարութիւնը չէր վկայակոչում «Թուրքիայի տարածքային ամբողջականութեան պահպանման սկզբունքը»: Նա այդ անել չէր կարող, քանի որ զաւթում էր ուրիշի հողերը՝ ազատագրական պայքարի դրօշի տակ: Յայտարարութիւնն այնպէս էր ձեւակերպուած, որ ազգերի ազատ ինքնորոշման համամարդկային իրաւունքից օգտուելու մենաշնորհը տրւում էր միայն թուրքերին՝ այդ սկզբունքից օգտուելու իրաւունքից զրկելով այլ ազգերին, այդ թւում նաեւ հայերին: Մինչեւ օրս էլ Թուրքիան ու Ազրպէյճանը հայերին, քրտերին եւ այլ ազգերին զրկում են ազգերի ազատ ինքնորոշման իրաւունքից: Այդ սկզբունքով

ղեկավարուողներին անուանում են «անջատողականներ», «երկրի տարածքային ամբողջականութիւնը խախտողներ», «դաւաճաններ» ու «անօրէններ»: Եթէ ազգերի ազատ ինքնորոշման իրաւունքը համամարդկային է, ինչպէս այն ներկայացրեց Ա.Մ. Նահանգների նախագահ Ուուտրօ Ուիլսընը իր «14 Կէտերում», ապա դրանից օգտուելու իրաւունքն ունեցել են հայերը, ինչպէս 1918-1923 թթ., այնպէս էլ դրանից յետոյ:

1927 թ. Քեմալական Թուրքիան միակողմանիօրէն խախտեց իր ստանձնած միջազգային պարտաւորութիւնները, եւ յայտարարեց որ ինքը իրեն ազատում է իր կողմից բռնագաղթի ենթարկուած հայերի պահանջատիրական հարցերի քննարկման պարտաւորութիւնից:

ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹԵԱՆ ԵՐԵՔ ԵՐԵՍՆԵՐԸ

Իրաւագիտութիւնը եւ դարաւոր դատական փորձառութիւնը թելադրում է որ ոեւէ հայցուորի, տուժածի դիմումն ու նրա ներկայացրած պահանջները քննարկելու ու բաւարարելու համար անհրաժեշտ է որ տուժողը ներկայացնի իր վնասները, իր կորցրածը: Ինչպէս միջազգային փորձառութիւնը ցոյց է տալիս, ցեղասպանութեան, ջարդի, կոտորածի ընթացքում տուժած կողմն ունենում է չորս բնոյթի վնասներ կամ կորուստներ:

Ա. Նիւթական (անշարժ գոյք, շարժուն գոյք, դրամ եւ այլն): Այս հարցի լուծումը համեմատաբար դիւրին է նկատուում: Ցեղասպանութեան կամ կոտորածի ենթարկուած շատ ազգեր ու ժողովուրդներ տարբեր աղբիւրներից հատուցում ստացան: Գերմանացիները մինչեւ օրս վճարում են իրենց զոհերին: Բայց հայոց լքեալ գոյքի հարցերը մոռացուեցին, ու հայերը գրեթէ ոչ մի նիւթական հատուցում ստացան մինչեւ օրս: Նրանց նիւթական կորուստները հաշուարկուում են միլիառներով:

Բ. Ցեղասպանութեան ժամանակ մահանում են միլիոնաւոր մարդիկ: Հայերը տուին աւելի քան մէկ եւ կէս միլիոն նահատակներ: Հրեաները տուին աւելին: Վախճանուածներին անհնարին է կեանք շնորհել: Նրանք կեանքի հատուցում ստանալ չեն կարող: Մարդկային կորուստի պահանջատիրութիւնը երբեմն մտնում է նիւթական հատուցման մէջ: Մարդու կեանքը ստանում է դրամական արտայայտութիւն: Այս հատուցումից էլ զուրկ մնացել են հայերը:

Գ. Մշակութային կորուստը նոյնպէս անհատուցելի է: Կործանուած կամ քանդուած պատմական յուշարձանները, մշակութային արժէքները անվերադարձնելի են: Կարելի է նորը ստեղծել, կարելի է նմանակը շինել, բայց ոչ այն՝ ինչ բարբարոսը քանդել է: Բայց ցաւալին այն է, որ եթէ այլ պարագաներում ցեղասպանութեան դադարեցումով դադարում է նաեւ մշակութային կորուստը, «մշակութային ցեղասպանութիւնը», Հայերի Ցեղասպանութեան դէպքում՝ պարագան այլ է: Հայ մշակոյթի նկատմամբ բարբարոսական վերաբերմունքը շարունակուում է Թուրքիայում, քանի որ Թուրքը նպատակադրուած է հայու հետքը վերացնել Պատմական Հայաստանից, որպէսզի կարողանայ դրա թրքականութիւնը հաստատել:

Դ. Հայերի Ցեղասպանութիւնը այն բացառիկ դէպքերից է, երբ միլիոնաւոր մարդիկ կոտորուեցին ու ջարդուեցին, որպէսզի ցեղասպանը տիրանայ նրանց հողերին, հայրենիքին: Հրեաները հող չկորցրին: Ընդհակառակը՝ շահեցին: Այդ պատճառով էլ Հրէական Ողջակիզումը քննարկելիս հողի հատուցման հարց չի առաջացել: Առաջացել է իրենց ապրած հողի վրայ պետականութիւն վերականգնելու խնդիրը: Հրէական Ողջակիզումը բացառիկ տեսակի ցեղասպանութիւն է: Նրա նմանը դժուար թէ հնարաւոր լինի գտնել: Հիթլերականները դաժանօրէն հալածելով ու իրենց տներից վտարելով հրեաներին, նպաստեցին որ նրանք վերադառնան իրենց հայրենիքը, հաւաքուեն իրենց հողում ու ստեղծեն արդի Իսրայէլի Հանրապետութիւնը, քանի որ ֆաշականները պայքարում էին սփիւռքացած հրեաների դէմ: Հրէական Սփիւռքի աղէտը դարձաւ հայրենիքի շինութեան ու ազգահաւաքման պատճառ: Սրանով բացառիկ է Ողջակիզումը: Այն բացառիկ է նաեւ նրանով, որ Ողջակիզումը չէր լինի, եթէ Հայերի Ցեղասպանութեան պատասխանատուները պատժուէին, մի բան, որի հետ զարմանալիօրէն համաձայն չեն որոշ հրեաներ: Օսմանեան Թուրքիան բնաջնջել փորձեց ու բռնագաղթի ենթարկեց հայրենաբնակ հային: Այդպիսով նա կործանեց ու քանդեց հայու տունը ու բռնի ուժով իւրացրեց Հայոց Աշխարհը: Նա պատճառ եղաւ հայ Սփիւռքի առաջացման ու հայերի ազգացրման: Նա բաժանեց հայը իր պատմական հողի մեծ մասից: Այն ինչ մնաց մեզ համար դարձաւ թթխմոր, որով մեր ողջ տունը պիտի վերականգնենք, մեր սուրբ հացը պիտի թխենք, մեր սուրբ նշխարները պատրաստենք: Թթխմորն սկսեց մեծանալ նախ ազգահաւաքով, գիտութեամբ, մշակոյթով, շուրջ 120 զօրավարներով ու տասնեակ մարաջախտներով մարմնաւորուող հայ զէնքի փառքով, Հայաստանի Երրորդ Հանրապետութեան հաստատմամբ ու ապա յաղթական Արցախեան ազատագրութեամբ:

Ցեղասպանութիւնները տարբերակուում են չորս խմբերի մէջ:

Գաղափարական, որ ձգտում է մի որեւէ խմբի ոչնչացնելով բռնի

կերպով ստեղծել միատարրություն: Այս խումբի մէջ է դասւում Հայերի Ցեղասպանությունը, Հրէական Ողջակիզումը եւ Կամպուչիայում Կարմիր Խմերների իրականացրած ցեղասպանությունը:

Պատժիչ կամ հատուցող ցեղասպանութիւն է կոչւում, երբ որեւէ խումբի ոչնչացմամբ վերացւում է տիրողին սպառնացող որեւէ վտանգ: Թուրքերը ձգտում են իրենց հակահայ կեցուածքը արդարացնել նման երեւոյթի պատրանք ստեղծելով՝ հայերը դաւաճան են, թուրքական բանակի պարտութեան պատճառ են: Անհրաժեշտ է վնասազերծել դրանց:

Երբ որեւէ խումբ միւսից տնտեսական մրցակցութեան մէջ պարտւում է, մանաւանդ իշխանութեան գլխին կանգնողը, ապա այն, իր բնոյթից ելնելով, ուրիշ մարդկային ու օրինական ելք չտեսնելով, դիմում է մրցակցին ֆիզիքապէս ոչնչացնելու տարբերակին: Այս տարրը նոյնպէս առկայ է օսմանեան իշխանութեան վարած քաղաքականութեան մէջ:

Բռնատիրական ցեղասպանութիւնը հնարաւոր է դառնում, երբ մի խումբ փորձում է վերացնել միւսին՝ վախի հետ կապուած դրդապատճառներից ելնելով:

Այսպիսով, հայ պահանջատիրութիւնը աւելի բարդ է, քան՝ ցեղասպանութեան ենթարկուած միւս ժողովուրդներինը: Հայն ունի արեան, նիւթական, մշակութային ու հողային պահանջատիրութիւն:

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐԱՄԱՆԿՈՒՄՆԵՐ ԻՐԱՒԱԳԻՏԱԿԱՆ ՈՒ ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒՄ

Մինչեւ 1944 թուականը, մինչեւ Ա.Մ.Ն.-ի Գոլոմպիայի Համալսարանի պրոֆեսոր Ռաֆայէլ Լեմքինի «Առանցքի Դերը Գրաւեալ Եւրոպայում, Գրաւման Օրէնքներ, Պետութեան Վերլուծութիւն, Հատուցման Առաջարկներ» մեծածաւալ գրքի հրատարակութիւնը, որտեղ առաջ էր քաշուել «ցեղասպանութիւն» նոր եզրը, այդ գաղափարը արտայայտելու համար միջազգային իրաւագիտական ու դիւանագիտական փաստաթղթերում օգտագործւում էին հետեւեալ բառերը. Holocaust (ողջակիզում), Massacre (ջարդ), Carnage (կոտորած), Calamity (աղէտ), Slaughter, Carnage (սպաննել), Murder, Slay (սպաննել), Atrocity, Crime, Nefariuos or Villainous Act (եղեռն): Հայերը նախընտրել են ԵՂԵՌՆ ու ՋԱՐԴ եզրերը, հաւանաբար այն պատճառով, որ երկար տարիներ չեչտել են երեւոյթի կապը՝ ողբի, սուգի, լացի, ցաւի, չարչարանքի, աղէտի հետ: Հրեաները նախընտրել են HOLOCAUST բառը, որ վերցուած է իրենց կրօնական բառապաշարից:

Իրաւագիտական առումով վերոյիշեալ եզրերը ունեն նուազագոյն երեք թերութիւն.

Ա. Ցոյց չեն տալիս ջարդի, կոտորածի նպատակը:
Բ. Ցոյց չեն տալիս սպանութեան, ջարդի, կոտորածի չափն ու ծաւալը: Դրա համար էլ այդ եզրերը օգտագործելիս բառի կողքին դրւում էր զանգուածային, մասսայական որոշիչը:
Գ. Անվիճելի է որ խօսքը վերաբերում է մարդասպանութեան (Homocide), բայց այն չի տարբերակւում սովորականից:

Այս թերութիւնների գիտակցութիւնը անհրաժեշտ դարձրեց մի այնպիսի նոր եզրի ստեղծումը, որ վերացնի իրաւագիտական նշուած

թերութիւններն ու անորոշութիւնները: 1944 թ. Լեմքինը գիտական շրջանառութեան մէջ դրեց «ցեղասպանութիւն-genocide» եզրը, որ աստիճանաբար, մասնագիտական ու ժողովրդական խօսքում տիրապետող դարձաւ, մասնագիտական ասպարէզից դուրս մղելով նախորդ եզրերը: «Ցեղասպանութիւն» եզրը արտայայտում է մարդկութեան դէմ կատարուած ոճրագործութեան բարձրագոյն աստիճանը: Նրա առանձնայատկութիւնը պայմանաւորուած է ոչ թէ սպաննուած մարդկանց քանակով, սպանութեան բարբարոսութեան աստիճանով, այլ բացառապէս տուեալ խմբին, ազգին, ցեղին, համայնքին ոչնչացնելու ցանկութեամբ, վճռակամութեամբ: Ինչպէս մարդասպանութեան դէմ օրէնքը ենթադրում է ընկերութեան մէջ անհատի ապրելու, գոյատեւելու եւ զարգանալու իրաւունքը, այնպէս էլ ցեղասպանութեան դէմ օրէնքը ենթադրում է տուեալ ազգին, ցեղին, կրօնական խմբին մարդկային ընտանիքում հաւասար իրաւունքներով ապրելու, գործելու եւ զարգանալու բնական իրաւունքը:

Լեմքինի եւ մի շարք կազմակերպութիւնների ջանքերի շնորհիւ մէջտեղ եկաւ այն Կոնվենցիան, որի համաձայն ցեղասպանութեան ոճիրը ենթակայ է հետապնդման, խափանման ու պատժի: Այդ Կոնվենցիայի առաջին յօդուածը հաստատում է, որ՝

ա. Ցեղասպանութիւնը ոճիր է միջազգային օրէնքի համաձայն.

բ. Խումբի անդամների սպանութիւնը, խումբի անդամներին լուրջ մարմնական եւ մտային վնաս հասցնելը մաս է կազմում ցեղասպանութեան.

գ. Խմբի համար դիտաւորեալ կերպով կեանքին սպառնացող պայմաններ ստեղծելը, ֆիզիկական ոչնչացման առաջնորդելը ցեղասպանութիւն է.

դ. Խումբի անդամների ծնելիութիւնը խաթարող ձեռնարկումները եւ տուեալ խմբի մանուկներին բռնի կերպով այլ խումբեր տեղափոխելը ցեղասպանութիւն է.

ե. Վերոյիշեալ ցեղասպանական ոճիրները պատժելի են օրէնքով, երբ գործադրւում են մասամբ կամ ամբողջութեամբ ոչնչացնելու համար որեւէ ցեղային, ազգային, էթնիկական ու կրօնական խումբի:

Ինչպէս դժուար չէ նկատել, Թուրքիայի Կառավարութիւնը այդ բոլորն անխիղճ կիրառել է հայերի նկատմամբ երկար տարիներ եւ ի մասնաւորի 1915-1922 թուականների ընթացքում: Այսինքն՝ հայերը թուրքերի կողմից ենթարկուել են ցեղասպանութեան: Այն տրամաբանութեամբ ու իրաւական հիմքով, որ Հրէական Հոլոգոստը կոչւում է նաեւ ցեղասպանութիւն, նոյն հիմքով ու տրամաբանութեամբ էլ հայերի ջարդերը, Հայկական Եղեռնը, պէտք է կոչել ցեղասպանութիւն՝ մարդու կողմից գործադրուած ոճիր: Նշենք, որ արդի ցեղասպանագէտները շեշտում են որ մինչեւ օրս տեղի է ունեցել երեք իրաւ ցեղասպանութիւն՝ Հայոց Ցեղասպանութիւնը Օսմանեան Կայսրութեան մէջ, հրեաների ու գնչուների ցեղասպանութիւնը ֆաշականների կողմից եւ հութու ցեղամոլների կողմից թութսիների ցեղասպանութիւնը Ափրիկէում, 1944 թ.:

Նկատելի են դարձել «ցեղասպանութիւն» եզրի անտեղի ու սխալ օգտագործման դէպքեր: Երբեմն այդ դառնում է լեզուական խարան, հակառակորդին կամ մրցակցին խայտառակելու միջոց: Ցաճախ այն կիրառւում է բնութագրելու համար մրցակցի կամ հակառակորդի կողմից հրահրուած որեւէ ծանր, սարսափելի կամ ֆաշական բնոյթի արարք, բայց առանց խումբը ոչնչացնել միտող յանցագործութեան: Այդ եզրը կիրառւում է նաեւ ազգապահպանման, իրենց գոյութիւնն ու ինքնութիւնը հաստատել ձգտող ազգային փոքրամասնութիւնները միաւորելու, համախմբելու ու լիցքաւորելու որպէս միջոց, քանի որ ընդհանուր աղէտը կարող է իրականացնել նաեւ այդ առաքելութիւնը: Այն շահագործւում է մարդկութեան ու միջազգային կազմակերպութիւնների ուշադրութեան արժանանալու համար: Իրաւ ցեղասպանութիւնը ինքնաբերաբար վերջին երկու դերակատարումները արձանագրեց հայերի ու հրեաների պարագային: Թուրքն ընդունում է իր կատարած մարդասպանութիւնը, զանգուածային ջարդը, բայց մերժում է իր ցեղասպան լինելու պարագան: Այս պարագաները պարտադրում են մեզ՝ հայերիս, Հայերի Ցեղասպանութիւնը աշխարհին ներկայացնելիս ելնել միայն ու միայն եզրի ընդունուած գիտական, մանաւանդ՝ իրաւագիտական ձեւակերպման, սահմանման պահանջներից:

Հրեաները իրենց նկատմամբ գործադրուած ցեղասպանութիւնը արտայայտելու համար առանձնացնելով Հոլոգոստ (Ողջակիզում) եզրը, գիտակցաբար թէ անգիտակցաբար, իրենց դրին նպաստաւոր վիճակում՝ առաջն առնելով եզրաբանական իրաւական վէճերի ու տարակարծութիւնների:

Որոշ ժամանակ, տարերայնօրէն, հրեաները իրենց տաճարի կործանումը պատկերող բառապաշարից օգտուելով օգտագործեցին Hurban կամ Catastrophe (կործանում, ոչնչացում, բնաջնջում, աւերածութիւն, աղէտ) բառերը ֆաշականների կողմից իրենց նկատմամբ գործադրուած ջարդը արտայայտելու համար: Երկար տարիներ ու նոյնիսկ այսօր նոյնպիսի եզրեր օգտագործում են հայերը, արաբները, եւրոպացիներն ու ամերիկացիները՝ թուրքերի կողմից հայերի ջարդը պատկերելու համար: Հրեաները իրենք հրաժարուեցին այդ եզրից, եւ ստիպեցին որ ուրիշները նոյնպէս հրաժարուեն ու հրէական ցեղասպանութիւնը արտայայտեն «Ողջակիզում» եզրով: Հայերը իրաւագիտական նրբութիւններով չզբաղուեցին: Այստեղ հրեաները շահեցին, իսկ հայերը տուժեցին:

Երբ Պաղեստինի սիոնիստական կազմակերպությունների ղեկավարները, հրեայ գրողներն ու մտաւորականները սկսեցին արտայայտուել եւրոպաբնակ հրեաների աղէտի, ոչնչացման մասին, եբրայերէն Shoah (Holocaust, ողջակիզում) եզրը մտաւ գործածութեան մէջ, թէեւ ընդհանրական չդարձաւ նոյնիսկ 1942 թ., երբ հրէական գործակալութիւնը 1942 թ. Նոյեմբերին յայտարարեց որ Եւրոպայում, ֆաշականների կողմից գրաւուած տարածքներում, տեղի է ունենում հրեաների Shoah: Երուսաղէմցի պատմաբան Բեն Սիոն Դինուրը (Dinaburg) առաջիններից էր, որ 1942 թ. գարնանը առաջ քաշեց այն տեսակէտը, որ Shoah-ն, Հոլոգոստը, մի աղէտ է, որ խորհրդանշում է աշխարհի ժողովուրդների մէջ հրեաների բացառիկ, առանձնակի տեղն ու վիճակը: Դժբախտաբար հայ իրականութեան մէջ ոչ ոք մտածեց հայերի կոտորածը առանձնակի եզրով տարբերակելու մասին:

Եբրայերէն shoah, awlah բառը (քաղդիերէն alaw), որին յաճախակի ենք հանդիպում հրէական Սուրբգրութիւններում, եւ որ նշանակում է զոհաբերութիւն՝ բովանդակ ողջակիզում (burnt offering wholly into the Lord) Եօթանասունեցում (Septuagint) յունարէն թարգմանուել է Holocaust (holokauston): Այն օգտագործուել է ինչպէս հեթանոսական զոհաբերութեան, այնպէս էլ հրէականի համար: Մարդկանց զոհաբերութիւն իմաստով այն առաջին անգամ օգտագործուել է Երեմիայի Մարգարէութեան (Ք.Ա. 627-585 թթ.) մէջ: «Բահաղին բագիններ կանգնեցին, որպէսզի իրենց որդիներին՝ իբրեւ Բահաղի ողջակէզների, հրով այրեն, մի բան, որ ես չեմ պատուիրել ու չեմ ասել, ոչ էլ անցել է իմ մտքով» (19. 5): Այսպիսով, Հոլոգոստ եզրը ունէր ընդգծուած կրօնական իմաստ, այն կապուած է Աստծուն զոհ մատուցելու գաղափարի հետ: Վերջինը հնարաւոր է դարձնում այն գաղափարը, որ հրեաները ողջակիզուել են Եհովայի համար, կրօնական պատճառներով: Այն, միաժամանակ ընդգծում է որ դա զուտ հրէական երեւոյթ է: Ողջակիզում եզրը օգտագործում է պատկերելու համար եւրոպաբնակ հրեաների ջարդը (ողջակիզումը) ֆաշական Գերմանիայի կողմից: Այստեղից հասկանալի են հրեաների այն պնդումները, որ Հոլոգոստը բացառապէս հրէական երեւոյթ է եւ չի կարելի այն կիրառել այլ ժողովուրդների նկատմամբ: Երբ շրջանառութեան մէջ դրուեց ցեղասպանութիւն եզրը, դիւրին եղաւ Հոլոգոստը համարել որպէս ցեղասպանութիւն, քանի որ այն իր մէջ ընդգրկում է հրեայ ազգին ոչնչացնելու գաղափարը: Հայ եղեռն, հայերի ջարդ, հայոց աղէտ, հայոց կոտորած բառերը չեն շեշտում, չեն ընդգծում հայ ազգի ոչնչացման գաղափարը:

Ցանկանում ենք ընթերցողի ուշադրութեան յանձնել այն ուշագրաւ իրողութիւնը, որ Աստուածաշունչը հայերէնի թարգմանելիս Սահակ Պարթեւ, Մեսրոպ Մաշտոց ու նրանց աշակերտները տուել են Հոլոգոստ յունարէն եզրի ճիշդ ու համապատասխան եզրը՝ ողջակիզում:

Անգլերէն եւ այլ թարգմանութիւններում մենք հանդիպում ենք "burnt offering wholly unto the Lord" արտայայտութեան: Այս մի անգամ եւս ապացուցում է Աստուածաշնչի գրաբար թարգմանութեան գիտական ճշգրտութիւնն ու լեզուական բարձր որակը: Խիստ ուշագրաւ է նաեւ այն փաստը, որ 1929 թուականին հրապարակած իր գրքում, Ուինսթըն Չրչիլը հայերի կոտորածները անուանում է «Հոլոգոստ»: Նա գրում է. "As for the Turkish atrocities, helpless Armenians, men, women, and children together, whole districts blotted out in one administrative holocaust. These were beyond human redress"[1]: Այս նշանակում է, որ մենք կարող էինք ու կարող ենք հայկական ջարդերի, կոտորածի, աղէտի, եղեռնի համար գտնել աւելի լաւ մի եզր, զուտ ազգային որոշակիութիւն արտայայտող եզր:

Ժամանակի ընթացքում Հոլոգոստ եզրը ենթարկւում է իմաստափոխութեան: Այն նշանակում է նաեւ.

ա. Մեծ կամ ամբողջական աւերածութիւն կամ ընաջնջում, մանաւանդ կրակով.

բ. Զանգուածային ջարդ կամ չմտածուած աւեր.

գ. Եւրոպաբնակ հրեաների սիստեմատիկ զանգուածային ջարդը ֆաշական կեդրոնացման ճամբարում Բ. Աշխարհամարտի ընթացքում:

Վերջինս ընդհանրապէս գրւում է մեծատառով: Վերջինիս սահմանումը ստեղծուեց նախնական իմաստի հիման վրայ՝ նկատի առնելով վերոյիշեալ երկու ընդհանուր սահմանումները եւ հասկացութիւնը կրօնական իմաստից մաքրելու միտումը: Այն պահում է երեւոյթը բացառապէս հրէական պահելու, այն գերմանական ֆաշիզմի հետ կապելու միտումը: Այս սահմանումով Հոլոգոստը շատ աւելի համահնչիւն է ցեղասպանութիւն եզրի հետ, եւ առանց դժուարութեան այն մտաւ վերջինիս ծաւալի մէջ՝ իր առանձնայատկութեամբ ընդգծուած:

Հայերս նոյն երեւոյթը արտայայտեցինք բոլոր համապատասխան եզրերով. եղեռն, ջարդ, ոճիր, կոտորած, աղէտ: Դրանք օգտագործուել են ողջ հայոց պատմութեան ընթացքում գործադրուած համանման երեւոյթները պատկերելու համար: Ցանկալի կը լինէր նախապատուութիւնը տալ մէկին ու այն հայացնել:

Թուրքիայի բարեկամ, պաշտպան, դաշնակից այն երկրները, որոնք անցեալում երբ կային ակնյայտ իրաւական հիմքեր Օսմանեան Կայսրութեան ղեկավարներին պատժելու՝ հայերի ջարդը, եղեռնը, կոտորածը ծրագրելու եւ գործադրելու համար, հրաժարուեցին այդ անելուց: «Ցեղասպանութիւն» եզրի շրջանառութեան մէջ մտցնելուց յետոյ շարունակում են իրենց ուրացումն ու անպատասխանատու կեցուածքը:

1.Winston Churchil, *The Aftermath*, 1929, p. 158.

Այս անգամ առաւելաբար դիմում են լեզուաբանական խաղերի: Հայկական «Հոլոգոստը» նրանք բնութագրում են որպէս մեծ աղէտ, ողբերգութիւն, մեծ կոտորած, ջարդ բայց ոչ որպէս ցեղասպանութիւն: Նրանք իրենց արդարացնում են, որ իրենք շարունակում են այդ դէպքերը բնութագրել ու պատկերել նոյն այն եզրերով, հասկացութիւններով ու բառերով, որոնցով նրանք կոչուել են դէպքերի արձանագրման օրից: Հայերն ու նրանց բարեկամները, պնդում են նրանք, ոչ մի հիմք ունեն նեղանալու եւ բողոքելու: Աւելին: Նրանք գտնում են որ հայերը հիմնականում մահացել են պատերազմի ու «պատերազմի վիճակի տրրամաբանութեամբ կատարուած տեղափոխութիւնների» դժուարութիւններից, Թուրքերի դէմ պայքարելիս ու Թուրքերին ջարդելու ընթացքում: Ջարդի ենթարկուածների թիւը փոքրացնելու միտումով նրրանք աղաւաղում են Օսմանեան Կայսրութեան բնակչութեան պատկերը, դեմոգրաֆական պատկերը: Այն իրողութիւնից, որ իրենք անկարող եղան ոչնչացնել հայ ազգը, Թուրքերը օգտագործում են ապացուցելու համար, որ իրենք չեն ունեցել հայերի ոչնչացման ծրագիր, այլապէս Ա. Աշխարհամարտից յետոյ աշխարհում այնքան շատ հայեր չէին մնայ, այդպիսի մեծ Սփիւռք չէր առաջանայ: Այսպիսով, ցեղասպանութիւն հասկացութիւնը, եզրը կիրառելի չէ հայերի նկատմամբ Թուրքերի վարած քաղաքականութեան նկատմամբ: Որքանով աշխարհի իրաւ գիտնականները բացայայտում են Թուրքիայի օրինազանցութիւնը հաստատող փաստաթղթեր եւ որքանով գիտնականները ձերբազատւում են կողմնակալ քաղաքագէտների ու դիւանագէտների ճնշումից, այնքանով ապացուցւում է որ հայերը Թուրքիայի կողմից ենթարկուել են ցեղասպանութեան: Այս հիման վրայ օր ըստ օրէ շատանում են այն պետութիւնները, կազմակերպութիւններն ու անհատները, որոնք սատար են կանգնում հայ պահանջատիրութեան:

Տեղին է ընթերցողի ուշադրութեան յանձնել Նիւրեմպերկի դատավարութեան գլխաւոր դատախազ Թելֆորտ Թէյլերի հետեւեալ արտայայտութիւնը. «Երբ դեռ "ցեղասպանութիւն" բառը չէր ստեղծուել, հայերի կոտորածները հենց այդ էին» – "The word 'genocide' had not yet been coined but that is what the Armenian massacres were."[1]

1. Talford Taylor, *The Anatomy of the Nuremberg Trials, A Personal Memoire*, Alfred A. Knopt, N.Y., 1992, p. 18.

ՀԱՅԵՐԻ ՈՒ ՀՐԵԱՆԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Ինչպէս գիտենք, ցեղասպանութիւնը որեւէ հաւաքականութեան նկատմամբ տուեալ խումբի, ազգի, պետութեան վարած բացասական քաղաքականութեան բարձրագոյն աստիճանն է: Հրեաները այլ ժողովուրդների հետ ունեցած իրենց յարաբերութիւնների բնոյթով աւելի շատ են գտնուել ցեղասպանական յարաբերութիւնների իրավիճակում: Համաշխարհային պատմութեան մէջ բազմաթիւ երկրներում (Ասորեստան, Բաբելոն, Հռոմ, Անգլիա, Ֆրանսա, Գերմանիա, Իտալիա, Սպանիա, Ռուսաստան, Արաբական Աշխարհում եւ այլն) եւ տարբեր ժամանակներում արձանագրուած են հակահրէական շարժումներ, ինչպէս պետական, այնպէս էլ ժողովրդական մակարդակով: Որոշ հեղինակներ հակասեմեթիզմ են տեսնում նոյնիսկ Հին եւ Նոր Կտակարաններում: Այս հիման վրայ միջազգային շրջանառութեան մէջ է դրուել հակասեմեթիզմ հասկացութիւնն ու եզրը, եւ խօսւում է տարբեր երկրներում ու ժամանակներում տարուող հակասեմեթիզմի ընդհանուր եւ մասնաւոր երեսների մասին[1]: Հայերն ունեցել են առճակատումներ, անհամաձայնութիւններ, թշնամանք տարբեր ազգերի ու պետութիւնների հետ իրենց արձանագրած յարաբերութիւններում, բայց գոյութիւն չի ունեցել հակահայկականութիւն գիտական եզրը միջազգային յարաբերութիւնների պատմութեան մէջ: Հակահայ քաղաքականութիւն է վարել միայն Թուրքիան: Այդ հաստատուել է տարբեր միջազգային փաստաթղթերում:

1. Meyer Weinberg, *Because They Were Jews*, A History of Anti-Semetism, in the series of "Contributions to the Study of World History, 1920 (republished in 1986), 288 pages; *History of Hate, The Dimensions of Anti-Semetism*, edited by David Berger, 1986; *Critical Issues of the Holocaust*, edited by Alex Grobman and Daniel Landes, The Simon Wiesenthal Center, Rossel Books, 1983.

2. Թուրքական պետությունը իր հաստատման օրից սկսել է իրականացրման, խտրականության, հալածանքի ու բռնատիրական քաղաքականություն վարել իրեն հպատակեցրած բոլոր ազգերի ու ժողովրդների նկատմամբ: Աստիճանաբար այն սաստկացրել ու խորացրել է՝ դրա մէջ ընդգրկելով բռնագաղթը, ազգերի ձուլումը, աքսորն ու զանգուածային սպանությունները: Թուրքական ջարդարարական, ցեղասպանական քաղաքականությունը հայերի նկատմամբ բացայայտօրէն դրսեւորուեց 19-րդ դարի կէսերից, աստիճանաբար զօրացաւ ու հիմնաւորուեց 1895-1897 եւ 1908-1909 թուականներին, ու բացայայտ ազգային քաղաքականություն դարձաւ 1914-1923 տարիներին: Այսպիսով, թուրքերի կողմից Հայերի Ցեղասպանության պատճառները թաղուած են թուրքական ողջ պատմության ընթացքում: Գերմանիայում հրեաներին բնաջնջելու քաղաքականությունը ծլեց այդ երկրում ֆաշականության յաղթանակին զուգահեռ (1923-ից): Այդ ուղղությամբ գործնական քայլեր արուեցին անցեալ դարի 30-ական թուականների կէսերից (1933-1936 թթ.): Անոր ամբողջական գործադրությունը տեղի ունեցաւ Բ. Աշխարհամարտի ընթացքում՝ ֆաշականների կողմից գրաւուած Եւրոպայում: Այս պատճառով էլ հրէական ողջակիզման պատճառները գտնում ենք գերմանական ֆաշականության պատմության, եւ ոչ թէ ողջ Գերմանիայի պատմության ծալքերում: Հրէական Ողջակիզումը պարտադրաբար ենթադրում է եւրոպական հրեաների ոչնչացման ծրագիրը, որ գործադրուեց հիթլէրականների կողմից Բ. Աշխարհամարտի ընթացքում:

3. Թուրքական պետությունների (Օսմանեան եւ Հանրապետություն) կողմից ցեղասպանության ենթարկուած հայերը բացառապէս այդ երկրի հպատակներն էին: Հազուադէպ կարելի էր հանդիպիլ այլ հպատակություն ունեցող հայերի: Գրաւեալ Եւրոպայի ողջակիզման ենթարկուածների թւում մեծ էր թիւը այն հրեաների, որոնք այլ հպատակություն ունէին՝ ֆրանսական, հոլանտական, դանիական, պուլկարական, յունական, ալպանական, սլաւական եւայլն: Դաշնակիցների յաղթանակից յետոյ այդ երկիրները իրենց հրեայ եւ ոչ-հրեայ քաղաքացիներին տէր կանգնեցին ու պարտուած Գերմանիաներից ու յաղթանակած դաշնակիցներից պահանջեցին համապատասխան հատուցում գերմանական տիրապետության տակ տուժած իրենց քաղաքացիների համար, որոնք վերջին հաշուով զոհուեցին դաշնակիցների յաղթանակի ճանապարհին: Հրէական Հարցը բազմատէր էր: Այն դարձաւ համաեւրոպական ու համաշխարհային: Հայկական Հարցը, Հայերի Ցեղասպանության հարցը մնաց անտէր: Հայերը թուրքերի կողմից ցեղասպանության չէին ենթարկուի, եթէ ընդունէին

Գերմանիայի ու Թուրքիայի օգտին լրտեսելու երիտթուրքական առաջարկը: Վերջիններս խոստացել էին իրականացնել հայկական նահանգներում բարեկարգումներ ներմուծելու ծրագիրը, եթէ հայերը ընդունէին առաջարկությունը: Հայերը տարբեր ճակատներում եւս պայքարեցին ու զոհուեցին ի նպաստ Դաշնակիցների:

4. Երբ գերմանական ֆաշականները յայտարարեցին իրենց ոճով Հրէական Հարցը լուծելու ծրագրի մասին, նրանք նկատի ունէին գերմանական գրաւման տակ գտնուող հրեաների ոչնչացումը: Այսինքն, տեղի էր ունենում արտերկրի եւ ոչ թէ Պատմական Հրէաստանի ու Իսրայէլի հրեաների ողջակիզումը: Երբ թուրքական կառավարությունը ծրագրեց ու գործադրեց Հայերի Ցեղասպանության ծրագիրը, նա նրկատի ունէր հիմնականում Պատմական Հայաստանում՝ հայ քաղաքակրթության օրրանում եւ Հայկական Կիլիկիայում արմատակալած հայերին: Այս էական տարբերությունն իր հերթին ծնում է երկու խիստ կարեւոր հետեւանքներ, բացառիկ նշանակություն ունեցող երկու առանձնայատկություններ:

Առաջին. Փախչելով, ազատուելով ֆաշական հալածանքներից, Եւրոպայի հրեաները հնարաւորություն էին ունենում ապաստանելու այլ՝ ազատ ու դեմոկրատական երկրներում: 30-ական թուականների կէսերից մինչեւ Բ. Աշխարհամարտի սկիզբները Անգլիայի օգնությամբ նրանք գալիս էին ու հաստատւում Պաղեստինում, որ գտնւում էր անգլիական գերիշխանության տակ: Այսինքն, ողջակիզումը նպաստում էր, որ հրեաները իրականացնեն ազգահաւաքի իրենց ծրագիրը: Աստիճանաբար Պաղեստինում մեծացաւ հրէական համայնքը: Երբ 40-ական թուականների կէսերից Պաղեստին հաստատուած հրեաները սկսեցին պայքարել յանուն անկախ պետականության ստեղծելու համար, հայրենադարձած հրեաները դարձան ազատագրական ուժերի զգալի մասը: Իսկ ցեղասպանությունից ազատուած հայերը իրենց հայրենիքից դուրս գալով սփռուեցին աշխարհով մէկ՝ միշտ երազելով նորից տուն վերադառնալու ու հայրենիքին տիրելու մասին: Հրէական ողջակիզումը նպաստեց ազգային հաւաքին, ազգի համախմբմանը ու հրէական պետականության հաստատմանը: Հայերի Ցեղասպանությունը ցրեց հայերին ու խիստ բարդացրեց Պատմական Հայաստանի մէջ ազատ ու անկախ հայ պետականություն հաստատելու հնարաւորությունը:

Երկրորդ. Թուրքերի կողմից կազմակերպուած Ցեղասպանության համար հայերի ոչնչացումը միջոց էր: Նրանց գլխաւոր նպատակը հայկական տարածքները հայազուրկ դարձնելով դրանք թուրքացնելն էր, որպէսզի ընդմիշտ վերանայ Պատմական Հայաստանում հայ պետություն հաստատելու հնարաւորությունը եւ յաւիտեան այդ տարածքները դառնան Թուրքիայի անբաժան մասը: Ցեղասպանությունը իրարից բա-

ժանեց հայ մարդն ու հայ հողը, հայ ազգն ու հայու հայրենիքը: Հրէական ողջակիզումը նպաստելով հրեաների տուն դարձին ու ազգահաւաքին, փաստօրէն իրար կապեց, իրար միացրեց դարերով իրարից բաժանուած հրեաներին ու հրեայ մարդն ու հրեայ հողը:

5. Եւրոպայում բնակուող հրեաների ճնշող մեծամասնութիւնը մոռացել էր իր մայրենի լեզուն ու խօսում էր իր բնակած երկրի ժողովրդի լեզուով: Որոշ տեղերում օգտագործութեան մէջ էին մնացել ինքնատիպ բարբառներ (օրինակ՝ Ռուսաստանում): Վերջին տասներկու դարերի ընթացքում եբրայերէն լեզուով գրքեր լոյս չեն տեսել: Իւրաքանչիւր երկրում ապրող հրեայ գրողը, գիտնականը, բժիշկը, պատմաբանը գրել է այն երկրի լեզուով, որտեղ ապրել է: Միջնադարում գրել են լատիներէնով: Իսրայէլ հաստատուելով, Եւրոպայից տեղափոխուած հրեաները սկսել են խօսել ու գրել մայրենի լեզուով: Ողջակիզումը նպաստել է եբրայերէնի վերակենդանացման, դրա պետական, գրական ու գիտական համաժողովրդական լեզու դառնալուն: Հայերի Ցեղասպանութիւնը հայերին հեռացնելով հայ հողից ու նրանց ցրելով աշխարհով մէկ, խիստ մեծացրել է օտար լեզուն մայրենի նկատող հայ երիտասարդների թիւը եւ պատճառ հանդիսանալ հայ լեզուի մաքրութեան թուլացման, ու խաթարել հայ լեզուի բնականոն զարգացման ընթացքը:

6. Ցեղասպանի ու զոհի յարաբերութիւնների յետագայ ընթացքը տնօրինելու երկու եղանակ է մեզ յուշում պատմութիւնը. կամ ուրացում եւ կամ յանցագործութեան ընդունում ու ներողութեան հայցում: Առաջինը առաջադրում ու գործադրում է Թուրքերի կողմից Հայերի Ցեղասպանութեան նկատմամբ, իսկ երկրորդը՝ գերմանացիների՝ հրեաների ողջակիզման նկատմամբ:

Ուրացողները ոչ միայն աստիճանաբար աւելի ու աւելի են վատթարացնում իրենց յարաբերութիւնները զոհի, այլ նաեւ ուրիշ ազգերի ու միջազգային կազմակերպութիւնների հետ: Թուրքիան կամայ թէ ակամայ վատթարացնում է իր համագործակցական կապերը պուլկարների, հունգարացիների, յոյների, արաբների, սլաւոնների ու քրտերի հետ: Պատմագիտութեան զարգացման ու քաղաքական մթնոլորտի պարզեցման հետեւանքով, Թուրքերի գործադրած Ցեղասպանութիւնը ուրանալը աւելի դժուարանում է: Որպէս հետեւանք, բազմաթիւ պետութիւններ, ազգեր, միջազգային կազմակերպութիւններ ստիպուած ընդունում են իրողութիւնը՝ Թուրքերի կողմից գործադրուած Հայերի Ցեղասպանութիւնը, ու վատթարացնում Թուրքիայի դիրքը միջազգային ընտանիքում: Ճշմարտութիւնը ծածկելու եւ իրականութիւնը աքողելու նպատակով ուրացող Թուրքիան հարկադրուած է լինում դիմելու անբանական ու ջղային քայլերի: Այսպէս. Մեհմետ Ալի Պիրանտը տեղեկանալով հայերի ու նրանց բարեկամների կողմից միջազգային չափանիշով Թուրքերի կողմից գործադրուած Հայերի Ցեղասպանութեան 90-ամեակի ոգեկոչումը, սարսափահար շեփորահարում է որ հայերը աշխարհի վրայ փաթաթում են մի նոր «Ցունամի», երկրաշարժ ու փոթորիկ[1]: Իսկ Դոկտ. Սետադ Լաչինները փորձում է սեպ խրել հայ-հրէական յարաբերութիւնների մէջ[2]:

Ուրացողները փաստօրէն, կամայ թէ ակամայ, կերպարանաւորում են ցեղասպանին, իրենց վրայ վերցնում անցեալի բացասական արարքները՝ առանց դրանց կատարողները լինելու: Արդի ուրացողը դառնում է ցեղասպան, ոճրագործ եւ այդպիսով հնարաւոր դարձնում ոճրագործութեան շարունակականութիւնը: Արդի ուրացող Թուրքը փաստօրէն դառնում է այսօրուան Էնվերը, Թալէաթը, Սուլթան Համիտը: Իր նախորդների սխալը ընդունողները ու զոհից ներողութիւն հայցող գերմանացին չի դառնում արդի Հիթլէրը, ֆաշականը եւ չի շարունակում նրանց կատարած սեւ գործը: Նա գերմանացի ազգը մաքրում է ֆաշական մեղքից եւ հնարաւոր դարձնում որ գերմանացին մաքուր խղճով, բաց ճակատով ու հպարտութեամբ ապրի մարդկութեան միջազգային ընտանիքում ու մասնակցի նրա տնօրինութեանը:

1. Mehmet Ali Birand, *Be Ready for the Armenian Tsunami*, Turkish Daily News, 01/04/2005.
2. Sedat Laciner, *Armenia's Jewish Sceptisms, Its Impact on Armenian Israel Relations* (The Armenian Issue and the Jews), London-Ankara, 2003.

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ԱՌԱՋԻՆՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Դոկտ. Փրոֆ. Փափազեանը ականաւոր թրքագէտ է, որ վերջին չորս տասնամեակների ընթացքում հարստացրել է հայ թրքագիտութիւնը իր ուշագրաւ տասնմէկ գրքերով, մանաւանդ աղբիւրագիտութեան ասպարէզում: Վերջին քսան տարիների ընթացքում նա իր գիտական վաստակն ու հմտութիւնը ի սպաս է դրել Հայերի Ցեղասպանութեան բարդ խնդիրների լուսաբանման գործի: Առանձնակի տեղ է գրաւում «Հայերի Ցեղասպանութիւնը Ըստ Երիտթուրքերի Դատավարութեան Փաստաթղթերի» (Երեւան, 1989, 254 էջ) գիրքը: Այդ հրատարակութեան պատրաստութիւնը (թարգմանութիւն, ներածութիւն, ծանօթութիւններ եւայլն) բացառիկ նշանակութիւն ունի, քանի որ անվիճելիօրէն ապացուցում է որ Օսմանեան Կայսերական Դատարանը առաջինն է ընդունել թուրքերի կողմից Հայերի Ցեղասպանութեան փաստը: Աւելին: Մինչեւ օրս, վերջին 85 տարիների ընթացքում, ոչ մի թուրքական կամ այլ երկրի դատական հաստատութիւն չի հերքել այդ ատեանի, նրա որոշումների ու վճիռների օրինականութիւնը:

1908-ի Երիտթուրքական յեղափոխութիւնը երբեմն անուանւում է նաեւ Թուրքական Սահմանադրութեան վերականգնման համար մղուող պայքարի յաղթանակ: Այն իր գաղափարական սկզբունքները թաղեց Ատանայի եւ Կիլիկիայի ջարդերում, իսկ Սահմանադրութիւնը թղթակոյտի վերածեց 1913 թ. պետական հարուածով եւ եռատիրական բռնատիրութեան հաստատումով: 1918 թ., Ա. Աշխարհամարտում Օսմանեան Կայսրութեան պարտութեամբ բռնատիրութիւնը տապալուեց ու սկսեց գործել Սահմանադրութիւնը: 4 Նոյեմբերի, 1918-12 Դեկտեմբերի, 1918 թ. Երեսփոխանական Ժողովի (Meclisi Mebusan) *նիստերի ընթացքում թուրք, քիւրտ եւ հայ երեսփոխանները իրենց ելոյթներում Երիտթուրքական իշխանութիւնները մեղադրեցին երկիրը քայքայելու, պարտութեան մատնելու, Սահմանադրութեան հիմնական յօդուածները (կեանքի, սեփականութեան ապահովութեան) եւ կոպիտ՝ գործընթացի կանոններ խախտելու մէջ: Այդ հիման վրայ, 1919 թ. Յունուարի 8-ին, Պոլսում կազմւում են ռազմական ատեաններ: Մարտի 8-ին Սուլթան Մեհմետ Զ. Վահիտէտտինի հրամանով Երիտթուրքական պարագլուխները եւ նախարարները յանձնւում են ռազմական արտակարգ ատեանների քննութեան: Շուրջ երկու տարի տեւած դատաքննութիւնը նրանց (Թալէաթ փաշային, Էնվեր փաշային, Ճեմալ փաշային, Պեհէտտին Շաքիր պէյին, Դոկտ. Նազիմ պէյին, Ճաւիտ պէյին, Սուլէյման Էլպիստանի պէյին, Մուսթաֆա Շերիֆ պէյին, Օսկան էֆենտիին, Դոկտ. Ռուզուհի էֆենտիին, Ազիզ էֆենտիին,– հեռակայ կարգով– Սայիտ Հալիմ փաշային, Միթհատ Շուքրի պէյին, Ահմետ Ճեւատ պէյին, Աթի պէյին, Զիա Կօքալփին, Քիւչիւկ Թալաթ պէյին, Ռիզա պէյին, Իպրահիմ պէյին, Հայրի էֆենտիին, Մուսա Քեազիմ էֆենտիին, Խալիլ էֆենտիին, Ահմետ Նեսիմ պէյին, Իսմայիլ Ճանփոլատ պէյին, Ապպա Հալիմ փաշային, Ալի Միւնիֆ պէյին, Շիւքրի պէյին, Քեմալ պէյին, Հիւսէյն Հաշիմ պէյին, Ռիֆաթ պէյին, Մեհմետ Էսատ էֆենտիին ներկայութեան) դատապարտեց տարբեր պատիժների՝ մահապատժից մինչեւ վարչական ու նիւթական տուգանքների:*

Ինչո՞ւ Օսմանեան Կայսրութեան վերջին Սուլթանը երկրի իրաւապաշտական ու իրաւագէտ սերուցքին հաւաքել էր՝ դատելու համար Երիտթուրքական իշխանութեան վերնախաւին: Որոշ հեղինակներ գրանում են որ այն արուեց Միութիւն եւ Առաջադիմութիւն կուսակցութիւնը ամբաստանելու պետական դաւաճանութեան եւ կայսրութիւնը տապալելու մէջ: Դատավարութեան ընթացքում նկատելի էր նման մի միտում: Զինուորականութիւնն էլ իր հերթին փորձում էր մեղքը բարդել պետական այրերի վրայ: Բայց մեղադրական փաստաթղթերում եւ վճիռներում պարզ նկատելի էր որ մեղադրանքի շրջանակը շատ աւելի լայն է: Այսպէս օրինակ. մեղադրական եզրակացութեան մէջ գրուած է. «Ներկայ հետաքննութեան գլխաւոր հարցն այն է, որ Հայերի տեղահանութեան ընթացքում, տարբեր ժամանակներում եւ զանազան վայրերում տեղի ունեցած յանցագործութիւնները եւ յատկապէս իւրաքանչիւր յանցագործութեան նկատմամբ օրէնքի հիման վրայ կատարուած քննութիւնները ցոյց են տալիս որ դրանք ոչ թէ սահմանափակ կամ տեղական բնոյթ են ունեցել, այլ կանխամտածուած իրականացուել են վերոյիշեալ անձերից բաղկացած եւ միասնական ոյժ հանդիսացող "յատուկ կեդրոնի" բանաւոր հրահանգներով եւ գաղտնի հրամաններով»:

Խարբերդի զինուորական ատեանի դատավճռում կարդում ենք. «Սոյն դատավարութեան ընթացքում լսուեցին մեղադրող եւ պաշտպանուող երկու կողմերին, մանրակրկիտ ուսումնասիրուեցին եւ հետաքննուեցին բոլոր դատական փաստաթղթերը: Կուսակցութեան

կեդրոնական կոմիտէի անդամ՝ մեղադրեալ Դոկտ. Պեհաէտտին Շաքիր պէյը, որպէս "Յատուկ կազմակերպութեան" նախագահ, Սթամպուլից դուրս գալով, սկսել է շրջագայել Տրապիզոնի, Էրզրումի եւ այլ վիլայէթներում: Միեւնոյն ժամանակ, բանտերից դուրս բերուած ոճրագործներից եւ այլ յանցագործներից կազմուած հրոսակախմբերի գլուխը անցնելով՝ տարբեր ժամանակներում եւ տարբեր վայրերում կոտորել է տեղահանուած հայերին եւ նրանց ունեցուածքը ենթարկել կողոպուտի: Նա իր նենգ ծրագրերը իրագործելու համար, այն վայրերը, ուր տեղի ունեցան այդ ողբերգական դէպքերը, ուղարկում էր նաեւ անտեղեակ եւ դիւրահաւատ այնպիսի մարդկանց, որոնք միտում էին վերոյիշեալ "Թեշքիլաթը մահսուսէին"՝ ակամայ ատելութեամբ եւ շահոյթ ստանալու մոլի ցանկութեամբ համակուած: Իր պարտականութիւնները կատարելու ընթացքում, յաճախ բանաւոր կարգադրութիւններ եւ երբեմն էլ ծածկագիր գաղտնի հրահանգներ է ուղարկել եւ "Թեշքիլաթը մահսուսէի" հրոսակախմբերին օգտագործել է իր անմիջական հրամանատարութեան ներքոյ՝ հայերին կոտորելու եւ բնաջնջելու նպատակով»:

Այսպիսով, Սուլթանի հրամանով ստեղծուած դատական ատեանների գլխաւոր նպատակներից է եղել պարզել նաեւ հայերի բռնագաղթի, կոտորածի, բնաջնջումի պատասխանատուներին ու նրանց պատասխանատուութեան ենթարկել:

Իսկ ինչո՞ւ էր այդ հարցով այդպէս մտահոգուած թուրքական իշխանութիւնը:

Որոշ հեղինակներ այն համարում են արդիւնք թուրքերի ապրած հիասթափութեան ու բարոյա-գաղափարական մակարդակի անկման: Ոչ միայն Թուրքիան պարտուած էր, այլ կործանուած էր մի ամբողջ մեծ կայսրութիւն: Դաշնակիցները յայտարարել էին որ իրենք մտադիր են մասնահատել կայսրութիւնը, եւ որպէս թուրքական պետութիւն թողնել Սեւ Ծովի հարաւային ափին մի փոքր տարածք: Այս վիճակը Թուրքիայում ստեղծեց հիասթափուածների մի հոսանք: Միւս կողմից, այն որոշակի խաւերին գրգռեց դէպի ապստամբութիւն, դէպի ազատագրական պայքար: Դրանք Մուսթաֆա Քեմալի հետեւորդները դարձան: Նոյն աղբիւրից ծնուած հիասթափուածների ու յեղափոխականների համախմբումները այս հարցում օգնեցին իրար: Հիասթափուողները ողբացին կայսրութեան կործանումը, յեղափոխականները ձգտեցին ամէն կերպ փրկել հնարաւորը: Հիասթափուածները լացուկոծով ողբերգութիւնը հասցրին զանգուածների գիտակցութեան, որպէսզի ազգայնական տարրը այն ատիճանաբար վերածի բռունցքի: Հիասթափական ճիչը օգտագործուեց որպէս դիւանագիտական-գաղափարախօսական զէնք: Մինչեւ Բարիզեան Վեհաժողովը ընկած ժամանակաշրջանում, կազմակերպուած թուրքական մի խումբ, թուրքական

քաղաքական թատերաբեմը լցրեց մեղաւորներ փնտռելու, դատապարտելու, պատժելու տեսարաններով: Այնտեղ դաշնակիցներին մատուցւում էր այն գաղափարը, թէ՝ թուրք ազգն իր մէջ ունի այնքան բարոյական ոյժ, որ կարող է ինքն իրեն մաքրել: Ատեաններում մեղադրողները ո՛չ հայերն էին եւ ոչ էլ դաշնակիցների ներկայացուցիչներ, այլ իրենք՝ թուրքերը: Այս դիւանագիտական ներկայացումը իր որոշակի ներգործութիւնը ունեցաւ Արեւմուտքի վրայ: Այն էապէս նպաստեց Քեմալական Շարժման: Բարիզեան Վեհաժողովից յետոյ այն կորցրեց իր գոյութեան իմաստը եւ Թուրքիան ու իր դաշնակիցները մոռացան 1918-1920 թթ. դատաքննութիւնները: Թուրքիան մինչեւ օրս էլ չի ցանկանում յիշել որ ինքը առաջինը ընդունել է 1915-1918 թթ. թուրքերի կողմից կազմակերպուած հայերի ջարդը: Կարծես այսօր Թուրքիայում նկատելի է դէպի «սուրբ անցեալի աւանդոյթները» վերադառնալու ցանկութիւնը: Այս առումով շատ աւելի պատուաբեր ու գիտական կը լինէր եթէ Իսթանպուլի Համալսարանը աշխարհի գիտնականներին հրաւիրէր՝ Օսմանեան Խորհրդարանի առաջարկութեամբ, եւ անձամբ Սուլթանի հրամանով ստեղծուած ու երկրի իրաւագիտական մտքի սերուցքից կազմուած 1919-1920 թթ. Թուրքիայի Զինուորական Ատեանի վճիռների քննութեան:

Սոյն փաստաթուղթի կարեւորութիւնը հայերիս թելադրում է որ յաճախակի կրկնուի նրա հրատարակութիւնը, այլեւ լոյս տեսնեն դրա թարգմանութիւնները տարբեր լեզուներով: Հեղինակը կարողացել է ընթերցողին տրամադրել գրքի երկրորդ, բարելաւուած տարբերակը, ակադեմիկոս Նիկոլայ Յովհաննէսեանի ուշագրաւ ներածականով: Յաւօք ենք արձանագրում այն փաստը, որ տուեալ խիստ կարեւոր փաստաթուղթը ցարդ ունի լոկ իր արաբերէն եւ անգլերէն տարբերակները: Արժանին պէտք է մատուցել նաեւ «Նոր Հայաստան» օրաթերթի խմբագիր Վահան Վահանեանին՝ գրքի հրատարակութեան համար:

ԳԼՈՒԽ ԺԲ.

ՀԱՅԵՐԻ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԴԻՈՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՐԵՍՆԵՐԸ

Դիւանագիտութիւնը բանակցելու արուեստն ու գիտութիւնն է: Այն, շահերի բեւեռացուածութեան ու տարբերակուածութեան պայմաններում, որոշակի կողմի, խմբի, կուսակցութեան, ազգի ու պետութեան շահերի պաշտպանութիւնն է, ըստ գործող միջազգային օրէնքների եւ սկզբունքների: Այն կարող է տեղի ունենալ տարբեր մակարդակներում եւ այլամակարդակ կողմերի միջեւ:

Հայկական Հարցի դիւանագիտական իմաստաւորման ու լուծման փորձերն սկսեցին հայկական պետականութեան բացակայութեան պայմաններում: Այն կատարուեց կաթողիկոսական, պատրիարքական, եպիսկոպոսական եւ տարբեր տեսակի խմբակների ու կազմակերպութիւնների մակարդակով: Ցեղասպանութեան ոճիրի գործադրման ընթացքում այդ աւանդոյթը շարունակուեց: Բայց դեռ Առաջին Աշխարհամարտի աւարտից առաջ, Մայիսի 28-ից, այն նաեւ ստացաւ պետական դիւանագիտական հանգամանք:

Հայաստանի Առաջին Հանրապետութեան դիւանագիտութեան առաջնային խնդիրն էր հասնել այնպիսի խաղաղութեան դաշինքի կնքման, որ նորաստեղծ Հայաստանի սահմաններում հնարաւորին չափ աւելի մեծ տարածքներ ընդգրկուէին Մեծ Հայքի հողերից, որ նորաստեղծ պետութիւնը կարողանար ունենալ ճշգրտուած ու ապահով սահմաններ, ու կարողանար բարի դրացիական յարաբերութիւններ հաստատել շրջանի բոլոր երկրների հետ: Այդ առաքելութեան իրականացման ընթացքում Ցեղասպանութիւնը դարձաւ դիւանագիտական միջոց: Ցեղասպանութեան հարցը առաջ քաշելով եւ Թուրքերին ոճրագործութեան մէջ ամբաստանելով, հայերը զօրաւոր բարոյական-քաղաքական հարուած էին հասցնում հայկական հողերը բռնագրաւած Թուրքիային: Բռնագաղթի ու ջարդի փաստերը ազդու փաստարկներ էին հաստատելու, որ այդ հողերը դարերով պատկանել են հայերին: Դրանք միջոցներ էին համաշխարհային հանրութեան գութը, համակրանքը եւ սէրը թեքելու դէպի անիրաւուած ու տուժած հայ ժողո-

վուրդը: Եւ վերջապէս, Ցեղասպանութեան հետ աղերս ունեցող հարցերի քննարկումը, որոշ ժամանակ, զգալիօրէն թուլացնում էր նպաստաւոր հաշտութեան պայմանագիր ձեռք բերելու Թուրքիայի ջանքերը: Նոյնպիսի դիւանագիտական քայլերի դիմեցին նաեւ հրեաները, լեհերն ու ուքրանացիները՝ Երկրորդ Աշխարհամարտից յետոյ:

Երբ մեծ տէրութիւնները, ներառեալ նորակերտ Խորհրդային Ռուսաստանը, սկսեցին կորցնել իրենց հետաքրքրութիւնը Հայկական Հարցի երաշխաւորուած լուծման նկատմամբ, նրանք Հայաստանի իշխանութիւններին խորհուրդ տուեցին «լեզու գտնել Թուրքիայի հետ», «հարցերը լուծելու համար բանակցել Թուրքիայի հետ»: Այդպիսի ճնշման տակ, ի վնաս հայկական կողմի, այնպիսի փոփոխութիւններ ներմուծեցին հայ-թուրքական յարաբերութիւնների կառոյցում, որն իր հերթին խիստ դժուարացրեց հայերի պահանջատիրութեան ու Ցեղասպանութեան հարցերի շեշտաւորումն ու առանձնացումը: Զօրավար Անդրանիկն ու նրա Երեւանի Արեւմտահայերի կազմակերպութիւնը առարկեցին դիրքորոշման նման փոփոխութեան դէմ: Անկեղծօրէն պէտք է նաեւ ընդունել, որ հարցի լուծման երկու տարբեր լիազօրուած պատուիրակութիւնների մասնակցութիւնը նպաստեց պարտուած Թուրքիային:

Խորհրդային տարիներին Ցեղասպանութիւնը տարբեր դիւանագիտական դերակատարումներով հանդէս եկաւ: Խորհրդային քարոզչութիւնը հայերին, այս կամ այն ձեւով, յիշեցնելով Թուրքերի գործած ցեղասպանութեան փաստը, աշխատում էր ուժեղացնել նրանց ռուսամէտ կեցուածքը (ռուսը հային կարող է փրկել թուրք-թաթարական ջարդից, շրջանում ռուսը հայի միակ բարեկամն ու յենարանն է): Բայց հային արգիլուած էր ըստ էութեան քննարկել Ցեղասպանութեան հարցը, որ համարւում էր ազգամոլական ու ազգային թշնամանք սերմանող: Երկրորդ Աշխարհամարտի օրերին, երբ օրակարգի վրայ էր Կովկասեան Ճակատի ապահովութիւնն ու Խորհրդային Բանակի մուտքը Պատմական Հայաստան, Հայկական Հարցն ու Ցեղասպանութիւնը օգտագործուեցին հակաթրքական զգացումներ խմորելու համար: Պատերազմից յետոյ, այն դարձաւ խորհրդային դիւանագիտութեան գործիք՝ 1914-ի ռուս-թրքական սահմանը վերականգնելու փորձերում: Սառը պատերազմի տարիներին, երբ Ատլանտեան Ուխտի անդամ Թուրքիան իր տարածքում պահում էր ամերիկեան ռազմական կայաններ, Հայկական Հարցի ու Ցեղասպանութեան հարցերի յիշատակումը այնքանով էր թոյլատրելի, ինչքանով հակաթուրքական ու հակաամերիկեան զգացումներ էր առաջացնում՝ առանց վիրաւորելու ՍՍՀՄ-ում ապրող թուրանական ցեղերին ու նպաստելու հայկական ազգայնական ոգուն: Հայերին յաջողուեց նուաճել թոյլատրուածից աւելին: Երբ 1965-ին հայերն սկսեցին այն դիտել քաղաքական ու իրաւական առումով,

խորհրդային ուժերը փորձեցին այն արգիլել: Զստացուեց: Ղարաբաղեան Շարժման ծաւալման ընթացքում հայ յեղափոխականները ստիպեցին Հայաստանի Խորհրդարանին ընդունել Հայերի Ցեղասպանութիւնը, դատապարտել Թուրքիային եւ պաշտօնականացնել հայերի պահանջատիրութիւնը: Ժողովուրդը տուեալ որոշումը դարձրեց յեղափոխական շարժման դրօշ, յեղափոխութեան դիւանագիտական զէնք: Ազգերիներն ու Գորպաչովականները ձգտեցին Ցեղասպանութեան յուշերով վախեցնել հայերին եւ ստիպել վերջիններին հրաժարուել Արցախից: Նրանք ակնարկում էին որ Ազրպէյճանում ապրող շուրջ չորս հարիւր հազար հայերի նկատմամբ ազերի ամբոխը կարող է նորից գործադրել զանգուածային ջարդի ծրագիրը: Սումկայիթում նրանք սկսեցին գործադրել արիւնով հայերին վախեցնելու հին ծրագիրը: Աւելի ուշ՝ այն կրկնուեց Պաքուում:

Ժողովրդական յեղափոխութիւնը յաղթանակեց: Ծնուեց անկախ Հայաստանի Հանրապետութիւնը: Կեանքը նրա օրակարգի վրայ դրեց երկու կենսական խնդիր.

ա. Պահպանել Հանրապետութիւնը, ամրապնդել նրա պետականութիւնը, բնական հունի մէջ դնել նրա տնտեսութիւնը, առաջքն առնել ընկերային մեծ ցնցումների եւ դուրս գալ շրջափակումից:

բ. Գիտակցելով որ Հայկական Հարցի լուծման ու հայ պահանջատիրութեան բաւարարման ընթացքն սկսել է Ղարաբաղից, ամէն կերպ թիկունք կանգնել Արցախի ազատագրական պայքարին ու Հանրապետութեան ամրապնդմանն ու բարգաւաճմանը:

Այս իրավիճակում, Ցեղասպանութեան հարցը մէկ հանդէս է գալիս որպէս դիւանագիտական միջոց ու զէնք, մէկ՝ որպէս դիւանագիտական յարաբերութիւնների բնութագրման ու խորացման չափանիշ, եւ մէկ էլ՝ որպէս ինքնուրոյն դիւանագիտական հարց: Ինչքանով այն դիւանագիտանանում է, այնքանով պարզ է դառնում որ նրա վերջնական լուծումը հնարաւոր է դառնալու հայ-թուրքական բանակցութիւնների ճանապարհով: Հայ դիւանագիտութիւնը պէտք է այսօրուանից սկսի պատրաստուել դիւանագիտական այդ մեծ ճակատամարտին: Նախապատրաստական աշխատանքներում յատուկ ուշադրութիւն պէտք է դարձնել անցեալում տեղի ունեցած հայ-թուրքական բանակցութիւնների փորձի ուսումնասիրութեան եւ իմաստաւորման վրայ (մանաւանդ 19-րդ դարի ընթացքում հայ եւ թուրք բարենորոգիչների, Պերլինի Վեհաժողովի պատրաստման ժամանակ Պատրիարքարանի եւ Բարձր Դրան, 90-ական թուականների երկրորդ կէսին հայ կուսակցութիւնների եւ Սուլթանի ներկայացուցիչների, դարի վերջից մինչեւ Առաջին Աշխարհամարտի սկիզբը հայ կուսակցութիւնների եւ Երիտասարդ Թուրքերի, Հայաստանի Հանրապետութեան ու Թուրքիայի մի-

ջեւ): Բոլոր դէպքերում պէտք է նկատի ունենալ երկու հանգամանք.
ա. Յարդ թուրքերը բանակցութիւնների ազնիւ մասնակիցներ չեն եղել,
բ. Գնալով մեծանում է Ցեղասպանութեան հարցը լուրջ քննարկան ենթարկելու թուրք մտաւորականների ու գործիչների թիւը:

Ցեղասպանութեան հարցը կապուած է թուրքական կառավարութեան հակահայ քաղաքականութեան հետ: Թուրքիան փորձում է ամէն տեղ եւ բոլոր առիթներով վնասել հայ ազգին ու նրա ներկայացուցիչներին բոլոր հնարաւոր առիթներով: Այդ նկատելի է Միջին եւ Մերձաւոր Արեւելքում, Եւրոպայում, Ամերիկայում, Ասիայում եւ Ռուսաստանում: Այս բխում է թուրքական այն «համոզմունքից» որ չկայ Հայաստան Աշխարհ, այն եղել է շատ հնում, որ արդի Հայաստանը նրանք սխալմամբ զիջել են, որ չգոյ Հայաստանը չի կարող ունենալ ազգային բարձր մշակոյթ: Այս հիման վրայ նրանք գտնում են որ որքան հայերը բարգաւաճեն ու զարգանան, այնքանով կը հերքուի իրենց դրոյթը: Այդ դրոյթը գործնականօրէն գործադրելու համար թուրքերը կազմակերպեցին Ցեղասպանութիւնը: Իրենց ծրագրերը ամբողջութեամբ չիրականացաւ: Հետեւաբար, մտածում է թուրքը, ինքը պէտք է շարունակի հայերի դէմ հալածանքը արդի պայմաններում: Որպէսզի այդ ամէնը վերջ գտնի, թուրքը պէտք է ընդունի Հայերի Ցեղասպանութիւնը: Մինչեւ նա չընդունի Ցեղասպանութեան փաստը, նա պիտի շարունակի «աքլորանալ» ու վարել հակահայկական քաղաքականութիւն: Ցեղասպանութեան ընդունումը արդի հայ սերունդի արդարութեան պահանջը բաւարարելու բարոյական քայլ չէ միայն: Արդարութիւնը նախ եւ առաջ իրաւական-քաղաքական հարց է: Առանց իրաւական ու քաղաքական հիմքի, արդարութիւն լինել չի կարող: Այդպիսի արդարութիւնն էլ կը տայ ապահովութեան երաշխիքներ: Առանց արդարութեան չի կարող լինել Հայաստանի ապահովութեան երաշխիք: Համոզեցուցիչ չի թւում այն հարցադրումը որ Սփիւռքը Ցեղասպանութեան ընդունման պահանջը հիմնականում դնում է արդարութեան հաստատման պահանջից ելնելով, իսկ Հայաստանի կառավարութիւնը՝ երկրի ապահովութեան հրամայականից ելնելով:

Հայաստանի Հանրապետութիւնում այսօր Ցեղասպանութեան հարցերի նկատմամբ եղած վերաբերմունքի մէջ կարելի է երեք տարբերակ նկատել. ժողովրդական, գիտական եւ պետական: Առաջինը լիցքաւորուած ու թարմացած ազերիների կողմից կազմակերպուած՝ Սումկայիթի, Կիրովապատի, Պաքուի, Ազրպէյճանի հայաշատ վայրերում կատարուած ցեղասպանական արարքներով եւ գերի վերցուած հայ զինուորների նկատմամբ գործադրուած ոճրագործութիւններով, ապրում է փոթորկալից մի շրջան: Հայ գիտնականները, հակառակ նիւթական եւ կազմակերպչական դժուարութիւնների, պետական եւ ժողովրդական օգնութեամբ, սփիւռքահայ եւ աշխարհի տարբեր ցեղասպանագէտների հետ համագործակցաբար նորովի ու միջազգային գիտական չափանիշներով են ուսումնասիրում հարցը: Պետական մակարդակով միշտ շեշտւում է Ցեղասպանութեան հարցի կարեւորութիւնը, պատմական անհերքելիութիւնը, սակայն ըստ իրադրութեան, ելեւէջներ են ապրում նրա իրաւական, քաղաքական, դիւանագիտական ու պահանջատիրական առումների լուսաբանումները: Անհամոզեցուցիչ է այն կարծիքը, որ Հայաստանի պետութիւնը պէտք է Ցեղասպանութեան հարցը իր համար կարեւոր նկատել, եթէ թուրքական պետութիւնը այն դարձնի իր համար էական, հիմնական: Նկատի ունենալով որ ցեղասպանութիւնը պետական արարք է, անհնարին է որ թուրքական պետութիւնը չգործադրի ինքնապաշտպանողական ծաւալուն աշխատանք:

Սառը պատերազմից յետոյ եւ Հայաստանի անկախ Հանրապետութեան հաստատման ժամանակաշրջանում, աւելի ու աւելի արեւմտեան պետութիւններ սկսեցին ընդունել Ցեղասպանութեան փաստը, դատապարտել ցեղասպանին՝ նուազեցնելով արդի Թուրքիայի կառավարութեան պատասխանատուութիւնը: Որոշ դէպքերում, իրենց դիրքորոշման փոփոխութիւնը ձգտում են հիմնաւորել ԽՍՀՄ-ի կործանմամբ, Թուրքիայի ռազմաաշխարհագրական նշանակութեան խիստ նուազեցմամբ եւ շրջատարածքում հակաթուրքական տրամադրութիւնների ուժեղացմամբ: Նրանց մի մասը Հայաստանից պահանջում է չղեկավարուել անցեալով, հոգալ երկրի արդի բարօրութեան մասին եւ ներողամիտ լինել՝ փոխարէնը խոստանալով նպաստել որոշ քաղաքական ու տնտեսական հարցերի հայանպաստ լուծմանը: Հայ որոշ կազմակերպութիւններ դրական են գնահատում առաջարկը: Ուրիշներ այն համարում են խիստ անորոշ եւ զուրկ իրաւական-քաղաքական խորքից: Մի երրորդը՝ այն որակաւորում է վտանգաւոր: Այս մեծ ու փոթորկոտ ծովում է այժմ լողում հայ-թուրքական յարաբերութիւնների նաւը: Թուրքիան, ազերիների հետ միասին, փորձում է կրկնել անցեալի խաղերը:

Հայ-թրքական յարաբերութիւններում Ցեղասպանութեան ու պահանջատիրութեան հարցերի քննարկման ու լուծման հնարաւորութիւնները անմիջապէս կապուած են նաեւ մի կողմից ռուս-արեւմտեան, ռուս-թրքական եւ միւս կողմից՝ Արեւմուտք-Թուրքիա յարաբերութիւնների ընոյթից:

Վերոյիշեալ երեւոյթները նկատելի են 1995 թ. Ապրիլի նախագահ Պիլ Գլինթընի յայտարարութեան մէջ: Նախագահը, վերապահ դիրքորոշում ունենալով դէպի արդի ազգայնական Ռուսաստանը, կամ նրա քաղաքական միտումները անկանխատեսելի նկատելով, ազերաթուրքական քարիւղատարի գործարկներում ամերիկեան շահեր տեսնելով, գտնում է որ Թուրքիան դեռ կարող է Արեւմուտքին պիտանի լինել իր

կովկասեան ու արեւելեան քաղաքականութեան մէջ: Զուգենալով մոռանալ իր անցեալի ուժեղ հայանպաստ արտայայտութիւնները, չուզենալով անտեսել պատմական փաստերն ու Ամերիկայի հայ, յոյն, սերպ, քիւրտ, ասորի համայնքների տրամադրութիւնները, եւ մտածելով որ Հայաստանի Հանրապետութիւնը ունակ է Ամերիկային օգտակար լինել, նա լոկ բարոյական իմաստաւորում է տալիս «Հայերի զանգուածային ջարդերին»:

Այս օրերի Ռուսաստանի ընդհանուր քաղաքականութեան փոփոխութիւնը իր դրական ազդեցութիւնն ունեցաւ դէպի Հայկական Հարցը՝ անցեալում իր որդեգրած դիրքորոշման վրայ: Կայսերական Ռուսաստանը, մի կողմից չցանկանալով կորցնել իր սահմաններում գտնուող հայկական տարածքները, եւ միւս կողմից՝ ձգտելով հայերի ազատագրական շարժման որոշ միտումները օգտագործել իր արեւելեան ու կովկասեան քաղաքականութեան մէջ, երկար ժամանակ Հայկական Հարցում որդեգրեց այնպիսի յեղյեղուկ կեցուածք, որ, վերջին հաշուով, հակադրւում էր ազատ, միացեալ ու անկախ Հայաստանի գաղափարի հետ, շարունակելով Թուրքիայի նկատմամբ, նուազագոյնը, ըզգուշաւոր կեցուածք որդեգրելու ռուս մտաւորականութեան ու զինուորականութեան աւանդոյթը: Արդի Ռուսաստանի Տուման Ցեղասպանութեան հարցում, առաջին անգամ լինելով, ամբողջութեամբ պաշտպանում է հայկական տեսակէտը:

Այսպիսով, հայերս պէտք է կարողանանք վարպետօրէն նաւարկել ականաւորուած հայ-արեւմտեան, հայ-ռուսական, հայ-ազերիական, հայ-վրացական, հայ-քրտական, հայ-իրանական եւ հայ-թրքական յարաբերութիւնների ծովերում: Վիճակի բարդութիւնն ու դժուարութիւնը, սակայն, պէտք չէ մեզ հեռացնի խիստ կենսական Հայկական Հարցի լուծման վճռականութիւնից: Ընդհակառակը, այն մեզ պէտք է մղի դէպի աւելի կազմակերպուած, աւելի նպատակասլաց, աւելի հետեւողական, աւելի գիտականօրէն ծրագրուած ու համագործակցուած աշխատանքի:

Ուշագրաւ է այն իրողութիւնը որ մեծ տէրութիւնների թրքանպաստ կեցուածքը պայմանաւորուած է ոչ թէ թուրքերի արդարացիութեան, թուրքական փաստարկների գիտական հիմնաւորուածութեան ու ճշդութեան վրայ, այլ թուրքերի մատուցած զանազան ծառայութիւնների վրայ: Թուրքական կառավարութիւնը չի ցանկանում որ հանրութիւնը այդ նկատի, իսկ թուրք գիտնականներն ու մարդասէրները այն աւելի եւ աւելի հասկանում են: Այս նկատելի էր նաեւ Բ. Աշխարհամարտի օրերին. Անգլիան նրան կաշառում էր հականգլիական գործարքների մէջ չմտնելու, նոյնը անում էր Գերմանիան՝ որպէսզի Թուրքիան Դաշնակիցների ի նպաստ չգործի: Այսօր, թուրքական կառավարութիւնը դարձել է Հայերի Ցեղասպանութեան ուրացման

դրօշակակիրը: Աւելին. նա այն դարձրել է իր ազգային քաղաքականութեան անբաժանելի մասը: Թուրք մտաւորականութիւնը դաշնակցելով աշխարհի առաջաւոր գիտնականների հետ, այդ հարցերում ուժեղացնում է իր քննադատութիւնը թուրքական կառավարութեան նկատմամբ[1]:

Որքան մօտենում ենք Հայերի Ցեղասպանութեան փաստի ընդունման եւ հատուցման հարցերի լուծման, այնքան ստեղծւում են նորանոր բարդութիւններ ու յարուցւում նոր դժուարութիւններ: Հայերիս համար դժուար է դառնում հասկանալ, իմաստաւորել աննկատ մնացած երեւոյթներն ու դրանց վերաբերեալ մշակել համապատասխան կեցուածք, քաղաքական դիրքորոշում եւ լուծում:

Ելնելով այն փաստից որ մենք՝ հայերս, Ա. Աշխարհամարտում հակագերմանական ճակատի 4-րդ դաշնակիցն էինք, ելնելով այն իրողութիւնից որ Ա. Աշխարհամարտի նախօրէին Դաշնակիցները հայերին խոստացել էին Հայաստանի Հանրապետութեան ստեղծումը, ելնելով այն հիմքից որ Դաշնակիցները հենց Հայերի Ցեղասպանութեան սկզբում, 1915 թ. Մայիսին, վերջնագիր էին ներկայացրել թուրքական կառավարութեան՝ պահանջելով դադարեցնել հայերի զանգուածային տեղահանութիւններն ու ջարդը՝ նախազգուշացնելով կիրառել խիստ պատժիչ միջոցներ, եւ վերջապէս նկատի ունենալով որ պատերազմի ողջ ընթացքում դաշնակից երկրների զանգուածային միջոցներն ու դիւանագիտութիւնը անընդհատ մերկացրել են թուրքական բարբարոսութիւնները, հայերը պատերազմից յետոյ հիմնականում դիմել են Դաշնակիցների տրամադրած փաստաթղթերին՝ Հայկական Հարցը աշխարհին ներկայացնելու ու իրենց պահանջներն ու իրաւունքները պաշտպանելու համար: Երբ այդ ասպարէզում հայերն ու նրանց բարեկամները արձանագրեցին որոշակի յաջողութիւններ, թուրքերը, Դաշնակիցների բացայայտ կամ լռելեայն համաձայնութեամբ, յայտարարեցին որ այդ բոլորը կատարուել են քարոզչական նպատակներով, միջազգային կեանքում թուրքերին բացասական կերպարով ներկայացնելու դիտաւորութեամբ, աշխարհը թուրքերի դէմ լարելու մտադրութեամբ: Կարճ ասած, հայերի կողմից օգտագործուած Դաշնակիցների վկայութիւնները արժէքազրկուեցին, կորցրին իրենց իրաւական բարոյական ոյժը[2]: Միաժամանակ, թուրքական ու նրանց բարեկամների քարոզչական մեքենան տարածեց այն տեսակէտը, թէ՝ այդ օրերին շրջանառութեան մէջ դրուած թրքական նիւթերը (Թուրքական Խորհրդարանի քննարկումները, այդ խորհրդարանի կողմից ստեղծուած յանձ-

1. Տես՝ Ցաւելուած թիւ 1 եւ 6:
2. Akaby Nassibian, *Britain and the Armenian Question, 1915-25*, Croom Helus, London & Sydney, St. Martin's Press, 1984, p. 79. Երուանդ Գասպարեան, *Մեծ Եղեռնը եւ Ֆրանսիան (1915-1918)*, Երեւան, 2005, էջ 68-142:

նաժողովի նիւթերը, թուրքական ռազմական ատեանի տուեալները եւ այլն) արտացոլում են ոչ թէ իրականութիւնը, այլ հիասթափուած, բարոյալքուած, պարտուած ու դաւաճան դարձած այն թուրքերի տեսակէտը, որոնք պատրաստ էին թուրքակի նման կրկնելու յաղթական Դաշնակիցների պահանջները: Այսպիսով, հայերն ու նրանց բարեկամները ստիպուած եղան որոնելու անվիճելիօրէն հաւաստի ճշմարտութեան ու լոյսի նոր աղբիւրներ: Դրանք Թուրքիայում հաւատարմագրուած ԱՄՆ-ի դեսպանների, գլխաւոր հիւպատոսների, հիւպատոսների ու դիւանագէտների ԱՄՆ-ի կառավարութեան ուղարկուած պաշտօնական տեղեկագրութիւններն էին, նրանց յուշագրութիւնները, ականատեսի վկայութիւնները, որոնք պահւում էին ԱՄՆ-ի պետական դիւաններում: Որպէս լրացուցիչ էական աղբիւր, հայերը պեղեցին նաեւ Ա. Աշխարհամարտի Թուրքիայի դաշնակից Գերմանիայի եւ Աւստրիայի աղբիւրները, ու սկսեցին լայնօրէն օգտագործել այդ նիւթերը:

Վերոյիշեալ հարուստ նիւթերով զինուած ու նրանց միջոցով աշխարհի շատ ականաւոր գիտնականներ, այդ թւում նաեւ հայ ցեղասպանագէտներ անվիճելիօրէն ապացուցեցին որ 1915-1923 թթ. ընթացքում թուրքական կառավարութիւնները ծրագրել ու գործադրել են հայերի ոչնչացման ծրագիրը, Հայաստանը հայաթափելու ծրագիրը: Նորանոր պետութիւններ, միջազգային կազմակերպութիւններ, քաղաքներ ու քաղաքական միաւորներ ճանաչեցին Ցեղասպանութեան փաստը: Տարբեր երկրների գիտնականներ տարբեր լեզուներով սկսեցին հատորներ գրել թուրքերի կողմից կազմակերպուած ու գործադրուած Հայերի Ցեղասպանութեան մասին: Հաստատուեց որ եթէ այդ Ցեղասպանութեան հեղինակները ժամանակին պատժուէին, յաջորդ տարիներում աշխարհում ցեղասպանութիւն գործադրելու հաւանականութիւնը խիստ կը նուազէր, եթէ չվերանար:

Պատմագիտութեան ու հայագիտութեան զարգացման այս փուլում Թուրքական Հանրապետութեան ղեկավարները որոշում են նորից միջամտել գիտութեան առաջընթացին, որպէսզի այն ենթարկեն իրենց կամքին: Գիտական իմացութեան զարգացումը ենթարկւում է իր սեփական օրէնքներին ու սկզբունքներին, եւ ազատ հասարակութեան պայմաններում կարիք չունի քաղաքական ու պետական միջամտութեան: Պետականացուած գիտութեան դարաշրջանը վաղուց պատմութիւն է դարձել:

Արդի թուրքական իշխանութիւնները առաջարկում են հայ եւ թուրք մասնագէտներից կազմել մի պաշտօնական յանձնաժողով՝ Հայերի Ցեղասպանութեան մասին եղած հայկական ու թուրքական տուեալները, փաստերը համեմատելու ու որոշելու նրանց հաւաստելիութիւնը, պարզելու թէ կողմերից որ մէկն է ճիշդ ու հիմնաւոր: Տարօրինակ առաջարկ է սա: Թուրք մասնագէտներին ցարդ ոչ ոք չի արգիլել քննական վերլուծութեան ենթարկել հայ գիտնականների մենագրութիւնները եւ բացայայտել դրանց հարցադրումների դրական ու բացասական երեսները: Մինչեւ օրս թուրք պաշտօնական, պետական մտաւորականութիւնը տարբեր ձեւերով կրկնել է այն՝ ինչ որ Իթթիհատականները ասել են պատասխանելով 1915 թ. Մայիսի Դաշնակիցների վերջնագրին՝ հակառակ այն փաստին որ վերջին իննսուն տարիների ընթացքում թրքագիտութիւնը նոր փաստեր է վեր հանել ու նոր տեսութիւններ ու վարկածներ է առաջ քաշել Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ: Ցեղքայլ կատարելով ու անտեսելով գիտական մտքի առաջընթացը, թուրք ցեղասպանագիտութիւնը ուշադրութեան արժանի գաղափարներ չի զարգացրել ու չի կարողացել գիտական երկխօսութիւն ստեղծել: Նա գիտական շրջանառութեան մէջ դրուած նոր հեղինակների Ցեղասպանութեան նուիրուած աշխատասիրութիւնները առանց հիմքի մերժել է, նրանց տեսակէտները կեղծ ու սխալ յայտարարել:

Թուրքական պետութեան ղեկավարները հայ եւ թուրք մասնագէտներից կազմուած յանձնաժողով ստեղծելով, եւ հարցերը քննարկելու առաջարկ անելով ձգտում են այն պատրանքը ստեղծել, որ իբր գոյութիւն ունի հակագիտական հայ ցեղասպանագիտութիւն, որի մերկացմամբ հանդէս պիտի գայ այն նորաթուխ յանձնախումբը: Իրականում արդի հայ ցեղասպանագիտութիւնը բացառապէս ելնում է ԱՄՆ-ի պաշտօնական դիւաններում պահւող պաշտօնական տուեալներից ու դրանցում պարունակուող դրոյթներից՝ դրանք լրացնելով անգլիական, ֆրանսական, ռուսական, գերմանական եւ այլ երկրների պաշտօնական դիւաններում պահուած տուեալներով: Հայ ցեղասպանագէտները կանխամտածուած կերպով նախընտրել են գիտական վերլուծութեան այդ կողմնորոշումը՝ իրենց զերծ պահելու համար բոլոր տեսակի թուրքական զրպարտութիւններից ու խարդաւանքներից:

Թուրքական իշխանութիւնները նախ քան հարցերի քննարկումը, ԱՄՆ-ի դիւանագէտների բերած փաստերն ու արտայայտած մտքերը հայկական համարելով, դրանք սեւացնելով ու մերժելով առաջարկում են թուրքական տուեալների միջոցով բացայայտել դրանց կեղծ խորքը ու մերժել դրանք: Փաստօրէն առաջարկւում է այդ յանձնաժողովի միջոցով աշխարհին ասել որ թուրքական փաստերը, Իթթիհատականների, Թալէաթի, Էնվերի, Ճեմալի ու նրանց ենթակաների տուեալներն ու դրոյթները ճիշդ են եւ միւս երկրների դիւանագէտների ու միսիոնարների տուեալները ու տեսակէտները կեղծ ու սխալ: Փաստօրէն նրանք յուշում են որ ոչ-թուրք դիւանագէտները սխալ ու կեղծ տեղեկութիւններ են հաղորդել իրենց կառավարութեան ու այդպիսով նպաստել թուրք միջազգային յարաբերութիւնների վատթարացման: Տարօրինակ չի թուի, եթէ մի օր թուրք իշխանութիւնները պահանջեն այդ «յանցանքի» համար պատժել նրանց:

Ցետադարձ քննական հայեացք նետելով, նկատում ենք ուշագրաւ մի վիճակ: Երբ Հայերի Ցեղասպանութիւնը ընթացքի մէջ էր, ցեղասպանին թիկունք էր կանգնում Առանցքը՝ Գերմանական-Աւստրիական միացեալ ճակատը: Երբ Հայերի Ցեղասպանութեան հիմնական ալիքը վերջացաւ, ցեղասպան Թուրքին թիկունք կանգնեցին Դաշնակիցները՝ Անգլիան, Ֆրանսան, Ռուսաստանը եւ Ամերիկան: Երբ միջազգային յարաբերութիւնները բնորոշող երկու բեւեռները հերթափոխում են ցեղասպանին պաշտպանելու պարտականութիւնը, Թուրքիան մնում էր նոյն բռնատիրական, մարդու իրաւունքները անտեսող, կիսակրօնապետական-կիսաքաղաքացիական եւ կիսազինուորական երկիրը, ուր կամայականօրէն էր գործում սահմանադրութիւնը: Ինչպէս շատ երկրներ ու ժողովուրդներ, այնպէս էլ հայերս չենք կարողանում ճիշդ իմաստաւորել ու հասկանալ այս իրողութիւնը: Չենք կարողանում համապատասխան քաղաքականութիւն մշակել դրա նկատմամբ: Թուրքիան, նկատելով որ ինքը ընդունելի է դառնում ինչպէս աջի, այնպէս էլ ձախի համար, կարծեց, որ իր առաջ քաշուած դրոյթները մշտատեւ ճշմարտութիւններն են: Իննսուն տարի անընդհատ նա կրկնում է նոյն հնամաշ դրոյթները, երբ ցեղասպանագիտութիւնը, թրքագիտութիւնը, քրտագիտութիւնն ու հայագիտութիւնը դրանք վաղուց են հերքել:

Զիրականացաւ նաեւ այն ենթադրութիւնը, թէ՝ մի մեծ ու զօրաւոր կազմակերպութեան անդամակցելով, նման հարցեր կը լուծուեն: Խորհրդային Միութեան անդամակցելով, հայ-ազրպէյճանական յարաբերութիւնները աւելի բարդացան: Հիւսիս Ատլանտեան դաշինքին մասնակցելով՝ յոյն-թուրքական յարաբերութիւնները նորանոր բարդոյթներ արձանագրեցին: ՄԱԿ-ին անդամակցելով, շատ երկրների յարաբերութիւնների լարուածութիւնը չնուազեց: Լաւատես երեւալու համար որոշ քաղաքագէտներ կարծում են Եւրոպական Միութեան անդամակցելով, հայ-թրքական յարաբերութիւնները դրական հունով կ'ընթանան: Կեանքը ցոյց է տալիս որ ամէն մի երկրում գործող կենդանի առաջադիմական ուժերի հետեւողական աշխատանքն է որ բերում է ցանկալի արդիւնքը:

Մեր կարծիքով այս է հայ եւ թուրք մասնագէտներից կազմուած յանձնաժողով ստեղծելու թուրք կառավարութեան առաջարկի խորքը:

Հայ ժողովուրդը բաժանուած է երկուսի. հայրենաբնակ եւ սփիւռքաբնակ: Ցեղասպանութեան ասպարէզում նրանց ծաւալած դիւանագիտական գործունէութեան մէջ նկատելի է որոշակի տարբերութիւն:

Ա. Նախ, սփիւռքահայութեան ճնշող մեծամասնութիւնը ամէն օր գիտակցում է այն փաստը, որ ինքը հայրենիքից դուրս է, քանի որ Թուրքերն իր նախնիներին տեղահանել են իրենց «երկրից» ու սպաննել իր հարազատների զգալի մասին՝ պնդելով որ չկայ Հայաստան, եւ որ հայը Հայկական Լեռնաշխարհում ապրելու իրաւունք չունի: Այս պատճառով էլ, նա աւելի զգայուն է այդ հարցի նկատմամբ: Ցեղասպանութիւնը սփիւռքահային հայկական արմատների հետ կապող ու անջատող կամուրջներ ունի: Այն, նրա համար, հայապահպանման աւելի մեծ գործօն է:

Բ. Սփիւռքի՝ Ցեղասպանութեան դիւանագիտական ձեռնարկումները ունեն ինքնատիպ պետական հանգամանք: Նրանք ենթակայ են տուեալ (հիւրընկալ երկրի) ազգային պետութեան քաղաքականութեան, քանի որ վերջինս որոշում է նրանց գործունէութեան շրջանակները: Թուրքիան արգիլում է այդ հարցերի բարձրացումը: Ատլանտեան Ուխտի որոշ երկրներում Ցեղասպանութեան հարցերը պետական առնչութիւն էին ունենում լոկ ազատ խօսքի, մտածողութեան ու երկրում բնակուող նուիրեալ փոքրամասնութեան մարդու իրաւունքի գործադրման պահանջի սահմաններում: Օսմանեան Կայսրութեան դէմ պայքարած եւ անկախութիւն նուաճած պետութիւնները, յաճախ, Ցեղասպանութեան հարցերին, հայերի խելամիտ աշխատանքի շնորհիւ, իրենց դիւանագիտական պայուսակի մէջ զգալի տեղ էին յատկացնում: Լատինական Ամերիկայի, Գանատայի ու Ֆրանսայի նման երկրներ, տարբեր բնոյթի դրական շարժառիթներից ելնելով, ստանձնում են նաեւ դիւանագիտական լուրջ նախաձեռնումներ: Կարճ ասած, Սփիւռքը իբրեւ իր բնակած երկրի նուիրեալ եւ ազնիւ քաղաքացի, մեծապէս նըպաստում է Ցեղասպանութեան հարցերի դիւանագիտացմանը՝ միջազգային չափանիշներով: Նրա այդ առաքելութեան տուեալ պահի բովանդակութիւնը երբեմն չի համընկնում հայրենի պետութեան վարած քաղաքականութեան: Այս երեւոյթը, որ հայ կեանքի բնական հակասութիւններից մէկն է, ունի ինչպէս դրական (Սովետական կարգերի օրերին) այնպէս էլ բացասական կողմեր: Կարելի է բացասականը նուազեցնել ու դրականը մեծացնել, եթէ ձեռնարկումներին տրուեն համասփիւռքեան խորք ու մշակուեն հայրենի կազմակերպութիւնների կամ պետութեան հետ խորհրդակցաբար: Սփիւռքեան դիւանագիտական գործունէութիւնը նախկինում կրում էր լոկ ժողովրդական տարերային բնոյթ: Իւրաքանչիւր երկրում սփիւռքահայը գործօն քաղաքական տարր դառնալով, աստիճանաբար կարողանում է ծաւալել զուտ պետական դիւանագիտական կազմակերպուած, ծրագրուած գործունէութիւն:

Գ. Սփիւռքեան ջանքերը իրականացւում են առանձին կազմակերպութիւնների խողովակով, քանի Սփիւռքը չունի պետական կա-

ռոյց: Բնականաբար, յաճախ, սփիւռքեան դիւանագիտութիւնը ոչ միայն բազմազան ու բազմատեսակ է, այլեւ ներքնապէս հակասական ու իրարամերժ: Անկախ այս ասպարէզում սփիւռքեան դիւանագիտական ջանքերի կարեւորութիւնից, Հայաստանի անկախ պետականութեան ուժեղացմանը եւ Հայրենիք-Սփիւռք համագործակցութեան ուժեղացման զուգահեռ այն կը ստանայ աւելի ու աւելի կարեւոր դեր:

Իր բնոյթով դիւանագիտական գործունէութիւնը բազմաճիւղ է: Կարելի է առանձնացնել առաւել կարեւորները:

ա. Մշակել սեղմ գիտական ու յստակ դրոյթներ, եւ հնարաւոր բոլոր ամբիոններն ու խողովակներն օգտագործելով, դրանց միջոցով աշխարհին բացատրել Հայկական Հարցի ու Ցեղասպանութեան էութիւնը, սկզբում առանց պահանջներ ներկայացնելու՝ նկատի ունենալով որ աշխարհում իրաւազրկուածներն աւելի շատ են: Աշխարհն անտեղեակ լինելով իրողութեանը, յաճախ, կրօնական ու ցեղային պատկանելութեան շարժառիթներից ելնելով, զոհ է գնում թուրքական քարոզչութեան:

բ. Դիւանագիտական լեզուով տարուող բացատրական աշխատանքի նպատակը ոչ միայն ճշմարտութեան հաստատումն է, այլ նաեւ բարեկամների, համախոհների ու համագործակիցների ձեռք բերումը:

գ. Վերջինիս իրականացման համար անհրաժեշտ կարող են լինել դիւանագիտական գործարքներ, փոխզիջումներ ու նոյնիսկ ճատրակի խաղ:

դ. Յաճախ մենք տարուում ենք այն տրամաբանութեամբ, որ հիմնականում Թուրքիայի թշնամին, զոհը, հակառակորդը, մրցակիցը կարող է լինել մեր բարեկամը: Փորձառութիւնը սովորեցնում է որ մենք կարող ենք չպահանջել որ մեր բարեկամը անպայման լինի Թուրքիայի հետ խնդիր ունեցող մէկը: Բարեկամութեան չափանիշը պէտք է դարձնել Հայ Դատի նկատմամբ տուեալ կողմի որդեգրած դրական դիրքը: Թող նա ընդունի Հայ Դատի արդարութիւնը, ճշտութիւնը եւ օգնի մեզ, իր հնարաւորութեան սահմաններում: Թողնենք Թուրքիային, որ իր դիրքը ճշգրտի մեր բարեկամի նկատմամբ:

ե. Չէզոքացնել Թուրքերի ու նրանց գործակալների հակահայկական քարոզչութիւնը, որ աղաւաղում է հայու դիմագիծը, պատմութիւնը, եւ փորձում իւրացնել հայ ազգային արժէքները:

զ. Մասնաւոր ջանք թափել Թուրքական պատմութեան մէջ ու արդի կեանքում գտնելու այնպիսի Թուրք անձնաւորութիւնների, որոնք քննադատել են ու քննադատում են Թուրքական իշխանութիւնների ազգային քաղաքականութիւնը, կամ դրական կեցուածք որդեգրել հայերի նկատմամբ: Նրանք կարող են դառնալ այն լծակները, որոնց հնարաւոր կը լինի օգտագործել Թուրքերի հետ վիճելիս, խօսելիս ու բանակցելիս: Ուրախութեամբ պէտք է արձանագրել որ այդպիսի հերոս մարդասէրների թիւը մեծանում է: Վերջին հաշուով, մենք գործ ունենք հայ-Թուրքական յարաբերութիւնների հետ, ինչքան էլ դրանք միջազգայնացած լինեն: Մեր հարցերը ոչ ոք մեզ համար չի լուծի:

է. Դիւանագիտական աշխարհում վերջերս լայնօրէն է կիրառւում հայերիս քաջ ծանօթ «սրտէ-սիրտ», «դէմ առ դէմ» կամ «ընտանիք առ ընտանիք» ներգործութեան եղանակը: Իւրաքանչիւր հայ, իր յարաբերութիւնների ամէն մի ոլորտում, պէտք է հանդէս գայ որպէս իր ազգի լաւագոյն ներկայացուցիչը եւ պահպանի վայելչութեան բոլոր նորմերը: Մեր կազմակերպութիւնները ամէն մի հայու պէտք է սովորեցնեն այդ ազգու եւ հզօր դիւանագիտութեան, ժողովրդական դիւանագիտութեան գաղտնիքները: Իւրաքանչիւր հայի անվայել վարքը վնասում է հայի դատին:

Այսպիսով, Ցեղասպանութեան եւ նրա հետ աղերս ունեցող բոլոր հարցերի դիւանագիտական իմաստաւորման, ու այդ ուղղութեամբ աշխատանքների ծրագրաւորման ու ծաւալման ընթացքում անհրաժեշտ է հաշուի առնել միջազգային դիւանագիտութեան բոլոր ելեւէջները, միջազգային ուժերի տեղաշարժերն ու նրանց յարաբերակցութեան փոփոխութիւնները, եւ լաւագոյնս համադրել հայրենի պետութեան, հայրենի եւ սփիւռքեան բոլոր կազմակերպութիւնների (եկեղեցական, տընտեսական, մշակութային, բարեսիրական, գիտական, մասնագիտական, քաղաքական եւայլն) եւ ժողովրդական զանգուածների ողջ կարողականութիւնը՝ բարեխիղճ դերաբաշխման, դերակատարման ու կարգապահութեան պայմաններում:

Միշտ պէտք է յիշել, որ ցեղասպանին պատասխանատուութեան կանչելու բոլոր իրաւական հիմքերը կային դեռ 1918 թ.՝ Առաջին Աշխարհամարտից յետոյ: Տեղի էին ունեցել դատավարութիւններ, արձակուել էին դատավճիռներ, կային համապատասխան ազգային ու միջազգային իրաւական օրէնքներ եւ անհրաժեշտ փաստաթղթեր: Հարցը ոչ միայն չլուծուեց, այլեւ այն թաղուեց, քանի որ մեծ տէրութիւնները ի գործ դրին իրենց ողջ դիւանագիտական կարողականութիւնը, որպէսզի Ցեղասպանութիւնը մոռացուի եւ հայոց պահանջատիրութիւնը անտեսուի: Հայ դիւանագիտութիւնը պարտաւոր է այսօր հրաշագործ լինել:

ԳԼՈՒԽ ԺԳ.

ՀԱՅԵՐԻ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՐԵՍՆԵՐԸ

Ցեղասպանական գործունէութեան եւ վարքի սահմանումն ու ցեղասպանի անհատականութեան կամ դիմագծի բնութագրումը դիմագրաւեց որոշակի բարդութիւններ: Շատեր գտնում են որ ցեղասպանութիւնը դուրս է աւանդական ընկերաբանութեան ու հոգեբանութեան հասկացութիւնների համակարգից: Այն դրականին հակադրուող բացասական, ժխտական հասկացութիւն է, եւ սահմանելի որպէս չգոյութիւնը դրականի, ճիշդ այնպէս, ինչպէս մթութիւնը սահմանում ենք որպէս լոյսի բացակայութիւն: Ցեղասպանութիւնը խաւար է, մշակոյթի բացակայութիւն՝ հակամշակոյթ: Ուրիշներ գտնում են որ անհատի անբնական արարքները, վարքը կարելի է վերագրել տուեալ մարդու հոգեկան անհաւասարակշռուածութեան կամ հոգեկան հիւանդութեան: Բայց հաւաքականութիւնների կողմից թոյլ տրուած անկանոնութիւնները հնարաւոր չէ նոյն գործօններով բացատրել: Ցեղասպանութիւնը անհատի վարք չէ, վարքի անհատական շեղում չէ: Այն հաւաքական վարք է: Այն հնարաւոր է իրականացնել հաւաքաբար: Այն պետական վարք է նաեւ:

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՀԱՒԱՔԱԿԱՆ ՀԱԿԱԲՆԱԿԱՆ ՎԱՐՔ Է

Իսկապէս, ցեղասպանութեան փաստը խախտեց «բնական» եւ «անբնական» մարդ, արարք, վարք հասկացութիւնների դասական ըմբռնումները: Պարզուեց որ դասական առումով «բնական մարդ», «նորմալ մարդ» համարուողները ունակ են հաւաքաբար կատարելու ամենից բարբարոս, վայրագ արարքներ, այսինքն՝ ունենալ «անբնական վարք»: Կամ «բնական մարդիկ», «նորմալ մարդիկ» իրար հետ կապուելով ու համագործակցելով որոշակի հողի վրայ ու որոշակի սկզբունքի համաձայն, վերածւում են յանցագործ խմբի ու կատարում «անբնական արարքներ», ձեռք բերում խիստ շեղուող վարք: Այս հիման վրայ, վարքաբանները առաջարկեցին մեծացնել ցեղասպանութեան հասկացութեան ծաւալը, ընդգրկելիութիւնը:

ԹՈՒՐՔԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՔԻՆ ՀՐԱՀՐԻՉՆԵՐՆ ՈՒ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Ա. ՀԱՅԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄՈԼՈՒՑՔ

Մարդիկ կարող են հաւաքական ցեղասպանական արարքներ կատարել խմբային ներքին դրդապատճառների ազդեցութեան տակ: Օսմանեան ընկերային ու քաղաքական կեանքի առանձնայատկութիւնները որպէս ցեղասպանական արարքի ներքին դրդապատճառ առաջ քաշեցին որոշակի գործօններ, որոնք կանխորոշեցին օսմանցիների հաւաքական վարքը տուեալ ժամանակաշրջանում:

«Ներքին Նախարարութեան յատուկ գրասենեակի պետ Իհսան Պէյը հաստատում է որ այն ժամանակ, երբ ինքը գտնուելիս է եղել Քիլիսի գայմագամի պաշտօնում, Կ. Պոլսից գործուղուած Ապտուլահատ Նուրի Պէյը յայտարարել է որ տեղահանման հիմնական նպատակը հայերի ոչնչացումն է, եւ աւելացրել է նաեւ որ ինքը այդ հարցով կապի մէջ մտնելով Թալէաթ Պէյի հետ, նրանից ուղղակի ստացել է կոտորածի հրաման, որ նա՝ Թալէաթը, ձգտել է համոզել իրեն որ դա է երկրի միակ փրկութիւնը»: Այս՝ Իթթիհատականների ու նրանց ենթակաների համար եղել է ելակէտային ու կանխորոշիչ հրահրիչը[1]: Սոյն ներքին դրդապատճառը այնքան է տիրել թուրք հասարակութեան մեծամասնութեան վրայ, որ վերջինս մշտապէս անտեսել է տարբեր երկրների կառավարութիւնների, դեսպանների եւ հասարակական ու կրօնական կազմակերպութիւնների խնդրանքներն ու բողոքները[2]:

1. I.H. Kzunçarsili, *II-ci Abdulhamid Dervinde Kamil Pasa*, "Belleten", 1955, No. 78, s. 227. Աւետիս Փափազեան, *Հայերի Ցեղասպանութիւնը Թուրք Քաղաքական Գործիչների Յուշագրութիւններում*, Երեւան, 2001, էջ 102–103:
2. *The Diaries of Ambassador Morgenthau (1913-16)*, compiled with an introduction by Ara Sarafian, Comidas Institute, Princeton and London, published by Tado-

Ուշագրաւն այն է որ Միութիւն եւ Առաջադիմութիւն կազմակերպութիւնը իր իշխանութեան կարճ գոյութեան ընթացքում հայերին բնաջնջելու իր ծրագիրը հիմնաւորել է տարբեր փաստարկներով: Նախ ցանկացել է սրբագրել իր նախորդների սխալները, պնդել է որ կայսրութեան նոյն տարածքի վրայ հայերն ու թուրքերը համատեղ գոյատեւել չեն կարող, որ հայերը ոչ միայն պէտք է մահմետականան, թուրքանան, այլեւ դառնան օսմանական ազգ: Ապա նա պահանջել է որ աշխարհի բոլոր հայերը դաշնակցեն իր հետ՝ Դաշնակիցների դէմ իր մղած պայքարում: Համաձայնութիւնը հայերին խոստանում էր որոշակի, սակայն կասկածելի ինքնավարութիւն, իսկ անհամաձայնութիւնը՝ ջարդ: Պատերազմի սկզբում նա հայերի բնաջնջման իր քաղաքականութիւնը արդարացնում էր դէպի Դաշնակիցները հայերի ունեցած համակրանքով ու ռուսական արեւելումով: Կարճ՝ հայերին բնաջնջելու իթթիհատական մոլուցքը եղել է նրանց կայուն ու անփոփոխ ներքին շարժիչ ոյժը:

Հայերի ռուսամէտ կեցուածքը փոխելու համար թուրքերը ոչ թէ փորձել են հրաժարուել իրենց ծայրայեղ հայատեաց քաղաքականութիւնից, ինչպէս առաջարկում էր Երիտասարդ Թուրքական շարժման հիմնադիրներից Էմիր Էմին Ասլանը, այլ ձգտում էին հայերին համոզել որ ռուսները հայերի համար հաւատարիմ դաշնակիցներ չեն, որ նրանք էլ դէմ են հայերի անկախ պետականութիւն ստեղծելու ծրագրին: Էնվեր գտնում էր որ ռուսները վստահելի լծակ չեն կարող լինել հայերի համար, քանի որ «ի վերջոյ նրանք նախընտրում են հայերին սպաննուած, եւ ոչ թէ կենդանի տեսնել: Նրանք էլ վախենում են հայերի անկախ պետութիւն ստեղծելու մտադրութիւնից»[1]: Գտնելով որ հայերի նկատմամբ ռուսների ու թուրքերի վերաբերմունքի մէջ ընդհանուր գծեր կան, Էնվերը չի կարողանում հասկանալ թէ ինչու հայերը միտում են աւելի դրական կեցուածք որդեգրել ռուսների նկատմամբ, իսկ բացասական՝ թուրքերի հանդէպ: Նա եւ նրա զինակիցները չեն կարողանում հասկանալ որ այդ երեւոյթի պատճառը թուրքերի ցեղասպանական քաղաքականութիւնն է, մի քաղաքականութիւն, որ թուրքական պետութեան ներազգային ու միջազգային յարաբերութիւնների հիմքն էր դարձել: Այն կուրացրել էր թուրքերին ու զրկել նրանց ա-

ron Press, printed in India, 2004, p. 278. Դեսպան Մորկընթաու պատերազմի եւ Ցեղասպանութեան ծրագրի գործադրութեան օրերին լինելով Պոլսում, լայն հնարաւորութիւն է ունեցել յաճախակի հանդիպելու թուրք պետական գործիչների, Իթթիհատական ղեկավարների ու տարբեր երկրների Պոլսում հաւատարմագրուած դիւանագէտների հետ: Այդ ընթացքում նա բացայայտել է թուրք ժողովուրդի ու ղեկավարութեան գիտակցական ու հոգեբանական աշխարհի ելեւէջները, նրանց գործունէութեան դրդապատճառները: Այս բաժինը հիմնականում շարադրուած է Մորկընթաուի տրամադրած նիւթերի վրայ:
1. Նոյնը, էջ 258:

ռարկայական ու առողջ մտածողութիւնից: Նրանք այնքան էին տարուել ցեղասպանական իրենց ծրագրի գործադրութեամբ, որ հպարտանում էին որ 1915-ի առաջին ամիսներին իրենք աւելի հայեր են կոտորել, քան Ապտուլ Համիտը կարողացել էր երեսունեօթ տարիների ընթացքում[1]: Այդպիսի մտայնութիւն նրանց գիտակցութեան մէջ տիրում էր մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ երկիրը սնանկացել էր, ժողովուրդը սոված էր, համաճարակը հնձում էր բնակչութեան ու զինուորներին, բանակը խուճապահար նահանջում էր:

1915-ի Ապրիլին Մորկընթաու իթթիհատական գործունէութեան դրդապատճառների համակարգում նկատում է մի գործօն եւս: «Թուրքերը,– գրում է նա,– Ապրիլի 26-ին, կարծես գալիս են այն համոզման, որ իրենք կարող են կառավարել լոկ մտաւորականութիւնը ճզմելով»: Նրանց գիտակցութեան մէջ մտաւորական եւ իմացական արժէքները արմատաւորուած են որպէս անցանկալի ու վտանգաւոր: Նրանք փաստօրէն սխալ են մեկնաբանում իրենց անցեալի փորձառութիւնը, քանի որ նրանց գիտակցութիւնը մթագնուած է կասկածամտութեամբ, ինքնավստահութեան թուլացմամբ եւ ցեղասպանութեան մոլուցքով: Մի քանի օր անց, Մորկընթաու աւելացնում է. «Թալէաթն ինձ ասաց որ ինքը վճռած է կործանել բոլոր ընկերակցութիւններն ու կապակցութիւնները: Նա ասաց որ ինքը եղել է յեղափոխական ղեկավար եւ գիտի ինչպէս վարուել մտաւորականութեան ու կազմակերպութիւնների հետ»: Իսկ Յունիսի 19-ին, Էնվեր Ամերիկայի դեսպանին նկատել է տալիս որ իրենք որպէս յեղափոխական ընդդիմադիր կազմակերպութիւն, հակա-Համիտեան իրենց պայքարում պաշտպանութիւն եւ օժանդակութիւն են ստացել օտար երկրներից: Հետեւաբար Իթթիհատականները ցանկանում են վերացնել Թուրքիայում ապրող մտաւորականութեան, այնտեղ գործող կազմակերպութիւնների կապը արտասահմանեան երկրների հետ եւ ճզմել, վերացնել ամէն մի ոչ-իթթիհատական կազմակերպութիւն: Թալէաթ Ամերիկայի դեսպանին յայտնել է որ մի յանձնաժողով է կազմուած պատրաստելու համար վտարուելու եւ պատժուելու ենթակաների ցուցակը, եւ մշակելու անցեալի սխալները սրբագրելու միջոցներն ու եղանակները: Նկատելի է, եզրակացնում է դեսպանը, որ նրանք արգիլելու են փոխարինող ուժերի առաջացման ամէն մի միտում ու հնարաւորութիւն, քանի որ մեծապէս վախենում են հաւանական յեղափոխութիւնից[2]: Ինչպէս ամէն մի բռնատիրութիւն, իթթիհատական իշխանութիւնն էլ վախենում էր իրաւ մտաւորականութիւնից ու իրենց գաղափարախօսութիւնը չկիսող կազմակերպութիւններից, եւ պայքարում դրանց դէմ: Այս հիման վրայ աքսորեցին ու

1. Նոյնը, էջ 279:
2. Նոյնը, էջ 217, 257-258, 216:

դաժանօրէն սպաննեցին հայ, յոյն, պուլկար, արաբ, թուրք մտաւորականներին: Նման արարքներ տեղի էին ունենում այնպիսի պայմաններում, երբ իթթիհատական ղեկավարութեան գիտակցութեան մէջ ամրապնդուած էր հասարակական կարծիքը եւ մամուլը անտեսելու սովորութիւնը: Նրանք իրենց թոյլ են տուել կատարել այն՝ ինչ որ իրենց ճիշդ ու շահաւէտ է թուում՝ անկախ գործի բուն արժէքային էութիւնից: Մեծ Վեզիրը Ամերիկայի դեսպանին հպարտանալով ասում է որ ինքը կատարում է արարքներ, քանի որ դրանք ճիշդ են, որ ինքը ուշադրութիւն չի դարձնում հասարակական կարծիքի վրայ, չի հաւատում թղթակիցներին եւ երբեք թերթ չի կարդում[1]:

Պոլսում հաւատարմագրուած օտար դիւանագէտներն ու մասնագէտները յաճախ մտքեր են փոխանակել Օսմանեան Կայսրութիւնում տիրող դրութեան մասին: Այսպէս օրինակ, Մորկընթաու իր Օրագրում արձանագրում է որ Թուրքիայի դաշնակից Աւստրո-Հունգարիայի Պոլսի դեսպան Մարգիզ Եոհան Փալավիչինին Յունաստանի հաւատարմատար Տսամադոսին ասել է, թէ՝ «Թուրքերը ոչինչ կ'անեն մարդասիրութեան ուղղութեամբ: Նրանք վճռած են ոչնչացնել կամ ցրել բոլոր հայերին ու յոյներին: Նրանք արդէն կղզիներից ու ծովափնեայ վայրերից ցրել են 40,000 յոյների»: Իթթիհատականների մարդասիրական կողմնորոշման անձնական բնութագրութիւնը Մորկընթաու տալիս է Էնվերի հետ 18 Հոկտեմբերի, 1915-ին իր ունեցած զրոյցի գրանցման մէջ. «Ես մենակ այցելեցի Էնվերին եւ նրա հետ մանրամասն քննարկեցի Հայկական Հարցը եւ հայերին օգնութիւն բաժանելու հարցը: Նա ասաց որ իրենք վերջնականապէս վճռել են որ նրանց ոչ մի օգնութիւն չպէտք է տրուի, բացի նրանց միջոցով: Իրենք (թուրքերը) չեն ցանկանում որ հայերը մտածեն, որ օտարները նրանց խրախուսում են կամ նրանց բարեկամներն են: Ինքը (Էնվերը) կարծում է, որ հայերի համար դա վատ կը լինի, քանի որ այն նրանց կը հրապուրի դէպի նոր վնասարարութիւն: Վերջինս թուրքերին կը մղի աւելի վճռական պատժիչ միջոցների»[2]:

Թուրքերը աշխատում էին տառապող հայութիւնը մեկուսացնել ողջ մարդասիրական աշխարհից, մարդասիրական կազմակերպութիւններից: Նրանք ցանկանում էին հայ-թուրք յարաբերութիւններից ի սպառ վերացնել մարդասիրական գործօնը, եւ դրա փոխարէն դնել խտրականութիւնը, իրարամերժութիւնը, ոյժը եւ անհամատեղելիութիւնը: Օսմանեան Կայսրութեան Արդարադատութեան Նախարարութեան բաժնի վարիչներից մէկը մի հայու ասում է. «Այս կայսրութիւնում բաւարար տեղ չկայ մեր եւ ձեզ համար, եւ աններելի անլրջու-

1. Նոյնը, էջ 201:
2. Նոյնը, էջ 274-275, 259:

թիւն կը լինի, եթէ մենք այս առիթից չօգտուենք որպէսզի ձեզանից ազատուենք»[1]: Համանման գաղափար է արտայայտել Թալէաթը՝ "Berliner Tageblatt" թերթին տուած հարցազրոյցում: Նա ասել է. «Մեր արարքները թելադրուած են ազգային եւ պատմական անհրաժեշտութեամբ: Թուրքիայի գոյութիւնը երաշխաւորելու գաղափարը պէտք է գերակայի ամէն մի այլ նկատառում»[2]: Իթթիհատականների վերոյիշեալ տեսակէտը պաշտպանում է նաեւ Գերմանիոյ ծովուժի Թուրքիայում կցորդ հարիւրապետ Հանս Կորվետ Հիւմանը: Նա, ըստ Մորկընթաուի օրագրի գրառման, գտնում էր որ հայերը անհաւատարիմ են գտնուել իրենց օսմանականութեան եւ Արեւելքում ապրած որեւէ մի անձ պէտք է ըմբռնի, որ երկու ազգերը (հայերն ու թուրքերը, Գ.Խ.) չեն կարող միասին ապրել եւ թոյլը պէտք է տեղի տայ (մահանայ)[3]: Թուրքերը գործում էին՝ կա՛մ մենք, կամ հայը սկզբունքով: Իսկ քանի իշխանութիւնը նրանց ձեռքում էր, նրանք փորձեցին հայերին զրկել ապրելու իրաւունքից:

Ցանցագործը մտածող էակ է, բայց սխալ մտածող: Նա չի կորցրել իր գիտակցութիւնը, բայց այն դրել է սխալ դեկավարութեան տակ: Նա գիտակցում է որ իր արարքը սխալ է, բայց բերում է արդարացուցիչ փաստարկներ ու հանգամանքներ: Ցանցագործը տարբերակում է իր արարքի մէջ իր համար «դրականը», «անհրաժեշտը» եւ ուրիշի համար «բացասականը», բայց արդարացուցիչ հիմքեր է «գտնում» հակաօրինականը, հակաբարոյականը գործադրելու: Իթթիհատականները այսպէս էին գնահատում իրենց ցեղասպանական արարքը: Դա նրանք իրենց համար նկատում են որպէս փրկութիւն ու պատմական անհրաժեշտութիւն, թէեւ հայերի համար դա կործանում էր, ոչնչացում: Այն, նրանց գիտակցութեան մէջ, անվերադարձօրէն վատթարացնում էր հայերի հետ յարաբերութիւնները: Նրանք հոգեբանական առումով պարտաւորուած են զգում անընդհատ լարուած պահել հայերի հետ իրենց յարաբերութիւնները: Անհնարին են համարում այդ յարաբերութեան բնականացումը, վերականգնումը, բարելաւումը: Երբ Մորկընթաուն Թալէաթին ասում է, որ Շմաւոնեանը թուրքերի բարեկամն է, նա պատասխանում է. «Ոչ մի հայ կարող է մեր բարեկամը լինել՝ նրանց նկատմամբ մեր արածից յետոյ»[4]: «Անիմաստ է,— պնդում է նա,— քննարկել հայերի հարցը: Մենք ձերբազատուել ենք նրանց երեք քառորդից: Հայեր չեն մնացել Պիթլիսում, Վանում եւ Էրզրումում: Ատելութիւնը հայերի ու թուրքերի միջեւ այժմ այնքան լարուած է, որ մենք

1. Dr. J. Lepsius, *La Rapport Secret*, p. 250.
2. Viscount Bryce, *The Treatment of Armenians*, p. 636.
3. The Diaries of Ambassador Morgenthau (1913-16), p. 305.
4. Նոյնը, էջ 401: Տես նաեւ՝ The Story of Ambassador Morgenthau, p. 339.

պէտք է վերջացնենք նրանց: Եթէ նրանց չվերջացնենք, նրանք կը ծրագրեն իրենց վրէժը»[1]: Այսպիսով, թուրքերը գտնում են որ իրենց հակահայկական գործունէութիւնը մշտատեւ է: Ցանցագործի ենթագիտակցութեան մէջ գործող մեղաւորութեան զգացումը նրան մղում է դէպի անընդհատ յանցագործութիւն, որպէսզի իրեն չվտանգի, որպէսզի բաւարարի իր ներքին պահանջը ու ապահովի իրեն հակադարձ հարուածից:

Երբ Մորկընթաուն այսպիսի մտայնութեան մէջ գտնուող օսմանեան ղեկավարութեանը յայտնում է Անգլիայի, Ֆրանսայի եւ Ռուսաստանի այն համատեղ յայտարարութիւնը, որ իրենց կառավարութիւնները պատերազմից յետոյ Թուրքիոյ նախարարներին անձամբ պատասխանատու պիտի նկատեն հայերի զանգուածային ջարդերի համար, նրանք կորցնում են իրենց հաւասարակշռութիւնը: Նրանք ըսպառնում են, որ իրենց մօտ գտնուող Դաշնակիցների յիսուն դիւանագէտներին պիտի թողնեն Կալիպոլիում եւ հրահրեն Տարտանէլում պայքարող դաշնակից ուժերին, որպէսզի նրանց վրայ ուղղեն Դաշնակիցների ռումբերը[2]:

Բ. ԹՈՒՐՔ-ԳԵՐՄԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԾԱԼՔԵՐԸ

Թուրքիան խճճուած էր պատերազմի եւ խաղաղութեան ու հաւանական դաշնակիցների միջեւ ճիշդ ընտրութիւն կատարելու հարցում: 15 Յունիսի, 1915 թ. Մորկընթաուն իր օրագրում գրում է. «Շմաւոնեանը հանդիպել է Բլուչէին (Պուլկարիոյ նախարարին, Գ.Խ.), որ նրան ասել է որ Թալէաթն ու Էնվերը վախեցած են, քանի որ եթէ հիմա իրենք խաղաղութիւն փորձեն հաստատել, ապա իրեն սուրիական նահանգների փոխարքայ յայտարարած Ճեմալը վերադառնալով կարող է նրանց մեղադրել անիմաստօրէն պատերազմի մէջ մտնելու մէջ, երբ ինքը դէմ էր այդ քայլին: Կարող է նա յեղափոխութիւն բարձրացնել»[3]: Որոշ գերմանացիներ նոյնպէս սխալ էին գտնում Թուրքիայի ներգրաւումը պատերազմի մէջ: Այդպիսիներից էր «Ֆրանքֆուրտեր Զայթունկ» թերթի թղթակից Փոլ Վէյցը: Նա իր հարցազրումը հիմնաւորում էր այն փաստարկով, որ Գերմանիոյ համար դժուար պիտի լինի պաշտպանել վերջինիս պահանջները խաղաղութեան սեղանին: Նա գտնում է որ Դաշնակիցները պէտք է շարունակեն կործանել Թուրքիան[4]: Թուրքիա պահանջում էր որ յաղթական Գերմանիան օգնի որ ինքը ստանայ Պալ-

1. *The Story of Ambassador Morgenthau*, p. 338.
2. *The Diaries*, pp. 226-227, 249.
3. Նոյնը, էջ 254:
4. Նոյնը, էջ 206:

քաններում եւ Ռուսաստանում իր «կորցրած» տարածքները եւ իրականացնի իր փանթուրքական ծրագիրը: Գերմանացի լրագրողը մի այլ առումով էլ Թուրքիան նկատում էր վատ կամ անվստահելի դաշնակից, քանի որ իրենք չեն կարող Թուրքիային պարտադրել կատարել որեւէ առաջադրանք, քանի որ նրանք միշտ ունեն Դաշնակիցների հետ անջատ խաղաղութեան պայմանագիր ստորագրելու հնարաւորութիւնը: Դա դամոկլեան սուրի նման կախուած է Գերմանիայի գլխին: Պոլսում Իտալիայի դեսպան Գամիլո Մարչէս Կարոնին գտնում էր, որ «Գերմանիան սխալ գործեց Թուրքիան պատերազմի մէջ ներգրաւելով: Նա այնքանով օգտակար էր, որքանով սպառնալիք էր Ռուսաստանին ու Եգիպտոսին: Իսկ այժմ, երբ Անգլիան, Ֆրանսան ու Ռուսաստանը սպառնում են Թուրքիային, նա դառնում է Գերմանիայի թուլութիւնը»[1]: Թուրքիան խնդիրներ յարուցող մի գործօն էր: Մի կողմից նա թոյլ եւ վտանգաւոր դաշնակից էր, եւ որպէս այդպիսին, համապատասխան վերաբերմունքի էր արժանանում: Միւս կողմից, իրեն զգալով որպէս ոչ հաւասարազօր ու լիարժէք դաշնակից, Թուրքիան ապրում էր բարդոյթներով ու հակասութիւններով հարուստ մի վիճակ:

Թուրքիան դիմագրաւում էր մի այլ բարդ գաղափարական ու հոգեբանական խնդիր: Ինքնասիրահարուած եւ իրենց պատմական յատուկ առաքելութիւն վերագրող Իթթիհատականները հաւասարազօր ու լիարժէք դաշնակիցներ չէին Առանցքի պետութիւններին: Այս փաստը ծնունդ էր տալիս ստորադասութեան բարդոյթ, որը Թուրք ղեկավարները ամէն կերպ աշխատում էին ծածկել:

Պատերազմի սկզբին՝ 29 Հոկտեմբերի, 1914 թ., Թալէաթը անկեղծօրէն ընդունել է որ իրենք որոշել են գերմանացիների կողմը բռնել՝ կամ ընկղմիլ կամ լողալ նրանց հետ: «Նա ասաց, որ իրենք պէտք է մի զօրաւոր երկիր ունենային յենուելու համար: Եթէ իրենք չհամաձայնուեն Գերմանիոյ վրայ յենուել, ապա պարտութեան պարագային նա առաջինը կ'առաջարկէր մասնահատել Թուրքիան: Իրենք պատրաստ են լողալ կամ ընկղմիլ Գերմանիոյ հետ»: Ամէն մի րոպէ Թուրք ղեկավարները իրենց ենթագիտակցութեան մէջ կրկնում էին որ իրենք «թոյլ» են, որ իրենք կարող են միջազգային յարաբերութիւնների փոթորկոտ ովկիանոսում խեղդուել, որ իրենց երազանքները կարող են օդը ցնդել, կարող է կայսրութիւնը տապալուել: Տեղին է յիշել Ապտուլ Համիտի որդու բարեկամ Տիկին Պոնալի խօսքերը, արտասանուած 11 Օգոստոսի, 1914 թ.. «Թուրքերը վախենում են որ Թուրքիայի վերջը կը գայ, եթէ իրենք արագօրէն, չմտածուած կերպով ներքաշուեն պատերազմի մէջ»[2]:

1. Նոյնը, էջ 446, 164:
2. Նոյնը, էջ 115-116, 87:

Սոյն բարդոյթը առաջ է բերում իր պաշտպանողական մեխանիզմը՝ ինքնագերագնահատում, վիրաւորուած ինքնասիրութիւն եւ դիւրագրգռուածութիւն: Թուրքերը հիւանդագին էին ընդունում բոլոր այն դէպքերը, երբ անհատներ ու կազմակերպութիւններ Գերմանիայի միջնորդութեանն էին դիմում Թուրքիայի հետ իրենց ունեցած զանազան բնոյթի խնդիրները լուծելու համար: Թուրքերը վիրաւորուած չեշտում էին որ իրենք ինքնիշխան են իրենց երկրի հարցերը, մանաւանդ ներքին գործերը կարգաւորելու ասպարէզում: Բայց քաղաքական եւ ռազմական կեանքի տրամաբանութիւնը աստիճանաբար մեծացրեց գերմանական դերակատարումը թուրքական կեանքի բոլոր ոլորտներում: Հալիլ պէյը (Երեսփոխանական Ժողովի նախագահ, Պետական Խորհրդի նախագահ, արտաքին գործերի նախարար) Մորկընթաուին տեղեկացրել է որ իրենք Գերմանիայի հետ պայմանաւորուել են գերմանացի խորհրդականներ ունենալ բոլոր գերատեսչութիւնների բաժանմունքներում, բացի Մեծ Վեզիրի, Արտաքին Գերատեսչութեան ու Շէյխ ուլ Իսլամի վարչութիւններում: Իսկ Ամերիկայի դեսպանը իր անհատական դիտումներից ելնելով արձանագրում է, որ պաշտօնական հաւաքոյթներում աստիճանաբար թուրք պաշտօնատարների փոխարէն ներկայանում են գերմանացիներ: Անկասկած, նման պատկերը անցանկալի ու անյարիր էր Մեծ Թուրքիայի, թուրանական ու մահմեդական աշխարհը ղեկավարելու առաքելութեան, անցեալի կորուստները վերականգնել միտող Թուրքիային: Պատահական չէ, որ դեռ 1915 թ. Փետրուարից, երկրով մէկ զրոյցներ են տարածուել որ Ատրիանապոլիսի կառավարիչ Հաճի Ատիլն ու Ճեմալ Փաշան (1913 թ. Պոլսոյ կառավարիչ, նաւատորմի նախարար (1914 թ.), օսմանեան 4-րդ բանակի հրամանատար եւ Սուրիայի կառավարիչ) փորձելու են երկրից վտարել գերմանացիներին ու Էնվերին[1]:

Գ. ԹՈՒՐՔԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ՀԻԱՍԹԱՓՈՒԹԵԱՆ Է ՄԱՏՆԻՈՒՄ

Թուրքական քաղաքակրթութեան ամենախիստ քննադատներն անգամ նշում էին օսմանեան զինուորի մարտական կարողականութիւնը, թուրքական զէնքի փառքը[2]: Այդ դրոյթը անհնարին եղաւ վերագրել Ա. Աշխարհամարտի թուրք բանակին: «Այստեղ մարդիկ մտածում են,– իր օրագրում 26 Օգոստոսի, 1914 թ. գրում է Ամերիկայի դեսպանը,– որ Թուրքիայի բանակը նախապատրաստուած չէ պատերազմի, եւ նա անկարող է մնել իր բանակը ու հոգալ նրա առողջապահական կա-

1. Նոյնը, էջ 414, 446, 187:
2. Eliot G. Mears, *Modern Turkey*, p. 9.

րիքները»[1]: Խիստ ուշագրաւ է այն փաստը, որ դեռ 16 Փետրուարի, 1914 թ. Թալէաթը օտար դիւանագէտներին յայտնում է թուրք բանակի ու ժողովրդի ոչ այնքան բարձր բարոյա-գաղափարական մակարդակի մասին: Մորկընթաու գրում է. «Թալէաթ մեզ ասաց որ բանակը յետադիմական էր, եւ որ այժմ փոխուած լինելով ինքը չի կանխագուշակում, որ նա կարող է տհաճութիւն պատճառել»: «Յետադիմական բանակի» փոփոխութիւնը վատ ընթացքով էր գնացել: Նա բացասական անակնկալը շուտով մատուցեց: Այլ կերպ չէր էլ կարող լինել: Հիասթափուած, թոյլ, տգէտ եւ առաջադիմութեան նկատմամբ անտարբեր ժողովուրդից դուրս եկած զինուորը չէր կարող այլ կերպ գործել: Թուրքիան պատերազմի մէջ էր մտնում թերահաւատ լինելով իր ժողովրդի ու վերակազմեալ բանակի նկատմամբ: Պոլսում Ամերիկայի դեսպանատան քարտուղար Ֆիլիփ Հոֆմանը, 19 Փետրուարի, 1914 թ. դեսպանին պատմել է թէ ինչպէս Գեներալ Լիման Ֆոն Սանդերսը ստիպել է Բ. գունդի հրամանատարին, որ վարժեցնի իր զինուորներին, ու նրան պատասխանել են որ նրանք բոպիկ են, կօշիկ չունեն: Լիմանն այն կարծիքին էր, որ թուրք զինուորներն ու սպաները կռուելու եւ աշխատելու մղում չունեն: Նրանք շատ շուտ հիասթափւում են: Իսկ Մորկընթաուն իր կողմից աւելացնում է. «Զօրակոչման դժուարութիւնները վշտալից են: Ահաւոր է տեսնել նորակոչիկներին քաղաքով մէկ երթ կատարելիս»: Ա.Մ. Նահանգների դեսպանատան քարտուղար Լեւիթի հաւաքած տեղեկութիւնների համաձայն, հարցականի տակ է դրուել մեծ բանակ ստեղծելու Էնվերի առաջարկը: Վերջինս թուրքական խորհրդարանից խնդրել է որ օրակարգի վրայ չդնեն թուրք զինուորին վճարուող հինգ դուրուշ ամսականի հարցը, քանի որ դա կարող է բացասաբար անդրադառնալ բանակում իր ունեցած հեղինակութեան վրայ: 27 Մայիսի, 1915 թ. գնդապետ Ֆրացիսը յայտնել է որ 136,000 թուրք զինուորներից 70,000-ը սպաննուել ու հաշմանդամ են դարձել, եւ եթէ տուեալ համաչափութեամբ թուրքական բանակի կործանումը շարունակուի, ապա հինգ օրում Թուրքիան կը պարտուի[2]:

Վատ էր նաեւ բանակի սնուցումը: Գերմանացի զինուորները, որոնք աւելի նպաստաւոր պայմաններում են եղել, ըստ Ֆրից Շորհէյմի, օրական երկու սիկար եւ հինգ սիկարէթ են ստացել սովից առաջացած ցաւը մեղմելու համար: Նրանք տաք ճաշ չեն ստացել 4-5 օրով, քանի որ չեն կարողացել շարժուն ճաշարանը հասցնել մինչեւ առաջաւոր գծերը[3]:

Անմխիթարական էր նաեւ բանակի բուժսպասարկումը: Բանակի

1. *Diaries of Morgenthau*, pp. 92-93.
2. Նոյնը, էջ 27, 28, 89, 84, 84, 78, 237:
3. Նոյնը, էջ 432:

բարձրաստիճան բժիշկներից Ճորճ Մէյերը, 24 Դեկտեմբերի, 1914 թ., դեսպանի հետ զրուցելիս յայտնում է որ երեք շաբաթ առաջ Էրզրումում ունեցել են 5,000 վիրաւորեալներ եւ մինչեւ այդ օրը նրանց որպիսութեան մասին ոչ մի տեղեկութիւն չունեն: Այնտեղ իրենց տրամադրութեան տակ եղել է միայն 3,250 մահճակալ, մի քանի բժիշկ ու մի քանի հիւանդապահուհի: Իսկ Փետրուար ամսին Սվազի շրջանում բծաւոր տիֆի համաճարակ էր սկսել: 15 Փետրուարի, 1915 թ., նոյն բժշկապետը տեղեկացնում է որ համաճարակը տարածուած է Երրորդ Բանակով մէկ: Նա նշել է որ 4,000 զինուորներ, 15 սպաներ ու 4,000 քաղաքացիներ բծաւոր տիֆից մահացել են Էրզրումի ու Սվազի շրջանում: Այդ հիւանդութիւնից մահացութիւնը կազմում է 30-50%: Դա հետեւանք էր ոչ միայն անկազմակերպուածութեան ու բուժանձնակազմի պակասի, այլ նաեւ նիւթական աղբիւրների սղութեան: Թուրքիայի ելեւմուտքի նախարար Մեհմետ Ճաւիտ պէյը 12 Նոյեմբերի, 1914 թ., իր վախն է յայտնել, որ երկրի նիւթական միջոցները անյուսալի են պատերազմի համար, եւ վիրաւորուած էր որ իր հետ չեն խորհրդակցել[1]:

Տարուայ սկզբին՝ 20 Յունուարի, 1914 թ. դեսպանի պատուին տրուած ճաշկերոյթում, Էնվեր նստած է եղել նրա կողքին եւ վարել է ազատ զրոյց: Նա՝ Էնվեր, նշել է որ հայրենասիրութիւնը հարկադրում է իրենց ամէն ինչ անել որպէսզի երկիրը փրկեն կազմալուծումից: Թալէաթն աւելացրել է որ իրենք էլի բոլորովին փող չունեն, եւ որ ինքը հիասթափուած է: Նա յոյս ունի, որ իրենց կարճատեւ դադար կը տան, որպէսզի ցոյց տան ուժեղ կառավարութիւն ստեղծելու իրենց մտադրութիւնը: Ի տես երկրի ղեկավարութեան ճառերին ու ջանքերին, դեսպանը իր օրագրում գրում է. «Արտաճմլիկ է դիտել նրանց պայքարը ֆինանսական օգնութեան համար»: Իսկ գերմանացի ֆինանսական խորհրդականը՝ Վասերմանը, տարուայ վերջում՝ 1 Դեկտեմբերի, 1914 թ., որոշում է թուրքերին թղթադրամ տպել տալ[2]: Նշենք որ թուրք կառավարութիւնը բոլոր տեսակի ապօրինի ու օրինական ճանապարհով տուրքեր, տուգանքներ ու հարկեր հաւաքելով բնակիչներից, փորձում էր պետական դրամարկղը լցնել: Բռնագաղթուած ու կոտորուած հայերի նիւթական միջոցների զգալի մասը հասնում էր երկրի ղեկավարութեան:

Դ. ՅԵՂԱՍՊԱՆ ԹՈՒՐՔԻ ԱՆՄԽԻԹԱՐ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՈՒ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԸ

19-րդ դարի վերջում եւ 20-րդ դարի սկզբում Օսմանեան Կայս-

1. Նոյնը, էջ 155, 180, 127:
2. Նոյնը, էջ 19, 140:

բութիւնը ապրում էր իր կործանման հոգեվարքը: Պատահական չէ որ նրան անուանում էին «Եւրոպայի հիւանդ մարդը, պետութիւնը»: Նա կորցրել էր կայսրութեան տարածքի մեծ մասը, միջազգային յարաբերութիւններում իր հեղինակութիւնն ու ոյժը: Երկիրը նիւթապէս սնանկացել էր: Կայսրութեան տնտեսական, քաղաքական ու ընկերային յարաբերութիւններն այնքան յետամնաց ու ժամանակավրէպ էին, որ դարձել էին միջազգային բարենորոգման առարկայ:

Երբ Եւրոպան պատրաստւում էր Առաջին Աշխարհամարտի, Թուրքիան հնարաւորութիւն ունէր իր վիճակը բարելաւել գործօն չեզոքութեամբ: Բայց նա նախընտրեց պատերազմը, որի համար հեռու էր պատրաստ լինելուց: Պատերազմին նա մասնակցեց որպէս Առանցքի անդամ, երբ դա նրա համար նպատակայարմար չէր: Այս վիճակում Թուրքիային բնորոշ հակասութիւններն ու թուլութիւնները աւելի ընդգծուեցին:

Որո՞նք էին ժամանակաշրջանի Թուրք ազգի բնորոշ գծերը ըստ նրա ղեկավարների, դաշնակիցների եւ անկողմնակալ դիտորդների: Դրանք որոշիչ դեր խաղացին նրա թոյլ տուած ճակատագրական սխալների, նրա վարքի բացասական շեղումների առաջացման գործում:

Դեռ 16 Փետրուարի, 1915 թ. Թալէաթը յայտնում է Թուրք ազգի ոչ այնքան բարձր գաղափարական ու բարոյական մակարդակի մասին: Այդ մասին Մորկընթաուն իր Օրագրում գրում է որ իթթիհատական ղեկավարութիւնը հիասթափուած է իրենց ժողովրդի թուլութիւնից ու տգիտութիւնից: Նրանք աւելի արագ արձագանգ են ակնկալել ժողովուրդից՝ առաջադիմութեան վերաբերեալ իրենց ներկայացրած կոչերի նկատմամբ: Նրանք սպասել են որ Թուրք ժողովուրդը աւելի ուժեղ քաջալերանք ու կորով ցոյց կը տայ: Իսկ դեսպանն ինքը իր կողմից աւելացնում է. «Ես լրջօրէն մտահոգ եմ ապագայով: Ես վախենում եմ որ Թալէաթն ու Էնվերը պիտի չկարողանան բաւարարել իրենց հետեւորդներին, երբ նրանք կողոպուտի համն առնեն: Նրանք աւարի պաշտպաններ են ու տարուած են դրանով (դրա խենթն են)»[1]:

Դեսպան Մորկընթաու մասնաւոր ուշադրութիւն է դարձնում 28 Նոյեմբերի, 1915 թ. Թուրքիայի արտաքին գործերի նախարարի Ռեշիտ Հիքմէթի հետ իր ունեցած զրոյցի վրայ: Նա ցնցուած է առաջադիմութեան, առաջընթացի եւ երկրի արդիւնաբերացման (industralization) նկատմամբ Թուրքիայի կառավարութեան պաշտօնական դիրքորոշումից: Դեսպանը առաջարկում է Հիքմէթին մասնագէտներ հրաւիրել երկիր, որպէսզի տեղում մասնագէտներ պատրաստի՝ երկրի արդիւնաբերութիւնը զարգացնելու համար: Նա բերում է Ճաբոնի օրինակը եւ ընդգծում այդ գործի շահաւէտութիւնը տնտեսութեան, գիտութեան եւ

1. Նոյնը, էջ 27:

երկրի ընդհանուր զարգացման գործում: Թուրքիայի պաշտօնատարը առարկում է փաստարկելով, որ իրենք չունեն հանքահորեր: Մորկընթաու մատնացոյց է անում կայսրութեան տարածքում եղած քարիւղի հանքերը, որոնք ազատօրէն կարող են փոխարինել հանածոներին: Այլ ելք չգտնելով, Հիքմէթ շեշտում է որ Թուրքիան մտադիր է մնալ գիւղատնտեսական երկիր, եւ արտասահմանում վաճառելով իրենց հարուստ բերքը բաւարարել երկրի պահանջները: Ամերիկացին այն անուանում է Թուրքական շովինիզմ, հաւանաբար դրա համար որ Թուրքերը այդպիսով միտում ունեն պահպանել իրենց աւանդական ապրելակերպը, կենցաղը[1]: Այն, ինչպէս գիտենք, որոշ արեւելեան երկրներ օգտագործում էին եւրոպականացման բացասական ազդեցութիւնների դէմ պայքարելու, ազգայինն ու աւանդականը պահպանելու եւ առաջադիմութեան «վնասների» առաջքն առնելու համար: Բոլոր դէպքերում դա ժամանակավրէպ քայլ է: Այսպիսին էր Իթթիհատականների «առաջադիմութիւն» հասկացութեան բովանդակութիւնը: Այդպիսի կեցուածքով ու մտայնութեամբ էլ նրանք լուծում էին իրենց հարցերը եւ պատճառ դառնում բազմաթիւ սխալների ու հակասութիւնների, քանի որ այն հակասում էր զարգացման միջազգային միտումներին, երիտասարդութեան ձգտումներին ու Թուրքիայի դաշնակիցների քաղաքակրթութեան:

Թուրքական կեանքի նման ուղղուածութիւնը անմիջապէս կապուած էր նաեւ երկրի բանակի ու ողջ բնակչութեան մահմետականացման քաղաքականութեան հետ, քանի որ այդ երկուսը ըստ էութեան փոխադարձաբար կապուած են իրար հետ:

Պատերազմի ընթացքում իրենց ծրագրերը գործադրելու համար Իթթիհատականները անհրաժեշտ են նկատում դիմել մի այլ անբնական քայլի: Նրանք որոշում են բազմազգ ու բազմակրօն բնակչութիւն ունեցող երկրի բանակը ստեղծել միայն մահմետականներից: Էնվերը, 3 Օգոստոսի, 1914 թ. հաղորդել է Մորկընթաուի, որ քրիստոնեաները կարող են փրկագինով ազատուել զինուորական ծառայութիւնից, բայց մահմետականները՝ ոչ: Նա ընդգծել է որ իրենք մտադիր են ստեղծել բացառապէս մահմետական բանակ, քանի որ իրենց վերջին պարտութիւնների պատճառը քրիստոնեաներն են եղել: Իրենք, աւելացրել է նա, աւելի մարդ են զինուորագրել, քան կարիք ունեն: Փողի կարիք ունենալով կարող են փրկագինով քրիստոնեաներին բաց թողել[2]:

Իթթիհատականների նպատակակէտը եղել է ոչ միայն օսմանեան բանակի մահմետականացումը, այլ նաեւ ողջ երկրի մահմետականացումը, որը լոկ համոզման եղանակով իրականացնել չէր կարելի: 10

1. Նոյնը, էջ 398:
2. Նոյնը, էջ 83:

Յուլիսի, 1915 թ. Մորկընթաու իր օրագրում գրում է. «Նրանք ակնյայտորէն վճռել են մահմետականացնել ողջ երկիրը եւ կործանել ու ճզմել բոլոր ոչ-մահմետականներին: Թալէաթն ասաց, որ իրենք խորապէս քննել են հարցը եւ եկել այն եզրակացութեան, որին կառչելու են: Երբ ես նրան նկատել տուի որ ողջ աշխարհը նրանց կը մեղադրի, նա պատասխանեց որ իրենք գիտեն ինչպէս պաշտպանուել, այլ կերպ ասաց, նրանց վէճը չէ աշխարհի կարծիքը»[1]:

Կարճ՝ հայերին բնաջնջելու իթթիհատական մոլուցքը եղել է նրանց կայուն ու անփոփոխ քաղաքականութիւնը: Այս ինքնավստահութեամբ թուրքերը իրականացրին Հայերի Ցեղասպանութիւնը եւ շարունակում են այսօր պաշտպանուել նոյն ոգով:

Գերմանական «Ֆրանքֆուրթըր Զայթունկ» թերթի երկարամեայ թղթակից Փոլ Վէյցը, որ քաջատեղեակ էր Օսմանեան Կայսրութեան կեանքի տարբեր երեսներին, ուշագրաւ դիտողութիւններ ունի թուրքերի մասին: Նրա կեցուածքը ճշդելու համար նշենք որ նա գտնում էր որ Թալէաթը շատ կարող, ուղղամիտ, հայրենասէր եւ ազնիւ անձնաւորութիւն է: Այսպէս կարծող անհատը պնդում է. «Թուրքի մեծ խնդիրն այն է, որ նա չի կարող մի քանի ամսից աւելի հեռուն տեսնել: Գերմանացին նրան չի կարող մատնացոյց անել, որ նա կործանում է ինքն իրեն»: Անհեռատեսութիւնը մտային, իմացական թերութիւն է, անկազմակերպուածութեան հիմքերից մէկը: Անհեռատես թուրքի մտածողութիւնն ու գործունէութիւնը կործանեց մեծ կայսրութիւնը ու մեծամեծ վնասներ հասցրեց բազմազգ կայսրութեան ժողովրդներին: Փոլ Վէյցը աւելացնում է. «Ցաղթական թուրքի հետ դու ոչ մի բան անել չես կարող: Եթէ վաղը նրանք մեծ պարտութիւն կրեն, որեւէ բան կարող ես անել (նրանք պիտանի կը դառնան, Գ.Խ.)»[2]: Ցաղթանակը, յաջողութիւնը գլխապտոյտ է տալիս թուրքին, հաւանաբար նրան մեծամտութեան, մեծապետական կեցուածքի պատճառով: Ցնցումը, պարտութիւնը նրան խելքի է բերում, կարգի է հրաւիրում: Բայց պատմութիւնը ցոյց է տալիս որ 17-րդ դարից մինչեւ 20-րդ դարի սկզբի նրա պարտութիւնները նրան խելքի չբերին: Միայն կայսրութեան կործանման ցնցումը որոշ ուղղումներ մտցրեց թուրքական կեանքում: Այս մէկն էլ թուրք մարդու ինքնատիպ իմացական ու հոգեբանական թերութիւնն է:

Գերմանացի թղթակիցը գերմանացիների վիճակը Թուրքիայում համեմատել է մի մարդու հետ, որ փորձում է թելով ու ասեղով հիւսել, երբ թելը անընդհատ դուրս է գալիս եւ ինքը ստիպուած է սկսել նորից[3]: Ապարդիւն աշխատանք, երբ ստիպուած ես կրկնել նախորդ շըրջանը առանց նուաճումներ արձանագրելու: Անհեռատես, անկազմակերպ, ինքնագլուխ եւ մեծամտական հովերով կատարուող աշխատանքը այլ կերպ ընթանալ չէր կարող:

1. Նոյնը, էջ 273:
2. Նոյնը, էջ 18, 446:
3. Նոյնը, էջ 447:

Երկրի վիճակը խտացուած ձեւով արտայայտում է դեսպանի հետեւեալ արտայայտութիւնը. «Որքան աւելի շատ մէկը զրուցում է Թալէաթի ու միւսների հետ, այնքան նա աւելի է համոզւում, որ չկայ "երկրում" ունեցուածքի ապահովութիւն եւ չկայ արդարութիւն՝ ապահով լինելու համար»[1]:

Որպէս բողոքի նշան իր պաշտօնից հրաժարւում է նաեւ երկրի կրօնապետը: Շէյխ ուլ Իսլամը հրաժարուել է սննդամթերքի պակասի, մետրեսէները լուսաւորութեան նախարարութեան ենթարկելու, Շերիաթի դատարանները արդարադատութեան նախարարութեան կցելու, եւ հայերի կոտորածի դէմ բողոքելու համար[2]: Բնական է որ այս եւ նման այլ պատճառների հետեւանքով ժողովուրդի մեծամասնութիւնը չէր սիրում երկրի նոր ղեկավարութիւնը՝ Իթթիհատականներին:

Գերմանիոյ ծովուժի ներկայացուցիչ Հիւմանը երկրի բնակչութիւնը բաժանում է երկու հակադիր մասի՝ «հին թուրքերի» եւ «նոր թուրքերի»: Վերջիններս հիմնականում քաղաքներում են ապրում եւ աւելի համակրում են Իթթիհատականներին, իսկ «հին թուրքերը» առաւելաբար գաւառաբնակ են եւ այնքան էլ հաշտ չեն նոր կարգերի հետ: Նա իշխանութիւնների կարեւոր խնդիրներից մէկը համարում է հսկողութեան տակ պահել «հին թուրքերին»: Վերաշարադրելով ծովուժի ներկայացուցիչի հետ իր ունեցած զրոյցը Մորկընթաու գրում է. «Նա ընդունեց որ ինքը չի ցանկանում Վանկընհէյմի նման գնալ մինչեւ գերմանական բողոքները, եւ որ ինքը իսկապէս զգում է որ թուրքերը արդարացուած են հայերի կործանման (ջարդերի) հարցում՝ իրենց անվտանգութեան տեսանկիւնից: Հիւմանն ասաց որ ինքը վստահ է, որ հայերը ցանկանում են Թուրքիայի իշխանութեան կործանումը: Նա նաեւ ասաց որ Պոլսից դուրս, ի բացառեալ Զմիւռնիայի եւ Պէյրութի նման մեծ քաղաքներից, ամէն մէկը "հին թուրք" է եւ ոչ ի նպաստ արդի կառավարութեան, եւ հետեւաբար վերջինս իր հնարաւորութեան սահմաններում եղած ամէն միջոց պէտք է գործադրի իրեն պաշտպանելու համար, եւ որ այդ թուրքերը մոլեռանդներ են»[3]: Այսպիսով, իթթիհատական իշխանութեան նկատմամբ անբարեացակամ են տրամադրուած ոչ միայն հայերը, այլ նաեւ Թուրքիայի բնակչութեան մեծ մասը, որոնցից պարտաւորուած է պաշտպանուել տիրող պետութիւնը:

Անկասկած վերոյիշեալ բոլոր գործօնները իրենց որոշիչ դերն են

1. Նոյնը, էջ 76:
2. Նոյնը, էջ 308, 311-312:
3. Նոյնը, էջ 76:

ունեցել Թուրքիայի ազգութիւնների նկատմամբ մշակած քաղաքականութեան մէջ, Թուրք-Հայկական յարաբերութիւններում, Հայասպանութեան ծրագրաւորման ու գործադրման ընթացքում: Այդ գործօնները որոշիչ են եղել նաեւ Թուրք մարդու, մանաւանդ իթթիհատականների անհատականութեան կերտման գործում:

Ե. ԹՈՒՐՔ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀԱԼԱԾԱԽՏԸ ԵՒ ԿԱՍԿԱԾԱՄՏՈՒԹԻՒՆԸ (PARANOIA)

Ինչպէս տեսանք, Օսմանեան Կայսրութեան գրեթէ իւրաքանչիւր ասպարէզում, նախաեղեռնեան եւ եղեռնեան շրջաններում ակնյայտ են անյաջողութեան մեծ հաւանականութիւններ: Մազից են կախուած եղել երկրի ֆինանսները, միջազգային յարաբերութիւնները, բանակի վիճակը, յաղթանակի հաւանականութիւնը, բանակի ու ժողովրդի մատակարարումը, ներքին կայունութիւնն ու անդորրը: Զենք կարող անտեսել ղեկավարութեան մէջ առկայ յարաբերութիւնների ներքին լարուածութիւնը: «Մի դիւանագէտ,– գրում է Մորկընթաու,– ասաց, որ իր տեղեկութիւնների համաձայն Թալէաթի ու Էնվերի յարաբերութիւնները լարուած են թւում: Էնվերը Գերմանիոյ եւ Աւստրիոյ դեսպաններին ասել է որ հայերի նկատմամբ ծայրայեղ ձեռնարկումները Թալէաթի գործն է եւ որ ինքը դրանց համաձայն չի եղել: Սրանից բացի նկատելի է որ Թալէաթ գլխաւոր կառավարիչ է նշանակել իր կամակատարներին, ու նրանց ազդարարել է որ նրանք ուշադրութիւն պէտք չէ դարձնեն Կոստանդնուպոլսից ստացուած որեւէ կարգադրութեան վրայ, բացի իր հրամաններից: Սրա հետեւանքով նրանք այլ բաժանմունքներից ստացուած հրամանները անտեսում են»[1]:

Պոլսի ոստիկանապետ Պետրի պէյը Ամերիկայի դեսպանին յայտնել է որ Միութիւն եւ Առաջադիմութիւն կազմակերպութեան շատ անդամներ դէմ են եղել հայերի հետապնդումներին: Ինչպէս տեսանք, փոխարքայ դարձած Ճեմալից զգուշանում էին Էնվերն ու Թալէաթը: 11 Օգոստոսի, 1914 թ., Մորկընթաու իր օրագրում գրում է. «Զրոյցներ են շրջում Էնվերի պետական յեղաշրջման մասին»: Այս նշանակում է որ կառավարող եռեակի յարաբերութիւնները արդիւնաւէտ չէին, լարուած էին: Թալէաթ՝ շրջապատի մարդկանց սիրաշահելու համար, հաճոյանում էր, բայց չունէր անհրաժեշտ կորովը: Իսկ Էնվերն իրեն պատկերացնում էր իբրեւ նոր ժամանակների Նափոլէոն, ու ձգտում էր դառնալ Առաջին Կոնսուլ»[2]:

Ուշագրաւ է 23 Փետրուարի, 1915 թ., Պոլսոյ գիշերային ցոյցի ու

1. Նոյնը, էջ 285:
2. Նոյնը, էջ 327, 89-90, 172, 88, 179:

դրա մեկնաբանութեան մասին Մորկընթաուի գրածը. «Կէս գիշերին, պատերազմի դէմ բողոքող բազմաթիւ խմորատիպ ծանուցագրեր բաժանուեցին Պոլսում: Զրոյցները ասում են որ նրանք ուզում են նախազգուշացնել Թալէաթին»: Իսկ 28 Յունուարի, 1915 թ., նա օրագրում գրել է. «Զրոյցները խտացել են: Այստեղ Ճեմալին են սպասում. վախենում են Միութիւն եւ Առաջադիմութիւն կազմակերպութեան դէմ սպասուող յարձակման ակնկալութիւնից: Ուրիշներ ասում են որ նրանք վախենում են ժողովրդական ընդվզումներից: Վախենում են, որ եթէ զանգուածները յայտնաբերեն իրենց (Իթթիհատականների) թուլութիւնը, ապա կարող է ցանկանան փոխել կառավարութիւնը: Լուրեր տարածւում են որ աւելի քան 100,000 զինուորներ կորած են Կովկասում»[1]:

Այս վիճակում ապստամբութիւնը նկատւում է իրաւ հնարաւորութիւն: Դեռ 28 Դեկտեմբերի, 1914 թ., Թուրքական իշխանութիւնները ներքին ապստամբութիւնից աւելի էին վախենում, քան՝ թշնամիների կողմից երկրի ծովափնեայ շրջանների ու Տարտանէլի ռմբակոծումներից: Ամերիկայի դեսպան Մորկընթաու այդ նկատելով, գրում է իր օրագրում. «Պետրի (Պոլսոյ ոստիկանապետը, Գ.Խ.) բոլոր անդորձ երիտասարդներին հեռացնում է [քաղաքից], վախենալով որ նրանք կը միանան Միութիւն եւ Առաջադիմութիւն Կոմիտէի դէմ ըմբոստութեան: Ես կարծում եմ որ նրանք այնքան են վախենում դրանից, որքան ռմբակոծումներից: Կան [քաղաքում] լոկ յիսուն իսկապէս կարեւոր Միութիւն եւ Առաջադիմութիւն խմբի մարդիկ»[2]: Ուշագրաւ է այստեղ երկու հանգամանք: Նախ խօսւում է երիտասարդների ապստամբութեան մասին, որոնք զօրակոչուած պէտք է լինէին: Ուրեմն սա բանակից դուրս մնացածների, արտօնեալների մասին է: Երկրորդ, Մորկընթաու չի նշում հաւանական ապստամբների ազգային կամ կրօնական պատկանելիութեան մասին: Հաւանաբար նա նկատի ունի հակաիթթիհատական համընդհանուր մի շարժում: Յիշենք, որ որպէս բողոքի արտայայտութիւն, հրաժարական էր տուել Շէյխ ուլ Իսլամը:

Ամերիկայի դեսպան Հենրի Մորկընթաու 18 Հոկտեմբերի, 1915 թ. անում է հետեւեալ ուշագրաւ եզրակացութիւնը. «Նրանք՝ Թուրքերը, գիտակցում են իրենց վիճակի անյուսալիութիւնը եւ կուում են համապատասխանաբար»[3]:

Նման պարագաներում, որոշ անհատներ, մանաւանդ ղեկավարներ եւ յատկապէս բռնակալ ղեկավարներ, դառնում են կասկածամիտ, տառապում են ընկճուածութեամբ, հալածախտով (paranoia): Սոյն հոգե-

1. Նոյնը, էջ 184, 173:
2. Նոյնը, էջ 158:
3. Նոյնը, էջ 360:

բանական վիճակում անհատը կամ ունենում է կայուն, անփոփոխ, համակարգուած, տրամաբանական կառոյց ունեցող պատրանքներ (մեծամասամբ կապուած այն մտքի կամ զգացումի հետ, որ մարդիկ ցանկանում են իրեն վնասել) եւ կամ էլ կեղծ համոզմունքներ, որոնք մեծամասամբ առնչւում են հալածանքի ու մեծամտութեան հետ: Վերջին դէպքում անհատը իրեն նկատում է խիստ կարեւոր առաքելութեամբ շնորհուած ու վսեմացուած մէկը: Նման հոգեբանական յատկութիւններ ունեցողները իրար հետ անկապ կամ արտաքնապէս կապուած երեւոյթները իրար հիւսելով ստեղծում են դաւադրութեան տեսութիւններ, պատրանքներ: Իթթիհատական ղեկավարութեան մօտ նկատելի է այդ երկու երեսների համադրութիւնը:

Իթթիհատականները Երիտասարդ Թուրքերի միւս այլ խմբերի ու կազմակերպութիւնների հետ պայքարեցին սուլթանականութեան դէմ եւ յեղափոխութեան համար: Բայց նրանք դաւաճանեցին ինչպէս յեղափոխութեանը, այնպէս էլ իրենց Թուրք եւ այլ ազգերի (արաբ, ալպան, պուլկար, յոյն, հայ) զինակիցներին: Տարսոնի Գոլէճի նախագահ Վեր. Դոկտ. Թոմաս Քրիստին իրազեկ էր որ Իթթիհատականները, որպէս զինակից հայերին, իրենք էին բաժանել զէնքերն ու ռազմամթերքը: Նրանք լաւ գիտէին դրանց տեղը եւ դրանք գտնում էին, հայերին դաւաճանութեան մէջ ամբաստանելու համար: Նրանք՝ Իթթիհատականները, այդ պատճառով էլ բնական էին համարում, որ ուրիշներն էլ իրենց կարող են կամ պիտի դաւաճանեն: Դրա համար էլ, ինչպէս տեսանք, Թալէաթը, կազմակերպութիւնների դէմ սանձազերծած քաղաքականութիւնը արդարացնելիս, շեշտում էր որ ինքը յեղափոխական է եղել եւ գիտի թէ այլատիպ կազմակերպութիւնները ինչեր կարող են անել: Պատահական չէ, որ Մորկընթաու նկատում է. «Նրանք ոչ մէկի չեն վստահում»[1]:

Ինչպէս նկատեցինք, իթթիհատական ղեկավարները ամէն տեղ ապստամբութիւն էին տեսնում կամ փնտռում: Մեծ դիւանագէտը ցոյց տուեց, որ նրանք տեսնում էին հիմնականում երեք տեսակի ապստամբութիւններ. ժողովրդական, զինակիցների եւ հակառակորդների: Իրենց համարելով թշնամիներով շրջապատուած՝ նրանք դառնում էին գերզգայուն, պոռթկումների ու ծայրայեղութիւնների ընդունակ, անողոք, անզիջող: Նրանց այդպիսի վարքը սաստկանում էր, քանի որ նրանք համոզուած էին որ այդպիսով այդ մարդիկը թոյլ չէին տալիս որ Թուրքիայի փրկութեան իրենց վստահուած գործը յաջողութեամբ աւարտի: Իրենք իրենց տուած «սուրբ առաքելութիւնը» համարում էին ուղղել անցեալի սխալները, վերականգնել կորսուած տարածքներն ու հեղինակութիւնը, երկիրը մաքրել այն տարրերից, որոնք նպաստել

1. Նոյնը, էջ 279, 195:

են Թուրքիայի անկմանը: Ազգային նման «վեհ» առաքելութիւնը իրագործելու ճանապարհին նրանք ոտնահարում էին բոլոր բարոյական նորմերը, ազգային ու միջազգային օրէնքները: Նրանք ղեկավարւում էին «Նպատակը արդարացնում է միջոցը» սկզբունքով: Քանի ծուռ կանոնով ուղիղ գիծ հնարաւոր չէ քաշել, նրանք կորցրին եղածը, բայց պատմութիւնից չսովորեցին, կամ մեծ բարեկամների օգնութեամբ, պատմութիւնը ծուռ կարդացին:

Ա.Մ. Նահանգների Պոլսոյ դեսպան Հենրի Մորկընթաուի Կալիբոլիի (Տարտանէլի) պատերազմի քաղաքական ու գաղափարական մեկնաբանութիւնը մեզ տալիս է նաեւ Թուրքիոյ ղեկավարների մտածողութեան ու հարցերի նկատմամբ հիւանդագին մօտեցում մշակելու եղանակին խորքը:

25-26 Օգոստոսի, 1914 թ., Էնվերի օգնական Քիազիմ պէյը, Զմիւռնիայի նահանգապետ գեներալ Ռահմի պէյը եւ Գերմանիոյ դեսպան Վանկենհէյմը յայտնում են այն գաղափարը, որ Զմիւռնիան ու Պոլիսը Թուրքիան կը հրկիզի կամ կ'աւերի, եթէ Դաշնակիցները փորձեն գրաւել քաղաքները:

22 Փետրուարի, 1915 թ. մինչեւ 3 Մարտի, 1918 թ., Թուրքերը տեփրեսիայի մէջ են Պոլսի ճակատագրի անորոշութեան պատճառով: Մտածում են այն քանդել կամ հրկիզել, բայց քրիստոնեաներին չյանձնել:

3 Մարտի, 1915 թ., Էնվերը նշում է որ իրենք կարող են Դաշնակիցներին հեռու պահել Պոլսից: Նա պնդում է որ Պոլսոյ կորուստը Թուրքիայի պարտութիւն չի նշանակում:

4 Մարտի, 1915 թ., Էնվերը պնդում է որ ինքը վախ չունի որ թշնամին կարող է մտնել Պոլիս:

17 Ապրիլի, 1915 թ., Թալէաթը Քալուշչէին տեղեկացնում է որ ռուսական ընկերակցութիւնը ռումբեր է պատրաստել, որպէսզի դրանք հայերին ուղարկի Պոլսում օգտագործելու համար:

28 Ապրիլի, 1915 թ., Էնվերը Մորկընթաուին ասել է որ հայերը ռումբ են օգտագործել հանրային վայրերում, նամակատան դէմ: Թուրքերը վախեցել են որ հայերը նոյնը կարող են անել Պոլսում: Հետեւաբար, եզրակացրել է Էնվերը, որ իրենք որոշել են հայ երեւելիներին ուղարկել Այանջիք, որտեղ նրանք արգելակուած են չարիք կատարելուց[1]:

Այս մի դասական օրինակ է, որ բացայայտում է այն իրողութիւնը թէ ինչպէս հալածախտով ու կասկածամտութեամբ տառապող մարդը կարող է իր սեփական գաղափարները, ծրագրերը, մտադրութիւնները վերագրել ուրիշին ու ըստ դրա ղեկավարել իր վարքը: Երբ իրաւ էր Դաշնակիցների կողմից Պոլիսն ու Զմիւռնիան գրաւելու վտանգը,

1. Նոյնը, էջ 89, 92, 184, 185, 189, 190, 194, 217, 218:

Թուրքերը մտածում էին այդ քաղաքները հրկիզելու եւ կործանելու մասին: Երբ այդ վտանգը վերացաւ, նրանք սկսեցին հայերին ամբաստանել այն մեծ քաղաքները պայթեցնելու ու հրկիզելու յանցանքով:

Իթթիհատական բռնակալ ղեկավարների ներքին դրդապատճառների մէջ դժուար չէր նկատել ի վնաս ուրիշի կիրառուած ուժի չարաշահում, չարի ու բարու միջեւ տարբերակներու թուլութիւն: Նրանք ղեկավարւում էին՝ «ճիշդ է այն, ինչ ծառայում է իմ շահերին» սկզբունքով: Նրանց վարքում նկատելի էր անհատականութեան թուլութեան, չհիմնաւորուած յարմարողականութեան եւ բացասական նախապաշարումների ինքնատիպ մի համադրութիւն:

Զանգուածներին իրենց ենթարկելու, իրենց շուրջ հաւաքագրելու ու իրենց ծրագրի կատարածուն դարձնելու համար օսմանեան ղեկավարութիւնը բացի բռնութեան տարբեր ձեւերից ու խաբէութիւնից գործ էր դնում նաեւ գաղափարական լծակներ: Դրանց թւում, ինչպէս տեսանք նախորդ էջերում, առանձնանում էին կորսուած տարածքները վերագրաւելու միջոցով Մեծ Թուրքիա կերտելու, թուրանական մեծ կայսրութիւն ստեղծելու, իսլամական աշխարհը փրկելու, իսլամական աշխարհում թուրքերի յատուկ առաքելութեան մասին գաղափարները: Թուրք բնակչութեան մեծամասնութիւնը հաւատալով այդ երազներին՝ մասնակցեց Իթթիհատականների հայաջինջ քաղաքականութեան: Քիւրտ ղեկավարութեանը նա խաբեց՝ ասելով որ իբր հայերը ծրագրում են գրաւել նրանց բնակեցրած վայրերը, դրանք վերցնելով ստեղծել հայկական պետութիւն կամ ինքնավարութիւն, գրաւել քրտերի ունեցուածքը եւ սպաննել իրենց: Հետեւաբար, խորհուրդ էր տրւում պաշտպանել կառավարութեան հակահայ ծրագիրը: Համագործակցութեան համար կառավարութիւնը նրանց խոստացաւ համապատասխան վարձատրութիւն: Քիւրտ ցեղապետների զգալի մասը հաւատաց նրանց ու նպաստեց թուրքերի հայասպան գործին: Շուտով, մի քանի տարի անց, թուրքերը ծաւալեցին հակաքրտական արշաւը, որ շարունակւում է մինչեւ օրս:

Թուրքական պետութեան գաղափարական ու ռազմավարական մեքենան իր թուրք եւ իսլամ բնակչութեանը ձգտեց համոզել որ նշուած նպատակների, իդէալների ու երազների իրականացմանը խանգարում են քրիստոնեաներն ու հրեաները՝ ի մասնաւորի հայերը, պուլկարները, յոյները: Նրանց «վնասագործումը», «չէզոքացումը» նրանք նկատեցին ազգային-հայրենասիրական ու կրօնական առաջնահերթ խնդիր: Թուրքական ռազմավարութիւնը մի կողմից թուրքի գիտակցութեան մէջ արմատաւորեց կեղծ երազանքներ, անիրապաշտ ծրագրեր ու ազգայնամոլական ծայրայեղ զգացումներ, եւ միւս կողմից մատնանշեց իրենց ազգային թշնամուն՝ ոչնչացման թիրախին եւ սկսեց վերջինիս առանձնացնել, այլակերպել, ամբաստանել, մեղադրել ու սեւացնել: Այսպիսով իթթիհատական Թուրքիան, առանց դատի ու դատաստանի, ապացուցուած, հիմնաւորուած համարեց իր գաղտնի ժողովներում տուած վճիռը՝ բռնագաղթի ենթարկել, կոտորել ու ջարդել հայերին:

Ցեղասպանութեան մղող անհատական ու հաւաքական մեխանիզմների ընձեռած հնարաւորութիւնները իրականութիւն դարձան Թուրքիայում, քանի որ այդ երկրի ընկերային ու քաղաքական կառոյցները ստեղծել են նպաստաւոր պայմաններ: Ամբողջատիրութիւնը, բռնապետութիւնը, կամայականութիւնը, համատարած ահաբեկչութիւնը, տիրող ընկերային շերտաւորումները, խտրականութիւնը, իրաւազրկումը, ազգամիջեան ու կրօնական յարաբերութիւնների լարուածութիւնը պարարտ հող էին ստեղծել Ցեղասպանութեան ու նման բռնարարքների ծաւալման համար:

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԻՑ ՓՐԿՈՒԱԾ ՀԱՅԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Միշտ չէ որ ցեղասպանական արարքի կամ արարքների դադարեցման զուգահեռ դադարում է նաեւ ցեղասպանութիւնը: Այն շարունակւում է մարդկանց հոգեկան, իմացական ու մշակութային աշխարհում: Այդ շարունակութիւնը՝ հոգեխոցութիւնը (trauma), *յաճախ նուազ աղիտաբեր, բարդ ու ծանր չէ, քան բուն ինքը արարքը:*

19-րդ դարի վերջերին եւ 20-րդ դարի սկիզբներին ուսումնասիրութեան առարկայ էին միայն մարմնական (ֆիզիքական) խոցերը: Նոյնիսկ չէին ընդունում հոգեկան եւ իմացական խոցերի գոյութիւնը[1]*: Դրանք մասնագիտական ուսումնասիրութեան առարկայ սկսեցին դառնալ 20-րդ դարի երկրորդ տասնամեակում Սիկմոնտ Ֆրէյդի եւ Ժոզէֆ Պրէուրի կողմից (հիւանդ Աննայի դէպքը): Հետեւաբար, հայկական կոտորածների առաջացրած հոգեխոցութիւնը ժամանակին (1895-1897, 1908-1909, 1915-1923 թթ.) անմիջական հոգեբանական ուսումնասիրութեան չեն ենթարկուել: Բայց դէպքերը ենթարկելով յետադարձ ուսումնասիրութեան, վերջին տարիների գիտական տուեալների լոյսի տակ կարող ենք անել որոշակի եզրակացութիւններ:*

Հոգեխոցութիւնը յարաբերութիւնների ընթացքում առաջացած մի որեւէ երեւոյթ է, հիմնականում անսովոր, որ վնասում է մարդու մարմինին, հոգեկան ու իմացական աշխարհին, նրա անհատականութեան, ընդհանրապէս նրա կենսագործունէութեան, յարաբերութիւնների կառոյցին՝ առաջացնելով շեղումներ, բարդոյթներ ու հիւանդագին վիճակներ:

Ոչ բոլոր բացասական, ցաւակիր, ցնցիչ ու անսովոր երեւոյթներն են հոգեխոցութեան հետեւանքներ թողնում, քանի որ անհատը, ըստ իր անցեալի փորձառութեան, անհատականութեան եւ ընկերային կազմակերպուածութեան մակարդակի, ներքին դիմադրողականութեան նախապատրաստուածութեան, ունակ է դիմադրաւել ու յաղթահարել հոգեխոցումներ առաջացնող շատ երեւոյթներ: Հոգեխոցութիւնը փաստօրէն այն բացասական երեւոյթն ու նրա ներգործութիւնն է, որ մնում է չյաղթահարուած անհատի կողմից: Այս իմաստով, կարելի է արձանագրել որ թուրքական կառավարութեան կողմից կազմակերպուած եւ հայերի նկատմամբ գործադրուած հալածանքները, բռնութիւնները, բռնագաղթն ու ցեղասպանութիւնը կարող էին թողնել շատ աւելի ահաւոր հոգեխոցութեան հետեւանքներ, եթէ հայերը չունենային համապատասխան պաշտպանութեան լծակներ: Աւելի քան մէկուկէս միլիոն հայեր կոտորուեցին: Հարիւր հազարաւորներ մահուան ճանապարհներից անցնելուց յետոյ հանգրուանեցին այլ երկրներում՝ կորցնելով հարազատներին, ունեցուածք, եկեղեցի, դպրոց ու հայրենիք: Որբացած մանուկներ վերցուեցին քրտերի, արաբների ու թուրքերի կողմից, ու հրաշքով միացան իրենց հարազատներին: Կոտորածներից յետոյ մատերի վրայ կարելի էր հաշուել լրիւ կազմով ընտանիքների թիւը: Այս բոլոր տառապանքներից ու դժուարութիւններից յետոյ, հայերը իրենց ապաստան տուած նոր երկրներում շուտով կազմակերպուեցին ու զգալի նուաճումներ արձանագրեցին առանց հոգեկան ու իմացական այլակարգ բարդ վիճակներ ունենալու: Այսպիսի արդիւնքում անհնարին է անտեսել Ցեղասպանութեան հայ մնացորդացին հիւրընկալող երկրների (արաբական, Յունաստան, Պուլկարիա, Ռումանիա, Ֆրանսա, Ա.Մ. Նահանգներ, Արժանթին, եւայլն) դերը, արտերկրի հայերի ջանքերը, միջազգային բարեգործական կազմակերպութիւնների նուիրումը:

Հոգեխոցութիւնների ուժգնութիւնն ու երկարատեւութիւնը պայմանաւորուած է նաեւ ցեղասպանութեան ակնկալութիւնից: Ինչքան այն քիչ հաւանական ու ակնկալելի է, այնքան հոգեխոցութիւնը ուժեղ է ու երկարատեւ: Մի կողմից, թուրքերի կողմից ցեղասպանական արարքը սպասելի էր, քանի որ թուրքերը կազմակերպել էին այլ ժողովուրդների կոտորածներ: Նրանք կազմակերպել էին հայերի տեղական կոտորածներ 1895-1897 եւ 1909 թուականներին: 1913 թ. հայերը ըզգում էին հակահայկական քաղաքականութեան սաստկացումը: Միւս կողմից, թուրքական իշխանութիւնը յայտարարում էր որ հայերը իր ամենից նուիրուած ու հաւատարիմ հպատակներն են, որ ինքը պատժել է միայն առանձին օրինազանց հայերին: Բայց խիստ անսպասելի էր որ 1915 թ. սկսած կոտորածը, Ցեղասպանութիւնը, կարող է այդքան համատարած լինել ու բոլոր մանրամասնութիւններով ծրագրուած: Աւելին. հայերի համար անակնկալ էր որ իրենց հետ տարիներով հարեւանութիւն արած, հաց կիսած, գործնական առեւտրական յարաբերութիւնների մէջ եղած ու իրար վստահած թուրքերն ու քրտերը կարող են

1. *Հոգեկան խոց* եզրի փոխարէն *վշտախտ* հայերէն բառի օգտագործումը հաւանաբար նպաստէ հիւանդութեան ճշգրիտ բնորոշման:

իրենց սպաննել, իրենց կանանց առեւանգել ու բռնաբարել, իրենց երեխաները առեւանգել ու իրենց ունեցուածքը թալանել: Եթէ չլինէին նշուած գործօնները, Ցեղասպանութեան հոգեխոցութիւնը կարող էր աւելի նուազ լինէր:

Ցեղասպանական արարքին յաջորդող այդ վիճակի բարդութիւններն ու վնասները ուղիղ համեմատական են ցեղասպանի եւ զոհի միջեւ հաստատուած յարաբերութիւնների յետագայ ընթացքին: Եթէ երկուսի միջեւ հաստատւում է զիջողականութեան, ներողամտութեան, իրաւ հաշտութեան մթնոլորտ, որ առաջին հերթին կապուած է ցեղասպանի կեցուածքից, երբ վերջինս ընդունում է իր սխալը, ներողութիւն հայցում, համապատասխան հատուցում կատարում հասցրած վնասների համար, ապա ցեղասպանութեան յաջորդող հոգեխոցութեան վիճակը միտում ունի աւելի մեղմ, անվնաս ու թեթեւ լինելու, եթէ հանդէս չգան լրացուցիչ գրգռիչ գործօններ: Այս պատկերը մենք նկատում ենք Գերմանիայի պետութեան ու ժողովուրդի ցուցաբերած քաղաքակիրթ ու մարդասիրական կեցուածքի մէջ:

Երբ ցեղասպանը, այս դէպքում՝ թուրք պետութիւնն ու ժողովուրդը, չի ընդունում իր ոճիրը, ներողութիւն չի խնդրում ու համապատասխան հատուցում չի անում, ապա զոհի մօտ, այս դէպքում՝ հայերի մօտ, նկատելի են դառնում հոգեխոցութեան այնպիսի երեւոյթներ, որոնք կապուած են ատելութեան, վրիժառութեան, մարդասիրական արժէքների նկատմամբ հաւատի նուազեցման, ու իր նկատմամբ թոյլ տրուած անարդարութեան միջազգային ճանաչման հետ: Այդ իմացական ու հոգեբանական վիճակները իրենց զգալ են տալիս զոհի ողջ գործունէութիւնների ու յարաբերութիւնների կառոյցում ու դառնում կայուն մտասեւեռում: Եթէ ժամանակի ընթացքում հայերի մօտ վրիժառական զգացումները նուազում ու թուլանում են, ապա աւելի ու աւելի ուժեղանում է ցեղասպանութեան, արդարութեան ընդունման համար մղուող պայքարը: Ցեղասպանութեան ուրացումը առաջնորդում է դէպի երեւոյթի շարունակութիւն, կրկնում: Հայը ամէն օր ապրում է ողբերգութիւնը, քանի որ թուրքը այն ուրանում է:

Ինչպէս բոլոր յարաբերութիւններում ու վիճակներում, այս դէպքում եւս մարդ գործի է դնում որոշակի պաշտպանողական մեխանիզմներ: Դրանց շարքում կարելի է նշել ողբալը: Հաւաքաբար կամ անհատաբար ողբալով հոգեխոցութեան ենթարկուածները վերյիշում են դէպքերը, որ նպաստում է հոգեխոցութեան վիճակի լարուածութեան նուազեցման: Պատահական չէ, որ Եղեռնի դէպքերի յիշատակումը սկզբնական շրջանում առաւելաբար կատարւում էր եկեղեցիներում կամ պաշտամունքի պահերին: Գործում է նաեւ դրա նկատմամբ հակառակ միտում ունեցող մի այլ պաշտպանողական մեխանիզմ՝ անհատական ուրացումը: Անհատը ներքին մի ուժեղ մղումով հրաժարւում

է յիշել իր հետ կատարուածը: Նա ամէն կերպ աշխատում է այն մոռանալ կամ ուրանալ, եւ այդպիսով հոգեբանականօրէն ջնջելով անցեալի այդ դէպքը իրեն հանգիստ է զգում: Մայրս, օրինակի համար, այդպէս էր դիմագրաւում իր ապրած, տեսած ցեղասպանութիւնը: Մեր համատեղ կեանքի ընթացքում ինձ յաջողուեց լոկ մի անգամ պատմել տալ իր հետ կատարուածի մասին: Հօրաքոյրս հակառակ տիպին էր պատկանում: Նա յաճախակի պատմում էր այդ մասին նորանոր մանրամասնութիւններ աւելցնելով:

Ցեղասպանութիւնը անմարդկային, անտրամաբանական ու քաղաքակրթութեան զարգացման ընթացքին հակադրուող մի բացասական երեւոյթ է: Բայց ցեղասպանը ձգտում է տարբեր փաստարկներով հիմնաւորել իր այդ քայլը եւ այդպիսով այն արդարացնել: Պատմութիւնը, սակայն, վերջին հաշուով ապացուցում է որ անընդունելի ու սըխալ են այդ բոլոր բացատրութիւններն ու արդարացումները: Անհնարին է հիմնաւորել ցեղասպանութիւնը: Զոհն իր հերթին հարց է տալիս, թէ արդեօք իր զոհաբերութիւնը որեւէ իմաստ ու արժէք ունեցե՞լ է կամ ունի՞: Նա, որոշ իմաստով, ձգտում է իմաստ գտնել հազարաւոր մարդկանց մահուան ու տառապանքի մէջ: Ինչո՞ւ: Կարո՞ղ էին արդեօք հրեաները խուսափել ցեղասպանութիւնից, եթէ փրկուէին իրենց ազգութիւնից կամ իրենց կրօնից: Կարո՞ղ էին արդեօք հայերը զերծ մնալ ցեղասպանութիւնից, եթէ համաձայնուէին ապրել ոչ թէ իրենց հայրենիքում, այլ այլուր, ապրէին ոչ թէ իբրեւ հայ, այլ իբրեւ թուրք, ապրէին ոչ իբրեւ քրիստոնեայ, այլ իբրեւ այլադաւան: Կարո՞ղ էին հայերը հրաժարուել ազատ ապրելուց ու համաձայնուէին յաւերժ ըստրուկ եւ հպատակ մնալ: Հայը չի կարողացել ու չի կարողանում դրական պատասխան տալ այդ հարցերին: Նման հարցերին մերժողական պատասխան են տուել յոյները, պուլկարները, ռումանացիները, հունգարացիները, ալպանացիները, արաբները, սլաւները, իտալացիները, գերմանացիները եւ այլ ազգեր: Ցեղասպանութեան զոհ հայը իմաստաւորում է իր զոհաբերութիւնը: Նա գտնում է որ դա մարդկային իրաւունքի համար է, դա իբրեւ հայ ապրելու իրաւունքի համար է, դա իբրեւ քրիստոնեայ ապրելու իրաւունքի համար է, դա ազատ ապրելու իրաւունքի համար է: Այդպիսով, նա ոչ միայն յաղթահարում է հոգեխոցութիւնը, այլեւ իր հիմնաւորումով հաստատում է արժէքների հարուստ մի համակարգ, արժէքների մի աւանդութիւն, որին պէտք է հետեւեն սերունդներ: Դրանք դառնում են զոհերի կենդանի պատգամը: Դա ինքնատիպօրէն հաստատում է «մահ իմացեալ անմահութիւն է» դրոյթը:

Պատահական չէ որ ցեղասպանութեան զոհերին ժողովուրդը նախընտրում է համարել նահատակներ՝ վեհ գաղափարի, նպատակի ու գործի համար անմահացածներ: Պատահական չէ որ հրեաները նա-

խընտրում են օգտագործել ողջակիզում եզրը, որ գալիս է զոհասեղանի վրայ զոհը վառելու հին սովորութիւնից: Զոհին որպէս նահատակ ընդունելով, ցեղասպանից փրկուածները ոչ միայն յաղթահարում են իրենց սպասող սոսկալի հոգեկան ու իմացական խոցը, այլեւ սրբացրնում ու անմահացնում զոհերի յիշատակը:

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿՈՐԾԱՆԻՉ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ՉԷԶՈՔԱՑՆՈՂ ԳՈՐԾՕՆՆԵՐԸ

Մարդկային հոգեբանութեան վրայ որեւէ մի երեւոյթի ազդեցութիւնը պայմանաւորուած է ոչ միայն ներգործող երեւոյթի առանձնայատկութեամբ, այլեւ ներգործման ենթակայի վիճակով:

Հայերն ունեցան ընտրութեան հնարաւորութիւն, եւ նրանք ընտրեցին այն բնական ու մարդկային ուղին, որի նկատմամբ թուրքերը պատրաստ էին ցուցաբերել ամենաբարբարոսական վերաբերմունքը:

Հայերին առաջարկուեց ազգափոխ ու դաւանափոխ դառնալ, այսինքն՝ թրքանալ: Եթէ բոլոր հայերը թուրք դառնային (բռնի ուժով), ապա կը վերանային հայու հետ կապուած բոլոր քաղաքական, տնտեսական, դիւանագիտական, ընկերային, մշակութային ու տարածքային խնդիրները: Հայերը մերժեցին առաջարկուած տարբերակը, եւ որոշեցին ապրել իբրեւ հայ, իբրեւ Հայ Եկեղեցու զաւակ: Աստիճանաբար թուրքերը ուժեղացրին իրաւազրկումը, կեղեքումը, ձուլումը, բռնագաղթը եւ ջարդը, այն յոյսով որ հայերը տեղի կը տան: Ջստացուեց:

Հայ կազմակերպութիւնների քաղաքական պայքարի փորձը դրպրոց դարձաւ հակասուլթանական թուրք կազմակերպութիւններին: Վերջիններս հայերի եւ այլ ազգերի յեղափոխական ուժերի հետ դաշնակցած գրաւեցին իշխանութիւնը: Նրանք յայտարարեցին որ դրանով աւարտւում է իրենց յեղափոխական առաքելութիւնը: Նոյնը առաջարկեցին հայերին: Ցոյները, պուլկարները, սլաւոնները, արաբները, ալպանները, հայերը եւ շատ ուրիշներ որոշեցին շարունակել յեղափոխական բարեփոխումների ընթացքը:

«Միութիւն եւ Առաջադիմութիւն» կազմակերպութիւնը իր առաջ ծառացած հարցերի լուծման հիմնական միջոցը համարեց երկրի ռազմականացումը (միլիթարիզմը) եւ պատերազմը: Նա յոյս ունէր պատերազմի միջոցով վերականգնել կորսուածը եւ բուժել վէրքերը: Հայերին առաջարկեցին պաշտպանել ռազմատենչական գիծը: Վերջիններս ապացուցեցին որ պատերազմը կործանարար կը լինի կայսրութեան համար, ու կարող է հասցնել մինչեւ նրա տապալմանը: Հայերն առաջարկեցին զարկ տալ արդիւնաբերութեան, միջազգային առեւտրին, արդիականացման ընթացքին: Ազգայնամոլ Թուրքիան այն քայլը համարեց դաւաճանութիւն: Դրական ընտրութիւն կատարեցին հայերը: Թուրքերը ջարդով, ցեղասպանութեամբ որոշեցին «պատժել» հայերին: Հայը ակնկալուածից աւելի նուազ ցնցուեց, քանի որ գիտակցական ընտրութիւն էր կատարել եւ ցուցաբերել խիստ մարդասիրական կեցուածք:

Աւելի քան հինգ դար, հայերը պայքարեցին իրենց ազգային պետականութեան վերականգնման համար: Ամէն ինչ ուղղուած էր դէպի այդ նպատակի իրագործումը: Վերջապէս, 1918 թ. Մայիսին այդ երազը դարձաւ իրականութիւն: Երբ հայը կորցրել էր իր կէսից աւելին, երբ հայկական տարածքների մեծ մասը մնացել էր անհայ, երբ հայը սրփռուած էր աշխարհի չորս կողմերում, նա վերականգնեց իր ազգային պետականութիւնը:

Հայերին խոստացուեց նաեւ Կիլիկիայում ունենալ ազգային օճախ՝ Ֆրանսական հովանաւորութեան տակ:

Հայկական պետականութեան փաստը՝ որպէս օզոնայի պաշտպան շերտ, չէզոքացրեց ցեղասպանութեան կործանարար հոգեբանական ոյժը:

Նուազ հակաթրոմբիկ նշանակութիւն չունեցաւ նաեւ այն հանգամանքը, որ Ցեղասպանութեան ընթացքում եւ յետոյ, մինչեւ 1921 թ. գարունը, հայերը ծաւալեցին հերոսական ինքնապաշտպանութիւն: Այդ պայքարը նրանց մէջ ամրապնդեց հերոսին բնորոշ հոգեբանական գծեր: 1915 թ. հերոսաբար պայքարեցին Վանի, Տարօնի գաւառների, Շապին-Գարահիսարի, Մուսա Լերան, Եդեսիայի, Եոզղաթի, Զէյթունի եւ այլ բնակավայրերի հայերը: Պատերազմի աւարտից յետոյ, երբ իրականացուել էր ցեղասպանութեան ծրագրի հիմնական մասը, հայ ժողովուրդը կարողացաւ իր բոլոր ուժերը հաւաքել ու յաղթական ինքնապաշտպանողական մարտեր մղել Բաշ Ապարանում, Ղարաքիլիսայում եւ Սարդարապատում: Կիլիկահայերը վերադառնալով իրենց քաղաքներն ու գիւղերը, նորից Կիլիկիայի տնտեսական ու մշակութային կեանքը վերցրին իրենց ձեռքը: Երբ թուրքերը փորձեցին շուռ տալ պատմութեան անիւը, հայերը յաղթական ինքնապաշտպանողական կռիւներ մղեցին Այնթապում, Հաճընում, Ատանայում, Մարաշում, Քիլիսում, Եդեսիայում եւ այլ վայրերում: Եթէ նրանց չսպառնար Ֆրանսական հրամանատարութիւնը, Կիլիկիայի վրայ մինչեւ այսօր կը ծածանէր հայկական դրօշը: Պայքարի ու հերոսութեան ոգին հայուն փրկեցին հոգեբանական մի շարք խաթարումներից:

Պատերազմի ընթացքում եւ դրանից յետոյ մեծ նուիրումով աշխատեցին հայ գաղթօճախները, ի մասնաւորի Ամերիկայում, Ֆրանսայում, Եգիպտոսում, Անգլիայում եւ նոյնիսկ Հարաւային Ամերիկայում, Պուլկարիայում, Իտալիայում, Գերմանիայում, Զուիցերիայում, Հընդկաստանում եւ այլուր: Նրանք աշխատանքի լծեցին բոլոր իրենց օտար

բարեկամներին: Ստեղծուեցին հայութեան բարեկամութեան, աջակցող, բարեխնամ, որբախնամ կազմակերպութիւններ: Արտերկիրը տէր կանգնեց «երկրի» հայութեան: Նրանց նիւթական ու բարոյական օժանդակութիւնը սնեց նրանց մարմինն ու հոգին, եւ զգալիօրէն կանգնեցրեց հոգեկան մի շարք խաթարումներ: Հայը իրեն մենակ ու լքուած չզգաց:

Հայ կեանքը ունէր կազմակերպող հաստատութիւններ: Նրանք գործում էին ինչպէս «երկրում», այնպէս էլ «արտերկրում»: Երբ «երկրի» կեանքը խաթարուեց, երբ այնտեղ տիրեց քաոսը, «արտերկրի» կազմակերպութիւնները շարունակեցին գործել ու կազմակերպել հայ կեանքը: Հայկական եկեղեցիները, հայ բարեգործական, կրթական, մշակութային, հայրենակցական միութիւնները, հայ քաղաքական կուսակցութիւնները լծուեցին գործի: Ցեղասպանութիւնից փրկուած հայը հիմնականում մնաց նրանց գործունէութեան շրջանակներում ու հեշտութեամբ մտաւ կազմակերպական որոշակի ծրագրի մէջ: Շատ արագ կազմակերպուեցին հայ համայնքներ, դպրոցներ, եկեղեցիներ, ակումբներ ու միութիւններ: Հայ համայնքների եկեղեցակեդրոն, դպրոցակեդրոն աւանդոյթը խաղաց դրական դերը: Կորուստը անհամեմատ աւելի մեծ ու ահաւոր կը լինէր, եթէ «մնացորդացը» դուրս մնար «կազմակերպուած կեանքի» սահմաններից:

Մեր կարծիքով, որոշակի դեր խաղաց հայու մէջ ամրապնդուող այն գիտակցութիւնը որ ինքը պարտաւոր է մշակել պահանջատիրական հոգեբանութիւն, պահանջատիրական գիտակցութիւն ու կամք: Հայը չմոռացաւ իր դատը: Այդ, ի մասնաւորի, նկատելի դարձաւ Լոզանի բանակցութիւնների օրերին, Սանճաքի համար արաբների մղած պայքարում հայերի ցուցաբերած գործօն մասնակցութեան մէջ եւ ՀՕԿ-ի աշխատանքներում:

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԻՑ ՓՐԿՈՒԱԾՆԵՐԻ ԻՆՔՆԱՏԻՊ ՏՐԱՒՄԱՆԵՐԸ (ՎՇՏԱԽՏՆԵՐԸ)

ԿՐԿՆԱԿԻ ՀՈԳԵԽՈՑՈՒԹԻՒՆ

Եաթաղանից փրկուած հայերը դեռ յոյս ունէին որ վերադառնալու են իրենց բնակավայրերը ու նուիրուելու իրենց գործին: Այդպէս էին նրանց խոստացել Թուրքերը տեղահանելիս: Այդպէս էին խոստացել նաեւ դաշնակիցները: Պատերազմից յետոյ, նրանց ճնշող մեծամասնութիւնը, Արեւմուտքի առաջարկութեամբ, վերադարձան իրենց պապենական տունները եւ պատուով պաշտպանեցին իրենց իրաւունքը Թուրքական ազգայնամոլներից: Ծաւալուեց ինքնապաշտպանական պայքարը: Դաշնակիցները պարտադրեցին հայերին հեռանալ իրենց հայրենի

հողերից: Այդ քայլը աւելի խորացրեց Ցեղասպանութեան պատճառած հոգեխոցութիւնը: Հայերը հիասթափուեցին Արեւմուտքից: Մենակ զգացին իրենց ամենադժուար պահին: Նրանց սկսեց տիրել այն գաղափարը որ կորցրին ոչ միայն մէկ եւ կէս միլիոն հայրենակիցներ, այլեւ հայրենիք, մանկութիւն, աւանդութիւններ, երազանքներ, բարեկեցիկ կեանք: Շատերին պատեց այն վախը որ հայուն վերջը եկել է, որ շուտով հայ ազգը պիտի դադարի գոյութիւն ունենալուց: Հայու միակ յոյսը մնաց Հայաստանի Հանրապետութիւնը:

ՍԽԱԼ ԻՄԱՍՏԱՒՈՐՄԱՆ ՀՈԳԵԽՈՑՈՒԹԻՒՆ

Որոշակի շրջանակների քարոզչութեան հետեւանքով, հայերի ըզգալի մասի մօտ ամրապնդուեց այն սխալ գաղափարը որ Ցեղասպանութիւնը հիմնականում կրօնական դրդապատճառներ ունի: Այդպիսով, հաստատուելով Միջին ու Մերձաւոր Արեւելքի երկրներում, նրանց մէջ դժուարութեամբ նուազեց հոգեխոցութիւնը, քանի որ այդ երկրների հայերը միշտ այն վախի մէջ էին որ մահմետական ժողովուրդները իրենց նկատմամբ որեւէ թշնամական արարք կարող են կազմակերպել: Գաղութատէրերը այդ վախը փորձեցին շահարկել: Բայց շուտով հայերը խորապէս հասկացան, գիտակցեցին ու գնահատեցին իրենց սիրով ընդունած արաբ իսլամ ժողովուրդների ազնուութիւնն ու մեծահոգութիւնը:

ԳԻՒՂԱԿԱՆԻՑ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑՄԱՆ ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Օսմանեան Կայսրութիւնը գիւղատնտեսական երկիր էր: Նոր էր սկսել արդի քաղաքների կազմակերպումն ու կեանքի քաղաքայնացումը: Գաւառի հայերը դարերով կապուած լինելով իրենց հողին, աւելի հողի մշակմամբ, անասնապահութեամբ, արհեստներով ու փոքր առեւտրով էին զբաղուած: Բռնագաղթը հայերին կտրելով իրենց հողից, տարաւ օտար երկիրներ, որտեղ իրենք հողի հետ կապուել չկարողանալով (հող չունէին, գնել չէին կարող) մեծամասամբ տեղաւորուեցին քաղաքներում, որոնք նոր էին թեւակոխում ուրպան կեանքի կերտման փուլը: Հայերը այդ գործընթացում վճռական դեր ստանձնեցին: Այդպիսով նրանք սկսեցին քաղաքային կեանքի բնորոշ հոգեբանական գծեր մշակել:

ՀԱՅՐԵՆԱԲՆԱԿԻՑ ՍՓԻՒՌՔԱՀԱՅԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

Օսմանեան Կայսրութեան մէջ հայը հպատակ էր օտարին իր սեփական հողի վրայ, իր սեփական երկրում: Այդպիսի իրականութիւնը հայու մէջ կերտել էր որոշակի հոգեբանութիւն ու հաւատամք, որի հիմքում նստած էր իր դարաւոր հայրենիքում ազատ ու սեփական պե-

տականութիւն ունենալու բնական պահանջը: Նա գիտակցում էր որ իր ստեղծագործ աշխատանքով չէնացնում է իր իսկ երկիրը: Բռնագաղթելով, հայը վերածուեց սփիւռքահայի, դրանից բխող բոլոր քաղաքական, ընկերային, մշակութային, հոգեբանական եւ կազմակերպական հետեւանքներով: Նա ստեղծում է՝ իր երկրորդ հայրենիքը զարգացնելու, հայու ինքնահաստատումն ու պատիւը միջազգայնացնելու, ազգապահպանման առաքելութիւնը իրագործելու, թուրքի բարբարոսութիւնն ու կեղծիքը ապացուցելու եւ իր սեփական կեանքը նորովի իմաստաւորելու համար: Նա Սփիւռքը պահում է Հայաստանի համար, քանի որ դեռ չի հրաժարուել իրենից բռնի կերպով վերցուած հողերի վրայ սեփական պետականութիւն հաստատելու արդար ձգտումից:

ՀՈՂԱԶՈՒՐԿ ԳԱՂԹԱԿԱՆԻ, ՕՏԱՐԱԿԱՆԻ ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ ՀՈԳԵԽՈՑՈՒԹԻՒՆԸ

Ցեղասպանութեան ներգործութիւնը պայմանաւորուած է նաեւ այն կարգավիճակով, որ փրկուածները ձեռք բերեցին նոր երկրներում: Մի մասը տարբեր տեղերից հաւաքուեցին ու տեղաւորուեցին որբանոցներում: Որբանոցը մի կողմից պատանու մէջ ամրապնդեց որբին բնորոշ հոգեբանութիւնը, իսկ միւս կողմից՝ բարձրացրեց նրա ինքնարժէքաւորումը, քանի որ նա զգաց, որ ինքը մոռացուած չէ, որ աշխարհում կան մարդիկ որ սիրում են իրեն ու շահագրգռուած իր բարեկեցութեամբ եւ ապագայով:

Հիւրընկալ երկրների վիճակի ու նրա հայ բնակիչների կարգավիճակի միջեւ եղած տարբերութիւնը նոյնպէս նպաստեց Ցեղասպանութեան առաջացրած հոգեխոցութեան ներգործութեան խորացման կամ անընդհատականութեան: Արեւմտեան երկրների պայմաններն ու լեզուն անծանօթ էին Ցեղասպանութեան հարուածից ցնցուած հայու համար: Այնտեղ նրան վերագրեցին վիրաւորական պիտակներ: Այդ բոլորը առաջացրեց ստորադասութեան զգացում եւ հայութիւնից հրաժարուելու միտում, որի յաղթահարումը պահանջեց նոյնիսկ երկու սերունդ: Այդ գործում նրան մեծապէս նպաստեցին այդ երկրների զանազան կազմակերպութիւններ: Արեւելքի երկրները, որոնք նոր էին թօթափել թրքական լուծը, իրենք գտնուում էին ծանր վիճակում: Հայերը յաճախ ստիպուած եղան ապրելու խիստ չքաւորութեան բոլոր դժուարութիւնները:

ՑԱՒԻ, ԱՐՑՈՒՆՔԻ ԵՒ ՀԵՐՈՍԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԳԾԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒԹԻՒՆ

Ցեղասպանութեան ենթարկուած անհատների ու նրանց անմիջական զաւակների վարքում ու ներաշխարհում արձանագրուած փոփոխութիւնները արտապատկերուած են նաեւ ժամանակաշրջանի ժողովրդական բանաւոր ստեղծագործութիւններում, արուեստի ու գրական գործերում եւ մարդկանց յուշապատումներում: Եթէ հոգեբանները առաւելաբար ուշադրութիւն են դարձնում ցեղասպանութեան առաջացրած հոգեբանական շեղումների վրայ, ապա այդ աղբիւրները արտացոլում են փոթորիկների բովում կոփուած հայորդու անհատականութեան նաեւ դրական գծերը: Դժուար չէ նկատել որ մեզ նախորդող ու մեր ժամանակակից հայորդիների հոգեբանական աշխարհում առաջացած բացասական շեղումների կողքին գործօն են նաեւ հերոսութեան, քաջութեան, բարձր կենսունակութեան ու «ծուռ» լաւատեսութեան ձեւով հանդէս եկող դրական շեղումներն ու ընդգծուած կենսագործունէութեան գծերը: Գրական երկերում եւ արուեստի գործերում արտապատկերուած են ինչպէս ցաւն ու լացը, կարօտն ու ողբը, ջարդից ու գաղթից փրկուածի փոթորկալից հոգին, այնպէս էլ հայ մարդու հերոսական կամքը, լաւատեսութիւնը, յոյսը եւ մահուան յաղթած լինելու հպարտութիւնը: Այս փաստի իմաստաւորումն ու գիտակցումը եղել են ու են հայապահպանման ընթացքը ու հայու ստեղծագործական կեանքը սնելու ունակ ոյժը: Այդ ճանապարհով իրենց արմատներն են վերադառնում իրենց անցեալը մոռացած շատ հայեր եւ հայերի հետ բարեկամում են շատ օտարազգի մարդասէրներ: Դրանք դարձան 1918 թ. Սարդարապատի, Ղարաքիլիսայի, Բաղ-Ապարանի, 1918-1921 թթ. Պատմական Հայաստանի ու Հայկական Կիլիկիայի ինքնապաշտպանական շարժումների հոգեբանական, գաղափարական ու կազմակերպչական հիմքերը: Այդ դրական շեղումները նպաստեցին որ արդէն երկու տասնամեակ յետոյ, քառասունական թուականներին, հայրենաբնակ եւ Սփիւռքի հայութիւնը կարողանան ստեղծել բնականոն կեանք եւ գաղթական Սփիւռքը կարողանայ նուաճել այնպիսի կենսամակարդակ, որ ի վիճակի լինի լայն ծրագրով օգնելու հայրենիքին՝ ինչպէս նիւթապէս ու բարոյապէս, այնպէս էլ մարդկային ուժով: Այդ դրականը դարձաւ ներգաղթի հիմքը:

Այսպիսով, լոկ դարմանատնային տուեալների վրայ հիմնուելով, մենք չենք կարող դատել յետեղեռնեան շրջանի հայ մարդու հոգեկան վիճակի ու անհատականութեան մասին: Արդի հայու հոգեբանութեան մէջ որոշիչ դեր է խաղում այն իրողութիւնը որ ինքը Եղեռն յաղթահարած ազգ է, կիսամեռ վիճակից հրաշափառ յառնած ու էապէս այլափոխուած, հերոսաբար բարեփոխուած ազգ է: Այդ ոգին իր դրսեւորումը գտաւ 1988-ի ժողովրդական յեղափոխութեան մէջ, Ղարաբաղի ազատագրման համար մղուած պայքարում: Այսօր այն արտայայտւում է երկակի ու հակասական ընոյթով:

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՓՈԽԱԴԱՐՁ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԴԷՊԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Երբ մարդ անհատը կամ խումբը ենթակայ կը դառնայ նման արհաւիրքների, նրա մօտ, որպէս պաշտպանողական հակազդեցութիւն կարող է առաջանալ «իրականութեան բացասման վիճակ»: Նա կը ձգտի ապրել մի այնպիսի վիճակում, որ կարծես ոչինչ էր պատահել: Այս բնորոշ չեղաւ «մնացորդացի» հոգեբանութեան: Նրա մօտ նկատելի չէր նաեւ այդ դաժան փորձառութիւնը «ճնշելու», մտքից ու յիշողութիւնից դուրս մղելու միտումը: «Էսգէյպիզմը» աւելի տարածուած կարելի է համարել: Անհատը յաճախ միտում ունէր խուսափելու այդ օրերի յիշողութիւնը վերարտադրելուց: Այդ բնորոշ էր զուսպ եւ «ներքնահակ» (introvert) մարդկանց: Զգացմունքային մարդիկ, որոնց աւելի յաճախ կարելի է հանդիպել, միտում ունեն վերադարձ կատարել դէպի անցեալը, վերապրել անցեալի այդ փորձառութիւնը եւ այդպիսով մի կողմից բաւարարել իրենց, եւ միւս կողմից՝ ծանրաբեռնուել: Այդ պահին երբեմն աւելի ազատ է գործում երեւակայութիւնը: Հայերը ֆանտաստիկ (երեւակայական) պատկերներ սկսեցին ստեղծել շատ աւելի ուշ, մանաւանդ երբ խօսում էին այն մարդիկ, որոնք պատմում էին ոչ թէ իրենց, այլ ուրիշի փորձառութեան մասին:

Հայ միտքը Ցեղասպանութիւնը իրեն եւ ուրիշներին բացատրելու ժամանակ աշխատեց կերտել տրամաբանական կառոյցներ: Նա ցուցաբերեց բանականացման (rationalization) *վերաբերմունք, որ առաւելաբար բնորոշ է հարուստ իմացական աշխարհում ապրող մարդկանց: Այս պատճառով էլ հայերի մօտ նկատուեց զգացմունքների զսպման միտումներ* (emotional insultation)*: Այդ երկուսը միացած որոշակի կրօնական հաւատալիքների հետ, որոշ հայերի շրջանում ծնեց իրեն հասած չարիքը իմացական արժէք ունեցող մի սկզբունքով բացատրելու միտումը* (intellectualization)*: Օրինակ, հայերի մի մասը սկսեց պնդել, որ լաւ մարդը շուտ կը մահանայ, հաւատացեալը աւելի մեծ փորձառութեան կ'ենթարկուի: Իր վիճակը տանելի դարձնելու համար մարդ նման պարագաներին կարող է իրեն եւ ուրիշի միջեւ զուգահեռներ անցկացնել, իրեն նմանեցնել ուրիշին: Օրինակ, որոշ հայեր սկսեցին խօսել հայու Գողգոթայի, հայու խաչելութեան մասին: Զուգահեռներ անցկացուեցին հաւատի համար մարտիրոսացածների ու իրենց միջեւ, Յիսուս Քրիստոսի եւ իրենց միջեւ* (identification)*:*

Սիլվա Կապուտիկեանի բանաստեղծութիւններից մէկը լաւագոյն ձեւով ցոյց է տալիս որ հայերին օտար չի եղել կոմպենսացիայի *վերաբերմունքը, երբ մարդ ձգտում է վատութիւնը վերացնել եւ յաղթահարել լաւը անելով: Հայ իրականութեան մէջ երբեմն հանդիպում ենք նաեւ մեղաւորի փոխարէն ուրիշին յանդիմանելու ձգտումը: Յաճախ հայը միտում է ունենում թուրքական ազգայնամոլութեան ու կայսերապաշտութեան մեղաւոր ճանաչելու փոխարէն ամբաստանել ուրիշին՝ Արեւմուտքի տէրութիւններին, ռուսական պետութեան եւ նոյնիսկ ինքնիրեն* (displaced aggression)*: Որոշ հայեր մեղաւոր համարեցին հայերին, որոնք մտածել են պայքարել անկախութեան, ազատութեան ու հաւասարութեան համար: Նրանք ունեցել են «սխալի զղջում»* (undoing)*: Նման վերաբերմունքը այժմ նկատելի է Ղարաբաղի հարցում:*

ՀԱՅՈՒ ԱՊՐԱԾ ՄԻ ՔԱՆԻ ՅՈՒՍԱԽԱԲՈՒԹԻՒՆՆԵՐ

Ամենատարածուածը մեղքի եւ կորստեան զգացումն է: Շատերը մի տեսակ իրենց մեղաւոր էին զգում, որ իրենց հարազատները մահացան, իսկ իրենք շարունակում են ապրել: Մեղքի այս զգացումը իր վիճակը դարձնում էր աւելի ողբերգական ու անելանելի: Դրան աւելանում էր նաեւ անսահման կորուստը, անփոխարինելի կորուստը, բազմատեսակ կորուստը՝ մարդու, հողի, դիրքի, միջոցների, արժէքների, հեռանկարի կորուստ: Որոշ դէպքերում եւ որոշ մարդկանց մօտ այս կարող էր առաջնորդել դէպի կեանքի անիմաստութեան գաղափարը. ամէն ինչ դատարկ է, սուտ եւ անիմաստ: Այս յուսալքումները խիստ թուլացան ու հոգեխոցութեան չվերածուեցին, քանի որ գործեցին մի խումբ «հակաթրաումատիկ գործօններ», որոնց մասին արդէն խօսեցինք:

Հաւանաբար հայու համար աւելի դժուար եղաւ արժէքների այն հակասական վիճակը, որի մէջ նրանք ստիպուած եղան ապրիլ «Առաջին Աշխարհամարտից» յետոյ (value conflicts)*: Իրենք պատկանում էին արժէքների որոշակի մի համակարգի, որ քայքայուեց: Սկսեցին ապրել այնպիսի երկրներում, որտեղ նոր տիպի արժէքներ էին իշխում: Իրենք կորցրել էին նախորդի նկատմամբ հաւատը եւ կամ էլ աւելի էին կապուել նախորդին (երկու ծայրայեղութիւններն էլ հնարաւոր են): Նոր արժէքների աշխարհին մօտենում էին թերահաւատութեամբ, սակայն միաժամանակ ուզում էին ընդունելի դառնալ նոր միջավայրի կողմից: Ինչքան այն ստացւում էր, այնքան աւելի արդիւնաւէտ էր դառնում յարմարուողականութեան ընթացքը* (adaptation)*: Իսկ վերջինիս դրական ցուցանիշները վերականգնում էին անհատի հաւասարակշռուածութիւնն ու նուազեցնում նրա ներքնաշխարհի լարուածութիւնը: Յաճախ այդ ընթացքին մաս էր կազմում առաջադրուած փոփոխութիւնների գործօնը: Փոփոխութիւնները երեք բնոյթի էին. սեփական վիճակի, տուեալ երկրի ու դարուն բնորոշ: Սկսել էր արդէն 20-րդ դարի առաջացրած զարգացման փուլը, որ կապուած էր հաղորդակցութեան միջոցների* (communication)*, միջուկային ֆիզիքայի, յարաբերութեան տեսութեան, ռատիոյի եւ հեռուստատեսութեան եւ այլ ասպարէզների*

զարգացման հետ: Միջին եւ Մերձաւոր Արեւելքը դուրս էլ գալիս օսմանեան լծից ու հրաժարուելով աւատատէրութիւնից, մուտք էր գործում դրամատիրական յարաբերութիւնների ոլորտը: Ամերիկան մեկուսանում էր աշխարհից, որպէսզի ապրի մի ահեղ ճգնաժամ: Եւրոպայի մի մասը գաղութատիրութեան բարիքներն էր ձգտում յաւերժացնել, միւս մասը՝ յաղթահարել պարտութեան դժուարութիւնները: Արեւելեան Եւրոպան հասկանում էր ազատութեան գինը: Հայը այս բոլորին պէտք է յարմարուէր: Այդ անելու համար մշակեց ջանքերը գերլարելու մի մեքանիզմ (sustained concentration of effort), որով յաղթեց, որով կառուցեց, որով դուրս եկաւ գաղթականի կերպարից, որով մաքրուեց իրեն նետուած անվայել ածականներից, որով հարստացաւ եւ հոգեպէս եւ նիւթապէս: Այդ մեքանիզմը չկարողացաւ հասկացնել իր ապագայ սերունդների մի մասին, ու վշտացաւ, տխրեց:

Ցեղասպանութեան հոգեբանական ազդեցութիւնը խորհրդային երկրում ընթացաւ ինքնատիպ ձեւով: Այնտեղ այդ վիճակը խիստ յիշեցնող դէպքեր կատարուեցին 30-ական եւ 40-ական թուականներին: Այնտեղ բռնութիւնը դարձաւ մշտատեւ գործօն: Շուրջ երեսուն հինգ տարի Ցեղասպանութիւնը թապու էր, արգելուած գաղափար: Այն գործեց ենթագիտակցութեան մակարդակում: Նրա ազդեցութիւնը կուտակուեց, որպէսզի մի անգամից հրաբխի նման ժայթքի 1965 թ., Ցեղասպանութեան 50-ամեակին: Դրանից յետոյ այն աւելի շատ ազդեց հայրենաբնակ հայու մտածողութեան, յատկապէս քաղաքական մտածողութեան վրայ, ազգային գիտակցութեան զարգացման վրայ, ազգային միասնականութեան ամրապնդման միտումների վրայ: Ամէն ոք հայրենաբնակը զգալով որ ինքը Հայաստանում է ապրում եւ Հայաստան է կերտում, գիտակցում է որ ինքը յաղթանակած է ցեղասպանին ու Ցեղասպանութեան, եւ որ հզօրացող Հայաստանը կը վերածնի նաեւ Ցեղասպանութեան պատճառած այլ վնասները, այլ բացասական հետեւանքները: Հայաստանի երրորդ հանրապետութեան հաստատումն ու կերպումը ծնեց իրարամերժ միտումներ, որ նկատուեց անցման շրջանի հիւանդութիւն:

ԳԼՈՒԽ ԺԴ.

ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՐՏԱՅՈԼՈՒՄԸ ՍՓԻՒՌՔԱՀԱՅ ԳԵՂԱՆԿԱՐՁՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Ցեղասպանության առաջացրած հոգեբանական եւ իմացական ելեւէջները իրենց արտայայտությունն էին գտնում հայ նկարչության մէջ: Հայ նկարիչը արտացոլում է այն՝ ինչ որ մնացորդացի ու արդի հայ մարդու ներաշխարհում խմորուել է որպէս հետեւանք Ցեղասպանության առաջացրած արհաւիրքների:

Պատմական իրողությունը, հասարակական կշիռ ունեցող անձնական փորձառությունը արուեստ է դառնում որոշ իմաստաւորումից, մշակումից, մարդկային գիտակցության մէջ վերափոխուելուց ու տուեալ արուեստի ընորոշ ձեւը ստանալուց, խորհրդանիշների վերածուելուց յետոյ: Այդպիսով պատմական իրականությունը վերածւում է արուեստի իրականության: Ինչքան էլ մեծ լինեն այդ յատկությունների ընդհանրության սահմանները, այնուամենայնիւ նրանցից իւրաքանչիւրը պահպանում է իր ինքնուրոյնությունը, իր ընորոշ օրէնքները: Երբ արուեստի իրականությունը պատկերում է պատմությունը, այն աւելի աղքատ է, քան՝ վերջինը: Երբ այն մեկնաբանում է պատմական իրականությունը, այդ դէպքում այն հարստացնում է մեր գիտելիքները, ընդարձակում մեր աշխարհաբմբռնումը եւ նպաստում երեւոյթների էության մէջ թափանցելու մեր ձգտումին: Պատմագիտության կողմից տրամաբանական կառոյցի մէջ տեղադրուած փաստը, իրողությունը արուեստի մէջ ստանում է նաեւ ընդգծուած զգացմունքային երանգաւորում: Այն խօսում է բանականության եւ զգացմունքի լեզուով: Եւ վերջապէս, արուեստի մէջ պատմությունը ստանում է նոր արտայայտչականություն, նոր կերպար, որ մարմնաւորւում է լոյսի, գոյնի, գծի, կոմպոզիցիայի, պայմանականությունների ու խորհրդանիշների մէջ:

Ցեղասպանությունը ցնցեց հայ ժողովրդի էությունը: Ազդեց նաեւ նրա ստեղծագործական կարողությունների վրայ: Այն որոշակի դժուարությամբ սկսեց վերածուել գեղարուեստի: Առանց խորանալու այդ բարդ ընթացքի վերլուծության մէջ, մենք փորձենք կատարել որոշակի նախնական դատողություններ:

Վերոյիշեալ հարցի լուսաբանմանը մօտենալիս, հաւանաբար, օգտակար կը լինի տարբերակել գեղանկարիչների մի քանի խմբեր. Ցեղասպանութիւնը անձնական փորձառութեամբ ապրած գեղանկարիչների (Քերօ Անթոյան, Բիւզանդ Կոջամանեան, Արշիլ Կորգի, Զարեհ Մուխաֆեան, Գառզու եւ ուրիշներ). Ցեղասպանութեան հարցը անմիջական միջավայրում յաճախակի քննարկած գեղանկարիչներ (Ժերանեան, Վարդենի, Հիլտա Ուիլդերսպուն, Քաչազ, Յակոբ Խուպեսերեան եւ ուրիշներ) եւ Ցեղասպանութիւնը որպէս յուշ ապրածներ (Ռոպերթ Պարսամեան, Ռոպերթ Մարտիրոսեան, Հրաչ Թաշճեան եւ այլք): Կարող ենք Ցեղասպանութիւնը պատկերող գեղանկարիչներին խմբաւորել ըստ նրանց արտայայտչականութեան բնոյթի, ըստ ոճի: Մեր տպաւորութիւնն այն է, որ արդի սփիւռքաբնակ նկարիչների մեծամասնութիւնը յետ-տպաւորապաշտական ոճի ներկայացուցիչներ են, առաւելաբար էքսպրեսիոնիզմի տարբեր ուղղութիւններ յարողներ: Նկատելի է կերպարից գունագծային կոմպոզիցիաների, առաւել ընդհանրացուած մթնոլորտ ստեղծելու ոճին անցնելու միտումը:

Այժմ անցնենք ըստ հեղինակների մեկնութիւնների վերլուծմանը:

ՔԵՐՕ ԱՆԹՈՅԵԱՆԸ սփիւռքահայ նկարիչների աւագագոյն ու վաստակաշատ ներկայացուցիչներից է: Նա անձամբ ապրել է Ցեղասպանութեան սարսափը: Քրտերի մէջ ապրել ու աշխատել է իբրեւ հօտաղ: Մնացել է որբ եւ իր աշխատասիրութեամբ ու տաղանդով հարթել իր ճանապարհը: Անթոյեանը Ցեղասպանութեան մեկնաբանութեանը անդրադարձել է այդ դէպքի յիշատակման 48-րդ ամեակին նուիրուած «Հայ Մայրը» ջրաներկով: Սրճագոյնի տարբեր երանգների օգնութեամբ հեղինակը կերպարել է գետնին նստած, ձախ ձեռքով մանուկը կրծքին սեղմած մօրը: Նա յենուել է իր աջ ձեռքին, որ զգալիօրէն ծանրաբեռնուած է: Պատառոտուած թափանցիկ զգեստի միջով զգալի է նրա կանացի գեղեցկութիւնը: Մօր տխուր ու անորոշ հայեացքը անցնում է մանուկի գլխի վրայով ու հասնում է հեռուն, ապագան: Մանուկը նստել է տիկնիկին գրկած: Նկատելի է որ նրանից ուժով բաժանել են իր սիրելիներին, ու կինը զգում է իրեն լքուած: Նկարը չունի յարձակողական բնոյթ: Այն իշխում է իր ստեղծած տխրութեամբ:

Ցեղասպանութեան 50-ամեակին Անթոյեանը ներկայանում է իր «Վերապրած Մանուկը» իւղանկարով: Կարմիր բոցագոյն ֆոնի վրայ, մուգ գծերով տրուած է մանուկի դիմանկարը: Սեւ-կարմիր գոյների հակադրութիւնն ինքնին ստեղծում է էքսպրեսիայի, ցաւի, վախի ու բողոքի մի մթնոլորտ, որին գալիս են լրացնելու մեծացած, կլորացած աչքերը, վեր ձգուած մանուկի յօնքերը ու լացող շրթունքները: Այդ սարսափի մէջ պահպանուել է մանկական միամտութիւնը, մաքրութիւնը, անմեղութիւնը: Բայց չկայ յուսալքուածութիւն եւ ինքնակորսուածութեան զգացում: Դժուար չէ զգալ որ ներկայացուած է բարու եւ մարդկայնութեան ոտնահարումը: Հաւանաբար հեղինակը փորձել է վերարտադրել Ցեղասպանութեան օրերի իր վիճակը: Մի քանի տարի անց Անթոյեանը հանրութեան դատին է յանձնում «Մայրերի Թափօրը» կտաւը: Հեղինակը ցոյց է տալիս որ ջարդարարները պայքարում են անզէն եւ անօգնական մնացած կանանց ու երեխաների դէմ: Զկան երիտասարդ տղամարդիկ. ինչպէս գիտենք, դրանք գնդակահարուած են: Դրանով նա փաստօրէն բնութագրում է թուրք ցեղասպանին: Նա պատկերել է հրկիզուած տներից հեռացող ու անսահման ցաւ ու տանջանք ապրող թափօրը, որ կազմուած է իգական սեռի ներկայացուցիչներից՝ ծծկեր երեխայից մինչեւ մամիկը: Ցաւը եւ ճակատագրի ընդհանրութիւնը միաձուլել է նրանց: Նրանք անդէմ են, քանի որ սարսափը պատել է նրանց անհատականութիւնը, բայց եւ այնպէս նրանք կանգնած են: Զեն ընկած: Զեն սողում: Պահել են իրենց արժանապատուութիւնը:

«Մայրերի Թափօրը» կտաւը գալիս է լրացնելու մի տարի առաջ՝ 1967 թ. Անթոյեանի կերտած «Անատոլիայի Երկնքի Տակ» ստեղծագործութիւնը: Մռայլ է Անատոլիայի երկինքը, ողջ Անատոլիական Աշխարհը: Սեւ ու բաց մանիշակագոյնի ֆոնի վրայ երեւում են կանացի ստուերներ, սգաւոր կանանց դէմքի առանձին հատուածներ: Հինաւուրց մշակոյթի հարուստ աշխարհը վեր է ածուել խաւարի: Կերպարների եւ ֆոնի որոշակիացումը հեղինակը տուել է մեծ վարպետութեամբ՝ մի կողմից ընդգծելով մարդ-մարդ եւ մարդ-միջավայրի միասնականութիւնը, իսկ միւս կողմից՝ ամէն մէկի անհատականութիւնը: Անթոյեանը ողբալով յաղթահարում է հոգեխոցութիւնը, իսկ մօր ու մանկան կենդանութեամբ ու կենսունակութեամբ տալիս է Մայր Հայաստանի յաւերժութեան գաղափարը:

1970 թ. նա կտաւին է յանձնում «Արտագաղթը», աւելի ճիշդ՝ «Բռնագաղթը»: Յատկանշական է հեղինակի լաւատեսութիւնը, տեսիլքը: Ցաւալի է որ հայը թողնում է հայրենի տունը, տանջալից է ճանապարհը, բայց կայ փրկութեան հաւատքը, որպէս հայ եւ քրիստոնեայ ապրելու յոյսը: Աշխարհը այնքան էլ չար մի վայր չէ, քանի որ կայ չարին չէզոքացնող ու հակադրուող բարին, խաչքարի համար պայքարող լոյսը, որին ուղղուած են բոլորը: Բայց այդ լոյսը դեռ երկիր չի հասել, բայց անպայման կը հասնի: Սոյն բարդ մեկնաբանութիւնը տրուած է մեծ արուեստով. սեւ-կարմիր, կապոյտ-ճերմակ գոյների զուգորդութիւններով եւ հանճարեղ կոմպոզիցիոն հնարամտութեամբ:

Շուտով Անթոյեանը զգացել է որ բռնագաղթի այդ պատկերացումը իմաստ կը ստանայ, եթէ պատկերի նաեւ վերադարձը: Պատերազմն աւարտուել է: Հայերին խոստացուած է Կիլիկիան եւ Մեծ Հայաստանը: Գաղթականը, իր երկիրն է վերադառնում: Նախորդ կտաւներում

մայլ զգեստաւորուածները արդէն հագել են սպիտակ, բաց գոյնի հագուստներ: Խմբի մէջ կան նորածիններ, յղի կանայք: Մնացել է մէկ տղամարդ, որ կարօտով նայում է իր ծննդավայրին: Պատանին հարցեր է տալիս նրան: Բոլորը բոպիկ են: Նկարն ստեղծում է դրական ու լաւատեսական զգացումներ: Ընդհանրապէս, հեղինակի կտաւները իրենց ուժականութեամբ ու պատկերուած դէպքի դաժանութեամբ հանդերձ չեն առաջացնում անկումային պոռթկումներ կամ ժխտողական վիճակ:

1985-1986 թուականներին Անթոյեանն աւելի իմաստասիրական մօտեցում է ցուցաբերում, եւ թափանցում է երեւոյթի իմացական խորքի մէջ: Այդ ժամանակաշրջանում նա իրականութիւնը դիտում է յաւերժութեան մէջ, որպէս սերմի առաջացում, ծլում, ծաղկում եւ նորից սերմացում: Ցեղասպանութիւնը նա դիտում է այդ բնական վիճակին հակասող մի երեւոյթ, որպէս բացասական սերմ: Կոմիտասին ձօնուած պաստառում, որ կրում է «Անտունի» խորագիրը, նա պատկերել է «Վշտի Սերմերը» (1985 թ.): Կեանք պատկերող ֆոնը խափանուած է, արգելափակուած է մութ, կաշկանդիչ ուժերով, որ ներկայացուած է գիւպիզմ յիշեցնող ոճով՝ անկիւնաւոր գծերով: Դրանք նաեւ թողնում են քանդուած մի շինութեան տպաւորութիւնը: «Թաղուած Սերմեր» կտաւը ուշադրութիւն է գրաւում իր բոցագոյն երանգներով եւ հայկական մոնումենտալ ճարտարապետական կոթողի աւերակներով: Հայկական բնութիւնը ընդգրկել է իր հարազատին: Այն այսօր մեռած է թւում, բայց այնտեղ են թաղուած հայի կեանքի սերմերը, որոնք վաղը պիտի ծաղկեն: Թուրքը արտաքինն է միայն քանդել, բայց ոչ էութիւնը, հոգին, կեանքի աղբիւրը: Այս խորհուրդն է փոխանցում շրջապատի ամէն մի քար, թուփ, ծառ ու ծաղիկ: Նրանց շշուկները պատկերուած են երկրաչափական հետաքրքրական ձեւերով՝ գունային առումով ներծծուելով ընդհանուր կարմիր-սեւ պատկերի մէջ: «Թաղուած Սերմեր»ի պատգամը հասնում է երկինք ու այնտեղ ստեղծում վիպական մի հորիզոն՝ կարմիր-կապոյտ-սպիտակ-մանիշակագոյն՝ թեթեւ վրձինների գամմայով կերտուած:

Զպատժուած չարիքը յաճախ ծնում է վրիժառութեան զգացում: Այդ նրան պատգամում են նաեւ Զօհրապը, Սիամանթոն, Կոմիտասը, Վարուժանը եւ մանաւանդ Ռուբէն Սեւակը: Վերջինիս նուիրուած կտաւը կոչւում է «Վրէժի Սերմեր» (1986 թ.): Այն մեկնում է բանաստեղծի «Վրէժին Սերմնացանը» բանաստեղծութիւնից հետեւեալ տողերը.

Ու ես կու գա՛մ,– մութ շանթերու սերմնացան–
Այդ ակօսէն, ուր արիւններ լնացան,
Գիշերներով, չար հովիտով, ցիրուցան,
Ցանել՝ տաղերս բեզի...

Հուժկու ծանրութեան տակ ճզմուած ճերմակ տարածքները, որպէս սանձուած միջուկային ուժի օճախներ, պատրաստ են տապալելու վիշապը: Միաժամանակ կոճղանում է հայոց ոյժը:

Ա ՐՇԻԼ ԿՈՐԳԻ, որ ծնուել է Անթոյեանից երկու տարի անց, պատկանում է նկարչութեան բոլորովին այլ ոճի: Նրա արուեստում հայրենի հողը եւ տունը մարմնաւորւում է իր կարօտի զգացմունքի մէջ, իր արուեստում հայկականն ու միջազգայինը համադրելու ջանքերում: Այդ մթնոլորտում նա կամայ թէ ակամայ, առնչւում է Ցեղասպանութեան, որի ականատեսն է եղել: Այդ յուշը գիտակցական եւ ենթագիտակցական ճանապարհով ներգործում է նրա վրձնի վրայ: Այդ յատկապէս նկատելի է իր մօր եւ քրոջ դիմանկարներում: Ցեղասպանութեան ահաւոր պատկերը իր խորը արմատներն է թողել Արշիլ Կորգու ենթագիտակցականի շերտերում եւ տարբեր ձեւերով իրեն զգալ է տալիս ոչ միայն իր ինքնանկարներում եւ դիմանկարներում, այլեւ՝ նաթիւրմորթներում (նաթիւրմորթ գանկով-սեղանական ոճով տրուած) եւ կոմպոզիցիաներում (իր ծննվադայր «Խորկոմի Մէջ Պատկեր», «Խորկոմ», կարօտների շարքը, «Մովահէնը», «Ինչպէս Է Իմ Մօր Ձեռագործ Գոգնոցը Բացւում Իմ Կեանքում» եւ այլն):

Կոմիտասի «Հոլարա Եզոյ» երգի տպաւորութեամբ ստեղծուած կըտաւում, որը հեղինակը անուանել է «Խոփը Եւ Երգը», տրուած է Արշիլ Կորգու դէպի իր ծննդավայրի բնութիւնը, հողը ունեցած կապուածութիւնը, դէպի հողագործի աշխատանքը տածած սէրը, եւ այն տառապանքը, որ հայը ապրել է: Այդ կտաւը նկարելու օրերին իր քրոջը հասցէագրուած նամակում Արշիլ Կորգին գրում է որ ինքը զբաղուած է նկարելով այն հայկական խոփերը, որ Ադոյեանները օգտագործել են իրենց դաշտերը մշակելիս: Նա շեշտում է ձեւերի այն բազմազանութիւնը, որ հայկական խոփերը կարող են արուեստագէտին յուշել: Այդ խոփերի մէջ նա տեսնում է հայի աշխատասիրութիւնը, ուրախութիւնը, բանաստեղծութիւնը, երգն ու թախիծը: Ապա նա նշում է որ նկարելիս զգում է իրենց այգու ծիրանի հոտը, որն իր մէջ ծնում են ազգային հին պարերը, երգերը, տանջուած հայ ժողովրդի երգերը: Վերջաւորութեան նա գրում է որ ինքը պատկերում է այնքան ձեւեր ու գաղափարներ, մի գաղտնի գանձ, որ իրեն վստահուել է: Այդ բոլորը նա տալիս է իրեն բնորոշ ոճով, վերացականութեամբ, մեղմ բնիկ հայկական աւանդական գոյների գամմայով:

Մահուանից շուրջ մի տարի առաջ Արշիլ Կորգին իր կոմպոզիցիաներում երգում է իր ժողովրդի ցաւը վերացական-էքսպրեսիոնիզմի ինքնատիպ ոճով: Ցաւը արտայայտուած է ոչ միայն բողոք արտայայտող կարմիր գոյնով, կարմիր-սպիտակ-սեւ գոյների հակադրութեամբ, այլեւ ուշագրաւ գծային լուծումներով: Ծէսերը որոշակիանում են դիւրաբեկ գծերի միջոցով: Այդ ձեւերը աղաւաղուած ուղղանկիւններ

են, ծռուած եռանկիւններ: Գունային եւ գծային այդ լուծումների միասնութեամբ հեղինակը արտայայտել է խորը տագնապ եւ բողոք: Դրանով էլ նա ցանկացել է յաղթահարել Ցեղասպանութեան հոգեխոցութիւնը:

ԶԱՐԵՀ ՄՈՒԹԱՖԵԱՆԸ 1907 թ. ծնուել է Սեւ ծովի նաւահանգիստներից մէկում՝ Սամսոնում: Նա նոյնպէս ապրել է Ցեղասպանութեան արհաւիրքը, սակայն այդ նիւթի արտապատկերմանը անդրադարձել է բաւականին ուշ: 1939 թ. պատրաստուած կտաւը՝ «Փըրկուածները», էքսպրեսիոնիստական ոճով պատկերում է մի երիտասարդի յենուած երկու իգական սեռի ներկայացուցիչների՝ մէկը գլխահակ, միւսը՝ երեսը ծածկած: Թէեւ պատռուած են նրանց շորերը, սակայն դրանց գոյնը պայծառ է, յուսադրիչ: Նրանք կանգնած են կանաչի վրայ, իսկ ետեւում՝ փլատակներ են: Երկինքը պայծառացող հորիզոնի տպաւորութիւն է թողնում: Հեղինակը առաւելաբար պատկանում է նկարագրական-պատմողական դպրոցին: Գեղագիտական պատկերը առաւելաբար ստեղծւում է ոչ թէ լոյսի ու ստուերի խաղերի, այլ գոյնի միջոցով:

1964 թ. Մութաֆեանը կերտում է «Ջարդը» կտաւը, որ վառ գոյներով, էքսպրեսիոնիստական ոճով տալիս է սարսափահար պատանիներից, աղջիկներից, երեխաներից կազմուած մի խումբ: Կարմիր-սպիտակ-կապոյտ գոյների հակադրութիւնը աւելի ընդգծում է կերպարները: Մարդկային դէմքը կորցրել է հմայքը: Այնտեղ վախը, սարսափն ու անորոշութիւնն է տիրում: Այդ վիճակում իսկ հայերի մօտ առկայ է հոգատարութեան, համերաշխութեան եւ միասնութեան ոգին:

Եղեռնի 50-ամեակին Մութաֆեանը նոյն ոճով պատկերում է ջարդը, յատուկ ուշադրութիւն դարձնելով ջարդարարի կերպարի բացայայտման վրայ: Հեղինակը կտաւը բաժանել է երկու մասի: Ամբոխի առաջին գծի խոշորացուած կերպարների միջոցով հաղորդում է աքսորականների վիճակը: Մի տարի անց, արուեստագէտը աշխատում է պատկերել այն հոգեկան վիճակը, որ տանը մնացած կանայք ու երեխաները ապրել են այն պահին, երբ թուրք մունետիկը յայտնել է բըռնագաղթի որոշումը: Տան տղամարդիկ զինակոչուել են բանակ: Մեծ մայրը քարացած է ու դարձել է ինքնամփոփ: Մօր երազային կեանքը մնում է: Աղջիկների ապագան է կեդրոնական մտահոգութիւնը: Հեղինակը սեւ գծով շրջափակել է իր ներկայացրած մարմինները, ձեւերը՝ լինի մարդ թէ իր: Դրանով ձեւերը ստացել են աւելի որոշակիութիւն:

Նոյն Սեւ Ծովեան շրջանից է գալիս ԲԻԻԶԱՆԴ ԿՈՉԱՄԱՆԵԱՆԸ, որ ծնուել է 1909 թ. Տրապիզոնում: Ջարդի բոլոր արհաւիրքները զգացել է. տեղահանութիւն, հարազատների ջարդ ու կորուստ, որբացում, քրտացում, փախուստ, պայքար կեանքի ու յաղթանակի համար: Նա որդեգրել է իրականութիւնը պատկերելու այլ ոճ, այլ սիմվոլիկա: Նա մէկ ձգտում է գծային ու կրաֆիկական լուծումը լրացնել գունայինով, եւ մէկ էլ փորձում է կատարել հակառակը՝ գունային լուծումը հարստացնել գծայինով: Ինքնատիպ ձեւով զուգորդում է նաեւ գծերը, եռանկիւնները եւ շրջանակը: Ցաճախ դիմում է կրաֆիկական կէտագծութեան (փոյնտիլիզմին):

Ցեղասպանութիւնը լցրել է Կոչամանեանի մանկական տարիները: Այն իր համար մանկութեան յուշ է: Տարօրինակ կերպով նա ամէն կերպ աշխատել է որ այդ յուշը տուեալ շրջանակներից դուրս չգայ եւ չդառնայ իր այսօրուան կեանքի մի մասը, իր գիտակցութեան մի մասը: Նա իր բոլոր կտաւներում մանկութիւնը կորցրած ու որբացած մանուկների անունից է բողոքում: Մանուկներն են դահիճների դատաւորները:

Հայկական Լեռնաշղթայի բոլոր կողմերից հաւաքուած մանուկների բանակը շարժւում է դէպի մահ: Այն խորհրդանշում է առաջին փլանի վրայ քաշուած չորացող ծառով, որի կողքին կանգնած է հարիւր հազարաւոր երեխաներին խորհրդանշող զանգուածը: Այդ հակադրութիւնը սրում է լարուածութիւնը, դէպքի ահաւորութիւնը ու ուժեղացնում բողոքի ձայնը: Խեղճացած, կարծես ձեռքերը կապուած ու մեծացուած կերպարով պատկերուած աղջիկը կապոյտ է հագել: Հեղինակը հաւատում է նրա փրկութեանը, նրա ապագային: Հայ ազգը գոյատեւելու է: Ջարդին նա հակադրել է հայ պետականութեան վերականգնման փաստը, հայ պետական դրօշով՝ եռագոյնով արտայայտուած: Կարմիր, կապոյտ ու նարնջագոյն գոյների համադրութիւնը հեղինակը ժառանգել է 11-րդ դարի Տաւրոսեան լեռների մանրանկարչական դպրոցից ու ծառայեցրել հայ նոր պետականութեան գաղափարը շեշտելու համար: Այդպիսին է «Ջարդ» նկարը:

Հովիւը ծառի տակին նստած ոչխարներն է արածացնում: Դա Կոչամանեանի յուշն է ջարդից: Ոչխարները, նրա համար, անմեղ մանուկներ են, որոնք հաւաքուած են իրար գլխի: Ետեւում երկու հայկական սարեր են, այլափոխուած: Նրանք փայլում են ու հրապուրում իրենց եռագոյնով: Լեռների վրայ բացւում է յուսադրող կապոյտ երկինքը: Բայց հովիւը մէջքով է կանգնած: Այդ բոլորը դեռ նրա համար չէ, իր ետեւում է «Ցուշ»: «Գարուն Ա Զուն Ա Արել» կտաւում ցուրտ ձմեռ է, իսկ շրջապատի անտառը գարնանային ծիլեր է արձակում: Այդ հակադրութեան, անսովոր վիճակի մէջ որբացած են երեք երեխաներ:

Պատանի Բիւզանդը ոչխար ու այծ է արածել: Ձի է քշել: Ձին ու ոչխարը, երազ եղնիկը իր բարեկամներն ու խօսակիցներն են եղել: Ուրիշի հետ նա չի կարողացել զրուցել այդպիսի մտերմութեամբ, սըրտաբացութեամբ: Հարազատները չկան: «Ցուշեր» կամ «Անկեղծ Բարեկամներ» կտաւում Կոչամանեանը այդ միասնութիւնն ու ընդհան-

բութիւնն է արտայայտել՝ ծաղկեփնջի օրինաչափութեամբ. ամէն մէկն ունի իր գոյնը, ձեւը, հոտը եւ նոյնիսկ հակադիր կողմերը, բայց համատեղուելով կազմում են մի գեղեցիկ ամբողջութիւն, մի փունջ: Սպիտակ, բայց կապոյտ երանգաւորումները, խօսուն կարմիրը մի կողմից ստեղծում են հակադրութիւն, իսկ միւս կողմից՝ միասնութիւն, որ շեշտւում է աչքերի արտայայտութեան ընդհանրութեան մէջ: Մանուկների ու ձիերի աչքերը նոյն ցաւն ու բողոքն են արտայայտում: Կիսաբլուրաձեւ գծերով հեղինակը շեշտում է իր գաղափարը:

Ցեղասպանութիւնը, բռնագաղթը մի հիմնական նպատակ է հետապնդում՝ հային կտրել ու հեռացնել իր հայրենիքից, երազային հայրենիքից, արեւային հայրենիքից: Զարդը վերապրած հայի եւ հայրենիքի միջեւ ընկած է ոչ միայն հսկայական տարածութիւնը, այլեւ ծանր ու անտանելի մի փորձառութիւն՝ Եղեռնը: Ինչքան էլ սփիւռքահայը կանաչացնում է իր նոր տունը, միջավայրը, մէկ է, նրա երազը եօթ սարերից այն կողմ գտնուող Հայաստանն է, Արարատ Լեռի տարածքը: Այս կտաւում հեղինակը հմտօրէն օգտագործել է ինչպէս գոյնի, այնպէս էլ լոյսի հնարաւորութիւնները: Այս նկարը կարելի է անուանել «Վերապրածը»:

Վերապրածն իր յոյսը կապում է նաեւ իր կազմակերպուածութեան եւ ստեղծագործական ուժի հետ, Սասունցի Դաւիթի ձիու հետ: Կարմիրի մէջ իր հզօրութիւնը հաստատող սպիտակ ձին այդ գաղափարն է մարմնաւորում:

Ինչքան էլ Բիւզանդը խուսափում է, այնուամենայնիւ աքսորի ճանապարհն ու Տէր Զօրը իր յիշողութիւնից հեռացնել չի կարողանում: Իր աչքի առաջ գալիս են մերկ ու անօթի, ասկեարի մտրակի տակ ու դիակների միջով քայլող հայ պատանիները: Այստեղ հեղինակը նախընտրել է գաղափարը արտայայտել սեւ ու սպիտակի հակադրութեամբ եւ իրար չէզոքացնել փորձող եւ ուժականութիւն հաղորդող շեշտակի գծերով: «Տէր Զօրի Աւազուտներ»ում վառուող աւազի վրայ երկարած են երկու հայ պարմանուհիների եւ մի պապիկի դիակները: Դիտողը հասկանում է որ թուրք զինուորը կռուել է անպաշտպան, հիւծուած պարմանուհիների ու ալեհեր ծերունիների դէմ, ու նրանց սպաննելով գողացել է նրանց ողջ ունեցուածքը: Ողջ կտաւը պատկերուած է բոցագոյն կարմիրով ու դեղինով: Պարտուածները, նոյնիսկ դիակի վերածուած, բողոքում են ու արդարութիւն պահանջում: Պարմանուհիները յիշեցնում են տունկից կտրուած սիրուն վարդին, որ դեռ պահում է իր հրապոյրը: Վառուող դիակը չի ոչնչանում, չի չորանում, այլ վերածւում է ճառագայթող արեւի: Ծնւում է հայ պետականութիւնը, կտրուած գլուխը վերապրում է որպէս հայկական դրօշ:

Աւագ սերնդի ներկայացուցիչներից ուշադրութեան արժանի է նաեւ ԱՌԻՇԱՐ (Խաչատուր) ԺԵՐԱՆԵԱՆը, որ ծնուել է Սեբաստիայում, 1921 թուականին: Նրա կեանքը մի քիչ այլ ճանապարհով է ընթացել, բայց պորտով կապուած է մնացել հայ հողին, հայ կեանքին, հայ ցաւին ու հայի պայքարին: Նրան բնորոշ է արտայայտչականութեան կրաֆիկական ձեւը: Նրա խորհրդանիշները գծային տեսք ունեն: Գոյնը գալիս է էլ աւելի ընդգծելու գծային լուծումը: Ժերանեանը յաճախ դիմում է անկիւնաւոր եւ բոլորաձեւ կերպաւորումների ներդաշնակութեանը: Նրա կտաւները, որպէս ամբողջութիւն, ստեղծում են մեղմ, տպաւորիչ եւ հաղորդակցական մի մթնոլորտ: Կոջամանեանի նման, նա էլ սիրում է օգտագործել գերիրապաշտական տարրեր:

Ընդգծելու համար Հայերի Ցեղասպանութեան մարդկային քաղաքակրթութեանը հասցրած վնասները, ընդգծելու համար անգլիական կառավարութեան այն արտայայտութիւնը, որ հայերին օգնել նշանակում է նպաստել մարդկային քաղաքակրթութեան, Ժերանեանը ստեղծում է «Ժամանակները, Քաղաքակրթութիւնները» կտաւը: Այնտեղ նա համաշխարհային արժէքների շարքին դասում է Գառնիի տաճարը, Անահիտի արձանը, Հռիփսիմէի տաճարը, Տիգրան Մեծը, հայ մանրանկարչութիւնը, Գրիգոր Նարեկացին, Սասունցի Դաւիթը եւ այլն: Համաշխարհային քաղաքակրթութեան այդ թանգարանը պատկերուած է երեւակայական մի ցուցասրահում, որ բացւում է դէպի յաւիտենականութիւն: Հայը համաշխարհային քաղաքակրթութեան յաւիտենական մասն է: Թուրքը այդ մասը ցանկացաւ ոչնչացնել եւ այդպիսով աղքատացնել համամարդկային արժէքների աշխարհը: Այդ նոյն միտքը հեղինակը զարգացրել է իր «Յիսուս Քրիստոսի Մուտքը Անի» կտաւում: Նա ընդգծում է այն գաղափարը որ հայերն առաջինն էին որ քրիստոնէութիւնը հռչակեցին պետական կրօն: Դա հաւասարազօր է Քրիստոսի Երուսաղէմ մուտքին, քանի որ այդպիսով դուռ բացուեց Կովկասի եւ հարեւան ժողովուրդների քրիստոնէականացմանը: Միաժամանակ Ժերանեանը այդ մուտքը, այդ նորութիւնը համարում է երջանկաբեր հայ քաղաքակրթութեան համար: Քրիստոսի այդ մուտքը երաշխիքն է այն ճշմարտութեան, որ մեծ Փրկիչը մուտք է գործել աշխարհի բոլոր քաղաքները, բոլոր մարդկանց սրտերը: Այն չէր կարող մուտք չգործել հազար ու մէկ եկեղեցի ու հարուստ մշակոյթ ունեցող Անին: Կոթողային կամարները, գունային զուարթ մթնոլորտը, մարդկային կերպարների խորհուրդը այդ է շեշտում: Նման ժողովրդին սպաննելը հնարաւոր չէ: Այս է արուեստագէտի եզրակացութիւնը:

Խիստ ուշագրաւ է Ցեղասպանութեան զոհ դարձած անմահ Կոմիտասին ձօնուած, նրա կեանքն ու երաժշտութիւնը պատկերող Ժերանեանի կտաւը: Սեւ երիզը նրբօրէն շրջապատում է նկարը, որտեղ սակայն, տիրականօրէն իշխում են անմահութիւն, փառք, թռիչք, ստեղ-

ծագործական վերելք, հնարամտութիւն եւ երջանկութիւն կերտող գոյներն ու գծերը, նկարչական տարրերը: Գծերը ինքնանպատակ չեն, այլ պատմում են հայ շինարարական եւ ճարտարապետական արուեստի առանձնայատկութիւնների մասին: Բաց եւ մութ գոյները տարածական խորութիւնը հասցնում են անվերջութեան ընկալման: Շրջանագիծ կերպարները մեկնում են հայ երաժշտականութիւնը: Իր բազմագծութեան ու բազմագունութեան հետ միատեղ նկարը խիստ մատչելի ու պարզ է: Նրան բնորոշ է ժողովրդական արուեստի պարզութիւնը:

ԳԱՌԶՈՒՆ, որն իր արուեստով քառասային այս աշխարհում ձգտում է կարգ ու կանոն ստեղծել եւ հաստատել գեղեցիկի օրինաչափութիւնը, չէր կարող անտեսել Ցեղասպանութեան հարցը: Դրան անդրադարձել է ինչպէս գիտակցական, այնպէս էլ ենթագիտակցականի մակարդակներով: Ճիշդ է շեշտել Գառզուն, երբ խոստովանել է. «Կ'ապրիմ, մասամբ մը՝ անցեալի մէջ»: Այդ անցեալի մէջ նա ընդգրկում է պատերազմը, աքսորը, կախաղանը, Հալէպում պայքարը օրապահիկի եւ գոյութեան համար: Այդ բոլորը սերտօրէն կապուած է բռնագաղթի ու Ցեղասպանութեան հետեւանքների հետ: Մի այլ դէպքում, բնութագրելով իր գեղանկարչական ոճը, նա գրում է. «Ես ոճ չունիմ. ան ինքնութեանս արտայայտութիւնն է: Ոճս պարզ գրութիւն մըն է՝ ինքնակենսագրական խորքով, բնական՝ ինչպէս շնչառութիւնը, խորապէս զգացուած եւ բացայայտիչ ներքին իրականութեան մը, եւ հետեւաբար՝ արտաքին իրականութեան մը»:

Իր ազգի, իր ընտանիքի եւ անձի ինքնակենսագրութիւնը մարմնաւորող արուեստը ինքնատիպօրէն արտապատկերում է այն պայքարը, որ մղւում է լոյսի եւ մութի, քաոսի եւ կարգաւորուածութեան, գեղեցիկի ու այն խաթարել միտող ուժերի միջեւ: Գառզուի ամէն մի կրտաւ ունի իր բողոքի ձայնը: Ուշագրաւ է նաեւ նրա այն խոստովանութիւնը, որ ինքը իրականութիւնը դիտում է լուսնի լոյսի տակ, լուսնի լոյսի միջոցով: Գիշերային մի խորհուրդ կայ նրա գործերում: Այն մութեան ու խաւարի, սեւի ու չարի խորհուրդը չէ, այլ կապուած է չափաւորուածութեան, ներդաշնակութեան ու երազայնութեան մի այնպիսի մթնոլորտի հետ, որտեղ վիճակները պարզւում ու աւելի նկատելի են դառնում: Պատահական չէ որ ձեւի եւ նիւթի ներդաշնակութեան, գոյնի եւ գծի լուծումների որոնումներում, իր հոգեկան ելուէջներ դրսեւորելու գեղագիտական արտայայտչականութիւնը զօրացնելու ջանքերում, դարիս մղձաւանջային պատկերման ջանքերում եւ վեհի համար պայքարում Գառզուն հասաւ կարմիրին՝ Գառզուական կարմիրին, բողոքող կարմիրին: Վերջապէս, չարի եւ պատերազմի դէմ ուղղուած նրա ամէն մի պաստառում առկայ է նաեւ պայքարը ցեղասպանութեան դէմ:

Գառզուի երկրորդ թանգարանում, որ գտնւում է Ֆրանսայի Մանոսք քաղաքում, մենք հանդիպում ենք հեղինակի Ցեղասպանութեան նուիրուած կտաւներին: Պատերազմի վախն ու մարդկային ցեղի ոչնչացման վտանգն են նախագուշակում աթոմական հրթիռների դաշտը եւ գերձայնային ռմբաձիգներին պատկերող գործերը: Պատերից մէկին այցելուի ուշադրութիւնն է գրաւում դարուս երկու ցեղասպանութիւնները (հայկականը եւ հրէականը) խորհրդանշող աւերուած բնակավայրերը:

Հայկական Եղեռնին յատկացուած բաժնում տրուած է նախ պատմականը: Մոնկոլ եւ սելճուք ձիաւորները արշաւում են Հայաստան՝ իրենց ետեւում թողնելով կիսաւեր եկեղեցիներ, յուշարձաններ, բնակարաններ: Հեղինակը կարծես ցանկանում է շեշտել այն գաղափարը, որ սելճուք եւ մոնկոլ ուժերի մուտքով Հայաստան, սկսում է նաեւ մշակութային եւ մարդկային արժէքների կոտորածը, ցեղասպանութիւնը: Նոր Հայաստանը բնութագրւում է դեռ աւեր մնացած հնութիւնների մէջ իրեն հաստատող Մեծամօրի աթոմակայանով: Ցեղասպանութեան առանձին հատուածները, դէպքերը վերարտադրող կտաւներում Գառզուն եւս աւերումի կողքին ընդգծում է ապագայի նկատմամբ հայի հաւատը եւ վստահութիւնը: Երեւացող եռագոյն դրօշները ընդգծում են ինչպէս հայի ազատագրական ոգին, այնպէս էլ իր պետականութիւնը վերականգնելու հայի վճռականութիւնը:

Թանգարանի վերածուած նախկին եկեղեցու երկու խորշերում այցելուներին են նայում դարիս երկու ցեղասպանութիւնների հեղինակների՝ Թալէաթի եւ Հիթլերի կերպարները: Նրանք ատելութիւն, սարսափ ու նողկանք են առաջացնում: Հրէական բաժնում նոյն զգացումներն են առաջացնում Հիթլեր-Սթալին-Փոլ Փոթ պատկերող կտաւը: Գառզուն ցեղասպանութեան շարքում ներկայացնում է նաեւ Աթիլային, Ամերիկայի բնիկների ջարդը, Վերտոնի ճակատամարտը: Բոլոր ջարդարարները՝ անմիջական կամ փոխաբերական իմաստներով, կանգնած են մարդկային դիակների վրայ, քայլում են մարդկային դիակների վրայով: Նրանց աշխարհը կախաղանների աշխարհն է, որտեղ իշխում է մեռելագոյն կարմրա-դեղինը: Նրանց զէնքերը միշտ խոսուն են, իսկ սրերը՝ արիւնոտ: Աչքերից չարիք է հոսում:

Տալասաբնակ հայ նկարիչ ՌՈՊԵՐԹ ՊԱՐՍԱՄԵԱՆԸ ծնուել է Մասաչուսեց նահանգում եւ հայերէն սովորելու հնարաւորութիւն չի ունեցել: Նա հայ ժողովրդի Ցեղասպանութեան էջերը կարդացել է մեծ մօր եւ մօր աչքերում: Դրանց մասին լսել է մայրական հեքիաթներում: Նրանք այդ սարսափելի ազգային ու անձնական ցաւի մասին զգուշութեամբ են պատմել փոքրիկ Պոպին, որպէսզի չփոթորկեն նրա մանկական աշխարհը, նրան յոռետեսութիւն չներարկեն: Ցամենայն դէպս,

մայրական արիւնով ու կաթով անցած, մայրական հայեացքով ու սրրտով փոխանցուածը աստիճանաբար ներգործել է ձուլման ճանապարհը սկսած Պոպի վրայ: Նա ոչ միայն կապուել է իր արմատների հետ, այլեւ ինքնատիպօրէն պատկերել է Ցեղասպանութիւնը: Պարսամեանը այն արտայայտել է շարքով, կտաւների ճարտարապետական ամբողջականութեամբ:

Մի կտաւ պատկերում է մանկական խաղի յուշը, միւսը՝ մանկական սարսափի վերապրումը, երրորդը՝ վշտի խտացումը, չորրորդը՝ վերածնունդի ազգային հպարտութեան, յոյսի հոգին, հինգերորդը՝ ցեղասպանի գաղանաբարոյ հոգին:

Նա վրձինին է յանձնել մօր ականջին անընդհատ լսուող էսկերների ձիերի սմբակները: Մայրը միշտ պատմել է մայր երկրում թռչունների հետ իր խաղերի, թռչունների թեւերով Մայր երկիր հասնելու իր երազի մասին: Երազային կապոյտի վրայ Պարսամեանը պատկերել է իր մօր թռչունները:

Պոպը շատ է լսել նահատակուած անմեղ մանուկների, սպաննուած իր բազմաթիւ մանուկ ազգականների մասին: Այդ ցաւն ու վիշտը պատկերել է արիւնի մէջ կորած անմեղ թաթիկների կերպարում: Բայց եւ այնպէս, հակառակ թուրքի բոլոր ցանկութիւններին, հայը ապրում եւ ստեղծագործում է ողջ աշխարհում: Եան վերջաւորութեամբ անուններն ամէնուր փայլում եւ յիշատակւում են պատուով: Զարդի պատկերին, գերադասօրէն իշխում են հայոց պատմութիւնը, հայոց քաջերը, հայոց կրօնն ու եկեղեցին, Արարատն ու հայապահպան հրեշտակը: Իսկ գետնին ոռնում են ցեղասպան գայլերը՝ Էնվեր, Թալէաթ, Նազիմ եւ այլն:

Կտաւների միւս եռապատկերը փաստօրէն գոլած է՝ նկարներից վերցրած հայ գանկերի, որոնք իրենց մեռածութեան մէջ վերածւում են կարմիր-կապոյտ եւ նարնջագոյնի: Շրջապատող լուսատու մոմերը վկայում են զոհուածների յաւիտենականութիւնը, նահատակութիւնը:

Ուշագրաւ է անուանի փաստաբան, անգլիախօս ՌՈՊԵՐԹ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆի կտաւը: Նա ազգակցական կապ ունի Մարաշի հերոսական ինքնապաշտպանութիւնը կազմակերպող ընտանիքների հետ, եւ հպարտանում է իր արմատներով: Արուեստին նուիրուելով, այդ հպարտութիւնը էլ աւելի է ուժեղացել, երբ արտայայտուել է գոյնի ու գծի մէջ: «Արհաւիրք» նկարը էքսպրեսիոնիստական ոճով արտայայտում է հայի ցաւն ու բողոքը: Բայց եւ այնպէս ընդգծում է այն գաղափարը, որ Ցեղասպանութիւնից յետոյ էլ ապրում ու ծաղկում է հայը, քանի որ կանգուն է Հայ Եկեղեցին, հայի ոգին, ստեղծագործական միտքը, երազանքը: Ցեղասպանութիւն ապրած հայը երազում է ճախրել տիեզերքում:

Գոլաժային ոճն է կիրառում նաեւ ծագումով պոլսահայ, Ուաշինկթընաբնակ նկարչուհի ՀԻԼՏԱ ՈՒԻԹԸՐՍՊՈՒՆԸ: Նա գծային լուծումներով է տալիս Ցեղասպանութեան գաղափարի կործանարար ոյժը, արտասովորութիւնը: Հիլտա Ուիթըրսպունը կարծես Ցեղասպանութեան լուսանկարները վերածել է նկարչութեան: Բայց ըստ էութեան, «Նկարի նկարը» ստեղծելով նա ասել է իր խօսքը, շեշտել իր մտքերն ու զգացումները: Նա նկարը զանազան ձեւերով բաժանում է երկու հակադիր մասերի՝ զոհեր եւ դահիճներ, անմեղներ ու մարդասպաններ, կողոպտուածներ ու աւազակներ: Կտաւներից մէկում կախաղան բարձրացուած հայ հերոսներին նա այնպէս է պատկերել, որ կարծես կախաղանները ոտքի վերածուելով հաստատակամօրէն շարժւում են առաջ, յարձակւում դահիճների վրայ ու նեղում նրանց: Մեռած է հայրենասէրների մարմինը, բայց ոչ հոգին, գաղափարն ու գործը: Նկարի ողջ ուժականութիւնը այդ շարժման միջոցով է հաղորդւում:

Հիլտան հակադրում է նաեւ սպաննուածներին ու սպաննողներին: Նրանց դիմագծի իմացական մակարդակների բեւեռային հակադիր արտայայտչականութեամբ: Նա տալիս է մեռած, բայց մտաւորական դիմագիծը պահպանած հայ երախտաւորների տպաւորիչ դէմքերը, դրանց հակադրելով անարխիզմ բուրող ջարդարարների կերպարներին:

***

Պոլսոյ միջավայրում ծնուել ու սկզբնական դաստիարակութիւնն է ստացել շնորհալի երիտասարդ նկարչուհի ՎԱՐԴԵՆԻ ՄՈՍԴԻՋԵԱՆը (Բատալեան), որ սկսեց արագ կերպով վայելել ամերիկեան եւ ֆրանսական հասարակութեան գնահատանքը: Նա այժմ Ուաթըրթաունում է ապրում եւ ստեղծագործում: Նա պատկանում է արդիական մտածողութեամբ որոնող նկարիչների շարքին, եւ փորձում է համադրել տարբեր ոճեր ու լեզուներ: Գլխաւորապէս սիրում է աշխատել վառ գոյներով ու դրանք միշտ պահել սանձուած: Նա յատուկ շարք է նուիրել Ցեղասպանութեան մեկնաբանմանը: Մենք կ՝անդրադառնանք նրա մի քանի ստեղծագործութիւններին:

«Զարդ» նկարում Ցեղասպանութիւնը պատկերուած է ոչ միայն որպէս մարդասպանութիւն, այլեւ որպէս տնաքանդութիւն, քաղաքակրթութեան կործանում: Ցեղասպանութիւնը հակամշակոյթ է: Ամէն ինչ, ստեղծուած բոլոր բարիքները վեր են ածւում քաոսի: Զարդը երգի ու երաժշտութեան, ճարտարարուեստի ու շինարարութեան հակամարմին է: Ցեղասպանութիւնը քաոսի մայրն է: «Տէր Զօրի Աւազուտներում» կտաւում նա բացայայտում է այդ բարբարոսութեան մի այլ երեսը: Գետին են ընկած մարդկային այլայլուած դիակներ: Այն տպաւորութիւնն է ստացւում, որ կարծես դրանք գայլերի ու վայրի շների կողմից յօշոտուած մսի մնացուկներ են: Նրանցից դեռ արիւն է կաթում:

Վարդենին նկարել է «Տիեզերական Ճշմարտութիւն» ուշագրաւ կտաւը: Նա պաստառը բաժանել է երկու մասի՝ սեւի ու սպիտակի, եւ դրանց միացման վայրում նկարել ուռուցքանման, խլուրդանման կարմիր մի մարմին: Անհնարին է չնկատել սեւ ու սպիտակ ֆոնի վրայի ցրցուն կարմիրը: Դա ակնյայտ փաստ է, անվիճելի իրողութիւն: Այդպէս էլ անվիճելի ճշմարտութիւն է Հայերի Ցեղասպանութիւնը, որ որպէս ուռուցք նստել է մարդկային քաղաքակրթութեան վրայ:

Ջարդը, ըստ Վարդենիի, ինքնատիպ իմաստ է ստանում վերապրածներով: Նրանք են վկաները, հիմնական տառապեալները եւ նորի կառուցման դինուորագրեալները: Վերապրածներով ենք մենք շարունակել մեր ազգային յաղթարշաւը: Վարդենին «Վերապրածը» պատկերելով բոլորաձեւ ամբողջականութեան մէջ, նրան տուել է ոչ միայն կարմիր բողոք, այլեւ սպիտակ սրբութիւն, ստեղծագործ ձեռքեր եւ առողջ մանուկ, տխուր՝ բայց խորաթափանց աչքեր: Բոլորաձեւ շրջանակը կարծես յաւերժ պտըտուող անիւն է հայի պատմութեան:

Վարդենին գտնում է որ պէտք չէ մոռանալ Ցեղասպանութիւնը, ճիշդ այնպէս՝ ինչպէս պատմութեան որեւէ մի էջ: Պատմութիւնը մոռանալը յղի է լուրջ վտանգներով: Պատմութիւնից չսովորել, նշանակում է համաձայնուել՝ ենթակայ դառնալ մշտատեւ պատժի ու գերի մնալ չարին: «Ցիշիր» պաստառով նա փաստօրէն բացատրում է թէ ինչու չի կարելի մոռանալ Ցեղասպանութիւնը: Չի մոռացուի այն, քանի որ ամէն մի հայ կորցրել է տասնեակ հարազատներ, հող ու տուն: Սպաննուել է գրի ու գիտութեան մարդը, ազգի ջահակիրը: Այդ խոր միտքը նա արտայայտել է պարզագոյն ձեւով, դիմելով նաեւ գոլաժի: Չմոռանալը բաւարար չէ: Անհրաժեշտ է պոռթկալ, բողոքել, պայքարել: Վարդենին տուել է մի նոր ու ժամանակակից Վահագն՝ արդարութեան յաղթանակը եւ հայի պահանջատիրութիւնը բաւարարող Վահագնը:

Ցեղասպանութիւնը արուեստի մէջ առնչւում է նաեւ մօր, մայրականութեան, մօր խնամքի եւ այլ մայրական յատկութիւնների հետ: Մայրը դարեր շարունակ եղել է հողի, բերքի, բերքաւորութեան, բեղմնաւորութեան, առատութեան, կեանքի յաւերժութեան խորհրդանիշը: Վարդենին՝ Անթոյեանի, Կոջամանեանի, Արշիլ Կորգու, Մութաֆեանի նման երգում է Ցեղասպանութիւնը դիմագրաւող այդ մօրը, պատկերում է նրա սէրը, կարօտը, երազը: Ինչքա՜ն մայրեր սէր ու երազ կորցրին, կարօտով ապրեցին ու մահանալիս արտասանեցին ջարդում սպաննուած կամ անյայտացած իրենց երեխայի անունը:

ՔԱՋԱԶը (Քէչէճեան)՝ արուեստի մէջ համադրել է տարբեր ոճեր ու գաղափարներ, եւ ինքնատիպօրէն մեկնաբանել է Ցեղասպանութիւնը՝ օգտագործելով ուշագրաւ խորհրդանիշներ ու պայմանականութիւններ:

Խիստ ինքնատիպ է նրա «Ջարդը» կտաւը: Պատմական Հայաստանի ողջ տարածքում տարածուած են խաչանշանով շիրիմները: Մէջտեղում բարձրացած կիսանդրին դիմակաձեւ գլխով է՝ նստած երկրաւուն վզի վրայ եւ կպած երկնքի ամպերին: Ամպերը նոյնպէս ոսկրաձեւ են: Ողջ նկարը լցուած է մռայլ կարմիր ու սեւ բծերով: Կիսանդրին ու ամպերը սեւով երիզապատուած են, աւելի ցցուն դարձնելու համար: Հայաստանը գերեզմանոց է: Անասան կանգնած են հայկական լեռները, որոնք պատկերում են հայի վերականգնած հպարտ ու անմահ հոգին: «Անթաղ Մեռելներ» կտաւում, Սուէյլայի արուեստի տրամաբանական կառոյցին՝ Քաչազը փոխարինում է մանկական արուեստի primitivիզմը: Թաղուած չէ Ջարդի ենթարկուածի զաւակն ու նրա տիկնիկը: Գարուն է: Դաշտերը կանաչ ու ծաղկած են: Ծաղիկ մանուկները սպաննուած են, բայց անթաղ: Մարդկանցից մէկը Աստուած է կանչում, իսկ միւսը՝ ինքնակորոյս ողբում:

Թրքական սպանութեան միւս ձեւը՝ կախաղանն էր: Քաչազը մի կտաւ է նուիրում դրա էութեան բացայայտմանը: Այն դիտելիս ակամայ յիշում ես Կոկենի «Դեղին Քրիստոսը» եւ Կոյայի «1808 թ. Մայիսի 3» կտաւները: Քաչազը պատկերել է հայ ժողովուրդի խաչելութիւնը այնպէս, ինչպէս այն պատկերացնում են հազարաւոր հայ գիւղացիներ ու հայ լեռնականներ: Հայը խաչելութիւնը կրել է Հայկական Լեռնաշխարհում՝ յանուն հաւատքի, հայրենիքի ու լուսաւոր կեանքի: Այս խաչելութիւնը, սակայն, փրկութիւն չի բերում: Այդ գաղափարը իւրացուում է «Սարսափահար Մայրութիւն» եւ «Որբերը» կտաւներում: Վերջինում որբերին ժառանգութիւն է մնացել հայ գիրն ու դպրութիւնը, հայոց կրօնը եւ կիսաւեր երկիրն ու անցեալի փառքը: Ցեղասպանութեամբ որբացած սերունդը, որին վիճակուած է կառուցել հայ նոր կեանքը, բարձրանալու է դրանց վրայ եւ դրանց միջոցով: Այդպիսի մանիշակագոյն երազ է ներշնչում պատմական պատը եւ գարուն յուշող մարգագետինը: Որբերի դէմքերը լաւատեսական են, հայեացքը՝ յուսադրիչ: «Ցեղին Ձայնը» ստեղծագործութիւնը մի կողմից ողբում է Կոմիտասի կորուստը, միւս կողմից՝ հաստատում նրա յաւերժութիւնը՝ ժողովրդական երգով, պատարագով: «Այսքան Ջարիք Արդեո՞ք Կարող Են Մոռանալ Մեր Որդիները» կտաւում, նկարիչը հարց է տալիս ու պատասխանում՝ ոչ:

Քաչազը հաւատարիմ է հայի աննկուն լաւատեսութեան եւ չհիասթափուող կամքին: «Նրանք Մեռան Ապրելու Համար» կտաւում, տալիս է կեանքի ու մահուան հակադրութիւնը եւ կեանքի յաղթանակը: Մի կողմում գետնին երկարած են Ցեղասպանութեան զոհերի դիակները, իսկ միւս կողմից՝ կապոյտ շապիկ հագած հայ գեղջուկը նուագում է իր սրինգը, դիմում ողջ բնութիւնը եւ այնտեղ ներմուծում որոշակի ներդաշնակութիւն, կարգ ու կանոն: Ծառերի կարմիր

կոճղերը կապտականաչաւուն ֆոնի վրայ լրացնում են կտաւի տպաւորչականութիւնը: Դիակներն անցեալ են, սընդահարը՝ ապագան: Այդ երկուսի միջեւ կանգնած է Ցեղասպանութիւնը վերապրած որբուկը: Հեղինակն օգտագործում է մանրանկարչական արտայայտչական միջոցներ, որոնք յիշեցնում են Սարգիս Պիծակին: Նա կիրառում է լակոնական ոճ, խորութիւն արտայայտող պարզութիւն:

***

Ֆրանսական նկարչութեան հետ սերտ կապի մէջ է ապրում Ան Արբր քաղաքում (Միշիկըն) ստեղծագործող ԺԱԳ ԳԱՐԱՄԱՆՈՒԿԵԱՆը: Նա վերացական ու էքսպրեսիոնիստական կամ շարժուն նկարչութեան դպրոցին է պատկանում: Իր վառ գոյների խաղերով արտայայտում է խորը եւ հակասական զգացմունքային վիճակներ: Հաւանաբար նրան առաւել հարազատ է Արշիլ Կորգին: «Ոսկորների Բողոքը» կտաւում թաղուած մարմինների մնացորդները փաստօրէն հանգիստ չեն մնում: Նրանք խօսում են, լուսաբանում են, վկայում են ու բողոքում: Նրանք պոռում են, որ եթէ դուք լռէք, ապա մենք կը բողոքենք: Մի այլ կտաւում չարի եւ բարու պայքարն է տրուած՝ սեւ ուժերի դէմ յաղթանակող կապոյտի հակամարտութեամբ: Գարամանուկեանը հաւատում է մարդու մէջ նստած բարութեանը: Առանց այդ հաւատի ու երազի անիմաստ կը լինի մարդկային քաղաքակրթութիւնը:

ՅԱԿՈԲ ԽՈՒՊԱՍԱՐԵԱՆը՝ «Տէր Զօր» իւղաներկում, հետաքրքրական կերպարանաւորում է տուել Ցեղասպանութեան երեւոյթին: Աւազակոյտերի վրայ տեղաւորուած են փոշիների մէջ իրենց դիմագծերը կորցրած մարդիկ: Նրանք փաստօրէն կամ ոգիներն են մարդկանց, եւ կամ՝ կենդանի ստուերներ: Նրանք, սակայն, խօսում են: Հեղինակը ստեղծագործօրէն օգտագործել է սպիտակ ֆոնի վրայ գծային շեշտաւորումների հնարաւորութիւնները: Տէր-Զօրը հայից չի կարողացել խլել մարդկայնութեան գծերը:

ՊԵՐՃ ՔԱՑԹԱՑԵԱՆը խաչքարի խորհրդանիշով կերպարել է «վերապրող» հային: Այնպէս, ինչպէս հայկական խաչքարը դիմացել է անցեալի արհաւիրքներին, գիտութեան ու մեքենայի տիրապետութեան դարին, այնպէս էլ հայը ֆիզիքապէս, իմացապէս, հոգեպէս շարունակելու է իրեն հաստատել մարդկային քաղաքակրթութեան մէջ՝ իր ինքնատիպ կերտուածքով ու ստեղծագործութեամբ:

Փաստաթղթայում ապրում եւ ստեղծագործում է արժանթինահայ ՓԱՆՈՍ ՄԱՐՋԱՆԵԱՆը, որ իւրովի է համադրում գերիրապաշտութիւնը, նէոկլասիցիզմը ու ռոմանթիզմը, որպէսզի ստեղծի իր ինքնատիպ կտաւները: Նա դիմում է ինչպէս լոյսի եւ գոյնի, այնպէս էլ ձեւի ու անձեւութեան հնարանքներին: Նրա համար կարեւորը ասելիք ունենալը եւ դրան համապատասխանող լեզուն գտնելն է: Երբ այդ միասնութիւնը հաստատուած է, մնացածը անիմաստ են դառնում: Նրա կտաւները յաճախ արտացոլում են դրականի ու բացասականի, խաւարի ու լոյսի, բարու եւ չարի, սատանայի ու աստուածավախի պայքարը: Այդ առումով Եղեռնի հարցը հարազատ է նրան: Ցեղասպանութեանն է անմիջապէս վերաբերում նրա «Ձեռքերը» կտաւը: Հողից սնուող, հողը մշակող եւ հողը օրհնող ձեռքերը միաժամանակ ուղղուած են դէպի Արարիչը: Ձեռքի ամէն մի մասը մի օրհներգ ու փառաբանութիւն է երգում, մի «Ողորմեայ» ու «Հայր Մեր»: Զարը՝ ցեղասպանը, թուրքը, ձգտել է կտրել այդ ստեղծագործ ու աղօթող ձեռքերը: Չլատել են նրա կապերը: Սակայն նա շարունակում է իր աղօթքը, որ ալիք առ ալիք բարձրանում է դէպի վեր, դէպի երկինք, դէպի Աստուած, որտեղից իջնում է կեանքի աղբիւրը, յաւիտենական լոյսը, ճշմարտութեան կանթեղը:

Եզրակացնելով կարող ենք հաստատել, որ սփիւռքահայ նկարիչները տարբեր տեսակէտից եւ տարբեր ոճով մեկնաբանել են Ցեղասպանութիւնը: Նրանց բոլորին բնորոշ է երեւոյթը անմարդկային նշանակութեամբ դիտելու միտումը, չարի դէմ մարդու յաղթանակը ապահովելու ձգտումը: Նրանք իրենց կտաւներում ընդգծել են հայի լաւատեսական կեցուածքը, ապրելու եւ ստեղծագործելու վճռականութիւնը, եւ նոր անկախ ու ազատ Հայաստանը կերտելու համար պայքարելու պատրաստակամութիւնը: Լաւատեսութեամբ, մարդասիրութեամբ, ստեղծագործական նուիրումով կրնանք յաղթահարել ե՛ւ Ցեղասպանութեան հոգեխոցութիւնը ու ցեղասպանին:

Ինչպէս պարզ նկատելի է, մեր նպատակը չէ եղել տալ հարցի պատմական հոլովոյթը եւ կամ էլ վերծանել Ցեղասպանութիւնը պատկերող բոլոր գեղանկարիչների կտաւները: Այս մի պարզ ու համառօտ ակնարկ է բացատրելու հայու լաւատեսական ոգին, մարդասիրական ու հայրենասիրական ոգին, Եղեռնը յաղթանակելու վճռակամութիւնը:

ԱՏՈՄ ԷԿՈՅԵԱՆԻ «ԱՐԱՐԱՏ» ՇԱՐԺԱՆԿԱՐԸ

Նկատի պէտք է ունենալ որ «Արարատ»ը սովորական պատմողական կամ պատմագրական նկար չէ, երբ դէպքերը պատկերւում են վէպի տրամաբանութեամբ: Այն պատմուածքների մի ծաղկեփունջ է, որի ամէն մի տարրը միւսների հետ գեղարուեստօրէն կապւում է մի ընդհանուր շղթայով, որն ինքն ունի բազմաթիւ օղակներ: Ամէն մի պատմուածք ունի իր հերոսը, իր ներքին տրամաբանութիւնը, ներքին ծալքերը: Միաժամանակ, ամէն մի պատմուածք արտապատկերում է Հայերի Ցեղասպանութիւն ասուած հակամշակոյթի այս կամ այն կողմը: Ցեղասպանութիւնը հակամշակոյթ է, քանի որ այն քանդում է այն՝ ինչ աստուածային է մարդու մէջ, այն՝ ինչ մարդկային է քաղաքակրթութեան առաջընթացում, այն՝ ինչ մարդը կերտել է աշխարհը գեղեցկացնելու, իր պահանջները աւելի լաւ ու աւելի գեղեցիկ ձեւով բաւարարելու, վայելելու համար, իր աստուածատուր տնօրինութեան բնական իրաւունքը գործադրելու համար: Ցեղասպանութիւնը բազմաթիւ երեսներ ունեցող մի երեւոյթ է, եւ շարժանկարի ամէն մի պատմուածքը բացայայտում է այս կամ այն երեսը: Այդպիսով, այնտեղ ցեղասպանութեան երեւոյթը ստանում է իր բազմակողմանի գեղարուեստական արտապատկերումը:

Գրական-գեղարուեստական գործում կարելի է ղեկավարուել երկի ներքին կառոյցի երեք սկզբունքներով: Նրա հենքը կարելի է կառուցել դէպքերի պատմական յաջորդականութեան կամ ժամանակագրական յաջորդականութեան վրայ (օրինակ՝ Դերենիկ Դեմիրճեանի «Վարդանանք»ը): Գեղարուեստական երկի հենքը կարելի է կերտել նաեւ դէպքերի տրամաբանական կառոյցի վրայ, որտեղ պարտադիր չէ պահպանել պատմաժամանակագրական յաջորդականութիւնը՝ երբ տիրապետում է տրամաբանական շղթայի կուռ կառոյցը, բարոյական բարդ կառոյցների աստիճանական բացայայտումը, կծիկաւորումը կամ ապակծիկաւորումը: Այդ սկզբունքը լայնօրէն օգտագործւում է բանաւոր ժողովրդական ստեղծագործութիւններում: Այդ եղանակով է, օրինակի համար, շարադրուած «Սասնայ Ծռեր» դիւցազներգութիւնը: Այդ եղանակով է նկարահանուած «Արարատ» շարժանկարը: Կարեւոր չէ թէ դէպքի մասին երբ ու որտեղ է պատմւում: Կարեւոր է որ ճշմարտութիւնը արտացոլուի, ճշմարտութիւնը բացայայտուի: Պատմական ճշմարտութիւնը մէկ է: Նրա վերաբերեալ անցեալում, ներկայում, մենախօսութեան միջոցով թէ հարցաքննութեան ժամանակ, նկարահանուելիս թէ սիրաբանութեան ու խանդի պահին, արտայայտուածը խորքով միանում են իրար ու խճանկարի պէս գծագրում իրականութիւնը, բարոյականը, գեղեցիկը, վեհը: Ճշմարտութեան տրամաբանական խորքը կուռ եւ խտացուած կառոյցի մէջ է արտայայտւում գիտութեան մէջ, կամ մարդու ստեղծած կերպարներում: Կեանքում այն գոյութիւն ունի իրեն բնորոշ տարածուածութեան, «ցրուածութեան», բազմաշերտութեան մէջ: Հեղինակները ղեկավարուել են այդ իրական վիճակի թելադրանքով: Կարելի է նաեւ իրար համադրել այդ երկու եղանակները (Օրինակ՝ Վահագն Դաւթեանի «Ռէքվիեմ»ը):

Բեմական արուեստի գործերում յաջողութիւնը կապուած է այն բանի հետ, թէ ինչպիսի վարպետութեամբ փոքրիկ թուացող դէպքի կամ երեւոյթի հոլովոյթի ընթացքում կամ միջոցով աստիճանաբար վերածնւում է մեծ ու էական դէպքերի ու երեւոյթների խորքը: Երբ մեծի միջոցով ապածալքաւորւում է փոքրը, գործը կորցնում է գեղարուեստական իր արժանիքը: «Արարատ»ում ամէն մի փոքր պատում աստիճանաբար առաջնորդում է խորքային մեծ ճշմարտութիւնների բացայայտման, կարեւորագոյն երեւոյթների ու դէպքերի վերլուծութեան, վերծանման եւ ըմբռնման: Նկարը սկսում է Աւետիք Իսահակեանի «Մայրը»՝ Շիրակի շրջանի աւանդավէպով, նշելու որ այնտեղ կեդրոնական է մայր-որդի յարաբերութեան վերլուծութիւնը եւ ընդգծելու հայկական ժողովրդական աւանդութիւնների մարդասիրական ոգին: Արշիլ Կորքու «Մայր եւ Որդի» նկարում մօր թաթի կիսատ գծագրուածութիւնը, այդ նկարի ու Ախթամարի Սբ. Խաչ եկեղեցու պատի վրայի Մատոնայի գծագրութեան ընդհանրութեան միջոցով շարժանկարը բացայայտում է մեծ պատմական իրողութիւններ, ստեղծագործական երեւակայութեան ու արուեստի ներաշխարհի կերտման բարդ հարցեր: Ճաշի սեղանին կատարուած աղօթքի կծիկը տանում է մարդու ներաշխարհային հակասութիւնների, մարդու դէպի մարդը ունեցած սիրոյ ու հաւատի հիմնաւորման: Հերոսների անհատական գծերը, կենսափորձը բանալի է դառնում հաւաքական բնութագրումների: Գանատա մուտքը, կամ Գանատա մուտքի իրաւունք ստանալը դուռ է բացում ազգային, ընտանեկան ու անհատական կարեւորագոյն գաղտնիքների ու արժէքների բացայայտման:

Շարժանկարի հեղինակների համար կասկած չկայ որ թուրքական իշխանութիւնների կողմից Հայերի բռնագաղթն ու Ցեղասպանութիւնը

անվիճելի պատմական իրողութիւն է: Նրանք չեն էլ ձգտում այն ապացուցել: Ապացոյցները բազմաթիւ են ու ակներեւ՝ հայկական տարածքների հայաթափումը, միլիոնաւոր հայերի սփռումը աշխարհով մէկ, Թուրքիայում գործող բարեսիրական բազմաթիւ օտարազգի գործիչների ու դիւանագէտների պաշտօնական ու անձնական վկայութիւնները, թուրքական խոստովանութիւնները: Հանճարեղ վանեցի նկարիչ Արշիլ Կորքու կենսագրութիւնն ու կտաւները բաւարար են այն հաստատելու: Բռնագաղթի ու ջարդի վայրագութիւնները պատկերւում են նաեւ մի այլ հարցի պատասխանը որոնելու համար. ինչո՞ւ եւ ի՞նչպէս կարող է մարդու մէջ (թուրք Իթթիհատականների ու գերմանացի ֆաշականների մէջ) առաջանալ ու կուտակուել այդքան ատելութիւն դէպի մարդը, դէպի իր քաղաքացին, դէպի մշակոյթն ու քաղաքակրթութիւնը, ինչո՞ւ: Ինչո՞ւ մարդու մէջ տիրում է քանդելու ու ջարդելու բնազդը, երբ մարդ արարուած է կառուցելու, վայելելու ու սիրելու համար: Ֆիլմը այդ հարցն է դնում մարդկութեան առաջ: Այս հողի վրայ նկարը լոկ հայկական վէրքի, հայկական հարցի պատումը չէ, այլ համամարդկային ահաւոր մի հարցի, մարդը անմարդկայնացնող ու արժէքազրկող մի հարցի բարձրացումն է: Այդ ատելութեան գոյութիւնը աւելի սարսափելի ու ահաւոր է դառնում, քանի որ մարդը միտում է ուրանալ դրա գոյութիւնը եւ դրա հեղինակը լինելու իրողութիւնը: Ուրանալով՝ նա իրաւ է դարձնում այն կրկնելու հաւանականութիւնը: Պատկերելով ահաւոր անցեալը, շարժանկարը պայքարում է այդ հաւանականութեան վերացման համար, մարդու ապագայի երջանկութեան համար:

Ուրացուած ոճիրը ոչ միայն մնում է անցեալի ու պատմութեան էջերում, այլ նաեւ ապրում ու գործում է մերօրեայ ժամանակներում, այսօրուայ կեանքում: Այն մնում է տարբեր ձեւերով ու մեծապէս արգելակում ընկերային առաջընթացին, կեանքի, մարդկային, ազգային ու պետական յարաբերութիւնների բնականացման, աշխարհում լարուածութեան վերացման գործընթացին: Ոճրագործի կողմից իր ոճիրի ուրացումը թոյլ չի տալիս որ նա իրագործի կեանքի ու Աստուծոյ պահանջած հոգեւոր ու բարոյական կատարելագործումը, վերելքը: Ուրացուած ոճրագործութիւնը միշտ կենդանի է պահում յանուն արդարութեան իրագործուող պայքարը՝ խլելով մեծ միջոցներ: Ուրացուած ոճրագործութիւնը անհնար է դարձնում իրաւ խաղաղութիւնը, ժողովրդապետութեան հաստատումը եւ երջանիկ ապագայի նկատմամբ վստահութիւնը: «Արարատ» շարժանկարի նկարահանումն ու գոյութիւնը այդ ուրացման յաղթահարմանն է միտում, նրա ահաւոր կործանարար հետեւանքների կանխմանն է ձգտում:

Ուրացման իրողութիւնը ուրացողի մօտ ստեղծում է հոգեկան բարդոյթներ, մի տեսակի ներքին վախ ու անվստահութիւն: Ուրացումը ծնում է պատմութեան խեղաթիւրում, ստախօսութիւն: Բայց ինչպէս Աբրահամ Լինքըլն է ասել. «Անհնարին է որ մարդ այնքան ուժեղ յիշողութիւն ունենայ, որ կարողանայ անընդհատ սուտ խօսել»: Կամ՝ «Հնարաւոր է երկար ժամանակ որոշ մարդկանց խաբել, կամ շատերին կարճ ժամանակով խաբել: Անհնարին է բոլորին միշտ խաբել»: «Արարատ»ը այս ճշմարտութիւնների հաստատումն է:

Հայոց ուրացուող Ցեղասպանութիւնից անցել է իննսուն տարի: Այն իր ներգործութիւնն է ունեցել զոհի երեք յաջորդական սերունդների վրայ: Ֆաշականների Երկրորդ Աշխարհամարտի ժամանակ գործադրած ցեղասպանութիւնը շարունակում է իր ներգործութիւնն ունենալ զոհ գնացած ժողովուրդների արդի սերունդների վրայ, թէեւ գերմանական պետութիւնն ու ազնիւ ժողովուրդը քաջաբար ներողութիւն է խնդրել եւ անհրաժեշտ հատուցումը վճարել: Թուրքը չի արել ու տրամադիր էլ չէ հայ ժողովրդից ներողութիւն խնդրելու, կամ համապատասխան բարոյական, դրամական ու տարածքային հատուցում կատարելու: Նա շարունակում է հին ընթացքը ու խորացնում ինչպէս իր, այնպէս էլ զոհի հոգեխոցութիւնը...

Ժամանակակից հայ եւ թուրք նոր սերունդի կերպարի կերտման, կեանքի ելեւէջների մէջ, նրա բնաւորութեան գծերի ու սխալների մէջ դժուար չէ տեսնել մի կողմից Ցեղասպանութեան կործանարար ազդեցութեան, եւ միւս կողմից՝ նրա ուրացման ու ներողամտութիւն հայցելու միտումից հրաժարման հետքերը: Այն ներկայ է նրա գիտական, քաղաքական, ընկերային յարաբերութիւնների ծալքերում: Նա առկայ է նոյնիսկ նրա սիրոյ մէջ: Ինքնաքննադատութիւնը եւ առարկայականութիւնը հերոսին վայել յատկանիշ է: Այն էլ աւելի է զօրացնում շարժանկարի քննադատական, վերանորոգչական ու յեղափոխական ոգին: Հայը անթերի չէ, բայց նա միշտ պայքարում է չարի դէմ, իր մէջ չարի կողմից ներմուծուած վէրքերի դէմ: Այդ պայքարում յաղթանակում է բարին, որով հայ մարդը դառնում է մարդկութեան համաշխարհային ընտանիքի, իրեն ընդունող երկրի ու վերածնուած Հայաստանի ազնիւ, նուիրուած ու սիրուած անդամը: Նա հանդէս է գալիս իբրեւ գիտութեան, արուեստի, ճարտարարուեստի, առեւտուրի ջահակիրներից մէկը, առաջընթացի ռահվիրան: Նա սիրուած է ամէնուրեք:

Արհաւիրքների մէջ, կործանման ու բնաջնջման եզրին կանգնած հայ պատանին, ցեղասպանի աչքերին ու մահուան դէմքին քաջաբար նայող հայ պատանին, կրկնում է. «Մենք պիտի յաղթենք, մենք պիտի յաղթենք»: Շարժանկարը այդ յաղթանակի վկայագիրն է, այդ յաղթանակի արդարացի եւ յուզիչ պատմութիւնը՝ տրուած իր բազմաթիւ երեսներով ու ելեւէջներով:

ՎԵՐՋԱԲԱՆ

Հայերու Ցեղասպանութեան հարցի ուսումնասիրութեան եւ լուծման գործընթացը, ինչպէս նկատեցինք, վերջին դարաշրջանում անցաւ բազմաթիւ փուլերով: Ան մոռացուած կամ սպիացած ահաւոր վէրքից հասաւ մինչեւ օրակարգի վրայ դրուած հրատապ հարցի: Ան մերթ կորսուեց դիւանագիտական խորխորատներում եւ մէկ էլ հրապարակ իջաւ որպէս ակնյայտ ռազմական ու ռազմավարական խնդիր: Մերթ վերածուեց ասուպի նման փայլտակող հարցի, մէկ էլ վերածուեց կայուն կանխորոշիչ համաստեղութեան: Եղան պահեր, երբ Հայերի Ցեղասպանութեան յիշատակումը նկատուեց ազգերի միջեւ թշնամանք հրահրելու միջոց, ժողովուրդների բարեկամութեանն անյարիր երեւոյթ: Մէկ էլ այն դարձաւ մարդասիրութեան, հայրենասիրութեան դրսեւորում, մարդկային իրաւունքի համար ու ճշմարտութեան բացայայտման համար մղուող պայքարի դրսեւորում: Այս տեղատուութեան ու մակընթացութեան ալիքներում այն երբեք այնքան չի միջազգայնացել, որքան այսօր:

Այսօր Հայերի Ցեղասպանութեան հարցը լոկ հայկական չէ: Այն լոկ ազգային հարց չէ: Այն միայն օսմանեան ու թրքական լծի դէմ պայքարած ու պայքարող ժողովուրդների դարաւոր պատմութեան դառնագոյն ու դաժանագոյն խտացումը չէ: Այն զուտ տեղական՝ Կովկասեան, Փոքր Ասիական, «Անատոլիական», Միջին Արեւելքի պատմութեանը չի վերաբերում: Երբ ուսումնասիրում ենք 19-21 դարերի Անգլիայի, Պելճիքայի, Գերմանիայի, Իտալիայի, Հունգարիայի, Աւստրիայի, Ֆրանսայի, Լեհաստանի, Ռուսաստանի, Ուքրանիայի քաղաքական պատմութիւնը, այդ երկրների միջազգային յարաբերութիւնների դիւանները, նրանց ստանձնած ի-

ռաւական, բարոյական ու տնտեսական պարտաւորութիւնները, ապա բացայայտ են դառնում այն առնչութիւնները, որ Եւրոպական Աշխարհը ունի Հայերի Ցեղասպանութեան տարբեր երեսների հետ: Երբ վերլուծում ենք եւրոպական երկրների վեհաժողովների (Լոնտոնեան, Սան Սթեֆանոյի, Պերլինի, Բարիզի, Սեւրի, Լոզանի, Ազգերի Լիկայի, Թեհրանի, Եալթայի, Պոտսդամի, ՄԱԿ-ի, Եւրոմիութեան եւայլնի) նիւթերը, այնտեղ նոյնպէս կը բացայայտենք եւրոպական եւ միջազգային կեանքի անխզելի կապը Հայերի Ցեղասպանութեան բազմաթիւ կողմերի հետ: Վերջին եօթանասուն տարիների ընթացքում Եւրոպայում արձանագրուած ողջակիզումը, ցեղասպանութիւններն ու ազգային մաքրագործումները ուսումնասիրելիս, գիտնականները եզրակացնում են որ եթէ Հայերի Ցեղասպանութիւնը իր ժամանակին համակողմանի ուսումնասիրութեան ենթարկուէր եւ այդ հիման վրայ միջոցներ ձեռնարկուէին ապագայ ցեղասպանութիւնները կանխելու ուղղութեամբ, ապա Եւրոպան ազատ կը լինէր այն ոճիրից: Պատմաբանները նաեւ նշում են թէ ինչպէս հիթլէրականներն ու միւս ֆաշականները օգտուել են թուրք ջարդարարների փորձից:

Համաշխարհայնացման միտում է արձանագրում ոչ միայն քաղաքական իշխանութեան տարածման, գիտելիքների սփոման, տնտեսական արդիւնաբերութեան եւ տեխնոլոգիայի ասպարէզներում, արուեստի ու ապրելակերպի ու մարդկային յարաբերութիւնների կարգաւորման ոլորտներում, այլ նաեւ չարիքի, բռնութեան, ոճրագործութեան, ահաբեկչութեան ու ցեղասպանութեան գործադրման բնագաւառներում: Ամէն մի աննկատ ու անպատիժ մնացած բացասական արարք նպաստում է չարիքի, ըստ որում՝ ցեղասպանութեան վերարտադրութեան ու համաշխարհայնացման: Այս առաւել ընդգծուածութեամբ նկատելի է Օսմանեան Կայսրութիւնում ու Թուրքիայի Հանրապետութիւնում գործադրուած ու գործադրուող համապատասխան արարքների ուժականութեան ու միտումի մէջ:

Միջազգային դիւանագիտական յարաբերութիւններում ստեղծուել է վերոյիշեալ գործընթացներին հակադրուող, դրանք չէզոքացնել միտող մի աւանդոյթ: Թէեւ այն աստիճանաբար թուլանում ու այլակերպւում է, բայց յաճախ զգալ է տալիս էապէս: Եւրոպական քաղաքական թատերաբեմի գլխաւոր դերակատարներից իւրաքանչիւրը (Անգլիան, Ֆրանսան, Գերմանիան, Աւստրիա-Հունգարիան, Ռուսաստանը) ժամանակի ընթացքում մշակեցին մի այնպիսի քաղաքականութիւն, որ մի կողմից ձգտում էր ապահովել Թուրքիան արտաքին միջամտութիւններից ու վտանգներից, իսկ միւս կողմից՝ Օսմանեան Կայսրութիւնը խոցելի դարձնել միայն իր

համար: Այսպիսով, Թուրքիան միշտ ունեցաւ ինչպէս չկամեցողներ, այնպէս էլ պաշտպաններ, որոնք երբեմն փոխում էին իրենց դերերը: Թուրքիան միշտ հանդէս էր գալիս որպէս նրանցից մէկի կամ մի քանիսի ռազմավարական դաշնակից: Պալքանների ու Արեւմտեան Եւրոպայի ժողովրդների ազատագրական պայքարի նկատմամբ այդ կեցուածքը նուազ սրութեամբ էր գործադրւում, որովհետեւ այս պայքարի յաղթանակը թուլացնում էր Թուրքիան առանց մասնաւորապէս չուժեղացնելով դերակատարներից որեւէ մէկին: Իսկ Հայկական Լեռնաշխարհում հայերի կողմից առաջադրուած բարենորոգումների ծրագիրը աւելի նպաստաւոր էր նկատւում Ռուսիային, որի համար էլ միւս դերակատարները աւելի ընդգծում էին Թուրքիայի «ռազմավարական բարեկամ» լինելու իրենց հանգամանքը: Հարցը աւելի էր սրւում, երբ խնդիրը վերաբերւում էր այդ տարածքների ազատագրման ու հայկական պետականութեան վերականգնման: Այնքանով, որքանով գերապատութիւն էր տրւում «հաւասարակշռուած քաղաքականութեան», Թուրքիայի «բարեկամները» կամ «պաշտպանները» կարողանում էին աւելի որոշիչ թրքամէտ քաղաքականութիւն պարտադրել: Սոյն իրադրութիւնը աւելի ընդգծուեց, երբ ձեւակերպուեց «Հայկական Հարց» հասկացութիւնը, եւ այն իր տեղը գրաւեց միջազգային դիւանագիտութեան մէջ որպէս օրակարգի հարց: Այն ակնյայտ դարձաւ Պերլինի Վեհաժողովի ընթացքում ու դրանից յետոյ:

Թուրքերի կողմից հայերի իրաւազրկման ու հետապնդումների քաղաքականութիւնը սկսեց վերածուել բռնագաղթի ու կոտորածների, երբ օսմանեան իշխանութիւնները ծրագրեցին Կիլիկիայի ու Հայկական Լեռնաշխարհի լեռնային շրջաններին իրենց շնորհած ինքնավարութիւնը (այդ քաղաքականութիւնը գործադրուեց Լեռնային Լիբանանում եւ այլուր) բռնի ուժով վերացնել: Լեռնականները դիմեցին ինքնապաշտպանութեան: Եւրոպական միջամտութիւնը թրքանպաստ էր եւ հիմք հանդիսացաւ 19-րդ դարի վերջի Համիտեան ջարդերին, որ Եւրոպայում ընդունուեց քաղաքական անտարբերութեամբ ու չէզոքութեամբ: Դրան յաջորդեց 1908-1909-ի Կիլիկիայի ջարդերը: Եւրոպան փաստօրէն պաշտպանեց «յեղափոխական Նոր Թուրքիան», «Թուրքիայում սահմանադրութեան հաստատման ջանքերը»:

Ա. Աշխարհամարտի նախօրէին Օսմանեան Կայսրութիւնում ապրող հայերը, ըստ որում՝ Կիլիկիայի եւ Պատմական Հայաստանի հայերը, իրենց կազմակերպութիւնների միջոցով իշխանութիւններին խոստացան հաւատարիմ մնալ օսմանեան դրօշին ու սահմանադրութեան: Նրանք իրենց խոստումը պահպանեցին: Իսկ օս-

մանեան իշխանութիւնները Օսմանեան Կայսրութիւնում ապրող հայերի մեծամասնութեան ենթարկեցին ծրագրուած բռնագաղթի ու ցեղասպանութեան: Օսմանեան Կայսրութենէն դուրս մնացած հայերը համագործակցեցին Դաշնակից պետութիւնների հետ ու դարձան հաւատարիմ Փոքր Դաշնակիցը: Նրանց խոստացուեց պատերազմի յաղթական աւարտից յետոյ՝ Օսմանեան Կայսրութեան տարրաբաժանումից յետոյ, նկատի ունենալ Հայաստանի պետականութեան վերականգնումը Պատմական Հայաստանի տարածքում: Թուրքիայի պարտութիւնից եւ 1915-1918 թթ. Հայերի ցեղասպանութեան ծրագրի գործադրումից յետոյ Հայաստանի պետականութեան վերականգնման օրակարգին կցուեց նաեւ Օսմանեան Կայսրութիւնում ապրած հայերի զանգուածային ջարդի, նրանց բռնագաղթի եւ նրանց գոյքի անօրինական բռնագրաւման (զանգուածային կողոպուտի) հարցերը: Միջազգային համապատասխան ատեանների առաջ որպէս հայցուոր, իրաւատէր ներկայացան ինչպէս Դաշնակիցների հետ համագործակցած հայերը, այնպէս էլ օսմանեան իշխանութեան տիրապետութեան տակ բնակուած ու ջարդի եւ բռնագաղթի ենթարկուածների մնացորդացը:

Սկզբնական շրջանում խիստ հաւանական էր երեւում հայերի ծրագրերի ու երազանքների իրականացումը: Յանկարծ փոխուեց շրջանի աշխարհաքաղաքականութիւնը, երբ Ռուսաստանում ու նրա ազդեցութեան գօտում յաղթանակեց Պոլշեւիկեան Յեղափոխութիւնը եւ Թուրքիայում հանդէս եկաւ Մուսթաֆա Քեմալի ազգայնական շարժումը: Թուրքիայի պաշտպան դարձան Անգլիան, Ֆրանսան, Ա.Մ.Ն.-ը եւ Պոլշեւիկեան Ռուսաստանը: Մի ակնթարթում մոռացուեցին հայերին, յոյներին, իտալացիներին տրուած խոստումները, ջնջուեց Թուրքիան հին ու փոքրիկ Պոնտոսի չափով ձեւելու որոշումը եւ փոխարէնը ծնունդ տրուեց արդի Թրքական Հանրապետութեան: Անգլիայի, Ֆրանսայի ու Ա.Մ.Ն.-ի համար Թուրքիան դարձաւ Արեւելքը պոլշեւիկեան վտանգից փրկող պատուար, հակապոլշեւիկեան բերդ: Պոլշեւիկեան Ռուսաստանի համար այն ընդունուեց որպէս յեղափոխական եւ հակագաղութատիրական Արեւելքի դրօշակակիր: Արեւմուտքում Հայերի ցեղասպանութիւնը դարձաւ ենթադրեալ, իսկ Պոլշեւիկեան Աշխարհում այդ մասին ակնարկողները նկատուեցին յանցագործ:

Հայերի ցեղասպանութեան իրողութեան պատմագիտական, իրաւագիտական, դիւանագիտական ու քաղաքական երեսների քննարկումն ու լուսաբանութիւնը արգելակող, ու այդ ճանապարհով Հայկական Հարցի լուծումը բացառող բերդը, Մեծ Տէրութիւնների հզօրութեամբ կանգնած ու պահուող այդ բերդը աստիճանաբար

սկսեց քանդուել վերջին տասնամեակների ընթացքում: Այդ մեծ իրադարձութեան մէջ վճռորոշ նշանակութիւն ունեցան ներքոյիշեալ երեւոյթները:

Մեծ պետութիւնների կողմից Հայերի ցեղասպանութեան ու Հայկական Հարցի արգիլուած կամ մերժուած կամ թէական հնչակուելը շատերի, մանաւանդ թուրք հեղինակների կողմից ներկայացուեց որպէս իրողութեան, փաստի, բուն ցեղասպանութեան հերքում: Յայտարարւում էր՝ որ կամ Հայերի ցեղասպանութեան հաստատման համար բաւարար հիմքեր չկան, եւ կամ էլ՝ այն հնարովի է, կեղծ է: Այսպէս, ուժի ու շահի քաղաքականութիւնը լուծեց պատմական լուրջ հարցեր առանց որեւէ գիտական հիմնաւորման ու փաստարկման: Սակայն, եթէ քաղաքականութիւնն ու դիւանագիտութիւնը այս կամ այն պետութեան կամ քաղաքական մարմնի շահերի պաշտպանումն ու արդարացումն է, ապա գիտութիւնն ու գիտնականները նուիրուած են ճշմարտութեան բացայայտման: Այն ազգային սահմաններ չի ճանաչում, եւ խորքով համամարդկային է: Գիտութեան նուաճումները ուժի ու շահի քաղաքականութիւնը աստիճանաբար դուրս մղեցին՝ պատմագիտական հարցեր լուծելու նրա անարդարացիօրէն նուաճած իրաւասութիւնից:

Աշխարհի շատ երկրներում հիմնադրուեցին ու սկսեցին եռանդուն կերպով աշխատել ցեղասպանագիտական ամբիոններ, հիմնարկներ ու կեդրոններ: Նրանց ուսումնասիրութիւնները սկսեցին հաստատել թուրքերի կողմից կազմակերպուած Հայերի ցեղասպանութեան իրողութիւնը: Նրանք նաեւ ցոյց տուին որ Մեծ Տէրութիւնների դիւանագիտական ու պատմական դիւաններում պահուող փաստաթղթերը հակադրւում են գործող իշխանութիւնների հարցադրումներին: Այս հիման վրայ Մեծ Տէրութիւնները հարկադրուած եղան փոխելու իրենց ձեւակերպումները: Նրանք սկսեցին պնդել որ իրենք թուրքերի կողմից Հայերի զանգուածային Ջարդերի ու ցեղասպանութեան մասին չեն ցանկանում խօսել, քանի որ Թուրքիան իրենց հաւատարիմ զինակիցն է: Որքանով Թուրքիայի՝ նրանց մատուցած ծառայութեան իմաստն ու արժէքը փոքրացաւ, այնքանով Մեծ Տէրութիւնների օժանդակութիւնը, պաշտպանութիւնը թուլացաւ: Այլեւս Մեծ Տէրութիւնների թրքանպաստ նման յայտարարութիւնները չեն մեկնաբանւում որպէս Հայերի ցեղասպանութեան փաստի հերքում: Այս ստիպեց Թուրքիային նոր պաշտպանութիւն եւ ռազմավարութիւն որդեգրել:

Գիտութեան մեր դարում, երբ ամէն մի ասպարէզի տնօրինում եւ ղեկավարում վերապահւում է գիտութեան, խաւարամիտ կոչեր են հնչում պարտուող որոշ քաղաքական ուժերի կողմից: Երբ հրա-

մայական է նկատում իմացութեան ամէն մի ճիւղի եւ ամէն մի գործնական աշխատանքի միասնութիւնը գիտութեան հետ, որոշ քաղաքագէտներ ձգտում են սեպ խրել գիտութեան ու քաղաքականութեան միջեւ, քանի որ գիտական նոր դրոյթները չեն հաստատում հին դիւանագիտութեան ու քաղաքականութեան դրոյթները, ուժի եւ մենատիրական շահի դրոյթները: Քաղաքական տուեալ միտումի նպատակն է դժուարացնել կամ անհնարին դարձնել գիտական նուաճումները քաղաքականութեան, դիւանագիտութեան ու ընկերային կեանքի ոլորտներում:

Գիտութեան ոյժը իր նորարարութեան, բանականութեան, կեանքը բարելաւելու եւ կեանքի առաջընթացը ապահովելու մէջ է: Բայց ինքն իրեն պարտադրել չի կարող առանց համապատասխան ուժի, ընդ որում իշխանութիւն ունեցող ուժի, քաղաքական ուժի: Գիտութիւնը որոշակի ուղղուածութեամբ կազմակերպում է մարդկային իմացական կարողութիւնը եւ այն ուղղում դէպի որոշակի նպատակասլաց գործունէութիւն: Այդ գործունէութիւնը իրականացնելու համար անհրաժեշտ է որոշակի դաշտ (իրաւական, քաղաքական, բարոյական, նիւթական, մարդկային ուժի որոշակի կազմակերպուածութիւն եւայլն): Այդ՝ գիտութեան տրւում է տուեալ ընկերութեան կողմից, տուեալ քաղաքական կառոյցի եւ ուժի կողմից: Հասարակութիւնները, քաղաքական կառոյցները նաեւ տարբերւում են ըստ այն բանի, թէ ինչպէս եւ ինչքանով նպաստում են գիտական նորութիւնների գործադրմանը: Նոյնպէս է նաեւ ընկերային կեանքում: Քաղաքագէտը, դիւանագէտը խորանում է տուեալ ասպարէզում կատարուած գիտահետազօտական աշխատանքներին ու դրանց կիրառելիութեան հնարաւորութիւններին, եւ որոշում է գործադրել գիտութեան յանձնարարութիւնները: Որոշ արդի քաղաքագէտներ, ի մասնաւորի թրքամէտներ, նկատելով որ դա իրենց համար ցանկալի չէ, քաղաքագէտից պահանջում են հեռու մնալ գիտութիւնից, իսկ գիտութեան՝ ընկերային-քաղաքական կեանքից: Նրանք ապագիտականացնում են ընկերային քաղաքական կեանքի ղեկավարութիւնը, եւ գիտութիւնը զրկում կեանքում գործադրուելու հնարաւորութիւնից:

Հայերի Ցեղասպանութեան հարցերի գիտական ու համապարփակ ուսումնասիրութիւնը արգելակող բերդը քայքայւում է նաեւ ներսից, թրքական հասարակութեան ինքնատիպ ինքնաճանաչման ու ինքնաբացայայտման ճանապարհով: Ինչպէս տեսանք, թուրք ցեղը հազարաւոր տարիների պատմութիւն ունի, իսկ թուրք ազգն ու մշակոյթը մօտ մէկ դարու: Օսմանեան դարաշրջանում կայսրութիւնը ազգերի ու ցեղերի մի անկազմակերպ հաւաքածոյ էր՝ միացած

սուլթանական ուժով: Կոտորածների տարիներին, ըստ որում հայերի, յոյների, պուլկարների ցեղասպանութեան օրերին, կայսրութեան շատ բնակիչներ փոխում էին իրենց ազգութիւնն ու դաւանանքը՝ իրենց գոյութիւնը պահպանելու համար: Թուրք ազգի ձեւաւորման ընթացքում, երբ տարբեր պատճառներով ու եղանակներով տեղի էր ունենում ազգային-կրօնական գիտակցութեան բացայայտ ու գաղտնի սրբագրութիւն, այլ դաւանանք ու ազգութիւն ընդունած նախկին օսմանցիները վերահաստատեցին իրենց նախկին ազգային ու կրօնական ինքնութիւնը: Այդպիսով, ժամանակի ընթացքում, շատեր վերականգնեցին իրենց քրիստոնէական հաւատն ու ազգային պատկանելիութիւնը: Նրանք սկսեցին աշխարհին պատմել իրենց ու իրենց նախնիների կեանքի ողիսականը, ջարդերի ու բռնագաղթերի ողջ ողբերգութիւնը: Թուրքերն ու նրանց բարեկամները սկսեցին սարսափել այդ ծաւալուող տարերային շարժման բարոյական, քաղաքական ու իրաւական ուժից[1]: Պարզւում է որ այդ հարցում զգալի դեր են խաղում այն քիւրտերի զաւակներն ու թոռները, որոնք ժամանակին ծառայել են ազգափոխ ու կրօնափոխ հայերի մօտ ու գիտէին նրանց Պոլսի ազգականների հասցէները: Շղարշուած այդպիսի հայերը աւելի վախ են պատճառում, երբ տարբեր հաստատութիւններ սկսեցին ենթադրութիւններ անել որ նման վերափոխների թիւը Թուրքիայում այսօր կարող է տատանուել 100,000-ից երեք միլիոնի միջեւ:

Պատմագիտութեան զարգացման ու ճշմարտութեան բացայայտման ճանապարհը խափանողների շարքում իրենց պատուաւոր տեղն է գրաւում առաջադէմ թուրք մտաւորականութիւնը, որն այսօր աշխարհը հիացնում է իր գիտական խորաթափանցութեամբ, լուսամտութեամբ, քաջութեամբ ու մարդասիրութեամբ[2]: Նրանք այն ռահվիրաներն ու հերոսներն են, որոնք թուրք ժողովրդի պատիւը պիտի փրկեն: Նրանք քաջ գիտակցում են որ ուշ թէ կանուխ ողջ աշխարհը պիտի ընդունի թուրքերի կողմից Հայերի Ցեղասպանութեան փաստը, եւ աւելի պատուաբեր են նկատում այն շուտ կատարել, որպէսզի հարկադրուած չլինեն նորանոր սուտեր ու կեղծ տեսութիւններ հնարելու, քանի որ սուտն ու կեղծիքը միշտ ինքնարտադրում են իրենց: Պատմութիւնը ապացուցել է, թէ՝ անկախ քանի հոգով, ինչպիսի ուժով ու միջոցներով մարդ բղաւում է երկրագնդի տափակութեան մասին, այն չի դադարում կլոր լինելուց:

Վերջերս ծանօթացայ բարձրաստիճան մի թուրք դիւանագէտի

1. Տես՝ "Crypto-Armenians Among Us", Milli Gazete, 12/28/05.
2. Տես՝ Ցաւելուած թիւ 2:

որ դեռ չի համարձակւում իր անունը հրապարակել: Նա ասաց որ ինքը եւ իր նման հազարաւոր թուրք գիտնականներ, պաշտօնատարներ գիտեն եւ ընդունում են, որ անցեալի օսմանցի ու թուրք ղեկավարներ ջարդել են հարիւր հազարաւոր անմեղ հայերի, թիւը կարեւոր չէ, քանի որ ոճիրը ոճիր է անկախ քանակից: Մենք գիտակցում ենք, որ մենք պատմութեան առաջ պատասխանատու ենք դրանց համար: Միայն մեզ սարսափեցնում է ցեղասպանութիւն մակդիրը: Ընդունելի է ջարդ, կոտորած, սպանդ, եղեռն մակդիրները, բայց ոչ ցեղասպանութիւն:

Տեսնում ենք, թէ ինչքան խորն է գնացել ճշմարտութեան բացայայտումը, նոյնիսկ թուրքական միջավայրում: Փլւում են ճշմարտութեան ու գիտութեան յաղթարշաւը արգելակող պատուարները: Կը վերանան վերջին մնացորդներն էլ, երբ մարդկութիւնը միացեալ ուժերով կը շարունակի իր պայքարը:



Օսմանեան Կայսրութեան Դաւարումը



Օսմանեան Կայսրութիւնը իր Ամենէն Ընդարձակ Սահմաններուն Մէջ

Օսմանեան Կայսրութեան Նահանջը



Օսմանեան Կայսրութեան Մասնատումը Դաշնակիցներու Կողմէ Ա. Աշխարհամարտին



ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Հայ Դատը Այսօր

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Թիւ 1

STANFORD UNIVERSITY

DEPARTMENT OF HISTORY
Stanford, CA 94305-2024

13 June 2005

Prime Minister Recep Tayyip Erdogan
Office of the Prime Minister
Basbakanik
06573 Ankara, Turkey

Per fax: +90 312 417 0476

Dear Prime Minister Erdogan,

At its meeting last week, the Council of the American Historical Association asked me to express to you its grave concern about the cancellation of the conference on "Ottoman Armenians during the Decline of the Empire: Issues of Scientific Responsibility and Democracy," which was to be held at Bosphorus University on 25-27 May 2005.

As I am sure you are aware, this conference was to bring together Turkish scholars from several disciplines in order to discuss the fate of the Armenian minority in the last years of the Ottoman Empire. The conference was called off following a number of attacks by leading politicians, including Cemil Çiçek, the Minister of Justice. So intense and inflammatory were these criticisms that the conference organizers were justifiably concerned about the security of the participants.

The American Historical Association is the leading organization of historians in the United States, with over 13,000 members, including a number of prominent scholars interested in Turkish and Ottoman history. Needless to say, the Association does not have a position on the fate of the

Armenians, but it is deeply committed to free and open inquiry about historical issues, and especially about those issues that have been charged with political and ideological animosities. The May Conference was to have been a forum in which a variety of voices could have been heard. It is a grave misfortune, both for Turkey and for the world of historical scholarship, that political pressures silenced these voices.

I write to you, Mr. Prime Minister, with the hope that you will use the powers of your office to create a climate in which scholars have the opportunity and the resources to pursue the truth. This means having access to the relevant materials and also the freedom to speak without fear of intimidation and retaliation. In the long run, everyone's interests are best served by allowing uninhibited and open inquiry and debate.

With my gratitude for your time and attention, I remain,

Yours sincerely,

James J. Sheehan
President
American Historical Association

Թիւ 2

CONFERENCE ON "THE OTTOMAN ARMENIANS DURING THE ERA OF OTTOMAN DECLINE" THE JOINT DECLARATION OF THE CONFERENCE ORGANIZERS AND PARTICIPANTS

27 May 2005

The three day conference entitled "The Ottoman Armenians during the Era of Ottoman Decline" that we, as academics and public intellectuals of Turkey, had planned with Bosphorus University as host was unfortunately forced to be deferred as a consequence of pressures, threats and slander.

We protest that two deputies serving under the roof of the Turkish National Assembly, which is presumed to be the guarantor of scientific activities, academic freedom and security of life and property, have engaged in provocations that are totally in opposition to these fundamental principles, and that the spokesperson of the government incriminated all the conference participants by serious claims such as "thrusting a knife into the

nation's back." We are additionally ashamed that this spokesperson also carries the title of "Minister of Justice". We think that it would be more appropriate for him to be utilized with a duty outside of that of law and justice. We herewith notify the public that this conference will be convened in the near future.

We organize this conference to seek answers to the question "What happened before, during and after 1915?" We attempt to understand and recount a historical issue that during the last years has become trapped and increasingly politicized between the radical Armenian national and official Turkish theses.

Scientific meetings are not necessarily covered like television debates conducted on certain issues. Scientific meetings also do not have the prerogative to bring together all sides who are in opposition to one another and who are also convinced of their own "truths".

Furthermore, the decision to determine who should comprise the participants of a scientific conference is the most natural right of the hosts and the most fundamental application of the freedom of thought that is supposed to exist at universities. No one individual, organization and institution has the right to intervene in a scientific conference organized outside of its own body.

In addition, we find the unjust and prejudiced accusations made against the not yet presented papers of a not yet actualized conference totally unlawful. Had the actualization of this conference been tolerated, the rich, varied and not at all monotonous approaches to the issue of what happened before, during and after 1915 would have emerged.

We, the participants of this conference whose signatures are enclosed below, want to especially point out, as we also noted on our press release dated 17 May 2005, that "The emergence of different, critical and alternative voices, the demonstration of how Turkey actually contains such a rich multiplicity of thoughts would be, once again, to the utmost benefit of Turkey." We believe that the actualization of our conference in the very near future would be one of the most significant steps taken in our country on the path to academic freedom, to the independence of universities, and in general toward democracy.

Fikret Adanir, Taner Akçam, Ayhan Aktar, Ayse Gül Altinay, Ali Bayramoglu, Murat Belge, Halil Berktay, Melisa Bilal, Kürsat Bumin, Oral Çalislar, Fethiye Çetin, Selim Deringil, Hrant Dink, Fuat Dündar, Edhem Eldem, Hakan Erdem, Üstün Ergüder, Fatma Müge Göçek, Ahmet Insel, Aykut Kansu, Karin Karakasii, Ferhat Kentel, Cemil Koçak, Rober Koptas,

Osman Köker, Erol Köroglu, Metin Kunt, Ahmet Kuyas, Etyen Mahcupyan, Nazan Maksudyan, Ayse Öncü, Günay Göksu Özdogan, Oktay Özel, Murat Paker, Taha Parla, Sarkis Seropyan, Aksin Somel, Elif Safak, Nesim Seker, Meltem Toksöz, Mete Tunçay, Füsun Üstel ve Stefanos Yerasimos.

ՓԻԻ 3

May 27, 2005

Prime Minister Recep Tayyip Erdogan
Office of the Prime Minister
Basbakanlik
06573 Ankara, Turkey

Via facsimile + 90 312 417 0476

Dear Prime Minister Erdogan:

I wrote to you on behalf of the Middle East Studies Association of North America, and its Committee on Academic Freedom, on order to express our grave concern over actions taken by members of your government which precipitated the decision of the rector of Bosphorus University to cancel an academic conference entitled, "Ottoman Armenians in the Period of the Empire's Collapse." These actions violate the academic freedom and human rights of Turkish scholars, a number of whom are members of our association.

The Middle East Studies of North America (MESA) comprises 2600 academics worldwide who teach and conduct research on the Middle East and North Africa. It is the preeminent professional association in the field and publishes the International Journal of Middle East Studies. MESA is committed to ensuring respect for the principles of academic freedom of expression in the region and in connection with the study of the Middle East and North Africa. The organization also counts among its membership many of the world's leading experts on the history of the Ottoman Empire and the Republic of Turkey.

The conference was to have been held May 25-27, 2005 at Bosphorus University in Istanbul. Organized by members of the history, sociology and comparative literature faculties of both Bosphorus and Sabanci universities, the conference sought to address in a scholarly, open and critical manner issues surrounding the Armenian Genocide of 1915. Aided by an international advisory committee of academics from Turkey and abroad, the conference's organizers adhered in their preparations to all Turkish laws regarding public assemblies and academic gatherings.

However, according to published press reports, following intense criticism by Turkish government officials and parliamentarians - including minister of justice, Cemil Cicek, who accused those organizing the conference of being guilty of "treason and insult"- the university officials cancelled the meetings just hours before they were to begin. Citing "prejudicial statements [which] have been advanced [by government officials] regarding the contents of a conference that is yet to be held," the university officials noted that these statements give "cause for concern that [they] will result in undermining the academic freedom of state universities.

As a member state of the council of Europe and a signatory of the European Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms, Turkey is required to protect freedom of thought, expression and assembly. These rights are also enshrined in the Turkish Constitution of 1982.

Therefore we urge your government to take all necessary steps to ensure that this conference may be held as planned and as soon as possible. Just as important, and particularly given Justice Minister Cicek's use of the word "treason," a charge that conjures up memories of some of worst forms of persecution of scholars and intellectuals through history, we ask that you assure conference participants and organizers that they will face no official criminal charges or other sanctions following the presentation of their research in this gathering. We ask that you ensure that there will be no attempts to censor their work prior to its presentation and further, that all measures required will be taken to secure the personal safety of conference participants and allow open and free academic exchange. Finally, we encourage you to preclude the implementation of any of the provisions of Article 305 of the new Turkish Penal Code, which could be used to arrest academics who express unpopular ideas or revisionist views of the past.

I would appreciate the honor of discussing the work of the Middle East Studies Association with you during your visit to Washington, DC in June if your schedule permits.

Sincerely,

Ali Banuazizi
President, Middle East Studies Association
Professor, Boston College

Թիւ 4

CC: H.E. Dr. Osman Faruk Logoglu,
Turkish Ambassador to the United States

NEWS RELEASE
INTERNATIONAL ASSOCIATION OF GENOCIDE SCHOLARS

WE WHO SERVE AS THE EXECUTIVE COMMITTEE OF THE INTERNATIONAL ASSOCIATION OF GENOCIDE SCHOLARS PROTEST AND CONDEMN THE CANCELATION OF THE HISTORIANS CONFERENCE ON THE ARMENIAN QUESTION IN TURKEY BY THE TURKISH GOVERNMENT AS A MAJOR VIOLATION OF BASIC STANDARDS OF ACADEMIC FREEDOM IN THE FREE WORLD.

AT LONG LAST, TURKISH ACADEMICS AND INTELLECTUALS, SPONSORED BY THREE HONORABLE UNIVERSITIES, WERE SCHEDULED TO CONDUCT A CONFERENCE IN WHICH THE HISTORICAL REALITY OF THE ARMENIAN GENOCIDE WAS TO BE EXAMINED BY MANY OF THE PARTICIPATING LECTURERS.

THE GOVERNMENT OF TURKEY IS UNDERSTANDABLY STRUGGLING TO WIN ITS POSSIBLE ACCEPTANCE OF THE EUROPEAN UNION, AND IT IS IN THIS CLIMATE THAT MANY TURKISH INTELLECTUALS HAVE MOVED COURAGEOUSLY TO ADDRESS THE ARMENIAN GENOCIDE, A TRUTH WHICH IS STILL PUNISHABLE BY TURKISH LAW.

FOR THE TURKISH GOVERNMENT TO CANCEL THE CONFERENCE IS A SHAMEFUL STEP AND A SETBACK TO TURKEY JOINING THE FREE WORLD IN ITS GROWING STANDARDS OF HISTORICAL TRUTH AND RESPONSIBILITY.

THE EXECUTIVE COMMITTEE OF THE INTERNATIONAL ASSOCIATION OF GENOCIDE SCHOLARS CALLS ON THE REPUBLIC OF TURKEY TO ALLOW FULL AND FREE DEBATE AND ACADEMIC SCHOLARSHIP ON THE FATE OF THE ARMENIAN PEOPLE IN OTTOMAN TURKEY IN 1915-1923.

ROBERT MELSON, President, Internation Association of Genocide Scholars, Professor of Political Science, Purdue University

ISRAEL W. CHARNY, Vice-President, International Association of Genocide Scholars, Professor of Psychology and Family Therapy, Hebrew University of Jerusalem

STEVEN L. JACOBS, Secretary-Treasurer, International Association of Genocide Scholars, Associate Professor of Religious Studies, University of Alabama

Transmitted on behalf of the Executive Committee of IAGS by:
Prof. Israel W. Charny, Ph.D.
Editor-in-Chief, Encyclopedia of Genocide [www.abc-clio.com/product/109124]
Executive Director, Institute on the Holocaust and Genocide, Jerusalem
Prof. of Psychology & Family Therapy, Hebrew University of Jerusalem

Թիւ 5

STATEMENT OF THE INSTITUTE ON THE HOLOCAUST AND GENOCIDE JERUSALEM, ISRAEL

PRESS RELEASE

May 30, 2005

The Institute on the Holocaust and Genocide in Jerusalem, Israel protests the Turkish Government's cancellation of an important scholarly conference on "the Armenian question" sponsored by a consortium of Turkish universities, which was to have been conducted in Turkish at one of the universities with an expected attendance of more than 700 registrants.

The program titles of many of the presentations made it very clear that many of the scholars addressing the conference intended to recognize the historical validity of what is known in history in the free world as "the Armenian Genocide".

They were going to do so despite the fact that current Turkish law pre-

scribes jail sentences of several years of statements either about the Armenian Genocide or calling for Turkey withdrawing from Cyprus. These speakers are loyal Turks who love their country and want to see it advance and grow. Several of them have written about the importance for Turkey itself to achieve a free society, with guaranteed academic freedom, freedom of speech, and freedom of ideas; and thus also for Turkey to demonstrate its readiness to be accepted in the European Union.

Our Institute on the Holocaust and Genocide in Jerusalem was perhaps the first in the world to hold an interdisciplinary, multiple ethnic conference on the genocides of all peoples when we convened the "First International Conference on the Holocaust and Genocide" in 1982. Six lectures out of a total of 300 at our conference were scheduled to deal with the Armenian Genocide. As reported in many stories in the New York Times and other world press, Turkey pressured Israel to remove these six lectures, the govermnment of Israel shamefully complied, and when we refused to do so the government attempted with considerable use of government powers to close our conference down entirely. Fortunately, even when Israel errs, it is overall a genuine democracy, and our insistence on holding the conference including the lectures on the Armenian Genocide could not be broken. The process of our resistance and success has been honored many times in articles and books by many writers ever since (for example, in the Yale Review).

The Institute on the Holocaust and Genocide calls on all governments of the world to strive for a high level of accuracy, objectivity and transparency about genocidal massacres and genocides, including by its own peoples for many of our peoples in our shared Earth-world have committed genocidal atrocities against others. In the long run, the goal of human life, and all government, should be to protect human lives more and more.

Institute on the Holocaust and Genocide, Jerusalem

Prof. Israel Charny, Executive Director
Prof. Yair Auron, Associate Director
Marc Sherman, M.L.S., Assistant Director

Թիւ 6

PRESS DECLARATION OF THE HISTORY FOUNDATION OF TURKEY

TURKEY WILL OVERCOME 19TH CENTURY CHAUVINISM AND DOGMATISM

Cancellation of the conference on "Ottoman Armenians", organized jointly by the Istanbul Bilgi, Bosphorous and Sabanci Universities, constitutes, above all, an undeniable defeat and a dark moment in Turkey's experience in democracy.

With this latest intervention, Turkey's political elites exhibited their latent intolerence to academic freedoms, basic principles of freedom of expression, and to those perspectives that do not share their concerns for "national propaganda" but approach this issue from the perspective and expertise of social sciences and history.

Turkish chauvinistic nationalism for decades has contributed only to Turkey's isolation and to the de facto successes of Armenian Nationalism in the international arena, has hindered the development of democracy, peace and mutual understanding. The slander campaign initiated at the Turkish National Assembly by a member of the opposition constitutes the latest regrettable example.

Scientific meetings are not platforms for political debate. On the other hand the Armenian Question is not an issue that can be reduced to the way the "deportation of 1915" is labeled. The expressed allegations "on the intolerance of the organizers of the conference to different points of view and perspectives" are unconvincing, especially when they are uttered by those who, through their self-imposed taboos, have attempted to transform our universities into peripheral vocational schools, to hinder at any cost the development of pluralist approaches and freedom of expression in social sciences and history in our country.

Gross defamation and threats the Government Spokesperson directed to Bosphorous University are incompatible with government's own program and its national and international obligations; they constitute a flagrant transgression of academic freedoms and a terrifying development for the future of intellectual life in Turkey.

As an active civil society organization with some 14 years of experience and substantive contributions to various fields of social and economic history, we express, at this regrettable occasion, our solidarity with all scientists working in these taboo-laden fields and our solidarity with our three

distinguished universities subjected to unfair defamations during preparatory phases of this scientific meeting.

The History Foundation condemns unconditionally religious, ethnic and cultural discrimination and in spite of these obstacles will deploy great efforts to put an end to self-apologetically written history, to contribute to scientific research on major processes of Turkey's history, and to collaborate with scientists and institutions who share these objectives.

Orhan Silier
President of the History Foundation

Թիւ 7

INTERNATIONAL ASSOCIATION OF GENOCIDE SCHOLARS

President
Israel Charny (Israel)

First Vice-President
Gregory H. Stanton (USA)

Second Vice-President
Linda Melvern (UK)

Secretary-Treasurer
Steven Jacobs (USA)

June 13, 2005

Prime Minister Recep Tayyip Erdogan
TC Easbakanlik
Bakanlikir
Ankara, Turkey

FAX: 90 312 417 0476

Dear Prime Minister Erdogan:

We are writing you this open letter in response to your call for an "impartial study by historians" concerning the fate of the Armenian people

in the Ottoman Empire during World War I.

We represent the major body of scholars who study genocide in North America and Europe. We are concerned that in calling for an impartial study of the Armenian Genocide you may not be fully aware of the extent of the scholarly and intellectual record on the Armenian Genoçide and how this event conforms to the definition of the United Nations Genocide Convention. We want to underscore that it is not just Armenians who are affirming the Armenian Genocide but it is the overwhelming opinion of scholars who study genocide: hundreds of independent scholars, who have no affiliations with governments, and whose work spans many countries and nationalities and the course of decades. The scholarly evidence reveals the following:

On April 24, 1915, under cover of World War I, the Young Turk government of the Ottoman Empire began a systematic genocide of its Armenian citizens - an unarmed Christian minority population. More than a million Armenians were exterminated through direct killing, starvation, torture, and forced death marches. The rest of the Armenian population fled into permanent exile. Thus an ancient civilization was expunged from its homeland of 2,500 years.

The Armenian Genocide was the most well-known human rights issue of its time and was reported regularly in newspapers across the United States and Europe. The Armenian Genocide is abundantly documented by thousands of official records of the United States and nations around the world including Turkey's wartime allies Germany, Austria and Hungary, by Ottoman court-martial records, by eyewitness accounts of missionaries and diplomats, by the testimony of survivors, and by decades of historical scholarship.

The Armenian Genocide is corroborated by the international scholarly, legal and human rights community:

1) Polish jurist Raphael Lemkin, when he coined the term genocide in 1944, cited the Turkish extermination of the Armenians and the Nazi extermination of the Jews as defining examples of what he meant by genocide.

2) The killings of the Armenians is genocide as defined by the 1948 United Nations Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide.

3) In 1997 the International Association of Genocide Scholars, an organization of the world's foremost experts on genocide, unanimously passed a formal resolution affirming the Armenian Genocide.

4) 126 leading scholars of the Holocaust including Elie Wiesel and Yehuda Bauer placed a statement in the *New York Times* in June 2000 declaring the "incontestable fact of the Armenian Genocide" and urging western democracies to acknowledge it.

5) The Institute on the Holocaust and Genocide (Jerusalem), and the Institute for the Study of Genocide (NYC) have affirmed the historical fact of the Armenian Genocide.

6) Leading texts in the international law of genocide such as William A. Schabas's *Genocide in International Law* (Cambridge University Press, 2000) cite the Armenian Genocide as a precursor to the Holocaust and as a precedent for the law on crimes against humanity.

We note that there may be differing interpretations of genocide - how and why the Armenian Genocide happened, but to deny its factual and moral reality as genocide is not to engage in scholarship but in propaganda and efforts to absolve the perpetrator, blame the victims, and erase the ethical meaning of this history.

We would also note that scholars who advise your government and who are affiliated in other ways with your state-controlled institutions are not impartial. Such so-called "scholars" work to serve the agenda of historical and moral obfuscation when they advise you and the Turkish Parliament on how to deny the Armenian Genocide. In preventing a conference on the Armenian Genocide from taking place at Bogacizi University in Istanbul on May 25, your government revealed its aversion to academic and intellectual freedom - a fundamental condition of democratic society.

We believe that it is clearly in the interest of the Turkish people and their future as a proud and equal participants in international, democratic discourse to acknowledge the responsibility of a previous government for the genocide of the Armenian people, just as the German government and people have done in the case of the Holocaust.

Approved Unanimously at the Sixth biennial meeting of
THE INTERNATIONAL ASSOCIATION OF GENOCIDE SCHOLARS (IAGS)
June 7, 2005, Boca Raton, Florida

Contacts: Israel Charny, IAGS President; Executive Director, Institute on the Holocaust and Genocide, Jerusalem, Editor-in-Chief, Encyclopedia of Genocide, 972-2-672-0424; encygeno@mail.com

Gregory H. Stanton, IAGS Vice President; President, Genocide Watch, James Farmer Visiting Professor of Human Rights, University of Mary Washington; 703-448-0222; genocidewatch@aol.com

ԹԻՒ 8

WHAT'S THE TURKISH FOR GENOCIDE?

June 18, 2005

The Times and The Sunday Times
London

OPINION

Ben Macintyre

If Turkey wants to join the EU it must confront its bloody past and admit to the massacre of the Armenians.

Historians have become the moral accountants of our time, poring over the archives to establish, as nearly as possible, the unpaid debts still owed by the present to the past. In China there have been violent demonstrations demanding Japan's penitence for its wartime aggression. In Mississippi, an elderly white man and reputed Klansman has gone on trial accused of murdering civil rights workers more than four decades ago. The Argentine Supreme Court this week opened the way for a full inquiry into the crimes of the "dirty war" between 1976 and 1983. Even France, for so long in denial, has begun to address the unquiet ghosts of Vichy and Algeria.

The process of historical self-examination is neither simple nor easy. In the wrong hands, history becomes a weapon of recrimination and revenge, intercepted by bigots who would use old battles to stoke new ones. Yet historical introspection is crucial to democracy. The fledgeling South African democracy bravely sought to cauterise a traumatic past through the Truth and Reconciliation Commission. The Bloody Sunday inquiry may have been expensive and lengthy (seven years, £155 million and 1,700 witness statements) but it was a necessary step towards freeing Northern Ireland from the locked grip of competing histories. Postwar Germany has confronted its demons in a conscious and continuing act of national catharisis. The alternative is self-delusion. Treat the past as self-serving myth and it forms a canker of moral equivocation.

Amid the debate over Turkish membership of the EU, there is one matter that has hardly been raised, and that is Turkey's bitter and blinkered refusal to make peace with its past. In Turkish history, no event is more divisive and explosive than the "Armenian question", the long-disputed massacre of hundreds of thousands of Armenians during the First World War.

Armenia claims that, as the Ottoman Empire crumbled in 1915, Turkish soldiers and Kurdish tribesmen were unleashed in a deliberate act of genocide that killed 1.5 million Armenians. Turkey has refused steadfastly to accept that version of events, declaring that the Armenian death toll was far lower, and that the dead perished mainly through civil war, hunger and disease. This, the Turks insist, was not a systematic slaughter, but a bitter partisan and ethnic conflict in which Armenians sided with the invading Russians against Ottoman rule, leading to the deaths of at least 350,000 Turkish Muslims.

This month, historians at Bosphorus University scheduled a conference to debate the tragic events of 1915-1916. Turkish nationalists reacted with fury. Cemil Çiçek, the Justice Minister, described the planned conference as "treacherous" and accused the historians of "preparing to stab Turkey in the back." With government pressure mounting, and nationalist students threatening to converge on the university campus, the conference organisers buckled. The event was cancelled.

The argument, which continues to poison relations between Turkey and Armenia and destabilise the region, boils down to a single, intensely emotive word. As Caroline Finkel writes in her excellent forthcoming book, *Osman's Dream: The Story of the Ottoman Empire 1300-1923:* "The Armenian question today has come to focus exclusively on whether the massacres constituted genocide... and all other aspects of this acutely sensitive matter tend to be scrutinised for their value in clarifying this central point."

But clarity is impossible in a debate that evokes such violent emotions. The Turkish Foreign Minister has dismissed the term genocide as "pure slander", and when the celebrated Turkish writer Orhan Pamuk, dared to declare this year that a million Armenians had been murdered in Turkey, he received three lawsuits for "damaging the State" and a volley of death threats.

To complicate matters further, much of the killing in 1915 appears to have been carried out by Turkish secret societies, whose records have disappeared and whose relationship to the Ottoman authorities is unclear. Turks point out that there is no official document ordering the killing of Armenians. Armenians allege that the archives have been purged.

The parliaments of 17 countries, including France and Russia, have already passed resolutions recognising the Armenian genocide. Britain and America have held back, wary of angering a powerful and important ally. But staying silent is not the act of a friend, and it is hard to see how Turkey

can join the EU, "an organisation founded on a determination to avoid repeating the mistakes of history" without first acknowledging its own bloody past.

The precise numbers of dead, and the meaning of the term genocide, can be debated forever, but of this there is no doubt: hundreds of thousands of innocent Armenians perished as a consequence of Turkish actions. Most historians outside Turkey now agree that what happened after 1915 constituted "ethnic cleansing", for which the Ottoman Government was ultimately responsible.

Acknowledging this, while genuinely encouraging the widest and most dispassionate debate on the subject, would establish Turkey's commitment to freedom of speech and democratic ideals in the run-up to accession talks in October. So far, British officials have side-stepped the issue, insisting that the Armenian question is a matter for historians. As a country with its own ghosts, Britain has a responsiblility to encourage Turkey to see its own history beyond confining notions of treachery or loyalty.

Recep Tayyip Erdogan, the Turkish Prime Minister, while reiterating his belief that the genocide never happened, has called for a joint commission to look into the Turkish archives. But a far more emphatic demonstration of openness would be to revive the conference at Bosphorus University and open it to the widest possible range of scholarly opinion. "Who today, after all, remembers the annihilation of the Armenians?" Thus spoke Adolf Hitler, reassuring his generals that the Jewish Holocaust would be forgotten in the glow of Nazi victory. Ninety years after the killing, the Armenians remember one way, and the Turks another. The passage of time has calcified these rival histories, but Turkey's desire to enter the EU represents an opportunity for genuine historical reconciliation. The Armenian question may yet be answered, if Turkey can be persuaded to ask it.

ԳԷՈՐԳ ՏԻԳՐԱՆԻ ԽՐԼՈՊԵԱՆ

(Ինքնակենսագրութիւն)

ԾՆԱՆ 1927թ. Օգոստոսի 19-ին, Հալէպ քաղաքում, Սուրիա: Որդին է Պէյրութի Հայկազեան Համալսարանի Հայագիտութեան Բաժանմունքի հիմնադիր վարիչ, հայագէտ Վեր. Տիգրան Գէորգ Խրլոպեանի:

ԿՐԹՈՒԹԻՒՆ – Հալէպի Էմմանուէլ Վարժարան, 1940 (վեցամեայ). Հալէպի Ալեփփօ Գոլէճ, 1946 (Երկրորդական). Երեւանի Պետական Համալսարանի Հայոց Լեզուի, Հոգեբանութեան եւ Տրամաբանութեան Բաժին, 1951 (աւարտաճառ՝ Անտոն Գարագաշեանի ժառանգութիւնը). գիտական աստիճաններ՝ Գիտութիւնների Թեկնածու՝ Հայ Փիլիսոփայութեան Պատմութեան գծով, 1960 (աւարտաճառ՝ Անանիա Շիրակացու Աշխարհացոյցը, գիտական ղեկավար՝ ակադեմիկոս Վազգէն Զալոյեան), Գիտութիւնների Դոկտոր, 1974 (աւարտաճառ՝ Հայ Սոցիալական [Ընկերային] Իմաստասիրութեան Պատմութիւն): Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ղեկավարութեամբ ուսումնասիրել է հայ աստուածաբանութեան պատմութիւն, 1965–1985: Աստուածաբանութեան Դոկտորա, 1998 (ԱՄՆ, աւարտաճառ՝ Վաղ Քրիստոնէութիւնը Հայաստանում):

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ – Իբրեւ ուսուցչապետ (փրոֆեսոր) աշխատել է Երեւանի Պետական, Պէյրութի Հայկազեան, Պուէնոս Այրէսի Էլ Սալվատոր (Արժանթին), Տիթրոյթի Ուէյն (ԱՄՆ), Լա Վերնի (ԱՄՆ) համալսարաններում: Եղել է Երեւանի Պետական Համալսարանի Փիլիսոփայութեան Պատմութեան, Պէյրութի Հայկազեան Համալսարանի եւ Լա Վերն Համալսարանի Հայագիտութեան Ամբիոնի վարիչ: Վարել է Կիրովականի (Վանաձոր) Մանկավարժական Հիմնարկի նախագահի պաշտօնը: Մաս-

նակցել է բազմաթիւ համաշխարհային, միութենական, համաամերիկեան, շրջանային եւ բարձրագոյն ուսումնական հաստատութիւնների գիտաժողովների:

ԳԻՏԱԿԱՆ ՎԱՍՏԱԿ՝ Եղել է ռահվիրան հայ ընկերային եւ աստուածաբանական մտքի պատմութեան հետազօտման, Հայաստանում կիրառական Ընկերաբանութեան հետազօտական կեդրոնների ստեղծման, Հայերի Ցեղասպանութեան ճիւղային եւ կատեգորիաների մասնագիտական ուսումնասիրութեան: Հայ իմացական ու հոգեւոր արժէքներ տարածել է աշխարհով մէկ:

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ՝ Մենագրութիւններ՝ Անանիա Շիրակացու Աշխարհայեացքը (200 էջ), Հայ Ընկերային Իմաստասիրութեան Պատմութիւն (550 էջ), Գրիգոր Նարեկացու Համունիզմը (86 էջ), Դպրոցի Կոմպլեքսային Դաստիարակութեան Հարցեր (150 էջ), Բուհական Դաստիարակութեան Սոցիալ-Հոգեբանական Հարցեր (160 էջ), Դաստիարակութեան Արդի Պատկերացումները (150 էջ), Տէրունական Աղօթքի Մեկնութիւն (430 էջ), Եհովայի Վկաների Վարդապետութեան Քննական Վերլուծութիւն (170 էջ): Պատրաստ է տպագրութեան՝ Վաղ Քրիստոնէութիւնը Հայաստանում (200 էջ), Քարոզների Ժողովածու (250 էջ): Լոյս ընծայել է նաեւ քսան գրքոյկներ եւ շուրջ չորս հարիւր գիտական յօդուածներ հայագիտական, կրօնագիտական եւ ընկերաբանական հարցերի նուիրուած:

ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ՝ Սբ. Սահակ եւ Սբ. Մեսրոպ շքանշան՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից, Պատուաւոր Դոկտորայի կոչում Լա Վերնի Համալսարանի կողմից: Գնահատագիր Նորին Վսեմութիւն ԱՄՆ-ի նախագահ Ու. Գլինթընի կողմից, Արծաթ Մետալ Երեւանի Համալսարանի, Մխիթար Սեբաստացի Մետալ Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան, Գնահատագիր Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան, Պատուոյ գրեր Հայաստանի ԲՈՒՀերի (Բարձրագոյն Ուսումնական Հաստատութիւն), մշակոյթի նախարարութիւնների, Ամերիկայի Հոգեբանների Ընկերակցութեան, Խորհրդային Միութեան Ընկերաբանների Համամիութենական Ընկերութեան նախագահութեան, Երեւանի Պետական Համալսարանի ռեկտորատի եւ այլ ազգային եւ օտար կազմակերպութիւնների կողմից:

Գ.Տ.Խ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	էջ
ԱՌԱՋԱԲԱՆ	7
ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ	13
ԳԼՈՒԽ Ա. ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԴՐԵԱԼՆԵՐԸ	21
ԳԼՈՒԽ Բ. ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆԸ	31
– ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ Է ՄԱՐԴՈՒ ԱՆՁՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ	35
– ԱՍՏՈՒԾՈՑ ԿԱՄՔԻՆ ԿԱՌՈՑՑԸ	39
– ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԱՄՔԻ ԱՁԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ	46
ԳԼՈՒԽ Գ. ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԹԱՂՈՒԱԾ ԵՆ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԾԱԼՔԵՐՈՒՄ	59
ԳԼՈՒԽ Դ. ՆԱԽԱԵՂԵՌՆԵԱՆ ՔԱՌՈՐԴ ԴԱՐԸ	81
– ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՁԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԲՈՎՈՒՄ	94
– ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԾՐԱԳՐԻ ՅՂԱՅՈՒՄ	100
– ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾԱԴՐՈՒՄԸ	104
ԳԼՈՒԽ Ե. ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱՂԲԻՒՐՆԵՐԸ ԸՆԴԴԷՄ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՈՒՐԱՅՄԱՆ	107
ԳԼՈՒԽ Զ. ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԵՐԵՍՆԵՐԸ	125
– ԱՆՑԵԱԼԻ «ԲԱՅԹՈՂՈՒՄՆԵՐԻ ՈՒ ԹԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ» ՍԽԱԼ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՍՐԲԱԳՐՈՒՄ	130
– ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԳՈՅՈՒԹԵԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԻՄՔՆ Է	134
– ԹՈՒՐՔ ԱԶԳԻ ԵՒ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԿՈՒՆՔԸ	141
ԳԼՈՒԽ Է. ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԵՍՆԵՐԸ	161
– ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՐՑԸ ԵՒ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ	165
– ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԿԱՌՈՑՑՈՒՄ	173
– ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԵՒ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ	176
– ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ	185

ԳԼՈՒԽ Ը. ԵՒՐՈՊԱՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ 189
– ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԵՒ ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ 199
– ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՒ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ 201
ԳԼՈՒԽ Թ. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿԵՑՈՒԱԾՔԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ 207
– ՀԱՅՐԵՆԻ ՄՏԱՒՈՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՅԵՂ. ՄՏՔԻ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 210
– ՔԱՒՈՒԹԵԱՆ ՆՈՒԱՀԸ 213
– ՔՐԵՄԼԻՆԵԱՆ ՀԱՒԱՏԱՔՆՆԻՉՆԵՐԸ 215
ԳԼՈՒԽ Ժ. ՍՈՒՄԿԱՅԻԹԵԱՆ ԿՈՏՈՐԱԾԸ 223
ԳԼՈՒԽ ԺԱ. ՀԱՅԵՐԻ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԻՐԱՒԱԳԻՏԱԿԱՆ ԻՄԱՍՏԱՒՈՐՈՒՄԸ 255
– ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԻՐԱՒԱԿԱՆ ԻՄԱՍՏԱՒՈՐՄԱՆ ԵՒ ՅԵՂԱՍՊԱՆԻ ՊԱՏԺԵԼԻՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԱՅՍՕՐ 268
– ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ 270
– ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹԵԱՆ ԵՐԵՔ ԵՐԵՍՆԵՐԸ 274
– ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐԱՄԱՆԿՈՒՄՆԵՐ ԻՐԱՒԱԳԻՏԱԿԱՆ ՈՒ ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒՄ 277
– ՀԱՅԵՐԻ ՈՒ ՀՐԵԱՆԵՐԻ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ 283
– ԹՈՒՐՔԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ԱՌԱՋԻՆՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԵՐԻ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ 288
ԳԼՈՒԽ ԺԲ. ՀԱՅԵՐԻ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՐԵՍՆԵՐԸ 293
ԳԼՈՒԽ ԺԳ. ՀԱՅԵՐԻ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՐԵՍՆԵՐԸ 309
– ԹՈՒՐՔԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԵՐԻ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՔԻՆ ՀՐԱՀՐԻՉՆԵՐՆ ՈՒ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԸ 312
– ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԻՑ ՓՐԿՈՒԱԾ ՀԱՅԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ 332
ԳԼՈՒԽ ԺԴ. ՀԱՅԵՐԻ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՐՏԱՅՈԼՈՒՄԸ ՍՓԻՒՌՔԱՀԱՅ ԳԵՂԱՆԿԱՐՁՈՒԹԵԱՆ ՄԷՋ 345
– ԱՏՈՄ ԷԿՈՅԵԱՆԻ «ԱՐԱՐԱՏ» ՇԱՐԺԱՆԿԱՐԸ 364
ՎԵՐՋԱԲԱՆ 369
ՔԱՐՏԷՍՆԵՐ 377
ՅԱՒԵԼՈՒԱԾ 383
ԳԷՈՐԳ ՏԻԳՐԱՆԻ ԽՐԼՈՊԵԱՆ Գ.Տ.Խ. 401

ՄԻՄԻ ԵՒ ԱՐՄԷՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ

1. Անդրանիկ Ծառուկեան, *Էնէս Պիլէ Թֆուլէ* (Մանկութիւն Զուսնեցող Մարդիկ), արաբերէն թարգմանութիւն Հրաչ Սահակեանի), Պէյրութ, 1987:
2. Լեւոն Հախվերդեան, *Մենք եւ Մեր ժամանակը*, Պէյրութ, 1997:
3. Լեւոն Վարդան, *Հայկական Տասնհինգը Թուրք Մատենագիտութեան եւ Մամուլին Մէջ եւ Մենք*, Պէյրութ, 1998:
4. Անդրանիկ Ծառուկեան, *Առկայծող Հայեր Եւրոպայի Լոյսերուն Մէջ*, Հալէպ 1999:
5. Լեւոն Հախվերդեան, *Մենք եւ Մեր Դժուար Օրերը*, Երեւան, 2000:
6. Հայր Լեւոն Զէքիեան, *Ինքնութեան Խճանկար*, Պէյրութ, 2001:
7. Թորոս Թորանեան, *Ամբողջական Գրագէտը Ռոպէր Հատտէճեան*, Հալէպ, 2002:
8. Ռոպէր Հատտէճեան, *Դանիէլ Վարուժանի, Սիպիլի, Իգնա Սարրաչանի Բանաստեղծութիւնները Հայ Ուսանողներու Մտերմութեան Մէջ*, Պէյրութ, 2003:
9. Վարդան Վրդ. Այգեկցի, *Խրատներ*, աշխարհաբարի վերածեց Պարթեւ Վրդ. Կիւլիմեան, Անթիլիաս, 2002:
10. Մեթր Գասպար Տէրտէրեան, *Եկեղեցի-Պետութիւն Յարաբերութիւններ եւ Նոր Աղանդաւորներ. Ներածական Ակնարկ*, Պէյրութ, 2004:
11. Լեւոն Հախվերդեան, *Ինչպէս Դիտել Ներկայացումը*, Պէյրութ, 2004:
12. Ռոպէր Հատտէճեան, *Յուշատետր–52. Իսթանպուլահայ Նոր Բանաստեղծութեան Վէպը. Կարպիս Ճանճիկեան, Հայկազուն Գալուստեան եւ Միւսները*, Իսթանպուլ, 2004:
13. Սերգէյ Առաքելեան, *Երուանդ Ղազանչեան*, Երեւան, 2004:
14. *Տոմար Արձանագրութեան Հայ Ազգային Միութեան. Ատենագրութիւն Այնթապի Ինքնապաշտպանութեան (1920)*, Պէյրութ, 2005:
15. Արմէն Մուրատեան, *Խելքիս Փչածներէն եւ Այլ Էջեր*, Պէյրութ, 2005:
16. Փրոֆ. Դոկտ. Գէորգ Տ. Խրլոպեան, *Յեղասպանագիտութիւն*, Պէյրութ, 2006:

ՓՐՈՖ. ԴՈԿՏ. ԳԷՈՐԳ Տ. ԽՐԼՈՊԵԱՆ

ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

د. كيفورك خرلوبيان

دراســـة وتحـــليل المجـــازر الأرمـنيـــة

PROF. KEVORK D. KHERLOPIAN

GENOCIDOLOGY

- A Study of the Armenian Genocide -

Հրատարակութեան պատրաստութիւն՝
Մ.Ա.Հ.Ա.Ե. ՄԻՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿի
Տողաշարում՝ ՀԵԼԷՆ ՅԱԿՈԲԵԱՆ-ԹՕՓԷԵԱՆի
եւ ԱՆԻ ՔԵՍՏԵՆԵԱՆ-ՊԱՍԷԹի
Էջադրում՝ ԱՆԻ ՔԵՍՏԵՆԵԱՆ-ՊԱՍԷԹի

Տպաքանակ՝ 750

Տպարան՝
THE UNITED PRINTERS & TRADERS
MAKDISSI ST., JURDI BLDG. - TEL. 01-745181
BEIRUT - LEBANON

Հասցէ՝ ARMEN HAROUTUNIAN
P.O. BOX 90-150
BEIRUT-LEBANON
FAX: 961-1-324617

PROF. KEVORK KHERLOPIAN
451 HAWTHORNE ST. #202
GLENDALE-CA. 91204
U.S.A.